ՀԻՆ ԱՏԱԿԱՐԱՆԻ ԶՐՋԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԵՐ

# ԱՆԱՆՈՒԻ

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

## ՍԱՐԳԱՐԵՄՐՃԱՆԱ ԳՈՒՅԵՑՈՒ

ԵՎ


ՄԱՐԴԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ


Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

ՄԱՐԶԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՒՅԱՑՈՒ

12

ԵՐԵՎԱՆ - 2003





Աստվածաշնչի գրքերի
Հայ մեկնությունների
գրադարան

Library
of Armenian Commentaries
on the Books of the Holy Bible

Commentaries on the Books
of the Old Testament
12

ANONYMOUS

# Commentary on the Book of Isaiah

AND

SARGIS KOUND

# Commentary on the Book of Isaiah

(Excerpts)

By

Armen Malkhassian

Edited by

Dr. Azat Bozoian

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN
2003

256924

22+231.6

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
12

# ԱՆԱՆՈՒՆԻ

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ

և

## Սարգիս Կունդի

# Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ
(հատուածք)

Աշխատասիրությամբ
ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ
Խմբագրությամբ
ԱՋԱՏ ԲՈՋՈՅԱՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
2003



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

By order
of His Holiness
KAREKIN II
Supreme Patriarch and
Catholicos
of All Armenians

Մատենաշարի գլխավոր խմբագիր
ԵՋՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Chief editor of the serial publication
HIS GRACE BISHOP YEZNIK PETROSSIAN

Հրատարակվում է երաշխավորությամբ
Եզնիկ եպս. Պետրոսյանի (Դոկտոր Աստվածաբանության)
Գևորգ Տեր-Վարդանյանի (Բանասիրական գիտությունների թեկնածու)

Approved for publication by:
Bishop Yeznik Petrossian, Doctor of Theology
Gevork Ter-Vardanian, Candidate of Philological Sciences

# Երկու խոսք

*Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի երեք ձեռագրերում՝ № 1132, 6615 և 9480, պահպանված է Եսայու մարգարեության մի մեկնություն, որի հեղինակը «Ցուցակ Ձեռագրացում[1]» անվերապահորեն համարվել է Սարգիս Կունդը (ԺԲ դ.):*

*Եղնիկ եպս. Պետրոսյանը և Արմեն Տեր-Ստեփանյանն Աստվածաշնչի գրքերի հայ մեկնություններին մատենագիտությունը կազմելիս նկատել են, որ վերոհիշյալ ձեռագրերից ո՛չ մեկում հեղինակի անուն չի նշված:*

*Երբ մենք, Եղնիկ Սրբազանի հանձնարարությամբ, ձեռնամուխ եղանք վերոհիշյալ մեկնությունը պատրաստել տպագրության, անհրաժեշտություն զգացվեց ավելի հանգամանորեն զբաղվել տվյալ գործի հեղինակի ճշտման հարցով:*

*Հ. Ն. Ակինյանը, 1924-1928 թթ. նկարագրելով Վաղարշապատի պետական մատենադարանի ձեռագրերը, № 1132 ձեռագրի՝ «Եսայու մեկնության» հեղինակի անունը հարցականով նշել է Սարգիս Կունդ[2]: Նրա այս ենթադրությունը, հավանաբար, հիմք են համարել Մաշտոցի անվան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» կազմողները՝ վերոհիշյալ անանուն մեկնությունը Սարգիս Կունդին վերագրելիս:*

*Սարգիս վրդ. Կունդը[3] ծնվել է ԺԲ դարի սկզբին Արարատյան գավառում: Ուսում է ստացել Հաղբատի վանքում՝ աշակեր-*

---

1 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, ձեռ. № 1132, էջ 483, և հ. Բ, Երևան, 1970, ձեռ. № 6615, էջ 356, ձեռ. № 9480, էջ 937:

2 Ներս. վրդ. Ակինյան, Ցուցակ ձեռագրաց ՀԽՍՀ Վաղարշապատի պետական Մատենադարանի, Վաղարշապատ, 1924-1928. Մաշտոցի անվան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 96:

3 Ներսես վրդ. Ակինյանը գրում է. «Այսպէս «Կունտ» կամ «Կունդ» մականուամբ ծանօթ է մեզի Սարգիս վարդապետ. արդեօք ճաղա՞տ ըլլալուն պատճառաւ» (տե՛ս Ներսէս վրդ. Ակինեան, Սարգիս վրդ. Կունտ եւ իր մեկնողական

*տելով Հովհաննես վարդապետ Սարկավագին, որտեղ էլ առավելապես հմտացել է Սուրբ Գրոց գիտութեանը: Նրա ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն: Ենթադրվում է, որ ողջ էր մինչև 1184 թվականը: «Սարգիս Կունտի կեանքի առաջին յիսնամեակը մթութեան մէջ է մեզի համար,– նշում է Հայր Ներսես Ակինյանը–: Բայց գիտենք թէ անիկա պատանի հասակին մտաւ Հաղբատի Դպրոցը, աշակերտեցաւ Յովհաննէս Սարկաւագ վարդապետին անոր կեանքի վերջալուսին...: Իր գործունէութեան ասպարէզն եղաւ Թեղենեաց վանքը Արարատեան դաշտին վրայ, ուր եղած էր հաւանօրէն իր ծննդավայրը»[4]: Նորայր եպս. Պողարյանը նրա մասին գրում է. «Իր նկարագրին ցայտուն գիծերէն մին եղած է աշխատասիրութիւն: Ան, հակառակ իր յառաջացեալ տարիքին և տկարութեան, մեղուի նման քաղած է գեղեցիկ իմաստներ Ս. Հայրերու գրուածներէն և մէկտեղած իր մեկնողական գործերու մէջ: Ինքը կը համարուի մեր մէջ հիմնադիրը խըմբագիր մեկնութեանց դրութեան»[5]: Զարմանալի բախտի է արժանացել Սարգիս Կունդը: Լինելով մեկնողական դրականության նոր սեռի հիմնադիրը՝ հիացմունքով ողջունվել է ժամանակակիցների կողմից, ունեցել է աշակերտներ, «բայց ժամանակակիցներէն, նաև մերձժամանակակիցներէն ո՛չ ոք նախահոգ եղած է աւանդել յաջորդներուն գծեր անոր կենսագրութենէն կամ ակնարկներ անոր ժամանակին և երկասիրութիւններու մասին: Նաև ժամանակը չէ եղած հաւատարիմ աւանդապահ՝ անեղծութեամբ հասցնելու մեզի անոր երկերը»[6]:*

*Սարգիս Կունդի ստեղծագործությունների ամբողջական քանակը հայտնի չէ: Գիտենք միայն, որ մեզ հասած գործերը (Ղուկասի և Հովհաննեսի Մեկնությունները) ծերության հասակում*

---

երկասիրութիւնները, «Սիոն», 1940, էջ 21, ծնթ. 25 (այսուհետև՝ Ն. Ակինյան, Սարգիս Կունտ...): Ըստ Հայկազյան բառարանի. «Կունդ կամ Կունտ. ա. I. գլուխը կունտ, կունտգլուխ. s. տագ: - 2. (ոմկ.) սկունդ, շնիկ» (տե՛ս Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 449):

4 Ն. Ակինյան, Սարգիս Կունտ, էջ 21:

5 Նորայր եպս. Պողարյան, Հայ գրողներ (Ե-ԺԷ դար), Երուսաղեմ, 1971, էջ 243:

6 Ն. Ակինյան, Սարգիս Կունտ, էջ 16:

գրված աշխատասիրություններ են: «Համարի՞նք,– գրում է Ն. Ակինյանը,– թէ այդ «աշխատասէր արի մշակը» միայն իր կեանքի վերջին տարիներուն անձնատուր եղաւ գրականութեան: Թերևս ժամանակը կարող է երևան բերել գործեր նաև իր կատարեալ հասակի արտադրութիւններէն»[7]: Սարգիս Կունտի օգտագործած խմբագիրը, քաղվածո մեկնության եղանակը նորություն էր հայ գրականության մեջ և խանդավառությամբ ընդունվեց ժամանակակիցների կողմից[8]: Սուրբ Հայրերի և հայ հեղինակների մտքերի այսպիսի համադրումը հաճելի եղաւ գրասեր ընթերցողներին, որոնք հետևեցին մեկնության այս ոճին: Հետևելով Սարգիս վրդ. Կունդի օրինակին՝ Հովհաննես վրդ. Վանականը գրեց Հոբի խմբագիր մեկնությունը, Գևորգ Սկևռացին՝ Եսայու և Գործք Առաքելոցի, Վարդան Արևելցին՝ Մովսեսի հինգ գրքերի և այլն, Հովհաննես Երզնկացին նույնիսկ՝ Քերականի մեկնությունը:

Սարգիս Կունդի գրական երկերից հավաստի են հիմնականում երկու մեկնություններ. ա) «Մեկնութիւն Ղուկասու»[9]՝ խմբագրված, հավանաբար, 1177 թվին՝ օգտվելով Եփրեմի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Ստեփանոս Սյունեցու, Իգնատիոսի, Հովհան Ոսկեբերանի և այլոց մեկնություններից և ճառերից, բ) «Մեկութիւն Յովհաննու». գրել է գրեթե միևնույն ժամանակ, հավանաբար Թեղենյաց վանքում, և օգտվել է վերոհիշյալ հեղինակներից: Մյուս մեկնությունները՝ «Մեկնութիւն Եսայեայ», «Մեկնութիւն Մարկոսի աւետարանի» և ուրիշներ, վերագրվում են նրան:

Հայ մեկնողական գրականության մեջ պահպանվել են երկու վկայություններ, որոնք խոսում են այն մասին, թե Սարգիս

---

7 Նշվ. աշխ., էջ 21:

8 Հայ մեկնողական գրականության նախահիմքերի մասին տե՛ս Փ. Անթապյան, Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», № 15, Երևան, 1986, էջ 60-93:

9 Եզնիկ Ծ. վրդ. Պետրոսյան, Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մասին, «Էջմիածին» 1982, Ը-Թ, էջ 45-52: Տե՛ս նաև նույնի՝ Հոդվածների ժողովածու, Ս. Էջմիածին, 1997, էջ 29-45:

*Կունդը պատրաստել է Եսայու մարգարեութեան մի մեկնութիւն: Ն. Ակինեանը գրում է. «Սարգիս Վ. Կունտ գրած է նաև Եսայեայ Մարգարէութեան Մեկնութիւն մը, որ մինչև այսօր երևան եկած չէ: Այս գրութեան մասին մեր ունեցած տեղեկութիւններն են.*

*ա) Երեմիա, աշակերտն Գէորգ Վ. Սկևռացւոյ կը գրէ անոր խմբագիր Եսայեայ Մեկնութեան Ընծայականին մէջ. «Եւ զի էր Սարգիս վարդապետի հոգացեալ (զՄեկնութիւն Եսայեայ)՝ առեալ և զայն և զայլ բանսն սրբոց մեկնչացն՝ համառօտ զուգեաց (Գէորգ) առ իրեարս կարճաբանութեամբ եդեալ և զմտացն ամբողջ ունելով զզօրութիւն», Երուսաղէմ, թ. 365 (յամէ 1299). Հմմտ. Սիսուան, էջ 103:*

*բ) Յովհաննէս Վ. Կոլոտիկ 1415-ին նոյնպէս ունեցած է այդ Մեկնութիւնը ձեռքի տակ, որուն խմբագիրը կ'անուանէ «Սարգիս վարդապետ ի վանացն Խորանաշատայ՝ կոչեցեալ Կունտ»[10]:*

*Հ. Գր. Զարպհանալեան հաւանօրէն Սկևռացւոյ տողերը աչքի առաջ ունենալով, յանձին Սարգսի կը տեսանէ Սարգիս Վ. Շնորհալին, երբ կը գրէ. «Սարգսի կ'ընծայուի և Եսայեայ մարգարէութեան մեկնութիւն մը՝ որ մեզի անծանօթ է»: Այսպէս կը գրէ նաև Հ. Միքայէլ Զամչեան. «Սարգիս վարդապետ աշակերտակից Իգնատիոսի... արար և զՄեկնութիւն մարգարէութեան Եսայեայ. յորմէ բերէ վկայութիւն Գէորգ վարդապետ»: Յովհաննէս Կոլոտիկ գիտէ սակայն այդ Սարգսի մականունը Կունտ, հետևաբար տեղիք չկայ Սարգիս Շնորհալւոյ ընծայելու Մեկնու-*

---

10 *ՄՄ. ձեռ № 1128, թերթ 192ա.* «Եւ ի կատարումն գրոցս՝ զկատարումն արարածոցս և զհատուցումն ըստ գործոց յայտնէ, թէ արդարքն ընդ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս անուան նորա, բարեխօսութեամբ սուրբ մարգարէիս, և ամենայն բարի և աստուածահաճոյ արանց մեկնողացն սորա՝ սրբոյն **Յովհաննու Ոսկեբերանին**, և **Եփրեմի** երանելւոյն, վիմին ուղղափառ հաւատոյ **Կիւրղի Աղեքսանդրացոյ**, և Սարգսի մերոյինս ազգի լուսաւորչի, որ ի վանքն **Խորանաշատոյ**, մականուն **Կունտ** կոչեցելոյ, և հօրն մերոյ և երջանիկ պետին **Գէորգեայ**, և մեծ վիհին **Յոհաննու Որոտնեցւոյ**, և աշակերտի նորին **Գրիգորի**՝ կրկին լուսաւորչին ի վերջացեալ ժամանակի և անպտղացելոյ յարգասեաց բարոյ...» (տե՛ս Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), Երևան, 1955, էջ 174): Այստեղ նկատենք, որ կա պատմական անհամաձայնություն. Խորանաշատը կառուցվել է ԺԳ դարում, 1211-1222 թվականներին (տե՛ս Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 322-324):

*թիւնս: Սարգիս Կունտ անշուշտ նաև այս Մեկնութիւնը յօրինած էր խմբագրելով սուրբ Հարց խօսքերով»*[11]*:*

*1938 թ. Վիեննայում հրատարակած «Յովհաննու Ոսկեբերանի Եսայեայ մեկնութիւնը հայ մատենագրութեան մէջ» աշխատութեան մէջ Ն. Ակինյանը նշում է. «Կ'ըսուի թէ Եսայեայ Մեկնութիւն մը գրած է նաև Սարգիս Վ. Կունդ ի Խորանաշատ, աշակերտն Յովհ. Սարկաւագ Վարդապետի, որմէ յառաջաբանութիւնները ունի Գէորգ Սկևռացի: Թերևս այս Մեկնութիւնն ըլլայ Էջմ. 1132, թղ. 1ա-173ա*[12] *(ԺԶ. դարէ), որ անխորագիր է և կը սկսի. «Հռչակաւոր մարգարէն Եսայի աստուածաբան էր ի մէջ ամենայն մարգարէիցն, վասն որոյ գերազանցեալ և առաւել էր քան զամենայն մարգարէսն: Եւ զառաւելութիւն և զպայծառութիւն մարգարէութեան սորա ի մէջ մարգարէիցն ի Պօղոսէ ուսանիմք...»: Վերջին տողերս ցոյց կու տան, թէ Ոսկեբերանի Յառաջաբանութիւնն անմիջնորդաբար կամ միջնորդաբար մատչելի եղած է հեղինակին»*[13]*:*

*Դավիթ Բանդին «Գևորգ Սկևռացու Եսայու մեկնության աղբյուրները» գործում, հղելով Ն. Ակինյանի վերոնշյալ՝ 1938 թ. աշխատությունը և Գևորգ Սկևռացու Մեկնության լուսանցքներում հիշատակված Սարգսին նույնացնելով Սարգիս վրդ. Կունդի հետ, բերում է նրանից 51 քաղված*[14]*: Համեմատելով Երևանի Մատենադարանում պահվող, 1295 թվականին գրված № 4825 ձեռագրի՝ Գևորգ Սկևռացու Եսայու մեկնության լավագույն ընդօրինակության «Սարգ.» հղված հատվածները և Սարգիս Կունդին վերագրվող բնագիրը պարզվում է, որ դրանք տարբեր գործեր են: Երկու բնագրերում համեմատելի են ԺԳ 1, ԺԴ 14, ԺԸ 7, ԺԹ 1, ԼԲ 11, կե 20 գլուխների մեկնությունները, որոնք, սա-*

---

11 Ն. Ակինյան, Սարգիս Կունտ, էջ 97:

12 Բնագիրը ձեռագրի 1ա-180բ թերթերում է:

13 Ներս. վրդ. Ակինեան, Յովհաննու Ոսկեբերանի Եսայեայ մեկնութիւնը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1938, էջ 39:

14 David D. Bundy, The sources of the Isaiah commentary of Georg Skewrac'i, University of Pennsylvania, Armenian text and studies 6, Scholars Press, Chico-California, 1984.

*կայն, միմյանցից տարբեր բովանդակություն ունեն: 1295 թ. ձեռագրի հիշատակարանում Լևոն գրիչը գրում է. «Արդ՝ բարգավաճս այս վսեմ **Հեթումս**, ի մտի եդեալ զսոսա ի մի ժողովել՝ զաւակ ի Սիոն զսա իւր և բարի նախնեաց գանձելուն, խնդրեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ ի յերրերջանիկ և ի լուսաբան րաբունապետէս **Գէորգեայ**, որ ընդ այսու ժամանակ առաքինութեամբ յանձին ներգործութեամբ բնաւին փարթամացեալ, որ այժմս քրտնաջան երկեամբք հրահանգէ զհամբակս, որ բանի են հետևեալ զյոլովս: Իսկ սա, որպէս քարոզ ճշմարիտ, հնազանդեալ հարկեցուցանաւղ հրամանին, և զի էր Սարգսի վարդապետի հոգացեալ, առեալ և զայն, և զայլ բանսն սրբոց մեկընչացն՝ համառաւտ զուգեաց առ իրեարս կարճաբանութեամբ եդեալ, զմըտացն ամբողջ ունելով զզաւրութիւն, և գրեալ ձեռամբ իւրով՝ ետ նմա»[15]: Մնում է ենթադրել, որ Գևորգ Սկևռացու մոտ «Սարգ.» անունով հղված մեջբերումները Սարգիս Կունդի «Եսայու մեկնութիւնից» չեն, կամ էլ Ն. Ակինյանի համարած՝ Էջմիածնի (այժմ՝ Երևանի Մատենադարանի) № 1132 ձեռագրի «Մեկնութիւն Եսայու մարգարէութեան» բնագիրը Սարգիս Կունդինը չէ (որն ավելի ակնհայտ է), այլ անունն անհայտ հեղինակի գործ է: Այն ստեղծվել է, հավանաբար, ԺԵ-ԺԶ դարերում:*

*Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ Սարգիս Կունտի գործերը շարք-մեկնություններ են, իսկ մեզ հետաքրքրող մեկնությունը՝ ազատ շարադրանք, նախընտրում ենք հրաժարվել վերջինս Սարգիս Կունդին վերագրելուց և համարել այն անանուն հեղինակի գործ:*

***

*Ինչպես նշեցինք արդեն, «Մեկնութիւն Եսայու մարգարէութեան» հրատարակվող բնագիրը մեզ է հասել երեք ձե-*

---

15 ՄՄ. ձեռ. № 4825, թերթ 207ա: Տե՛ս նաև ՄՄ. ձեռ. № 4214, թերթ 223ա: Հիշատակարանն ամբողջությամբ տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 751 և 832:

*ռադիր ընդօրինակութիւններով, որոնք պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Այդ ձեռագրերն են՝ № 1132 (ԺԶ դ.), 9480 (1726-1728 թթ.) և 6615 (ԺԸ դ.): Այս 3 ձեռագրերից և ո՛չ մեկում հեղինակի անունը չի հիշատակվում, չնայած որ Մաշտոցյան Մատենադարանի Համառոտ ձեռագրացուցակում հեղինակը, անկասկած, համարված է Սարգիս Կունդը*[16]*: Պահպանված միակ՝ 1726 թվականին գրված գրչի հիշատակարանում կարդում ենք. «Փա՛ռք... Եւ արդ՝ յանգ ելեալ աւարտեցաւ աստուածախօս և մարգարտաշար սբ. տառս, որ կոչի Տօմարի մեկնիչ, ի ՌՃՀԵ (1726) թվականիս, ձեռամբ մեղսամած, փծուն և անիմաստ գրչի Սիմէոնի, ի խնդրոյ սրբազան և մաքրակենցաղ, երջանիկ, երից եռանեալ րաբունապետին տեառն Վարդան աստուածաբան վարդապետի Խիզանցւոյ, որ ետ զԳ (3) հատոր գիրքս գրել: Եւ հազիւ գտեալ զօրինակն՝ զՏօմարի մեկնիչն, որ արարեալ է [ի] Յակոբ վարդապետի Ղրիմեցւոյ, և զերգ երգոցն՝ արարեալ ի սրբոյն Տաթևացւոյ, և զԵսայու մեկնիչն, և զՄասնաւոր իշխանութիւն և զծայրագոյն գաւ[ազ]ան տալն ետ գրել: Եւ եղ ի մի տուփ եռափափագ սիրով և ուղիղ սրտիւ՝ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղաց իւրոց...» և այլն*[17]*: Ինչպես տեսնում ենք, հիշատակարանում ոչինչ չի ասվում աշխատության հեղինակի մասին: Սարգիս Կունդի «Եսայեայ մեկնութեան» հեղինակի համարումը, անկասկած, գալիս է Ներսես վրդ. Ակինյանից:*

*Ստորև ներկայացնում ենք այդ ձեռագրերի համառոտ նկարագրությունները.*

*A = Ձեռ. № 1132 – ժողովածու: ԺԶ դ.: Թերթ՝ 210: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 14,7x10: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18: «Մեկնութիւն Եսայեան» ամփոփված է 4ա-180բ թերթերում: Բնագիրը թերի է, ավարտվում է, «... պատճառ լինի հիւանդութիւնն որպէս Ղազարուն ///»: Առանձնահատկությունները. չունի խորագիր: օ=աւ (օրինակ=աւրինակ, օրէնք=աւրէնք,*

---

16 Տե՛ս աստ, ծնթ. 1:

17 ՄՄ. ձեռ. № 9480, թերթ 85ա-բ:

*աղօթ.ք=աղաւթ.ք, խօսել=խաւսել), օ-ի փոխարէն ունի աւ (առօ-լեալ փխ առաւելեալ, համարձակեցօ փխ համարձակեցաւ, մարգարէացօ փխ մարգարէացաւ, քակեցօ փխ քակեցաւ, ղօակն փխ ղաւակն, գտօ փխ գտաւ): Հապաւումներ՝ Ա.ծ (Աստուած), ամ (ամենայն), վայ (վասն որոյ), էմ (Երուսաղէմ), էլի (Իսրայէլի): Ունի Եգիպտոս բառի յուլօրինակ համառոտագրութիւն: Աշխարհ բառի համառոտագրութիւնը երբեմն օգտագործված է նաև Երուսաղէմ բառի համար: Հաճախ՝ ժողովրդ փխ ժողովուրդ, բնեաց փխ բղխեաց և այլն: Բառերի վրա ունի ինչպէս գրչի, այնպես էլ այլ ձեռքով և մելանով սրբագրութիւններ:*

*B = Ձեռ. № 9480 – ժողովածու: 1726-1728 թթ.: Ստացող՝ Վարդան վրդ. Խիզանցի: Թերթ՝ 309: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 19,7x15,4: Գրութիւն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 27: «Մեկնութիւն Եսայեան» ամփոփված է 185ա-274բ թերթերում: Բնագիրը թերի է, ավարտվում է. «Եւ ոչինչ են և ոչինչ համարեցան: Եւ Քրիստոսի մարգասիրին փառք յաւիտեանս. ամէն»: Առանձնահատկութիւնները. չունի խորագիր, ունի գրչի նշանակած երեսնական գլխաբաժանումները, այսինքն՝ Ա (1)-ից Լ (30)-ը. ամեն մի Լ (30)-ից հետո շարունակվում է Ա (1)-ից: Թերթ 256բ-ում ունի հերթական ԺԹ գլխահամարը, որից հետո գլխահամարները չեն շարունակվում: Գլխաբաժանումները, հաճախ, կրկնվում են, օրինակ՝ սկզբի Ա-Լ գլխահամարների մեջ կրկնված է Իթ (29)-ը՝ երկու անգամ: Լ (30)-ն նշված է կարմիր գույնով, որից հետո շարունակվում է Ա-ով: Այսաեղ էլ կրկնված է թ (9)-ն՝ երկու անգամ և այլն: Համառոտագրութիւն. սս = այսպէս, յաոնի = յայտնի, խ փխ հ (խոչակաւոր = հռչակաւոր, խնազանդ = հնազանդ, ղոխ = ղոհ, խոտոռել = հոտոռել և այլն):*

*C = Ձեռ. № 6615 – ժողովածու: ԺԸ դ.: Թերթ՝ 261: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 20x14: Գրութիւն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 31: «Մեկնութիւն Եսայեան» ամփոփված է 111ա-215ա թերթերում: Բնագիրն ավարտվում է. «... այլ ո՛չ մեռանէին տարաժամ»: Առանձնահատկութիւնները. ունի բազում բացթողումներ և հավելումներ: Թերթ 157ա-ում ԺԹ գլխից հետո*

*շարունակվում է գլուխ ԻԵ 1-ով: Հաճախ խառն է Ե և Է տառերի գործածությունը: Ունի գլխահամարների և տնահամարների լուսանցային նշումներ: Բայի ժամանակային ձևերում օգտագործում է **կու** նախածանցը (կու ելանէ, կու դառնայ, կու փսխէ և այլն): **Պիտի** բառի փոխարեն ունի բարբառային **պիտը** կամ **պիտէը**: Լուսանցքներում նշված են գլխահամարներ և տնահամարներ:*

*Եթե այս երեք ձեռագրերը համեմատելու լինենք, ապա առաջին երկու ձեռագրերը կազմում են մեկ խումբ, իսկ վերջինը՝ մեկ այլ: № 9480 ձեռագիրն ընդօրինակված է ԺԶ դարում գրված No 1132 ձեռագրից, կամ, որ ավելի հավանական է, այս երկու ձեռագրերն ընդօրինակված են միևնույն հիմք օրինակից, որը մեզ չի հասել: Նշված երկու ձեռագրերն իրար ավելի հարազատ են, սակայն ունենալով ընդհանրություններ և միանման՝ ո՛չ ճիշտ ընթերցումներ, նաև տարբեր են:*

*Առանձնանում է № 6615 ձեռագրում պահպանված բնագիրը, որի տեքստն աղավաղված է: Համեմատելով այս և նախորդ երկու ընդօրինակությունների միևնույն գլխի մեկնությունները նկատում ենք, որ մի գլխի մեկնությունը, հաճախ, հանդես է գալիս մեկ այլ գլխի մեկնության հետ*[18]*. ԻԶ 5 գլխի մեկնությունից հետո շարունակվում է Թ 5 գլխի մեկնությունը և այլն: Կան նաև գլխահամարների մեկնությունների եռևառաջություններ (AB ձեռագրերի համեմատությամբ. Ա 16-ը Ա 17-ից հետո, Ա 17-ը՝ Ա 18-ից, Ա 18-ը՝ Գ 3-ից): Տարբեր են Ը 19-ի մեկնությունները: Այս, հավանաբար, հետևանքն է այն բանի, որ հիմք օրինակը եղել է վնասված, խառն դասավորությամբ: Սակայն, ի տարբերություն նախորդ երկու ընդօրինակությունների, այս ձեռագրում պահպանվել են ԻԵ գլխահամարից հետո եկող մեկնու-*

---

18 Այս ձեռագրի մեկնությունների փնտրտուքը կատարված է համակարգիչի օգնությամբ: Հաճախ այն գլուխների մեկնություններում, որտեղ համեմատության ժամանակ, որպես տառընթերցվածք, դրել ենք չիք նշանը, համակարգչով փնտրելուց հետո փակագծում նշել ենք՝ չկա համապատասխան հատվածը համեմատված է ըստ AB ձեռագրերի դիրքի:

*թիւնները, որոնք, սակայն, այլ օրինակի հետ համեմատելի չեն. ասել է, թե հատակ չենք կարող ասել, որ պահպանված հատվածը միևնույն մեկնութեան մասն են կազմում, այլ ոչ թէ ընդօրինակված են մեկ այլ մեկնութիւնից: Նկատենք նաև այն, որ երեք ձեռագրերում էլ, հաճախ, պլխահամարները խառն են մեկնված, այսինքն՝ թ 12-ից հետո մեկնվում է Զ 1 պլուխը, ժէ 3-ից հետո՝ ԻԷ 2-ը և այլն: Բնագրում պլխահամարների և տնահամարների հաջորդականութիւնը թողել ենք անփոփոխ: Այս նկատառումներն ունենալով համեմատութեան համար, որպես հիմք օրինակ, ընտրել ենք ինչպես հնագույն, այնպես էլ համեմատելի երեք ունեցող No 1132 ընդօրինակութիւնը:*

****

*Ավելորդ չենք համարում իրև երկրորդ բնագիր ներկայացնել նաև Գևորգ Սկևռացու «Մեկնութիւն Մարգարէութեանն Եսայեայ» աշխատութիւնում պահպանված, Սարգիս Կունդին վերագրվող հատվածները՝ երեք հնագույն ձեռագրերի համեմատութեամբ[19]:*

*Ձեռագրերի համառոտ նկարագրութիւններն են.*

*Ա = Ձեռ. № 4825 – 1295 թ.: Գրիչ՝ Լևոն դպիր: Ստացող՝ Երեմիա քհյ: Թերթ՝ 208: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 24x16: Գրութիւն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 37: Սարգիս Կունդի «Եսայու մեկնութեան» հատվածներն ամփոփված են 52ա, 55բ, 56ա, 58բ, 59բ, 60բ, 61բ, 62ա, 63բ, 64բ, 65ա, 69ա[1], 69ա[2], 69բ, 70ա[1], 70ա[1-2], 70բ, 71ա, 73բ, 76բ, 77ա, 77բ, 78ա, 78բ, 81ա, 86ա, 88ա, 90բ, 91ա, 93ա, 93բ, 94ա*, 95բ[1]*, 95բ[2], 96ա, 98ա, 99ա, 100ա, 101ա, 102բ[1], 102բ[1-2], 103բ, 107բ[1], 107բ[2], 108ա, 126բ, 128ա, 133բ, 134բ, 143ա, 153բ, 161ա, 185բ, 186ա, 187ա, 190ա,*

---

19 Գևորգ Սկևռացու Մեկնության հնագույն՝ Մատենադարանի երրորդ ձեռագիրը պետք է լիներ № 1209՝ ԺԳ դարի ընդօրինակությունը, որը չենք ընդգրկել թերի լինելու և ԺԸ դարում նոտրգիր սրբագրումներ ունենալու կապակցությամբ:

193բ*, 200ա թերթերում[20]: Առանձնահատկությունները. բոլոր դեպքերում օգտագործված է աւ (աւրինակ, աւրէնք, առաւել և այլն): Հապավումներ՝ Ած (Աստուած), Եմ (Երուսաղէմ), Իէղ (Իսրայէղ):

B = Ձեռ. № 14 – 1298 թ.: Վայր՝ Սկևռայ, Սիս: Գրիչ՝ Գրիգոր քհյ: Ստացող՝ Տէր Վարդան: Թերթ՝ 233: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 24, 5x17: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Սարգիս Կունդի «Եսայու մեկնութեան» հատվածներն ամփոփված են 59ա, 62բ, 63ա, 66ա, 66բ*, 67բ*, 68բ, 69բ, 70բ, 71բ*, 72ա*, 74ա[1], 74ա[1-2], 74բ, 75ա (2 հատ), 75բ[1], 75բ[2]+80ա, 82ա, 83ա, 83բ[1], 83բ[1-2], 84ա, 84բ, 87ա, 91բ, 93ա, 95ա, 95բ, 97ա, 97բ, 98ա, 99ա*, 99բ[1]*, 99բ[1-2], 101ա, 102ա, 103ա, 104ա, 105ա[1], 105ա[2], 106ա, 109բ[1]*, 109բ[2]*, 110ա*, 130ա, 132ա, 137ա, 138բ, 147ա, 160ա, 168բ, 198բ, 199ա, 200ա, 203բ, 207բ, 215ա թերթերում: Առանձնահատկությունները. ընդօրինակված է № 4825 ձեռագրից: Բոլոր դեպքերում օգտագործված է աւ (նմանաւղ, թշնամանաւղ և այլն): Հապավումներ. Ած (Աստուած), Եմ (Երուսաղէմ), Իէղ (Իսրայէղ): Ունի ե-ի և է-ի խառը գործածություն: 75բ թերթի ԻԱ 17 գլխի մեկնությունը շարունակվում է 80ա թերթում, իսկ 76ա-79բ թերթերում ամփոփված մեկնությունները սկսվում են ԺԹ 6 գլխով. «...զայլ նշանան, որ եղեն յԵգիպտոս, զժուարին էր այս... Եւ մարգապետինք և լաւն և կանաչ ցամաքեացին...», և վերջանում ԻԴ 5-ով. «Անաւրինեցաւ երկիր վասն բնակչաց... յայտ է, թէ զնորս, քանզի նորս ո՛չ է»:

C = Ձեռ. № 4119 – Ժողովածու: 1307 թ.: Վայր՝ Կիլիկիա: Ստացող՝ Յովհաննէս վրդ.: Թերթ՝ 331: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 25x17: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 36: Սարգիս Կունդի «Եսայու մեկնութեան» հատվածներն ամփոփ-

20 Աստղանիշով արտահայտված են ձեռագրերի այն թերթերը, որոնց լուսանցքներում բացակայում են «Սարգ», «Սրգ» կամ «Սգ» նղումները:

*ված են 203բ, 206բ, 207ա, 209ա, 210ա, 210բ, 211բ, 212ա, 213ա, 214ա, 214բ, 217բ, 218ա, 218բ (3 հատ), 219ա, 219բ, 221բ, 224ա, 224բ (2 հատ), 225ա, 225բ, 228ա, 232ա, 233բ, 235բ (2 հատ), 237ա, 238ա (2 հատ), 239ա, 239բ (2 հատ), 241ա, 242ա, 243ա, 243բ, 244բ (2 հատ), 245բ, 248բ, 249ա (2 հատ), 265ա, 266ա, 270բ, 271բ*, 277բ, 286ա, 292բ, 314ա, 314բ, 315ա, 318ա, 320բ, 326բ թերթերում: Առանձնահատկութիւնները. լուսանցքներում հղումները նշված են «Սգ.» կամ «Սրգ.» ձևով: Հաճախ ա-ն սղում է ուղիղ գիծ դնելով, օրինակ՝ ար՛ր, իւր՛ք՛նչիւր և այլն: Համառոտագրութիւնները՝ Ա.ծ, Ս.մ, Ի.է: Թվականները տառերով են*[21]*:*

***

## *Բնագրի պատրաստման սկզբունքները*

*Ներկայացվող այս և հրատարակութեան պատրաստման ընթացքում գտնվող այլ բնագրեր կազմված են մատենաշարի խմբագիրների և բնագիրը կազմող հեղինակների կողմից մշակված սկզբունքներով: Նկատի են առնված սուրբգրային մեկնութիւնների բնագրերի նկատմամբ վերջին տասնամյակում մեզանում առաջացած հետաքրքրութիւնը, մեկնողական գրականութեան դասավանդման լսարանի ընդլայնումը: Որպես տարբերթերցված արտահայտվել են առավել կարևորները: Երկրորդական համարված տարբերթերցվածները խմբավորված են, որոնք, սակայն, ամբողջութեամբ պահպանված են սուրբգրային հղումներում: Ուրիշի ուղղակի խոսքերն առնված են չակերտների մեջ:*

*Չեն արտահայտված հետևյալ տարբերթերցվածները*[22]*.*

---

21 Պետք է նշենք, որ ԻԱ 1-2. Ն 6. ԼԳ 20 գլխահամարների մեկնությունների վերջը ճստակ չէ. հղումն ամբողջությամբ արտահայտել ենք, սակայն վստահ չենք, թէ որտե՞ղ է ավարտվում Սարգիս Կունտի մեկնությունը, որտե՞ղ է սկսվում Գևորգ Սկևռացունը:

22 Օրինակները բերված են ըստ ամաանուն հեղինակի բնագրի: Նշեմ նաև, որ բնագրերում գլխահամարները և տնահամարները հղված են ըստ Զոհրապյան հրատարակության. տե՛ս Աստուածաշունչ, Վենետիկ, 1805 թ:

*1. Գրչի բացահայտ վրիպակները կամ սխալները (նաև՝ քերականական), օրինակ՝ C խոտումն փխ AB խոստումն, C նեղուԹեանցն փխ AB ներեղուԹեանցն, AB բարձեալ փխ C բարձրեալ, AB գոյԹ փխ C գուԹ, A ուղէր փխ BC ուղղէր, B դարձ փխ AC դարձեալ, B նորումնս փխ AC նորումս և այլն:*

*2. Գրչի համառոտագրած այն բառերը, որոնց վրա չկան համառոտագրուԹյան նշանները, բայց ընկալվում են որպես այդպիսիք, օրինակ՝ AB գրեաց փխ C գերեաց, A դառագոյն փխ BC դառնագոյն և այլն:*

*3. Յ կիսաձայնի կիրառուԹյունը կարգավորել ենք գրաբարի համար այսօր օգտագործվող ուղղագրուԹյան համաձայն, իսկ շեղումները տողատակում չենք արտահայտել, օրինակ՝ B անձն փխ AC յանձն, իւրաքանչիւր փխ յիւրաքանչիւր, BC յերկիր փխ A երկիր և այլն:*

*4. Յ-ից առաջ ի-ի օգտագործումը (արտահայտված չէ ի նախդիրի հավելադիր օգտագործումը), օրինակ՝ ի յիւրում, ի յերկինս, ի յԵգիպտոս, ի յանապատին և այլն:*

*5. Ըստ իմաստի կարգավորել ենք որոշիչ հոդերերի կիրառումը, օրինակ՝ AB զդարձ փխ C զդարձն, AB քաջուԹիւն և զառաւելուԹիւն փխ C քաջուԹիւնն եւ զառաւելուԹիւնն, C մարգարէուԹեանն փխ AB մարգարէուԹեան և այլն:*

*6. Տարընթերցվածներում չենք նշել և կապի կորուստը. օրինակ՝ AC և վասն - B չիք և:*

*7. Հետևելով բնագրի իմաստին՝ կարգավորել ենք նախդիրների կիրառուԹյունը. օրինակ՝ AB լուսաւոր փխ ի լուսաւոր, AC զնոսա փխ B ի նոսա և այլն:*

*8. Բարբառային ձևերը, օրինակ՝ A գիրեմք փխ BC գրեմք, BC նախապետն փխ A նահապետն և այլն:*

*9. Ըստ բնագրի ոչ ճիշտ ձևերը, օրինակ՝ C կաթողիկոսին փխ AB կաթողիկոսն, B ունի փխ AC ունեննայ, A վարդապետք փխ BC վարդապետն և այլն:*

*10. Բառերի եռևառաջութիւնները, օրինակ՝ AC իւր թեմին փխ B թեմին իւրոյ և այլն:*

*11. Կարգավորել, միօրինակութեան ենք բերել քերականական շեղում ունեցող տարընթերցվածները, օրինակ՝ AB գայ փխ C գային, A լուաւ տրտմեցաւ փխ B լուեալ տրտմեցաւ և այլն:*

*12. Բայի անցյալ ժամանակային ձևերում է և ե տարբերութիւնները:*

*13. Գրչի բացթողած բառը կամ բառակապակցութիւնը, որոնք մյուս օրինակներում հստակ արտահայտված են, օրինակ՝ AB եւ առաւելեալ - C չիք եւ առաւելեալ, AC վասն նոցա - B չիք վասն, C ի վերայ - AB չիք ի վերայ և այլն:*

Արմեն Մալխասյան

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՍԱՅԵԱՅ, ԶՈՐ ՄԵԿՆԵԱԼ ԵՒ Ի ԼՈՅՍ ԱԾԵՑԵԱԼ Է Ի ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ[1]

*[Նախերգան]*

*Հռչակաւոր մարգարէն Եսայի աստուածաբան էր ի մէջ ամենայն մարգարէիցն, վասն որոյ գերազանցեալ և առաւելեալ էր քան զամենայն մարգարէսն: Եւ զառաւելուԹիւնն, և՛ զպայծառուԹիւն մարգարէուԹեան սորա ի մէջ մարգարէիցն ի Պօղոսէ ուսանիմք, զոր գրեալ է յիւրում շարագրուԹեան ԹղԹին վասն մարգարէիս և ասէ. «Համարձակեցաւ Եսայի և ասէ. Գտայ այնոցիկ, որ*[2] *զիս ո՛չ խնդրէին, և յայտնի եղէ այնոցիկ, որ զիս ո՛չ ճանաչէին» (Հռոմ. Ժ 20, հմմտ. Ես. կԵ 1): Դարձեալ յիւրում գրոցս, որ ասացեալ է և մարգարէացեալ և մեկնիչն մեկնեալ, ուսանիմք զսորա քաջուԹիւնն և զառաւելուԹիւնն, որ քան զամենայնն գերազանցեալ է սա մարգարէուԹեամբն: Զի զազդումն մարգարէուԹեան և զշնորհքն, զոր առ յԱստուծոյ*[3]*, մարգարէացաւ նախ վասն գերուԹեան տանն Ռուբենի և Գադայ, զոր նախ գերեաց Թակլաթփաղսար*[4]*, և վասն Սամարիայ և այլոց ցեղիցն, զոր յետոյ գերեաց Սաղմանասար, և վասն Յուդայեան ցեղին որ յԵրուսաղէմ, զոր գերեաց Նաբուգոդոնոսոր*[5]*, և այլ յիւրաքանչիւր ժամանակի, զոր ինչ անցք անցանելոց էին առ իսրայէլացիքն, մարգարէականայր սա վասն խաղաղուԹեան և վասն խռովուԹեան և վասն պատերազմի կամ պատուհասի, և վասն գերուԹեան և վասն դարձի:*

---

1 AB *չիք* խորագիրը
2 B որք
3 C Աստուած
4 G Թակլադփախասար
5 B Նաբոգոդոնոսոր *C և բ[ո]գ[ո]դ[ո]ս[ո]ր*

*Այլ և մարգարէացաւ զմերժումն հրէից, և մարգարէացաւ զդարձն հեթանոսացն, որ հաւատացեալ էին ի Քրիստոս, այլ և ամենայն անձին ի չարանալն սպառնայր, և ի հանդարտելն և ի դառնալն խոստումն բարեաց:*

*Այլ և մարգարէացաւ ի վերայ*[1] *բոլոր անօրէնութեանն Քրիստոսի: Զի այլ մարգարէքն մի մի բան մարգարէացան վասն*[2] *Քրիստոսի*[3] *մարդեղութեանն և անօրէնութեանն, իսկ մարգարէն*[4] *Եսայի զբոլորն մարգարէացաւ՝ վասն ծննդեանն, և վասն խաչելութեանն, և վասն թաղմանն և յարութեանն, և վասն համբարձմանն: Մարգարէացաւ վասն ծննդեանն Քրիստոսի ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ, և ասաց.* «Ահա՛ կոյսն[5] յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն» *(Է 14): Մարգարէացաւ և ասաց վասն խաչին.* «Տեսի՛, և ո՛չ դոյր նորա տեսիլ» *(Ծգ 2), և* «Իբրև գոչխար ի սպանդ վարեցաւ» *(Ծգ 7) և այլն: Մարգարէացաւ և ասաց վասն թաղման և յարութեան նորա.* «Կամի սրբել զմեզ ի վերաց անտի» *(Ծգ 10): Մարգարէացաւ և ասաց վասն համբարձման.* «Ո՞վ է սա, որ գիմեալ գայ յԵդովմայ[6]» *(կգ 1), և այլ բազումս, զորս*[7] *թէ Տէր կամեսցի և յաջողեսցէ*[8]*, որ կարդամք զգիրս*[9] *զայս ամենայն ուսանելոց եմք: Այսքան նախերգան է:*

## *[Մեկնութիւն]*

*Այժմ գրեմք ի մեկնչաց բանից ծաղկաքաղ և ի լուսաւոր բանից վարդապետին, զոր ի դասն լսեցաք*[10]*:*

---

1 AB վասն *փխ* ի վերայ
2 A *չիք* վասն
3 B *չիք* զի այլ մարգարէքն մի մի բան մարգարէացան վասն Քրիստոսի
4 C մարգարէս
5 BC կոյս
6 A յԵդովմայ BC յԵդոմայ
7 AB զոր
8 AB յաջողէ
9 AC զգիրքս
10 AB *չիք* զոր ի դասն լսեցաք

*Զի ո՛չ միայն մարգարէանայր Եսայի վասն ազգին Իւրոյ և ժողովրդեանն, և սպառնայր վասն Հանդերձեալ վշտացն*[1], *որ կրելոց էին, այլ և առաւել քան զնոսա, որ կրելոց էին զվիշտն*[2], *վշտանայր և դառնագոյն սգայր և ողբայր, և վշտակից լինէր վասն նոցա և ցաւակից: Նաև ամենայն մարգարէքն քան զծնօղսն*[3] *առաւել գութ ունէին առ այնոսիկ*[4], *որոց մարգարէանայր, և անչափ քան զմարդկային բնութիւնս ընդդէմ կային նեղութեանցն, որ գային ի վերայ ժողովրդեանն: Վասն որոյ և ի սուգ մտանէին, ողբս նուագէին, զԱստուած աղաչէին, ընդ գերեալսն ի գերութիւն երթային, ջանային, հնարէին զժողովուրդն յերկնային բարկութենէն զերծուցանել:*

*Զի չիք հաւասար այնմ գթոյ, յորժամ իշխանքն վշտակից լինին իշխեցելոցն՝ թէ՛ հոգևոր և թէ՛ մարմնաւոր իշխանք իցեն: Զի կաթողիկոսն պարտ է, որ գութ ունենայ ի վերայ բոլոր ազգին իւրոյ, և եպիսկոպոսն պարտ է, որ գութ և սէր ունենայ ի վերայ թեմին իւրոյ, և քահանայն՝ ի վերայ իւր ծխին, և վարդապետն՝ ի վերայ բոլոր ազգիս*[5] *քրիստոնէից: Եւ այժմ գութն բարձեալ է: Վասն այն զՄովսէս գլուխ կարգեաց ժողովրդեանն Աստուած, զի գութ ունէր առ նոսա*[6]*: Վասն յաճախ գթոյն, զոր ունէր առ ժողովուրդն, աղաչէր զԱստուած. «Թէ թողուս դոցա՝ թո՛ղ, ապա թէ ո՛չ՝ և զիս ջնջեա՛ ի գրոյն կենաց» (Ելք ԼԲ 32): Երեմիա մարգարէն ողբայր և արտասուէր և լայր ի վերայ կործանմանն Երուսաղէմի: Եզեկիէլ մարգարէն ընդ ժողովրդեանն գնաց ի գերութիւն, թէպէտ զմարգարէն ո՛չ տանէին, այլ ինքն կամաւ գնաց, զի խրատէր զնոսա և ուսուցանէր և մխիթարէր ի մէջ վշտին, և ուղղէր զսիրտ նոցա առ Աստուած: Դանիէլ*[7] *մար-*

---

1 C վշտին
2 B զվիշտս
3 A զծնօղս, C զամենայն ծնօղս
4 B այնոցիկ
5 B աշխարհիս *փխ* ազգիս, C ազգին
6 AB նա
7 C դարձեալ *փխ* Դանիէլ

*գարէն Ի (20)*[1] *և աւելի աւուրս անհայ պահէր և աղօթելով աղաչէր զԱստուած դարձ առնել նոցա ի չար գերութենէն՝ ասէր.* «Տէր Աստուած, ամենայն կռապաշտից քաղաքն[2] շէն է[3], և երուսաղէմ, որ [քո] քաղաքն է, աւեր է, ամենայն կռոց տաճար շէն է, և քո տաճարն քակեցաւ[4]» *(հմմտ. Դանիէլ. Թ 18) և այլն: Դաւիթ մարգարէն ետես զպատուհասն եկեալ ի վերայ ժողովրդեանն, խնայեաց զնոսա և յիւր անձն, կոչէր զհարուածն ասելով.* «Սուր քո ի յիս և ի տան հօր իմոյ, անմեղ ժողովուրդն[5] զի՞նչ[6] է[7] արարեալ, որ կու պատժես» *(հմմտ. Բ. Թագ. ԻԴ 17): Նահապետն Աբրահամ այնպէս աղաչէր զԱստուած վասն սոդոմայեց[ւ]ոցն, որպէս թէ և ինքն ի ներքս*[8] *ի բարկութեան իցէ, և ո՛չ դադարէր ի խօսելոյ և յաղաչելոյ*[9]*, մինչև զամենայն ասաց.* «Զի կարիցէ[10] ցածուցանել զբարկութիւնն[11] Աստուծոյ[12]» *(հմմտ. ելք ԼԲ 30): Իսկ*[13] *ի նորումս առաքեալքն ևս առաւել վշտակից էին վասն հաւատացելոցն, որ քարոզէին նոցա, զի ո՛չ զանձանց, այլ*[14] *զբազմաց օգուտ հոգային: Պետրոս յորժամ լուաւ*[15] *ի Քրիստոսէ, թէ՝* «Դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն[16] երկնից» *(Մտթ. ԺԹ 23), թէպէտ վասն անձին իւրոյ վստահ էր*[17]*, զի*[18] *ինքն ինչս ո՛չ ունէր, այլ վասն հասարակաց մարդկան վշտանայր, և հարցանէր ահիւ, թէ՝* «Ո՞վ

---

1 B *չիք* Ի (20)
2 A քաղաքի
3 B շինէ՝ *փխ* շէն է
4 C փակեցաւ *փխ* քակեցաւ
5 C ժողովրդեանն
6 AB ինչ
7 AC են
8 B ներս
9 C *չիք* և յաղաչելոյ
10 B կարասցէ
11 AB զբարկութիւն
12 AB *չիք* Աստուծոյ
13 AB *չիք* իսկ
14 C *չիք* այլ
15 AB լսեց
16 AC յարքայութիւնն
17 AB վստահանէր
18 AB էլ *փխ* զի

կարիցէ ապրել[1]» *(Մարկ. ԺԶ 26, Ղուկ. ԺԸ 26): Եւ թէ այս որպիսի է: Զի այն պատանեակն, որ եկն առ Քրիստոս և ասաց.* «Տէր ղի՞նչ գործեցից, զի զկեանս յաւիտեանս[2] ժառանգութիւն տաս ինձ» *(հմմտ. Ղուկ. Ժ 25, ԺԸ 18): Ասաց.* «Զպատուիրանս[3] գիտես» *(Ղուկ. ԺԸ 20), զինչ որ գրեալ է, զայն արա՛, որ յաւիտենից կենացն ժառանգորդ լինիս: Ասաց. Զո՞ր պատուիրանն[4]: Ասաց.* «Մի՛ շնար[5] և[6] մի՛[7] գողանար[8]» *(հմմտ. Ղուկ. ԺԸ 20) և այլն: Ասաց.* «Զայդ ամենայն պահեցի և կատարեցի ի մանկութենէ իմ[մ]է» *(հմմտ. Ղուկ. ԺԸ 21): Յայնժամ ասաց Քրիստոս.* «Մի՛ և պակաս է ի քէն, զայն այլ արա՛ և կատարեալ լինիս և ժառանգես զերկնից արքայութիւնն, վաճառեա՛[9] զոր ինչ ունիս և տո՛ւր աղքատաց, որ գնաս[10] յարքայութիւնն» *(հմմտ. Ղուկ. ԺԸ 22): Եւ խոժոռեցաւ[11] պատանեակն, զի զինչս[12] բազումս[13] ունէր: Յայնժամ հրամայեաց Քրիստոս.* «Դժուարին է որ ինչս[14] ունիցին[15] մտանել յարքայութիւն[16] Աստուծոյ[17]: Դիւրին է մալխոյ[18] ընդ ծակ ասղան մտանել, քան մեծատան[19] յարքայութիւնն[20]» *(Մարկ. Ժ 23, 25, Ղուկ. ԺԸ 24-25): Եւ Պետրոս զայս լուեալ[21] տրտմեցաւ[22] և հոգաց զաշխարհիս մարդիկք[23],*

---

1 C ապրիլ
2 AC զկեանքն յաւիտենից
3 C զպատուիրանն
4 AC պատուիրան
5 A զմի շնանարն, C շնարն
6 B չիք և
7 C զմի
8 AC գողանայրն
9 C վաճառես
10 B և գնայ *փխ* որ գնաս
11 C խոճոռեցաւ
12 BC զինչս *փխ* զի զինչս
13 AC բազում
14 B ինչս բազում, C զինչս
15 C ունիցեն
16 AC յարքայութիւնն
17 AC *չիք* Աստուծոյ
18 C մախլոյ
19 B մեծատուն, C մեծատունն
20 AB յարքայութիւն
21 AC լուաւ
22 C *չիք* տրտմեցաւ
23 A մարդիքն, C մարդիկք

*թէ՝* «Այս մարդս զամենայն պատուիրանն կատարեալ էր[1] և զայն մէկն չէր կատարէր, այսպէս[2] ասաց Քրիստոս. Ապա բազումք կան յաշխարհի, որ զամենայն պատուիրանն չեն կատարէր, և մեծատունք ևս են, նոքա ի՞նչ պիտիր լինին», և *հոգաց և ասաց.* «Ո՞վ կարէ՞ցէ ապրել» *(Մարկ. ժ 26, հմմտ. Ղուկ. ԺԸ 26): Եւ Պօղոս առաքեալն առանց իւրոյ ազգին ո՛չ կամէր զՔրիստոս տեսանել, այլ ի միասին կամէր, որ տեսանէին զՔրիստոս: Զայսպիսի խնամս ցուցանէ և Եսայի, զի զպատուհասն, որ գալոց էր, սպառնայր մեղուցելոցն, սաստէր, զԱստուած աղաչէր վասն նոցա: Եւ եկեսցուք ի մեկնութիւն բանիս, որ ասէ*[3]*.* «Լո՛ւր երկին[4] և ո՛ւնկն դիր երկիր» *(Ա 2):*

*Զի ազգն հրէից քան զանզգայքն*[5] *անզդայագոյնք*[6] *եղեն, զի երկինք և երկիր, որ անզգայք*[7] *են, հնազանդին և լսեն հրամանաց Աստուծոյ, և նոքա՝ ո՛չ: Զի երկինք և երկիր լսեցին*[8] *Աստուծոյ, և յո՛չ էութենէ յէութիւն փոխեցան և եկին յէութիւն: Այլ և յԵգիպտոս*[9] *ո՛չ*[10] *լսեցին հրամանացն Աստուծոյ, և բանիւն Մովսէսի տասն ազգ հարուածովն տանջեցին զեգիպտացիսն և զփարաւոն: Երկիր զգորտն բղխեցոյց և զգետն յարիւն դարձոյց, և երկինքն զխաւարն եբեր և զկարկուտն և զհուրն ի վայր*[11] *իջոյց, և փոխանակ ապերախտ*[12] *ազգին*[13] *Իսրայէլի մարտեաւ ընդ*[14] *փարաւոն և ընդ եգիպտացին*[15]*: Այլ և ի բարերարելն*[16]

---

1 AB կատարեր *փխ* կատարեալ էր
2 B այնպէս
3 AB *չիք* եւ եկեսցուք ի մեկնութիւն բանիս որ ասէ
4 B երկինք
5 AC զանսգայքն
6 B անզգայեալգունք, C անսգայագոյնք
7 C անսգայք
8 AB լսիցին
9 B յայսմ *փխ* յԵգիպտոս
10 C *չիք* ոչ
11 AB վերայ *փխ* վայր
12 AB ապերախ[տ]ին
13 AB *չիք* ազգին
14 AB *չիք* ընդ
15 C եգիպտացիսն
16 AB բարերելն

*Իսրայէլի յանապատին լսեցին Հրամանացն Աստուծոյ երկինք և երկիր: Երկինք զմանանայն իջուցանէր, և լորամարգն[1] յերկրէ և ի ծովէն ելանէր, երկիր զջուրն յապառաժ վիմէն բղխեցուցանէր[2] և երկինքն ամպովն հովանի առնէր: Եւ յայլ և այլ[3] ժամանակս պատրաստ են առ ի լսել[4] Հրամանացն Աստուծոյ երկինք և երկիր. յորժամ կամի զմեղաւորսն տանջել կամ արդարոցն բարիս առնել, անձրև, կարկուտ, շանթ իջուցանել, երաշտութիւն պտղաբերել, ո՛չ պտղաբերել և այլն:*

*Զի որպէս հռչակաւոր և յայտնի արար զկոչումն իսրայէլացոցն, նոյնպէս և զմերժումն նոցա յայտնի արար[5] առաջի ամենեցուն, զոր[6] տեսին աչօք: Զի այն, որ ասաց Աստուած Աբրահամու, թէ՝ «Եղիցի[7] զաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ» (հմմտ. Ծննդ. ԻԶ 4), այս եղև իսկ և կատարեցաւ: Զի զաւակն Աբրահամու բացմացոյց իսրայէլացոց ազգն, զի ՀԲ(72) հոգի[8] մտին յԵգիպտոս և աճեցին և բազմացան անդ, և եղեն անթիւ և անհամար: Զի յորժամ յԵգիպտոսէ ելին զՃՌ (100000) էին՝ թող զկանայսն[9] և զմանկտիսն[10]: Այս է հռչակաւոր և յայտնի լինելն:*

*Դարձեալ. հռչակաւոր և յայտնի արար Աստուած զազգն Իսրայէլի յԵգիպտոս, որ տասն հարուածով տանջեաց զեգիպտացիսն և զփարաւոն և զիսրայէլացիսն անվնաս պահեաց: Զի Գ (3) օր խաւարն[11] իսրայէլացոցն[12] լոյս էր, և նոցա՝ խաւար, գետն Նեղոս[13] Գ (3) օր արիւն փոխեցաւ. եգիպտացոցն արիւն*

---

1 A մարգն, B զմարքն
2 A բըխէր, B բղխէր
3 AB այլ ամենայն *փխ* յայլ և այլ
4 AB ասել *փխ* առ ի լսել
5 AB արարի
6 C որ
7 AB եղցի
8 B ոգի
9 AC զկանայքն, B զկանայս
10 C զմանկտիքն
11 C իւրն *փխ* խաւարն
12 A իսիայէլացն
13 AB գետնն է լոյս *փխ* գետն Նեղոս

*էր և իսրայէլացոցն՝ ջուր: Շանաճանճն զնոսա խածանէր և զիսրայէլացիքն՝ ո՛չ: Նոյնպէս և ամենայն հարուածքն եգիպտաց-[ւ]ոցն միայն էր, և իսրայէլաց[ւ]ոցն՝ ո՛չ:*

*Դարձեալ. հռչակաւոր և յայտնի արար զնոսա ի կարմիր ծովն, որ զծովն պատառեաց*[1] *և զնոսա անցոյց, և զփարաւոն իւր զօրօքն ընկղմեաց: Դարձեալ. հռչակաւոր արար և յայտնի, որ համբաւն յամենայն տեղիքն տարածեցաւ յանապատին, որ ի (40) տարի անաշխատ պահեաց զնոսա և առանց գործոյ և վաստակելոյ: Զի մանանայ յերկնից և յօդոյդ իջուցանէր*[2] *և լորամարգ ի ծովէն, և կերակրէր զնոսա, և ջուր ի վիմէն բղխեցուցանէր և արբեցուցանէր*[3] *զնոսա և զովացուցանէր, և հանդերձն հետ անձինն*[4] *աճէր:*

*Այլ և հռչակաւոր և յայտնի արար, որ զամաղեկացիսն կոտորեաց Յեսու: Այլ և ի Յորդանան գետն, որ յետս դարձաւ, կէսն յակն դարձաւ և կէսն ի ծովն գնաց: Այլ և Յեսու զարեգակն արգել և կապեաց աւուր մի չափ՝ մինչև զայլազգիսն՝ զգաբաւոնացիսն կոտորեաց: Այլ և հռչակաւոր և յայտնի արար յերիքով, այլ և զքանանացիսն, որ*[5] *կոտորեցին:*

*Նոյնպէս և զմերժելն և զարտաքսելն յայտնի արար: Զի յորժամ մատնեաց վասն մեղաց իւրեանց զնոսա ի գերուԹիւն ի ձեռն բաբելացոցն, որ տարան ի Բաբելոն*[6]*, յայտնի եղև ամենայն աշխարհի, որ ամենեքեան տեսին և լսեցին զգնալն*[7] *նոցա ի գերուԹիւն*[8]*:*

**Որդիս ծնաւ և բարձրացուցի** *(Ա 2):*

---

1 AC պատառեաց նոցա համար
2 A իջուցէր
3 AC արբուցանէր
4 A յանձին
5 C *չիք* որ
6 C Բաբելոն գերի
7 AB զգնալսն
8 AB *չիք* նոցա ի գերութիւն

*Ո՛չ զհասարակաց երախտիսն[1] յիշէ, զի արարիչ է ամենեցուն և նախախնամիչ և դարմանիչ, այլ զայն միայն ասէ, զոր առ նոսա միայն արար: Զի «որդիս» կոչեաց զնոսա և բազում բարութիւնս[2] եցոյց առ ազգն իսրայէլացոցն, և «նոքա անարդեցին» (Ա 2) զնա, այսինքն՝ զպատուիրանն նորա[3] ո՛չ պահեցին:*

*Դարձեալ. ղիմաց Ադամայ, «Որդիս ծնայ և բարձրացուցի», որ ստեղծ յիւր պատկերն և ի նմանութիւն և եդ ի դրախտին, և նա անարգեաց, զի զպատուիրանն ո՛չ պահեաց:*

*Այլ և Քրիստոս իւր զալստեամբն՝ զբիւր չարեօք լցեալքս[4], պատուեաց միւս անգամ ծննդեամբն աւազանին: Զի հրէայքն հոգի ծառայութեան ընկալան, և մեք՝ հոգի յորդեգրութեան[5], մանաւանդ զի նոքա զՀոգին Սուրբ ո՛չ ունէին, և ո՛չ տալ[6] կարէին: Իսկ ի նորս զՀոգին Սուրբ առին առաքեալքն, և մկրտութեամբ աւազանին ձեռն դնելով այլոց տային զՀոգին Սուրբ[7]: «Որդիս ծնայ և բարձրացուցի»: Զամենայն բարիսն, զոր արարեալ[8] է Աստուած առ ազգն Իսրայէլի, այս միով բանիւս նշանակէ, որ[9] ասէ. «Որդիս ծնայ և բարձրացուցի»: Բարձրացուցանելն այն է, որ յԵգիպտոս բարձրացոյց զնոսա, զի տաճն Հարուածով զեգիպտացիսն տանջեաց և զնոսա[10] ազատեաց ի ձեռաց նոցա, և այն նոցա բարձրութիւն էր:*

---

1 AB երախատիսն
2 AC բարութիւն
3 C *չիք* նորա
4 C լցեալք
5 AB յորդէգրութեան
6 AB տանեալ *փխ* տալ
7 C *չիք* սուրբ
8 C արարել
9 C Իսրայէլի *փխ* որ
10 C զնա *փխ* զնոսա

*Դարձեալ. ի կարմիր ծովն բարձրացոյց զնոսա, որ զփարաւոն ընկղմեաց իւր զօրօքն, և նոքա անվնաս անցին*[1]*: Դարձեալ. յանապատին բարձրացոյց, և այլն*[2]*:*

**Ծանեաւ եզն զստացիչ**[3] **իւր, և էշ զմսուր տեառն իւրոյ, և Իսրայէլ զիս ո՛չ ծանեաւ** *(Ա. 3)*:

*Յառաջն յանբան տարերքն համեմատեաց, այսինքն՝ յերկինք և յերկիր*[4]*, զիսրայէլացիքն*[5] *անհամեմատ և անհաւասար գտան և պակաս, զի նոքա զհրամանքն Աստուծոյ կատարեն, և իսրայէլացիքն՝ ո՛չ: Եւ այժմ յէշ*[6] *և յեզն համեմատելով՝ անհամեմատ և անհաւասար և պակաս*[7] *գտան, զի է՛շ*[8] *և եզն իւրեանց ստացողին հնազանդ են*[9]*. թէ՛ լծեն, թէ՛ բառնան, և նոքա իւրեանց ստացողին և արարչին և Աստուծոյն հնազանդ ո՛չ կացին և զնորա հրամանքն ո՛չ կատարեցին, այլ հակառակ կացին նմա: Եւ որպէս մարգարէս յերկինք և յերկիր և յէշ*[10] *և յեզն համեմատելով պակասեցոյց զնոսա, նոյնպէս*[11] *և Երեմիա մարգարէն՝ ի ծիծառն և ի տատրակն համեմատէ, և պակաս և նուազ երևեցուցանէ*[12] *զնոսա: Զի այն, որ ծիծառն է, թէպէտ բազում անգամ ջանան և զբոյնն*[13] *աւերեն, ո՛չ հեռանայ*[14] *յայն տեղացն, այլ դարձեալ շինէն*[15]*, և նոքա յիւրեանց ստեղծողէն*[16] *հեռացան: Նոյնպէս*[17] *և տատրակն ողջախոհ է բնութեամբ, և*

---

1 C աճձին
2 AB այլ գործէ յառաջն *փխ* այլն
3 AB ստածիչ
4 AB երկինք և երկիր
5 AB զիսրայէլացին
6 AB յԻսրայէլ *փխ* յէշ
7 C չիք և պակաս
8 AB Իսրայէլ *փխ* է շ
9 AB հնազանդին *փխ* հնազանդ են
10 A Իսրայէլ *փխ* յէշ, B չիք և յէշ
11 A նմայնապէս
12 A երևեցաւ ցուցանէ *փխ* երևեցուցանէ
13 AB զբունն
14 B հեռանան
15 B շինեն, C շինէ
16 AB ստեղծօղէն
17 A նմանապէս

*նոքա զողջախոհութիւնն ո՛չ սիրեցին: Եւ Սողոմոն վատացն*[1] *և ծուլից զմրջիւնն*[2] *տայ օրինակ և զմեղուն. «Ո՛վ վատ, ե՛րթ առ մրջիւն և մեղուն*[3]*» (հմմտ. Առակք. Ջ 6): Նոյնպէս*[4] *և մարգարէս Եսայի յեղն և յէշն*[5] *համեմատէ, զի քան*[6] *զնոսա վատթար*[7] *գտան: Այլ և յամենայն արարածս*[8] *համեմատելով՝ նոքա վատթարք*[9] *երևին, զի ամենայն արարածք հնազանդ*[10] *և լսողք*[11] *են հրամանացն Աստուծոյ, և նոքա ո՛չ լսեցին և ո՛չ եղեն հնազանդ, այլ՝ հակառակ:*

**Զի՞ կայ իմ և յաճախելոյ զոհից ձերոց** *(Ա 11):*

*Զի յայլ ամենայն կարևոր առաքինութեանց*[12] *պակասեալք էին, զի զայլ ամենայն առաքինութիւն և զպատուիրան*[13] *ո՛չ պահէին*[14]*, և*[15] *ո՛չ կատարէին*[16] *զտասն բանեան օրէնքն, այլ միայն զոհ մատուցանէին, և իբրև*[17] *զմեծ իմն բարի*[18] *համարէին զայս*[19]*: Վասն որոյ մարգարէս*[20] *Եսայի և այլ ամենայն մարգարէքն խոտեն և ո՛չ ընդունին*[21] *զոհն, զոր նոքա մատուցանէին:*

---

1 AB *չիք* վատացն
2 BC զմրջիւրն
3 AB վաս երթ *փխ* վատ երթ առ մրջիւրն և մեղուն
4 A նմանապէս
5 AB յԻսրայէլ *փխ* յէշն
6 AB *չիք* քան
7 AB վաթար
8 A արարածքս
9 C վատթար
10 C հնազանդ են
11 AB լսողք
12 C առաքինութեան
13 C *չիք* և զպատուիրան
14 A պահեցին
15 C և զպատուիրանն
16 AB կատարեցին և ոչ պահեցին *փխ* պահէին և ոչ կատարէին
17 AB իբր
18 A բար
19 B զայն
20 B մարգարէն
21 B ընդունեն

*Դարձեալ. իբրև կարօտելոյ[1] մատուցանէին[2], իբր թէ կարօտ է Աստուած նոցա զոհից, վասն այն[3] ո՛չ ընդունի, զի ո՛չ կարօտանայ, որ զամենայն լնու և բնաւից տայ:*

**Ո՞[4] իսկ խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց[5]** *(Ա 12):*

*Յայլ դիրք ի բաղում տեղիս[6] վասն պատարագաց ճառեն, թէ խնդրեաց Աստուած ի նոցանէ պատարագ և զոհ մատուցանել ինքեան: Իսկ աստ զիա՞րդ[7] ասէ մարգարէս. «Ո՞ իսկ խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց[8]» (Ա 12): Ոչ են այսոքիկ հակառակ միմեանց, այլ ուսի՛ր, զի այն, որ յառաջն խնդրեաց, այս էր պատճառն, զի նոքա որքան յաշխարհս[9] էին յեգիպտացոցն՝ տեսեալ էին և ուսեալ: Զի նոքա զհոյլս անասնոցն, հանդերձ ուստերօք և դստերօք, կռոցն զոհ մատուցանէին: Եւ սոքա ևս ընդ նոսա գնային, և ուտէին և ըմպէին և ուրախանային ընդ նոսա, և յայս սովորեալ[10] էին: Եւ յորժամ ելին յԵգիպտոսէ, դարձեալ զնոյն խնդրեցին առնել: Թոյլ ետ Աստուած զոհ մատուցանել, զուստերքն և զդստերքն ի բաց եհան ի միջոյ, և զանասունքն ինքեան[11] հրամայեաց Աստուած մատուցանել, ապա թէ ո՛չ էր թոյլ տուեալ մատուցանել զոհ:*

*Դարձեալ. ի կռապաշտութիւն դառնային, թէպէտ[12] կամքն Աստուծոյ ո՛չ էր զոհ մատուցանել, այլ թոյլ ետ, զի զնոցա տխմարութիւնն[13] արգելուցու ի զոհելոյ[14] դիւաց: Եւ թէ ո՛չ էր*

---

1 AB կարօտացելոյ
2 A մատուցանէի
3 A *չիք* այն
4 B զի *փխ* ո
5 C մերոց
6 AB տեղիս
7 C ա՞րդ *փխ* աստ զիարդ
8 C մերոց
9 B յԵգիպտոս *փխ* յաշխարհս
10 AB սովորեալք
11 AB զանասունքս ինքն
12 AB և անկանէին ի կռապաշտութիւն, ապա թէ ոչ *փխ* թէպէտ
13 AB տխմարութիւնն արիութիւնն (B արիութիւն)
14 A զոհելու

*Թոյլ տուեալ, պիտէր դիւացն և կուռցն մատուցանէին զզոհն*[1]: *Զոր օրինակ՝ ո՛չ*[2] *էր կամքն Աստուծոյ*[3], *որ այրն և կինն, որ միանգամ զուգեալք*[4] *էին առ միմեանս, բաժանէին ի միմեանց, այլ մնային*[5] *այնպէս մինչև ի մահ, և ո՛չ ի բաց հանէր*[6] *այրն զկինն, և բաժանէին ի միմեանց: Այլ յորժամ ետես, որ մեծ վնաս և մեղք կու ծնանէր, հրամայեաց Մովսէսի Թոյլ*[7] *տալ գիր*[8] *մեկնելոյ և արձակելոյ զկանայս, զի մի սպանցեն և հեղձամուղձ արասցեն*[9] *(տե՛ս Բ Օր. ԻԴ 1-4): Զի յորժամ հրաման տայր ո՛չ արձակել, և յորժամ այրն զկինն ատէր և ո՛չ հաշտ էին*[10], *թէ ի բաց Թողոյր և արձակէր, յայնժամ ժողովուրդքն*[11] *ի վերայ գային և սպանանէին զայն մարդն, թէ՝ «Օրէնքն հրաման*[12] *չի տայր*[13], *և դու ի բաց Թողէր*[14]» *(տե՛ս Բ Օր. ԻԷ 26), և պիտէր*[15] *ի տանն գաղտուկ և ծածկաբար*[16] *խեղդէր զկինն: Վասն այն Թոյլ ետ գիր մեկնելոյ և արձակելոյ գրել*[17]: *Վասն փոքր մեղացն ներեաց և հրաման ետ արձակել զկինն, զի զմեծ*[18] *մեղքն*[19] *խափանեսցէ, որ ո՛չ սպանանէ:*

*Նոյնպէս և յայնմ*[20] *ժամանակի, յաղագս զոհից և պատարագացն հրաման ետ մատուցանել ինքեան, զի ի մեծ*[21] *մեղացն*

---

1 A զոհ. B զոհս
2 AB որ ոչ
3 AB *չիք* Աստուծոյ
4 B զուգեալ
5 C մնալ
6 AB կանէր *փխ* հանէր
7 B *չիք* թոյլ
8 B թուղթ *փխ* գիր
9 AC առնիցեն *փխ* արասցեն
10 AB բարիշէին *փխ* հաշտ էին
11 A ժողովուրդն
12 AB տաստուր (B դաստուր) *փխ* հրաման
13 B տար
14 AB թողիր
15 AB պիտիր
16 B ծածուկ և գաղտաբար *փխ* գաղտուկ և ծածկաբար
17 AB գրել և արձակել (B արձակելոյ) որպէս *փխ* և արձակելոյ գրել
18 C զզմեծ *փխ* զի զմեծ
19 B վնասն *փխ* մեղքն
20 A՝ յայմ, B յայն
21 AB *չիք* մեծ

*խափանէր, այսինքն՝ ի դիւացն և ի կռոցն*[1] *զոհելոյն: Թէ ո՛չ էր*[2] *հրամայեալ զոհ մատուցանել ինքեան, պիտէր կռոցն մատուցանէին և անկանէին դարձեալ ի կռապաշտութիւն: Եւ յետոյ եցոյց մարգարէիւքն, թէ՝ «Անարժանք են զոհքն, և ո՛չ ախորժեմ»: Զի թէ զոհն էր, և թէ այլ ամենայն նուէրքն, ատուեր*[3] *և օրինակ էին նորոյս, որ պնորս կու նշանակէին, թէպէտ մասնաւոր թողութիւն առնէին մեղաց և ո՛չ կատարեալ: Իսկ ի գալ նորոյս*[4]*, այլ ո՛չ է օգուտ*[5]*: Որպէս ճրագին լոյսն և մոմին լոյսն ի խաւարային գիշերին է պիտանացու, իսկ ի գալ ցերեկին*[6]*, յորժամ արեգակն ճառագայթէ*[7] *զլոյսն իւր՝ սփռեալ ի վերայ երկրի, և լուսաւորէ զամենեսեան, այլ ո՛չ է պիտոյ ճրագի*[8] *լոյսն*[9] *և ո՛չ մոմի*[10] *լոյսն: Եւ թէ ոք մի ճրագ վառէ և կամ մոմ*[11]*, և առնու ի ձեռն*[12] *ի*[13] *ցերեկին և գնայ*[14] *ի ճանապարհն, թէ զլոյս*[15] *տեսանէ, կարի անգիտութիւն*[16] *և տգիտութիւն և յիմարութիւն*[17] *է նմա, որ զարեգական լոյսն*[18] *տեսանէ*[19]*, թողու և ճրագին*[20] *հետևի: Զի Հինն ամենայն օրինակ էր Նորոյս:*

*Զի լուացումն, որ լուանային, մկրտութեանն էր օրինակ: Զի որպէս որ*[21] *ջուրն զաղտն լուանայ*[22]*, նոյնպէս և մկրտութիւնն*

---

1 AB կռապաշտիցն *փխ* կռոցն
2 C *չիք* էր
3 C ատուէր
4 AB ճշգնակէիցն զի նորոյս *փխ* կու ճշգնակէիցն, թէպէտ... ի գալ նորոյս
5 C կարօտ *փխ* օգուտ
6 C ի ցերեկիցն
7 AC ճառագայթեալ
8 AB ճրագիցն
9 AC լոյս
10 A մոմիցն
11 B *չիք* մոմի լոյսն և թէ ոք մի ճրագ վառէ և կամ մոմ
12 B *չիք* ի ձեռն
13 A *չիք* ի
14 B գնայ
15 AC լոյս
16 C անգիտութեամբ
17 C *չիք* և յիմարութիւն
18 C լուսն
19 C *չիք* տեսանէ
20 C ճրագի
21 AB *չիք* որ
22 C կու լուանայ

*պաղտ Հոգոյն և մարմնոյն լուանայ, այսինքն՝ զմեղքն: Իսկ*[1] *ի պալ Նորոյս*[2] *լուացումն ո՛չ է պիտանացու, և թէ այժմ զձեռս և զերեսս լուանամք ջրով*[3]*, ո՛չ յաղագս հնոյ օրինացն թողուլթիւն առնելոյ, այլ յաղագս զաղտն սրբելոյ: Եւ կարի յիմարուլթիւն է խապաշիցն*[4]*, որ կու մկրտին և կու լուացուին, զի մկրտուլթիւնն*[5] *բաւական էր, լուացուիլն*[6] *ինչ*[7] *պիտոյ:*

*Դարձեալ. Թլփատին*[8]*, զի Քրիստոս ասաց առաքելոցն*[9]*. «Գնացէ՛ք աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք*[10] *յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ*[11]*» (Մտթ. ԻՀ 19), և ո՛չ ասաց գնացէք*[12] *Թլփատեցէք: Եւ դարձեալ. զոհն որ մատուցանէին ըստ օրինացն վասն մեղաց, ներէր Աստուած վասն*[13] *մեղաց նոցա: Ո՛չ անբանից արիւնն բաւական գոլով առ ներել, այլ զի նկարեալ էր առ նոսա խորհուրդ արեանն Քրիստոսի: Իբրև եկն Քրիստոս, դատարկացան օրինակքն ի խորհրդոց ճշմարտուլթենէն*[14]*:*

*Դարձեալ. ո՛չ ընդունի զնուէրքն նոցա՝ զխունկն և զայլն, զի ուղիղ մտօք և սուրբ*[15] *սրտիւ ո՛չ մատուցանէին, զի Աստուած ի սիրտն*[16] *կու հայի*[17]*, թէ սուրբ է՝ զնուէրքն*[18] *ընմիտքն և ի սիրտն կու հայի, թէ ո՛չ է սուրբ՝ ո՛չ ընդունի*[19]*: Տե՛ս*[20] *Հաբէլ պա-*

---

1 AB *չիք* իսկ
2 B ճորումս
3 AB ջրով լուացամ (B՝ լուացամք) *փխ* լուացամք ջրով
4 A խաբաշիցն, B հապաշիցն
5 B մկրտիլն
6 A լուացիլն
7 B չէ *փխ* ինչ
8 B կու թլփատին
9 B աշակերտացն *փխ* առաքելոցն
10 A մկրտեցաք
11 A *չիք* և Որդոյ և Հոգոյն Սրբոյ
12 B թէ *փխ* գնացէք
13 AC *չիք* վասն
14 C ճշմարտութեանն
15 AB *չիք* սուրբ
16 AC սիրտքն
17 AB հաճի *փխ* կու հայի
18 A զնուիրքն
19 C կու ընդունի
20 AB ընդունի Տէր (B Տէրն)
21 AB *չիք* տես

*տարագ մատոյց*[1], *և հատուսեցաւ Տէր Աստուած*[2] *ի հոտ անուշից, նախ՝ ի Հաբէլ հաճեցաւ, և ապա՝ պատարագն*[3] *ընդունեցաւ*[4], *զի սուրբ մօք մատոյց: Եւ ի Կայէնն*[5] *ո՛չ հաճեցաւ, զի պիղծ էր մօք*[6]*: Եւ զհրէից ո՛չ ընդունի, զի մօք և գործօք*[7] *պիղծ էին, այլ և սրտիւք*[8] *ի կռապաշտութիւն էին: Զի յորժամ ի դուրս գնային ի լերինքն*[9]*, կռոցն մատուցանէին*[10]*, և երբ*[11] *ի քաղաքն գային և ի շէնն՝ տաճարին և Աստուծոյ մատուցանէին զոհն, ապա այն ո՛չ ընդունի:*

**Կոխել զգաւթիս իմ մի՛ յաճախէք** *(Ա. 12):*

*Գ (3) կերպիւ է այս: Կա՛մ զգերութիւնն նշանակէ*[12] *այսու, որ պիտէր ի գերութիւն գնային և Հ (70) տարի ի*[13] *դուրս ոմ*[14] *մնային, և այլ ո՛չ ոմ կոխէին զգաւթին, և այլ*[15] *ո՛չ տեսանելոց էին*[16] *զտաճարն և ո՛չ ի ներս մտանելոց, կա՛մ ամենևին մերժելոյ վիճիռդ*[17] *և ի բաց մերժ զնոսա, զի խաչէին զՔրիստոս և ո՛չ հաւատային ի նա: Եւ ի ձեռն հռոմայեցւոցն ցրուելոց էին, և այլ ո՛չ կոխեցին զգաւթին Աստուծոյ*[18]*, և ո՛չ տեսին և ո՛չ մտին: Կամ զի ո՛չ ուղիղ մօք մտանէին*[19] *ի տաճարն և զոհէին, զի*

---

1 B մատուց
2 B *չիք* Աստուած
3 B ի պատարագ ևորա
4 C ընկալաւ *փխ* ընդունեցաւ
5 A Կայէինն, C Կայենին
6 AB մտօքն
7 B գործով
8 A սիրտիւք
9 AB շերինքն (B շէրդք) *փխ* լերինքն
10 B մտանէին *փխ* մատուցանէին
11 AB իբր *փխ* երբ
12 B ճաշակէ *փխ* նշանակէ
13 B տի *փխ* ի
14 B *չիք* տի
15 B *չիք* այլ
16 B տեսանէին *փխ* տեսանելոց էին
17 A վիճիռն
18 B սուրբ եկեղեցոյ *փխ* աստուծոյ
19 B մատուցանէին *փխ* մտանէին

*արտաքոյ կելով*[1]՝ *կուռցն մատուցանէին, և ի տաճարն գալոյ՝ տաճարին և Աստուծոյ մատուցանէին, վասն այն արգելու*[2]*:*

*Դարձեալ. խոտէ զհրէականն, որ մարմնաւոր էր*[3]*, զի զնորս հաստատեսցէ զեկեղեցական պաշտօնն*[4]*: Զի հաւատացեալքս*[5] *ի Քրիստոս զհոգևոր*[6] *պատարագս*[7] *մատուցանելով Աստուծոյ վոխանակ խնկոցն՝ զառաքինութիւնս մատուցանեն Աստուծոյ*[8]՝ *զարդութիւն, զմաքրութիւն, զխոնարհութիւն, զընկերսիրութիւն, զժուժկալութիւն և զողորմութիւն, զաղօթք*[9] *և զայլն:*

*Դարձեալ. զհաւատքն*[10]*, որ ի վեր է քան զամենայն՝ զյոյս, զսէր. զայսոքիկ*[11] *մատուցանել Աստուծոյ, զի յայսոքիկ ուրախանայ Աստուած և յայսպիսի պատարագս*[12] *հաճի*[13]*: Եւ թէ այժմ այլ*[14] *խունկ մատուցանեմք յեկեղեցի Աստուծոյ, ըստ Հին օրինացն ո՛չ առնեմք զայս, այլ ըստ Նոր օրինացս առնեմք:*

**Զգլուխս**[15] **ամսոց ձերոց և**[16] **զշաբաթս ո՛չ առնում**[17] **յանձն և ո՛չ ընդունիմ** *(համմա. Ա 13):*

*Զի յորժամ շաբաթն*[18] *վճարէր*[19]*, փող հնչեցուցանէին և ժողովէին, զոհ մատուցանէին և ուրախանային: Նոյնպէս*[20] *յորժամ*

---

1 B կալով
2 C *չիք* կոխել զգաւիթս իմ մի յաճախէք... վասն այն արգելու
3 C *չիք* էր
4 C պաշտօնս
5 AB հաւատացեալքն
6 AB զոհոգևորն
7 B պատարագն
8 C *չիք* զառաքինութիւնս մատուցանեն Աստուծոյ
9 AC զաղօթք
10 AB զհաւատն
11 B զայսոսիկ
12 C պատարագ
13 C հաճի Աստուծոյ
14 AB էլ *փխ* այլ
15 B ի գլուխս, C զգլուխ
16 C *չիք* և
17 AB առնեմ
18 B *չիք* շաբաթն
19 A վիճարեր, B վիճակէր
20 A նմանապէս

*ամիան վճարէր*[1]*, ի վերջին աւուրն*[2] *փող հնչեցուցանէին, որպէս ասէ մարգարէն*[3]*. «Եւ ժողովէին փողահարքն*[4] *և զոհ մատուցանէին, և ուտէին և ըմպէին և ուրախանային» (հմմտ. Ի Գ 18): Նոյնպէս*[5] *և ի կատարումն տարւոյն առնէին: Ո՛չ ի*[6] *կարևորացն խափանէ: Կարևոր յօրինացն և ի պատուիրանացն ժ (10) բանեան օրէնքն է՝ հինգն յանձնառական և հինգն հրաժարական: Զայսոքիկ ո՛չ կամի խափանել Աստուած, այլ զայսոքիկ կամի, որ կատարեն: Եւ*[7] *զաւելորդսն կամի, որ խափանեն*[8] *և ո՛չ առնեն*[9]*, որ է զոհ մատուցանելն և խունկն և այլն, զի այսոքիկ աւելորդք են: Եւ ի շաբաթին ժողովէին, և քահանայքն զօրէնքն և զպատուիրանքն*[10] *և զմարգարէականքն*[11] *ընթեռնուին, և ժողովուրդքն*[12] *ունկն դնէին: Եւ յայս պարծէին և ո՛չ գործով կատարէին:*

**Յագեալ եմ ձեօք** *(Ա 14):*

*Ով որ*[13] *միտ ունի կարէ լմանալ՝ այս փոքր բան ո՛չ է*[14]*, այլ մեծ է*[15] *և սպառնալիք, որ սպառնայ*[16] *նոցա Աստուած մարգարէիւս: Զի այս յայն բանէն պակաս ո՛չ է, որ*[17] *յԱւետարանին ասէ. «Ո՛չ գիտեմ զձեզ» (Մաթ. Իե 12, Ղուկ. ԺԳ 25, 27), և քան զայն բանն պակաս ո՛չ է, որ մեղաւորացն ի պատասխանին է*

---

1 A վիճարեր, B վիճակէր
2 C օրն
3 C մարգարէն փողհար[քն]
4 C *չիք* փողահարքն
5 A նմանապէս
6 AB *չիք* ոչ ի
7 AC այլ *փխ* և
8 C խափանէն
9 B առնել, C չառնեն
10 B զպատարագն *փխ* զպատուիրանքն
11 AC մարգարէականք
12 AB ժողովուրդն
13 B *չիք* որ
14 B է մէ
15 C բան է
16 C կու ասդառնայ
17 C *չիք* որ

*ասելոց. «երթա՛յք յինէն, անիծեալք» (Մտթ. ԻԵ 41): Զի ասէ. «Յապեալ եմ ձեօք»՝ ձանձրացայ ի ձեզանէ, ատեցի զձեզ:*

**Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր ի վեր, դարձուցից զերեսս**[1] **իմ ի ձէնջ. և եթէ յաճախիցէք**[2] **յաղօթս՝ ո՛չ լուայց ձեզ** *(Ա 15):*

*Զի յայս բանէս յայտնի է, զի թէ մարդ ի մէջ մեզաց լինի և գայ երկար*[3] *աղօթէ, ո՛չ լսէ Աստուած և ո՛չ ընդունի: Եւ թէ*[4] *որպէս երբեմն*[5] *երթայ՝ պղծապործութիւն և չարապործութիւն առնէ, և յորժամ զմեղքն առնէ, գայ և աղօթէ և այն մեղացն թողութիւն խնդրէ, և դարձեալ գնայ՝ գործէ և դարձեալ գայ՝ աղօթէ վասն մեղացն և թողութիւն խնդրէ յԱստուծոյ, զայսպիսի աղօթքս*[6] *ո՛չ լսէ Աստուած: Այլ ի ձեռն բարի գործոց առաւել լսէ Աստուած, որ ի մեղաց դառնայ*[7] *և զմեղքն ատէ և փոշիմանի*[8] *և զղջայ*[9] *և խոստովանի*[10]*, և յայն մեղացն դառնայ և գայ և աղօթէ*[11]*, և յայն մեղացն թողութիւն խնդրէ*[12]*՝ լսէ Աստուած և թողու զմեղքն:*

**Ձեռք ձեր լի են արեամբ** *(Ա 15):*

*Այսինքն՝ մարդասպէտից և արդարոցն, զի խորհուրդ արեանն Քրիստոսի նկարեալ էր յարիւնս մարդասպէտից: Զի որպէս զմարքրիստոսի նկարեալ էր յարիւնս մարդասպէտից: Զի որպէս զմարդարէքն սպանին և հեղին զարիւնս նոցա, նմանապէս և զՔրիս-*

---

1 A զերես
2 B յաջախեցէք
3 AB յերկար
4 B *չ/իք* և թէ
5 A զի յերբեմն *փխ* երբեմն
6 AB աղօթս
7 AB դառնան
8 AB փոշիմանին
9 AB զղջանան
10 AC խոստովանին
11 AB դառնան և գան և աղօթեն
12 AB խնդրեն

*տոս*[1] *նման մարգարէից ասանին*[2]*, և հեղին զարիւնն Քրիստոսի: Զի թէպէտ զմեզս բազումս*[3] *ունէին և զանապան, այլ յորժամ ասանին զՔրիստոս և հեղին զարիւնն Քրիստոսի, զայս միայն բաւական համարի և ասէ. «Ձեռք ձեր լի են արեամբ»: Զի թէ այլ մեզս ո՛չ ունէին, և այս միայն*[4] *բաւական էր կորուստ նոցա: Իսկ յորժամ զամենայն մեզս դործեցին և զարիւնն Քրիստոսի հեղին, այս բաւական էր կորուստ նոցա*[5]*:*

*Զի թէպէտ Աբրահամ բարի էր*[6]*, սակայն*[7] *ո՛չ գիտէին հրեշտակք: Կամեցաւ Աստուածն*[8] *հրեշտակաց դասուցն*[9] *յայտնի առնել զբարութիւնն Աբրահամու, վասն այն յորժամ յուղարկաւոր*[10] *գնայր հետ Աստուծոյ, ասաց Աստուած. «Գնամ զՍոդոմ պատուհասել» (հմմտ. Ծննդ. ԺԸ 21): Իսկ Աբրահամ, յորժամ լուաւ*[11] *և իմացաւ, սկսաւ ահիւ և դողութեամբ և պատկառանօք խօսել ընդ Աստուծոյ*[12]*, և աղաչել զԱստուած և բարեխօսել չպատուհասել՝ ասելով. «Ամենայն աշխարհ և ամենայն քաղաք*[13] *ի կռապաշտութեան կան և ի մէջ մեղաց, և դու ողորմութեամբ ներես*[14] *և ողորմիս*[15] *և չես պատուհասեր*[16]*, քա՛ւ լիցի քեզ, որ զայդ մէկ քաղաքդ արդարութեամբ դատես և պատժես և կորուսանես» (հմմտ. Ծննդ. ԺԸ 25): Եւ ասաց, թէ՝ «Լինի անդ յիսուն արդար պիտի*[17] *անցուցանես զայն քա-*

---

1 B Քրիստոս
2 A սպանանելոց էին *փխ* սպանին
3 A բազում
4 A միայն էր
5 AB *ձեռագրերում այնուհետև, որպես շարունակութիւն, գրված է.* «Այս բանս յառաջ էր բայց մոռացայ և աստ գրեցի, զի օրինակն այլ այսպէս էր, մի՛ մեղայ-դրէք». C *չիք* ձեռք ձեր լի են արեամբ, այսինքն... բաւական էր կորուստ նոցա
6 C է
7 B *չիք* սակայն
8 AB *չիք* Աստուած
9 C դասուց
10 C ուղարկաւոր
11 AB լսեց
12 A *չիք* Աստուծոյ
13 AB ամենեքեան *փխ* ամենայն քաղաք
14 C կու ներես
15 C կու ողորմիս
16 C պատուհասէր
17 AC պիտիր

պաքդ[1]» (համառ. Ծննդ. ԺԸ 24): Եւ ասաց Աստուած. «Ո՛չ»: Եւ եկեալ[2] մինչ ի հինգն, և մէկ մարդ արդար ո՛չ գտաւ: Թէ մէկ մարդ այլ արդար էր գտեր[3], չէր պատուհասեր[4] և անցուցանէր զայն քաղաքն, և երբ ո՛չ գտաւ՝ պատուհասեաց: Զի Աբրահամ զայն գիտէր, որ Աստուած զՔանանացոց աշխարհն իւր զաւակացն էր խոստացեր, որ պիտէր[5] տայր: Զի երևեցաւ Աստուած Աբրահամու և ասաց նմա հայել յերկինս ի վեր յարևելք և յարևմուտք[6], ի հիւսիս[7] և ի հարաւ[8], ի վերայ Իսրայէլայ[9] աշխարհին և տեսանել, և ասաց. «Զայս երկիրս քո զաւակացն եմ տալոց[10]» (համառ. Ծննդ. ԺԲ 7): Եւ անկաւ Աբրահամ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա: Եւ զայս ո՛չ մի անգամ կամ երկու[11], այլ բազում անգամ երևեցաւ և խոստացաւ տալ[12]: Եւ գիտէր զայս Աբրահամ, որ իւր զաւակացն էր տալոց զՔանանացոց երկիրն, և յորժամ լուաւ[13], որ կամէր[14] Աստուած պատուհասել[15] զՍոդոմ, պիտէր ինքն այլ իրաւունք տայր և ասէր. «Գնա՛ և պատժեա՛ և պատուհասեա՛»: Զի աշխարհն[16] իւր զաւակացն մնայր, այլ զայս ո՛չ էած[17] զմտաւ, թէ՝ «Իմ զաւակացն է խոստացեր[18] զերկիրն, և այժմ լի է մարդկամբ, զի քանանացոք[19] լցեալ է, զիա՞րդ պիտի ժառանգեն իմ զաւակքն»: Այլ ասէր ի միտն իւր, թէ՝ «Իմ զաւակացն տայ Աստուած: Նա այն

---

1 A քաղաք, B քաղաքն
2 AC երէկ ելաւ *փխ* եկեալ
3 C գտէր
4 C պատուհասէր
5 C պիտէ
6 AB յարևմուտ
7 A հիւսուս
8 C *չիք* և ի հարաւ
9 C Երուսաղէմայ *փխ* Իսրայէլայ
10 B տալու
11 AC երկուս
12 C *չիք* տալ
13 AB լսեց
14 B պիտէր *փխ* կամէր
15 B պատուհասէր
16 B աշխարհն
17 C ած
18 AC խոստացէր
19 C քանանացօղ

*կերպիւն տի*[1] *տայ, որպէս*[2] *ինքն կամի»: Եւ բարեխօսէր վասն նոցա ո՛չ անցուցանել զնոցա*[3] *քաղաքն*[4]՝ *վասն իւր բարերարութեանն*[5] *և մարդասիրութեանն*[6]*, որ բարի էր Աբրահամ:*

*«Մոխիր երնջուցն ցանեալ սրբէր*[7] *զպղծեալսն» (Եբր. Թ 13): Եւ այս թէ որպիսի՞ էր*[8]*: Զի ի տարին մի անգամ կամ երկու կամ որքան էր*[9]*, երինջ մի անարատ զենէին, և զմորթն քերթէին և հանէին*[10]*, և զփորն և զղլուխն և զոտն լուանային և սրբէին, և զմիսն և զնոսա զնէին ի մէջ կաշուն: Եւ տանէին ի*[11] *դուրս արտաքոյ, և հուր վառէին և այրէին զայն միսն, որ մոխիր դառնայր և փոշի, և զայն այրած*[12] *փոշին ժողովէին և*[13] *տանէին պահէին*[14]*: Եւ յորժամ մարդ*[15] *մեղանչէր և*[16] *մեղք գործէր, տանէին այլ անասուն ի տաճարն և զենէին*[17]*, և առնէին յայն արենէն*[18]*, որչափ որ կամէին, և ջուր խառնէին որ նօսրանայր, և բերէին յայն*[19] *երնջու այրած մոխրէն*[20] *և խառնէին յարիւն, և մշակաւ զոպայիւ ցանէին և սրսկէին*[21] *ի վերայ այն*[22] *մարդոյն, որ մեղք էր գործեր*[23]*, և թողութիւն լինէր մեղացն:*

---

1 C կու *փխ* տի
2 B որպէս և
3 A ճոցա, B *չիք* զճոցա
4 AB զքաղաքն
5 AB բարութեան
6 A մարդոյ սիրութեանն *փխ* մարդսիրութեանն
7 C սրբեր
8 AB է
9 AB որ *փխ* որքան էր
10 AB զմորթին *փխ* զմորթն քերթէին և հանէին
11 A *չիք* ի
12 C այրեցաւ
13 B *չիք* ժողովէին և
14 C և պահէին
15 C *չիք* մարդ
16 B կամ *փխ* և
17 AC զենուին
18 C յարենեն
19 B այն
20 C այրեցաւ մոխրէր
21 C որուկէին *փխ* սրսկէին
22 AB *չիք* այն
23 C գործէր

**Լուացարո՛ւք, սրբացարո՛ւք** *(Ա. 16)*:

*Զի թէպէտ առանց բժշկութեան են ցաւքդ, սակայն և գոյ յոյս փրկութեան: Ցաւք զմեղքն*[1] *ասէ, թէպէտ ձեր մեղքն այնչափ է, որ ճար և հնար ո՛չ է բժշկութեան, սակայն գոյ հնար թողութեան մեղացն*[2] *ձերոց: Ո՛չ վասն ձեր լաւութեանն, այլ վասն Աստուծոյ մարդասիրութեանն*[3] *և ողորմութեանն, որ ո՛չ կամի զձեր կորուսան, այլ զփրկութիւնն ձեր՝ թէ դառնայք*[4] *և ապաշխարէք:*

*«Լուացարո՛ւք», այսինքն՝ մաքուր լերուք այսու: Զամբարշտութիւնն զմտաւ ածել տայ նոցա, թէ որքան ամբարիշտք էին և մեղք ունէին: Զի թէ ո՛չ էին մեղօք լցեալք, զիա՞րդ ասէր լուացարուք, և թէ մաքուրք էին, զիա՞րդ ասէր*[5] *մաքուր լերուք: Այլ լցեալ էին մեղօք ամբարշտութեան, վասն որոյ լուանալ հրամայէ և մաքուր լինել, զի աղտեղեալ*[6] *էին և անմաքուր ի բարեաց գործոցն*[7]*:*

*Դարձեալ. զվհատութիւնն և զյուսահատութիւնն ի բաց բառնայ, զի յուսահատեալ էին, և յորդորէ դառնալ ի Քրիստոս: «Լուացարո՛ւք», այսինքն՝ խոստովանելով զԱյն, որ թշնամանացէքն և ըմբռնեցէքն, և չարչարեցէքն և ապտակեցէք*[8]*, և ի խաչ բևեռեցէք*[9] *և սպանիք, և գեղարդեամբն*[10] *խոցեցէք և ի գերեզման եդիք, և պահապանս կացուցիք, և յետ երից աւուրց յարեաւ ի*[11] *մեռելոց: ՋԱյն Աստուած խոստովանեցէք և հաւատացարուք*[12]*, որ սրբիք ի մեղաց: Քանզի արժան է խրատականօքն միաբանել ընդ շնորհին, այսինքն՝ շնորհք զմկրտութիւնն ասէ և*

---

1 B զմեղք
2 B մեղաց
3 B մարդսիրութեան
4 B որ դառնաք և *փխ* ձեր թէ դառնայք
5 B ասէ
6 A աղտեղտեալ
7 B գործոց
8 A ապտակեցիք
9 A բևեռեցիք
10 B գեղարդեամբ
11 A յարութիւն *փխ* յարեաւ ի
12 A հաւատեցէք

*պՆոր օրէնքն*[1]*, և խրատական պՍուրբ Գիրքն, որ գմեզ խրատեն, ասէ. «Մկրտեցարո՛ւք պխրատուցայ»: Բանն այլ ընդ մկրտութեանն խառնէ, որ խրատեն յետ մկրտութեանն սուրբ կալ և այլ ո՛չ մեղանչել: Վայրենագոյնք են բնական օրէնքն*[2] *ի մարմնի, որն բնական օրէնքն*[3]*, որ վայրենի առնէ զմարդն, այսինքն՝ ցանկութիւնն որ ի մարմնի, որ մեղացն կու հնաւէի և ցանկայ, և փառասիրութեանն կու հնաւէի և որկրամոլութեան, և բարկութիւնն, որ կու բարկանայ և այլն: Այսոքիկ վայրենի առնեն պունողան*[4]*: Եւ յորժամ խորհուրդն ընդ այսպիսի մեղացն*[5] *հնաւէի և մխաբանի, զմիտքն*[6] *այլ կու հաւանեցուցանէ ինքեանց: Յայնժամ որ*[7] *կողմն, որ միտքն քարշէ և գնայ, մարմինն և հոգին ընդ*[8] *մտացն հնաւէին՝ թէ՛ ի չարն և թէ՛ ի բարին: Զի միտքն*[9] *իշխան և առաջնորդ է հոգւոյն և մարմնոյն, զինչ միտքն կամի, հոգին և մարմինն նմա հնաւէին: Իսկ ճշմարիտն բարին խորհի, զբարին առաջի Տեառն և մարդկան: Առաջի Տեառն գործէ զբարին, որ առաջի աչացն Աստուծոյ լինի, որ տեսանէ Աստուած, և առաջի մարդկան բարի լինի, որ օրինակ բարեաց լինի մարդկան:*

**Ընկեցէ՛ք զչարիս յանձանց ձերոց** *(Ա. 16):*

*Զառաքինութեան զգիւրութիւնն ցուցանէ այսու, և զանձնիշխանութիւնն, զի իշխանութիւն ունի մարդն*[10]*, որ կողմն*[11] *և կամի: Թէ՛ կամի զբարին գործէ մարդ*[12] *և թէ՛ կամեսցայ՝ զչարն գործէ, զի երկուց իշխանութիւնն յիւր ձեռն է:*

---

1 A օրէնք
2 B օրէնք
3 B օրէնք
4 B զուցօղն
5 A մեղացս
6 B միտքն
7 A յոր
8 B ետ *ի*ն ընդ
9 A զմիտքն *ի*ն զի միտքն
10 A մարդ
11 A յոր կողմ
12 B *չի*ք մարդ

*Դարձեալ. խրատ տայ մարդարէս, զի յորժամ արժանի եղեն լուանալ զմեզս սուրբ*[1] *մկրտութեամբն, անարատ պահել յետ մկրտութեանն զանձինս՝ որչափ և իցէ կարողութիւն:*

**Դադարեցէ՛ք ի չարեաց ձերոց** *(Ա 16):*

*Այսինքն՝ խափանեցէք զսովորական չար գործն ձեր, փոխեցէք ի լաւութիւն զձեր սիրտ առաջի աչաց իմոց: Զի առաջի աչացն Աստուծոյ լինիցի քո սրբութիւնդ, և ո՛չ որպէս ոմանք առաջի մարդկան ձևանան հեզք և դադարեն*[2] *ի մեղաց և ի չարեաց: Եւ ի ներքոյ են գայլք յափշտակողք, և առանձին լինելով՝ զչարն*[3] *գործեն, այլ առաջի Աստուծոյ գործելով զբարին, որպէս ասաց Եղիա մարգարէն. «կենդանի է Տէր, որոյ կացեալ եմ ես առաջի նորա*[4]*» (Գ. Թագ. ԺԷ 1): Զի զամենայն ժամանակս իւր*[5] *այնպէս կացեալ էր, որպէս Աստուած չորեքկերպեան*[6] *աթոռոյն*[7] *բազմեալ էր, և ինքն առաջի նորա, և զբարին կու գործէր: Զի յորժամ մարդ զԱստուած առաջի աչացն տեսանէ, մտօքն անհնար է*[8] *զմեզս գործել*[9]*, զի թէ առաջի մարդկան ամաչեն*[10] *զմեզս գործել, քան ի առաւել առաջի Աստուծոյ:*

**Ուսարո՛ւք զբարիս գործել** *(Ա 17):*

*Զի յորժամ բազում չարութեամբ և չար գործովք լցեալ լինի մարդն*[11]*, այլ ճանաչել ո՛չ կարէ զառաքինութիւնն: Վասն այն ասէ. «Ուսարո՛ւք զբարիս գործել»: Եւ Դաւիթ մարգարէն ասէ.*

---

1 B *չիք* սուրբ
2 B դադարիցն
3 A զչար
4 B աչաց ճորա
5 B *չիք* իւր
6 A չորէքկերպեան. B չորեգկերպ
7 A աթոռով
8 A *չիք* է
9 A *չիք* գործել
10 A ամաչեն մարդիկ
11 A մարդ

«Եկա՛յք որդեակք[1] իմ[2] և լուարո՛ւք ինձ, և ես պերկիւղ Տեառն ուսուցի՛ց ձեզ» (*Սաղմ. ԼԴ 12*): *Զի ուսանիլ պարիս, որ բարին գործէ մարդ և գառաքինութիւնն, բազում վուխոյ պէտս ունի և բազում ջան և աշխատութիւն, պիտի ապա գործել կարէ մարդ պարին. է՞ր զի յոլով խափանիչս ունի առաքինութեան գործն, որ կամին խափանել գառաքինութիւն ի մարդոյն: Նախ՝ պռնութիւն բնութեան: Երկրորդ՝ գծուլութիւն մարմնոյն, զի ծուլութիւնն, որ կամաւ ծուլանայ մարդն*[3]: *Զի յորժամ ծուլանայ մարդն, առաքինութիւնն կու խափանի, այլ ո՛չ ժամ կու գնայ, ո՛չ աղօթք կառնէ, ո՛չ ծունր կու դնէ, ո՛չ պահք կու կենայ և այլն: Երրորդ՝ անճնիշխան կամքն, զի յորժամ անճնիշխան կամօք ո՛չ գործէ գառաքինութիւն, առաքինութիւնն կու խափանի, այլ ո՛չ ժամ կու գնայ, ո՛չ աղօթք կառնէ, ո՛չ ծունր կու դնէ, ո՛չ պահք կու կենայ և այլն: Երրորդ՝ անճնիշխան կամքն, զի յորժամ անճնիշխան կամօք ո՛չ գործէ գառաքինութիւն, առաքինութիւնն կու խափանի: Զորրորդ՝ գնեղութիւն դիւացն ունիմք հակառակ առաքինութեանն*[4], *զի զևք գառաքինութիւնն ո՛չ կամին, որ գործէ*[5] *մարդ, և ջանան խափանել: Հինգերորդ՝ ագահութիւնն է խափանիչ առաքինութեանն և բարոյն, զի ասէ Տէրն. «Ո՛չ կարէք նիչ առաքինութեանն և բարոյն, զի ասէ Տէրն. «Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի» (Մտթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13): Զի արծաթսիրութիւնն յԱստուծոյ*[6] *ծառայութենէն արտաքս հանէ զմարդն, և ինքեան ծառայ առնէ և դիւացն: Ապա աղօթից պէտք են և օգնականութեանն Աստուծոյ, որ առ Աստուած աղօթեմք*[7] *և զԱստուած օգնական կոչեմք մեզ, և ապա կարեմք գործել զբարին և զառաքինութիւնն:*

**Խնդրեցէ՛ք զիրաւունս** (*Ա. 17*):

*Բազում աշխատութեան պէտս և այս ունի, զի բազում իրք են, որ կորուսանեն զիրաւունս և զարդար*[8] *դատաստանն և առ-*

---

1 A որդեակ
2 A *չիք* իմ
3 B մարդս
4 B ս ոաքինութեանց
5 B ոչ կամին որ զառաքինութիւն գործէ *փխ* զառաքինութիւնն ոչ կամին որ գործէ
6 B արծաթսիրութիւն Աստուծոյ
7 A աղօթեմ
8 B զարդարութեան

*նել անիրաւութիւն: Նախ՝ կաշառքն խափանէ զիրաւունս և զարդար դատաստան առնելն: Երկրորդ՝ ագիտութիւնն, զի յորժամ ագէտ լինի և յիմար, չի կարէ[1] իմանալ[2], թէ որն է ողորդն կամ սուտն, իրաւն կամ անիրաւն: Եւ զիրաւն անիրաւ կու իմանայ, և զանիրաւն՝ իրաւ, և թիւր կառնէ զդատաստանն[3]: Երրորդ՝ աչառութիւնն, զի թէ իւրն բարեկամ է և կամ սիրելի, կամ ի նորա տունն գնացեր է[4] և հաց կերեր[5], և ի միոյն՝ ո՛չ, նորա երես առնէ, թէ նա սուտ է՝ կիրաւացնէ, և միւսն, որ իրաւ է, կու ատէ և այնպէս կու թիւրէ զիրաւունքն և զդատաստանն: Եւ այս մեծ յիմարութիւն և անհաւատութիւն է[6] այսպէս առնելն[7]: Զդատաստանն ուղիղ արայ, զի դատաստան՝ Աստուծոյ է դատաստան, և թէ նորա բարի առնելոց ես՝ ի քո քահկէդ արայ: Եւ թէ մինն մեծատուն է և մինն՝ աղքատ, զերկուքն Աստուած է արարեր. թէ գնա հարուստ է արարեր, և գնա աղքատ է ար[ար]եր: Չորրորդ՝ երկիւղ, զի թէ մեծատուն մարդ լինի կամ իշխան և սուտ լինի, երկնչի ի նմանէ և զդատաստանն նորա առնէ:*

**Փրկեցէ՛ք զզրկեալն** *(Ա 17):*

*Այս առաւել է, քանզի «խնդրեցէք զիրաւունս»: Զի ո՛չ միայն քննել զիրաւունս և զսուտն սուտ առնել և զճշմարիտն՝ ճշմարիտ, և ի բաց թողուլ, այլ ի գլուխ պարտ է հանել: Զի այն, որ զրկեր է՝ առնուլ և Տէրն դարձուցանել, զի իշխանութիւն[8] և մեծութիւն է Աստուած քեզ տուել[9], մի՛ թողուր որ այն, որ հարուստն է, զրկէ զաղքատն և զանանկն, զորբն և զայրին, և*

---

1 B չկարէ *փխ* չի կարէ
2 A իմանար
3 A գդատ
4 B *չիք* է
5 A կերէր
6 A *չիք* է
7 B առնել
8 A գիշխանութիւն *փխ* զի իշխանութիւն
9 A տուեր

*դօրաւորն՝ զանդօրն*[1]*: Զհին օրինաց պաշտօնն*[2] *և զոհն*[3] *խափանեաց, և ի բաց ձգեաց մարգարէս ասելով. «Ո՞ խնդրեաց զայդ ի ձէնջ» (հմմտ. Ա. 12) և այլն: Եւ զաւետարանական օրինացն ուսուցանէր*[4] *զհանգամանքն, և զՀինն զամենայն*[5] *խոտեաց և ի բաց ձգեաց: Եւ առաջի կայ*[6] *այս*[7]*, զոր ասելոց է, զաւետարանական օրինացն ուսուցանէ զհանգամանս և զնոր օրէնքս: Եւ թէ ասիցէ ոք, թէ՝ «ԶՀինն զամենայն*[8] *խափանեաց մարգարէս և զնորս ուսուցանէ», ընդէ՞ր ասա ասաց Քրիստոս, թէ՝ «Ո՛չ եկի լուծանել զօրէնս, այլ՝ լնուլ» (հմմտ. Մտթ. Ե 17): Եւ Պօղոս առաքեալն ասէ, թէ՝ «Օրէնքն*[9] *սուրբ են, և պատուիրանն*[10] *սուրբ և արդար» (Հռոմ. Է 12): Պատասխանի. Օրէնքն բարի է և ճշմարիտ, թէ հոգեպէս*[11] *կատարէ ոք, զայս ո՛չ խոտէ մարգարէս*[12]*, ապա թէ մարմնապէս իմանան*[13] *և մարմնապէս կատարեն՝ խոտէ: Զի նոր օրէնքս և Քրիստոս ո՛չ հեռացուցանէ զմեզ յօրինացն*[14]*, այլ ի վեր քան զօրէնս տանի*[15] *և հանէ զմեզ: Եւ զօրէնսն ևս կատարել տայ, զի և օրէնքն ո՛չ արգելու ի Քրիստոսէ, զի պատրաստակէ ի Քրիստոս*[16]*: Զի օրէնքն ի չարութենէ և ի*[17] *մեղաց արգելու, և զաղէր պղծութիւն մեղացն ցուցանէ: Որպէս ասէ Պօղոս. «Զմեղս ո՛չ գիտէի*[18]*» (հմմտ. Բ Կորն. Ե 21), եթէ ո՛չ*

---

1 C *չիք* Լուացարուք սրբացարուք (Ա. 16): Զի թէպէտ առանց բժշկութեան... զայրին և զօրաւորն զանզօրն (*տե՛ս աստ. էջ 41*)
2 AB օրինացն զպաշտօնն
3 AC զոհսն
4 AB ուսուցանէ
5 B ամենայն
6 A կայս. C կոյս
7 AC *չիք* այս
8 B ամենայն
9 B օրէնք
10 B պատուիրան
11 B հոգէպէս է
12 A մարգարէն
13 A իմանաս
14 C օրինացն
15 AB տան
16 B Քրիստոսէ
17 AB *չիք* և ի
18 AB գիտէին

*օրինացն*[1] *էր ասացեալ: Իսկ աւետարանական օրէնսն*[2] *զառաքինութիւնն*[3] *ուսուցանէ, զի օրէնքն դրեալ է. «Մի՛ ապանաներ*[4] *և մի՛ շնար» (Համմա. Մարկ. ԺԹ 19, Ղուկ. ԺԸ 20): Եւ այսոքիկ*[5] *ի գործ*[6] *մեղացն միայն խափանեն, իսկ աւետարանն ասէ. «Մի՛ բարկանար*[7] *և մի՛ ցանկանար*[8]*» (Համմա. Հռոմ. է 7): Զխորհրդոց*[9] *մեղքն արգելու*[10]*: Զի յորժամ զխորհրդոց մեղքն արգելու մարդ, յայնժամ գործովն այլ*[11] *չի կատարեր զմեղքն: Ապա թէ զխորհուրդն*[12] *ո՛չ արգելու ի*[13] *մեղացն, մարմնովն գործելոց*[14] *է*[15] *յետոյ: Զոր օրինակ՝ ծառին արմատն լինի՝ ճիւղքն*[16] *բուսանին*[17]*, և թէ արմատն չորանայ, ընդ նմին և ճիւղքն չորանան: Տէրն զբարկութիւնն արգել և զցանկանալն*[18]*, զի յորժամ բարկանայ՝ կռուի և ապանանէ*[19]*, կամ առանց կռուոյ ապանանէ*[20]*, և երբ ո՛չ բարկանայ՝ ո՛չ ապանանէ*[21]*: Եւ յորժամ ո՛չ ապանանեցեր*[22]*՝ յայնժամ*[23] *զօրէնքն կատարեցեր, որ ասացաւ յօրէնսն. «Մի՛ ապանաներ» (Մարկ. ԺԹ 19, Ղուկ. ԺԸ 20): Նոյնպէս և յորժամ ցանկացաւ մտօքն*[24]*՝ յետոյ շնութիւն այլ կատարի, և յորժամ ի*[25] *միտքն ո՛չ ցանկացաւ, գործ շնութեան խափանեցաւ և*

---

1 B յօրինացն
2 AB *չիք* օրէնսն
3 A զառաքինութիւնս
4 A ապաներ
5 B այնոքիկ
6 AB գործս
7 AB բարկանայր
8 C ցանկար
9 AB զի խորհրդոց
10 C այլ կու արգելու
11 AB *չիք* այլ
12 B խորհուրդն
13 AB *չիք* ի
14 B գործելոյ
15 C *չիք* է
16 A ճիղքեն, B ճեղքէն, C ճիւղն
17 C այլ կու բուսանին
18 C զցանկալն
19 A ապաներ, B ապանէ
20 A ապաներ, B *չիք* կամ առանց կռուոյ ապաներ
21 A ապաներ *կրկ* և յորժամ ոչ բարկանա ոչ ապաներ
22 A ապա տեսեր, B ապաներ
23 AB աւրէնքն այլ կատարեցաւ զի *փխ* յայնժամ
24 C *չիք* մտօքն
25 AB *չիք* ի

*օրէնքն այլ կատարեցաւ*[1], *որ ասաց.* «Մի՛ շնար» (*Մարկ. ԺԹ 19, Ղուկ. ԺԸ 20*): *Նոյնպէս և զայլս*[2] *իմացիր: Զի յորժամ պնոր օրէնքս ճշմարտութեամբ կատարեն, պհինն ի հետ կատարի: Զի նոր օրէնքս կատարելապէս ուսուցանէ զբարին և*[3] *կատարելապէս ի չարէն հեռացուցանէ՝ ի խորհրդոց մեղաց և ի մատց և ի գործոց*[4]:

**Դա՛տ արարէք որբոյն**[5] **և տո՛ւք իրաւունս այր[ե]ոյն** (*Ա. 17*): *Կամ*[6] *բազումք նեղին, և կա՛մ ի գետն անկանին, և կա՛մ քարավէժ լինին, կա՛մ խեղդին՝ յորժամ նեղութիւն կրեն ի գրկողացն: Զի այն, որ որբութիւն*[7] *է և այրութիւն և աղքատութիւն, ինքն ըստ ինքեան թշուառութիւն են*[8], *և յորժամ ի մարդկանէ այլ նեղութիւն կրեն, ա՛ռ որչափ չարչարանք է և առապանք: Վասն այն ասէ.* «Դա՛տ արարէք որբոյն և այրոյն»: *Զի յորժամ նեղին, յայլմէ ո՛չ ինչ կարեն առնել, զի ի նոցա ձեռացն*[9] *ինչ գայ: Երբ անճար մնան, ի դատաստան կու*[10] *գնան, և թէ գնան՝ կաշառ ո՛չ ունին որ տան, և նոքա ո՛չ հային և ո՛չ միտ դնեն և ո՛չ լսեն նոցա: Եթէ զայսոսիկ առնէք, որ զորբն և զայրին ընդունիք, և զիրաւունք*[11] *և զդատաստան*[12] *առնէք նոցա, և զրկեալն փրկէք և որբոյն և այրոյն*[13] *վերակացու*

---

1 A կատարեցեր, C *չիք* և զօրէնքն այլ կատարեցաւ
2 AC զայլն
3 C *չիք* կատարելապէս ուսուցանէ զբարին և
4 C *այնուհետև շարունակվում է.* «Լուացարուք, սրբեցարուք (Ա. 16): Զի թէպէտ առանց բժշկութեան են ցաւքդ... և զԱստուած օգնական կոչեմք մեզ, և ապա կարեմք գործել զբարին և զառաքինութիւնն» (*համեմատված է ըստ ԱՆ ձեռագրերի դիրքի, տե՛ս ատո, էջ 41-45*):
5 A որբոյ
6 AB *չիք* կամ
7 AB որբութեանն
8 AB թշուառութիւնն *փխ* թշուառութիւն են
9 AB յափուցն *փխ* ձեռացն
10 AB նաչարին դատաստան գնան *փխ* երբ անճար մնան ի դատաստան կու
11 B գիրաւունս. C իրաւունք
12 A գդատաստանն. B դատաստանն
13 AB *չիք* և այրոյն

*լինիք: Զայսոքիկ առաւել ընդունելի է ինձ, քան զՀին զոհն և զպատարագն*[1]*, որ մատուցանէին:*

*Եւ յորժամ զայսոսիկ առնէք, զոր ինչ պատուիրեցի ձեզ, «եկայք խօսեցարուք ընդ միմեանս» (Ա 18), այսինքն՝ միմեանց իրաւունս տացուք: Իրաւացուցանելն զմիմեանս այն է, որ Աստուած մարդոյ ազօթից լսէ և արժանի առնէ և զխնդրուածքն կատարէ: Եւ մարդոյ իրաւացուցանելն զԱստուած այն է, յորժամ առնու զխնդրուածքն՝ իրաւունք տայ Աստուծոյ, թէ Աստուած բարի է, ողորմած է, անխաղակալ է, անյիշաչար է և այլն: Այս է, որ ասէ Աստուած. «եկայք խօսեցարուք ընդ միմեանս» և իրաւացուցուք զմիմեանս*[2]*:*

*Ամենայն ուրեք մարգարէիւքն պատուիրէ զրկելոցն վրէժխնդիր լինել և չզրկել զոք, որպէս ասէ Միքիայ մարգարէն. «Պատմեցաւ քեզ, ո՛վ մարդ, զի՞նչ է բարին կամ զի՞նչ խնդրէ ի քէն Տէր, այլ առնել [զ]իրաւունս և [զ]ողորմութիւն» (հմմտ. Միք. Ջ 8), այսինքն՝ որ ազքատին ողորմիք. և իրաւունս և դատաստան առնէք: Եւ Դաւիթ մարգարէն ասէ. «Յողորմութիւն և յիրաւունս օրհնեցից զքեզ, Տէ՛ր» (Սաղմ. ճ 1): Իսկ Աւետարանն*[3] *անակնկալութիւն ո՛չ յարտաքոյսն միայն խնդրէ*[4]*, այսինքն՝ որ այլ*[5] *ո՞չ միայն*[6] *առ օտարս առնել*[7] *ճշմարիտ դատաստան և ուղղութիւն, այլ և ի ներքս ի սիրտն իւր առնել ուղղութիւն և արդար դատաստան*[8]*: Զչարն առել և զբարին սիրել, զի Աստուած զչարն առէ և պարսաւէ և զբարին սիրէ*[9]*,*

---

1 B պատարագն
2 AB խօսելն՝ զաղօթելն ասէ, զի աղօթքն խօսեալ է ընդ Աստուծոյ: Զի՞նչ է աղօթքն, թէ (B եթէ) խօսք է ընդ Աստուծոյ, և լսէ Աստուած և գմեղս ձեր, զոր գործեցէք (B գործեալ էք)՝ թողում *փխ* այսինքն միմեանց իրաւունս տացուք... և իրաւացուցուք զմիմեանս
3 C օտարն *փխ* աւետարանն
4 A խնդիր է *փխ* խնդրէ
5 C *չիք* Դատ արարէք որբոյ և տուք իրաւունս այրոյն... միայն խնդրէ, այսինքն՝ որ այլ (*հատվածն համեմատված է ըստ AB-ի դիրքի. տե՛ս ստր. էջ 48*)
6 AB *չիք* ոչ միայն
7 AB առն *փխ* առնել
8 B դատաստանս
9 AB *չիք* և զբարին սիրէ

*իսկ սատանայ՝ գովէ և գովելի երևեցուցանէ*[1] *մարդկան: Իսկ Աւետարանական օրէնքն զմարդն*[2] *ի բարին յորդորէ և ի բարոյ փափագումն ածէ, իսկ սատանայ ի չարն յորդորէ: Ով Քրիստոսի*[3] *և Աւետարանին լսէ և զբարին գործէ, գործողին*[4] *բարի տայ Աստուած և արքայութիւն տանի, և ով որ սատանայի լսէ և զչարն գործէ, փոխարէն զչարն տայ սատանայ և զդժոխքն*[5]*: Վասն որոյ պարտ է իրաւամբք մտացն բարոյն Հաւանիլ*[6] *և*[7] *զբարին գովել*[8]*, իսկ որ մտօք չարին Հաւանին և զչարն գովեն և գործեն, վա՛յ տայ մարգարէն*[9] *Եսայի*[10]*. «Վա՛յ, որ ասէցէ զչարն բարի և զբարին չար, զլոյսն*[11] *խաւար և զխաւարն*[12] *լոյս, զդառն*[13] *քաղցր և զքաղցրն*[14] *դառն*[15]» *(հմմտ. Ե 20):*

**Ցանդիման խօսեցարուք** *(հմմտ. Ա 18):*

*Այսինքն*[16]*՝ միմեանս*[17] *իրաւունս տացուք: Մեկնիչն ասէ.* «Ո՛չ է կարողութիւն մարդոյս[18] յատեան մտանել ընդ Տեառն», *զի արդար*[19] *է նա ի դատել իւրում: Զի զինչ, որ առնէ*[20]

---

1 B կացուցանէ *փխ* երևեցուցանէ
2 AC զմարդիկ
3 C *չիք* Քրիստոսի
4 A զգործողն
5 C գին և վաճառական է հետ մարդոյն, ով որ նորա կամացն կու հետևի. զի կու տայ գործել զմեղքն և կառնու յինքն զմեղքն, և կու տայ մեղացն փոխարէն զտանջանքն և զչարչարանքն և այլն *փխ* և զդժոխքն
6 B հաւանել
7 AB և զբարին գործէ և
8 B գովէ
9 AB մարգարէս
10 AB *չիք* Եսայի
11 B լոյսն, C զլուսն
12 B խաւարն
13 B դառն
14 B քաղցրն
15 C զքաղցրած դառն: *Այնո՝հետև շարունակվում է Ա 17 գլխահամարը (բնագրում հա՛հեմատված է ըստ ԱՒ-ի դիրքի).* «Խնդրեցէք զիրաւունս (Ա 17): Բազում աշխատութեան պետս և այս ունի... Այս է, որ ասէ Աստուած. «Եկայք խօսեցարուք ընդ միմեանս» (Ա 18) և «իրաւացուցուք զմիմեանս» (*տե՛ս աստ, էջ 45-49*):
16 AB որ, *փխ* այսինքն
17 A միմեանց
18 B մարդոյն
19 C արդ *փխ* արդար
20 A առնէն

*նորայն*[1]*, արդար է*[2]*՝ թէ՛ տանջէ և թէ՛ պատժէ, թէ՛ սպանանէ*[3] *և թէ՛ կեցուցանէ, թէ՛ մեռուցանէ և թէ՛ պատուէ, թէ՛ պակասէ՝ ճշմարիտ է նա*[4]*: «Իսկ մեք յաղտէ*[5] *և ի մեղացն ո՛չ եմք մաքուր և սուրբ, և ո՛չ ոք պարծեսցի սիրտ սուրբ ունել, զի թէ մի օրեայ լինի՝ ո՛չ է առանց մեղաց» (հմմտ. Յոբ. ԺԴ 4). ասէ Յոբ: Վասն որոյ՝ ըստ Աւետարանին. «Ի սրտէ քննութեամբ խոստովանեսցուք զնա արդար և զմեզ պարտաւորս*[6]*» (հմմտ. Ա Յովհ. Ա 9), զի առաջնոցն յանցանացն թողութեամբ*[7] *դիպեսցուք յաստղէն:*

**Եթէ ի՛ցեն մեղք ձեր իբրև զձանձախարիթ՝ իբրև զձիւն**[8] *(Ա 18):*

*ԶԱստուած արդար և ճշմարիտ իմասցուք, և զմեզ՝ մեղաւոր և յանցաւոր օրինացն Աստուծոյ, և ի նորա բարերարութիւնն և յողորմութիւնն*[9] *ապաւինեսցուք, և ո՛չ թէ ի մեր գործս ապաւինեսցուք: Զնորա մեծամեծ գործսն*[10] *զմտաւ ածեսցուք*[11]*՝ զտնօրէնութիւնն, որ Աստուած յերկնից յերկիր խոնարհեցաւ և զայլն: Յայնժամ ողորմութիւն գտանեմք ի նմանէ: Ապա թէ ի մեր գործս*[12] *վստահանամք և ապաւինիմք*[13]*, ո՛չ արդարանայ առաջի նորա ամենայն մսեղի:* «Եկայք խօսեցարուք» *(Ա 18) ընդ իս, խօսել զաղօթել ասէ, զի աղօթքն խօսք է ընդ Աստուծոյ*[14]*:* «Միմեանց իրաւունս տացուք» *(հմմտ. Ա 17-18): Իրաւացուցանել*

---

1 AB որ այն *փխ* նորայն
2 AB *չիք* է
3 A սպանանէ
4 B *չիք* նա
5 A յախտէ, C ի յախտէ
6 B պարտաւոր
7 C թողութեան
8 AB *չիք* իբրև զձանձախարիթ իբրև զձիւն
9 A յողորմ
10 A գործն
11 A ածցուք
12 B գործս
13 AB ապա օրինիմք *փխ* ապաւինիմք
14 AB *չիք* «Եկայ› խօսեցարուք»... ընդ Աստուծոյ

*զմիմեանս այն է, որ Աստուած մարդոյ աղօթիցն լսէ և արժանի առնէ և զխնդրածսն կատարէ: Եւ մարդոյ իրաւացուցանելն զԱստուած այն է, յորժամ առնու զխնդրուածքն, իրաւունս*[1] *տայ Աստուծոյ, թէ Աստուած բարի է, ողորմած է, անոխակալ է, անյիշաչար է և այլն: Այս է, որ Աստուած ասէ.* «Եկայք խօսեցարուք ընդ միմեանս» *(Ա 18) և իրաւացուսցուք զմիմեանս:* «Եւ թէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիւթ», *այսինքն՝ առեց մուր,* «իբրև զձիւն սպիտակ արարից, և եթէ իցեն իբրև զորդան կարմիր», *այսինքն՝ ղրմզի ապրիշումն*[2], «իբրև զասր սուրբ արարից» *(Ա 18): Տե՛ս ըստ համեմատութեան և հաւասարութեան մեղացն՝ սևութեան սպիտակութիւն խոստանայ, թէ քան զառեց մուր սևացեալ էք մեղօք, քան զձիւն սպիտակ առնեմ զձեզ, և թէ արեամբ կարմրացեալ էք՝ իբր զասր սուրբ առնեմ զձեզ*[3]*: «Իբրև զասր սուրբ արարից և զձիւն», այսինքն՝ ապաշխարութեամբ և արտասուօք և մկրտութեամբ: Զի*[4] *թէպէտ մեղքն*[5] *դժուարալուծանալի է, մեզ է դժուարալուծանալի, որ ապաշխարութեամբ և պահօք և աղօթիւք և չարչարանօք աղատիմք ի մեղաց, իսկ Աստուծոյ դիւրին է և հեշտ: Զի թէպէտ իբրև զառեց մուր սևացեալ է մեղօք և կամ իբրև ինքնաներկ սև*[6]*, Աստուծոյ դիւրին է սրբել ի մեղաց, և սպիտակ և մաքուր առնել: Զի ո՛չինչ է դժուարալուծանալի Աստուծոյ ի ջնջելն: Զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն Աստուծոյ, և Աստուած է, որ արդարացուցանէ: Եւ ո՞վ է, որ դատապարտ առնէ:*

---

1 A զխնդրուածք իրաւունք
2 B կրմզի ապրիշում
3 B արարից *փխ* առնեմ զձեզ
4 B և *փխ* զի
5 A մեղն
6 B ինքնասեան ներկ *փխ* ինքնաներկ սև

**Եթէ ախորժեսջիք և լուիջիք[1] ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք[2]: Ապա թէ[3] ո՛չ կամիցիք[4] լսել ինձ[5]՝ սուր կերիցէ զձեզ** *(Ա 19-20):*

*Զի եդ Աստուած առաջի մարդոյն ճանապարհ մահու և կենաց, և յանձնապաստան արար, յոր կամիցի գնալ: Եթէ զբարին կամեսայ և զբարին սիրէ և գործէ՝ զերկնից արքայութիւնն և բարութիւնն[6] վայելէ, և թէ զչարն և զմեղքն կամեսայ և սիրէ և գործէ՝ ի տանջանքն և ի չարչարանքն մատնելոց է, և գնայ ի դժոխքն և ի կրուստ[7] մատնի[8]: Հաւանութեան պտուղ է թէ՛ փառք և թէ՛ տանջանք, զի որուն և հաւանի իւր կամօքն, զայն է առնելոց և կրելոց[9]: «Զբարութիւնս երկրի կերիջիք», որպէս Աստուած խոստացաւ ձեզ զբարութիւնս երկրի[10], զոր սրբոցն է խոստացեալ, զոր Քրիստոս հեզոցն ժառանգել խոստացաւ: «Ապա թէ ո՛չ կամիցիք լսել[11] ինձ[12], սո՛ւր կերիցէ զձեզ»: Զի բերան Տեառն ամենակալի խօսեցաւ զայս: Բաբելացոց սուրն կերիցէ զձեզ[13], սրոյ[14] ճարակ տամ զձեզ և սրոյ մատնեմ զձեզ, որ սրախողխող[15] առնեն զձեզ: Զարեացն և մեղսասիրացն մնայ Աստուծոյ բարկութիւնն, սուրն և սատակումն: Տե՛ս ո՛չ[16] ասաց, թէ՝ «Լսեցէ՛ք ինձ և[17] զերկնից արքայութիւնն տամ ձեզ կամ մեղաց թողութիւն առնեմ ձեզ», այլ զերկրաւոր բարիս խոստա-**

---

1 A լութիւն, B լուութիւն
2 AB *չիք* ինձ զբարութիւնս երկրի կերիջիք
3 A եթէ
4 AB կամեցաք
5 AB *չիք* ինձ
6 A զբարին, B զբարինն
7 B կորուստն
8 A մատնին
9 B առնէ *փխ* է առնելոց և կրելոց
10 B երկրի կերիջիք
11 B *չիք* լսել
12 AB *չիք* ինձ
13 AB այսինքն սուրն բաբելացոց *փխ* զի բերան Տեառն... սուրն կերիցէ զձեզ (*C հմմտ. ըստ AB դիրքի*)
14 B որ *փխ* սրոյ
15 AB սրախոխոխ
16 B որ *փխ* ոչ
17 A *չիք* և

*ցաւ: Զի նոքա, որ թանձրամիտքն են և աշխարհասէրքն, ո՛չ այնքան երկնից արքայութեան ցանկան և մեղայ թողութեան, որչափ աշխարհիս կարծեալ բարութիւնս, որ վայելեն, որ կարծեօք բարի է և ո՛չ ճշմարիտ բարի: Իսկ նա ի վերայ արքայութեանն և զայս ևս խոստանայ՝ զերկրաւոր բարութիւնս տալ նոցա, սակայն նոքա ո՛չ դառնան ի մեղաց:*

*Դարձեալ. ասելով թէ՝ «Ախորժեսջի՛ք և լուիջի՛ք»: Այս բանիւս ի բաց բառնայ զհարկ, զբախտ և զճակատագիր: Եւ զնոցա բարբանջմունս, որ բնութեամբ ասեն զչար, զի ախորժելն կամել ո՛չ է ներքոյ հարկի, և ո՛չ ինչ խափանել կարէ զկամս և զախորժակս՝ ուրուք ի լինելոյ բարի կամ չար, թէ՛ կամեցայ մարդ զչարն գործէ և թէ՛ կամի՝ զբարին: Զի Աստուած բռնութեամբ զմարդն ի բարին ո՛չ քարշէ և տանի, և ի չարն ամենևին ո՛չ տանի, այլ ի բարին բռնութեամբ և հարկիւ ո՛չ տանի, զի անձնիշխան կամօք արար զմարդն, որ իւր կամաւն զբարին գործէ: Եւ թէ իւր[1] կամաւն զբարին թողու և զչարն[2] գործէ, Աստուած բռնութեամբ ի չարէն ի բարին ո՛չ դարձուցանէ, թէ առնէ անձնիշխան կամքն[3]՝ կորնչի մարդոյն. զայս ո՛չ առնէ Աստուած:*

**Եւ արդ՝ դու տուընդ Յակոբայ, եկա՛յք երթիցուք ի լոյս Տեառն** *(Բ 5):*

*Այսինքն՝ ի պատուիրանն, զի պատուիրանն լոյս է մտացն և ճրագ ոտիցն, այսինքն՝ մտացն կեանք և խրատ: Կեանք է, որ զպահողան[4] կենդանացուցանէ, և խրատ, որ խրատէ զբարին գործել: «Լոյս» կոչէ զպատուիրանն, զի պատուիրանն[5] լոյս է: Երկրորդ՝ որ աստուածային հրամանք է՝ Աստուծոյ լոյս է, որպէս ասէ յերգ շարականին. «Ջէր վասն զի լոյս են հրամանք քո ի*

---

1 A *չիք* իւր
2 B չարն
3 B կամօքն
4 A զպահօղն
5 A պատուիրանիք

*գործել: «Լոյս» կոչէ զպատուիրանն, զի պատուիրանն*[1] *լոյս է: Երկրորդ՝ որ աստուածային հրամանք է՝ Աստուծոյ լոյս է, որպէս ասէ յերգ շարականին. «Տէր վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի»: Երրորդ՝ զբարին ուսուցանէ գործել, և բարի գործքն լոյս է: Զորրորդ՝ երկնից արքայութիւնն տայ զպահողն: Հինգերորդ՝ զմիտքն լուսաւորէ զի քան զճառագայթս առաւել պայծառ ոգոյ: Զի որպէս ճառագայթ արեգականն, որ զաշխարհս*[2] *լուսաւորէ, առաւել քան զայս պատուիրանն Աստուծոյ զմտաց աչս լուսաւորէ: Զի որպէս ական շահ է լոյսն, նոյնպէս և ոգոյ հաւանելոյ օրինաց, Ա (1) ի մեղաց սուրբ պահէ և ի չարէն և ի տանջանացն ազատէ, որք որ զառաքինութիւն կամին գործել: Իսկ որք*[3] *զմեղքն գործեն և իւրեանց խղճմտանքն հանապազ տանջէ զիւրեանցն*[4]*, նոքա առաւել իգապոյնք են և թլուական, քան զնատեալսն ի խաւարի, յորժամ ահն զմիտքն*[5] *հարկանիցէ, որպէս ի պիշերի զարհուրին ի մէջօրէի:*

*Դարձեալ. մարգարէս Եսայի յորդորէ զիսրայէլացիսն լսել Քրիստոսի: Յորժամ Որդին Աստուծոյ մարդ լինի ի ձերում միջի, լսեցէ՛ք նմա և հաւատացէք ի նա, յԱստուած հաւատացէք և յՈրդին Աստուծոյ*[6]*, թէ*[7] *ասէ. «Ե՛ս Աստուած եմ և Որդի Աստուծոյ»: Լսեցէ՛ք նմա և հաւատացէք, թէ ասէ. «Ե՛ս եմ ճանապարհ[ն] և ճշմարտութիւն և կեանք» (Յովհ. ԺԴ 6): Ճշմարիտ է նորա բանն, եթէ ասէ. «Ես եմ հացն ի*[8] *յերկնից իջեալ» (Յովհ. Զ 41): Ճշմարիտ է և զայլն, եթէ ասէ. «Ես լոյս յաշխարհի եկի», ճշմարիտ է, զի ինքն ասաց. «Ես եմ լոյս*[9] *աշխարհի» (Յովհ. Ը*

---

1 A պատուիրանիք
2 A զաշխարհ
3 B որ
4 AB զիւրեանիքն
5 A զմիտնսն
6 B նորա *փխ* Աստուծոյ
7 A լսեցէք նմա և հաւատացէք թէ, B և *փխ* թէ
8 B որ *փխ* ի
9 B *դրփխ* լոյս եմ

*12): Մինչդեռ զլոյսն[1] ընդ ձեզ ունիք, գնացէք լուսովն, զի մի խաւար հասցէ ձեզ:*

*Դարձեալ. լոյս է[2] նորա քարոզութիւնն և վարդապետութիւնն: Դարձեալ. ի ստուերէն ի լոյսն փոխեաց, զի Նոր օրէնքն արեգակն է: Իսկ հրէայքն զնախնեացն ունէին պարծանս[3], զի յԱբրահամն պարծէին և ասէին, թէ՝* «Որդիք Աբրահամու եմք Սահակայ և Յակոբայ» *(Յովհ. Ը 33), և* «Մովսէսի աշակերտ եմք» *(Յովհ. Թ 28): Որ զի թէպէտ և արգելցեն զօրէնսն և զատարկ վարկցին, զՓրկչին գալուստն ո՛չ վատնին, զի ասէին.* «Թէպէտ և զօրէնքն ո՛չ պահեմք, յորժամ Քրիստոս գայ, ի նա ո՛չ հաւատամք[4]: Ո՛չ վնասիմք և ո՛չ պատժիմք, զի յորժամ յաշխարհս էաք, ո՛չ օրէնք կայր և ո՛չ պատուիրան, և ո՛չ պահէաք: Եւ Աստուած տասն հարուածով զեգիպտացիքն և զփարաւոն տանջեաց և զմեզ ո՛չ ինչ վնասեաց և ո՛չ տանջեաց: Եւ ո՛չ օրէնք էր եղեալ և ո՛չ պահէաք, և այժմ թէ զօրէնքն ո՛չ պահեմ[ք], վասն օրինացս[5] չպատահելոյն ո՛չ տանջէ զմեզ Աստուած, որպէս յայնժամ: Եւ թէ Քրիստոս գայ և զնորա պատուիրանն ո՛չ պահեմք և ի նա ո՛չ հաւատամք՝ ո՛չ վնասիմք: Զի զՄովսէսի օրէնքն պահեմք, զի գիտեմք, զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած[6]» *(հմմտ. Յովհ. Թ 29): Վասն այնպիսի սնոտի յուսոյն ի նախնիքն պարծէին և զօրէնքն ո՛չ պահէին: Ասէ մարգարէն.* «Եթո՛ղ նա զժողովուրդ իւր զտունն Իսրայէլի» *(Բ 6): Եւ ի ձեռն միւս մարգարէի ասէ Աստուած[7].* «Յաղագս ձեր Սիոն արօրադրեսցի» *(հմմտ. Միք. Գ 12, Երեմ. ԻԶ 18): Եւ մարգարէս Եսայի ասէ.* «Երուսաղէմ իբրև մրգապահանոց եղիցի[8]» *(հմմտ. Ա 8, Միք. Գ 12, Երեմ. ԻԶ 18): Եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս յայտնապէս*

---

1 B լոյսն
2 A չիք է
3 B պարծանք
4 AB հաւատան
5 A օրինացն
6 AB բառից յետոյ կէս էջ ազատ է թողնուած, չգրուած:
7 A չիք Աստուած
8 A եղեցի

*ասէ.* «Երուսաղէմ, որ կոտորէին զմարգարէս[1] և քարկոծ առնէին զառաքեալսն առ քեզ[2], և զի կամեցայ ժողովել զձեզ և ո՛չ կամեցարուք: Ահա թողեալ լիցին ձեզ տունդ ձեր աւերակ» *(հմմտ. Մատ. ԻԳ 37-38, Ղուկ. ԺԳ 34-35): Եւ Երեմիայ մարգարէին ասէ.* «Լքի՛ զտուն իմ, թողի՛ զժառանգութիւն իմ» *(Երեմ. ԺԲ 7): Եւ թէ հրէայքն այսպէս պատուհասէին, յորժամ զօրէնքն ո՛չ պահեցին, ապա և մեք ո՞րպէս ապրեսցուք յետ այսչափ շնորհացս, զոր առաք ի Քրիստոսէ, զի զմեզ առաւել բարի է արարեալ Աստուած քան առ նոսա: Թէ զնոսա յԵգիպտոսէ ազատեաց, զմեզ ի դժոխոց տանջանացն ազատեաց, որ բազմապատիկ առաւել էր քան զնոցայն: Զնոսա ի փարաւոնէ ազատեաց և զմեզ ի սատանայէ ազատեաց, որ առաւել չար է քան զփարաւոն: Եթէ նոցա զծովն պատառեաց և անցոյց, մեզ զծովն մեղաց աշխարհի պատառեաց: Զնոսա յանապատն տարաւ և զմեզ՝ յերկինքն, որ անապատ ասէ չարեաց[3]: Նոցա մանանայ իջոյց և մեզ՝ զիւր մարմինն, նոցա զերկիրն պարգևաց խոստացաւ, թէ կային յօրէնքն և պահէին զպատուիրանն, և մեզ՝ պահողացն, զերկնից արքայութիւնն է խոստացեալ: Եւ թէ նոցա Հանդերձն հետ լուսնին նորանայր և հնանայր և ո՛չ մաշէր, և մեզ փոխանակ այնմ զլուսեղէն պատմուճանն է խոստացեալ, զոր ղգեցեալ[4] ունէր Ադամ ի դրախտին: Նոցա զՄովսէս առաքեաց փրկիչ և առաջնորդ, և մեզ Քրիստոս եղև փրկիչ և առաջնորդ:*

**Լցաւ իբրև զառաջինն[5] երկիր նոցա հմայիւք իբրև զայլազգեացս[6]** *(Բ 6):*

---

1 A զմարգարէսն
2 B *չիք* առ քեզ
3 B *չիք* որ անապատ ասէ չարեաց
4 A ագեցեալ
5 B զառաջին
6 B զայլ ազգիս *փխ* զայլազգեաց

*Իբրև զայն ժամանակն, որ յԵրուսաղէմս էին, կամ յորժամ գերի էին*[1] *ի մէջ այլազգեացն ի Բաբելոն, այժմ այլ, որ ի յԵրուսաղէմ են, նոյնպէս են: Զնոյն ազանդն և զսովորութիւնն ունին, զի ստիպէ սատանայ զպակասամիտսն կարծեցուցանել: Թէ ո՛չ չարութիւն և ո՛չ առաքինութիւն յանձնիշխան կամացն ո՛չ գործեցին*[2]*, այլ դիպուածոյ բախտի և ճակատագրի:*

**Լցաւ երկիր նոցա երիվարօք, և ո՛չ էր**[3] **թիւ կառաց նոցա: Լցաւ երկիր նոցա ոսկով և արծաթով, և ո՛չ էր**[4] **թիւ գանձուց նոցա** *(Բ 7):*

*Եւ այս պատուիրեաց Աստուած Մովսէսի, թէ՝ «ի մտանելն յերկիրն պարգեւեաց քոց*[5]*» (տե՛ս ելք ԺԲ 25, Թիւք ԺԵ 2, 18, Բ Օր. Իէ 3), և իշխան լիցի ձեր, զոր Աստուած կամեսցի: Եւ նա ո՛չ յաճախեսցի իւր ձիս և թողցի և ո՛չ սատանայ, զի մի դարձուսցէ զժողովուրդն յԵգիպտոս, զի թէ ձի լինի, փութով դառնան յաշխարհս: Եւ արծաթ և ոսկի մի՛ յաճախեսցէ և ժողովեսցէ, զի այս երկուքս շուտով մոլորեցուցանեն և կորուսանեն զիշխանսն*[6]*՝ հպարտութիւնն և արծաթսիրութիւնն: Զի որպէս այն, որ հեծեալ է ի ձին, հպարտանայ ի վերայ հետիոտացն*[7]*, նոյնպէս հպարտ[անայ] մարդն ի վերայ մարդոյն: Աստուած զմարդն իւր պատկերն [արար] և փչեաց ի նա, զի շունչն Աստուծոյ էր յԱստուած, և էր յԱդամ, և էր*[8] *յԱդամ և էր յԱստուած:*

**Լցաւ գարշելեօք երկիր նոցա** *(Բ 8):*

*Գարշելի կուռքն է, զի որպէս բազմադիմի և զանազան էր նոցա պաշտամանցն օրինակ, նոյնպէս և կերպարանեալքն*

---

1 B գԷրէիճ *փխ* գեր՝ էիճ
2 A գործիցիճ
3 B գոյր *փխ* էր
4 B գոյր *փխ* էր
5 A քո
6 A զիշխանճ
7 AB հետիճոտացճ
8 A յէր

*կուռք: Զի Երեմիայ մարգարէին ասէ Աստուած. «Ըստ թիւ քաղաքաց քոց էին աստուածք քո, Յուդայ» (Երեմ. Բ 28): Զի որպէս քաղաքն բազումք էին, նոյնպէս և աստուածքն բազումք էին, որ պաշտէին*[1]*: Զի ամէն*[2] *քաղաքի ո[ւ]րիշ ո[ւ]րիշ չաստուածք կայր, որ կռապաշտ էին. Տիրոսօն էր, Տիրոս՝ ազգի անուն է: Զոր օրինակ ճար*[3] *տար բժիշկ մե՛րթ ի սրտէ, մե՛րթ հատանէ, մե՛րթ դառն դեղօք վարի առ ի հնարել զառողջութիւն: Սոյնպէս մարդասէրն Աստուած պէսպէս սպառնալեօք պնդեալ զմեղկութիւն հնարի, մերթ հնարիւք և երբեմն՝ սովով և այլն: Եւ վասն մեղաց յաւէտ լինին ախտք հիւանդութեան, որպէս դողդոջումն կայենի, զի ո՛չ բարիոք վարեցաւ զօրութեամբն, այսինքն՝ յառաջն զօրեղ էր և ուժով ելանէր և մտանէր և գործ առնէր, և ուր կամէր գնայր: Եւ յորժամ զուժն և զկարողութիւնն, զոր ունէր, ի բարին ի գործ ո՛չ էած, այլ ի չարն ի գործ էած*[4]*, յորոյ և ի վերայ սպան զեղբայրն իւր զՀաբէլ: Եւ յորժամ եհարց Աստուած զ Կայէն վասն Աբելի, թէ՝ «Ո՞ւր է Հաբէլ եղբայր քո» (Ծննդ. Դ 9), կոպիտ և անհամ ետուր զպատասխանին՝ ասելով. «Մի՞թէ պահապան իցեմ եղբօրն իմոյ» (Ծննդ. Դ 9), «զոր*[5] *հարցանես զիս, կամ զիս պահապան կարգեցեր նմա»: Յայնժամ անէծ զնա Աստուած և եւթն ազգ պատիժ պատուհասի*[6] *եբեր ի վերայ նորա: Մին պատուհասն եղջիւրն էր, որ ի ճակատն բուսաւ, որ ընդ որ գնայր գոչէր եղջիւրն բարձր ձայնիւ, թէ գայ կայէն եղբայրասպանն*[7]*, որ մարդիք լսէին և ճանաչէին, որ Կայէն էր և սպանանէին զնա, զի հրաման էր եղեալ Աստուած, որ մինչ ի կատարած աշխարհի այնպէս կենդանի պարտ էր*[8] *մնայր: Եւ որտեղ որ լինէր, թէ մօտ ի մարդ, և այնպէս տեղ*

---

1 A որ պաշտէիճ բազումք *փխ* բազումք էիճ որ պաշտէիճ
2 A ամեճայճ
3 B *չիք* ճար
4 B *չիք* այլ ի չարճ ի գործ էած
5 A որ
6 B պատուճաս
7 A եղբայրսպանճ
8 B պիտիր *փխ* պարտ էր

*լինէը, որ մարդ այլ չլինէը, պիտէը դուչէը եղջիւրն, թէ՝ «Գայ Կայէն եղբայրասպանն»: Տեսե՛ր որով վասն մեղացն հիւանդութիւն լինի մարմնոյն: Եւ այն անդամալոյծն*[1]*, որ յաւազանին Բեթհեղդայ*[2] *անկեալ կայր ամս Լ (30) և Ը (8), յորում*[3] *ասաց Քրիստոս. «Ահաւասիկ ողջացար, մի՛ ևս*[4] *մեղանչեր» (Յովհ. Ե 14): Տե՛ս, որ մեղքն էր եղեր պատճառ, որ անդամալուծ էր եղեալ: Զպատմութիւն դորա և Պօղոս առաքեալն ասէ յիւր թուղթն. «Վասն այնորիկ իսկ են ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք» (Ա Կորն. ԺԱ 30)՝ առ այնոսիկ, որ անարժան ի սուրբ խորհրդոյն ճաշակէին: Զի բազում անգամ յանարժան հաղորդութենէն հիւանդութիւն պատահի մարմնոյն: Եւ է ուրեք, որ մեռանին*[5] *ևս, թէ՛ ի քահանայից դասուն է, որ անարժան պատարագեն և անարժանութեամբ ճաշակեն զմարմին և զարիւնն Քրիստոսի, և թէ՛ յաշխարհականաց, որ անարժանութեամբ հաղորդին՝ պատահի այս նոցա: Է՛ ուրեք, զի և պսակաց ևս բարուրք, այսինքն՝ պատճառ լինի հիւանդութիւն, որպէս Ղազարոյն*[6] *և Յոբայն: Զի աղքատ Ղազարն, որ ի դուռն մեծատանն հիւանդ կայր անկեալ*[7]*, և Յոբ, որ զհիւանդութիւն և զցաւ մարմնոյն կրեաց: Սոքա արդարք էին, և սոցա հիւանդութիւն վասն մեղաց ո՛չ էր: Այլ փոխանակ հիւանդութեանն, որ կրեցին, պսակաց արժանացան և փառաց, և փառքն և պսակն առաւելեաց: Զի աղքատ Ղազարն մեռաւ և գնաց ի գոգն Աբրահամու, և Յոբ վերստին ի ցաւոցն առողջացաւ և զմարմնաւորը ինչքն և զթագաւորութիւնն կրկին ընկալաւ յաստի ի կեանս, և յետ մահու յայն կեանքն զերկնից արքայութիւն ընկալաւ: Եւ վասն մեղաց Ոզիայ թագաւորն բորոտացաւ, զի թէպէտ բարեպաշտ թա-*

---

1 B անդամալուծն
2 B Բեդհեսդայ
3 B որում
4 A *չիք* ևս
5 B որ մեռանի ուրէք *փխ* ուրեք որ մեռանին
6 A ղազարուն
7 B *չիք* անկեալ

*պաւոր էր, սակայն յանդգնեցաւ և եմուտ ի տաճարն խունկ արկանել: Զի երկոյտասան ցեղից Իսրայէլի քահանայութիւնն միայն Ղեւտական ցեղից էր, որ նոքա*[1] *սպասաւորէին տաճարին: Ի նոցա մէջն միայն Մովսէս և Ահարոն մտանէին ի սրբութիւն սրբութեանցն, և զայն միանգամ ի տարւոջն*[2]*, և զայն ո՛չ առանց արեան, այլ զուարակ մի զենուին*[3] *պատարագ և ապա մտանէին: Իսկ նա ի Ղեւտական ցեղէն ո՛չ էր և քահանայութեան իշխանութիւն ո՛չ ունէր, և յանդգնեցաւ և եմուտ և խնկարկեաց: Բարկացաւ Աստուած և արկ ի վերայ նորա բորոտութիւն: Եւ ել ի տաճարէն բորոտ, և տարեալ արկին ի տուն մի: Որչափ*[4] *եկեաց կենդանի՝ բորոտ ապրեցաւ և մինչ որ մեռաւ: Տե՛ս, որ մեղքն ի հիւանդութիւն արկանէ զմարմինն: Եւ զօսանալ ձեռացն Րոբովամայ մեղքն եղև պատճառ: Եւ թէ այս որպիսի է: Երկոյտասան ցեղից որդոցն Իսրայէլի թագաւոր Սողոմոն որքան որ յերկիւղն և ի պատուիրանն Աստուծոյ էր, և յորժամ խորացաւ սիրտն*[5] *յԱստուծոյ և զպատուիրանն Աստուծոյ անցաւ, և յայլ ազգեացն*[6] *առ իւր կանայս, և կանայք զարճուցին յինքեանս, և կուռս*[7] *կանգնեաց նոցա և զերուսաղէմ կռօք եւից, յայնժամ բարկացաւ Աստուած և զարճոյց զօգնութիւն իւր ի նմանէ և էառ զթագաւորութիւնն, և Բժ (12)-ն ազգն, որ մի թագաւորութիւն էր, յերկուս բաժանեցաւ: Զի զտասն ազգի թագաւորութիւնն Րոբովամայ*[8] *եառ որդոյն Նաբատայ, որ ախտաջիր*[9] *էր Սողոմոնի որդոյն Նաբատայ և նստաւ ի Սամարիայ: Ասաց Աստուած. «Երբ դու զիմ պատուիրանն չպահեցիր, տամ զթագաւորութիւն որդոյն Նաբատայ, որ նա զիմ պատուի-*

---

1 B նորա
2 A տարոջն, B տարուոջն
3 A զինուին
4 A որքան *փխ* որչափ
5 B *չիք* սիրտն
6 B ազգացն
7 A կուռք
8 B Րոբովոմայ
9 ԱB ախթաջիր (*այսուհետև չենք ծանոթագրում*)

*բանն պահէ և ինձ հնազանդ կենայ» (հմմտ. Գ Թագ. ԺԱ 11): Եւ զերկու*[1] *ազգի*[2] *թագաւորութիւնն՝ զՅուդայեան ցեղին և զԲենիամենին, Սողոմոնի որդոյն ետ Ռոբովամայ, և Երուսաղէմ կացին. «Վասն Դաւթի սիրելոյն ետու քեզ» (հմմտ. Գ Թագ. ԺԱ 13): Իսկ յորժամ ժամանակ մի անցաւ ի վերայ այնր*[3]*, որ ախտաջին էր Սողոմոնի, Ռոբովամ որդին Նաբաատայ, որ զտասն ցեղի թագաւորութիւն նորա ետուր Աստուած, նա այլ անկաւ ի կռապաշտութիւն և կուռք կանգնեցոյց*[4]՝ *զոսկիներինջք*[5] *ի Սամարիայ, և ձգեաց զտասն ազգն ի կռապաշտութիւն: Յայնժամ առաքեաց Աստուած զմարգարէն նա մօտ յՌոբովամ*[6] *ի Սամարիայ, և ասաց. «Գնա՛ մօտ*[7] *ի Սամարիայ թագաւորն և ասայ. Դու Սողոմոնի ախտաջիր էիր և Աստուած ետուր քեզ զթագաւորութիւնդ, որ դու զնորա պատուիրանն պահէիր և զնա հաւատայիր Աստուած, և նորա երկիր պագանէիր և ի նմանէ գոհանայիր և ժողովրդեանն այնպէս պատուիրէիր, այլ*[8] *դու վոխանակ երախտեացն Աստուծոյ կռոցն երկիր պագես, և զժողովուրդն ի կռապաշտութիւն ձգեցիր: Ասէ Աստուած. կենդանի է Տէր, և կենդանի է անձն իմ, որ ո՛չ թողում յայսմ գիշերի մին մարդ, որ վաղիւն ընդ առաւօտն ընդ որմովն միզիցէ, այլ զամենայն առ հասարակ սատակեմ յայսմ գիշերի: Եւ բերեմ զբաբելացոց հեծելն, որ գան և զձեզ աւերեն և սպանանեն և զոսկերքն մեռելոց հանեն և այրեն, և զփոշին հողմոցն տան: Եւ այս քեզ նշան, որ երկիր պատառի և կուռքն յանդունդս իջանէ*[9]*» (տե՛ս Գ Թագ. ԺԴ 7-11): Եւ պատուիրեաց Աստուած մարգարէին. «Գնա՛ և այսպէս ասայ, և հետ թագաւորին մի խօսիր,*

---

1 B երկու
2 B ցեղի *փխ* ազգի
3 B այն
4 B կանգնեաց
5 B զոսկիեղինջն
6 A յՌոբովամայ
7 B մօտ մօտ
8 AB նա *փխ* այլ
9 B ի յանդունդս իջանէ

*ղի ո՛չ է արժան, այլ ընդդէմ[1] սեղանոյն կարկառեալ զձեռդ ի դէմս թագաւորին առ սեղանն խօսիր և ասա՛ զայս: Յայն քաղաքն ի մարդոյ[2] տուն մի՛ մտաներ, և հաց մի՛ ուտեր և ջուր մի՛ ըմպէր, թէ չէ զքեզ այլ սպանանեմ և դու այլ մեռանիս: Եւ այն ճանապարհաւն, որ գնաս, այլ[3] յայն[4] ճանապարհաւն մի՛ դառնար, այլ ո[ւ]րիշ ճանապարհաւն եկ» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 8-9): Եւ գնաց այրն Աստուծոյ և այնպէս ասաց, զոր ինչ պատուիրեաց նմա Աստուած: Եթող թագաւորն և ընդ սեղանն, որ կուռքն էր կանգնեալ, ձգեաց զձեռն և խօսեցաւ՝ ասելով. «Սեղա՛ն, սեղա՛ն. այսպէս ասէ Աստուածն Աբրահամու և Սահակայ և Յակոբայ, թէ դու մեկ աղքատ և մուրացիկ[5] մարդ[6] էիր և ախտաջիր Սողոմոնի, և ես առի զքեզ և մեծացուցի և քեզ թագաւորութիւն տուի» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 2-3), և այլն հետ կարգին: Եւ երկիր պատառեցաւ, և գնաց սեղանն և կուռքն ի վայր: Յայնժամ թագաւորն յառաջ եկն և եհար ձեռօքն զայրն Աստուծոյ, և բորոտեցաւ, գօսացաւ ձեռն, և աղաչեաց զայրն Աստուծոյ, և ողջացոյց[7] զձեռն թագաւորին: Տե՛ս, որքան չէր մերձեցեր ի մարգարէն՝ ձեռն առողջ էր, և յորժամ եհար՝ չորացաւ ձեռն, սակայն նա յիւր չարէն ո՛չ դարձաւ: Եւ ասաց այրն Աստուծոյ զպատուիրանն[8] Աստուծոյ և դարձաւ յետ, որ գնայր յիւր տեղն, ուստի եկեալն էր: Եւ պատահեցաւ ի քաղաքն մարգարէի մի[9], ո՛չ թէ ճիշտ մարգարէ, այլ կռոց մարգարէ[10]: Եւ ասաց այն մարգարէն առ այրն Աստուծոյ, որ ճիշտ մարգարէ էր Աստուծոյ. «Գնամք իմ տունն հաց կեր և հանգչիր մինչ որ հովն անկանի, և*

---

1 B ի դէմ *փխ* ընդդէմ
2 A մարդու
3 A այլ այլ
4 A այն
5 A աղքատս և մուրական
6 A մարդմ
7 A առողջացոյց *փխ* և ողջացոյց
8 A զպատուէրն *փխ* զպատուիրանն
9 A մի որ նա այլ մարգարէ
10 A *չիք* մարգարէ

*ապա գնաս ուր և[1] կամիս» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 15): Ասաց այրն Աստուծոյ. «Աստուած, որ զիս առաքեաց, հրամայեաց ինձ հաց ո՛չ ուտել և ջուր ո՛չ ըմբել, և տան ումեք ո՛չ մտանել յայս քաղաքիս[2], ապա թէ ո՛չ և զիս սպանանէ[3]» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 16): Ասաց միւս մարգարէն. «Յաշխարհականաց և ի հասարակ մարդոյ տուն մի՛ գնալ և[4] կամ հաց ուտել, այլ ես մարգարէ եմ իբրև զքեզ, գնամք յիմ տունն» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 18): Եւ գնաց: Եւ յորժամ[5] հաց կերան, մարգարէացաւ այն մարգարէն, որ ի տուն տարաւ, զմեռանիլն նորա: Եւ տրամեցաւ այրն Աստուծոյ և ասաց. «Ես քեզ ասի և դու ինձ ո՛չ լսեցիր, անչափ ասիր զիս, ի խելաց տարար և բերիր ի տունն, և բարկացաւ Աստուած և զիս սպանանէ» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 21-22): Եւ ելեալ համեռեաց զէշն և գնաց: Եւ պատահեցաւ ի ճանապարհին առիւծ մի և եհար զմարգարէն և եսպան[6], և էշն մնաց ողջ, և այրն Աստուծոյ անկաւ և մեռաւ, և էշն մնաց ի մօտն կանգնած, և առիւծն գնաց յիւր բանն: Եւ եկին մարդիկք[7] և խաբար տուին ի քաղաքն: Լսեց մարգարէն և առաքեաց յիւրոցն մարդ, և եբեր զայրն Աստուծոյ և ասաց. «Այն սուրբ մարգարէ էր, և զոր ինչ ասաց պիտիր ամենայն կատարի, բերէք ի մեր գերեզմանատունն թաղեցէք, և երբ ես մեռանիմ, զիս այլ մօտ ի նա տարէք թաղեցէք, և է յորժամ մի մի մեռանի՝ մօտ ի նա թաղեցէք: Եւ յորժամ ելանէ բարի թագաւոր և զոսկերք[8] կռապաշտից հանէ և այրէ և զփոշին հողմոյն[9] տայ, զնորա ոսկերքն չի պիտիր հանէ[10], և նորա*

---

1 A չիք և
2 A յայս քաղաքիս տան ումէք *փխ* և տան ումեք ոչ մտանել յայս քաղաքիս
3 A սպանցէ
4 A չիք և
5 AB յորժամ երբ
6 A սպան
7 A մարդիք
8 B զոսկերս
9 B զփոշի հողմոյ
10 B հաներ

*սաբաբուվն և պատճառաւն[1] զմեր ոսկերքն այլ չի հանեն» (հմմտ. Գ Թագ. ԺԳ 26, 31): Եւ արարին այնպէս և այնպէս եղև:*

**Այր հզօր և կին զօրաւոր** *(Գ 1):*

*Զօրութիւն՝ զմարմնոյն զօրութիւնն ո՛չ ասէ, այլ զիմանալի զօրութիւնն՝ զմտացն և զհոգւոյն և զսրտին: Զայսոսիկ ասէ բառնալ, զի այսոքիկ ուղի և կատարի առաքինութիւնն՝ մտօքն և սրտովն:*

**Սքանչելին խորհրդականն[2] և զհանճարեղն զունկնդիրն[3]** *(Գ 3):*

*Յոյժ խորոց է, և որոշումն կայ ի մէջ երկոցունցն՝ ընդ Աստուծոյ շնորհ և ընդ մարդ՝ իմաստուն, այսինքն՝ ընդ մարգարէից շնորհքն[4], որ զՀոգին[5] Աստուած յայտնէր նոցա, և ընդ մարդկան՝ իմաստութիւն: Եւ դու նայեաց ընդ Սողոմոն և ընդ Եղիսէ մարգարէն, զի[6] երկուքն զծածուկ իրն ցուցին և յայտնեցին, այլ ո՛չ միապէս էր: Զի այն, որ Սողոմոն էր, մարդկեղեն[7] հանճարովն յայտնեաց զծածուկ և զգաղտնի գործս պոռնկի[8], զի[9] մտախորհ եղև[10] և մտօքն քննեաց, թէ ինչ կերպիւ կարեմ իմանալ և յայտնել, և ապա՝ աշխատանօք կարաց իմանալ (տե՛ս Առակ. Զ 26-35): Եւ միւսն ո՛չ ինչ զմտաւ ածէր, այսինքն՝ Եղիսէ[11] մարգարէն ի միտն ո՛չ էած և ո՛չ խորհեցաւ կամ աշխատեցաւ, այլ Հոգին Սուրբ յայտնեաց նմա առանց աշխատանաց*

---

1 B պատճառով
2 A խորհրդական
3 C *չիք* միմեանց իրաւունս տացուք մեկնիչն ասէ (*Ա 18*)... զհանճարեղն զունկնդիրն (*տե՛ս աստ, էջ 51*)
4 B շնորհք, C շնորհն
5 AC հոգին
6 C ընդ *փխ* զի
7 AC մարդիկ եղեն *փխ* մարդկեղեն
8 AB պոռնկին
9 AB *չիք* զի
10 B մտախորհեցաւ *փխ* մտախոհ եղեւ
11 A Եղեսէ

*զուղղութիւն*[1] *աշակերտին իւր ոչ Գէեզայ, զոր Աստուծոյ շնորհն, զի բացեայ գործեալն յայտնէր նմա*[2] *(տե՛ս Դ Թագ. Ջ 8-44):*

**Եւ կացուցից**[3] **ի վերայ նոցա**[4] **մանկունս**[5] **իշխանս, և խաբեբայք**[6] **տիրեսցեն նոցա** *(Գ 4):*

*Մանկունս՝ ո՛չ զտիսն և զհասակն*[7] *ասէ, որ փոքր*[8] *լինի հասակաւ և տիօք,*[9] *այլ մանկունս*[10] *զանմիտն*[11] *ասէ և զանհանճարն: Զի բազում անգամ գտանին մանկունք իմաստունք և ծերք անմիտք: Եւ վկայ Տիմոթէոս առաքեալն, աշակերտն Պօղոսի առաքելոյն, զի մանուկ էր*[12]*, այսինքն՝ տղայ էր Հասակաւ, և առաջնորդ կարգեաց առաքեալն Պօղոս քաղաքին*[13]*, և քան զծերսն Հասակաւ՝ առաւել ուղղեաց ղեկեղեցին և կարգաւորեաց (տե՛ս Ա Կորն. Դ 17): Եւ Սողոմոն երկոյտասան ամեայ էր, որ թագաւոր եղին, և հետ Աստուծոյ խօսէր (տե՛ս Գ Թագ. Բ 12): Եւ այնքան իմաստուն էր, որ ընդ ամենայն*[14] *երկիր ել համբաւ իմաստութեան նորա՝ յարևելք և յարևմուտք*[15]*, ի հիւսիս և ի հարաւ: Զի ո՛չ արք միայն գային լսել և ուսանիլ*[16] *իմաստութիւն ի նմանէ*[17]*, այլ և կանայք ևս գային ի հեռաստանէ*[18]

---

1 C զգողութիւն *փխ* զուղղութիւն
2 C *այնուհետև շարունակում է Ա 18 գլխահամարը.* «Թէ իցեն մեղքն ձեր իբրև զձանձախարիխ իբրև զձիւն սպիտակ արարից» (Ա 18)... Իսկ նա ի վերայ արքայութեանն և զայս ևս խոստանայ զերկրաւոր բարութիւնս տալ նոցա, սակայն նոքա ոչ դառնան ի մեղաց» (*տեքստում համեմատուած է ըստ AB-ի դիրքի. տե՛ս աստ, էջ 52-54*):
3 C ակացուցից
4 AB *չիք* ի վերայ նոցա
5 B մանուկս
6 C խփեացք *փխ* խաբեբայք
7 C զտիք և զհասարական *փխ* զտիսն և զհասակն
8 C *չիք* փոքր
9 A տիւօք
10 C մանկագոյնս
11 B զանմիտսն
12 AB *չիք* էր
13 C ի քաղաքի
14 B յամենայն *փխ* ընդ ամենայն
15 B յարևմուտ
16 AC ուսանել
17 AC յիմաստո՛թեանէ նորա *փխ* իմաստութիւն ի նմանէ
18 C հեռաստանեայք

*ուսանիլ*[1] *յիմաստուբենէ նորա (տե՛ս Գ Թագ. Ը 15-43): Իսկ ի ծերուբեան ժամանակին յոյժ և առաւել յուլացաւ յառաքինուբենէ: Եւ Հայրն նորա մեծն Դաւիթ ո՛չ ի մանկուբեան, այլ ի կատարեալ Հասակին զանարժանն գործեաց զմեղս: Զի ի մանկուբեան Հասակին կատարեալ արիուբեամբ զայլազգին զԳողիաթ կործանեաց, զգաստուբիւն*[2] *յոլով յանձին ունէր, որում*[3] *ո՛չ եղև խափան մանկուբիւնն (տե՛ս Ա Թագ. ԺԷ 40-54): Եւ Երեմիայ մարգարէն զմանկուբիւնն դնէր պատճառ (տե՛ս Երեմ. Ա 6), սակայն առաքեցաւ առ ժողովուրդն յԱստուծոյ, զի առողջ և կատարեալ էին միտքն. ո՛չ եղև խափան մանկուբիւնն:*

*Եւ դարձեալ*[4]*. տղայ և մանուկ էր Դանիէլ*[5] *երկոտասան ամեայ կամ այլ պակաս, զծերսն յանդիմանէր և դատէր (տե՛ս Դան. ԺԳ 45-64): Այլ և Յովսիայ*[6] *օրհնեալն*[7]*, այսինքն՝ Յովսիայ*[8] *Թագաւորն բարեպաշտ երկոտասան ամեայ և կամ խոնարհ ևս նստեալ յաթոռ Թագաւորուբեան, առաքինի*[9] *էր յոյժ (տե՛ս Դ Թագ. ԻԲ 1-2): Եւ Յովսէի մատաղ Հասակաւ ընդ մոլեկան ցանկուբեան մարմնոյ կռուէր և ընդ շռայլն կնոջ ընդդիմամարտէր*[10]*: Եւ մանկունքն սուրբք ի Պարսկական աշխարհին*[11] *ի մէջ հնոցին բորբոքելոյ անվնաս առաքինուբեամբն պահեցան: Վասն որոյ ո՛չ զտիս*[12] *մանկուբեան խոտէ մարգարէս: Որպէս և Պօղոս զմատաղատուն կն արգելել*[13] *հրամայէ յաստիճանէն ո՛չ զհասակէն, ասէ, այլ զխակն տնկեալ, այն, ինչ յերախայուբենէ*

---

1 A ուսանել
2 AB սգաստութիւն
3 C որ *փխ* որում
4 A Դանիէլ *փխ* դարձեալ
5 AB *չիք* Դանիէլ
6 A Յովսիաս, B Յովսէիաս
7 C յօրհնիլն
8 AB Յովսիասի
9 C առաքին
10 C ընդիմամարտէր
11 B ա (1)-ին *փխ* աշխարհին
12 AB զտի *փխ* ոչ զտիս
13 AC ւարգելուլ

*կնքովն յօժարեալ ի բարձր աստիճան, զի յետ տնկելոյն[1] և զջուրն արբուցանել, ասէ, Պօղոսի[2], զի աճեսցէ[3] Աստուածով: Պօղոս զայն ասէ, որ[4] յորժամ հաւատային ի Քրիստոս և մկրտէին[5], փուքիով, ասէ, յաստիճան եպիսկոպոսութեան չելանել, մինչ որ խրատէին և ուսուցանէին[6] զօրէնքն աւետարանական և վարժէին յառաքինութիւնն, և ապա՝ հրաման տալ, զալ յաստիճան եպիսկոպոսութեան կամ այլ կարգաց: Եւ ո՛չ թէ մատաղատունկն, այլ[7] որ նոր հաւատացեալ[8] և մկրտեալ լինի[9] (տե՛ս Ա. Տիմ. Գ 1-16):*

*Զի և պատճառ իսկ չարեաց լեզուին անհամութիւնն[10] է: Անհամ խօսեցաւ Ադամ, որ ասաց առ Աստուած. «Կինս, զոր ետուր ինձ, սայ խաբեաց զիս» (հմմտ. Ծն. Գ 12-13): Անհամութիւն լեզուի է կայենին, յորժամ եհարց Աստուած. «Ո՞ւր է Աբէլ եղբայր քո» (Ծննդ. Դ 9), նա կոպիտ և անհամ[11] խօսեցաւ. «Մի՞թէ պահապան ես կարդեր զիս եղբօրն իմոյ» (հմմտ. Ծննդ. Դ 9):*

**Այսուհետև կերիցեն զարդիւնս գործոց ձեռաց իւրեանց** *(Գ 10):*

*Զի այնպիսի են չարիքն, անձամբ յանձնէ ունել զպատիժն[12], որպէս աստ ասէ. «ի պտղոց[13] իւրեանց կերիցեն», որպէս բարոյ գործօնեայքն բարի գացեն պտուղս: Իսկ խոտորեալքն և որք[14]*

---

1 AB տնկոյն *փխ* տնկելոյն
2 C ապողոսի
3 AB աճեսցի
4 C *չիք* որ
5 A մկրտէ
6 AC ուսանէին
7 AB *չիք* այլ
8 C հաւատացեալս
9 A *չիք* լինի
10 B անհամբերութիւնն *փխ* անհամութիւնն
11 AC անհամ բան
12 A զպատիժս
13 A պտղոյ
14 A որք

*ընդ Աստուծոյ կռուին*[1]. «Կերիցեն պարզիւնս գործոց իւրեանց», *զի հուրն անշէջ և որ ինչ դատապարտութիւն՝ տանջողական քննութիւնք, որք զհետ երթան յԱստուած մեղանչականացն: Վասն որոյ.* «Վա՛յ անօրինին. չարիք[2] ըստ գործոց հասցեն նմա» (Գ 11): *Հանդիպեսցին, տեսանե՛ս, միշտ ի միջի զչարն պատժոցն:*

*Դարձեալ.* «Վա՛յ անօրինին» *Յուդային, զի* «չարիք անցին ընդ նա ըստ գործոց իւրոց»: *Զի փոխանակ, որ մատնեաց զՔրիստոս հրէից, ինքն սատանայի մատնեցաւ, և փոխանակ որ խաչեցին՝ ինքն Յուդայ ի պարանոցէն կախեցաւ*[3]:

**Ժողովուրդ իմ, որ երանենդ ձեզ՝ խաբեն զձեզ** (Գ 12):

*Ո՞վ են, որ երանեն*[4] *և խաբեն զժողովուրդն՝ կա՛մ քահանայքն, կա՛մ սուտ մարգարէքն: Զի յոլով բանք են վարդապետական պատմութեանց, որ զբարուցն զհեզութիւնն յայտնեն զիմաստնոցն, իսկ անհանճարքն առանց քննութեան յափշտակեն և ընդունին զբանսն թիւր և ծուռ վարդապետացն, որ զհեշտութիւն և զհերձուածք բան խօսին, և յոլովք վնասին: Իսկ իմաստուն լսողն զպիտանին, զլաւն և զշահաւէտ բանն և զօգտակարն ընդունի, և զո՛չ օգուտն*[5] *իբրև զխոտեալ դահեկակ վարկցի:* «Եւ զշաւիղս ոտից ձերոց մոլորեցուցանեն» (Գ 12): *Այսինքն՝ զմտաց շաւիղն, որ առ Աստուած է*[6]*, անօրէն վարդապետութեամբն պղտորեն, զի ո՛չ սան թոյլ ուղիղ գնալ՝ կամակորեն, մեղքեն և ծուլացուցանեն*[7]: *Զի փարիսեցիքն*[8] *շուրջ գային զտամբքն հրէից քաղցրաբանութեամբ, և զայն, որ երեմիայիւ բարբառեցաւ, բարբառէին նոցա.* «Երանելիք եմք Իսրա-

---

1 B կռուեն
2 B զի չարիք
3 C *չիք* Այսուհետև կերիցեն զարդիւնս (Գ 10)... Յուդայ ի պարանոցէն կախեցաւ
4 AB կ'երանեն
5 A զոչն օգուտ
6 A ածէ *փխ* է
7 C *չիք* զի յոլով բանք են վարդապետական... մեղք են և ծուլացուցանեն
8 A փարիսեցին

յել, զի հաճոյքն Աստուծոյ ծանօթք մեր են» (Բարուք. Դ 4): Եւ յընծայելն[1] ինչ ըստ կարգի օրինացն՝ ընծաբերութիւնս[2] և տասանորդս[3], և զառաջին պտուղսն քաղցրաբանել և հանդարտ[4] երևիլ[5] շահիցն աղագաւ: Եւ զօրէնս անարգել նոցա պատճառք լինէին, ըստ որում և Տէր մեր բամբասէ զնոսա, որպէս զանտես[6] առնողս զպատուիրանս Աստուծոյ, և զիւրեանցն հաստատել զաւանդութիւնս: Վասն այսորիկ պարտ է մեզ ո՛չ[7] զվայրապարի ուրուք առանց քննութեան զհետ երթալ, այլ փորձիւ ընտրեցելոցն ուսուցչաց, այսինքն՝ փորձել և քննել, թէ այս վարդապետի բանս, որ քարոզէ և ուսուցանէ այն, ճիշտ վարդապետացն գնալ և կատարել, և թէ ո՛չ է նման[8]՝ հաւատալ նոցա բանիցն, և զինչ ասեն՝ ո՛չ գնալ զհետ[9] նոցա և ո՛չ լսել նոցա[10]: Զի հրէիցն առաջնորդք զընչիցն[11] պէտս և զընծայիցն պտուղսն զտասանորդս գոհութեանն[12] այն է, որ ի ճանապարհէ գային[13], նուէրք կու տային, թէ բարով եբեր Աստուած, և զայլսն[14] բերեալ հաւանեցուցանէին զժողովուրդն[15]: Եւ յաղագս[16] այլոց պատուիրանացն ուսուցանելոյ չէր ինչ փոյթ նոցա, որոց և Փրկիչն ասէր. «Տասանորդէք զանանուխ և զսամխթ, և թողէք զծանր[17] օրէնս՝ զիրաւունս և զողորմութիւնս[18] և զհաւատս»

---

1 C ցընծայելն
2 B ընծաբերութիւն
3 A տասանորդ
4 AB հաստատ (B հատարդ) *փխ* հանդարտ
5 B երևիւ
6 C զանտեղ
7 B որ *փխ* ոչ
8 A նման
9 AB <զհետ> ոչ գնալ զհետ
10 C *չիք* վասն այսորիկ պարտ է մեզ... և ոչ լսել նոցա
11 AB զինչիցն
12 C զգոհութեանն գոհութեանն
13 AB ճանապարհ էին (R ճանապարհին) *փխ* ճանապարհէ գային
14 A զայլն, B զայն
15 AC զժողովուրդսն
16 C վասն *փխ* յաղագս
17 AB զծանուցս *փխ* զծանր
18 AC զողորմութիւնս

*(Մտթ. ԻԳ 23), և յանցաւորութեանց ազահութեան: Վասն այն*[1] *ծանրացուցանէին զդատաստանս, զի բերցեն նոցա ինչս: Յաղագս այս ի նոցայն զրկելոցն ասէ Աստուած.* «Ժողովուրդ իմ, հարկահանք ձեր ճռաքաղ առնեն զձեզ և զշաւիղս[2] ոտից ձերոց խռովեցուցանեն» *(Գ 12): Ի գահավիժութիւն տանել*[3] *և ի վիհս*[4]*, վասն զի ճանապարհ ուղիղ տանող առ Հայր Քրիստոս էր, յորմէ հեռացուցանել ջանային: Քանզի գիտէին, եթէ Մովսիսեանն*[5] *նուաստանան օրէնք, շահից ար տաքոյ մնացեն, այսինքն՝ թէ զՄովսէսի օրէնքն*[6] *թողէին*[7] *ի բաց, որ խափանէր, այլ իւրեանցն մարմնաւոր շահ չէր լինէր*[8]*, ամենայն կու խափանէր, զոր ինչ օրինօք եդեալ էր, որ կառնէին: Եւ, որ յաղագս Քրիստոսի բանն էր, աղաւաղել ջանային, այսինքն՝ խափանել, ասելով.* «Ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած բերան ի բերան, և նա առ զօրէնքն և զպատուիրանքն յԱստուծոյ» *(հմմտ. Յովհ. Թ 29): Եւ վասն Քրիստոսի ասէին.* «Զնա ո՛չ գիտեմք ուստէ է[9] *(Յովհ. Թ 29), և թէ նա յԱստուծոյ*[10] *էր.* «Ո՛չ լուծանէր զշաբաթս» *(հմմտ. Յովհ. Ե 18), զոր Աստուած Մովսէսի հրամայեաց պահել: Եւ զայլ ևս դաժանագոյն բանս նախատանաց խօսէին:*

**Հոգով դատաստանի** *(Դ 4):*

«Դատաստանի» *զայն ասէ, որ Քրիստոս իւր գալստեամբն* **Հոգովն Սրբով յաշխարհ արար, որպէս ասէ Քրիստոս.** «Այժմ **դատաստան է աշխարհի»** *(Յովհ. ԺԲ 31): Առաջին գալստեամբն դատաստան արար Քրիստոս ընդ մարդկան և ընդ սատանայ:*

---

1 A *չիք* այն, B զի *փխ* այն
2 AB զընթացս *փխ* զշաւիղս
3 B տանիլ
4 C վեհս
5 A մովսէսեաննն, C մովսէսեան
6 A օրէն
7 AB թողին
8 AB լինիր
9 AB իցէ
10 A Աստուծոյ

*Մարդկան անմեղ էր՝ ազատեաց, և սատանայ մեղանչական[1] էր և պատճառ մեղաց մարդկան՝ դատապարտեաց: Իսկ յերկրորդ գալուստն ո՛չ այսպէս առնէ զդատաստանն, որ զմարդն[2] ազատէ և զսատանայ միայն տանջէ[3], այլ՝ դատաստան է առնելոց: Թէ՛ մարդիկք անմեղ լինին՝ ազատէ, և թէ՛ մեղօք՝ զմեղաւորն տանջէ: Եւ սատանայ զիւր տանջանքն կրելոց է՝ թէ լինի մարդն արդար, թէ՝ մեղաւոր: Զի հրէից մաքրութիւնն[4] պատերազմն եղև, զի յորժամ ի գերութիւն գնային և գերողացն մատնէին, որ չարչարէին զնոսա, թողութիւն մեղացն լինէր: Իսկ մեք Քրիստոսի շնորհօքն մաքրիմք և արդարանամք, զի շնորհքն[5] Քրիստոսի մաքրէ զմեզ ի մեղաց: Զի մեր փրկութիւնն գերազանցեալ է քան զնոցայն[6], զի նոքա ի գերութենէն փրկեցան և մեք՝ ի դժոխոցն, նոքա ի ձեռն թագաւորաց փրկեցան և մեք՝ Աստուծով, զի ի ձեռն՛ Յիսուսի Քրիստոսի փրկեցաք: Եւ նոցա փրկութիւնն մարմնաւոր էր, զի մարմնով փրկեցան և ո՛չ ի մեղաց, և մեք գալստեամբն Որդոյն Միածնի բովանդակ հոգով և[7] մարմնով փրկեցաք[8] ի մեղաց՝ մկրտութեամբ աւազանին, և որդի Աստուծոյ եղաք:*

*Ել Փուայ արքայ Ասորեստանի, և եդ հարկս ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի և իւրն հարկատու արար, և դարձաւ ի տեղիսն իւր*[9] *(տե՛ս Դ Թագ. ԺԵ 19):*

*Դեբովրայ*[10] *կին էր մարգարէ և բնակէր ի լեառն Եփրեմի: Եւ գնային իսրայէլացիքն առ նա և բան հարցանէին, և նա*

---

1 A մեղչական
2 B մարդն
3 B տուանջի
4 A հրէիցն մաքրութիւնն
5 A զշնորհքն
6 B զնոցա
7 A և մտօք եւ
8 AB սրբեցաք *փխ* փրկեցաք
9 C *չիք* Հոգով դատաստանի (Դ 4)... ի տեղիսն իւր (*տե՛ս աստ. էջ 71*)
10 C Թեբովրա

*պատմէր նոցա զլինելոցն (տե՛ս Դատ. Դ 4-5): Զի նախ՝ զմարգարէուԹիւնն քահանայիցն ետ Աստուած, որ նոքա մարգարէանային զոր ինչ լինելոց էր: Եւ յորժամ մեղանչեցին և անարժան գտան, էառ Աստուած զմարգարէուԹիւնն ի քահանայիցն և աշխարհականացն ետ, որ աշխարհական մարդիկք[1] կու մարգարէանային: Եւ յորժամ նոքա այլ անարժան գտանէին, առնոյր Աստուած և կանանցն տայր զմարգարէուԹիւնն, որ կանայքն այլ[2] մարգարէանային, որպէս[3] յայնմ ժամանակին Դեբովրայ[4] կին էր և մարգարէ: Եւ յորժամ բարի[5] մարդ երևէր, դարձեալ առնոյր ի կանանցն և արանցն շնորհէր[6]:*

**Քանզի այգի Տեառն զօրուԹեանց՝ տունն Իսրայէլի է** *(Ե 7):*

*ՍովորուԹիւն է մարգարէիցն, որ ի Գիրս Սուրբս[7] փոփոխեն[8] զիրաց անունն, և այլ ուրիշ[9] անուն կոչեն այն իրացն, որ ո՛չ է նման այնոր: Զի այլ է նորա էուԹիւն և գոյուԹիւն, և այլ նորա, որ ո՛չ նմանին միմեանց, զի այլ իրացովն[10] զայլ իրս նշանակեն[11] և ցուցանեն: Ապա ո՛չ՝ յայն[12] իրաւացի է հայել մտօք, այլ զմտացն հետ գնալ և զմիտքն բանին քննել և իմանալ, Թէ վասն ինչ իրաց կոչէ զայս[13] անունս, և ապա զճշմարիտն կարէ իմանալ: Ապա Թէ ո՛չ զոր ինչ անուն որ կոչեն, զնոյն իմանան, Թէ վասն նորա է[14] մարգարէից և գրոց բանքն: Յայնժամ կու[15]*

---

1 A մարդիքն, B մարդիք
2 BC կու *փխ* այլ
3 C որ *փխ* որպէս
4 C Դէբովրա
5 AB իբր ի *փխ* բարի
6 C *Ճոր տողից ունի.* «Այս փոխս ճորա է որ ասէ. «Եւ եթէ ախորժեսջիք և լու...», սորա վերջն զայս կարդայ. ճորա մեկնութեանն կցորդն է. «Թէ հրէայքն այսպէս պատուհա-սէին... թէ լինի մարդն արդար թէ մեղաւոր»:
7 B սուրբ
8 B փոխեն, C կու փոփոխեն
9 B որիշ (*այսուհետև չենք ծանոթագրում*)
10 C ուրիշ բանիւ *փխ* իրացով
11 B իրն շկեն *փխ* իրս նշանակեն
12 B այն
13 AB զայն
14 AB *չիք* է
15 AC *չիք* կու

*մեկուսանան և կու մոլորին ի ճշմարտութենէն, և զճշմարիտն ո՛չ կարեն իմանալ, այլ զծուռն և զթիւրն իմանան, զի վասն նորա ո՛չ է բանն: Զի և*[1] *մարգարէքն այլ ասեն առակաւ*[2] *զբանն և ո՛չ թողուն զմիտք լսողին ի նմին մնալ, այլ մեկնեն զառակաւ*[3] *ասացեալ բանն, որ նոքա, որ տկարամիտ մարդիքն են, չիմանան թէ վասն նորա ասեն: Զի ասաց մարգարէս Եսայի «այգի և ցանկ և գուբ և հնձան» (հմմտ. Ե 1-5) և այլն, և յետոյ մեկնեաց, թէ՝* «Այգի Տեառն զօրութեանց՝ տունն Իսրայէլի է», *այսինքն՝ իսրայէլացիքն: Եւ եղեկիէլ յիւր գիրն ասէ. «Արծիւ մեծ և լայն և երկայնատարած մտանել ի Լիբանան և կոտորել զծայրս մայրեաց» (Եզեկ. ԺԷ 3), և դարձեալ մեկնեաց, թէ զինչ է արծիւն և*[4] *զինչ է Լիբանան և մայրին և կոտորել ծայրից: «Արծիւ» զՆաբուգոդոնոսոր*[5] *ասէ, և «մայրի»՝ զժողովուրդն, և «կոտորելն»՝ որ կոտորեցին և գերեցին: Եւ Եսայի մարգարէն*[6] *դարձեալ ասէ գետ յորդ գալ ի Հրէաստան*[7]*. այն է, որ ասէ.* «Փոխանակ զի ո՛չ կամեցաւ ժողովուրդդ[8] այդ զխաղաղ ջուրն Սելոմայ[9], որ գնայ խաղաղ: Վասն այսորիկ ածցէ[10] Աստուած ի վերայ ձեր զջուրն հզօր և զյորդ[11]» *(Ը 6-7): Եւ զնոյն մեկնէ, թէ «գետ յորդ» բանակ ասորեստանեայցն*[12] *է: Եւ ամենայն ուրեք այսպիսի առակօք վարին գիրք աստուածեղէնք: Եւ Սողոմոն ասէ, թէ*[13]՝ «Եկն սիրոյ և յաւանակ[14] շնորհաց խօսեցի ընդ քեզ, աղբիւր ջուրց եղիցի քեզ առանձին» *(Առակ. Ե 19,*

---

1 AB այլ *փխ* զի և
2 B առակս
3 B զառակս
4 B *չիք* զինչ է արծիւն և
5 AB Նաբոգոդոնոսոր
6 C *չիք* մարգարէն
7 B Հրէաստանէ
8 A ժողովուրդ, B ժո՛ղովուրդն
9 AB Սելովմայ
10 AB ածէ
11 A գորդ
12 AB ասորեստանեաց
13 C *չիք* թէ
14 B յաւանակն

*18): Եւ դառնայ մեկնէ զայս վասն ամուսնութեան և օրինաւոր կնոջ, և կարճէ յօտար անկողնոյն*[1] *և ի պոռնկութենէ:*

**Զի ուր գործիցեն ժ (10) լուծք եզանց, եղիցի անդ սափոր մի, և ուր սերմանիցեն արդուս**[2] **վեց, ժողովեսցեն գրիւս երիս** *(Ե 10):*

Արդուս *առաւել մեծ է, քան զդրիւս*[3]*: Յանդաստանս*[4]*, որ ի զրկանաց է, սերմանեն՝ այսպէս լինի: Զի ո՛չ տունք զբնակիչս ունիցին, զի գերի գնան, և տունն մնայ դատարկ, և ո՛չ անդաստանք զօրութիւն պտղածնութեան*[5]*, զի վասն մեղաց երկրի պտուղն խափանի*[6]*, և երկիրն պտուղ այլ չի բերէ*[7] *յառաջ: Որպէս ի սկզբանն, որ նախաստեղծք*[8] *մեղան և յանցեան*[9] *զպատուիրանաւն Աստուծոյ, արգել*[10] *Աստուած*[11] *զպտուղ երկրի, ասաց.* «Անիծեալ լիցի երկիր ի գործս քո[12]» *(Ծննդ. Գ 17), թէ՝ գործես զերկիր և պտուղ չտայ, և* «Փուշ և տատաշ բուսցի» *(Ծննդ. Գ 18), թէ՝ փոխանակ բարի պտղոյն փուշ բուսուցանէ*[13] *քեզ: Եւ հանցեն, ասացեալ մեկնիչքն, թէ որքան չէր մեղանչեր Ադամ փուշ և տատաշ չկայր յերկրի*[14]*, այլ յորժամ մեղանչեաց, ապա ասացաւ.* «Փուշ և տատաշ բուսցի[15] քեզ» *(Ծննդ. Գ 18): Զի թէ կայր, զիա՞րդ ասէր* «փուշ բուսցի», *զի թէ յառաջն բուսեալ էր՝ ո՛չ ասէր: Եւ կայէն ևս*[16] *յորժամ սպան*[17] *զԱբէլ և մե-*

---

1 A անկողոյն, C անկողնոյ
2 B արդուն
3 A զգրիւն, C զգիւրն
4 C յանդաստան
5 AB պտղածնութիւն
6 B հատանի *փխ* խափանի, C կու խափանի
7 A բերի
8 A նախաստեղծքն, B նախաստեղծն
9 A յանցան, C յանցեն
10 A արգելած, B արգելած և ասաց
11 AB *չիք* Աստուած
12 C *չիք* քո
13 B բուսցի
14 C յերկնի
15 C բուսցէ
16 AB այլ *փխ* ևս
17 B եսպան

*ղանչեաց, Աստուած[1] անէծ ղերկիր և ասաց. «Ձի[2] բազում աշխատիս և սակաւ ժողովես, և պտուղ չտայ քեզ» (հմմտ. Ծննդ. Դ 12):*

*Դարձեալ. վասն մեղաց տանջէ Աստուած ղերկիր, և անպտուղ առնէ և անծնունդ[3], զմարդ և զանասուն, զի ապականացու երկիր վասն մեր եղև: Եւ դարձեալ. անապական վասն մեր է լինելոց ի կատարածի: Երկիրս ապականացու է, զի անասունք մեռանին[4] և գնան, և ծառք և բոյսք անկանին[5] և չորանան, այլ ապականութիւն[6] կրեն ընդ մարդոյս ի մարդկան պատուհասիլն, զի կրակ անկանի[7] և երկիրն այլ կու այրի, և այլն: Որպէս ի Նոյի ժամանակն, որ մեղանչեցին, ապականեցաւ ամենայն երկիր զարդիւք իւրովք՝ շինավայրօք և աշտարակօք, և գեղօրէիւք և քաղաքօք և այլն, յահագին[8] համատարած ծովէն ծածկէին: Եւ յորժամ աճել պարտ էր ազգաց և ծննդոց մարդկան, դարձեալ վայելչանայր երկիր: Եւ իմանամք զայս վասն մարդկան պատուոյ, զի վասն մարդկան պատուոյ ծով ցամաքեցաւ, այսինքն՝ կարմիր ծովն և ժողովուրդն անց[9], արեգակն նահանջեցաւ: Այս ի ժամանակս Յեսուայ որդոյ Նաւեայ եղև ի Գաբաւոն (տե՛ս Յեսու. ժ 12-13): Զի յորժամ իսրայէլացիքն եկին Յորդանանու յեզերն, քահանայքն բարձին զտապանակն և մտան ի գետն: Հրամանաւն Աստուծոյ գետն պատառեցաւ, վերին կողմն գետին դարձաւ դէպ ի յակն գնաց, և ներքին կողմն գնաց ի ծովն լցաւ, և գետի յատակն ցամաքեցաւ: Եւ քահանայքն այնչափ չելան ի գետէն, մինչև ամենայն ժողովուրդն անցան[10] ցամաք ոտիւք զգետն, և ապա քահանայքն ելան և գնացին: Եւ*

---

1 AB *չիք* Աստուած
2 A ի *փխ* զի, C *չիք* զի
3 AB ծնունդ
4 C կու մեռանին
5 C կու անկանին
6 AB ապականացութիւն
7 C կու անկանի
8 C յագահին *փխ* յահագին
9 C *չիք* այսինքն Կարմիր ծովն և ժողովուրդն անց
10 B անցաւ

*ապա դարձաւ ջուր գետոյն յակնէն որոտալով և գնաց հետ իւր ճանապարհին: Եւ յորժամ անցին զՅորդանան, գնացին ի վերայ Երիքովի*[1]*, և զԵրիքով այլ առին աղօթիւք (տե՛ս Յեսու. Դ 5-24): Յայնժամ Գաբաւոն անուն քաղաք կայր մերձակայ, նոքա լսեցին զայս ամենայն սքանչելիս, և դողացին յահէ նոցա և ասացին առ միմեանս, թէ՝ «Նոքա գան զմեր քաղաքս այլ առնուն և զմեզ ամենեսեան ի սուր սուսերի մաշեն» (հմմտ. Յեսու. Թ 3-4): Ելան հնարեցան և եկին մօտ յիսրայէլացիքն, բազում մարդիք ի ճանապարհին զաղեղն ի քարն քսէին, և*[2] *զթրի թափքն, որ մաշէին, և զոտից ամանն կտրատեցին և զոտքերն ի քարն քսէին, և զանձին հալաւն կտրատեցին և պատառատուն հագան, եկին և ասացին, թէ՝ «Մեք ի հեռու աշխարհէ եմք, և զձեր համբաւն*[3] *լսեցաք և եկաք առ ձեզ, որ ձեզ ծառայ լինիմք, և ձեր աստուածոյն և ձեզ հնազանդ, և դուք երդուիք, որ մեզ վնաս չառնէք և զմեզ չսպանանէք*[4]*» (հմմտ. Յեսու. Թ 6-9): Եւ նոքա այլ ո՛չինչ չար ասացին. «Թող մեր ազգիս փայտակիր լինին սոքա և ջրաբեր» (հմմտ. Յեսու. Թ 21), և երդուան, որ*[5] *ո՛չինչ չառնէին նոցա*[6]*: Եւ զայս լսեցին քանանացիքն՝ ե (5) մեծամեծ ազգն, և գնացին ի վերայ գ[աբ]աւոնացոցն, որ կոտորէին, թէ՝ «Դուք զմեզ թողիք և յիսրայէլացիքն*[7] *դարձաք» (տե՛ս. Յեսու. ժ 1-5): Նոքա մարդ ուղարկեցին մօտ յիսրայէլացիքն, թէ մեզ յօգնութիւն հասէք*[8]*, թէ չէ սոքա սպանանեն*[9] *զմեզ: Յայնժամ զայս լսեց Յեսու որդի Նաւեայ և էառ հեծեալ, և գնաց ի վերայ քանանացոցն և պատերազմեցաւ (տե՛ս Յեսու. ժ 6-10): Եւ յայն տեղիքն ետես զառաջին և ասաց.* **«Ի մերո՞ց ես, թէ յօտարաց»**

---

1 B գետն ի տեղի իւր: Եւ յորժամ անցին զԵրիքովի վրայ գնացին *փխ* ջուր գետոյն յակնէն որոտալով... Երիքովի
2 AB *և-ից առաջ բաւականին չգրուած տեղ է թողնուած*
3 A համբաւդ
4 A չսպանանէք
5 A *չիք* որ
6 B նմա *փխ* նոցա
7 B յիսրայէլացին
8 A հասանէք
9 A սպանանեն

*(Յեսու. Ե 13): Եւ նա ասաց.* «Ես զօրավար եմ զօրաց երկնաւորաց և զօրագլուխ նոցա, և եկի օգնել քեզ» *(Յեսու. Ե 14): Եւ յետինք էր, և արեգակն մտանէր և գիշեր լինէր, և թշնամիքն փախչէին, և այլ չէր կարեր կոտորել: Հրամանաւն Աստուծոյ կապեաց*[1] *Յեսու զարեգակն և զլուսինն, որ եկաց մնաց աւուր մի չափ, մինչև զամենայն*[2] *կոտորեաց զթշնամին, և ապա հրաման ետ*[3]*, որ գնացին: Ասաց. «Կացցէ արեգակն հանդէպ Գաբաւոնի և լուսինն ձորոյն Իլոնի, մինչև սատակեցից*[4] *զթշնամիսն» (հմմտ. Յեսու. Ժ 12-13), և եղև իսկ: Այս է, որ ասէ. «Արեգակն նահանջեցաւ և լուսինն պակասեցաւ յընթացից»: Եւ «հուր զՂրոյ գործեցոյց», այսինքն՝ հուրն զՂրոյ բանն արար*[5]*: Այս ի Բաբելոն եղև երից մանկանց, որ Նաբուգոդոնոսոր զպատկեր կանգնեաց, հրաման եհան ամենայն ազգ գալ և երկիր պագանել զպատկերին իւրոյ: Եւ Սեդրագ, Միսաք*[6] *և Աբեդնագով, որ էին Գ (3) մանկունքն իսրայէլացիք ի գերելոցն անտի, նոքա ո՛չ եկին երկիր պագանել պատկերին և ո՛չ լսեցին թագաւորին*[7]*: Յայնժամ ազդեցին թագաւորին, և թագաւորն կոչեաց զնոսա առ ինքն և խօսեցաւ ընդ նոսա և ասաց.* «Երկի՛ր պագէք» *(Դանիէլ. Գ 15): Եւ նոքա ո՛չ լսեցին և ասացին, թէ՝* «Արկանես զմեզ ի հուրն*[8]*, գոյ մեզ Աստուած, որ կարող է ազատել զմեզ ի*[9] *ձեռաց քոց և ի*[10] *հրոյն» (հմմտ. Դանիէլ. Գ 19-51): Յայնժամ ետ կապել զնոսա երկաթի կապանօք, և տարեալ արկին ի հուրն: Եւ էջ Բանն Աստուած առ նոսա, ի մէջ հրոյն կամար կապեցաւ, և ցօղէր անձրև ի վերայ նոցա, և պահեաց զնոսա անվնաս: Այս է, որ ասէ. «Հուր զՂրոյ գործեցոյց»: «Երկիր զծովու»՝ որ երկիր*

---

1 B *չիք* կապեաց
2 A մինչ որ *փխ* մինչև զսմենայն
3 A ետուր
4 A վաճեալ սատակեցից
5 A բանճար *փխ* բանն արար
6 B միսակ
7 B ի թագաւորին
8 B հուր
9 B *չիք* ի
10 B *չիք* ի

*պատառեցաւ և Կորխ և Դադան ի վայր ընկղմեցան (տե՛ս Թուք ԻՋ 9-10), «ծով զերկիր»՝ որ բազում մարդիք ի վերայ ծովու գնացին, որպէս Պետրոս և այլք: Եւ այս ամենայն փոփոխումս լինի վասն մարդկան օգտի, որ մարդիք տեսանեն և ի մեղաց դառնան, և ի զատ զատ*[1] *կենան ի մեղաց և զբարին գործեն*[2]*: Զի մարդս պատուական է քան զամենայն, և ամենայն վասն մարդոյս եղև, զինչ որ կայ յաշխարհի: Եւ մեղան ժողովուրդքն հրէից, արգելոյր Աստուած զծնունդս երկրին, զի թէպէտ բազումս ջանային և աշխատէին ի գործել զերկիր*[3]*, սակայն ո՛չ բանայր Աստուած զարգանդ երկրին: Զի իմանայցեն, թէ*[4] *զպտուղն, որ*[5] *տայ*[6] *երկիր, ո՛չ վասն մարդկան աշխատանացն է և ո՛չ վասն լծոյ եզանցն է, որ վարեն*[7] *և հերկեն զերկիր, և ո՛չ երկրին զօրութիւնն է, որ բուսուցանէ*[8]*, և կամ այլ իրաց այսպիսեաց, այլ՝ ամենեցուն Տեառն առատաձեռնութեան: Յորժամ կամի՝ զեղու առատապէս, և*[9] *յորժամ ո՛չ կամի՝ արգելու, որ բնաւ ո՛չ բուսուցանէ երկիր:* «Եւ մի՛ յատցի[10] և մի՛ բրեսցի, և բուսցի ի[11] նմա փուշ իբրև[12] ի խոպանի[13]» *(ե 6): Զոր օրինակ՝ այգեգործքն բրեն, կակղեն և հատանեն*[14]*, նոյնպէս և ոգոյն դարմանիչքն սպառնան, երկեցուցանեն, ուսուցանեն, մխիթարեն:*

---

1 B *չիք* զատ
2 C *չիք* Այս ի ժամանակս Ցեսուա որդոյ Նաւեա եղև ի Գաբաւոն... զբարին գործեն (*տե՛ս աստ, էջ 76*)
3 AC և գործելովն իւրեանց զերկիր *փխ* ի գործել զերկիր
4 A և թէ, B եթէ
5 AB *չիք* որ
6 C կու տայ
7 C կու վարեն
8 B բուսցնէ, C կու բուսուցանէ
9 AB *չիք* յորժամ կամի զեղու առատապէս և
10 C ատցի
11 AB *չիք* ի ՛
12 C որպէս *փխ* իբրև
13 B զխոպանի *փխ* ի խոպանի
14 C յատանեն

*Ցքի*[1] *այն է, զոր յամբրաւէ*[2] *առնէին և ըմպէին, զի քան*[3] *զգինին սա առաւել թմրեցուցիչ և արբեցուցիչ է: Զի որքան*[4] *գինի*[5] *լինէր ըմպէին, և յորժամ գինի չի լինէր, զայս առնէին և ըմպէին*[6]*: «Եւ ի գործս Տեառն ո՛չ հայիին» (Ե 12): Զի յակն, որ բիծ կայցէ*[7]*, այսինքն՝ որ*[8] *կոյր լինի, տեսանել ինչ մաքրապէս ո՛չ կարէ: Նոյնպէս և մարդոյս միտքն*[9]*, եթէ ի մարմնոյ փափկութիւնս զեղցին, առ Աստուած հայել ո՛չ կարիցեն: Ւանզի ճանաչի Աստուած ի մաքուր մտայ ի զեղեցկութենէ արարածոցս*[10]*, որպէս ասէ Պօղոս. «Երևելի արարածովքս*[11] *աներևոյթքն*[12] *Աստուծոյ իմացեալ տեսանի» (Հմմտ. Հռոմ. Ա 20):*

**Զի լայնեցին դժոխք զանձինս իւրեանց, և բացին զբերանս իւրեանց, զի կլանիցեն զնոսա** *(Ե 14):*

*Զի պիրք աստուածայինք*[13] *յոլով փոփոխեն զանունս իրաց, որ այլ իմն իրաց այլ իմն անուն կոչեն: Զի անձն և բերան և շունչ և որովայն կենդանին ունի և կենդանոյ են այսոքիկ, իսկ սա վասն դժոխոց*[14] *ասէ զայս: Եւ դժոխքն ո՛չ կենդանի է և ո՛չ շունչ ունի, և ո՛չ անձն և ո՛չ բերան, այլ վասն այլ իմն օրինակի ասէ զայս: Զի օրինակ տայ*[15] *դժոխոցն, որպէս որ ահագին գազան լինի, որ զբերանն բանայ և զոր ինչ*[16] *անկանի՝ առնու ի*

---

1 BC զիքի (C այգի) *փխ* ցքի
2 A յամբրաւ, B ամբրաւ, C անբրաւէ
3 AB նորայն *փխ* քան
4 AB քան
5 B զգինի
6 AB *չիք* և յորժամ գինի չի լինէր զայս առնէին և ըմպէին
7 A կայց, B կաց
8 C *չիք* որ
9 AC մարդոյ միտք
10 C արարածս
11 B արարածովս
12 AB աներևոյթն
13 B աստուածայինս
14 A դժոխք
15 C կու տայ
16 B զամենայն ինչ որ *փխ* զոր ինչ

*բերանն և ուտէ*[1] *և ո՛չ յագենայ, այլ անյագաբար ուտէ զամենայն ինչ: Նոյնպէս դժոխքն զամենայն:*

**ԺանտագործՔ**[2] *(Ե 14):*

*Այն մարդն, որ զմեղքն*[3] *գործէ, այն մեղաւոր է, իսկ այն, որ ինքն գործէ և այլոց ևս*[4] *պատճառ լինի, որ ի նմանէ ուսանին և գործեն զմեղքն*[5]*, այնպիսիքն ժանտ կոչին: Զի պոռնիկն*[6] *զպոռնկութիւնն ուսուցանէ, գողն զգողութիւնն իւր ուսուցանէ*[7]*, յիշընցնատուն զյիշունցն*[8] *տալն ուսուցանէ*[9] *և այլն: Այնպիսիքն ժանտ կոչին ի Սուրբ Գրոց:*

**Եւ զուարճացեալքն ի նմա** *(Ե 14):*

*Քանզի որ աստն փափկանան, հոգիք նոցա բնակիչք են դժոխոցն: Ըստ Նուագողին՝ զի ասէ.* «Երթիցէ մինչև յազգ[10] հարց իւրոց, մինչև յաւիտեան լոյս[11] մի՛ տեսցէ» *(Սաղմ. ԽՀ 20): Հարք և ազգ, զնոցին նման, մեղաւորքն ասէ: Զի որպէս սուրբքն վճարեալք ի կենացս յաւելուլ ասեն առ հարս իւրեանց, որպէս Աբրահամու ասաց Աստուած.* «Յաւելցիս առ հարս[12] քո՝ անեալ բարի ծերուԹեամբ» *(Ծննդ. ԺԵ 15): Զի թէպէտ Աբրահամ նախ հաւատաց յԱստուած, և նա էր հայր հաւատոց, քան զնա այլ յառաջ բարի մարդիկք*[13] *են եղեր, որ զնոքա չէ գրած ի Գիրս, զի զամենայն մարդ երբ գրեն.* «Զի բազումք ի սրբոցն կան, զոր[14] *չէ գրած*[1]», *զի զամենայն ե՞րբ կարեն գրել*[2]*: Եւ զԱբրա-*

---

1 C աուտ *փխ* ուտէ
2 ABC ժանդագործք (*այսուհետեւ չենք ծանոթագրում*)
3 B մեղքն
4 AB այլ *փխ* ևս
5 B զմեղս
6 C *չիք* պոռնիկն
7 B *չիք* իւր ուսուցանէ
8 A զյիշոցք
9 C *չիք* յիշընցնատուն զյիշունցն տալն ուսուցանէ, B *չիք* տալն ուսուցանէ
10 A յազգս, B ցյազգս
11 B զլոյս
12 B հարսն
13 AB մարդիք
14 A որ

*չէ գրած*[1]», *զի զամենայն և՛րբ կարեն գրել*[2]: *Եւ զԱբրահամ*[3] *ասէ «յաւելաւ առ Հարս*[4]», *այսինքն՝ մեռաւ և զնաց հոգի նորա խառնեցաւ ընդ առաջին Հարան, որ քան զնա յառաջ էին*[5] *մեռեալք*[6]: *Նոյնպէս և զՀարան չարեաց որպիս կոչէ աստուածայինն բան, զի նոքա յորժամ մեռանին, զնան մօտ յառաջին Հարան, որ քան զնոսա յառաջ էին մեռեալք*[7], *որ նոցա նման*[8] *մեղանչականք էին: Զի մինչ ի Քրիստոսի գալուստն*[9] *ամենեքեան, որ*[10] *մեռանէին՝ թէ՛ արդարք*[11] *և թէ՛ մեղաւորք*[12], *ամենեքեան հոգիքն*[13] *ի դժոխքն երթային*[14]: *Թէպէտ այն Աստուծոյ հովանի էր ի վերայ արդարոցն և պահէր զնոսա առանց*[15] *տանջանաց, սակայն ի մեռանելն ի դժոխքն գնային: Իսկ յետ գալստեանն Քրիստոսի այլ ի*[16] *դժոխքն ո՛չ գնան՝ ո՛չ արդարոց հոգիքն և ո՛չ մեղաւորացն, այլ տեղիքն, որ գնան, ուրիշ է և զանազան: Զի բուն արդարքն ի վեր ելանեն յերկինքն, և են շուրջ զաթոռովն Աստուծոյ, և միջակ հոգիքն ի հոգոց կայանքն*[17] *գնան՝ ընդ այլ հոգոցն, և մեղաւորաց հոգիքն յոդն մնան՝ ի խաւարային տեղիքն*[18]: *Զի մեղանչելն մեր տրամաբիւն է Աստուծոյ, պարտ է արտասուել և ապաշխարութեամբ հաշտեցուցանել, և ո՛չ արհամարհելով բարկացուցանել, զի*

---

1 C *չիք* զի զամենայն մարդ երբ գրեն զի բազումք ի սրբոցն կան որ չէ գրած
2 AB գրեր
3 C Աբրահամ
4 A արս *փխ* առ հարս
5 B էր
6 B մեռած
7 AB *չիք* մեռեալք
8 C *չիք* նման
9 A գալստեան ժամանակն *փխ* գալուստն
10 B որք
11 B աղքատ և թէ հարուստ թէ արդար
12 B մեղաւոր
13 B ամենեքեան *փխ* ամենցուն հոգիքն
14 A գնայր *փխ* երթային
15 B ի *փխ* առանց
16 B *չիք* ի
17 B կայեանքն
18 C *չիք* զի մինչ ի Քրիստոսի գալըստեան... ի խաւարային տեղիքն

*բազում ողորմ է, վասն արտասուաց առաւել[1] փոխի ի քաղցրութիւն:*

**Ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ բարկու-թիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ[2] է** *(թ 12):*
*Կրկին է ձեռաց արկանելն զայժմուս և զհանդերձեալ դատաստանն ևս ցուցանէ, որ տանջելոց է զնոսա և զամենայն մեղաւորս[3]: Ո՛չ թէ այսչափ[4] էր նոցա տանջանքն, այսինքն՝ հրէից, զոր կրեցին սովու և սրով և մահուամբ, այլ և ի ձեռս չար թագաւորացն Թակլաթփաղսարայ և Սաղմանասարայ և Նաբուգոդոնոսորայ և այլոցն, որ գերի վարէին զնոսա: Դարձեալ յետոյ Տիտոսիւ և Վասպիանոսիւ[5] գերի վարեցան. դարձեալ տակաւին ձեռն Աստուծոյ բարձրացեալ[6] է տանջել զնոսա ի դատաստանին: Կայէն եսպան զեղբայրն[7] իւր զԱբէլ, և Աստուած պատուհասեաց և պատժեաց զնա. դարձեալ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է տանջել զնա ի դատաստանին[8]: Ջրհեղեղացիքն[9] յորժամ մեղանչեցին, ջրով ընկեաց զնոսա. դարձեալ տակաւին ձեռն Աստուծոյ բարձրացեալ է տանջել զնոսա ի դատաստանին[10]: Նմանապէս սոդոմայեցիքն յորժամ մեղանչեցին, բարկացաւ Աստուած ի վերայ նոցա և հրով այրեաց զնոսա: Եւ ո՛չ ցածաւ ի բարկութենէն, այլ տակաւին ձեռն Աստուծոյ բարձրացեալ է ի տանջել[11] զնոսա: Ջփարաւոն ի կարմիր ծովուն ընկղմեաց և դեռևս տանջելոց է: Նոյնպէս զհրէայքն[12], որ*

---

1 AB *չիք* առաւել
2 C բարձրացուցեալ
3 ABC մեղաւորք
4 AC այս չափս *փխ* այսչափ
5 A Վասպիանոսիւ, C Վէսպիանոսիւ
6 A բարձրացուցեալ
7 A սպան զեղբայրն
8 AB դատաստան
9 AB ջրհեղացիքն
10 AB *չիք* ի դատաստանին
11 AC որ տանջէ *փխ* ի տանջել
12 B զհրէայսն

*զ-Քրիստոս*[1] *ո՛չ հաւատացին և խաչեցին, հռոմայեցւովքն տանջեաց և ի կատարածի տանջելոց է*[2]*: Նոյնպէս և այլ բազում կայ, թէ իմանաս: Այսոքիւք զմեզ խրատէ*[3] *Աստուած՝ կանխաւ սպառնալով*[4] *զհանդերձեալ պատիժն, զի զարհուրեալք ի մեզ կապեսցուք*[5] *զաստուածային երկիւղն*[6]*՝ ի բաց ընկելով զչարն ընտրեսցուք զբարին: Զի այն խրատն, որ իսրայէլացւոցն*[7] *եառւր Աստուած, և նոքա ո՛չ լսեցին և ի մեղաց ո՛չ դարձան, յեառյ պատուհաս կրեցին յԱստուծոյ, որ մատնեաց ի գերութիւն և այլ ազգի ազգի տանջանօք տանջեաց զնոսա: Մեք այլ թէ ո՛չ դառնամք ի մեղաց և զբարին գործեմք, մեզ այլ տանջանք է խոստացեալ, որ ի*[8] *հանդերձեալն ի դժոխքն տանջէ յանշէջ հուրն: Զի նոցա խրատն մեզ և*[9] *խրատէ, զի նոյն*[10] *մարգարէքն, որ զնոսա խրատեցին, զմեզ այլ խրատեն*[11] *և ուսուցանեն*[12]*, որ*[13] *զերկիւղն ի մեզ բերեմք, զպատասխանն զմտաւ ածեմք և զանճառ բարիսն*[14]*:*

**Եւ եղև յամին, յորում մեռաւ Ոզիայ, տեսի՛ զՏէր նստեալ**[15] *(Ջ 1):*

*Ոզիայ*[16] *աստուածասէր և բարեպաշտ*[17] *թագաւոր էր: Եւ արար առաջի Աստուծոյ ուղղութիւն, և Աստուած*[18] *օգնական*

---

1 B ի Քրիստոս
2 B տանջեացէ *փխ* տանջելոց է
3 B խրատեաց զմեզ *փխ* զմեզ խրատէ
4 B սպառնալեաւք
5 AB կալցուք (B կացցուք) *փխ* կապեսցուք
6 B զերկիւղն Աստուծոյ *փխ* զաստուածային երկիւղն
7 A իսրայէլացւոցն
8 B *չիք* ի
9 AB այլ *փխ* և
10 A զնոյն *փխ* զի նոյն
11 C կու խրատեն
12 C կու ուսուցանեն
13 A *չիք* որ, C և որ
14 AB *չիք* բարիսն *(այնուհետև բաւականին ազատ տեղ թողնուած)*
15 AB *չիք* Եւ եղև յամին... զՏէր նստեալ, C նոսա *փխ* նստեալ
16 C Ոզի
17 A ի բարեպաշտ
18 B *չիք* Աստուած

էր նմա և զօրացոյց զնա: Եւ զսահմանակից[1] ազգն, որ շրջակայքն էին[2] Երուսաղէմի, և բազում անգամ կոտորեաց զնոսա[3] և յաղթեաց: Եւ յայն բանն Հպարտացաւ: Եւ յամբարտաւանութեան բարս եկն և Հպարտացաւ և ժպրհեցաւ մտանել ի տաճարն և խնկարկել[4], և այս ո՛չ էր նմա անկ: Նախ[5]՝ զի ո՛չ էր նմա իշխանութիւն[6], զի ինքն թագաւոր էր[7] և քահանայութեան իշխանութիւն ո՛չ ունէր: Երկրորդ՝ զի քահանայութիւնն Ղևտական ցեղին[8] էր[9], որ պատարագ մատուցանէին և խունկն[10] նոքա արկանէին[11] և այլն: Իսկ նա թագաւորութեամբն պերճացեալ էր և զպաշտօն քահանայապետութեանն[12] յափշտակեալ ջանայր՝ վայելուչ վարկաւ ընդ թագաւորութեանն և զքահանայապետութիւնն[13] ունել: Եւ յանդիմանեաց զՈզիայ Զաքարիայ քահանայապետն և ասաց. «Ձէ՛ քեզ տուեալ Հրամանն յԱստուծոյ զայդ գործդ առնել, զի շատ թագաւորք կային քան[14] զքեզ յառաջ, և զայդ ո՛չ արարին, զոր դու կամիս առնել, մի՛ գործեր[15] զգործդ զայդ, որ չբարկանայ քեզ Աստուած» (տե՛ս Բ Մնաց. ԻԶ 18): Նոյնպէս և այլ քահանայքն ասացին, և նա ո՛չ լուաւ նոցա: Այլ օրէնք էր, որ քահանայքն խրատ տային[16] թագաւորացն ուղիղ կալ ի սահմանն, և այնպէս[17] խրատեցին զնա[18]: Եւ նա ո՛չ լուաւ նոցա, այլ էառ զբուրվառն և էարկ ի

---

1 A զսահմանայկիցն
2 C են
3 AB զնա *փխ* զնոսա
4 B խունգ արկանել *փխ* խնկարկել
5 AB մի *փխ* նախ
6 A իշխան
7 AB *չիք* էր
8 AB ցեղին էր զի օրինօքն Ղևտական ցեղին
9 C է
10 B խունգ, C խունկ
11 AB ծխէին *փխ* արկանէին
12 AB քահանայապետութեան
13 B զքահանայութիւն
14 A նախքան
15 C գործէր
16 C կու տային
17 B այսպէս
18 AC *չիք* զնա

*ներս խուն[կ], և եմուտ ի տաճարն և խնկարկեաց առաջի սեղանոյն: Եւ յանդիմանեաց զնա Աստուած և պատուհասեաց, զի պիսակ*[1] *ծաղիկ*[2] *ել ի ճակատ նորա, և ել ի դուրս, և ամենայն ժողովուրդն տեսին զնա այնպէս: Եւ տարածեցաւ յամենայն մարմինն և ամենայն մարմնովն*[3] *բորոտեցաւ: Եւ գնաց ի տուն իւր, և առանձին տուն շինեաց իւրն, և անդ բնակէր առանձին, և յամօթոյն այլ*[4] *ի մէջ մարդոյ ո՛չ իշխէր*[5] *գալ*[6]*, և անդ բնակեցաւ*[7] *զամենայն աւուրս*[8] *իւր*[9]*՝ մինչ որ մեռաւ: Եւ զի օրէնքն Մովսէսի հրամայէին*[10] *զբորոտն ի բաց հանել ի բանակէն և առանձին և ուրիշ բնակեցուցանել ի մարդկանէ, որ մարդ չմերձենար*[11] *ի բորոտն, և ով որ*[12] *մերձենար*[13]*՝ պիղծ լինէր, որպէս որ*[14] *նա պիղծ էր համարեալ և անմաքուր: Զի թէ ի մարդն մերձենար*[15]*, այն մարդն պիղծ էր, և թէ այն մարդն ի միւս*[16] *մարդն մերձենար*[17]*, այն մարդն այլ պիղծ էր: Նոյնպէս և այլքն*[18] *ամենայն: Եւ թէ յոր տունն որ լինէր, տունն պիղծ էր*[19]*, և թէ ի գիւղ*[20]*՝ գիւղն պիղծ էր*[21]*, և թէ ի քաղաք բնակէր՝ քաղաքն այն*[22] *պիղծ էր*[23]*: Եւ Ոզիայ, որ բորոտեցաւ, ո՛չ ելաւ ի*

---

1 C սպիտակ *փխ* պիսակ
2 AB ծաղկի
3 B *չիք* ամենայն մարմնովն
4 B *չիք* այլ
5 B կարէր *փխ* իշխէր
6 A գայր
7 C եկաց *փխ* բնակեցաւ
8 AC ժամանակս *փխ* աւուրս
9 B *չիք* իւր
10 A հրամանայէին
11 A չի մերձենայր
12 AC ոք որ
13 AC մերձենայր
14 AB *չիք* որ
15 AC մերձենայր
16 B յայլ *փխ* միւս
17 AC մերձենայր
18 C այլն
19 AC պղծէր *փխ* պիղծ էր
20 C գեղ
21 AC պղծէր *փխ* պիղծ էր
22 AB *չիք* այն
23 AC պղծէր *փխ* պիղծ էր

*քաղաքէն, այլ ի քաղաքն եկաց*[1] *յԵրուսաղէմ, և իւրն առանձին տուն ունէր և բնակէր անդ: Եւ յետ բորոտութեան*[2] *պղծէր զԵրուսաղէմ ախտիւ գարշութեան իւրոյ, զի թագաւոր էր, և գնային մարդիկք*[3] *ի մօտն և տեսանէին և մտանէին և ելանէին, և ով որ*[4] *գնայր մօտն*[5]*՝ նա պղծեալ լինէր*[6]*: Եւ այնպէս պղծութեամբ ելից զԵրուսաղէմ, զի ամենեքեան պղծեցան: Եւ արգելաւ մարգարէն Եսայի ի մարգարէանալոյ, և ո՛չ թէ անպատուեաց Աստուած զմարգարէն և կամ անարժան էր արգել զմարգարէութիւն, և այլ ո՛չ յայտնեաց նմա զտեսիլն և զծածուկ խորհուրդն*[7] *իւր: Այլ թէպէտ արգել ի մարգարէանալոյ, այլ զշնորհ մարգարէութեան ո՛չ եբարց ի նմանէ, այլ զշնորհ*[8] *մարգարէութեան ունէր լիով առ*[9] *յինքեան: Այլ պատճառ արգելմանն մարգարէութեան այս էր. զի ժողովուրդն*[10] *և լսողքն անարժանք էին և չէին արժանի, որ լսէին զնորա մարգարէութիւնն, զոր*[11] *նա ասէր, զի մերձեցան*[12] *յանմաքուրն*[13] *(տե՛ս Բ Մնաց. ԻԶ 20), այսինքն՝ յՈզիայ, որ անմաքուր էր*[14] *և պիղծ, ըստ օրինացն բորոտն*[15]*, և նոքա անխտիր մերձենային ի նա: Այլ և Զաքարիայ*[16] *քահանային օգնական ո՛չ եղեն, և ասէին առ Ոզիայ ո՛չ մտանել ի տաճարն և խունկ ո՛չ արկանել*[17] *(հմմտ. Բ Մնաց. ԻԶ 18), և պատուհասեաց Աստուած զնա*[18]*: Մի՝ զի*[19] *ի*

---

1 AC եկեաց
2 A բորոտութեան, B բոլոտութեան
3 AB մարդիք
4 AB ոք որ
5 BC ի մօտն
6 B լինէին
7 B զծածուկն խորհուրդ
8 AC զշնորհիք
9 AB *չիք* առ
10 C զժողովուրդն
11 C որ
12 B մերձեցան
13 C ի յանմաքուրն
14 C է
15 C վասն բորոտութեանն *փխ* բորոտն
16 C զՋաքարիայ
17 A արկել, C խնկարկէլ *փխ* խունկ ոչ արկանել
18 AB զնոսա *փխ* զնա
19 AC որ *փխ* զի

*մարգարէէն*[1] *զմարգարէութիւնն արգել: Երկրորդ*[2]՝ *զի*[3] *շարժ եբեր ի վերայ Երուսաղէմի և Հրէաստանի, զի շարժեցաւ Երուսաղէմ և դղրդեցաւ հրէից գաւառն*[4], *և բազում վնաս եղև նոցա: Իսկ*[5] *յորժամ համարձակեցաւ Ողիայ արկանել խունկ*[6] *և բորոտեցաւ, սուգ էառ մարգարէն Եսայի և քուրձ զգեցաւ, և լայր և ողբայր մինչ որ մեռաւ: Եւ ապա ասաց Աստուած մարգարէին. «Ի բա՛ց հան զքուրձդ» (Ի 2), և զուարթացոյց զմարգարէն, որ եահս տեսիլս*[7]: *Մարգարէքն ո՛չ ի միում ժամու, այլինքն՝ ի*[8] *մի ժամ տեսանէին զտեսիլն, և այլ ո՛չ տեսանէին, և ո՛չ*[9] *յամենայն*[10] *ժամ տեսանէին, այլ ըստ մասին, զի յորժամ յայտնէր Աստուած՝ տեսանէին, և յորժամ ո՛չ էր հաճոյ՝ ո՛չ յայտնէր: Այլ էր ժամանակ, որ յայտնէր, և էր ժամանակ*[11], *որ*[12] *ծածկէր զտեսիլն ի նոցանէ, որ ո՛չ տեսանէին*[13]: *Եւ մարգարէն Եսայի ունէր զլոյսն ընդ ինքեան, այլինքն՝ զշնորհս*[14] *մարգարէութեան: Զի խստայգոյն գառնացոյց Ողիայ զԱստուած, զի զթագաւորութիւն ունէր յԱստուծոյ, կարծեաց թէ քահանայութիւնն անկից է նմա, վասն որոյ յանդգնեցաւ ի սուրբն սրբոց մտանել, որ չէր նմա արժան: Թէ որպէս կու*[15] *համարձակէր զայս*[16] *առնել, կու*[17] *զարմանամ: Երկրորդ՝ միտք չար և խորհրդով ի վեր, քան զարժան իւր խորհեցաւ առնել զայս,*

---

1 AB մարգարէն *փխ* ի մարգարէէն
2 C երկուս
3 C որ *փխ* զի
4 B հրէիցն գաւառ
5 B և *փխ* իսկ
6 AC խունկս, B խունգ
7 AC տեսիլ
8 AB *չիք* ի
9 A յոչ
10 C զամենայն
11 AC *չիք* ժամանակ
12 A *չիք* որ
13 B *չիք* որ ոչ տեսանէին
14 AC զշնորհն
15 AB ոնց *փխ* որպէս կու
16 B զայն
17 AB առնուլ *փխ* առնել կու

*վասն զի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդոյն Աստուծոյ*[1] *էր խոստացեալ, բերանով Դաւթի մարգարէին, թագաւոր լինել և քահանայ. «Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի*[2]*» (Սաղմ. ճԹ 4): Եւ զայս պատիւ յառաջ քան զՔրիստոսի գալուստն Մելքեսեդեկի*[3] *հանդիպեցաւ, որ թագաւոր էր և քահանայ. թագաւոր էր Սաղիմայ և քահանայն էր Աստուծոյ Բարձրելոյն: Եւ այս օրինակ էր Քրիստոսի, որ զթագաւորութիւնն և զքահանայութիւնն Քրիստոսի նշանակէր, որ թագաւոր էր յառաջ քան զմարմնանալն երկնաւորաց և երկրաւորաց, և ի մարդեղութիւնն ևս*[4] *թագաւոր էր: Իսկ յառաջ քան զմարդեղութիւնն Որդոյ քահանայ ո՛չ ասի, այլ յորժամ մարմին*[5] *[է]առ և քահանայ եղև, և թագաւոր էր յառաջ և յետոյ: Իսկ Ոզիայ նախքան զխակապէս*[6] *քահանայն և թագաւորն, որ էր Քրիստոս, յափշտակել և իւր առնել ջանայր*[7] *զթագաւորութիւնն և զքահանայութիւնն*[8]*, զի թագաւոր էր յԱստուծոյ կարգեալ և զքահանայութիւնն այլ ջանայր առնել: Վասն որոյ վառեաց ի ճակատ նորա բորոտութիւն, զի ել ի ճակատն և սփռեցաւ յամենայն մարմինն, զի զթագաւորութիւն ունէր և քահանայութեան ևս ցանկացաւ, և զթագաւորութիւնն ևս կորոյս:*

**Տեսի՛ զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ**[9] *(Զ 1):*

*Եսայի ասէ.* «Տեսի զՏէր», *և աւետարանիչն ասէ.* «ԶԱստուած ո՛չ ոք եռես[10]» *(Յովհ. Ա 18), և Մովսէսի ասաց Աս-*

---

1 AC Միածնին *փխ* Աստուծոյ
2 AB Մելքեսեդեկի
3 C *չիք* և զայս պատիւ... գալուստն Մելքեսեդեկի
4 AB այլ *փխ* ևս
5 A մարմնին
6 A զի իսկական
7 AB *չիք* իւր առնել ջանայր
8 AB *չիք* և զքահանայութիւնն
9 AB *չիք* նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ
10 AC Էռես

*տուած. «Ո՛չ ոք կարէ տեսանել զերեսս իմ և ապրել*[1] *» (Ելք. Լ Գ 20): Սոքա ո՛չ են հակառակ միմեանց, այլ երկուքն*[2] *ճշմարիտ են: Զի Քրիստոս վասն ճշմարիտ բնութեանն տեսանելոյ ասաց. «Զի մերկ զաստուածութիւնն և առանց կերպարանաց ո՛չ ոք կարէ տեսանել» (հմմտ. Իմաստ. ԺԸ 1), զի զէութիւնն Աստուծոյ ո՛չ ոք կարէ տեսանել, բայց Միածինն միայն կարէ տեսանել զէութիւնն և զգոյութիւնն և զմերկաստուածութիւնն: Եւ մարգարէս, որ ասէ*[3] *«տեսի», զոր մարմ*[4] *էր տեսանել զայն՝ եռես և պատմէ, զի ո՛չ զոր ինչ էրն զայն եռես, այսինքն՝ զէութիւնն, զգոյութիւնն*[5] *և զճշմարիտ աստուածութիւնն, այլ զկերպարանն*[6]*, յոր փոխեցաւ՝ եռես, զի ինչ կերպարան որ փոխեցաւ, զայն եռես*[7]*: Զի Աստուած զիջանելով ի խոնարհ ըստ զօրութեան*[8] *տեսանողին, այսինքն՝ յիւր*[9] *աստուածութենէն և յիւր մեծութենէն*[10] *խոնարհի*[11] *և փոքրկանայ և նուաստանայ, և յայլ կերպարան փոխի ի*[12] *նիւթականացս, յոր կերպարան և իցէ, որ*[13] *կարող լինին մարդիկք*[14] *տեսանել զնա: Զի զիսկական էութիւնն Աստուծոյ ո՛չ սա եռես, այսինքն՝ Եսայի մարգարէս, և ո՛չ այլ ոք ի մարգարէիցն կարացին տեսանել, այլ*[15] *զկերպարանն*[16]*, յոր ինչ իրաց կերպարան փոխեցաւ, զայն կարացին տեսանել, զի Եսայի ի վերայ աթոռոյ եռես նստեալ: Եւ Աստուած*

1 AB *չիք* և ապրել
2 A երկունքն
3 B ասէր
4 AB մարդ
5 C և զգոյութիւնն, զէութիւն և զգոյութիւն
6 C զկեր *փխ* զկերպարանն
7 B *չիք* զի յինչ կերպարան որ փոխեցաւ զայն ետես
8 B զօրութիւն
9 B զիւր
10 C կու *փխ* յիւր մեծութենէն
11 AB խոնարհի
12 B *չիք* ի
13 C ապա *փխ* որ
14 AB կարեն մարդիկք կարող լինել *փխ* կարող չլինին մարդիկք
15 AB զայլ
16 A զկերպարան

*անբովանդակելի է, զի ամենայն*[1] *արարածովքս*[2] *լի է, ամենայն ուրեք*[3] *է և ո՛չ ամենայն*[4] *ուրեք է: Ամենայն ուրեք է, զի յամենայն*[5] *տեղիս է Աստուած*[6]*, և ո՛չ ուրեք է, զի ի մին*[7] *տեղի ո՛չ է: Ապա զիա՞րդ ի վերայ աթոռոյ եառնս բովանդակեալ, այլ ըստ մեզ զիջանելով՝ զերևմանն ձև ասէ: Որպէս Ովսէէ*[8] *մարգարէին ասէ Աստուած. «Ես ի տեսիլս յաճախեցից» (Ովսէ. ԺԲ 10), զի մերկ ոք զաստուածութիւնն թէ կարէր տեսանել՝ բազմազան տեսլեանց ո՛չ կարօտանայք*[9]*: Զոր ըստ ժամանակացն*[10] *և պիտոյիցն առաջի դնէր տեսողացն զկերպարանն, այսինքն՝ ի պատժելոյ ժամանակն և ի բարերարելոյն: Այսինքն՝ թէ բարուքեան ժամանակն էր, որ բարի առնէր նոցա, քաղցրութեամբ երևէր, և թէ պատժելոյ և պատուհասելոյ էր*[11]*, բարկութեամբ երևէր ի գազանի կերպարան և կամ այլ իրաց: Զի երբեմն նստեալ երևի, որպէս մարգարէս եառնս. «Նստեալ յաթոռ բարձրութեան*[12]» *(Զ 1), «և սերովբէք*[13] *կային շուրջ պնովաւ» (Զ 2), որ զպատուաստան առնելն ցուցանէր, որ պատաստան էր առնելոց հրէից*[14] *և ամենայն տիեզերաց: Այսինքն՝ հրէից*[15] *պատիժ էր տալոց, և հեթանոսաց՝ յոյս յարուքեան և անմահութեան և հանդիստ և արքայութիւն և պատիւ: Եւ, երբեմն, վառեալ և վարսաւոր և զհինաւուրցն, որպէս Դանիէլ եառնս. «Զհեր գլխոյն սպիտակ վառեալ իբրև գբոց, և հինաւուրցն*[16] *նստեալ յաթոռ»*

---

1 B յամենայն
2 A արարածօքս, B արարածքս
3 BC ուրէք *(այսուհետեւ չենք ծանոթագրում)*
4 AB *չիք* ամենայն
5 A ամենայն
6 C *չիք* Աստուած
7 AB միոյն *փխ* ի մին
8 AB Յովսէէ
9 B կարօտանայք
10 A ժամանացն
11 B *չիք* էր
12 AB *չիք* բարձրութեան, C բարձրաւ
13 A սէրոբէք, B սերօբէք
14 C այսինքն աշխարհի հրէից
15 AC ՚աշխարհի հրէից
16 AB հինաւուրց

*(հմմտ. Դանիէլ. է 9). զՀայր Աստուած եաես և զմիւս անգամ գալուստն և զդատաստանն: Եւ թէպէտ նաեաել եաես յաթոռ զՀայր Աստուած, այլ դատաստանն Որդ[ւ]ոյ[1] է: Ոմանց հրով երևեցաւ, այսինքն՝ Մովսէսի, և կիսոց հողմով, այսինքն՝ Եղիայի, որ եաես ի Քորէբ[2] լերին[3]: Երբեմն ի թիկանց քերովբէից տեսին, և երբեմն ի վերայ քերովբէից բազմեալ տեսին, երբեմն ի հրահալել ի նիւթոց կերպարն, որ ի քուրայէն[4] ելանէ[5]՝ եգեկիելի երևեցաւ: Եւ թէ մարգարէս Եսայի յաթոռ նաեաել եաես, դու մի՛ զարմանար: Զի Դանիէլի այլ այսպէս երևեցաւ աթոռով, այլ Դանիէլ զՀայր Աստուած եաես ի վերայ աթոռոյ և զՈրդի այլ[6] եաես, որ գայր ընդ ամպս երկնից, և զմիւս անգամ գալուստն եաես: Եւ Եսայի զՈրդի եաես, և զերկրորդ գալուստն, և զի զՈրդին[7] եաես՝ վկայէ աւետարանիչն Յոհաննէս ասելով. «Զոր եաես Եսայի և վկայեաց վասն նորա» (հմմտ. Յով. ԺԲ 41):*

**Վեց թեւք մէոյ և վեց թեւք**[8] *(Զ 2):*

*Հրեշտակք*[9] *թեւք ո՛չ ունին, զի թեւքն թռչնոցն է, որ*[10] *թռչին յօդս*[11]*: Եւ նոքա անմարմինք են, և թեւք*[12] *ո՛չ է*[13] *նոցա, այլ թանձր օրինակ տայ*[14] *վասն նոցա, զի իջանելով*[15] *ըստ*[16] *ակատուբեան լսողացն, զի անմարմնոցն*[17] *թանձր օրինակ տայ*[18]*, որ*

---

1 AB և Որդոյ
2 A քորէփ, B քորեբ, C քորեփ
3 C լինին *փխ* լերին
4 AB քուրէն
5 C կու ելանէ
6 B Աստուծոյ *փխ* այլ, C *չիք* այլ
7 C զՈրդի
8 AB *չիք* և վեց թեք
9 AC հրեշտակ
10 B զոր
11 A յօդ
12 A թև
13 B թէ *փխ* թեք ոչ է
14 C կու տայ
15 AC զիջանելով *փխ* զի իջանելով
16 C *չիք* ըստ
17 AB զանմարմնոց *փխ* զի անմարմնոցն
18 C կու տայ

կարեն իմանալ մարդիկք[1] և հասու լինել նոցա անմարմնութեանն: Զի թէ ասելով նոցա զերագութիւնն ցուցանէ[2], որ երագ[3] ընթացք են, և երագեն ի ծառայութիւն և ի պաշտպանութիւն և [ի] փառաբանութիւն Աստուծոյ: Այլ և զվերամբարձութիւնն նոցա նշանակէ, որ միշտ վերամբարձ են[4] և ի բարձունս բնակեն, և վերամբարձեալք են ի ստորայնոցա[5]: Այլ և զանմարմնութիւնն նոցա ցուցանէ, որ անմարմինք են: Եւ դու[6] մի՛ զարմանար[7], թէ թանձր բանիւ[8] ցուցանէ[9] զհրեշտակաց էութիւնն, զի[10] զամենեցուն Աստուծոյ այսպիսի[11] բանիւ ցուցանէ[12] աստուածային դիր: Ապա, դու մի՛ զարմանար վասն հրեշտակաց[13], զի յաղագս Աստուծոյ ասէ. «Շրջի նա ի վերայ թևոց հողմոց» (Սաղմ. ճԳ 3), զի հողմոց[14] թև ո՛չ է, և ո՛չ նա ի վերայ հողմոց[15] միայն շրջի, այլ ընդ ամենայն տեղիս է[16] տէրութիւն նորա: Այլ այսպիսի օրինակօք զտկարաց միտքն ի վեր հանէ և առ Աստուած մերձեցուցանէ, որ կարեն հասու լինել: Եւ առ Աստուած զի՞նչ նշանակէ թև ասելն: Զօգնականութիւնն Աստուծոյ և զզօրութիւնն և զպաշտպանութիւնն և զխնամքն առ մարդկան ազգս ցուցանէ: «Ի հովանի թևոց քոց ծածկեցայց» (Սաղմ. ԺԶ 8): Եւ յայլ[17] բազում տեղիք թև աստցեալ լինի Աստուծոյ, զայս նշանակէ զոր ասացի:

---

1 AB մարդիք
2 C ցուցանի
3 C երեգևոր
4 AB են նոքա
5 C ստորնայնոցս
6 C *չիք* դու
7 A զարմանայր
8 A բանի
9 C կու ցուցանէ
10 C *չիք* զի
11 B այնպիսի
12 C կու ցուցանէ
13 AB հրեշտակի
14 AB *չիք* զի հողմոց
15 B *չիք* թև ոչ է և ոչ նա ի վերայ հողմոց
16 AB *չիք* է
17 AC այլ

**Մի առ մի աղաղակէին** *(Զ 3)*:

*Այսինքն՝ բարձր բարբառով օրհնէին զԱստուած և զՍուրբ Երրորդութիւնն: Իսկ «մի առ մի» ասելն զայն ցուցանէ, որ բարբեքանող բերանօքն փառաւորէին*[1] *փոխանորդութեամբ զԱստուած: Ո՛չ թէ աշխատանք*[2] *է նոցա օրհնելն զԱստուած, այլ այն է նոցա հանգիստ և դիւրութիւն: Այլ աշխատանք մերս է, որ թէ կանոն մի սաղմոս ասեմք՝ աշխատիմք, զի մարմնաւոր եմք, իսկ նոքա*[3] *ո՛չ աշխատին, զի անմարմինք են, և նոցայն*[4] *առանց աշխատանաց է օրհնելն: Մեք կանոն մի սաղմոս ասեմք՝ աշխատիմք*[5]*, թողումք և յետ գնամք, և այլք գան ասեն, և մեք*[6] *հանդչիմք: Իսկ նոքա, որ հրեշտակք*[7] *են, ո՛չ թէ*[8] *վասն այն փոխանորդեն զմիմեանս, զի աշխատին, և միւսն երբէք զօրհնութիւնն*[9]*, և նա հանդչի: Այսպէս ո՛չ է, զի նոցա հանգիստն և դիւրութիւնն այն է, որ միշտ յօրհնութիւն Աստուծոյ լինին և գնա հային*[10]*, այլ փոխանորդութեամբ ասեն զօրհնութիւն Աստուծոյ: Զի մինն երբէք զօրհնութիւն և*[11] *տայ զայն ի միւս*[12] *հրեշտակն, որ նա այլ երբէք զայն օրհնութիւնն: Եւ ինքն օրհնութիւն մի այլ սկսանի*[13]*, և այն հրեշտակն միտ դնէ և լսէ, յայնժամ ինքն առնու ի նորա բերանոյն և ինքն այլ երբէք զայն օրհնութիւնն և տայ Աստուծոյ: Զայս*[14]*, որ յեկեղեցի*[15] *Աստուծոյ կարգած է, որ երկու կանգնին*[16] *յատեան և սաղմոս ասեն տուն առ տուն,*

---

1 AC փառաւորեն
2 C աշխատանօք
3 A և մարմնաւոր *փխ* իսկ նոքա, B *չիք* իսկ նոքա *(տեղ բաց թողնուած)*
4 A նոցան, B նոցա
5 AB կաշխատիմք
6 B մենք
7 AC հրեշտակ
8 AB *չիք* թէ
9 B զօրհնութիւնս
10 C *չիք* և գնա հային
11 AB և նա հանգչի այսպէս ոչ է զի նոցա հանգիստն և
12 B միտս *փխ* միւս
13 A զսկսանի
14 B *չիք* զայս
15 C եկեղեցի
16 C կու կանգնին

*զմին*[1] *տունն մինն*[2] *ասէ և մինն*[3]՝ *միւսն, և երկու դաս պաշտելն: Զայսոքիկ*[4] *ի սերոբէից*[5] *են ուսեալ*[6], *զոր մարգարէս ետես, և յեկեղեցի Աստուծոյ այսպէս*[7] *են կարգեալ՝ ըստ նմանութեան նոցին օրհնելն զԱստուած: Եւ սաղմոսն մէկն ասէ զիւր տունն և վճարէ*[8], *և միւսն ապա սկսանի զիւր տունն և այն միտ դնէ, ապա ընդունելի է Աստուծոյ: Ապա թէ մինն*[9] *ասէ. «Երանեալ է», և միւսն*[10] *շուտով սկսանի այլ*[11] *յօրէնս, և միւսն ո՛չ այսպէս, նմանապէս և զայլն*[12], *այն ընդունելի ո՛չ է Աստուծոյ: Նոյնպէս և զշարականն, որ երկու դաս կու պաշտեն, պարտ է, որ մին սկսանի զշարականն*[13] *և ասէ. «Երգեցուք երգ նոր Աստուծոյ», և ասէ զտունն և ի ճոթ ելանէ*[14], *և միւս դասն միտ դնէ, յորժամ տունն վճարի*[15], *ապա նա*[16] *սկսանի զառաջին տունն՝ «Երգեցուք», և նոքա միտ դնեն, մինչ որ*[17] *վճարի*[18], *և ապա՝ սկսանին զմիւս տունն այսպէս*[19], *նոյնպէս և զայլն*[20]: *Եւ այժմ այսպէս ո՛չ առնեն, այլ յորժամ սկսանի*[21] *մին դասն «Երգեցուք երգ նոր», միւս դասն այլ սկսանի «Երգեցուք»*[22], *և միտ չեն առներ*[23] *միմեանց: Եւ լինի*[24], *որ երկու դասն հետ*

---

1 B մի
2 B մի
3 AC զմիճն
4 B զայսոսիկ
5 B սերոբէից
6 B ուսեր
7 AC այնպէս
8 A վիճարէ
9 A միուսն, B մին
10 AC միննն
11 C յայլ
12 C այլն
13 A զշարականն, B շարականն
14 C գլուխ հանէ *փխ* ճոթ ելանէ
15 A վիճարի
16 C նա զիւր
17 B մինչև *փխ* մինչ որ
18 A վիճարի
19 A *չիք* այսպէս, C *չիք* սկսանի զառաջին տունն «երգեցուք»... այսպէս
20 B *չիք* նոյնպէս և զայլն
21 C սկսան
22 AB *չիք* միւս դասն այլ սկսանի Երգեցուք
23 AC առնեն
24 C կու լինի

*իրաց*[1] *կասեն և միատեղ գնան*[2]*: Կամ լինի*[3]*, որ այն դասն, որ սկսեր է, այն յետ*[4] *մնայ*[5]*, և միւսն յառաջ գնայ*[6]*, այնչափ փոյթ չեն առներ: Եւ այս լինի վասն երկու պատճառի. մին՝ ի տգիտութենէ*[7]*, որ չեն իմանար*[8]*, թէ այնպէս*[9] *պիտի ասեն*[10] *զոր ասացի, երկու՝ ի ծուլութենէ*[11]*, թէ այնպէս ասեն, որ կենան: Զի*[12] *մինն զտունն*[13] *վճարէ*[14] *և ապա միւսն սկսանի, զայն տունն երկարի*[15] *և չեն կարեր համբերեր: Եւ հրեշտակք*[16]*, որ փոխանորդութեամբ տան զօրհնութիւն Աստուծոյ*[17]*, ո՛չ վասն աշխատանաց է, զի մինն աշխատի և միւսն յայնժամ առնու և տայ զօրհնութիւն Աստուծոյ: Այլ վասն կարգաւորութեան զայս այսպէս առնեն, որ երևի, թէ կարգ և սահման*[18] *է ի մէջ նոցա, և կարգ ունին նոքա և ո՛չ թէ խառնափնդոր է օրհնելն նոցա: Զի թէ ի զգալեացս*[19] *մէջս*[20] *կարգ կայ և կարգաւորութեամբ օրհնեն զԱստուած, քան յառաւել*[21] *ի մէջ նոցա: Ապա թէ խառնիխուռն*[22] *էր նոցա օրհնելն, որ մինն երգէր և միւսն երգէր, անյարմար*[23] *էր: Այս առաջին մխիթ, որ ասէ. «Մի առ մի աղաղակէին»: Երկրորդն՝ զայն ցուցանէ, որ ահիւ և երկիւղիւ կան*

---

1 AB հիդրաց (B խիդրաց) *փխ* հետ իցաց
2 C կու գնան
3 C կու լինի
4 B հետ
5 C կու մնայ
6 C կու գնայ
7 A տգիտութեան է
8 A իմանայր
9 B այսպէս
10 C ասել
11 A ծուլութեան
12 AB որ *փխ* զի
13 AB *չիք* զտունն
14 A վիճարէ
15 C կու երկարի
16 C հրեշտակ
17 AC *չիք* Աստուծոյ
18 AB սահմանք
19 AC սգալեաց
20 A ի մէջս, B մէջ
21 ABC ի առնուել
22 C խառն ի խառն
23 AC յանյարմար

*յօրհնութիւնն*[1] *և ի փառաբանութիւնն, որպէս յառաջն ասաց, թէ՝* «Զոտն[2] և զերեսն[3] ծածկէին[4] յերկիւղէն և յամօթոյն» *(հմմտ. Գ 9), յորժամ առ նա հային և օրհնեն: Նոյնպէս և աստ ասէ.* «Մի առ մի», *իբրև*[5] *թէ մինն յետ միոյն անցանեն, որպէս սովոր է առաջի թագաւորաց և մեծամեծաց գնան*[6]*, մինն յետ միոյն անցանէ*[7]*, յորժամ դէմ երեսաց թագաւորին կանգնեն*[8] *յահէ և յամօթոյն: Եւ երեք անգամ* «Սուրբ» *(Զ 3) ասեն. զայն*[9] *ցուցանէ, որ զԵրրորդութիւնն Սուրբ օրհնեն*[10]*, և մի անգամ* «Տէր զօրութեանց[11]» *(Զ 3)՝ զմի աստուածութիւնն, և* «Լի, *ասելն, փառօք զերկիր» (հմմտ. Զ 3)՝ մարգարէութիւն է, որ գալստեամբն եղև*[12]*: Մարգարէիս*[13] *ի տաճարին*[14] *յայտնեցաւ տեսիլն, զի ի մէջ տաճարին ետես զտեսիլն:*

**Եւ զՏէր կամարար տեսի աչօք իմովք**[15] **և մտօք**[16] *(Զ 5):*

*Զտեսիլն, որ ասէ.* «Տեսի՛ զԱստուած», *թէ՛ սա է և թէ՛ այլ մարգարէքն, որ տեսին, ո՛չ թէ զաստուածութիւնն տեսին ճշմարտապէս, այլ որչափ մարթ*[17] *էր և պատշաճ, որ*[18] *կարողութիւն մարդոյն տանել կարէ՝ զայն տեսին, և ո՛չ թէ բովանդակ զԱստուած տեսին: Զոր օրինակ՝ որ մարդ ի ծովեզերն գնայ և հայի ի վերայ ծովուն, զայն չափն կարէ տեսանել զծովն, որչափ*

---

1 B օրհնաբանութիւն
2 AC զոտքն
3 C զերեսսն
4 AC ծածկեն
5 AC իբր
6 C *չիք* գնան
7 C կու անցանէ
8 AC կանգնին
9 C ասելն *փխ* ասեն զայն
10 C կու օրհնեն
11 AB զօրութեանցն
12 AB *չիք* եղև
13 B մարգարէին
14 B տաճարիս
15 AB *չիք* իմովք
16 C *չիք* և մտօք
17 AB մարդ
18 AB պատշաճաւոր *փխ* պատշաճ որ

*աչքն բաւէ, և այլն ի տեղն մնայ, զի ծովն բազում է, և յորժամ մարդ տեսանէ ասէ. «Տեսի զծովն», վասն սակաւիկ տեսանելոյն, որ եռես ասէ, թէ՝ տեսի զծովն: Նոյնպէս և զտեսանելն*[1] *զԱստուած այսպէս իմացիր:*

**Եւ սերոբէն, որ առաքեցաւ առ մարգարէն և եբեր զկայծակն, մերձեցոյց ի շրթունքն, որ սրբեցաւ** *(հմմտ. Ջ 6-7):*

*Պօղոս այլ ասէ վասն սպասաւորութեան հրեշտակացն, թէ՝* «Հոգիք են հարկաւորք, որք առաքին[2] ի պահպանութիւն և ի փրկութիւն մարդկան» *(հմմտ. Երր. Ա 14):* Եւ չափ կայ իւրաքանչիւրոց հրեշտակաց սպասաւորութեան, և սահման փառաց և պատուոյ յԱստուծոյ, որ զամենայն ըստ հաճոյիցն բաժանէ և տայ: Զի զոմանս ի հրեշտակացս[3] առաքէ ի պատուել և ի պահպանել, զոմանս՝ ի տանջել և ի պատուհասել, զոմանս՝ ի պահպանել, զոմանս[4]՝ ի մեղաց սրբել, զոմանս՝ օգնել մարդոյ և այլն: Զի ինչ որ կամի Աստուած՝ առաքէ[5] զնոսա[6], որ առնեն, և առանց հրամանաց գործ ո՛չ առնեն[7]:

Դարձեալ. մի է լուծ[8] նոցա սպասաւորութեան[9] ակնարկութիւն կամացն, իսկ գործն բաժանեալ է, որպէս ասացի, և լուծն միապէս, զի յօրհնութիւնն[10] Աստուծոյ, առհասարակ, միապէս օրհնեն զԱստուած[11], և ակն արկեն կամացն Աստուծոյ: Զինչ, որ Աստուծոյ կամքն է[12], զայն կատարեն, և ի[13] կամացն Աստուծոյ ապստաքոյ՝ բան ո՛չ առնեն:

---

1 B ի տեսանելն
2 B կան *փխ* առաքին
3 B հրեշտակաց
4 B և զոմանս
5 C *չիք* որչափ աչքն բաւէ և այլն ի տեղն մնա զի ծովն բազում է (Ջ 5)... կամի Աստուած առաքէ *(տե՛ս առաւ., էջ 97)*
6 A զնա
7 A առնել
8 B *չիք* լուծ
9 C սպասաւորութիւնն
10 A օրհնութիւնն, B զօրհնութիւն
11 B *չիք* զԱստուած
12 A *չիք* է
13 B *չիք* ի

*Դարձեալ. սպասաւորութիւնն և գծառայութիւնն, զոր առնեն հրամանաւն Աստուծոյ, մարդկան ազգի*[1] *անարժան ո՛չ վարկանին, իբր թէ մարդիկք*[2] *հողեղէնք են և մահկանացու, և ինքեանք հրեղէնք և անմահք, այլ պատիւ և փառս համարին:*

*Յորժամ խոշտանգեաց մարգարէն զանձն իւր և խոնարհական բանիւ խօսեցաւ, և տառապեալ ասաց զինքն և մեղանչական, և պիղծ շրթունս ունել և ի մէջ պղծաշրթին*[3] *ժողովրդեան*[4] *բնակեալ՝ սրբեցաւ ի մեղաց առժամայն: Զի առաքեցաւ սերովբէն բոցեղէն և եբեր*[5] *զկայծակն և մերձեցոյց ի շրթունք*[6] *մարգարէին, և սրբեցաւ:*

*Դարձեալ. սեղանն և կայծակն օրինակ էր նորոյս, զի այն օրինակ էր և նորս ճշմարտութիւն: Զի սեղանն և հուրն, որ կայր ի վերայ, հուրն նշանակէր զմարմինն Քրիստոսի, և սեղանն, որ պատարագի ի վերայ, որ մերձենայ ի բերան ճաշակողացն, արժանաւորապէս*[7] *և սրբէ զմեղս: Ըստ Յոհաննու թէ՝* «Արիւնն[8] *Յիսուսի Քրիստոսի սրբէ զմեզ յամենայն մեղաց*[9]» *(Ա Յովհ.Ա 7):*

*Դարձեալ. առաքէր*[10] *Աստուած զմարգարէն առ ժողովուրդն իսրայէլացոց տանջանք և չարչարանք, սպառնալ և կորուստ: Առաքեաց զսերովբէն, որ սրբեաց և ի բաց եբարձ զերկիւղն, որ չերկնչէր, և մեղաւոր ասէր զինքն և պիղծ շրթունս ունել, և ո՛չ կարել սպասաւոր լինել հրամանացն Աստուծոյ: Որպէս Մովսէս կարել սպասաւոր լինել հրամանացն Աստուծոյ: Որպէս Մովսէս զննբաճայնն և զծանրալեզուն պատճառեաց, և ո՛չ կամէր երթալ*[11] *յԵգիպտոս, յորժամ երևեցաւ Աստուած ի մորենի*[12] *և*

---

1 AB *չիք* ազգի
2 AB մարդիք
3 B պղծաշրթուն
4 A ժողովուրդն
5 AB երբ *փխ* եբեր
6 B շրթունս
7 B արժանապէս
8 C արիւն
9 A մեղացն
10 AC առաքելոց էր *փխ* առաքէր
11 A երթեալ
12 B մորենուջն

*խօսեցաւ ընդ նմա, և կամէր առաքել յԵգիպտոս, որ քարոզէ*[1] *զիւր աստուածութիւնն ժողովրդեանն, և հանէր զնոսա յԵգիպտոսէ՝ հրամանաւն*[2] *Աստուծոյ, և բերէր յԵրուսաղէմ, նա զայսպիսի պատճառեաց՝ զնրբաձայնութիւնն և զլեզուի*[3] *տկարութիւնն (տե՛ս ելք Դ 10): Եւ Երեմիայ*[4] *զխիս մանկութեանն*[5] *պատճառէր, թէ՝ «Մանուկ եմ և խօսել իսկ ո՛չ կարեմ» (հմմտ. Երեմ. Ա 6), մինչ որ ասաց Աստուած. «Ես տայ զբան*[6] *իմաստութեան խօսել քեզ» (հմմտ. Երեմ. Ա 7-8): Նոյնպէս և մարգարէս պիտէր ասէր*[7]*, թէ՝ «Պիղծ շրթունս ունիմ*[8]*, չկարեմ սպասաւոր լինել այդմիկ հրամանացդ*[9]*» (հմմտ. Զ 5): Վասն այն գայր հասանէր սերոբէն և սրբէր*[10] *զմեզս նորա՝ Հօր և Որդոյ և Սրբոյ Հոգւոյն*[11] *զօրութեամբն*[12]*, և զգործս սպասաւորութեան հրեշտակացն*[13] *յառաջն, քան գայս գրած է*[14]*: «Եւ զհուրն ի սեղանոյն առ և սրբեաց» (հմմտ. Զ 6-7): Զայն ցուցանէ, թէ այլ ուսուեք ո՛չ է սրբութիւն, բայց ի նմանէ, այսինքն՝ յԱստուծոյ: «Եւ հրեշտակն ունելեօք*[15] *էառ զհուրն ի սեղանոյն*[16]*» (հմմտ. Զ 6): Մի՝ պոպիայի յանդգնութիւնն ցուցանէ*[17]*, որ եմուտ*[18] *ի տաճարն և ի խորանն, որ հանգիստ էր*[19] *փառացն Աստուծոյ, և եմուտ ի սուրբն սրբոց առանց ահի և երկիւղի*[20]*, և խնկարկեաց սե-*

---

1 B քարոզել
2 A հրաման
3 AB զի լեզուի *փխ* զլեզուի
4 B Երեմիաս
5 AB մանկութեան
6 B բան
7 C կամէր պատճառել *փխ* և մարգարէս պիտէր ասէր
8 AB *չիք* ունիմ
9 B քեզ հրամանացդ *փխ* այդմիկ հրամանաց
10 C *չիք* և սրբէր
11 A հոգոյն, B հոգոյ
12 AB զօրութեամբ
13 B հրեշտակաց
14 C *չիք* և զգործս սպասաւորութեան... գայս գրած է
15 A ունելաւք
16 AB սեղան
17 AB ցուցանէր
18 A է ի մուտ *փխ* եմուտ
19 AB հանգի տէր *փխ* հանգիստ էր
20 B երկի *փխ* երկիւղի

*ղանոյն, զի Աստուած միշտ անդ երևէը և խօսէը, և տապանակն անդ էր և տախտակն*[1] *և այլն: Եւ սերովբէն*[2] *ընդէ՞ր ունելեօք*[3] *առնու զհուրն, զի ինքեանք այլ անմարմին են և հրեղէն, և անմարմինն ո՛չ վնասի ըստ մեզ*[4]*, զիջանելով ասէ զայս: Եւ դարձեալ. թէպէտ և*[5] *անմարմինք են և հրեղէն, սակայն երկնչէին, զի աստուածային էր հուրն այն, կ՛այրէր*[6] *զնոսա: Դարձեալ. կայծակ եառես և հուր: Զի սովորութիւն է աստուածային գրոց զԱստուծոյ*[7] *բնութիւնն հրոյ նմանեցուցանել*[8]*, զի Մովսէսի հրով երևեցաւ ի Սինայ, և*[9] *այլ*[10] *բազում: Զոր օրինակ՝ կայծակն փայլէ բնութեամբ, զի բոլորն լցեալ է հրով՝ ներքոյ և արտաքոյ: Զի կայծն որ կտրեն*[11]*, մէջն այլ հուր է, որպէս արտաքին կողմն: Եւ Քրիստոս թէպէտ իբրև զմեզ մարդ էր, ամենայն լրումն աստուածութեան բնակեցաւ ի նմա, ըստ թափման օրինակի, որ հուրն թափանցան ի ներքոյ և արտաքոյ կայծին, և թէ երկաթին, որ շողանայ, զի աստուածութիւնն ի մարմինն միաւորեցաւ և բոլոր մարմինն Աստուած եղև: Վասն այս պատճառիս, մերձենալով ի*[12] *դագաղ մեռելոյն, զաստուածային զօրութիւնն երևեցոյց, որ յարոյց զորդին այրոյն: Զի թէ սոսկ մարդ էր, զիա՞րդ յարուցանէր զմեռեալն: Այլ վասն այն պատճառին յարեաւ մեռեալն, որ Աստուած էր նա*[13]*: Զի թէպէտ առաքեալքն*[14] *այլ յարուցին զմեռեալն, և մարդիկ էին*[15]*, սակայն նորա անուամբն և զօրութեամբն առնէին, զի ասէին. «Յանուն*

---

1 B *չիք* և տախտակն
2 AB սերոբէն
3 A ունելաւք
4 B մեզի պէս *փխ* ըստ մեզ
5 AC որ *փխ* և
6 C կու այրէր
7 C Աստուծոյ
8 AB նմանեցուցանէ
9 C *չիք* հրով երևեցաւ ի Սինա և
10 AB այլոց
11 C կոտորեն *փխ* կտրեն
12 AB *չիք* ի
13 B *չիք* նա
14 AB որ առաքեալքն
15 A մարդիքին *փխ* մարդիկ էին

*Յիսուսի Քրիստոսի յարի մեռեալն» (տե՛ս Գործ. թ 40): Եւ թէ այլ ոք ևս*[1] *յարուցանեն*[2] *նորա*[3] *անուամբն, և աղաչանօք*[4] *և պաղատանօք խնդրէին*[5] *յԱստուծոյ, և ապա կատարէր նոցա*[6] *կամքն: Իսկ Քրիստոս ինքն մերձեննայր և յարուցանէր, զի Աստուած էր: «Եւ եթուք ի գետինն և կաւ արար, և ծեփեաց զաչս կուրին և տեսութիւն շնորհեաց, որ լոյս ետես ի*[7] *ծնէ կոյրն*[8]*» (համմտ. Յովհ. թ 6): Զի նորա ձեռքն Աստուծոյ ձեռք էր, և նորա մարմինն Աստուծոյ մարմին էր, և նորա թուքն Աստուծոյ թուք էր*[9]*, և ձայնն աստուածայինն*[10] *ձայն էր, և հրամանն աստուածայինն հրաման էր: Զայնեաց Ղազարէ և զչորեքօրեայ մեռեալն յարոյց*[11]*, զբորոտն սրբեաց, զանդամալոյծն*[12] *առողջացոյց, զկապն*[13] *գնացոյց, զդեռատես*[14] *կնոջն մերձեննալով*[15]*՝ զարիւնն*[16] *դադարեցոյց*[17]*, և այլ բազում:*

*Եւ կայծական նմանեցուցանէ*[18] *զէմմանուէլն*[19]*, զի մերձեննալով ի շրթունս մեր՝ բառնայ զանօրէնութիւնս մեր: Եւ այս յայնժամ լինի, յորժամ հաւատամք գնա Աստուած և Որդի Աստուծոյ, զմարմինն որ էառ*[20] *ի կուսէն, որպէս ասէ Պօղոս. «Սրտիւ հաւատալ յարդարութիւն, և բերանով խոստովանել փրկութիւն» (Հռոմ. ժ 10): Եւ ունելիք ի մեզ, որ ըմբռնեմք գնա*

---

1 A այլ *փխ* ևս, B *չիք* ևս
2 AC յարուցին
3 B նորին
4 B *չիք* և աղաչանօք
5 B խնդրեն
6 AB կատարէ զնոցա
7 B չիք ի
8 A կուրն
9 C *չիք* և նորա թուքն Աստուծոյ թուք էր
10 B ձայն Աստուծոյ
11 B յարեաւ
12 B զանդամալուծն
13 AB զկաղն
14 ABC զտեառատես
15 B *չիք* մերձեննալով
16 B արիւնն, C զարիւն
17 B ցամաքացոյց *փխ* դադարեցոյց
18 A նմանեցուցն, B նմանեցոյն
19 A զԷմանուէլն, B զԵմանուէլն
20 C առ

*Հաւատքն և դիտուքիւնն, որ գիտենամք և ճանաչեմք զնա մարմնովն*[1] *Աստուած և հաւատամք ի նա, և զոր Հին և Նոր Կտակարանքն վասն նորա ասեն: Զերկուքն ի*[2] *մի*[3] *յարմարել, և լսել զրոց, և ի նա հաւատալ, և ջերմանամբ*[4] *ի սէրն Աստուծոյ և սիրեմք զնա, և մերձենամք ի նա՝ սրբիմք*[5]*: Եւ թէ ասեն ի բերան մարգարէին զիա՞րդ ո՛չ այրեցաւ. վասն այն ո՛չ այրեցաւ, զի այն հուրն այս զգալի*[6] *հրոյս*[7] *նման ո՛չ է, որ այրէ*[8]*: Զի այս զգալի հուրս*[9] *է, որ կայրէ*[10]*, իսկ այն զգալի հուր ո՛չ էր, որ այրէր, այլ՝ իմանալի*[11] *հուր: Եւ*[12] *դարձեալ. աստուածայինքն ամենայն հրաշագործք են և աքանչելի և ի վեր քան զքննութիւն, և քննութեամբն ո՛չ անկանին*[13]*, զի քննել ո՛չ կարէ մարդ կամ հասու լինել: Դարձեալ. երևելի և զգալի հուրս է երբեմն, զի զազդողութիւնն իւր ո՛չ ցուցանէ և այրէ*[14]*, որպէս զերեք*[15] *մանկունքն ի հուրն արկին, և հուրն*[16] *ո՛չ այրեաց զնոսա հրամանաւն Աստուծոյ: Եւ այլ բազում ի մարտիրոսացն ի հուրն արկանէին, և ո՛չ այրէր,: Թէպէտ զոմանս այրէր, զոմանս ո՛չ այրէր, յորժամ Աստուած կամենար*[17]*: Ապա դու մի՛ ընդ աստուածայինն զարմացիս, հուր թէ սրբեաց և ո՛չ այրեաց զմարգարէն:*

**Զո՞ առաքեցիւ և կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդն** *(Զ 8):*

---

1 C մարմին
2 B *չիք* ի
3 A իմ *փխ* ի մի
4 B ջերմամբ
5 AB սրբեմք
6 AC սգալի *(այստեղ և հետագայում)*
7 B հրոյն
8 B այրէր
9 C հուրն
10 B կու այրէր *փխ* է որ կայրէ. C այրէ
11 C իմանալի լի
12 AB *չիք* եւ
13 C անկանի
14 AB այրէ զմարդ
15 B երեգ
16 B *չիք* արկին և հուրն
17 AC կամեցայր

*Յառաջն առաքեաց Աստուած զմարգարէն*[1] *Եսայի առ նոսա, զի նոցա էր մարգարէ՝ իսրայէլացոցն, և ո՛չ յանդիմանեաց և խրատեաց զՈզիայ չմտանել ի սուրբն սրբոց և խնկարկել: Վասն այն ո՛չ յանդիմանեաց մարգարէս*[2]*, զի Աստուած ո՛չ ասաց մարգարէին, թէ յանդիմանեայ զՈզիայ թագաւորն յորժամ յանդգնեցաւ*[3]*: Զի եկեաց*[4] *մարգարէն և սպասեաց, թէ հրաման տայ Աստուած նմա, որ յանդիմանէ զթագաւորն: Եւ Աստուած ո՛չ ետ հրաման, վասն այն՝ ո՛չ յանդիմանեաց:*

*Դարձեալ. առաքէ զմարգարէս, զի յանդիմանեացէ*[5] *զժողովուրդն, և թէ ո՛չ յանդիմանեացէ՝ մերժեացէ, այսինքն՝ զմարգարէս, զի մօտ յԱստուած ակնառութիւն*[6] *ո՛չ գոյ, զի աներկբայ մերժէր*[7]*, թէ ո՛չ յանդիմաներ, զի Աստուած ակն ո՛չ առնու մարդկան: Զի Մովսէս մարգարէն, որ յանցաւ, յորժամ*[8] *բարկութեամբ եհար զվէմն և ջուրն արգելաւ, առանց պատժոց ո՛չ եթող զնա, զի թոյլ ո՛չ ետ յԵրկիրն*[9] *Աւետեաց*[10] *մտանել և տեսանել, թէպէտ շատ աղաչեաց, որ*[11] *գնայր տեսանէր զտնօրէնութեան*[12] *տեղիքն, որ անդ կատարելոց էր Քրիստոս: Մովսէս այլ ետես զԱստուած, որպէս մարգարէս ետես, սակայն ո՛չ այսպէս ետես, որպէս Եսայի մարգարէս ետես*[13]*: Զի նորա տեսանելն սորա նման ո՛չ էր, զի այլ կերպիւ նա*[14] *ետես, և այլ կերպիւ*[15] *սա*[16]*: Զի Եսայի «ի վերայ աթոռոյ ետես նստեալ, և*

---

1 AB զմարգարէս
2 B *չիք* մարգարէս
3 B յանդիմանեցաւ և յանդգնեցաւ
4 BC եկաց
5 AB յանդիմանէ
6 C ակնառուկութիւն
7 C կու մերժէր
8 AB որ *փխ* յորժամ
9 A զերկիրն
10 AB օտարաց *փխ* աւետեաց
11 B ոչ *փխ* որ
12 A զտնօրէնութիւն
13 B *չիք* սակայն ոչ այսպէս ետես որպէս Եսայի մարգարէս ետես
14 B սա *փխ* նա
15 AC *չիք* կերպիւ
16 B նա *փխ* սա

*սերոբէք շուրջ գնովաւ սպասաւորէին» (հմմտ. Զ 1-2), այլ Մովսէս ի մորենւոջն*[1] *եառնս, զի ի մորենւոջն*[2] *երևեցաւ Մովսէսի, սակայն հայել ո՛չ կարէր և ասաց.* «Ե՛կ առաքեցից զքեզ յԵգիպտոս» *(Ելք. Գ 10): Եւ ո՛չ կամէր երթալ*[3] *և պատճառս*[4] *յօդէր.* «Նրբաձայն եմ ես և ծանրալեզու» *(Ելք. Դ 10)՝ զայլ ոք տե՛ս և առաքեայ: Եւ երեմիայ մարգարէն զտիս մանկութեան*[5] *պատճառէր, թէ՝* «Մանուկ եմ և խօսել իսկ[6] *ո՛չ կարեմ» (հմմտ. երեմ. Ա 6): Իսկ Եզեկիէլ մարգարէն յետ հրամանին Աստուծոյ, որ հրաման առ*[7] *գնալ առ ժողովուրդն քարոզել և մարգարէանալ, եւթն*[8] *օր օթեցաւ յատին զետոյն, զի ո՛չ կամէր երթալ, մինչ երևեցաւ նմա Աստուած և ասաց.* «Դէ՛տ կացուցի[9] զքեզ տանդ Իսրայէլի, և զհոգիս[10] նոցա և զարիւն նոցա ի ձեռաց քոց խնդրեցից» *(Եզեկ. Լ Գ 7-8), եթէ ո՛չ գնաս և քարոզես: Եւ Յունան մարգարէն ո՛չ միայն հրաժարէր*[11] *և ո՛չ երթալ կամէր, այլ և՝ փախչէր: Ապա զիա՞րդ մարգարէս Եսայի համարձակագոյն գտանէր քան զնոսա, և յօժարէր երթալն: Եւ դարձեալ. զի սորա յայտնի ո՛չ ասաց Աստուած, թէ գնայ, այլ յորժամ լուաւ, թէ՝* «Զո՞ առաքեցից և[12] *կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդն»: Ինքն իւրովի*[13] *յառաջ գնաց հրամանին և ասաց.* «Ահաւասիկ ես[14]*, առաքեա՛ զիս» (Զ 8): Ոմանք ասեն, թէ յանցեաւ մարգարէս, զի զՈզիայ ո՛չ յանդիմանեաց, և զայն յանցանս յօժարութեամբ յանձն առ՝ գնալովն խաղաղեաց: Եւ սիրտ շրթունս վասն*

---

1 AC մորենոջն
2 B մորենուոջն
3 A երթեալ
4 B պատճառ
5 C մանկութեան մարգարէութեան
6 AB *չիք* իսկ
7 C որ *փխ* առ
8 B եաւթն
9 B կացուցից
10 B զոգիս
11 A հրաժար
12 B *չիք* և
13 AC իւրովի սա
14 AB *չիք* ես

*անհամարձակութեան կոչեաց զինքն: Իսկ մեկնիչն այսմ ո՛չ*[1] *հաւանի, և ինքն կ՚առնէ պատասխանի. «Այլ ես ասեմ, ասէ, զի Պօղոսի բանն հաւատարմագոյն է և ճշմարիտ քան զնոցայն, որ զայս այսպէս ասացին»: Զի առաքեալն Պօղոս համարձակախօս ասէ*[2] *զԵսայի (տե՛ս Հռոմ. ժ 20), և նոքա զիա՞րդ ասեն, թէ ո՛չ համարձակեցաւ յանդիմանել զՊղիայ, զի Աստուած չասաց թէ յանդիմանեայ: Վասն այն ո՛չ յանդիմանեաց, և թէ ասացեալ էր*[3]՝ *յանդիմանէր*[4]*:*

*Եւ*[5] *դարձեալ. տե՛ս զնորա համարձակութիւնն*[6]*, որ հասարակ իւր մահուամբն ո՛չ մեռաւ, որպէս ամենայն մարդ հասարակ, որ իւր մահուամբն կու մեռանի*[7]*: Այլ սա*[8] *չարչարանօք մեռաւ ի հրէից վասն համարձակ քարոզելոյն և յանդիմանելոյն զնոսա: Այլ զՄովսէս յօտար և յայլազգի աշխարհ առաքէր և առ խիստ և կատաղի իշխանն փարաւոն, վասն այն ո՛չ կամէր երթալ*[9]*, և զԵսայիա*[10]՝ *առ ընտանիս և իւր ազգակիցն*[11]*, որ բազում անգամ խօսեցեալ էր ընդ նոսա, և նոքա՝ ընդ սա, և լուեալ զնոցա*[12] *խօսքն: Վասն այն սա յօժարէր զերթալն, ապա ո՛չ էր միապէս այս և այն: Իսկ այլք ասեն, թէ՝ «Յորժամ խոստովանեցաւ զմեղս իւր, և զժողովրդեանն*[13] *պիղծ շրթունս ասելով զինքն, և ի մէջ պղծաշուրթ ժողովրդեանն բնակել, ինքն մաքրեցաւ ի սերոբէէն*[14]*, կարծեաց թէ ժողովրդեանն այլ*

---

1 AB այս որ *փխ* այսմ ոչ
2 B ասի
3 AB ասէր *փխ* ասացեալ էր
4 C կու յանդիմանէր
5 AC *չիք* և
6 AB համարձակիլն
7 AB *չիք* ոչ մեռաւ որպէս ամենայն մարդ հասարակ որ իւր մահուամբն կու մեռանի
8 AB *չիք* սա
9 A երթեալ
10 B զԵսայի, C Եսայիս
11 AC ազգակիցն
12 C զսոցա
13 AB զժողովուրդն
14 A սէրոբէէն, B սերոբէէն

այնպէս լինի»: Զի մաքրեացէ[1] և յանձն առ երթալ աւետաւոր, գթածօրէն[2] հոգալով վասն նոցա, ընդ առաջ[3] ընթանայր հրամանին և ասէր. «Անհաւասիկ ես, առաքեա՛ պէս»:

Եւ դարձեալ. ժուժկալ միտս[4] առ նեղութիւնս ունէր, ի մարդարէութենէս յայտնի է, զի յանձն առ երթալ: Եւ այն, որ ասաց Աստուած. «Զո՞ առաքեցից և կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդն», զայս ո՛չ վասն տարակուսելոյ ասաց և վասն կարօտանալոյ[5]: Զի առ Աստուած տարակուսանք ո՛չ գոյ, զի Աստուծոյ ամենայն ինչ յայտնի է և գիտէ առանց տարակուսելոյ, և ո՛չ կարօտացաւ, թէ զո՞ առաքէր[6], և ո՛չ գոյր մարդ, որ առաքէր, այլ զով որ կամենայր՝ կարէր առաքել: Այլ այսպէս ասելն Աստուծոյ՝ զհրէից չարութիւնն ցուցանէր, զի չարք և անհաւանք էին նոքա, զի սպանին[7] զառաքեալսն առ նոսա, այսինքն՝ զմարգարէսն[8], զոր առ նոսա առաքեաց Աստուած: Զի թէ նոցա[9], որ առաքեաց առ նոսա[10], և ո՛չ հաւանեցան նոցա բանից և ո՛չ լսեցին և սպանին[11] զնոսա, և զով ոք որ առաքէր առ նոսա՝ նոցա այլ ո՛չ հաւանէին[12] և ո՛չ լսէին[13], որպէս առաջնոցն. վասն այն ասաց. «Զո՞ առաքեցից[14]»: Եւ զի ուսոյց Հօր[15] օրինօք և յայտնի արար նշանօք, և ո՛չ կամեցան[16] գալ ի գիտութիւն Որդոյ նորա: Զի մարգարէքն ուսուցանէին նոցա զՔրիստոսի գալուստն և նշան ևս տային: Յորժամ գայ հայէին ի նշանն և

---

1 AC մաքրեացի
2 ABC գթածօրէն
3 B յառաջ
4 B զմիտս
5 A կարօտելոյ, C *չիք* և վասն կարօտանալոյ
6 B առաքեացէ
7 AC սպանին
8 AC զմարգարէքն
9 C զնոքա
10 C *չիք* առ նոսա
11 C սպանին
12 AC հաւանեցին
13 A լսեցին, C լսիցեն
14 C առաքեցից առ այն ժողովուրդն
15 C հայր
16 AB չկամեցան *փխ* ոչ կամեցան

*հաւատայլին, և նոքա ո՛չ հաւատացին: Զի մարգարէս Եսայի նշան*[1] *եւ զԿուսին յղանալն և ծնանիլն*[2]*, նոյնպէս և այլ մարգարէքն բանիւ այլ ասացին և*[3] *նշան այլ*[4] *առին և զժամանակն ցուցին: Եւ յորժամ ասաց մարգարէս*[5]*. «Ահաւասիկ ես, առաքեա՛ զիս»:*

*Ասաց Աստուած. «ե՛րթ և ասա՛ ցժողովուրդն այն*[6]*. Տեսանելով տեսջիք և մի տեսջիք*[7]*, և լսելով լու[սջիք]*[8]*» (հմմտ. Զ 9), և «Մի՛ իմասցին և*[9] *մի՛ դարձին, և ո՛չ բժշկեցիս զնոսա» (հմմտ. Զ 10): Եւ յորժամ վասն չլսելոյ*[10] *զԱստուծոյ բանն չընկալան զբժշկութիւնն*[11]*, տարակուսեցաւ մարգարէն*[12] *և ասաց. «Մինչև ցե՞րբ Տէր» (Զ 11), իբր թէ՝ մինչև յոր ժամանակ անդարձ պիտի*[13] *մնան յիւրեանց չարութիւնն: Զի յառաջն քանի չէր լսէր զայն բանն, թէ՝ «Գնա՛ և ասա՛. Լսելով*[14] *լուիջիք և մի՛ իմասջիք*[15]*, և տեսանելով տեսջիք և մի՛*[16]*» (Զ 9), կարծիք մարգարէին այն էր, թէ պիտի*[17] *զղջան ժողովուրդքն*[18] *և յիւրեանց բարուցն*[19] *դառնան, և բարի լիցի*[20] *նոցա*[21] *և բարոյ հանդիպեսցին: Այլ այլ իմն, փոխանակ զոր կարծէր*[22]*, լուաւ զաւեր քաղաքին և զկործանումն տանցն, և զգերիլն նոցա և ունայն*

---

1 B ՚ի նշանս
2 B ծնանիլն
3 C այլ իմն բանիւ *փխ* բանիւ այլ ասացին և
4 C *չիք* այլ
5 B մարգարէն
6 C *չիք* այն
7 AB *չիք* և մի տեսջիք
8 AB *չիք* լուաջիք
9 AB *չիք* մի իմասցին և
10 AC չլսելոյն
11 A զբժշկութիւն, B բժշկութիւն
12 AC մարգարէս
13 AB *չիք* պիտի
14 B թէ լսելով
15 AB *չիք* լուիջիք և մի իմասջիք
16 C այլն *փխ* տեսանելով տեսջիք և մի
17 AC պիտիր
18 AB ժողովուրդն
19 B վարուցն *փխ* բարուցն
20 A լիցի, B լինիցի
21 B *չիք* նոցա
22 AC կարծէրն

*մնալ*[1] *երկրին: Զի ասաց Աստուած պատասխանի մարգարէին.* «Մինչև աւերեացին քաղաք[ք] ի բնակչաց, և տունք առ ի չդոյէ՛ մարդկան» *(Զ 11), իբր թէ՝ որպէս թէ յորժամ քաղաքն աւերի և դերի գնան, ապա դառնան*[2] *յիւրեանց*[3] *չարեացն: Զի այն, որ կու սպանուի*[4]՝ *մեռաւ, և մեղքն այլ հետ իւրն խափանեցաւ, և նոքա, որ դերի գնան, ի դերուԹեանն*[5] *պիւրեանց*[6] *չարիքն իմանան*[7]*, որ մեղաց համար գերեցան, նոքա այլ կու*[8] *փուշիմանին և դադարին*[9] *ի չարեաց: Զի յորժամ լուաւ պաւեր քաղաքին և զգերիլն, աղաչեաց*[10] *զԱստուած, զի զչափ պատժոցն ուսանիցէ*[11]*, Թէ որչափ ժամանակ գերի կու*[12] *մնան և ի չարչարանքն:*

*Դարձեալ. կամք մարգարէին*[13] *այն էր, որ*[14] *յորժամ լուաւ*[15] *զգերուԹիւն, բարեխօսէր*[16] *և աղաչէր զԱստուած վասն նոցա, Թէ՝* «Դու ողորմած ես և զԹած և անոխակալ, քա՛ւ լիցի քեզ առնել զայդ, զի զամենայն աշխարհս[17] *ողորմուԹեամբ խնամես*[18]*, հետ նոցա արդարուԹեամբ դատիս»: Եւ զայս կամէր ասել մարգարէն և ո՛չ իշխեաց: Է՛ր կամ*[19] *վասն զինչ*[20] *պատճառի: Զի ծածուկ ազդեաց*[21] *ի սիրտ մարգարէին, Թէ առանց ներելոյ է*

---

1 AB զամայի լինել *փխ* ունայն մնալ
2 C կու դառնան
3 A չիւրոց
4 AB տի սպանու *փխ* կու սպանուի
5 A գերութիւն, B գերութեան
6 B իւրեանց
7 C կու իմանան
8 AB տի *փխ* կու
9 B դադարեն
10 AC աղաչէր
11 AC ուսանիցի
12 AB տի *փխ* կու
13 A մարգարէիցն
14 AB *չիք* որ
15 AB լսեց
16 B բարի խօսէր
17 B աշխարհի
18 C կու խնամես
19 C *չիք* կամ
20 C զինչ
21 A ասդեաց

*նոցա յանցանքն, և ո՛չ լսէ Աստուածն, և թէ բարեխօսեալ[1] էր՝ ո՛չ լսէր, և վասն ինչ պատճառի առանց ներելոյ էր նոցա յանցանքն[2]: Զի ո՛չ թէ յակամայ մեղանչէին կամ մտօք մոլորեցան, որպէս սովորութիւն է մարդկան, որ պատահի[3], որ ակամայ մեղանչեն[4], զի իւրեանց միտքն ի[5] մեղքն ո՛չ է, և յանկարծ պատահի[6], որ զմեղքն[7] գործեն[8] և կամ մտօքն մոլորի[9], և չի իմանար[10] և գործէ[11] զմեղքն, և յետոյ դառնան[12] և փոշիմանին[13]: Իսկ նոցայն[14] այսպէս[15] ո՛չ էր, այլ կամօք և յօժարութեամբ գործէին, և յանհնազանդութեան էին:*

*Դարձեալ. խոկումն զայն ունէին[16]՝ միշտ հակառակ կալ հրամանացն Աստուծոյ: Զի որպէս այն, որ երկիւղած և բարի մարդն է, միշտ և հանապազ միտքն ի բարին է[17] և զբարին փութայ ուսանիլ[18] և կատարել[19], նոյնպէս նոքա՝ զչարն ուսանելոյ և կատարելոյ[20]: Զի մարգարէս զանյայտն և զծածուկն, որ յետոյ պիտի[21] լինէր ժողովրդեանն[22]՝ պատուհասն, որ գալոց էր նոցա, կամէր ուսանիլ[23] և կամէր աղաչել և ո՛չ վստահանայր, այլ հարցանելոյ աղագաւ[24] խօսէր և միտքն յաղաչելն էր.*

---

1 A բարէխօսել
2 B յանցանքն *(ապա կրկնուած)* և ոչ լսէ Աստուած, և թէ բարեխօսեալ էր ոչ լսէր, և վասն ինչ պատճառի էր առանց ներելոյ էր նոցա յանցանքն
3 C կու պատահի
4 C կու մեղանչեն
5 AB *չինք* ի
6 C կու պատահի
7 B մեղք
8 C կու գործեն
9 C կու մոլորի
10 C չիմանար *փխ* չի իմանար
11 C կու գործէ
12 C կու դառնան
13 C կու փոշիմանին
14 B նոցա
15 C այնպէս
16 B առնէին *փխ* ունէին
17 A բարէ *փխ* բարին է
18 A ուսանել
19 B առնել և ուսուցանել *փխ* ուսանիլ և կատարել
20 AB ուսանելով և կատարելով
21 AB *չինք* պիտի
22 B *չինք* ժողովրդեանն
23 A ուսանել
24 C յաղագաւ

«Մինչև յե՞րբ Տէր»: *Զարհուրեցաւ մարգարէս և երկեաւ և դողաց, մի արդեօք մինչ ի սպառ կացցէ ի վերայ Իսրայէլի կուրութիւն, ուսանիլ*[1] *խնդրէր.* «Մինչև յե՞րբ Տէր»: *Պատասխանեաց.* «Մինչև աւերեսցին քաղաք[ք] ի բնակչաց» և այլն[2]:

**Ցետ այսորիկ յերկարեսցէ Աստուած մարդկան** *(Զ 12):*

*Ցետ գերելոյն զՍամարիայ զերկու ազգն, որ մնացին յԵրուսաղէմ՝ Յուդային և Բենիամենին, զայս ասէ «յերկարեալ*[3]*», որ նոցա ներեաց և ո՛չ ետ թոյլ գնալ ի գերութիւն, զի ժամանակ ինչ երկարեաց խաղաղութեամբ մնալ:* «Երկարեսցէ Աստուած մարդկան» *զայն ասէ, որ ամենայն ազգ գերեցան և յետոյ դարձան: Այն է «յերկ[ա]րելն*[4]*», որ ժամանակ ինչ խաղաղութեամբ կացին ի վեր, քան զտասն ազգն, Բ (2) ազգն է, որ յԵրուսաղէմ, զի Ժ (10) նոքա էին, որ ի Սամարիայ, և ի վեր քան զտասն՝ Բ (2) ազգն, զի նախ տասն է:*

*Եւ դարձեալ.* «Երկարեսցէ[5] Աստուած մարդկան» *զայն ասէ, որ յետ խաչելութեան յերկարեաց ի (40) ամ, յորժամ զմարգարէքն կոտորեցին և զՔրիստոս սպանին, և յետոյ որք հաւատացին՝ ապրան յԻսրայէլէ: Այն է «յերկարելն», որպէս ասէ Եսայի.* «Եթէ[6] ո՛չ Տեառն զօրութեանց[7] թողեալ էր մեզ զաւակ՝ իբրև զՍոդոմ լինեաք[8]» *(Ա 9): Դարձեալ. ի կատարածի պատերազմունք լինին ի սատանայէ և ի դիւաց և յորդոցն կորստեան, և ի բռնաւորաց և ի չար մարդկանէ, և ապա՝ կատարած աշխարհի լինի ըստ գրեցելումն, թէ՝* «Ապա եկեսցէ կատարած» *(Մտթ. ԻԴ 14), և յերկարեսցէ յետ այսորիկ արդարոցն Աստուած, յետ*

---

1 A ուսանել
2 AB *չիք* և այլն
3 B երկարեալ
4 B երկարելն
5 B երկրորդեսցէ *փխ* երկարեսցէ
6 B թէ
7 B Աստուծոյ *փխ* զօրութեանց
8 A լիցէ

*յարուբեան՝ զերկայն յաւիտեան[1], յորժամ ի բաց բարձեալ լինին[2] ապականութիւն և մահ և մեղք, և զհանդիսան յաւիտենից[3] ժառանգեն արդարքն: Դարձեալ. ասաց ինքն ի վերջին ժամանակին հաւատան. այս է «յերկարել մարդկան»:*

**Զաւակ[ն] սուրբ արձանութիւն նորա** *(Զ 13):*

*Զայն ցուցանէ, որ ազգն բնաւ ո՛չ ջնջի և ո՛չ[4] մնայ: Ի նոցանէ «զաւակ սուրբ» զարդարքն ասէ, որ յԱբրահամէ և ի նոցանէ սերեցին և յառաջ եկին, որպէս սուրբ Աստուածածինն և առաքեալքն և այլք[5], որք հաւատացին: Սոքա մնացին և ո՛չ ջնջեցան որպէս նոքա: Դարձեալ. զՔրիստոս ասէ, որ ի նոցանէ էր, զոր խոստացաւ Աստուած Աբրահամու. «ի[6] զաւակէ քումէ օրհնեսցին ա՛լնայն ազգ երկրի» (Ծննդ. ԻԲ 18), որ եղև իսկ և կատարեաց[7]:*

**Եւ եղև յաւուրս[8] Աքազու և Յովաթամայ** *(Է 1):*

*Ամենայն բանք մարգարէիս, որ մարգարէացաւ, յայս չորս թագաւորի ժամանակս էր՝ Ոզիայ և Յովաթամ, Աքազ[9] և Եզեկիայ: Ոզիայ հայր էր և[10] Յովաթամ որդի[11], Աքազ հայր[12] և Եզեկիայ՝ Աքազու որդի: Աքազ յերուսաղէմ էր թագաւոր, և Փակէ ի Սամարիայ էր թագաւոր ԺԹ (10) ցեղին: Եւ Փակէ միաբանեցաւ հետ Դամասկոսի թագաւորին Հռասիմայ, և երկուքն միաբանեցան[13] գալ ի վերայ Երուսաղէմայ: Եւ Աքազ զարհու-*

---

1 A յաւիտեանն
2 B լինի
3 A յաւիտեանց
4 A *չիք* ոչ
5 B այլն
6 B և *փխ* ի
7 C *չիք* Ցետ այսորիկ յերկարեցէ Աստուած մարդկան (Զ 12)... կատարեաց *(տե՛ս աստ, էջ 111)*
8 C աւուր
9 C Աքազու
10 C *չիք* Ոզիա հայր էր և
11 B որդին, C Ոզիայի որդի է
12 C *չիք* Աքազ հայր
13 C կամեցան *փխ* միաբանեցան

*բնցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա: Եւ արկ Աքազ զձեռն ի գանձ տաճարին և էառ*[1]*, զոր ինչ ոսկի և արծաթ կայր ի գանձատունն, և այլ զոր ինչ*[2] *իւրն կայր՝ ոսկի և արծաթ, և առաքեաց տանել Ասորոց թագաւորին Թակլաթփաղասարայ*[3]*, և ի վարձու կալաւ զնա ասելով. «Ես ծառա՛յ եմ և հնազանդ, գաս*[4] *և օգնես ինձ, և ազատես զիս*[5] *յայս երկու թագաւորաց ձեռաց»* (*հմմտ. Դ Թագ. ԺԶ 7*)*: Զի Բ (2) մեծամեծ և հզօր*[6] *թագաւորք էին*[7]*: Զի սոքա որ յԵրուսաղէմ*[8]*՝ երկու փոքրիկ ազգ էին*[9]*, և նոքա որ ի Սամարիայ՝ Ժ (10) ազգ էին, որ*[10] *այնչափ*[11] *աւելի էին, քան զնոսա*[12]*, և Հռասիմ, որ Դամասկոսի թագաւորն էր, քան զնոսա, որ ի Սամարիայ, այլ առաւել շատ էր: Եւ այսպէս սոքա անհուն զօրօք միաբանեցան, որ գային ի վերայ Աքազու և Երուսաղէմայ: Եւ Աքազ զԹակլաթփաղասար իւրն օգնական կոչեաց: Եւ նա լուաւ*[13] *և եկաւ*[14] *և պատերազմեցաւ ընդ Հռասիմայ և սպան*[15] *զնա: Եւ փակէ գնաց ի Սամարիայ յիւր տեղն, և յիւր ազգէն Եսէան*[16] *որդի Նելեայ*[17] *սպան*[18] *զնա և ինքն նստաւ թագաւոր, չար քան զփակէ, այլ չար և ժանդաբարոյ: Եւ Թակլաթփաղասար դարձաւ*[19] *և գնաց յիւր տեղն, ուստի եկեալ էր, և եկաց ժամանակս ինչ՝ մեռաւ և նա*[20]*: Եւ նստաւ ի նորա տեղն*

---

1 AB ատ
2 AB զինչ (B ինչ) որ *փխ* զոր ինչ
3 AB Թակլաթփաղասարայ
4 C պիտիր գաս
5 B *կրկ* և ազատես զիս
6 C *չիք* և հզօր
7 C են
8 B Երուսաղէմ
9 A ին *փխ* էին
10 C որ ընդ
11 AB Ժ-որութեան չափ *փխ* Ժ. ազգ էին որ այնչափ
12 AB զսոսա
13 AB լսեց
14 C եկն
15 B եսպան
16 B Յեսէան, C Յիսէ անուն
17 A Ելեայ, B ելեալ *փխ* Նելեայ
18 B եսպան
19 B դարձեալ
20 B և մեաւ *փխ* մեռաւ և նա

*Սաղմանասար Թագաւոր, և նա յարեաւ և եկն ի վերայ Սամարիոյ, և բռնեաց*[1] *զԵսէ*[2] *և գերեցոյց զԻսրայէլ, այսինքն՝ զՍամարիայ զերկիր և զքաղաք, և տարաւ գերի: Եւ տարեալ*[3] *բնակեցոյց ի լերինն*[4] *Պարսից և Մարաց, և զոմանս իւրայնոց*[5]*, այսինքն՝ յիւր մարդկացն բնակեցոյց ի Սամարիայ վասն պարարտութեան տեղոյն, զի ասաց, թէ*[6]՝ «Գեղեցիկ տեղ է, չէ պարտ, որ աւեր մնայ», և ինքն գնաց յիւր տեղն յԱսորեստան: Յայնժամ առիւծք յարձակեցան ի վերայ նոցա Հրամանաւն Աստուծոյ և վնասէին*[7] *զնոսա, որ մնացին ի Սամարիայ: Եւ գնացին մարդիկ*[8] *և պատմեցին*[9] *Սաղմանասարայ և*[10] *ասացին, թէ՝ «Նոցա աստուածն*[11]*, զոր իսրայէլացիքն կու պաշտէին*[12]*, զայլ*[13] *օտար ազգ, որ այլ ուրիշ աստուած պաշտեն*[14]*, չի կամենար, որ անդ կենան և բնակին*[15]*, այլ այնոքիկ*[16] *մխայն կամի, որ զինքն պաշտեն*[17]*: Յայնժամ ասաց Թագաւորն. Գնացէք*[18] *ի հրէից ազգէն քահանայ*[19] *տարէք ի նոցա մէջն, որ նոցա ուսուցանէ զիւրեանց օրէնքն, որ նոքա այլ զնոցա աստուածն հաւատան և պաշտեն, որ առիւծքն վնաս չառնեն նոցա և ազատին յայնպիսի տանջանացն» (հմմտ. Դ Թագ. ԺԷ 26-27): Եւ այնպէս գնացին*[20] *արարին: Տարան քահանայք*[21] *ի հրէից և բնակեցուցին ի մէջ*

---

1 C ըմբռնեաց
2 C զՅեսէ
3 C *չիք* տարեալ
4 B լերինն
5 A յիւրայոցն, C իւրոցն
6 AC *չիք* թէ
7 C կու վնասէին
8 AB մարդիք
9 AB խապար (B խաբար) տարան *փխ* պատմեցին
10 AB և պատմեցին նմա և
11 B աստուածքն
12 AB նոքա պաշտէին իսրայէլացիքն *փխ* իսրայէլացիքն կու պաշտէին
13 B այլ
14 C կու պաշտեն
15 C մնան և անդ բնակեն *փխ* անդ կենան և բնակին
16 AB գայնոքիկ
17 C կու պաշտեն
18 AB գնոցանէք *փխ* գնացէք
19 C քահանայք
20 AB *չիք* գնացին
21 C քահանայ

*նոցա, որ ուսուցին զհաւատքն իւրեանց: Եւ նոքա Հաւատացին լեզուով, այլ սիրտք իւրեանց ի կուռքն էին, զի կուռքն տարեալ*[1] *թաղեցին ի լեառն գաղտուկ*[2]*: Եւ յորժամ աղօթէին, դէպ*[3] *ի լեառն աղօթէին և երկրպադէին*[4]*, իբր թէ Աստուծոյ երկրպադեն*[5]*, և մօքն կռոցն երկրպագէին*[6]*: Եւ այնպէս կացին ժամանակ մի*[7] *և յետոյ*[8] *դարձան յիւրեանց*[9] *կռապաշտութիւնն: Իսկ յորժամ նոքա խափանեցան և գնացին, և իսրայէլացիքն բնակեցան անդ*[10] *ի Սամարիայ, դարձեալ դէպ յայն*[11] *լեառն երկրպադէին*[12]*, որ կուռքն էր թաղած, սակայն նոքա ո՛չ գիտէին: Վասն այս պատճառիս Փրկիչն խօսելով*[13] *ընդ սամարուհոյն՝ ասաց.* «Դուք երկիր պագանէք, որում ո՛չ գիտէք» *(Յովհ. Դ 22), այսինքն՝ թէ դէպ*[14] *ի լեառն երկիր պագանէք*[15] *կռոցն և ո՛չ գիտէք, և* «Մեք երկիր պագանեմք[16], որում գիտեմք» *(Յովհ. Դ 22), իբր թէ՝ Աստուծոյ երկիր պագանեմք*[17]*: Իսրայէլացիքն, որ Աստուծոյ երկիր պագանէին*[18]*, զինքն այլ*[19] *ընդ նոսա խառնէ*[20]*:*

*Ի մեռանելն Ոզիայ Յովաթամ եղև թագաւոր: Զի որպէս հայրն սորա բարի թագաւոր էր, նոյնպէս*[21] *և սա բարի էր: Սակայն որպէս և սորա հայրն*[22] *մի յեղանակաւ յանցեաւ, զի*

---

1 AB տարան
2 C գաղտ ի լեառն *փխ* ի լեառն գաղտուկ
3 B դէմ *փխ* դէպ
4 A երկրպագանէին, B երկիր պագանէին
5 A երկրպագանէին, B երկիր պագանէին
6 AB երկրպագանէին
7 C ինչ *փխ* մի
8 A~ *չիք* յետոյ
9 B *չիք* յիւրեանց
10 B *չիք* անդ
11 B ի *փխ* յայն
12 B երկիր պագանէին
13 B խօսեցաւ
14 C թէպէտ *փխ* թէ դէպ
15 B երկիր պագանէք, C կու երկիրպագէք
16 C երկրպագանեմք
17 C երկրպագեմք
18 C կու պագանէին
19 C *չիք* այլ
20 C կու խառնէ
21 AB նմանապէս
22 AB *չիք* հայրն

*խնկարկեաց, նոյնպէս*[1] *և Յովաթամ մի յեղանակաւ*[2] *յանցաւոր էր, որ զբարձունս կուռք էին դրեր և պաշտէին զայն*[3]*, ո՛չ եբարձ, այլ թոյլ*[4] *եւս, որ պաշտէին*[5]*: Եւ յետ Յովաթամու Աքազ եղև թագաւոր, և Աքազու որդի Եզեկիայ էր: ՅԱքազու*[6] *ժամանակն Փակէ և Հռասիմ*[7] *միաբանեցան և եկին ի վերայ Աքազու և յԵրուսաղէմայ: Սակայն ո՛չ կարացին պաշարել և ո՛չ գերի տանել, այլ խնամքն Աստուծոյ թոյլ եւս, որ եկին: Եւ դարձեալ խնամքն Աստուծոյ պահեաց, որ ո՛չ կարացին վնաս առնել նոցա: Եւ յառաջ քան զՓակէի և զՀռասիմայ միաբանելն, եկն առանձին Փակէ ի Սամարիայ*[8]*՝ ի վերայ Երուսաղէմայ ի պատերազմ, և կոտորեաց ի միում աւուր ճիՌ (120 000) մարդ: Եւ այս վասն ամբարշտութեան Աքազու եղև*[9]*, որ*[10] *ի կռապաշտութիւն անկաւ և ա՛ծ զորդիսն ընդ բոցով: Բոցովն այն է, որ այն տղայքն*[11]*, որ կռոց բաժին խոստանային և տային, զայն ընդ բոցովն ածէին, որպէս քրիստոնեայքն զայն, որ եկեղեցոյն մատաղ խոստանան*[12]*, եկեղեցոյն շուրջ ածեն*[13]*, նմանապէս և նա առնէր:*

*Մարգարէութիւնն, զոր մարգարէանային մարգարէքն, ո՛չ փութով ի նոյն ժամանակն կատարէր, այլ յետ բազում ժամանակաց կատարէին բանք մարգարէից: Զի էր մարգարէութիւն*[14]*, որ*[15] *ի ԵՃ*[16] *(500) տարին կատարէր, և էր, որ*[17] *ի*

---

1 AB ճմանապէս
2 C եղանակաւ
3 B զնա *փխ* զայն
4 AB *չիք* թոյլ
5 C կու պաշտէին
6 A ի յԱքազու, B Աքազու, C զյԱքազու
7 A Հռայսոն, B Հռասոն
8 AC Սամարիոյ
9 AB *չիք* եղև
10 C *չիք* որ
11 AC տղայն
12 C կու խոստովանին *փխ* խոստանան
13 C կու ածին *փխ* ածեն
14 AB *չիք* մարգարէութիւն
15 AC *չիք* որ
16 C ՃՃ *փխ* ԵՃ
17 A *չիք* որ

հազարն, և էր, որ[1] յերկու հազարն[2], և այլ աւելի կամ պակաս: Վասն այն մօտաւոր իրօքն, որ ի մօտաւոր ժամանակն մարգարէականային, զոր լինելոց էր թէ՛ սով, թէ՛ սուր, թէ՛ գերութիւն և այլն: Յայնժամ[3] ապագայիցն ևս[4] հաւատան ճշմարտութեամբ, որ լինելոց է, որպէս մօտաւորն կատարեցաւ, նմանապէս հետուն և ապագայն կատարելոց է[5] աներկբայ ճշմարտութեամբ[6]: Իսկ Քրիստոսին այլ յեղանակաւ էր, զի ո՛չ նման մարգարէիցն զմօտաւորն մարգարէանայր և ասէր, այլ զհետաւորն մարգարէանայր վասն հանդերձելոյն, և մօտաւոր բան ո՛չ ասէր: Զի այն, ով զհետաւորն հաւատային, վասն այն յորժամ քարոզէր և ուսուցանէր և վասն հանդերձելոյն մարգարէաբար խօսէր՝ ի վերջ քարոզելոյն սքանչելիք առնէր և բժշկութիւն, որ զսքանչելիքն[7] տեսանելով հաւատային, զոր ինչ ասէր և զլինելոցն: Զի յորժամ զհարիւրապետին ծառայն բժշկելով ի չար հիւանդութենէն գովեաց զհաւատ[8] հարիւրապետին. «Ամէն ասեմ ձեզ, և ո՛չ յիսրայէլի այսպէս հաւատս[9] գտի» (Մտթ. Ը 10): Եւ մարգարէական բան ևս[10] խօսեցաւ առաջի ծերոցն՝ ասելով. «Եկեսցեն յարևելից և յարևմտից, և բազմեսցեն ընդ Աբրահամու յարքայութեան[11] երկնից» (Մտթ. Ը 11), որ են ազգն հեթանոսաց, «և որդիքն[12] արքայութեան[13] ելցեն ի խաւարն արտաքին» (Մտթ. Ը 12), որ է ազգն հրէից: Եւ այս եղև իսկ և կատարեցաւ: Զի ամենեքեան տեսանեն, որ[14]

---

1 AB *չիք* որ
2 B *չիք* և էր որ երկու հազարն
3 AE *չիք* յայնժամ
4 AB *չիք* ևս
5 B կատարեացէ *փխ* կատարելոց է
6 AB ճշմարտութեան
7 BC սքանչելիքն
8 AC զհաւատսդ
9 AC զի ի մէջ Իսրայէլի այս չափ հաւատ ոչ *փխ* և ոչ յիսրայէլի այսպէս հաւատս
10 AB այլ *փխ* ևս
11 A յարքայութիւն, C յարքայութիւնն
12 B որդիք
13 C արքայութեանն
14 B զոր

*այսպէս է*[1]*, զոր Քրիստոս ասաց*[2] *և կատարեցաւ, և յայտնի է տեսողացն, քան զճառագայթս արեգական, որ ամենեքեան տեսանեն*[3]*: Բայց յայն ժամն, որ Քրիստոս հրամայեաց զայս հրէից, անյայտ էր և դժուարընկալ անհաւատ հրէից, զի նոքա ո՛չ հաւատային ասացեալ բանից, զոր ասաց Քրիստոս, զի ասէին, թէ*[4]*՝ «Երբ լինի այս, որ մեք արքայութեան բաժին եմք, ելանեմք յարքայութենէն, և հեթանոսաց ազգն, որ կռապաշտք են*[5] *և անհաւատ*[6]*, նոքա յարքայութիւն մտանեն. այդ*[7] *լինելոյ բան ո՛չ է*[8] *կամ հաւատալոյ»: Վասն այնորիկ զնշանն առաջի արկանէր և զաքանչելիք և բժշկութիւն առնէր, զի ասացեալքն առ յապայ հաւատարիմ ցուցին*[9]*: Եւ մարգարէքն մօտակայ բանիւն, որ ասէին և լինէր, զհեռաւորն որ ի հեռուն մարգարէանային՝ հաւատարիմ ցուցին*[10]*: Որպէս այրն Աստուծոյ, որ*[11] *առաքեաց Աստուած առ Րոբովամ ի Սամարիայ, ասաց. «Փոխանակ, որ զժողովուրդն Աստուծոյ արկէր ի կռապաշտութիւն, ի Դաւթի ազգէն թագաւոր ելանէ*[12] *բարեպաշտ Յովսիայ*[13] *անուն յետ երեք հարիւր ամի և գայ առնու զձեր քաղաքդ, և զկռապաշտից ոսկերքն հանէ և հրով այրէ և հոսել տայ հողմով» (տե՛ս Գ Թագ. ԺԳ 2): Եւ զերկիր*[14] *պատառեաց և զկուռքն ի յանդունդս կործանեաց, և զսեղանն կործանեաց*[15] *և այլն: Զի մի՛ թերահաւատ լիցին, զոր ասաց մարգարէն, զոր յետ երեք հարիւր ամի կատարելոց էր:*

---

1 AB *չիք* է
2 AC հրամայեաց *փխ* ասաց
3 C կու տեսանեն
4 AC *չիք* թէ
5 B կռապաշտ էին
6 A անհաւատք
7 AB այլ *փխ* այդ
8 AC է թէպէտ որ ասէ. այս (C *չիք* այս) լինելոյ բան ոչ է
9 C ցուցցին
10 C ցուցցին
11 B որպէս
12 B ելանէր. C պիտի ելանէ թագաւոր *փխ* թագաւոր ելանէ
13 AB Ովսիայ
14 B զերկիրս
15 C *չիք* և զսեղանն կործանեաց

«Յաւու, յաւուբայ» (հմմտ.է 3): Յեբրայեցի լեզուն «զիա՞րդ իցէ» կամ «զիա՞րդ կայցէ[1]» թարգմանի, և այս ի վերայ այս բանիս չի յարմարիր, այլ այս միւսս ճշմարիտ է, զոր[2] ասէ. «Ըստ այլոց մնացուածծ» թարգմանի: «Մնացուածծ» ասէ, որ ի ճիՌ (120 000)-ից կոտորելոց մնացին, զոր Փակէ կոտորեաց[3]: Ջխորհուրդն Փակէի և Հռասիմայ Աստուած յայտնեաց Եսայեայ մարգարէին, զի նոցա ծածուկ խորհուրդն, զոր[4] խորհեալ էին[5], թէ զի՞նչ[6] խորհրդով գային[7] ի վերայ նոցա, և կամ զի՞նչ գործ առնելոց էին, կամ զո՞վ թագաւոր կացուցանէին[8]: Եւ խորհէին նոքա, թէ[9]՝ «Գնամք ի վերայ նոցա, և[10] նոքա մեզ զիմակաց չեն, զի երևիլն[11] մեր բաւական է, որ զարհուրին նոքա և ո՛չ թէ պատերազմին: Եւ զոմանս ի մեզ զարձուցանեմք՝ ով որ[12] դառնայ, և ով[13] ո՛չ դառնայ՝ սպանանեմք: Եւ զՏաբելայ[14] որդին թագաւոր կացուցանեմք յԱքազու տեղն, և ապա դառնամք յետ» (տե՛ս է 6): Զայս ամենայն յայտնեաց Աստուած մարգարէին և ասէ[15], թէ՝ «Գնա՛ ասա՛[16] Աքազ թագաւորին. Թէպէտ սոքա այսպէս խորհին[17], բայց ո՛չ կատարի[18] նոցա խորհուրդն և անկատար մնայ[19], և ասայ մի՛ երկնչիր[20]» (հմմտ. է 7): Եւ գնաց

---

1 B կացցէ
2 A որ
3 C *չիք* յաւու, յաւուբայ... զոր փակէ կոտորեաց
4 B որ
5 AB խորհէին *փխ* խորհեալ էին
6 AB ինչ
7 C կու գային
8 C պիտիր կացուցանէին
9 C կու խորհէին *փխ* և խորհէին նոքա թէ
10 C *չիք* գնամք ի վերայ նոցա և
11 AC երևելն
12 AB որ որ
13 C ով որք
14 C զՏաբեղայ
15 AB *չիք* և ասէ
16 C խօսեա *փխ* ասա
17 C կու խորհին
18 AB չի կատարիր *փխ* բայց ոչ կատարի
19 ABC տի (C կու) մնայ
20 AB վախեր *փխ* երկնչիր

*ասաց, և ո՛չ լուաւ*[1] *թագաւորն: Եւ այս մեծ նշան է և ապանչելիք Աստուծոյ, որ հաւատայր Աբգար, թէ նա, որ զծածուկ խորհուրդն նոցա գիտաց և ծանոյց մեզ մարգարէիւն*[2]*, կարող*[3] *է և նա զմեզ փրկել, զոր ասէ*[4] *մեզ*[5] *մարգարէս: Եւ նա դուստր և յահի*[6] *կայր և ո՛չ հաւատայր: Որդի Աբրամայ զաւորին կոչէ զՀռասիմ, և Հռոմելայ*[7] *որդի զՓակէ կոչէ:*

**Գլուխ Աբրամայ**[8] **Դամասկոս**[9] *(է 8):*

*«Գլուխ» ասէ*[10]*, զի մայրաքաղաք էր Աբրամայ աշխարհին:* «Եւ գլուխ Դամասկոսի Հռասիմ» *(է 8), այսինքն*[11]*՝ Հռասիմ թագաւոր էր յայն*[12] *քաղաքին*[13] *և այնու*[14] *վտխան, որ ևկն Փակէ ի վերայ Երուսաղէմայ, և ճիՌ*[15] *(120 000) մարդ կոտորեաց ի միում աւուր: Ասաց մարգարէն Եսայի, թէ՝* «Յետ կե (65) ամի պակասի և[16] խափանի թագաւորութիւնն[17] Եփրեմի» *(է 8), զի Փակէ*[18] *մեռեալ էր, զի ի թակլաթփաւասարայ գալն մեռաւ: Հռասիմ*[19] *թակլաթփաւասարայ*[20] *սպանաւ*[21]*, և Փակէ*[22] *յԵսէ*[23] *որդին Նելեայ սպան*[24] *ի Սամարիայ, այլ զԵփրեմ յիշէ,*

---

1 AB լսեց
2 AB մարգարէութիւն
3 C և կարող
4 B ասէր
5 C *չիք* մեզ
6 C յահի
7 A Հռովմելա, B զՀռոմելայ
8 C ասէ *փխ* Աբրամայ
9 C զԴամասկոս
10 B ասէր, C *չիք* գլուխ ասէ
11 C *չիք* գլուխ Դամասկոսի Հռասիմ այսինքն
12 B այն
13 AC քաղաքն
14 C այն որ *փխ* այնու
15 C ճի *փխ* ճիՌ
16 B *չիք* պակասի և
17 AB թագաւորութիւն
18 B զփակէ *փխ* զի փակէ
19 AB զի Հռասիմ
20 B Թակլաթփաւասրաւ
21 C սպաննաւ
22 C զՓակէ
23 B յԵսսէ
24 AB սպանեաց

*զի*[1] *գլխաւոր էր Սամարիոյ, սակայն թագաւորք*[2] *այլք էին: Եւ յետ կե (65) ամի եկ*[3] *Սաղմանասար ի վերայ Սամարիոյ և սպան զնա զորդին Նելեայ, և տարաւ զնոսա գերի յԱսորեստան: Եւ կատարեցաւ մարգարէին բանն, որ ասաց.* «Յետ կե (65) ամի խափանել զթագաւորութիւնն[4] Եփրեմայ» *որ ի Սամարիայ: Զի յայնմ օրէ այլ յերկուս ո՛չ բաժանեալ եղև թագաւորութիւնն, որպէս ի Սողոմոնի որդոյ ժամանակէն ի հետ էր*[5] *յերկուս բաժանեալ: Այլ մի թագաւորութիւն եղև յԵրուսաղէմ, որչափ կացին յԵրուսաղէմ, այլ ո՛չ ի Սամարիայ: Աքազ ո՛չ հաւատայր*[6]*, թէ*[7] *փրկէր զնոսա ի ձեռաց երկուց*[8] *հզօր թագաւորացն, զի նոքա բազումք*[9] *էին և անթիւ, և նա՝ սակաւ: Վասն այն ո՛չ հաւատայր*[10] *ասելով.* «Զիա՞րդ փրկիմք[11]» *(հմմտ. ի 6): Ո՛չ էր պարտ զիարդն և զորպէսն խնդրել յԱստուծոյ*[12]*, թէ Աստուած որպէս փրկէ*[13]*, զի Աստուած*[14] *որպէս կամի՝ այնպէս*[15] *առնէ: Հաւատոյ պէտք են*[16] *իմանալ զզօրութիւն*[17] *նորա հաստատութեամբ և ո՛չ քննութեամբ: Որպէս Դաւիթ ասէ.* «Հաւատացի, զոր և խօսեցայ» *(Սաղմ. ճժե 10), և Պօղոս առաքեալն ասէ.* «Ունիմք զնոյն հոգի հաւատոց, զի հաւատամք, վասն որոյ և խօսիմք[18]» *(Բ Կորն. Դ 13): Եւ թէ նոքա հաւատացյ կարօտ էին, որ ամենայն*

---

1 AB ի *փխ* զի
2 AC թագաւոր
3 AB երեք *փխ* եկ
4 AB զթագաւորութիւն
5 AB *չիք* էր
6 AB հաւատար
7 C կու *փխ* թէ
8 B երկու
9 B բազում
10 AB հաւատար
11 B փրկիմ
12 C զԱստուծոյ
13 C կու փրկէ
14 C *չիք* Աստուած
15 AB *չիք* այնպէս
16 B ի *փխ* են
17 AB զօրութիւն
18 AB խոստանիմք (B խոստովանիմք) *փխ* խօսիմք

*ինչ նոցա յատնէր*[1]*, քան ի*[2] *առաւել Աքազ պիտէր Հաւատայր, որ ինքն ո՛չինչ պիտէր: Զի սորա պիտուքիւն մօտ ի նորայն իբր անբան անասուն է համարեալ որչափ ուրայն, քան կրօնից աստուածային գիտուքեննէ, զորմէ աստուածային*[3] *գիրն ասէ, թէ՝ «Զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ*[4]*» (Ա Կորն. Բ 9): Զի նոքա զոր ինչ խօսէին, նախ՝ Հաւատային*[5] *և ապա՝ խօսէին*[6]*, զի զոր ինչ խօսէին*[7]*՝ Հաւատային: Զի մեր գիտուքիւնս, քան զբնուքեան գործն*[8]*, ի վեր ո՛չ կարէ գիտել, զի զոր ինչ բնուքեան գործ է՝ թէ՛ մարդոյ և թէ՛ այլ կենդանեաց, զայն չափն կարէ իմանալ և այլ ի վեր ո՛չ կարէ անցանել: Իսկ գործն Աստուծոյ ի վեր է, քան զգիտուքիւնս մեր, զի մեր գիտուքիւնս զգործան*[9] *Աստուծոյ զոր*[10] *ինչ գործէ՝ ո՛չ կարէ հասու լինել:*

**Յաւել Տէր խօսել ընդ Աքազու** *(է 10):*

*Յորժամ լուաւ Աքազ զՓակէի և զՀռասիմայ միաբանելն*[11] *և գալն ի վերայ ինքեան և Երուսաղէմայ, զոզաց և երկեաւ. «Եւ զարհուրեցաւ անձն իւր և անձն ժողովրդեան*[12]*» (է 2): Առաքեաց Աստուած զմարգարէն Եսայի առ նա և ասաց. «Մի՛ երկնչիր և մի՛ զարհուրիր, և համբեր առաւ քեզ*[13]*, զի նոքա ո՛չինչ կարեն առնել քեզ, զի ես օգնական եմ*[14] *քեզ» (հմմտ. է 4): Իսկ Աքազ ո՛չ հաւատաց, թէ՝ «Երբ լինի, որ մեք ի նոցանէ ազատիմք, զի բազում և անթիւ*[15] *են նոքա, և մեք սակաւ քան*

---

1 AC յայտնի էր (C է) *փխ* յատնէր
2 B զի
3 AB աստուածեղէն
4 A *չիք* լուաւ
5 C կու հաւատային
6 C կու խօսէին
7 AB ասէին *փխ* խօսէին, C խօսէին կու
8 AB գործեն
9 AC զգործն
10 AB զի զոր
11 B միաբանիլն
12 C ժողովրդեանն
13 C *չիք* և համբեր առաւ քեզ
14 AB օգնեմ *փխ* օգնական եմ
15 A անթիւք

*պնոսա»: Պարտ էր յորժամ*[1] *լուաւ Աքազ ի մարգարէէն*[2]*՝ չերկնչել*[3]*, և թէ երկմտեաց՝ պարտ էր նշանին հաւատալ: Նշանն այն է, որ պնոցա ծածուկ*[4] *խորհուրդն յայտնեաց մարգարէն հրամանաւն Աստուծոյ: Զի նոքա այսպէս խորհէին ի միտս իւրեանց և խօսէին, թէ՝ «Գնամք ի վերայ Երուսաղէմայ*[5] *և*[6] *նոքա մեզ դիմակաց ո՛չ են: Երևիլն*[7] *մեր բաւական է նոցա, որ երկնչին*[8] *ի մեզանէ և ո՛չ մերձենան ի մեզ: Առնումք զքաղաքն, և*[9] *զոմանս ի նոցանէ ի մեզ դարձուցանեմք, և որք ո՛չ դառնան՝ սուր ի վերայ դնեմք և*[10] *սպանանեմք, և զոր ինչ մեզ պիտիր*[11]*՝ այնպէս առնեմք: Զթագաւորն նոցա*[12] *զԱքազ ըմբռնեմք և սպանանեմք, և ի*[13] *նորա տեղն զորդին Տաբելայ թագաւոր կացուցանեմք*[14]*, և դառնամք ի մեր տեղիքն» (տե՛ս է 6): Իսկ զայսպիսի ծածուկ բանս, որ ինքեանք յիւրեանց միջին առանձին*[15] *խորհէին և խօսէին*[16]*, զիտաց Աստուած*[17] *և յայտնեաց մարգա-*

---

1 B զի յորժամ
2 AB զի մարգարէն *փխ* ի մարգարէէն
3 AB չերկնչէր
4 A զծածուկ
5 A *չիք* Երուսաղէմայ, B *չիք* ի վերայ Երուսաղէմայ
6 B զի *փխ* և
7 AC երևելն
8 C երկնչեն
9 AC *չիք* և
10 B *չիք* սուր ի վերայ դնեմք և
11 C պիտի
12 AB *չիք* նոցա
13 B *չիք* ի
14 A կացուցանեմք նորա փոխարեն
15 A առանձնակի, B *չիք* յիւրեանց միջին առանձին
16 B *չիք* և խօսէին
17 A (թ. 94ա) և B (թ. 229բ) *ձեռագրերում «գիտաց Աստուած»-ից հետո շարունակում է այսպես.* «որ պիտիր (B պիտէր) յաղթուէր և մեռանէր, և այժմ գիտէր սատանայ զբա[ր՞]ին, որ դուռն [է]ին, որ ի վերայ Սուլէմանին գնացին, թէ որն պիտիր յաղթէ, նա (B նայի *փխ* նա) ի վերայ և տեսանէ, թէ որն է շատ կամ որն է քիչ, որն է միամիտ և որն՝ ոչ: Եւ զրուցն լսէ և այսով իմանայ, և ոչ թէ կանխագէտ է: Զի որ ասեն կամ գործեն, թէ ով որ յԱստուած հարցանէ, և ով որ ի դիւթն (B Դաւիթն *փխ* դիւթն) միապէս են, երկուքն այլ միապէս զծածուկն յայտնեն: Զի որ (B զոր) զայս ասեն կամ գործեն, հեռի են յԱստուծոյ: Զի Սաւուղ որ եհարց. «Ոչ ինչ օգտեցաւ և շահ և օգուտ ոչ եղև նմա», զի թէ չէր հարցեր ի վհուկն լինի թէ՛ ներէր Աստուած նմա և թէ՛ պատուհասէր, զի բարկացեալ էր, սակայն ժամանակ ինչ յերկարէր (B երկարէր) և ապա՝ տայր զպատիժն: Այլ ընդ մեծամեծ պատժոք անկաւ յորժամ եհարց (B հարցաւ), զի սպանանաւ (B սպանաւ) ինքն երեք որդովն»:

*բէին՝ Աքազու պատմեաց: Եւ այս մեծ նշան էր զծածուկ սրտին իմանալ, զի գործ Աստուծոյ է այս, որպէս ասէ մարգարէն յաղագս Աստուծոյ. «Որ քննէ զսիրտս և զերիկամունս» (Սաղմ. է 10): Եւ պարտ էր, որ հաւատայր Աքազ, թէ նա, որ զծածուկ խորհուրդն գիտաց, կարող է և ի նորա ձեռացն ազատել զմեզ: Վասն այն, թէպէտ որ յառաջն երկեաւ յորժամ ո՛չ էր լուեալ ի մարգարէէն, և երբ լուաւ, պարտ էր այսպիսի նշանիս հաւատալ և չերկնչել:*

*Զի բազումք ի հրէից նշանին հաւատային, և ի նոյն ազգէն էր, պարտ էր երբ զնշանն լուաւ՝ հաւատալ և ո՛չ երկմտել: Զի այս սովորութիւն էր հրէից, յորժամ մարգարէքն բան ինչ ասէին, նոքա ո՛չ հաւատային, այլ ասէին. «Կամի՞ս, որ հաւատամք քո բանիդ, նշան տուր մեզ, որ հաւատամք», և նոքա նշան տային, և ապա հաւատային նոցա բանից: Որպէս որ ի Գեդէոնի երևեցաւ հրեշտակն և ասաց. «Տէր ընդ քեզ, մի՛ երկնչիր, զի մատնելոց է Աստուած զմադիանացիքն ի ձեռն քո» (համմտ. Դատ. Ը 3): Եւ նա ո՛չ հաւատաց, այլ նշան խնդրեաց, և նշան եառ ի գեղմն և ի կալն, և ապա՝ հաւատաց: Եւ այս պատմութիւնս գրեալ է ի սկիզբն գրոցս: Երբ որ այս նշանիս ո՛չ հաւատաց Աքազ, որ զծածուկ սրտին թշնամեացն յայտնեաց և զմխաան մերկացոյց, դարձեալ խօսի Աստուած մարգարէիւն առ նա և ասէ. «Երբ առաջին նշանին ո՛չ հաւատացիր, որ առանց խնդրելոյ ցուցի քեզ, այժմ դու քո կամօքդ խնդրեա՛ նշան, որ տամ քեզ» (համմտ. է 11): Եւ նա իբր հաւատացեալ ձեւացուցանէր զինքն կեղծաւորութեամբ և ասէր. «Ո՛չ խնդրեցից և փորձեցից զՏէր», (է 12), իբր թէ՝ ես առանց նշան տալոյ կու հաւատամ և առանց փորձելոյ զնա, որ նա զմեզ կու փրկէ ի մեր թշնամեացն: Այլ ծածուկ միտքն յասորոց թագաւորն էր, որ բազում ինչք են տուէր նմա՝ ոսկի և արծաթ և զեղրեայք յիւր գաւառէն, յայն կու հայէր գալ, օգնական լինել և փրկել ի թշնամեացն, այսինքն՝ ի Թակլաթփաղասարայ:*

*Դարձեալ. ի պատասխանոյն երևի նշան, որ ետ մարգարէին, որ ո՛չ հաւատայր նա, զի անհնազանդ էր Աստուծոյ, զի թողեալ էր զԱստուած և զիւացն պաշտօն մատուցանէր: Եւ Աստուած կամէր, որ յինքն հաւատայր և ի նմանէ խնդրէր զփրկութիւնն և պնշանն: Այլ նա ի*[1] *կռոց սպասաւորան հարցանէր և ի նոցանէ նշան խնդրէր: Իսկ մարգարէն Աստուծոյ հրամայէր՝ հայցել պնշանն: Զհարցանելոյն զեղանակն ի նորա կաման ապաստան առնէ, թէ ոք կամօքզ խնդրեայ նշան թէ՛ յերկինէ, թէ՛ յերկրէ, թէ՛ ի հրեշտակ և թէ՛ ի մարդիկք: Այս է ասելն. «Ի խորութեան կամ ի բարձրութեան» (է 11): Զի ցուցցէ, թէ նա է Տէր երկնի և երկրի, և այլ ամենայն արարածոց, և կարող է տալ և բաւական զօր, թէ երկնից ոք խնդրէ նշան կամ յերկրէ, չիք*[2] *ոք որ արգելու զհրամանն Աստուծոյ ո՛չ տալ: Եւ հրաժարեաց Աքազ անամօթաբար թշնամանելով զԱստուած, թէպէտ և կեղծաւորութեամբ երկիւղած ցուցանէր զինքն թէ. «Ո՛չ խնդրեցից և ո՛չ փորձե[ցից]» (է 12): Եւ յայտնի էր նորա ամբարշտութիւնն՝ ո՛չ հաւատալ Աստուծոյ նշանին ի բերանոյ ճշմարիտ մարգարէին, զի կամք նորա առ դիւթան էր և ի դիւացն զօդնականութիւնն հայցել, զի ի կռոցն հայցէր, և ի կուռքն դևքն էին բնակեալ, ի դիւացն կու հայցէր: Երբ զայս չափս ասաց մարգարէն և նա ո՛չ հաւատաց, հրամանաւն Աստուծոյ այլ արժանի ո՛չ արար զնա, որ հետ նորա խօսէր: Դարձոյց զերեսս ի նմանէ, այսինքն՝ յԱքազ, և դարձաւ առ ժողովուրդն և հետ ժողովրդեանն խօսեցաւ:*

**Եւ արդ՝ լուարո՛ւք առնդ Դաւթի. թեթևո՞ ինչ թուիցէ ձեզ հաւատացանել աշխաւութիւն մարդկան, և զիա՞րդ հաւատացանիցէք աշխաւութիւն Տեառն** *(է 13):*

*Այսինքն՝ թէ այդ բաւական չէ, որ աշխաւ կու առնէք զմարդ, այսինքն՝ զմարգարէն, այլ և զԱստուած աշխաւ առնէք,*

---

1 C զի *փխ* ի
2 C լիք *փխ* չիք

*որ խօսիցի ընդ ձեզ: Զի «աշխատ անել զմարգարէն» այն է, որ մարգարէին չհաւատացին, որ զնշանն ետ, և «զԱստուած աշխատ առնելն» այն է, որ Աստուծոյ բանին չհաւատացին, զի մարգարէի բանն Աստուծոյ բանն էր: Զի թէ մարդ մարդոյ չհաւատալն մեղադրելի է, քան ի առաւել Աստուծոյ չհաւատալն, մեծ աշխատուԹիւն է Աստուծոյ:*

*Եւ դարձեալ. մարգարէն ո՛չ խաբեցաւ յԱքազու, Թէպէտ կեղծաւորուԹեամբ երկիւղած ցուցանէր զինքն և կամէր խաբել, այլ գիտաց մարգարէն զնորա խորհուրդն, որ ի դիւԹն էր և ի կուռքն էր և յայլազգին, որ զինքն տուեալ էր: Այլ զծածուկ սրտին Աքազու գիտաց մարգարէն: Որպէս և Քրիստոս, յորժամ զբժշկուԹիւնն առնէր, ասէր. «Թողեալ լիցին քեզ մեղք քո, արի՛ առ զմահիճս քո և գնա՛, և այլ մի՛ մեղանչէր» (հմմտ. Մտթ. Թ 5-6, Մարկ. Բ 9): Յորժամ զայս լսէին հրէայքն ի բերանոյն Քրիստոսի՝ բամբասէին[1] զՔրիստոս ասելով. «Ո՞վ է սա, որ զմեղս Թողու» (Ղուկ. Է 49): Եւ նա ճանաչէր զմիտս և զխորհուրդս նոցա, ասէր. «Զի՞ քրԹմնջէք ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրին է ասել՝ Թողեալ են մեղք քո, Թէ ասել՝ արի՛ և գնա՛» (Մարկ. Բ 8-9): Զայս ծածուկ խորհուրդս և մարգարէիցն ևս տայր ճանաչել, զի լսողքն[2] ուսցին, Թէ յերկնից՝ յԱստուծոյ իջեալ են հրամանքն: Եւ ԹէպէտԱքազ ո՛չ խնդրեաց նշան, սակայն ինքն յինքէնէ շարժեցաւ Աստուած, և ետ նշան ո՛չ Աքազու, այլ ընդ ժողովրդեանն խօսելով ետ: Եւ այս է նշանն որ ետ նոցա.*

**Ահա կոյսն[3] յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն[4] զանուն նորա** *(Է 14):*

*Այսինքն՝ Թէ ոմինչ որ կոյսն յղանայ և ծնանի, ի ձեզ երկիւղ ո՛չ գոյ, և զձեզ ԹաղաւորուԹիւնդ ո՛չ ոք կարէ յափշտակել ի*

---

1 C բանբասէին
2 C լսողքն
3 C կուսն
4 C կոչեսին

ձեզանէ և առնուլ: Այլ յորժամ կոյսն յղանայ և ծնանի, ապա թագաւորութիւնն Հրէայ ազգիդ կու խափանի, և այլ ազգի լինի թագաւոր: «Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի»: Հրէայքն ո՛չ հաւատան: Զի թէ կոյս չէր, որ ծնաւ, ապա նշանն ևս որ ետ՝ նշան չէր: Այլ կոյս էր, որ յղացաւ և ծնաւ զՔրիստոս: Վասն այն նշան ետ մարգարէն: Զի թէ ըստ հասարակաց կարգի էր և ըստ բնութեան ծնունդն, ապա այս ինչ նշան էր: Զի հասարակ ամենայն կին կու յղանայ յառնէ և կու ծնանի ըստ բնութեան կարգի, այլ նորայն ի վեր էր, քան զհասարակ կարգի և զբնութեան, զի կուսութեամբ յղացաւ առանց սերման և ծնաւ առանց երկանաց: Եւ այսպէս չքնաղ[1] և զարմանալի է տեսողաց և լսողաց, որ այլ ո՛չ եղեալ է և տեսեալ և լուեալ ումեք. վասն այն՝ նշան է: Զի այն, որ միշտ լեալ է յաշխարհի, և տեսեալ և լուեալ այն, որ նշան ո՛չ ասի և ո՛չ կոյս: Զի յօդ գիրն, որ է Նուն, որ ասէ «կոյսն յղասցի», զնշանաւորն և զմինն ցուցանէ, այսինքն՝ Մարիամ կոյսն, որ զՔրիստոս ծնաւ: Եւ զայս յաւետարանէն ուսցուք, զոր գրեալ է: Զի յորժամ առաքեցին Հրէայքն առ Յովհաննէս, ո՛չ ասացին յօդի. «Դու ես Քրիստոս», այլ յօդիւ, թէ՝ «Դու ես Քրիստոսն» (Մտթ. ԺԶ 16, Ղուկ. ԻԲ 66), որ զմինն ցուցանէ՝ զՔրիստոս զՈրդին Աստուծոյ: Զի թէ այսպէս ո՛չ էին ասացեալ՝ զբազումս ցուցանէր, զի Քրիստոս «օծեալ» թարգմանի: Եւ օծեալք բազում են յաշխարհի, զի թագաւորք այլ օծեալք են, զի իւղով օծանէին զնոսա, և զկաշին այլ իւղով կու օծեն: Այլ յօդիւ ասելով զմինն յատուկ ցուցանէ՝ զՅիսուս Քրիստոս յայլոցն բաժանելով: Եւ ո՛չ ասացին, թէ՝ «Դու ես մարգարէ», այլ թէ՝ «Դու ես մարգարէն», այսինքն՝ թէ մարգարէն, զոր Մովսէս ասաց, թէ՝ «Յարիցէ ի ձերում միջի՝ այն դու ես», զի Մովսէս ասաց. «Մարգարէ՛ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր ի միջի ձերում իբրև զիս, նմա՛ լուիջիք, թէ ինձ ո՛չ լսէք՝ նմա՛

1 C չգնաղ

լսեցէք» (հմմտ. Գործ. Գ 22, Է 37): Եւ նոքա ո՛չ գիտէին, թէ Քրիստոսն է այն, որ պիտի ի միջի նոցա յարիցէ, այլ մարգարէ գիտէին իբրև զնա կամ իբրև զայլ ի մարգարէիցն: Եւ ի սկզբան աւետարանին ո՛չ ասէ աւետարանիչն, թէ՝ «Ի սկզբանէ էր բան», այլ թէ՝ «Ի սկզբանէ էր բանն» (Յովհ. Ա 1), և ո՛չ ասէ միայն թէ՝ «Բան էր առ Աստուած», այլ թէ. «Բա՛նն էր առ Աստուած» (Յովհ. Ա 1), և ո՛չ թէ միայն՝ «Աստուած էր բան», այլ թէ՝ «Աստուած էր բա՛նն» (Յովհ. Ա 1), որ զանեղական ծնունդն Որդոյն ցուցանէ յառաջ քան զյաւիտեանս, և յետոյ նոյն բանն Հօր: Մարգացաւ և ծնաւ ի Կուսէն և մարմին եղև, որպէս և աստ մարգարէս ասէ. «Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի»: Զի մարգարէիս տեսանելն, որ ասէ «ահա», ո՛չ թէ հարևանցի տեսութիւն էր, որպէս մարդն յայս կոյս կամ յայն կոյս կու հայի և հարևանցի զիրն տեսանէ և գնայ, այլ հաստատութեամբ և անխախտ եռես: Զի մարդկան տեսութեան նման ո՛չ էր, զոր մարդիկք աչօք հային յիրն և տեսանեն, զի մարդոյս տեսութիւն բազում անգամ կու պատահի, որ կու սխալի աչքն, զճշմարիտն ո՛չ կարէ տեսանել, զի զայլ այլոց փոխան կու տեսանէ բազում անգամ: Իսկ շնորհք Հոգւոյն Սրբոյ, որ ի մարգարէսն էր բնակեալ, անվրէպ և անսխալապէս տայր տեսանել մարգարէական ականն: Եւ ընդէ՞ր ո՛չ ասաց մարգարէս նման աւետարանչին, թէ՝ «Ահա կոյսն յղասցի ի Հոգւոյն Սրբոյ և ծնցի որդի» (հմմտ. Մտթ. Ա 20-21), այլ թէ. «Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի»: Վասն այն ո՛չ ասաց, թէ՝ «ի Հոգւոյն Սրբոյ յղասցի», զի մարգարէութիւն էր այս և յետ բազում ժամանակաց կատարելոց էր: Վասն անհաւատութեան լսողացն և չարութեան նոցա ո՛չ ասաց այսպէս, զի մի զգիրն, որ ասէր և գրեր՝ այրեսցեն, զի մնալոց էր բազում ժամանակս, որ կարդային և լսէին և ուսանէին: Եւ երբ ժամանակն գայր, որ ծնանէր կոյսն՝ հաւատային, թէպէտ և ո՛չ հաւատացին յետոյ: Վասն այն ո՛չ ասաց ի Հոգւոյն զծնունդն երկիւղիւ, զի մի զգիրսն այրեսցին: Միթէ ի մարգարէքն ո՛չ

*խնայեցին, զի զոմանս սպանին և զոմանս քարկոծեցին՝ որպէս զԵրեմիայ, և զոմանս սղոցեցին՝ որպէս զնոյն մարգարէս զԵսայի, ապա քան ի առաւել ի գիրսն ո՛չ խնայէին, այլ այրեին[1] անխնայ: Որպէս ոմն ի չար թագաւորացն հրէից, Յերեմիայ մարգարէի ժամանակն, առաջի մարգարէի կոտորեաց զմատեանս և պատառ արար, և այսով ո՛չ բաւականացաւ, այլ ի հուրն ընկէց և այրեաց յաղագս [յ]անդգնութեանն և չարութեանն իւրոյ: Եւ թէպէտ զայս ո՛չ ասաց, թէ՝ «ի Հոգւոյն Սրբոյ յղանայ և ծնանի կոյան», և յորժամ կոյս ծնցի և կոյս մնասցէ, ուստի՞ այլ, եթէ ո՛չ ի Հոգւոյն Սրբոյ: Զի յայտնի երևի, զի Հոգովն Սրբով ծնաւ կոյան, քանզի զօրէնս լուծանել զբնութեանս արարչի բնութենէ:*

*Զծննդեն ասաց մարգարէն և զանունն այլ ևս ասաց, թէ՝ «Էմմանուէլ կոչեսցեն» (է 14): Եւ այս անունս ո՛չ ըստ դրութեան էր, որ կոչեցաւ Էմանուէլ, այլ ըստ դիպուածոյ անուն էր: Դրութեանն այն է, որ չունեննայ մարդ և կոչեն նմա, որպէս որ թագաւոր չի լինի մարդ և զանունն թագաւոր կու դնեն, և կամ պարոն չի լինի և զանունն պարոն կոչեն, և սուլտան չի լինի և սուլտան կու դնեն զանուն, և այլ այսպիսիք: Դրութեան անուն են այսքիկ, որ չունեննայ և կոչեն: Իսկ Քրիստոսի, որ Էմմանուէլ կոչեցաւ անունն, որ «մարդացեալ Աստուած» թարգմանի, դրութեամբ ո՛չ էր, իբր թէ՝ ո՛չ էր մարդացեալ Աստուած և կոչեցաւ Էմմանուէլ անուն նորա, այլ՝ էր ճշմարիտ Աստուած մարդացեալ: Վասն այն՝ ըստ դիպուածոյն կոչեցաւ անունն, որ այսպէս պատահեցաւ և դիպեցաւ, որ Աստուածն մարդ եղև և մարդն աստուածացաւ: [Է]մանուէլ կոչեցաւ, որ է մարդացեալ Աստուած: Որպէս մարդ, որ պատահի թագաւորութեան, որ թագաւոր լինի, յայնժամ թագաւոր կու կոչեն նմա՝ ըստ դիպուածոյն անուն: Որպէս Էմայ քաղաք «արդարութեան» կոչեն ըստ դիպուածոյն, զի յորժամ բարի թագաւորքն էին անդ. Դաւիթ և Ովսէէ՝*

---

1 C այրեցին

*օրհնեալն և Եղեկիայ՝ արդարութիւն, քաղաք արդարութեան էր: Իսկ ի ժամանակն չար թագաւորացն, որ ուղղութիւնն բարձաւ ի նմանէ և մեղօք և կռապաշտութեամբ լցեալ եղև, «քաղաք պոռնիկ» կոչեցաւ, որ ասէ. «Զիա՞րդ եղև պոռնիկ քաղաքն Հաւատարիմ Սիոն» (Ա 21): Յառաջն «քաղաք արդարութեան» ո՛չ էր նորա անունն, ոլ կռապաշտք էին բնակեալ, և յետոյ կոչեցաւ «քաղաք արդարութեան» ի բարեաց ժամանակն, և ի չարեաց ժամանակն «պոռնիկ» կոչեցաւ: Ըստ դիպուածոյ են այս անուանքս: Նոյնպէս վասն Բրիատոսի ասէ մարգարէս, ոլ կոչեցաւ Էմմանուէլ վասն ոլ մէնջ Աստուածն մարդ լինելոյն, ոլ յերկրի երևեցաւ մարմնով և ընդ մարդկան շրջեցաւ, և խնամեաց զմարդիկքս: Զի ո՛չ հրեշտակ և ո՛չ հրեշտակապետ, և ո՛չ ի սերովբէից և ո՛չ ի քերովբէից դասուց, որ ծայրք են իմանալեացն դասուցն, եկեալ արար փրկութիւն, այլ ինքն Տէրն էջ և արար զուղղութիւն, այսինքն՝ զփրկութիւն: Ընդ պոռնիկն և ընդ մաքսաւորսն խօսեցաւ, և զմեղաւորս ընդունելով և զաւակս, որ և զմոգն, առ ինքն ձգեաց, այսինքն՝ որ եկին յերկրպագութիւն և ի նա հաւատացին: Ընդ ամենայն չափս էանց, այսինքն՝ ընդ ամենայն ումեք խօսեցաւ և ուղղեաց զամենեսեան: Եւ որպէս և զբնութիւն մարդկան էառ և ընդ ինքեան միացոյց, նոյնպէս ընդ ամենեսեան խօսելով՝ քարոզեաց և ուղղեաց: Եւ զայս ամենայն յառաջագոյն տեսեալ մարգարէիս զծնունդն և զշահն, որ ի նմանէ լինելոց էր մարդկային բնութեանս, միով [էմ]մանուէլ անուամ[բ]ս բացայայտէ մեզ և պատմէ: Զի [էմ]մանուէլն ընդ մեզ «Աստուած» թարգմանի, զի Աստուծոյ ընդ մեզ լինելով՝ չի՛ք ուսաեք երկիւղ, կասկած: Թէ մարդ ի ճանապարհ գնայ և շատ մարդ լինի ի հետն կա՛մ ժ (10), կա՛մ ի (20), կա՛մ այլ աւելի, այլ չի վախէր կամ հոգալ կամ երկնչիլ, զի ուսաեք կասկած ո՛չ ունի՝ ի գողոյ կամ ի հարամոյ կամ ի սպաննելոյ: Եւ կամ թագաւորի ընկեր պատահի, ամենևին չի երկնչիր, զի ուսաեք կասկած չունի կամ երկիւղ, այլ անահ և անկասկած գնայ: Քան*

*ի առաւել երկիւղ կասկածի ո՛չ լինի, յորժամ Աստուած ընդ մեզ լինի, զի Աստուծոյ ընդ մեզ լինելովն անբաւ չարիքն քակտեցան և բարձան ի միջոյ: Եւ պատիժքն, որ ի վերայ բնութեանս էր յԱդամայ հետէ, լուծաւ ճանապարհ դրախտին, որ փակեալ էր յԱդամայ հետէ, որ մարդիկք ի վեր յերկինքն ո՛չ կարէր ելանել, և ի դրախտն դնալ: Բացաւ մարդակոտոր աւազակին, որ եմուտ ի դրախտն, և երկնից կամարքն բացան ի Յորդանան, որ ցելաւ երկինքն ի ժամ մկրտութեանն Քրիստոսի՝ Հայր վկայեաց, և Հոգին Սուրբ աղաւնակերպ էջ ի վերայ Քրիստոսի: Այլ ի նահատակութիւն սրբոյն Ստեփաննոսի բացեալ եղև երկնից կամարն, որ յայտնի ետես զՈրդին Աստուծոյ՝ կանգնեալ ընդ աջմէ Հօր: Իսկ իմանալապէս եղև, որ երկնից կամարքն յայտնեցան, զի մինչ ի Քրիստոս Հոգիք մարդկան ի դժոխքն գնային, և դալստեամբն Քրիստոսի՝ արդարոց Հոգիքն ի վեր կու ելանեն յերկինքն: Բուն արդարոցն՝ շու[ր]ջ զաթոռովն գնան, և միջակ արդարոցն՝ ի հոգոց կայեանքն[1], և մեղաւորացն՝ յօդն մնան: Եւ այսպէս երկնից կամարքն յայտնեցան արդարոցն, և մարդիկ ի հրեշտակաց դասն խառնեցան, և յաթոռն արքունական եհաս մեր բնութիւնս: Եւ մարմինն, որ ի մեր բնութենէս էր, նստաւ յաթոռն արթունական, իսկ մերս՝ եհաս միայն, այլ ո՛չ նստաւ զնստեալն յաթոռն յարքունական, այսինքն՝ յաթոռ յաստուածութեանն նորա միայն է: Դժոխոց կապանք կոտորեցան, այսինքն՝ իջանելով բանին Աստուծոյ ի դժոխքն զկապանքն, որ սատանայ կապեալ էր զհոգիքն հրեղեն կապանօք, լուծեաց Քրիստոս և սատանայ կապեաց այն կապանօքն, և զհոգիքն արձակեաց և եհան: Եւ մահու լոկ անունն մնաց, և երկիւղն բարձաւ ի միջոյ, զի յայնմ հետէ մանկունք աղարտ են և ի բաց ձգեն գնա: Զի բազում զմահ յանձն առին աներկիւղ և մեռան վասն Քրիստոսի:*

---

1 C կայեանքն

*Զայսոսիկ տեսեալ մարգարէս ցնծայր, և մխով էմմանուէլ անուամբ Համարի զբարին:*

*Ոմանք ի թարգմանչացն զկոյսն աղջիկ թարգմանեցին. «Ահա աղջիկն յղասցի և ծնցի»: Հրէայքն յայս հպարտացան և իւրեանցն նիւթ առին, թէ՝ «Զաղջիկն մայր Քրիստոսի կու ասէք» ասեն: Ո՛չ է իրաւացի զաղջիկն կոյս ասել, և նոքա անուսումն են և տգէտ, որ զայս ասեն, կամ են, որ չեն կարդայր և իմանայր, և կամ կարդան և հասկանալ ո՛չ կարեն: Վասն այն զայս այսպէս կու ասեն, զի աղջիկ ասելն ո՛չ արտաքսէ զկոյսն ի կոյս լինել, զի ամենայն կուսի աղջիկ ասեն, զի թէ կոյս լինի աղջիկն, կոյս ով կու ասէ, այլ ամենեքեան աղջիկ կու ասեն կոյս աղջկանն: Որպէս և Հռաբեկայ եղբայրքն ասացին. «Կոչեսցո՛ւք զաղջիկն և» (Ծննդ. Ի Դ 57): Այլ մեք թողցուք զնոցա թիւր բանն, այլ մեք ճշմարիտ ընկալցուք զմարգարէի՝ բանս յԱստուծոյ ի ձեռն մարգարէին ի կոյսն նշանակել հաւատացուք, և առաւել զաքանչելիսն ծանիցուք գեր ի վերոյ և մեծ նշան:*

**Ի խորութեան կամ ի բարձրութեան** *(Է 11):*

*Զի ի վերուստ և յԱստուծոյ Հօրէ զբանն ծանեալ, անժամանակաբար զնոյն թափեալ և ի կուսական որովայնն, և ծնեալ ըստ մարմնոյ՝ ո՛չ ի կամաց առն, այլ՝ յԱստուծոյ: Սուրբ Հոգւոյն զօրութեամբն մաքրեալ զամենասուրբն այն որովայնն, զի Հոգին Սուրբ մաքրեաց և սրբեաց զորովայնն Կուսին, և եատեղծ մարմին և կազմեաց, որպէս որ Բանին Աստուծոյ վայել էր, և ապա էջ Բանն Աստուած յարգանդ Կուսին: Եւ զայն մարմինն, զոր Հոգին Սուրբ մաքրեալ էր և կազմեալ, միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն և աստուածացոյց, և արար իւր մարմին ճշմարտապէս, որպէս ասացն Գաբրիէլ առ Կոյսն սուրբ. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» (Ղուկ. Ա 35): Եւ այսպէս ծնաւ Որդին Աստուծոյ յանարատէն՝ ի սուրբ կուսէն Մարիամու: Իսկ առնն Դաւթի յայս-*

*պիսի նշանեա հրաժարեաց, զոր ասացաւ տալ նոցա Աստուած ւասն ցանկութիւն ի կուռսն ունելոյ:*

*Սուրբ Աստուածածին, յորժամ ծնանելոց էր զՔրիստոս, զերկիւղ երկեացն մտօք կրեաց, այլ մարմնով ո՛չ կրեաց: Մտօքն կրեաց, զի նա այլ մարդ էր և ի մարդկային բնութենէս էր և գիտէր, որ ի ծնանելն առանց երկանց և աշխատանաց ո՛չ ծնանի կինն, այլ մանաւանդ բազումք ևս մեռանին ի ծնանելն: Եւ ինքն այլ յղացեալ էր, և ինն ամիս արգանդին կրէր մարմնով զՔրիստոս, և ի ժամ ծննդեանն ի կաւկածի էր և երկնչէր, թէ զիա՞րդ ծնանի, իսկ յորժամ ծնաւ Քրիստոս՝ առանց երկանց և աշխատանաց կոյան: Զի ծնաւ և կուսութիւնն անապական և անխախտելի մնաց: Զի որպէս անսերմն էր յղացումն, նոյնպէս առանց ապականութեան էր ծնունդն: Մանաւանդ զի և զծնանելն ո՛չ իմացաւ, զի մինչ յերկ[իւղ]ի կայր վասն ծննդեանն, թէ որպէս ծնանելոց է զմանուկն, եաես ի գիրկն բազմեալ զմանուկն: Աստուած էր միանգամայն և մարդ, որ յերկրի երևեցաւ և ի մարմնի գոլով, և յորժամ մարմին էառ՝ հարկաւորի և յայսմ:*

**Զի իւղ և մեղր կերիցէ** *(Է 15):*

*«Իւղ և մեղր»: Զհին և զնոր օրէնսն ասէ, որ կատարեաց, զի «եկի լնուլ և ո՛չ լուծանել» (հմմտ. Մտթ. Ե 17): Զի ասացաւն ի Հինն. «Մի՛ շնար» (Ելք. Ի 14), Քրիստոս հրամայեաց, որ հայի: Դարձեալ. ի Հինն ասացաւ. «Մի՛ սպանաներ» (Ելք. Ի 13), Քրիստոս հրամայեաց. «Մի՛ բարկանար»: Այս է լնուլն, զի ի Հինն խորհրդոց մեղքն ո՛չ էր մեղք նոցա, այլ ի գործոց մեղացն միայն արգելոյր օրէնքն: Իսկ Քրիստոս ի խորհրդոց մեղացն ևս կատարեաց. «եկի լնուլ և ո՛չ լուծանել» (Մտթ. Ե 17), այլ զնորն և զճշմարիտն ի վերայ այնր յաւելուլ: Զի մանուկն, որ ծնաւ, ո՛չ լոկ մարդ էր և ո՛չ Աստուած միայն, այլ՝ Աստուած մարդացեալ, բայց ո՛չ ի մարմին դարձեալ, այսինքն՝ զի ունէր զաստուածութիւնն լիով կատարեալ՝ որպէս յառաջ քան զմարմ-*

նանալն, նոյնպէս և ի մարմնի գոլով նոյն զօրաւոր և հզօր Աստուածն էր, ստեղծօղ, արարիչ, փրկիչ, կեցուցիչ, և այլն: «Իւղ և մեղր կերիցէ»: Զի մի՝ ի լսելն, թէ Աստուած մարդ եղև, ծնաւ ի Կուսէն, ախտանայցէ զՄարկիոնին և զվաղենտիանոսին, որ առ աչօք ասացին զմարդ լինելն, զի իբրև ի խողովակ, ասեն, անց: Զի որպէս ջուրն ի խողովակն անցանելով ո՛չ ինչ առնու ի նմանէ, բայց միայն զձևն, որ կու ձևանայ հետ փողրակին և ի դուրս ելանէ: Նոյնպէս ասացին այնպիսի հերձուածողքն վասն Քրիստոսի, թէ՝ «Իբրև ընդ խողովակ անցանելով և ծնանելով ի Կուսէն, զի ո՛չինչ, ասեն, ո՛չ էառ ի Կուսէն, ո՛չ ի հոգւոյն և ո՛չ ի մարմնոյն, բայց միայն զձևն, զի ձևացաւ և անց ընդ կոյսն»: Եւ սուտ ասեն նոքա: «Իւղ և մեղր», որ ո՛չ աստուածութեանն, այլ մերոյ բնութեանս, զոր առ մարմին վայել է: Զի ո՛չ մարդ ո՛չ վայրապար ստեղծ և բնակեցաւ ի նմա, այլ ինքն իսկ յղանալ յարգանդ Կուսին անձն առ: Ոմանք ասացին ի հերձուածողացն. «Զի յառաջն սոսկ մարդ յղացաւ և ծնաւ Կոյսն, և յետոյ ապա աստուածութիւնն ի նմա բնակեցաւ, և քանի աստուածութիւնն ի նմա էր, առնէր սքանչելիք, և երբ հեռանայր՝ մնայր սոսկ մարդն»: Եւ սուտ են, զի [ի] սկզբանէ յղանալոյն աստուածութիւնն ընդ նմա է՝ անբաժանելի ի մարմնոյն: Եւ մեռաւ և թաղեցաւ, և աստուածութիւնն ի մարմնոյն ո՛չ բաժանեցաւ, և յարեաւ նոյն աստուածութեամբն և համբ[արձ]աւ, և գալոց է ի դատաստան նոյն մարմնովն և աստուածութեամբն: Զի անբաժանելի է աստուածութիւնն ի մարմնոյն յաւիտեանս յաւիտենից: Դարձցուք ի կարդ բանին: Յղանալ յարդանդի յանձն առ, և ինն ամիս ժուժկալեալ յարգանդի Կուսին և ծնաւ, և ի խանձարուր պատեցաւ և ի մսուր եդաւ, և կաթամբ կուսական դիեցաւ: Եւ մարգարէս ասէ. «Իւղ և մեղր կերիցէ»: Զի կարկեսցէ զբերան այնոցիկ, որ զմարդեղութիւնն առ աչօք ասէին և զմարդ լինելն խափանէին: Զի ո՛չ զաճենայն ինչ այլակերպեաց, այսինքն՝ փոխեաց, և ո՛չ զամենայն ինչ հասարակեցոյց: Ի մարդոյ ծնա-

*նելն հասարակ էր մեր, իսկ առանց սերման՝ ի կուսէ, և զկուսութիւն ծնողին անխախտ պահել՝ այն ի վեր է և մեծ քան զմերս: Սնանելն կերակրօք բնութեանս մերոյ է, և անարատ ի չարեաց մնալ տէրունական մարմնոյն և նորա միայն է, և անվորձ մնալ ի կրից մեղաց ամենևին, որ է չքնաղ և զարմանալի, և նորա միայն է: Զի ո՛չ ի վորձ եկն չարին և ապա հեռացաւ, այլ ի բնէ՝ ի սկզբանէ էր կատարեալ յարդանդի մօրն: Ի սկզբնական և ի ներգործական մեղացն ի զատ էր, որպէս ինքն ասաց Քրիստոս. «Ո՞ յանդիմանեացէ զիս վասն մեղաց (Յովհ. Ը 46), և դարձեալ. «Գայ իշխան աշխարհիս այսորիկ, և զիւր առ իս ինչ ո՛չ գտանէ» (Յովհ. ԺԴ 30): Նոյնպէս և աստ ասէ մարգարէս յառաջին ամուցն անընդունակ չարին և ընտրող առաքինութեան: Եւ այս ի վեր է, քան զհասարակաց բնութիւնս, և մարդիկք մինչ չև յարբունս հասեալք են և ի չափ հասակի ո՛չ կարողանան առնել զայս, կամ ընտրել զինչ վատթարութիւն, կամ զինչ բանին լոյէ: Այլ յորժամ յարբունս հասնէ և մեծանայ, ազատաբար և անճնիշխան կամօք առնեն զընտրութիւն՝ թէ՛ կատմենան բարոյն կու հետևին և թէ՛ կամին՝ չարին: Իսկ աստուածային՝ այն, որ ինչ վայելչական է իւրում բարձրութեան, անգնալ է չարութեան և մեղաց: Բնութեամբ և հպարտութեամբ անհաւանի ինչ, որպէս և լոյսն ո՛չ հաւանի խաւար լինել և անուանիլ, և ո՛չ կեանքն՝ մահ, և ո՛չ բարին՝ չար, թէպէտ և մարդ եղև և ո՛չ ինչ նուազ, որպէս վայել է Աստուծոյ՝ անփորձ ի չարեաց, և հաւատարմացուցանէ: Յովհաննէս վկայէ. «Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29): Եւ որ զայլոցն բառնայ՝ ինքեան հարկ է անարատ լինել: Եւ զի հանդերձեալ էր մեռանել Քրիստոս, ի խաչ ելանել և մեռանել, զի մի՛ կարծիցեն վասն իւրոյ մեղաց հատուցնել զպատիժս վրիժուց: Յաճախ Պօղոս զմահն նորա մերոց մեղացն քաւութիւն ցուցանէ, զի ասէ. «Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց» (Ա. Կորն. ԺԵ 20), այլ ո՛չ մեռանի: Եւ թէ զոր մեռաւն միանգամ՝ վասն*

մեղաց մերոց մեռաւ. և այսպէս յաճախ յեղեղէ: Եւ մարգարէս և նոր օրինաց վարդապետք, այսինքն՝ առաքեալքն և մարգարէքն համաձայնին միմեանց, և քարոզեն զնորա մարդեղութիւնն: Մարգարէութեան նշան խոնարհի ի մարդկան վարս, այսինքն՝ մարգարէութիւնն վասն վարուց է, զի զոր ինչ գործեն մարդիկք՝ թէ՛ չար, թէ՛ բարի, զայն կու մարգարէանան. չարեացն՝ պատիժ և տանջանք, և բարեացն՝ հանգիստ և խաղաղութիւն: Զի յապաղել սովոր է Աստուած զեկս բարկութեան, որպէս և արագ է ի փրկութիւն: Զի սպառնալիքն, որ կու սպառնայ մեղաւորացն՝ տանջանք և չարչարանք, իսկոյն վաղվաղակի և փութ ընդ փոյթ, ի նոյն ժամն և ի նոյն ժամանակն չի կատարեր և ածել զպատուհասն և տանջել, այլ յապաղէ և յերկարէ ժամանակս ինչ, թէ դառնան, և թէ ո՛չ՝ ապա տայ զտանջանքն և չարչարէ: Իսկ զբարին, որ խոստանայ, փութով ի նոյն ժամանակն կու տայ: Եւ զայս իմացեալ չարին սատանայի, թէ շահ և օգուտ լինի մարդկան ի սպառնալեացն, որ մարգարէքն կու սպառնան մեղաւորացն տանջանքն հրամանաւ Աստուծոյ, և կու դառնան ի մեղացն և կու ազատին ի տանջանացն և շահ և օգուտ լինի՝ կու լինի նոցա, զի ի տանջանացն կու ազատին և զբարին կու վայելեն: Կու դրդէր և շարաւէր սատանայ զսուտ մարգարէսն և զկախարդսն, որ հեշտական բան քարոզէին՝ յուտել, յըմպել և ի չար գործել, զի պատիժ և տանջանք կրեսցեն յԱստուծոյ: Զի ասէին. «Տաճարն ի մէջ ձեզ է, և Մովսէսի աշակերտք են(ք), և այլ ձեզ տանջանք չկայ», և այլ այսպիսիս: Եւ ժողովուրդ[ք]ն առաւել լսէին ատոցն քան ճշմարտիցն, զի նոքա զհեշտութիւնն քարոզէին: Դարձեալ. սուտ մարգարէքն ասէին վասն այն. «Կրէք երբեմն զտանջանք և զպատուհասն, որ ո՛չ կատարէք զկռոց պաշտօնն և զհրամանն, զոր ինչ պատուիրէ ձեզ, և դուք կու պղերգանայք և լուծանայք», և այսպէս զպատուհասն ի դիւացն վարկանէին լինել՝ թողլոյն զպաշտօն նոցա: Վասն որոյ և զայս ևս բառնայ կարծիք յառաջագոյն մարգարէիւք գուշակել

տայ զպատուհասն, որ գալոց է վասն մեղաց, և մի՛ ի դիւացն վարկցին զպատիժն, այլ՝ յԱստուծոյ: Երկրորդ պատճառ. յառաջագոյն ասէին մարգարէքն հրամանաւն Աստուծոյ զպատիժն, զի թէ յայնժամն, որ զպատուհասն կրէին, պիտէր ասէին մարգարէքն, թէ ձեր մեղացն համար ետ Աստուած ձեզ զպատուհասդ: Յայնժամ պիտի ասէին նոքա, թէ դուք մարգարէք և գիտէիք յառաջագոյն, որ դեռ պատուհաս չէր եկեր մեզ, որ զչարն կու գործէք, յէ՞ր[1] չասացիք մեզ, որ մեք ո՛չ գործէաք զչարն, և ազատ էաք ի պատուհասէն, քան որ այժմ կու ասէք, որ բանն ի գլուխ ելաւ և պատուհասն եկ: Այլ այժմ յօդէաք և կցկցէք և շինէք բան և ասէք: Յայնժամ ասած պիտէիք, որ ի մեղք էաք անկեալ, զի մեք ո՛չ գիտէաք, թէ մեղք էր, և թէ գիտէաք ևս, զայս ո՛չ գիտէաք, թէ մեղացն համար պատիժ էր տալոց մեզ Աստուած: Եւ մեք անմեղադրելիք եմք: Մեղքն ձեզ է, որ ո՛չ զգուշացուցիք մեզ: Վասն Բ (2) պատճառիս յառաջագոյն մարգարէս համար՝ զգալոց պատուհասն ի վերայ նոցա, զի դարձուցին ի մեղաց իւրեանց և այլ, և զի մի՝ ի դիւացն վարկցին զպատիժն, որ ասացաւ:

Վասն ի նշանագործելն և ի սքանչելագործութիւնն, որ առնէր, նախ՝ ի փոքրագոյնն սկսաւ, և ապա՝ սակաւ սակաւ ի մեծագոյնն կատարեաց: Նախ՝ զհիւանդն և զբորոտն, և զկաղն և զկոյրն, և ապա՝ զծնէ կոյրն և զմեռեալն: Բազում անգամ կամեցան հրէայքն մահ գործել Քրիստոսի և ո՛չ կարացին: Մի՝ զի դեռ ժամանակն չէր մերձեցեալ[2], և Բ (2)՝ զի ո՛չ էր գրեալ ի մարգարէսն, թէ այլ յեղանակաւ մեռանի, որով կամ քարով, այլ խաչիւ մեռանելոց էր, զոր գուշակեցին մարգարէքն: Որպէս Դաւիթ ասէ. «Ծակեցին զձեռս իմ» (Սաղմ. ԻԱ 18) և «Կառք Աստուծոյ բիւրապատիկ[ք]» (Սաղմ. ԿԷ 18), և Ամբակում՝ «Ելեր դու ի կառս» (Հմմտ. Ամբակ. Գ 13): Իսկ այլ եղանակաւ ո՛չ էր

---

1 C յեր
2 C մերձեցիր

մեռանելոց, որպէս յԱբրահամ լերինն կամեցան քարաւէժ առնել, և ո՛չ կատարեցաւ կամքն նոցա: Զի խացակ մացակ քարշեցին ի վերայ միմեանց և ասացին. «Ելանել անդ և քարոզել, որ ժողովուրդն լսէ և հասկանայ զքո բանդ, իսկ ի ցածն քարոզես, նոքա որ յառաջադրեն՝ կու լսեն, և նոքա որ հետու են՝ ո՛չ կարեն լսել և հասկանալ, այլ ի բարձրն ամենևքեան լսեն», որ ելանէր, և փլէր քարն և անկանէր: Իսկ նա ծածկապէտ էր և պիտէր զչար խորհուրդս նոցա, թռեաւ ի մէջ նոցա առաջի ամենեցուն և էջ ի կափառնաումն (տե՛ս Ղուկ. Դ 29-31):

**Եւ թէ ասիցեն ձեզ. Խնդրեցէ՛ք զվհուկս և զգետնակոչս** (Ը 19) և այլն:

Յայնժամ հարցանելոյ ժամանակ լինէր, որ հարցանէին զմարգարէն վասն պատերազմի. թէ՝ յաղթեմք թէ ո՛չ, կա՛մ խաղաղութիւն, կա՛մ խռովութիւն, կա՛մ սովոյ կա՛մ լիութեան, կա՛մ այլ ինչ իրաց: Եւ զոր ինչ արժանի էին կրելոց՝ զայն յայտնէր Աստուած մարգարէիցն, որ պատասխանի տային նոցա և ասէին՝ կա՛մ սով, կա՛մ սուր, կա՛մ գերութիւն, կա՛մ մահ, կա՛մ պատերազմ և այլն, թէ՝ այսոքիկ պատահելոց [է] ձեզ վասն մեղաց ձերոց զոր գործեցիք, զի որդիքն Շամրնի ի կռապաշտութիւն էին անկեալ (տե՛ս Ովսէ ԺԴ 1), և երբեմն Յուդայեայն ազգքն այլ ի կռապաշտութիւն անկանէին: Յայնժամ դիւր ո՛չ թուէր նոցա բանք մարգարէիցն, ասէին, թէ՝ «Ճիշտ ո՛չ է ձեզ բանդ, և սուտ կու խօսիք և խաբեբայք էք», և այսպէս ո՛չ հաւանէին մարգարէիցն Աստուծոյ: Թողէին և առ դիւթան գնային և առ ստախօս, և սուտ մարգարէքն հարցանել զլինելոցն, թէ յառաջիկայս զի՞նչ պիտիր լինի կամ պատահի մեզ՝ չար թէ բարի: Վասն այն խրատէր Աստուած մարգարէիւն՝ ո՛չ յայնպիսիսն երթալ հարցանել, այլ օրէնսն, որ պատմեալ լինէր ի ձեռն մարգարէիցն՝ «առանց կաշառոյ» (համմտ. Ը 20): Զի ի դիւրսն և յայլսն, որ գնային, առանց կաշառոյ և ընծայից ո՛չ գնային, զի

*նոքա լինչս առնուլին ի նոցանէ, որ առ նոսա գնային: Որպէս որ այժմ ի գարընկէցն և ի ջրհայեցն գնալ և լինչ տան, և ապա ասեն զոր լինչ ասելոցն նոցա, իսկ մարգարէքն առանց կաշառոց ասէին զլինելոցն: Նոյնպէս և օրէնքն առանց կաշառոց ուսուցանէին, և նոքա թողլով զօրէնքն և զմարգարէքն՝ առ[1] դիւթն և կախարդան և զվհուկան և գետնակոչան և զրախսան երթային և կաշառս տային: Քանզի միշտ աներևոյթ իրաց ցանկան մարդիկք գիտակ լինել, զի զառաջակայն և զապագայն ցանկան մարդիկք միշտ, որ գիտենան թէ զինչ է լինելոց՝ չար թէ բարի: Քննեն և որոնեն և կամին, որ գիտենան զծածուկ և զանյայտնի իրաց գիտութիւնն, զի մի յանկարծ ի ներս վշտացն անկանիցին մարմնով՝ ո՛չ գիտելովն, այլ կամին յառաջագոյն գիտել, որ պատրաստին և չանկանին ի վիշտն: Եւ այս է պատճառն, որ միշտ աներևոյթ և ծածուկ իրացն ցանկան մարդիկք յառաջագոյն: Զի մարդն յառաջ քան զպատուիրանզանցութիւնն մարգարէութեան շնորհք ունէր, որ զառաջակայն կարէր իմանալ և գիտել, և պատուիրազանցութեամբն կորոյս զմարգարէութեան շնորհն: Եւ այժմ յաշխարհիս թէպէտ ո՛չ ունի զմարգարէութեան շնորհն, որ զառաջակայն կարէ իմանալ, այլ սակայն նշոյլքն մնաց առ մարդիկք, որ կու ցանկան զապագայն գիտել և իմանալ: Թէպէտ ո՛չ կարեն իմանալ, սակայն նշոյլք ցանկութեանն մնաց առ մարդիկք, որ կու ցանկան իմանալ և քննել: Նոյնպէս քահանայութեան շնորհքն ունէր յառաջն և կորոյս, սակայն նշոյլքն մնաց ի մարդն: Զի քահանայութեան շնորհն այն է, որ սուրբ լինէր մարդն և սրբութեամբ կենայր, և այժմ մարդիկք կամին սրբել զմարմինս իւրեանց ջրով, և պճնին և զարդարին: Նոյնպէս և մեծութեան և իշխանութեան ցանկան, թէ յետ ո՛չ կարեն լինել: Յառաջագոյն ետ Աստուած նշան խաղաղութեան և խռովութեան: Խաղաղութեան՝ զծնունդն էմմանուէլի, որ ի*

---

1 Ս և առ

*շէն պիտի կենայը Հրէաստան, և թագաւորութիւնն՝ հաստատ, մինչ որ էմանուէլն ծնանի, և ապա բարձցի թագաւորութիւնն ի նմանէ, և մատնին ի գիտութիւնն Տիտոսի: Եւ խոտորութեան նշան եւ զՈրդին մարգարէին, և զանունն այլ եղ, ասաց.* «Արագ արագ կապտեսջիը, և վաղվաղակի գաւաը հալկանիջիը» *(Ը 3): Յորժամ մանուկն ծնանէը ի մարգարէ կնոջէն, յետ կե (65) ամին գերի գնալոց էին ի ձեռն Սաղմանասարայ և աւերելոց: Զայս եւ նոցա նշան, զի մի կարօտիցին դիւթից պատրողացն և գնասցին առ նոսա: Զի այս բաւական նշան էր նոցա ի տանէ Աստուծոյ տուեալ: Իսկ նոքա զայսպիսի նշանս թողին և գնացին առ դիւթն, և անձամբ անձին ածին զչարիս ի վերայ ինքեանց: «Վհուկն» հարցանողքն են, որ լինէին պաշտօնեայք կռոցն և ի նոցանէ, այսինքն՝ ի կռոցն հարցանէին զլինելոցն: Դարձեալ. «վհուկն» այն է, որ չար գևն ի կանայս մտանէը և խօսէը ընդ որովայնս նոցա, այսինքն՝ քովն ի դուրս ի կուշան: «Գեանակոչն» այն է, որ ի ներքոյ կռոցն կամ ի ներքոյ ծառոց ծածուկ լինէը գետին, և յայնմանէ խօսէը գևն, «պրախօսն» (Ը 19)՝ զի վայրախօսն է, որպէս գարընկէցք, «հաւագետն»՝ որ զձայնս ձագաց և ագռաւոց և զայլոցն դիւթեն: Իսկ «պրախօսն» և «ընդ վայրախօսն» և «որովայնակոչն» (Ը 19) այն է, որ գևն մտանէը ի մեռեալն և նովաւ ընդ վայր և սուտ բարբառէը: Վասն որոյ ասէ*[1]*.*

**Զի՞նչ խնդրիցեն վասն կենդանեաց ի մեռելոց անտի** *(Ը 19):*

*Կենդանի նոքա են, որ հարցանէին, իսկ մեռեալ կամ զգևն կոչէ, զի նոքա մեռեալ են յաստուածպաշտութենէն և յամենայն բարեգործութենէն*[2]*: Դարձեալ. զմեռեալն կոչէին*[3]*, զի զմե-*

---

1 AB *չիք* և յայտնեաց մսրգարէին՝ Աքազու պատմեաց (Է 10)... վասն որոյ ասէ *(տե՛ս աստ. էջ 125)*

2 A բարէգործութենէ, B բարի գործութենէ

3 A կոչէ մեռեալ

*ռեալն*[1] *կոչէին՝ վասն կենդանեացն հարցանէին: Եւ մեռեալն ի՞նչ գիտէ յաշխարհէս*[2]*, ո՛չ կարեն գիտել թէ ինչ*[3] *լինելոց է յաշխարհս կամ ինչ պատահելոց: Իսկ մեռեալն, որ մեռեալ*[4] *է*[5]*, և մարմինն ի գերեզմանին հող է դարձեալ*[6]*, և հոգին*[7] *ի դժոխքն է գնացեալ, ո՛չ կարէ*[8] *գիտել, թէ ինչ գործ գործի ի վերայ երկրի՝ չար թէ բարի կամ այլ ինչ: Իսկ նոքա զմեռեալն կոչէին և խնդրէին բան ինչ հարցանել: Թէ մեռեալն լիներ կոչեցեալն՝ ո՛չ ինչ կարէր գիտել, որպէս ասացի, այլ կոչեցեալն*[9] *ո՛չ էր ի մեռելոց, այլ ի մեռելի կերպարանն դևն երևէր, զոր ինչ մեռեալ, և*[10] *խնդրէին մարդիկք*[11]*:*

---

1 B մեռեալն
2 A յաշխարհիէս զի նոքա որ կենդանիքն են ի վերայ աշխարհիս
3 B զինչ
4 A մեռեր
5 A են
6 B դարձեր
7 A հոգիքն
8 AB կարեն
9 B կոչեալն
10 A որ *փխ* և
11 A մարդիք, C *չիք* Զի՞նչ խնդրիցեն վասն կենդանեաց ի մեռելոց անտի (Ը 19)... զոր ինչ մեռեալ որ խնդրէին մարդիկքն (*տե՛ս աստ, էջ 139*): *Ձեռագրում (թերթ 150բ-152ա) այս հատվածն այսպես է.* «Վհուկն դև իմն է չար, որ յորովայնէ կանացս խօսիցի: Զայս առնէր սատանայ, զի այսով զիւր չարիքն որ խօսէր՝ կամէր հաւատարմացուցանել ի յականջս լսողացն: Վասն այն՝ յորովայնէ կնոջն խօսէր, իբր թէ նոր բան է այս և արտաքոյ բնութեան: Եւ այսու զգոյշ և զգարգամիտ մարդիկքն հաւանեցուցանէին ինքեան: Զի նոքա, որ տգէտն էին, տեսանէին և լսէին զայս, հաւանէին նոցա ստութեան: Գետնակոչն հաւագէտն է, զի դևն մտանէր ի հաւն և զանազան ձայնս արձակէր, և նոքա պատմէին, թէ զինչ էր ձայն նոցա և զինչ նշանակէր: Գետնակոչն, դարձեալ, այն է, որ զմեռեալն ի գետնէն կու հարցանէ և ի դուրս բերէ, որ գան և խօսին առ մարդիկք թիւր և ծուռ: Ո՛չ թէ զմեռեալն կարէ յարուցանել, այլ նմանութեամբ առնէ, զի ի մեռելի կերպարանն կերպարանի դևն և երևի, և նոքա, որ տգէտքն են, գիտեն թէ իւրեանց մեռեալն է, այն՝ որ մեռանելով գնացեր է: Եւ այս ինարք դիւաց են, զի զայս առնեն, կամեն կարծեցուցանել, թէ զհոգիս մեռելոցն կոչել կարեն և յարուցանել, որպէս զի զդատաստանացն զպատճառս դողացի: Եւ թէ այս ո՞րպէս [է]: Զի զայն մեռեալն, որ զկերպարանն երևեցուցանէր, թէ մեղաւոր էր այն մարդն և չարագործ, որ մեռեալ էր, և յայն կերպարանն երևէր դևն, և հարցանէին մարդիկք, թէ՝ «Ո՞նց է քո հալդ յայն կեանքն, ուրա՞խ ես, տրտո՞ւմ ես, հանգի՞ստ ես, թէ՞ չարչարանք»: Յայնժամ պիտիր ասէր դևն, թէ՝ «Լաւ եմ, [ի] հանգիստ եմ և յուրախութիւն», և այլն: Յայնժամ մարդիկք, որ զայս լսէին, պիտիր թերանային, թէ՝ «Մեք գիտեմք, որ այս մարդս մեղաւոր էր և չարագործ, և ասէ զինքն ի հանգստեան: Թէ այսպէս է, որ մեղաւորաց տանջանք և չարչարանք չէ կացեր, սուտ է որ ասեն, թէ մեղաւորացն տանջանք և չարչարանք կայ»: Իսկ թէ արդար էր մեռեալն, յորոյ կերպարանք երևեցուցանէր, յորժամ հարցանէին մարդիկք պիտէր ասէր. «Իմ կեանքս խիստ դժար է յայն կեանքն, զի չարչարեն զիս և տանջեն»: Պիտի ասէին մարդիկք, թէ՝ «Ստոյգ գիտեմք, որ այս մարդս արդար էր, և ասէ զինքն ի տանջանք և չարչարանք: Ապա սուտ է, որ ասեն, թէ

**Զօրէնս յօգնականութիւն եղ Աստուած** *(Ը 20)*:

*Վճիռ տան օրէնքն յամենայն վնասէ*[1] *հրաժարել և յորմէ արգելու Աստուած: Եւ յորժամ լսիցես, թէ այս ինչ յանցանք արգելեալ և փակեալ է օրինօք, բաւական է անցուցանել զմտացդ*[2] *կիրս և սուզանել*[3] *զխորհուրդսդ*[4]*:*

*Ի Զաբողոնի և ի Նեփթաղիմայ ցեղէն են սուրբ*[5] *առաքեալքն՝ Պետրոս և Անդրէաս, Փիլիպպոս*[6]*, որպէս մարգարէս ասէ.*

**Երկիր Զաբուղոնի**[7] **և երկիր**[8] **Նեփթաղիմ[այ]. Գալիլեայ հեթանոսաց** *(Թ 1)*:

*Եւ Տիբերական ծովուն բոլորն է երկիրն Նեփթաղիմայ և Զաբողոնի, և Իսրայէլացոց երկիրն վերքն է և հեթանոսաց սահմանակից է, և «յայն կոյսն է Յորդանանու» (Թ 1): Եւ մարգարէն Դաւիթ այլ վկայէ, որ յայն աղգէն Դ (4) առաքեալս ասելով՝ «իշխանք Յուդայ՝ առաջնորդք*[9] *նորա, իշխանք*

---

մեղաւորացն տանջանք է պատրաստեալ և արդարոցն փառք և հանգիստ»: Թէ այսպէս էր, սոցա այսպէս ո՛չ պատահեր, որ արդարն տանջէր և մեղաւորն հանգիստ կայր: Ապա դիպուածք է, ո՛չ բարեացն հանգիստ կայ, և ո՛չ չարեացն պատիժ: Այլ դիպուածք է և պատահումն: Զի երբեմն պատահի, որ մեղաւորն ի հանգիստ և [յ]ուրախութիւնն գնայ, և երբեմն պատահի, որ արդարն ի տանջանքն գնայ: Եւ յորժամ այս այսպէս է, որ պատահումն է, զի՞նչ օգուտ ի բարիս գործելոյն և զի՞նչ վնաս ի մեղաւորացն: Զի թէ բարեգործ է մարդն և պատահի, որ ի տանջանք գնայ՝ բարեգործութիւնն չի ազատէր, և թէ մեղաւոր է և ի հանգիստն գնայ՝ մեղքն չի արգելոյր: Իսկ մեկնիչն ասէ. «Մեք այսպէս եմք, յորժամ ելանիցէ հոգին ի մարմնոյն, յընտեմարանս ուրեմն երթեալ դադարէ, այսինքն՝ ի հոգոց կայ[ե]անքն, ուստի չէ հնար ելանել մինչև յօրն դատաստանին»: Եւ թէ ոմանք ի մեռելոց յարեան, այն սքանչելեաց բան է, այն յայս հաշիւս ոչ է, այլ մեք գիասապրակ բնութեանս ասեմք: Իսկ դնն հակառակ ցուցանել, զի ասէ, թէ հոգին որ ելանէ ի մարդոյն՝ յոսկերն բնակէ, և ո՛չ միայն յոսկերս, այլ և ընդ վայր յածի, յորկողմն որ պիտի՝ անդ շրջի, և ընդ իշխանութեամբն Աստուծոյ ո՛չ է ի մի տեղի դադարեալ, և ո՛չ վասն չարութեան պատիժս կրիցէ, որոց չէ պարտ հաւանել, թէպէտ և այնպէս կերպա[րան]ս և են: Զի վհուկն հան երբեմն Սաւուղի Աստուծոյ թոյլ տալովն: Այս գրած է յառաջաբանութեան գրոցս»:

1 C վնասակարէ *փխ* վնասէ
2 A զմտացտ, B զմտաց
3 AB սուզել
4 C զխորհուրդսն
5 B երկու *փխ* սուրբ
6 B Փիլիպոս
7 B զերկիր Զաբողոնի
8 B զերկիր
9 A յառաջնորդք

Ջաբուղոնի[1] և իշխանք[2] Նեփթաղիմայ» (*Սաղմ. ԿԷ 28*): «*Իշխանք*[3]» զառաքեալսն[4] ասէ, որ յայն ազգէն Դ (4) առաքեալս, և աւետարանիչն Մատթէոս և Յոհաննէս այլ ասեն յայն ազգէն և յայն գաւառէն, այսինքն՝ Իսրայէլացոց երկրէն կոչեաց զՊետրոս և զԱնդրէաս յաշակերտութիւն[5] և զայլն[6]:

Վասն է՞ր ուրախ լինի Աստուած ի գիւտ փրկելոցն[7]: Նախ[8], զի կորուսեալ էր և գտեալ եղև, զի այն իրն, որ կորուսի, և գտանեն, ի վերայ նորա[9] առաւել ուրախանան, քան ի վերայ նոցա, որ չէ կորուսեալ: Որպէս որ ի տասն դրամէն մինն կորուսեալ և գտեալ եղև՝ ուրախացաւ և[10] կոչեաց զբարեկամս[11] և զդրացիս[12] և ասէ[13]. «Ուրա՛խ լերուք ընդ իս, զի գտի՛ զդրամն իմ զոր կորուսի» (*Ղուկ. ԺԵ 9*): Եւ ի Ճ (*100*) ոչխարէն մինն, որ կորուսեալ[14] էր, յորժամ[15] գտաւ և եհան ի վեր յերկինքն, կոչեաց զերկնային զօրքն զհրեշտակքն[16] և ուրախացոյց վասն կորուսելոյն, որ գտաւ (*տե՛ս Մտթ. ԺԸ 12-13, Ղուկ. ԺԵ 3-7*): Երկրորդ՝ զի թերին և պակասն լցուի[17]: Զի յորժամ թերի և պակաս[18] լինի իրն, տրտմութիւն է, և յորժամ թերին և պակասն լցուի՝ ուրախանան: Երրորդ՝ զի յաւելաւ, վասն որոյ[19] ի գիւտ փրկելոցն ուրախ լինի Աստուած: Եւ այս սեպհական[20] է Աստու-

---

1 B Ջաբողոնի
2 A իշխանքն
3 B իշխանս
4 A զառաքեալն
5 B կոչեաց յաշակերտութիւն
6 C *չիք* Ի Ջաբողոնի և ի Նեփթաղիմա ցեղէն են... և զայլն
7 B փրկելոցս
8 AB մի *փխ* նախ
9 A այնոր *փխ* նորա
10 B ուրախացեալ *փխ* ուրախացաւ և
11 A զբարեկամն
12 A զդրացիսն, C զդրացին
13 AB ասաց
14 B մոլորեալ *փխ* կորուսեալ
15 B որ յորժամ
16 AC զհրեշտակք
17 A լցի
18 B *չիք* լցուի զի յորժամ թերի և պակաս
19 AB այն *փխ* որոյ
20 B սեպհական

*ծոյ, որ Հանապազ ուրախ լինի ի վերայ նոցա, որ գառնան և ապաշխարեն:*

*Հին օրէնքն ծանր լուծ էր: Նախ*[1]՝ *զի ծանր էր և ո՛չ կարէին կատարել զամենայն: Եւ յորժամ ո՛չ կարէին կատարել*[2]՝ *ի ներքոյ անիծից մնային, զի գրեալ էր յօրէնսն.* «Անիծեալ լիցի[3], որ ո՛չ կատարէ զամենայն օրէնսն, զոր ինչ գրեալ է» *(Հմմտ. Գաղատ. Գ 10): Երկրորդ՝ և թէ լինէր, որ ոմանք ջանային և*[4] *աշխատութեամբ կատարէին զօրէնքն*[5]*, ո՛չ կարէր արդարացուցանել, զի անկատար*[6] *էր: Զի զսկզբնական*[7] *մեղքն ո՛չ կարէր բառնալ, և զայլ մեծամեծ մեղքն ո՛չ կարէր թողուլ, յարքայութիւնն ո՛չ կարէր տանել, և ի դժոխոցն*[8] *ո՛չ կարէր ազատել*[9]*, զի մեռանէին և գնային ի դժոխքն: Եւ այսպիսի ծանր լուծ էր օրէնքն ի վերայ պարանոցի հրէից*[10]*: Զայսպիսի ծանր լուծս*[11] *Քրիստոս իւր գալստեամբն յաշխարհս*[12] *ի բաց*[13] *եբարձ ի*[14] *հրէից, և զաւետարանական և զնոր օրէնքս*[15] *շնորհեաց, որ քաղցր է և թեթև, որպէս ինքն ասաց.* «Լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի» *(Մտթ. ԺԱ 30): Եւ ծանր լուծ էր ի վերայ պարանոցի հեթանոսաց կռապաշտութիւնն և պոռնկութիւնն և սպանութիւնն, որ կռոցն զոհէին զուստերքն և զդստերքն*[16] *իւրեանց, և զայլս: Իսկ*[17] *Քրիստոս իւր գալստեամբն ի բաց եբարձ ի հեթանոսաց*

---

1 AB մի *փխ* նախ
2 B *չիք* և յորժամ ոչ կարէին կատարել
3 B է *փխ* լիցի
4 BC *չիք* և
5 AB զօրէնսն
6 B անկար
7 AB սկզբնական
8 B դժոխոց *փխ* ի դժոխոցն
9 B ազատիլ
10 B պարանոց հրէից
11 A լուծն
12 B յաշխարհէս
13 B *չիք* ի բաց
14 C *չիք* ի
15 B օրէնքն
16 B զուստերս և զդստերս
17 AC զայլ (C զայս այլ) *փխ* և զայլս: Իսկ

*զկռասպաշտուԹիւնն և զայլ ամենայն մեղք, և ազատեաց յայնպիսի ծանր*[1] *լծոյն:*

**Զի**[2] **զամենայն պատմուճան ժողովեալ նենգուԹեամբ և զհանդերձս՝ տուգանօ՛ք տուժեսցին** *(Թ 5):*

*Նախ՝ ընդդէմ հրէից քահանայիցն և իշխանացն և մեծամեծացն ասէ զայս բանս մարգարէն*[3] *Եսայի, որ մերկացուցանէին ի հանդերձէ և յոսկոյ և յարծաԹոյ և յամենայն ընչից զժողովուրդն և առնուին: Եւ օրէնքն ո՛չ էր փոյԹ*[4] *նոցա ԹէՀ պահէին, ԹէՀ՝ ո՛չ: Զայն, զոր ինչ նենգուԹեամբ և անիրաւուԹեամբ ժողովեցին և առին, տուժեցին յետոյ ի ձեռն Հռոմայեցոցն: Վասն այս պատճառիս, որ զժողովուրդն զրկեցին և ի Քրիստոս ո՛չ Հաւատացին, զիւրեանց պատիժն կրեցին ի ձեռն Հռոմայեցոցն, որ Տիտոս և Վասպիանոս աւերեցին զնոսա: Զոմանս սպանին*[5] *և զոմանս աւերեալ*[6] *փախուցին, ոմանք ի սովուն սատակեցան, զոմանս գերի վարեցին և տարան*[7]*, և այնպէս ցիր և ցան արարին զնոսա: Երկրորդ՝ առնու բանս ի վերայ սատանայի: Այսպէս և սատանայ պատրանօք ի մէնջ ի բաց եբարձ զպատմուճանն անապական: Եւ զայս*[8] *երկու կերպիւ*[9] *իմացիր. պատմուճան՝ ԹէՀ զլուսեղէն պատմուճանն իմանաս, որ Ադամ զգեցեալ*[10] *ունէր ի դրախտին, և սատանայ խաբեաց և մերկացոյց, յարմարի*[11]*, զի այսպէս է*[12]*, զոր ասէ: Եւ ԹէՀ պատմուճան զայս,*

---

1 A ի ծանր
2 C մի *փխ* զի *(տե՛ս 161ա թերթում)*
3 A մարգարէս
4 C փութ
5 C սպանին
6 AC զոմանս *փխ* և զոմանս աւերեալ
7 B *չիք* և տարան
8 AB այս
9 B կերպիւս
10 A զգեցեալ
11 C կու յարմարի
12 AB *չիք* է

որ[1] աւազանաւն մկրտեալք[2] դարձեալ զգենուն[3] զլուսեղէն պատմուճանն, և յայսմանէ այլ մերկացուցանէ[4] սատանայ զոմանս ի մարդկանէ: Այս ևս[5] ճշմարիտ է: Զայսոսիկ ստուգանօք պիտի[6] պահանջի, որպէս հրէայքն ի հռոմայեցոցն, և սատանայ ի վերջին տարտարոսն և[7] ի հուր գեհենին: Տե՛ս, որ սատանայի[8] տանջանքն, որ ի կատարածի յանշէջ հուրն է տանջելոց, վասն առաջին յանցանացն ո՛չ է, որ յերկինքն[9] մեղանչեաց և հակառակեցաւ ընդդէմ Արարչին, այլ վասն մարդկան մեղաց է, որ յաշխարհս զմարդիկք[10] խաբէ[11] և ի մեղաց ձգէ[12], և չար գործել տայ[13]: Վասն այս պատճառիս[14] տանջէ զնոսա Աստուած ի վերջին աւուրն և ի կատարածի[15], ի հուրն անշէջ: Զի այն առաջին յանցանացն, որ յերկինքն ընդվզեցաւ ընդդէմ Աստուծոյ իւրոյ և ստեղծողին[16], անօր[17] պատիժն այն է, և փոխարէնն, որ յերկնից ի վայր ընկէց Աստուած զնոսա յերկիրս ստորին, և յերկնային խորանացն և ի վայելչութենէն զրկեաց զնոսա[18]: Իսկ թէ յաշխարհս, որ անկաւ, դադարեալ էր[19] ի չարեացն և մարդկան[20] չարի պատճառ չէր եղեալ[21], և զմարդիք

---

1 AB ևորր *փխ* որ
2 AB մկրտեալքն
3 C կու զգենուն
4 C կու մերկացուցանէ
5 AC այլ *փխ* ևս
6 AB տի
7 AC *չիք* և
8 C սատանայ
9 AB յերկին
10 B զմարդիկ
11 C կու խաբէ
12 B խելաց հանէ *փխ* մեղաց ձգէ, C կու ձգէ
13 C կու տայ
14 B պատճառի, C պատճառիս է որ
15 B *չիք* ի կատարածի
16 B ստեղծօղին
17 AC այնոր
18 B *չիք* և յերկնային խորանացն ի վայելչութենէն զրկեաց զնոսա
19 AB դադարէր *փխ* դադարեալ էր
20 B մարդոյ
21 A եղեր

*խաբէր*[1] *և ի մեղքն ո՛չ էր ձգեալ*[2]*, այլ տանջանք չկայր*[3] *նոցա, մանաւանդ թէ զմարդիւք խրատեալ էր*[4] *զԱդամ և ասացեալ*[5]*, թէ՝ «Մեք մեղանչեցաք յերկինքն, և Աստուած զմեզ պատժեաց, և յերկնային*[6] *փառացն զրկեաց և ի վար ձգեաց*[7] *յայս*[8] *աշխարհս*[9]*: Եւ*[10] *դուք ժիր կացէք, և զոր ինչ Աստուած ձեզ պատուէր ետ*[11]*՝ պահեցէք, և Աստուծոյ հնազանդ կացէք և զԱստուած*[12] *օրհնեցէք, որ զձեզ չպատժէ: Ապա թէ անցանէք զպատուիրանաւն, որպէս որ*[13] *ի մեզ չխնայեաց և պատժեաց*[14]*, և զձեզ իսկ*[15] *ո՛չ*[16] *խնայէ, այլ*[17] *պատժէ»: Թէ այսպէս էր արարեալ*[18]*, որ ինքն այլ չէր մեղանչէր և զմարդիք ի մեղքն չէր ձգէր, և առանց մեղաց էր մնացեր: Մեծ ոմն էր սատանայ: Ասէ Իգնատիոս մեկնիչն, թէ՝ «Այսպէս էր արարեալ*[19]*, զի զանմահութիւն ունէր, զի անմահ էր և չի պիտէր*[20] *մեռանէր, և այլ տանջանք չուներ, և այնպէս անմահ մնալոց էր ի վերայ աշխարհի, և առանց տանջանաց զաշխարհս*[21] *վայելոց էր*[22]*»: Իսկ նա զայս ո՛չ արար և ո՛չ կամեցաւ, այլ գնաց առ Ադամ և խաբեաց, զի յերկինքն*[23] *զչար գործեաց: Եւ յորժամ յերկիր անկաւ, ի չա-*

---

1 C *չիք* և զմարդիք խաբէր
2 AB ձգէր *փխ* ոչ էր ձգեալ
3 A չկար
4 AB խրատեր *փխ* խրատեալ էր
5 AB ասացեր
6 A երկնայինն
7 C վայր ընկէց *փխ* վար ձգեաց
8 B *չիք* յայս
9 AB յաշխարհիս
10 AC *չիք* և
11 AB պատուիրան է դրեր *փխ* պատուէր ետ
12 A Աստուած
13 C *չիք* որ
14 C ոչ խնայեց և պատժեց
15 AC ի ձեզ *փխ* զձեզ իսկ
16 A չպիտիր *փխ* ոչ
17 B *չիք* ոչ խնայէ այլ, C և *փխ* այլ
18 AB արարեր
19 AB արարեր
20 C չպիտէր *փխ* չի պիտէր
21 A և զաշխարհիս
22 C *չիք* ի վերայ աշխարհի... վայելոց էր
23 A երկինքն, B յերկինք

*բեաց ո՛չ դադարեցաւ*[1]*, զի հակառակ էր Արարչին: Եւ Արարչին ո՛չ ինչ կարէր առնել: Գնաց նախանձեցաւ ընդ Ադամայ, որ պատկեր էր Աստուծոյ, և խաբեաց և մեղանչել ետ և հանել ետ*[2] *ի դրախտէն: Եւ յետ Ադամայ ընդ որդիսն պատերազմեցաւ, և զմինն միոյն սպանանել ետ: Եւ յետ այնորիկ*[3] *ընդ թոռունքն նորա*[4] *պատերազմեցաւ՝ ի Նոյեան*[5] *ժամանակն, և ձգեաց զմարդիք ի պոռնկութիւն և ի պղծագործութիւն, մինչև*[6] *որ*[7] *բարկացաւ Աստուած և ջուր ջրհեղեղի եբեր, և զամենեսեան առ հասարակ ջնջեաց յաշխարհէ*[8]*: Եւ յետ ջրհեղեղին ի*[9] *կռապաշտութիւն ձգեաց սատանայ զմարդիք և մոլորեցոյց յԱստուծոյ, և ի զանազան չարիք ձգեաց և զամենեսեան*[10] *յինքն գրաւեաց: Եւ որքան կենդանի էին մարդիք՝ կռապաշտութեամբ և զոհագործութեամբ և զանազան մեղօք չարչարէր, և յորժամ մեռանէին՝ զհոգիքն ի դժոխքն տարեալ չարչարէր: Զի սատանայ շրջագայեցաւ յամենայն տեղիս*[11] *ի վերայ երկրի և ի ներքոյ երկրիս, և եգիտ անդ դժուարին տեղի*[12] *մի՝ քարայր նեղ և անձուկ*[13] *և խաւարային տեղիք, և եղ*[14] *անդ զաթոռ*[15] *թագաւորութեան իւրոյ*[16] *և անդ բնակեցաւ, և զհոգիքն զամենայն*[17] *անդ ժողովեաց և տանջէր դառնապէս*[18]*: Եւ որքան կենդանի մարմնով*

---

1 AC դադարեաց
2 A երեւ, C հան *փխ* հանել ետ
3 A այնոր
4 B *չիք* նորա
5 B Նոյեա
6 C մինչ
7 B *չիք* որ
8 B ջրհեղեղաւ զամենայնսն կորոյս *փխ* ջուր ջրհեղեղի եբեր և զամենեսեան առ հասարակ ջնջեաց յաշխարհէ
9 B *չիք* ի
10 B զամենայնսն
11 A տեղիք
12 A տեղիք
13 AB անձուկ
14 A եդիր զիւր
15 A աթոռ
16 A *չիք* իւրոյ
17 B ամենայն
18 C *չիք* զի սատանայ շրջագայեցաւ... տանջէր դառնապէս

*յաշխարհիս*[1] *տանջէր, և այնքան յաճախեաց ի չարիքն*[2]*, մինչ*[3] *որ շարժեցաւ Որդին Աստուծոյ յաթոռոյ աստուածութեանն*[4] *և էջ յերկնից յերկիր, և մարմնացաւ*[5] *ի սուրբ և յանարատ*[6] *կուսէն Մարիամայ, և*[7] *խաչեցաւ և թաղեցաւ, և զդժոխքն քակեաց և զհոգիսն*[8] *ազատեաց, և զսատանայ ի խորս անդնդոց կապեաց, և յարուցիչն մեռելոց պարգեւեաց*[9]*, և օրէնք և պատուիրանք եղ*[10] *ի ձեռս առաքելոցն ամենայն աշխարհի՝ ընդ ոլորտս տիեզերաց, և պահողացն զպատուիրանն Աստուծոյ պատիւ և փառք և արքայութիւն խոստացաւ, և ո՛չ պահողացն զպատուիրանն՝ պատիժ և տանջանք և դժոխք: Ցայնժամ հարկ եղև, որ դատաստան լինելոց է, և Աստուած գայ ի կատարածի և դատաստան առնէ և հատուցանէ: Բարեացն բարի փոխարէն հատուցանէ*[11] *և յարքայութիւնն տանի*[12]*, և չարեացն՝ պատիժ և տանջանք*[13] *և ի*[14] *դժոխքն առաքէ: Եւ ընդ չարեացն և մեղաւորացն սատանայ*[15] *է տանելոց*[16] *ի դժոխքն և տանջելոց*[17]*, զի ամենայն մեղաց և չարեաց պատճառ և գործող նա է, զի նա տայ գործել: Վասն այն անշէջ հուրն նորա*[18] *է պատրաստեալ և կամարարաց նորա: Այս է, որ ասէ.* «Զամենայն պատմուճան[19] ժողովեալ նենգութեամբ՝ տուգանո՛ք տուժեսցին» *(Թ 5):*

---

1 AC յաշխարհի
2 B չարիս
3 A մինչև
4 AB աստուածութեան
5 A մարմնացաւ մարդացաւ
6 BC անարատ
7 A մարմնացաւ *փխ* Մարիամայ և
8 A զհոգիքն
9 C յարեաւ ի մեռելոց *փխ* յարութիւն մեռելոց պարգեւեաց
10 AC եդիր
11 BC *չիք* հատուցանէ
12 B արքայութիւն *փխ* յարքայութիւնն տանի
13 B զպատիժ և զտանջանք
14 A *չիք* ի
15 AB զսատանայ
16 C տանջելոց է *փխ* է տանելոց
17 B տանջել, C *չիք* և տանջելոց
18 B նմայ
19 B պատմուճանն

**Մեծի խորհրդոյ հրեշտակ** *(թ 6):*

*«Մեծ խորհուրդ» զայն ասէ, զի Որդին Միածին զանուն Հօր Աստուծոյ և զանճնաւորութիւն և զաստուածութիւն յայտնեաց աշխարհի*[1]*, ըստ այնմ՝ «Յայտնեցի՛ զանուն քո մարդկան» (Յովհ. ԺԷ 6), զի Որդով ծանեաք*[2] *զՀայր: Դարձեալ. «մեծ խորհուրդն» այն է, զի խորհեցաւ Հայր Աստուած ընդ Սուրբ Հոգոյն և ընդ Որդոյն*[3]*: Զի զազգս հեթանոսաց, որ կռապաշտութեամբ և զանազան մեղօք լցեալ*[4] *էին, ժառանգակից և մարմնակից և զհաղորդս*[5] *առնել*[6] *Որդոյ իւրոյ: Եւ այս խորհուրդս ի ձեռն Որդոյ կատարեցաւ և միջնորդութեամբ Որդոյն եղև՝ գալստեամբն իւրով յաշխարհս: Դարձեալ. «մեծ խորհուրդ» զայն ասէ, զի խորհեցաւ և խորհուրդ արար Հայր ընդ Որդոյ և ամենասուրբ Հոգոյն, զի զմեր բնութիւնս*[7] *ի վերոյ նստուցանիցէ*[8] *ամենայն իշխանութեանց և պետութեանց երկնայնոց և ամենայն գերաշխարհիկ զօրութեանց: Եւ այս ի ձեռն*[9] *Որդոյ կատարեցաւ, որ եկն և էառ մարմին ի մարդկային բնութենէս, և միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն և աստուածացոյց, և նոյն աստուածացեալ*[10] *մարմնովն համբարձաւ յերկինս*[11] *և նստաւ ընդ աջմէ Հօր Աստուծոյ յաթոռ աստուածութեան: Դարձեալ. «մեծ խորհուրդն» այն է, զի կամքն*[12] *և խորհուրդն*[13] *Հօր Աստուծոյ կայր, որ այնչափ սիրէր*[14] *զմարդիք, որ մինչ զՈրդին իւր Միածին ետ ի մահ և ի չարչարանք*[15] *վասն մարդկան: Այս սէրս և*

---

1 AC յաշխարհի
2 C *չիք* զի Որդով ծանեաք
3 A ընդոյ *փխ* ընդ որդոյ
4 A լցեալք
5 AB հաղորդս
6 B առեալ
7 A բնութիւն
8 A նստուցէ, B նստուսցէ
9 C ձեռս
10 B աստուածարեալ
11 AC ի վեր յերկինքն
12 C ի կամքն
13 C ի խորհուրդն
14 C կու սիրէր
15 B ետ *փխ* և ի չարչարանք

*խորհուրդս կայր առ Հայր Աստուած: Վասն այն յետ*[1] *ժամանակի առաքեաց զՈրդին, որ եկն յաշխարհս, որպէս առաքեալն ասէ. «Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհս, մինչև*[2] *զՈրդին իւր Միածին ետ» (Յովհ. Գ 16): Եւ այսպիսի խորհրդոյս*[3] *սպասաւոր և կատարիչ Որդին եղև և կատարեաց, վասն այն՝* «Մեծի[4] *խորհրդոյ հրեշտակ կոչեցաւ անուն*[5] *նորա» (Թ 6), և ո՛չ թէ ի հրեշտակի բնութիւն փոխեցաւ: Իսկ «սքանչելի խորհրդակից» կոչի անուն նորա, որպէս Յակոբոս*[6] *ասաց.* «Անուն իմ սքանչելի է», *և մարգարէն*[7] *Դաւիթ ասէ.* «Տէ՛ր, Տէ՛ր մեր[8], զի սքանչելի է անուն քո յամենայն երկրի[9]» *(Սաղմ. Ը 2, Ը 10): Նոյնպէս*[10] *և մարգարէս Եսայի Հոգովն*[11] *Սրբով «սքանչելի» կոչէ զանուն*[12] *նորա: Դարձեալ.* «սքանչելի» *է անուն նորա*[13], *զի յանուն նորա մեռեալն կենդանանայր, որպէս առաքեալքն*[14] *ասէին.* «Յանուն Յիսուսի Քրիստոսի[15] արի՛[16] և կաց» *(Գործ. Գ 6): Եւ յանուն*[17] *նորա զհիւանդն*[18] *բժշկէր, զբորոտն սրբէր, զկոյրն լուսաւորէր*[19], *մեղաց թողութիւն շնորհէր, զդևն հալածէր*[20], *զաստանայ*[21] *կործանէր: «Իշխան խաղաղութեան*[22]» *(հմմտ. Թ 7), զի ընկալաւ յինքն զխաղաղութիւն ամենայն*

---

1 AB յետոյ *փխ* յետ
2 A և մինչեւ
3 A խորհրդոյցս, B խորհրդոցս
4 C մեծ
5 B կոչեաց զանուն
6 AC Յակոբա
7 B *չիք* մարգարէն
8 C *չիք* մեր
9 B ամենայն երկիր
10 A նմանապէս
11 A Հոգւովն
12 B անուն
13 B *չիք* դարձեալ սքանչելի է անուն նորա
14 A առաքեալն
15 B զի առաքեալքն յանուն Յիսուսի ասէին *փխ* որպէս առաքեալքն ասէին. Յանուն Յիսուսի Քրիստոսի
16 A յարի
17 A անուն *փխ* և յանուն
18 B զհիւանդս, C *չիք* և կաց: Եւ յանուն նորա զհիւանդն
19 B զկոյսն լուսաւորէր, զդևս հալածէր և
20 B *չիք* զդևն հալածէր
21 C աստանայ, և զաստանայ
22 AB *չիք* Իշխան խաղաղութեան

*աշխարհի յիւր անճն, և ընծայեաց*[1] *ինքեամբ Հօր Աստուծոյ զինքն, և զխաղաղութիւն Հօր Աստուծոյ ընծայեաց, որպէս ասէ ի խորհուրդ պատարագին.* «Դու ես, որ մատուցանես և մատչիս և ընդունիս և տաս՝ Քրիստոս Աստուած մեր»: *Եւ զամենայն արարածս երկրպագուս*[2] *արար Աստուծոյ Հօր: Զի որպէս զՀօր անունն և զանճնաւորութիւնն և զաստուածութիւնն Որդին յայտնեաց աշխարհի, նոյնպէս զՈրդոյ աստուածութիւնն և զորդիութիւնն Հայր*[3] *յայտնեաց մարդկան*[4]: *Զի ի Յորդանան և ի Թաբոր*[5] *վկայեաց ի վերայ Որդոյն Միածնի և ասաց.* «Դա՛ է Որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք» *(Մտթ. ԺԷ 5, Մարկ. Թ 6),* «զի Աստուած է իմ հաւասար, հաւատացէ՛ք ի դա՛ և լսեցէ՛ք դմա, և Աստուած հաւատացէք և մտէ՛ք*[6] *լծով ծառայութեան դորա»:

**Եւ առողջութիւն նմա** *(Թ 7):*

*Ընդունի և զառողջութիւն: Յայտ է*[7] *զմեռելոցն յարութիւնն, զի թէպէտ շնորհօք և ողորմութեամբ վասն ամենեցուն զմահ յանճն առ և ճաշակեաց, և կամաւ զմահ յանճն առ և մեռաւ, սակայն մարդկան տկարութիւն թուէր այս փոքր մի, որ մեռաւ, այլ յարեաւ ի*[8] *մեռելոց, որպէս որ իւր կամաւ մեռաւ: Նմանապէս և իւր զօրութեամբն և կարողութեամբն յարեաւ, զի մի կարծիցեն*[9]*, թէ տկար էր որ մեռաւ, այլ ծանիցեն զզօրութիւն*[10] *նորա, որ յարեաւ առանց ուրուք օգնականութեան: Նախ՝ զի ինքն է զօրութիւն*[11] *և բազուկ Հօր Աստուծոյ, ապա՝ յայլմէ*[12]

---

1 A ընծա, B յընծայ
2 AC երկրպագուք
3 AB ճօր
4 AB մարդկան աշխարհի
5 A Թաբօր, BC Թափօր
6 A մտանէք
7 A է թէ, B յատնէ *փխ* յայտ է
8 C յարութիւն *փխ* յարեաւ ի
9 B կարծեսցին
10 A զօրութիւնն, B զօրութիւն
11 AC զօրութեան
12 AB այլմէ

*ո՛չ կարօտէր յարուցանել*[1] *զնա, այլ իւր*[2] *զօրութեամբն յարեաւ: Եւ դարձեալ*[3]*. զայլոց մեռելոց մարմինն*[4] *ինքն յարուցանէր, ապա և զինքն կարող էր յարուցանել, որպէս զՂազարոս զչորեքօրեայ*[5] *մեռեալն*[6] *յարոյց*[7] *(տե՛ս Յովհ. ԺԱ 1-44), և*[8] *զմիամօր որդին յարոյց (տե՛ս Ղուկ. Թ 37-44) և զդուստր Յայրոս իշխանին (տե՛ս Ղուկ. Ը 40-42): Դարձեալ. այլ մեծագոյն քան զայս, զոր*[9] *ասացի, զի զհասարակաց յարութիւնն*[10] *ի կատարածի ինքն է առնելոց, ապա և զիւր յարութիւնն ինքն արար:*

*Խաղաղութիւն արար Քրիստոս և հաշտեցոյց զՀայր Աստուած*[11] *ընդ մարդկան, և զհրեշտակք և զմարդիկք*[12]*, որ յանցմամբ պատուիրանին խռովութիւն*[13] *էր ի մեզ՝ Հօր Աստուծոյ և մարդկան: Ի մէջ մարդկան և հրեշտակաց արար խաղաղութիւն Քրիստոս, և եբարձ զխռովութիւն Հօր Աստուծոյ ի մարդկանէ*[14] *և Հաշտեցոյց ընդ մարդկան: Նոյնպէս զհրեշտակաց*[15] *խռովութիւնն եբարձ և հաշտեցոյց զմարդիկք*[16] *ընդ հրեշտակաց*[17]*: Իսկ զնեղութիւն և զդառնութիւն դիւացն, զոր ունէին ընդ մարդկան, եբարձ Քրիստոս, սակայն ո՛չ Հաշտեցոյց զմարդիք ընդ սատանայի և ընդ*[18] *դիւաց*[19]*: Զի մեղքն հնազանդեցոյց զմարդիկք*[20] *ի ներքոյ մահու, զի մահու գրաւեցան, և յառաջ և*

---

1 C յարուցել
2 AB չիք իւր
3 AB դարձեալ թէ
4 AC զմարմինն
5 B որ չորեգօրեա
6 B չիք մեռեալն, C զմեռեալն
7 AC յարուց
8 AC և ի նայիմ քաղաք
9 C չիք զոր
10 AB հասարակաց յարութիւն
11 B չիք Աստուած
12 A զհրեշտակ և զմարդիկ
13 B զպատուիրանին զխռովութիւն
14 B չիք ի մէջ մարդկան... ի մարդկանէ
15 A հրեշտակ
16 A զմարդիկ
17 B հրեշտակս
18 A չիք ընդ
19 C չիք խաղաղութիւն արար Քրիստոս... ընդ դիւաց
20 A զմարդիք

*նախքան*[1] *զմահն ի ներքոյ էարկ ցաւոց Աստուած զմարդն, զի նախքան զմեռանիլն*[2] *բազում ցաւ կրեն*[3] *մարդիկք՝ գլխացաւութիւն*[4]*, աչացաւութիւն, փորացաւութիւն, սրտացաւութիւն և այլ բազում: Զի խրատեսցին մարդիկք*[5] *զյիշատակ բարեացն ի մտի ունելով, թէ յանմեղութեանն ո՛չ էր այս ցաւս, այլ մեղքն արար, և զի ի ձեռն ցաւոցն ապրեսցին ի*[6] *մեծագոյն տանջանացն:*

**Ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է** *(թ 12, 17, 21, ժ 4):*

*Զկնի Թակլաթփաղասարու եհան ի վերայ նոցա զՍաղմանասար, որ գերեաց զնոսա և տարաւ: Զի նախ՝ Թակլաթփաղասար եկն և սպան*[7] *զՀռասիմ և էառ զմայրաքաղաք նորա զԴամասկոս*[8]*, և եկն յերկիրն*[9] *Պաղեստին և անց յայնկոյս*[10] *Յորդանանու: Եւ զերեք ազգն և զկէսն, որ անդ էին բնակեալ յայնկոյս Յորդանանու, գերեաց և տարաւ (տե՛ս Դ Թագ. ԺԶ 9): Եւ յետոյ Սաղմանասար եկն ի վերայ Սամարիոյ, և զայլ է (7) ազգն, որ ի Սամարիայ էին բնակեալ, զամենեսեան ջնջեաց, և զորս սպանեաց և զորս գերեաց և տարաւ յաշխարհն իւր (տե՛ս Դ Թագ. ԺԸ 9-11): Յորժամ Սաղմանասար եկն ի վերայ Սամարիոյ, Զ (6) ամ էր, որ թագաւորէր Աքազ յԵրուսաղէմ, և Ովսի չորս ամ էր, որ ի Սամարիայ թագաւորէր: Ովսիայ Թ (9) ամ թագաւորեաց յառաջ և յետոյ, երեք ամ պաշարեաց զՍամարիայ և առ զնա*[11]*, և գերեաց վասն ամբարիշտ թագաւորացն, որ ի Սամարիայ, որ ի կռապաշտութիւն անկան և զժողովուրդն այլ ի կռապաշտու-*

---

1 B քան *փխ* նախքան
2 AC զմեռանելն
3 C կու կրեն
4 C գլխոյ ցաւութիւն
5 A մարդիկ, C մարդիք
6 AB *չիք* ի
7 B եսպան
8 B Դամասկոս
9 B երկիրն *փխ* եկն յերկիրն
10 A յայնկուս
11 B զնոսա

*Թիւն արկին (տե՛ս Դ Թագ. ԺԷ 1-2): Եւ բարկացաւ Աստուած և ետուր սով և գերութիւն: Զի ի Սողոմոնի որդւոյն ի հետ, որ էր Ռոբովամ[1], որ յերկուս բաժանեցան ԲԺ (12)-ան ցեղն[2], Բ (2) ցեղն՝ Յուդային և Բենիամենին[3] յԵրուսաղէմ մնացին, և Ժ (10) ցեղն ի Սամարիայ գնացին[4]: Ռոբովամ որդին Սողոմոնի, յորժամ թագաւոր նստաւ ի Սամարիայ[5], վաղվաղակի ի կռապաշտութիւն անկաւ և կանգնեաց զերկու ոսկի երինջքն՝ զմինն ի Դան և զմիւսն[6] ի Բեթէլ (տե՛ս Դ Թագ. Ժ 29): Եւ յայնմ հետէ այլ ո՛չ խափանեցաւ կռապաշտութիւնն ի Սամարիայ[7]: Զի թէ մին թագաւորն, որ կռապաշտ էր՝ մեռանէր, միւս թագաւորն, որ[8] նորա տեղն թագաւոր նստէր[9], նա[10] այլ զկուռքն պաշտէր[11], զոր Հարքն[12] իւրեանց պաշտէին[13]: Եւ այնպէս[14] կացին մնացին ի կռապաշտութիւն[15]: Բայց միայն մէկ թագաւոր[16] ելաւ ի մէջ նոցա, որ մաս մի բարութեան[17] երևեցաւ ի նմա[18], այսինքն՝ Յէու[19] թագաւորն, սակայն և նա այլ կռապաշտ էր: Այլ մասն բարութեան այն էր ի նա, որ Աստուծոյ կամացն կատարող եղև[20], զոր վասն Աքաաբու[21] սպառնացաւ Աստուած, թէ՝ «Ո՛չ թողից ի քեզանէ մարդ, որ առաւօտուն ընդ որմով[22] միզիցէ,*

---

1 B Ռոբովամ
2 B ցեղքն
3 A Բենիամին
4 C *չինք* ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ... գնացին
5 AB և դրին իւրեանց թագաւոր զՌոբովամ զորդին Նաբատայ, և Ռոբովամ *փխ* Ռոբովամ որդին Սողոմոնի յորժամ թագաւոր նստաւ ի Սամարիայ
6 C զմինն
7 C Սամարիոյ
8 AC մին այլ ի *փխ* միւս թագաւորն որ
9 C կու նստէր
10 AC և նա
11 C կու պաշտէր
12 AC հայրքն
13 C կու պաշտէին
14 B այսպէս
15 C կռապաշտութեանն
16 C թագաւոր մի այլ *փխ* մէկ թագաւոր
17 B բարութիւն
18 AB նա
19 A Ցէսու
20 AB եղաւ
21 A Աքայափու
22 AC որմովն

*այլ ամենեքեան սատակեսցին*[1]*, և զոր ի լերինքն մեռանին՝ զազանք կերիցեն, և որ ի դաշտին՝ հաւք կերիցեն» (հմմտ. Գ. Թագ. ԻԱ 21-24, Դ. Թագ. Թ 8-10): Իսկ այլ թագաւորքն Սամարիոյ*[2] *կռապաշտք*[3] *էին և չարք, մինչ*[4] *որ Սաղմանասար գերեաց և աւերեաց*[5]*, և զերկիրն քանդեաց*[6] *և ամայի*[7] *արար և գնաց, և խափանեցաւ կռապաշտութիւնն, զի այլ մարդ չմնաց*[8]*: Իսկ երկու ազգն Յուդայեան և Բենիամենին, որ յԵրուսաղէմ էին, երբեմն երբեմն ի կռապաշտութիւն անկանէին և երբեմն զԱստուած պաշտէին*[9]*: Զի բարի թագաւոր այլ ելանէր*[10] *ի նոցանէ, որ աստուածապաշտ*[11] *լինէր, որպէս օրհնեալն Ովսիայ և Եզեկիայ և Դաւիթ և այլք*[12]*: Իսկ ժամանակ*[13] *լինէր*[14]*, որ չար թագաւորք ելանէին*[15] *և ի կռապաշտութիւն կու անկանէին*[16]*, և դիմադարձք*[17] *Աստուծոյ լինէին*[18]*: Որպէս և չարն և պիղծն Աքազ, որ անկաւ ի կռապաշտութիւն և զորդիսն ընդ բոցով անցուցանէր և դիւացն զոհ մատուցանէր*[19]*, և բազում չարիս գործեաց յԵրուսաղէմ, զի զԵրուսաղէմ կռօք և պղծագործութեամբ ելից և գարշութեամբ*[20]*: Ընդ բոցով անցուցանելն այն է, որ զայն տղայն, որ կռոցն խոստանային, կրակին բոլորն անցուցանէին և թողուին ի բաց, և յորժամ ժամանակն գայր, բերէին և*

---

1 AC սատակելոց են
2 B Սամարու
3 B կռապաշտ
4 A մինչև
5 AB սպան նոցա (B սպանեաց) *փխ* աւերեաց
6 B գերեաց *փխ* քանդեաց
7 C անմարդաբնակ *փխ* քանդեաց և ամայի
8 AC չի մնաց
9 C կու պաշտեցին
10 C կու ելանէր
11 C զաստուածապաշտ կու
12 B այլն
13 AC ժամանակ ժամանակ
14 C [կ]ու լինէր
15 C կու ելանէին
16 AB կանգնէին (B կանգանէին) *փխ* կու անկանէին
17 B դիմադարձ
18 AB եղեն
19 AB մատուցանէին
20 B պղծագործո և կոօք և գարշութեսւմբ ելից *փխ* կռօք և պղծագործութեամբ ելից և գարշութեամբ

*զոհէին կռոցն: Որպէս որ[1] քրիստոնեայքն[2] զայն մատաղն, որ եկեղեցոյն[3] խոստանան, յեկեղեցուն բոլորն[4] ածեն և թողուն յանուն եկեղեցոյն[5]: Եւ այս բարի է: Իսկ նորայն[6], որ ընդ բոցովն անցուցանէր և կռոցն տայր՝ չար էր:*

**Զգլուխն և զվերջն** *(Թ 14):*

*Այսինքն. գլուխն՝ մեծն և վերջն[7]՝ տղայն, գլուխն՝ թագաւորն և վերջն[8]՝ իշխանքն[9], գլուխն՝ քահանայքն և վերջն՝ ժողովուրդն[10]: Օձի թոյնքն[11] ի գլուխն է և ի բերանն, և տանի զտուտն ի բերանն, և առնու զթոյնքն և արկանէ ի վերայ՝ թէ[12] մարդն է[13] և թէ՛ այլ կենդանի, զինչ և իցէ, և սպանանէ: Նոյնպէս իշխանքն, որ տուտն էին, առնուին ի գլխոյն, այսինքն՝ ի թագաւորացն զչար թոյնքն[14] և սպանանէին. զկռապաշտութիւնն ի թագաւորացն կ'ուսանէին իշխանք և ժողովուրդք: Նոքա զսուտ մարգարէքն ճիշտ գիտէին և[15] լսէին նոցա, և յորժամ բանն ի գլուխ ելանէր, որ գայրն գերի կամ յայլ[16] պատուհաս, ապա գիտենային զնոցա ստութիւնն:*

**Այր եղբօր իւրում մի՛ ողորմեսցի**[17] *(Թ 19):*

---

1 B և *փխ* որ
2 B քրիստոնեաքն որ
3 A եկեղեցուն
4 A եկեղեցուն բոլոր
5 A յեկեղեցուն յանուանն *փխ* յանուն եկեղեցոյն
6 B նորա *փխ* նորայն
7 B վերջքն
8 A վերջին
9 B վերջ իշխանք
10 B վերջ ժողովուրդ
11 B թիւնքն
12 B *չինք* վերայ թէ
13 B *չինք* է
14 A թունքն
15 A թէ ճիշտ մարգարէ է և
16 B յայլ ցեղ
17 B *չինք* այր եղբօր իւրում մի ողորմեսցի

*Այս յառաջ քան զգերութիւն եղև, որ ի սաստիկ սովոյն[1] ողորմութիւն և գութն բարձաւ, և անողորմաբար զմիմեանս զրկէին և յափշտակէին և խլէին, և առնէին զհաց և զայլ ինչ կերակրէին: Զի սոքա ամենեքեան եղբարք կոչէին միմեանց, զի միոյ Յակոբայ որդիք էին երկոյտասան ազգն և ի մին տեղ սնեալք էին, թէ յաշխարհիս[2] էին՝ ի միասին էին: Նոյնպէս յանապատին զհ[3] (40) ամ ի միասին կացին, նոյնպէս և ի Պաղեստին ի միասին եկին, և զերկիրն ի միասին բաժանեցին և բնակեցան. վասն այնորիկ եղբայրք կոչէ զսոսա: «Եփրեմ զՄանասէ ուտէր և յափշտակէր, և Մանասէ զԵփրեմ, և սոքա երկուքն միաբան զՅուդայ յափշտակէին» (հմմտ. թ 20-21) և «աջ բազուկ և ձախ» (հմմտ. թ 20):*

*Դարձեալ. զեղբայրսն և զընկերսն[4] կոչէ և զընտանիս[5] յաղագս սաստիկ վշտին և սովամահ լինելոյն: Իբր զգազան և զշուն ի վերայ միմեանց յարձակէին յալ և յահեակ, և ի հեռու և ի մօտ, և խլէին և առնէին և սպանանէին, և թալանէին զմիմեանս, և ո՛չ թէ մարդիկք զմիմեանս ուտէին, զի մարդն զմարդ զիա՞րդ կարէ ուտել[6]:*

**Վա՛յ, որ գրեն զչարիս, գրելով գրեն զչարիս իւրեանց** *(ժ 1):*

*Այս զթուելն և զհամարելն և զպատմելն ասէ, որ նստին առ միմեանս և զինչ պատուհաս էին կրեալ[7]՝ պատմէին, թէ այս ժամանակս[8]՝ զայն ինչ չարչարանքն կրեցինք, և յայլ[9] ինչ ժամանակս՝ զայլ[10] ինչ տանջանք և զպատուհասն կրեցինք: Եւ*

---

1 B սովուն
2 A յաշխարհէս
3 B քառասուն
4 A զընկերն
5 AB ընդանիս
6 C *չիք* Ընդ բոցով անցուցանելն այն է որ զայն տղայն որ կոոցն խոստանային... կարէ ուտել *(տե՛ս աստ, էջ 156)*
7 AB կրել
8 AB ժամանակ
9 AB յայն
10 AB ժամանակ զայն (B զայս)

*Թէ քանի անգամ գերի էին*[1] *գնացեալ կամ թալանեալ*[2] *վասն մեղացն իւրեանց, զամենայն յիշումն ածէին*[3] *և ասէին միմեանց: Եւ յորժամ զպատիժքն թուէին, մեղքն այլ ի հետ թուեալ լինէր, զի մեղքն էր, որ ածէր պատիժն ի վերայ նոցա: Եւ յորժամ զայս այսպէս առնէին, մեղքն այլ ի հետ պատժացն թուեալ լինէր*[4]*: Զի նմանին սոքա սոդոմայեցոցն, զի սոդոմայեցիք զմեղքն,*[5] *զոր ինչ որ գործէին, պատմէին միմեանց և պարծենային*[6]*, Թէ այսչափ մեղք եմ գործէր*[7]*:*

**Վա՛յ ասորեստանեայց. գաւազան սրտմտութեան**[8] **իմոյ ի ձեռս նոցա** *(ժ 5):*

*Վասն Սինէքարիմայ զօրացն ասէ զայս և սպառնայ նոցա, որ ՃՂԵՌ (195 000) ի միում աւուր անկան ի հրեշտակէն: Զի խնամքն Աստուծոյ ի վերայ ժողովրդեանն էր և կամէր խրատել զնոսա, զի նոքա մարգարէութեամբն զգուշասցին և զթշնամիքն*[9] *իրաւամբք պատժեսցին*[10]*: Ցուպ Հարուածոց էին սոքա ի ձեռին Աստուծոյ, զի սոքօք խրատեաց զտունն Յուդայ: Եւ զնոսա հարկանէր վասն հայհոյող բանիցն Ռափսակայ*[11]*, զի ասաց. «Աստուածն ձեր՝ Եզեկիայի աստուածն, որ Եզեկիայ զամենայն բարձունս որք*[12] *էին աստուածք՝ խաւխանեաց», և ասաց. «Միոյ Աստուծոյ և սեղանոյ յերկիր*[13] *պագանել, թող այն Աստուածն փրկէ զձեզ» (հմմտ. Դ. Թագ. ԺԸ 21-22, 29, Եսայ. ԼԶ 7): Հենգնելով*

---

1 A էի
2 AB թալանել
3 A ածէ
4 BC *չիք* զի մեղքն էր որ ածէր պատիժն... թուեալ լիներ
5 B մեղքն
6 A պարծէին, B պատմէին *փխ* պարծենային
7 C իմ գործեալ *փխ* եմ գործէր
8 B որ տրտմութեան *փխ* սրտմտութեան
9 A թշնամիքն
10 B իրաւամբ պատժեսցեն
11 B Ռաբսակայ
12 A որ
13 B երկիր

*ասաց Ռափսակ զայս[1]: Եւ ասաց. «Աստուած ասաց մեզ ելանել և գալ ի վերայ ձեր» (հմմտ. ԼԶ 10): Եւ ո՛չ գիտէր Ռափսակ զԱստուած, որ ասաց զայս: Զի ասեն ոմանք, թէ Ռափսակ[2] ի Հրէից ազգէն էր, և փախեալ էր և գնացեալ ի մօտ Սինէքարիմայ[3], և զօրեղ մարդ էր: Սիրեաց Սինէքարիմ[4] և կարգեաց իշխան, և սկսաւ, մեծացաւ և եղև թագաւոր մեծ: Վասն այն գիտէր, զի կացեալ էր ի մէջ նոցա:*

*Դարձեալ. ասաց յառաջագոյն, թէ՝ «Աստուածն ձեր առաքեաց զմեզ ի վերայ ձեր»: Հնարաւոր[5] մարդ էր, հնարեցաւ և ասաց զայս: Զի յորժամ տեսցեն նոքա զօրօք պատեալ զինքեանս, նոքա ասեն. «Երբ Աստուած է ասել զելանելն դոցա[6] և գալ ի վերայ մեր և պաշարել, այլ ի մեր ափուցս[7] ի՞նչ կայ առնել»: Եւ թոյլ տային և չպատերազմէին առ նա: Եւ այն կարի անմտութիւն էր Ռափսակայ, որ իւր զօրութեան համարել զ[յ]աղթելն իսրայէլացոցն և ո՛չ Աստուծոյ զօրութիւնն, զի զայլոց ազգաց յղթելն իւրեանց[8] զօրութեանց[9] համարէին: Կարի մեղադրել[10] ո՛չ էր, այլ զսոցայն[11] կարի անմտութիւն էր նոցա: «Գաւազան սրտմտութեան ետու ի ձեռս նոցա»: Որպէս որ[12] Մովսէսի զգաւազանն ետ Աստուած նշան, որ առնէր[13] առաջի փարաւոնի, և այն գաւազանաւն եհար զեգիպտացիսն[14]*

---

1 B Հռափսակ զայս բան
2 A Ռափսակել
3 B Սինէքարիմ
4 A Սէնէքարիմ
5 B հնարս որ *փխ* հնարաւոր
6 B նոցա *փխ* դոցա
7 A յափուցս
8 A ինքեանց
9 B զօրացն *փխ* զօրութեանց
10 B մեղադրեալ
11 B սոցայն
12 A *չիք* որ
13 B նշանաւոր *փխ* նշան որ առնէր
14 A զեգիպտացոցն

և տանջեաց: Զի ի գետն հասոյց[1], և փոխեցաւ[2] յարիւն[3], և[4] տանջեաց զօտար ազգին և զանհաւատք զեգիպտացիքն[5]: Եւ ղիւր ազգն, որ էին իսրայէլացիք, պահեաց և մխիթարեաց: Նոյնպէս, թէպէտ նոքա «գաւազան բարկութեան» էին, զօտար ազգիսն պարտ էին հարել և ո՛չ զժողովուրդն Աստուծոյ, որպէս յիւրեանց յաշխարհէն, որ եկին զօտար ազգիսն, զամենայն հարին: Եւ յորժամ յերուսաղէմ հասան[6], պարտ էր զշրջակայ[7] ազգերն էին հարեալ[8՝ զՄովաբացիքն և զԱմոնացիքն և զայլն, որ շուրջ զնոցա էին և սահմանակիցք[9]: Եւ զժողովուրդն[10] Աստուածոյ խնայէին և ո՛չ մերձենային[11], զի զնոսա եհան Աստուած, որ զշրջակայ ազգերն գային, գերէին և աւերէին զամոնացիքն[12] և զայլն: Իսկ նոքա զայն արարին և աստուածային քաղաքն այլ ձեռն արկին աւերել, վասն այն կործանեաց զնոսա Աստուած: Եւ դարձեալ. զոր ինչ հրամայեցաւ նոցա[13] յԱստուծոյ առնել, զայն չափն միայն ո՛չ արարին, այլ առաւել չար արարին՝ կործանեցան:

**Զբարկութիւն իմ յազգ անօրէն արձակեցից** *(ժ 6)*:

Կամ ի վերայ Յուդայ իմացի, զի յարմարի ի վերայ նոցա: Զի անօրէնք էին առաջի Աստուծոյ, զի օրէնք[14] ո՛չ պահէին, և ոխակալ՝ առ եղբայրս[15], զի որպէս եփրեմեանքն առ սոքա ոխ ունէին և նախանձ, նոյնպէս սոքա՝ առ նոքա ունէին: Հա՛ն Աս-

---

1 B հասուց
2 B դարձաւ *փխ* փոխեցաւ
3 B արիւն
4 AB և զմոխիրն ի և
5 B զեգիպտացին
6 B հասին
7 B շրջակայ
8 A հարել
9 B զսահմանակիցքն
10 A ժողովուրդն
11 A մերձեցեր
12 A զամոնացիքն զանանացիքն
13 B հրամայեցուց *փխ* հրամայեցաւ նոցա
14 A զօրէնքն
15 A եղբարց

*տուած ի վերայ նոցա գերել և առնուլ յաւար*[1]*: Զի նախ՝ եկին և զերկիրն և զշրջակայ գիւղք*[2]*, որ բոլոր յԵրուսաղէմայ էին, աւերեցին և սպանին և կոխեցին: Եւ եկին եւս յԵրուսաղէմ, զի նոքա որ յերկիրն էին՝ նոքա այլ Յուդայի ազգէն էին: Զի այն միայն չէր Յուդայի*[3] *ազգն, որ յԵրուսաղէմ էին ի քաղաքն, այլ յերկիրն այլ կային և գեղօրայք: Եկին զերկիրն աւերեցին և սպանին, և կոխեցին զդիակունքն, և նոքին հասին յԵրուսաղէմ և բոլորեցին: Բայց այս ճիշտ է, զի առ ազգ*[4] *օտար և անօրէն առաքեցան նոքա յԱստուծոյ առնուլ զերի և աւար: Եւ նա զայս ո՛չ ածէ զմտաւ, որ զօտարքն*[5] *միայն էր աւերեր և զերեր, և կամ թէ Աստուած է, որ զօրացուցանէ զնոսա: Այլ քան զամենայն տիեզերս հզօրագոյն*[6] *կարծէր զինքն, և թէպէտ կարծէր, պարտ էր*[7] *զարհուրել և դողալ ասելն, զի ինքն մարդ էր և մահկանացու: Այլ զայս ո՛չ արար, որ զօտարքն էր աւերեր, և կամ զոր Աստուած հրամայեաց՝ զայն չափն առնել*[8]*: Այլ աւելի կամեցաւ առնել, քան զոր հրամայեաց*[9] *նմա. վասն այն սատակեաց զնա: Զի ասէր ամբարտաւանութեամբ, թէ՝ «Իշխանութեամբ իմով առի զերկիրն, որ քան զբաբելացոց երկիրն ի վեր է, և զՔաղանէ առի, ուր աշտարակն շինեցաւ, և իմ իշխանքն առաւել մեծ են, քան զթագաւորն հեթանոսաց: Առի զԱրաբիայ իւր սահմանօքն: Առի զԴամասկոս, որ մայրաքաղաք էր, և զթագաւորն սպանի: Առի զՍամարիայ և զգաւառն, և յԵրուսաղէմ*[10] *այլ գնամ և առնելոց եմ» (հմմտ. ժ 9-11): Թէ ոք մի հարցանէր առն, թէ՝ «Դու մեծ ես և քան զքեզ այլ ո՛չ գոյ մեծ թագաւոր», նա այսպէս*

---

1 B աւար
2 A գեղաւն
3 A Ցուդայի
4 A յազգ *փխ* առ ազգ
5 B զօտարն
6 A զօրագոյն
7 A պիտէր *փխ* պարտ էր
8 B որ Աստուած ասաց կոտորեր էր *փխ* էր աւերեր և կամ... առնել
9 B ասաց *փխ* հրամայեաց
10 A զԵրուսաղէմ

պատասխանի տալոց էր և ասելոց[1]. «Որպէս այն քաղաքանիքն[2], որ[3] ի դիսն[4] իւրեանց են յուսացեր, և առի զնոսա և ո՛չ կարացին փրկել զնոսա: Նոյնպէս և Երուսաղէմ, որ յուսացեալ է ի Տէր, ո՛չ կարէ փրկել զնոսա, և[5] զնա առնելոց եմ» (հմմտ. Ժ 11-12): Ցուցանէ որ այն, որ զայն[6] քաղաքանին կռփեաց և էառ՝ յԱստուծոյ էր, և ասել որ յաղթահարեցաւ[7] յԵրուսաղէմ՝ յԱստուծոյ էր: Զի անդ և աստ ցուցանէ զօրութիւնն[8] Աստուծոյ, զի անդ զօրացոյց զնոսա[9], որ առին զամենայն քաղաքն, և աստ յԵրուսաղէմ յաղթեցոյց և[10] տկարացոյց: Եւ այն ևս ցուցանէ[11] զզօրութի֊ն Աստուծոյ, զի նա, որ զբազումս ի քաղաքացն ապատակեաց և էառ, յայս փոքր քաղաքէս յԵրուսաղէմայ, որ արհամարհեալ և նուազ և տկար կարծէր, խափանեցաւ իւր զօրութիւնն և ո՛չ կարէր[12] առնել, զի սատակեցաւ ի հրեշտակէն հրամանաւն Աստուծոյ: Ասէ. «Որպէս զայն առի, նոյնպէս զամենայն աշխարհ աւերեցից» (հմմտ. Ժ 10): Թէպէտ ո՛չ էր առեր զԵրուսաղէմ, սակայն առեալ համարէր վասն առաւել հպարտութեան արտաքոյ, քան զմարդկային բնութիւնս[13]՝ վարկաւ զինքն, զի զայն ո՛չ ած զմտաւ, թէ փոփոխական է մարդոյս բնութիւն: Զի այն, որ թագաւոր մեծ է, կանկանի[14] ի թագաւորութենէն, և այն[15], որ փոքր[16] է և տկար[17]՝ թագաւոր է և այլն: Զի որքան մեծամեծս խորհէր և զինքն մեծացուցանէր, զԱստուծոյ

---

1 B ասէր *փխ* պատասխանի տալոց էր և ասելոց
2 B քաղաքացիք
3 A *չիք* որ
4 B դիս *փխ* ի դիսն
5 A նոյնպէս և
6 B այն
7 AB յաղթահարեցաւ
8 B զօրութիւն
9 B զնա
10 B *չիք* յաղթեցոյց և
11 A ցուցանի
12 A կարաց
13 A բնութիւն
14 AB կանգանի
15 A այն է
16 A փոքրն
17 A տկարանա

զօրուԹիւնն ի վերոյ ցուցանէր քան զամենեւեան, որքան զայն Թագաւորն, որ զինքն մեծ և հզօր ցուցանէր քան զամենայն ոք: ՅաղԹեաց զօրուԹիւնն Աստուծոյ և կործանեաց զնա:

Ի ԹագաւորուԹիւնն Զորրորդ գրեալ է, Թէ՝ «Ի չորս ամի ԹագաւորուԹեանն[1] Եղեկիայ ե՛լ Սաղմանասար արքայն[2] Ասորեստանի ի Սամարիայ, պաշարեաց զնա և առ յետ երից ամաց: Եւ յետ Ժ (10) ամի, ի չորեքտասան ամի Եղեկիայ, ե՛լ Սենէքարիմ[3] քանդեաց զՍամարիայ. նախ առ զՍամարիայ և ապա գնաց և[4] զԵրուսաղէմ պաշարեաց» (հմմտ. Դ Թագ. ԺԸ 9-10, 13): Այլ սոսկ և առանց հոգոյ իմաստք, անշու[ն]չ երգարանաց նմանեն: Եւ Թէ ո՞րպէս: Զի այն բանն, որ մարդ խօսի և գրուցէ զինչ և իցէ, Թէ առանց հոգոյ լինի և հոգեխառն[5] ո՛չ լինի, և հոգոյ մասն ո՛չ խառնեալ[6] լինի: Յայն բանն անօգուտ է և ընդ վայր և անպէտք, զի անշունչ երգարանաց նմանի՝ փողի կամ քնարի կամ այլ երգարանաց, որ հնչեցուցանեն մարդիկք[7]: Զի զձայնն[8] միայն լսեն, և այլ ինչ[9] շահ և օգուտ ո՛չ գոյ ի նմա՝ խրատ հոգևոր կամ մարմնաւոր, նոյնպէս Թէ՛ դաս ասէր, Թէ՛ քարոզէր, որ հոգեխառն[10] և հոգոյ մասն ո՛չ կա[11] ի ներքս[12]:

Յետ դարձին, որ ի գերուԹենէն դարձան, մի իշխանուԹիւն եղև: Զի այլ յերկուս[13] ո՛չ բաժանեցաւ ԹագաւորուԹիւնն, զի Սամարիայ աւերեցաւ, և միայն յԵրուսաղէմ էր ԹագաւորուԹիւնն ԲԺ (12)-ան ազգին: Եւ ողորմեցաւ Աստուած, և այլ գերի ո՛չ գնացին, սակայն յայս միջոցիս, որ յետ դարձին, մինչ[14] ի

---

1 B թագաւորութեան
2 B թագաւորն *փխ* արքայն
3 B Սինէքարիմ
4 B *չիք* և
5 AB հոգէխառն
6 B *չիք* խառնեալ
7 A մարդիկ
8 B որ զձայն *փխ* զի զձայնն
9 B *չիք* ինչ
10 AB հոգէխառն
11 A կանի
12 B ներս
13 B երկուս
14 A մինչև

*Քրիստոսի գալուստն որչափ ժամանակ որ էր, յայս միջոցս անսրբաբար կային և սխալ*[1] *և զեխագոյն վարուք: Զի ի մեղաց և ի չարեաց ո՛չ դադարէին, և ի Քրիստոսի գալուստն*[2] *ո՛չ հաւատային*[3]*, այլ մահացուցին և սպանին սորին: «Վասն ձեռաց բարձրացեալ է ի վերայ նոցա» (հմմտ. ԺԴ 26), զի ետ զնոսա ի կոխումն Տիտոսի և Վսիպլիանոսի, նոքա, որ քահանայապետք էին և որոց դատաստանն հատուցաւ, անիրաւութեան պահանքն էին: Զսուտ մարգարէից բանքն առնէին քահանայք և դպիրք և վարդապետք և դնէին ի վերայ ճիշտ օրինացն Մովսէսի, և զօրինաց բանն այլապէս և թիւր մեկնէին, և զժողովուրդն մոլորեցուցանէին և ընդդէմ ամբառնալ Քրիստոսի յորդորէին: Եւ նոքա հաւանէին, զի առաջնորդք էին, զոր ինչ որ*[4] *ասէին՝ ժողովուրդ[ք]ն հաւատային նոցա և լսէին: Զի նոքա ո՛չ գիտէին, թէ թիւր էր նոցա բանն, որպէս*[5] *որ այժմ զինչ որ մեք ասեմք՝ հաւատան ժողովուրդքն, և թէ ծառայել ասեմք՝ հնազանդին: «Գլխոյ հետ երթայ ոտքն»: «Գլուխ»՝ ճիշտ մարգարէքն, և «ոտք»՝ սուտ մարգարէքն, այն է «զհետ երթալն*[6]*», որ սուտ մարգարէքն ճիշտ մարգարէից նմանեցուցանել: Զի որպէս մարգարէքն յԱստուծոյ խօսէին զպատգամն, նմանապէս և սուտ մարգարէքն յԱստուծոյ ասէին խօսել, այսինքն՝ ի կռոցն, և որպէս մարգարէքն զապագայն ասէին, նոյնպէս նոքա այլ զապագայն խոստանային*[7] *գիտել: Որպէս և զա*[8] *ասաց զինքն ոմն մեծ, այսինքն՝ ճշմարտին նմանեցոյց զինքն*[9]*, զի Քրիստոս ասաց զինքն և յետոյ՝ սպանաւ ինքն և որ յարեցաւ ի նա, և Յուդայ*

---

1 AB սղալ
2 A Քրիստոս գալցն որ եկն *փխ* քրիստոսի գալուստն
3 A հաւատացին ի նա
4 B և *փխ* որ
5 B և որպէս
6 B երթալ
7 B ի սատանայէ *փխ* խոստանային
8 A դաս *փխ* դա
9 B *չիք* զինքն

Գալիլեացի[1] յաւուրս աշխարհապրին (տե՛ս Գործ. ե 37), և նա կոչեաւ՝ հաւանելովն իւրն[2]: Պարտ էր քահանայիցն ընդ ձեռամբ անկելոցն[3] պահել[4], օրինացն ուսուցանել: Նոքա ի բերս ընծայից յորդորէին վասն ժլատութեան, այսինքն՝ վասն ագահութեան, և յուր աստ լինել ի Քրիստոսէ յորդորէին՝ դիտելով զխափանիլ ատուերականին, այսինքն՝ զօրինացն նուազութիւն լինի շահից իւրեանց, զի խափանէր սուտքն նոցա, զոր առնուին ի ժողովրդենէն: Եւ վասն այս պատճառիս փակէին առաջի նոցա զմուտն աւետարանին Քրիստոսի, որ խափանէր զգոհս[5] օրինաց նոցա: Զի լսէին ի Քրիստոսէ, որ ասէր. «Թողէ՛ք դուք զծանր լուծ օրինացն[6] զողորմութիւն և զհաւատս, և զտասանորդէ՛ք զանանուխ[7]» (հմմտ. Մտթ. իգ 23): Որոց ասաց և մարգարէս Եսայի, թէ՝ «Յերիտասարդս նոցա ո՛չ բերկրեացի Աստուած» (հմմտ. թ 17): «Երիտասարդս[8]» աստ ո՛չ[9] ըստ հասակին ասէ, այլ ըստ ուժգին պատուիրանին պահպանութեան, որ ի Հինն զպատուիրանն պահէին: Որպէս Զաքարիայ[10] և Եղիսաբեթ, որ պահէին զպատուիրանն և արդարք[11] էին առաջի Աստուծոյ, և Պօղոս արդար էր և անարատ ըստ օրինացն, զի օրէնքն պահէր: Իսկ ի[12] Նորս, որ զՀին օրէնքն ուժգնապէս պահէ՝ ո՛չ բերկրեացի յայնպիսին Աստուած: Զի այն, որ Հինն շահ էր և օգուտ օրինացն պահելն, ի Նորս թէ պահեն զՀին օրէնքն՝ վնաս առնէ պահողին, զի օտարացուցանէ ի Քրիստոսէ զպահողն: Զի է ինչ ի Հին

---

1 A գալիլիացի
2 B իւր
3 B արկաւեալոց
4 AB Հպահել
5 A զոհս
6 B լոյծ օրինաց
7 A զանանուխն
8 B երիտասարդ
9 B որ *փխ* ոչ
10 A Զաքարիաս
11 B արդար
12 B *չիք* ի

*օրինացս*[1]*, որ դեռ*[2] *պահեն ի Նորս, որպէս զտասն բանեան*[3] *օրէնքն, որ հրաման ունիմք*[4] *պահել պնդապէս, և այլ ինչ ի հին օրինացն, որ պահողին արդարութիւն և փրկութիւն առնէ, և է ինչ, որ ո՛չ է օգուտ պահողին, այլ վնաս*[5]*: Զայնոսիկ*[6]*, զոր Տէրն ի Նորս փոխեաց՝ զլուացումն և զթլփատութիւնն և զայլն, զի փոխանակ լուացմանն զմկրտութիւն եդիր*[7]*, և փոխանակ թլփատութեանն՝ զսրտին մաքրութիւն, որ զչար խորհուրդն ի սրտէն հանէ և կրտէ և ի բաց ձգէ զհպարտութիւն, զխեւ, զնախանձ, զբարկութիւն, զցանկութիւն չարին և այլն: Ապա տե՛ս, որ*[8] *հաբաշն*[9] *և այլ յազգացս*[10] *որ կան, որ զլուացումն և զթլփատութիւնն ունին և այլն, զոր խափանեաց Քրիստոս, ի նորս[ս] ձրի է նոցա և անօգուտ պահելն: Վասն որոյ մարգարէս յանդիմանէ և նախատէ*[11] *ասելով. «Ո՛չ զուարճանայ Աստուած յայնպիսիս երիտասարդս յետ դադարելոյ ատուերին», (հմմտ. Թ 17) որ զհին օրէնքն զամենայն քաջապէս պահեն զայն, զոր Քրիստոս փոխեաց ի Նորս, և զհինն հրամայեաց ո՛չ պահել:*

**Մի՞թէ վերանայցէ՞ փայտատ առանց փայտահարի, կամ բարձրանայցէ՞**[12] **սղոց առանց ուրուք ձգելոյ** *(ժ 15):*

*Սոյնպէս և քեզ ո՛չ պարտ էր հպարտանալ ի վերայ այնորիկ*[13]*, որ եհան զքեզ ի վերայ ազգաց: Լինի թէ զփայտատն կամ զսղոցն գովեն, թէ առանց մարդոյ*[14] *կտրեաց*[15] *զփայտն:*

---

1 A օրինացն
2 B *չիք* դեռ
3 A բանեանեան
4 A ունեմք
5 A մանուանդ վնաս է պահողին *փխ* այլ վնաս
6 B զայսոսիկ
7 B և զայլն *փխ* եդիր
8 B *չիք* որ
9 A խաբաշնին
10 B յազգ
11 B անարգէ և յանդիմանէ *փխ* յանդիմանէ և նախատէ
12 B բարձրացի
13 B այսորիկ
14 A մարդու
15 A կատարեաց *փխ* կտրեաց

*Զմարդն գովեն, և գովուքիւն մարդոյն է: Եւ զայս առնուն հերետիկոսք, այսինքն՝ հերձուածողք, ի վերայ Որդոյն Աստուծոյ զմարգարէի բանս որ ասէ. «Մի թէ վերանայցէ՞ փայտատ*[1] *առանց փայտահարի, կամ ձգիցի՞ սղոց առանց ուրուք ձգելոյ»: Զի որպէս փայտատն և սղոցն գործիք*[2] *[են] մարդկան, զի առնուն ի ձեռն*[3] *և սովաւ գործեն զգործն, զոր ինչ գործէ սոցա, նոյնպէս և զՈրդոյ ասեն, թէ՝ «Ահա Հայր Աստուած ի ձեռն զՈրդին և նովաւ զամենայն ինչ գործեաց»: Այլ մեք հաւատացեալքս զայս ո՛չ ընդունիմք և ո՛չ ասեմք, զոր նոքա ասեն, այլ մեք զայս ի վերայ ասորոյն Ռափսակայ առնումք զմարգարէի բանս՝ գրոց մտաց հետևելով: Եբրայեցոց պատմութիւնն գրեալ է, թէ տասն այր մնացին և փախեան ընդ Ռափսակայ*[4]*, և գնացին առ Սինէքարիմ թագաւորն և պատմեցին զդիպուածս*[5] *թագաւորին իւրեանց Սինէքարիմայ*[6]*, զոր ինչ պատահեաց նոցա յԵրուսաղէմ (հմմտ. Դ Թագ. ԺԸ 13-37): Եւ այլքն ԺԵ (15) ասեն: Որքան որ է՝ զսակաւն ցուցանէ այնքան, մինչ մանուկ տղայն կարէր թուել: Ի նոցա կորստենէն շահ այս եղև, զի ծանեան զնոցա տկարութիւն և զկար ամենազօրին, նոցա տկարութիւնն երևեցաւ և Աստուծոյ զօրութիւնն: Եւ միայն երևեցաւ*[7]*, որ «այլ ո՛չ յուսացան ի զրկիչս իւրեանց» (հմմտ. Ժ 20) յասորեստանեայն և դամասկացիսն*[8] *և յեգիպտացին*[9]*, ո՛չ ի թագաւորս և ո՛չ ի կառս, այլ ի Տէր Աստուած ապաւինեացին ի փրկիչ և ի կեցուցիչն իւրեանց: Երկրորդ՝ շահ եղև: Մին*[10]*՝ որ նոքա դադարէին յամբարտաւանութենէն, որ հպարտանային և ամբար-*

---

1 B փայտ
2 A գործիքնն
3 A ձեռք
4 B Հռափսակայ
5 B զդիպուած
6 A Սէնէքարիմա
7 A *չիք* երևեցաւ
8 B դամասկացին
9 B *չիք* և յեգիպտացին
10 A մի

*տաւանէին*[1]*, բանիւ*[2] *և մտօք պարծենային*[3]*, երկու՝ որ իսրայելացոցն շահ և օգուտ եղև, որ դադարէին յառաջին չարութենէն: Եւ թէպէտ ժամանակ մի դադարեցին, սակայն զիւրեանց չարութիւնն ո՛չ թողին, զոր սովորեալ էին ի չարն: Զի դադարեցին յառաջին չարութենէն*[4]*, որ յայլազգիսն*[5] *կապաւինէին, այլ ի ճանաչել նոցա զհզօրին աջ, նա լիցի նոցա փրկիչ և կեցուցիչ: Զի յորժամ նոքա ամբարշտէին և մեղս գործէին, մատնէր զնոսա երբեմն շրջակայ ազգացն, որ գային զնոսա աւերէին և թալանէին՝ եդոմայեցոցն, մովաբացոցն, ամոնացոցն և իլամացոցն: Եւ յորժամ*[6] *մեծամեծ մեղս գործէին և ի կռապաշտութիւն անկանէին, հեռաւոր*[7] *ազգաց մատնէր զնոսա՝ ասորեստանեաց և եգիպտացոց, որ գային և աւերէին և գերէին զնոսա և տանէին: Եւ յորժամ զբարիս*[8] *գործէին, բարերարէր զնոսա և խնամէր: Եդոմայեցիքն և մովաբացիքն ի Ղովտայ որդոցն են, և իլամացիքն՝ հեթանոսք են*[9]*:*

**Եւ**[10] **եթէ**[11] **եղիցի ժողովուրդն իբրև զաւազ ծովու, սակաւ**[12] **ինչ մնացորդք մնասցեն**[13] **ի նոցանէ** *(ժ 22):*

*Զի միշտ ի բազմութիւն վաստահանային նոքա, այսինքն՝ իսրայէլացիքն, թէ ո՛չ կորուսանէ վասն բազմութեան, իբր թէ՝ վասն մեղաց*[14] *զայսչափ*[15] *ժողովուրդս ո՛չ կորուսանէ*[16] *և պա-*

---

1 B *չիք* և ամբարտաւանէին
2 A բանիւն
3 A և պարծենային
4 A չարութեանն
5 A յայլազգիքն
6 A յոր *փխ* յորժամ
7 A հեռաւորաց
8 A բարիս
9 C *չիք* Վայ ասորեստանեայց, գաւազան (ժ 5)... հեթանոսք են (*տե՛ս աստ, էջ 159*)
10 C *չիք* եւ
11 AB թէ
12 B սակայն *փխ* սակաւ
13 B մնացին
14 AB մեղաց համար *փխ* վասն մեղաց
15 C այսչափ
16 AB չկորուսանէ *փխ* ոչ կորուսանէ

*տուհասէ[1] Աստուած: Բառնայ մարգարէս ի միջոյ գյոյսն և ասէ. «Աստուած ո՛չ ակն առնու բազմութեան[2]» (համմտ. Գաղատ. Բ 6), զի մօտ յԱստուածն բազումն և սակաւն միապէս է: Զի՞նչ օգուտ ի բազմութենէն, յորժամ[3] անպիտան[4] լինին չար գործօք: Զի սակաւ հաւատացեալն պատուական վարկանի[5] Աստուած, քան զբազմութիւն ամբարշտացն: Կատարի բանս այս ի վերայ տանն Յուդայ, որ ասէ. «Ի բազմացն սակաւք մնասցեն[6]», զի յերկոտասան ազգէն Բ (2) ազգն միայն մնացին, որ յԵրուսաղէմ էին, և այլ[7] Ժ (10) ազգն, որ ի Սամարիայ՝ գերեցան:*

*Դարձեալ. «Ի բազմացն սակաւք մնացին[8]», այսինքն՝ յերկոտասան որդոցն Իսրայէլի առաքեալքն միայն ապրեցան, որ հաւատացին ի Քրիստոս[9] և աշակերտեցան նմա: Իսկ այլք, որք ո՛չ հաւատացին, թէպէտ բազումք[10] էին՝ կորեան[11]:*

**Բան մի հակիրճ և համառօտ արդարութեամբ, զբանն համառօտ արասցէ Տէր զօրութեանց ընդ ամենայն տիեզերս** *(Ժ 22-23):*

*Զո՛չ ներելն և զո՛չ երկայնամտելն Աստուծոյ ցուցանէ, որ ի վրէժխնդրութիւն դարձաւ և վաղվաղակի պատժեաց զՍէնէքարիմ[12] իւր զօրօքն՝ զօրքն յԵրուսաղէմ և զինքն յիւր տեղին[13] ի Նինուէ: Զի ասորիքն, այսինքն՝ Սէնէքարիմ[14] և Ռափսակ զօրավարն իւր, որ ելան և եկին յաշխարհէն իւրեանց, նախ՝ զՍամարիայ առին և թողին զԵրուսաղէմ ի տեղն, և գնացին ելան մինչև*

---

1 C զպատուհասէ
2 C բազմութեանն
3 AB որ յորժամ
4 B անօգուտ *փխ* անպիտան
5 C լաւ համարի *փխ* պատուական վարկանի
6 B մնացին
7 B *չիք* այլ
8 A ապրեցան *փխ* մնացին
9 A Քրիստոսի *փխ* ի Քրիստոս
10 B բազում
11 B կուրէին
12 B զՍինէքարիմ
13 A տեղիքն
14 B Սինէքարիմ

*յաշխարհս, և զամենայն առին և աւերեցին, և սպանին և գերեցին, և ապա՝ դարձան և եկին ի վերայ Երուսաղէմայ[1] և զԵրուսաղէմ պաշարեցին: Եւ վրէժխնդիր եղև Աստուած, և ի ձեռն հրեշտակին իւրոյ սատակեաց զնոսա:*

*Դարձեալ. «Բան հակիրճ և համառօտ արդարութեամբ»: Զհանդերձեալ դատաստանն ակնարկէ, զոր առնելոց է Տէր ամենայն տիեզերաց մարդկան. եղելոց[2] իրացն և զլինելոցն[3] ցուցանէ[4]: Զի որպէս յառաջին բազմութենէն, այսինքն՝ յերկոտասան որդոցն Իսրայէլի[5], սակաւք ապրեցան՝ առաքեալքն, ի Քրիստոս և աշակերտեցան նմա[6] և այլքն, որք հաւատացին նմա[7], իսկ[8] այլքն, որ ո՛չ հաւատացին, թէպէտ բազումք էին[9]՝ կորեան[10]: Նոյնպէս և ի հանդերձեալն կատարի, զի զնոյն և[11] ի հանդերձեալն է առնելոց Աստուած, զի ո՛չ բազմացն ակն առնու, այլ արդարոցն և դարձելոցն, որ դառնան ի չար ճանապարհէն և ապաշխարեն: Զի որպէս առ Ջրհեղեղաւն զբազմութիւն[12] ամբարշտացն կորոյս, և Նոյ[13] միայն մնաց իւր կնաւն և որդովքն[14], զի «ոգիք ընդ, ասէ առաքեալն, ապրեցան ի Ջրհեղեղէն» (հմմտ. Բ. Պետ. Բ 5): Նոյ իւր[15] տամբքն[16] և որդովքն և կանամբքն[17] ապրեցան վասն իւրեանց արդարութեանն, և այլքն կորեան վասն իւրեանց չար գործոցն զոր գործէին:*

---

1 A յԵրուսաղէմ
2 A յեղելոց
3 B չեղելոցն
4 C *չիք* կատարի բանս այս ի վերայ տանն Ծուդայ... զլինելոցն ցուցանէ
5 AB *չիք* այսինքն յերկոտասան որդոցն Իսրայէլի
6 AB *չիք* ի Քրիստոս և աշակերտեցան նմա
7 AB *չիք* նմա
8 C *չիք* իսկ
9 A *չիք* որ ոչ հաւատացին թէպէտ բազումք էին
10 B *չիք* իսկ այլքն... կորեան
11 B զայն *փխ* զնոյն և
12 AB բազմութիւն
13 C Նոյն
14 AB որդովն
15 B *չիք* իւր
16 B տամբն
17 B կանաւն

*Դարձեալ. առ*[1] *սոդոմայեցիքն բազումք կորեան և սակաւք ապրեցան, որ էր Ղովտ միայն դասերօքն (տե՛ս Ծննդ. ԺԹ 29-30): Եւ իսրայէլացիքն վեց Հարիւր Հազարք*[2] *վասն իւրեանց չարութեանն և ապստամբութեանն ամենևքեան տապաստ անկան*[3] *յանապատին և մեռան, և մի ի նոցանէ ո՛չ մտաւ յերուսաղէմ: Բայց սակաւք ի նոցանէ մտին*[4] *յերուսաղէմ, այսինքն՝ Յեսու և Քաղէբ*[5] *(տե՛ս Յեսու. ԻԱ 12), որ բարիք էին, իսկ այլքն ի բաց անկան յերեսաց Աստուծոյ: Նոյնպէս և ի վերջումն աւուր կատարի այս*[6]*, զի բազումք*[7] *կորնչելոց են և սակաւք ապրելոց: Զի հեթանոսաց ազգն, այսինքն՝ անհաւատիցն, որ ո՛չ հաւատան Քրիստոսի աստուածութեանն, ամենևքեան կորնչելոց են, զի ամենայն հեթանոսք յո՛չինչ*[8] *են համարեալ նմա: Նոյնպէս հերձուածողաց դասքն կորուսելոց են, նոյնպէս և սատանայ իւր անհուն զօրօքն կորուսելոց է: Եւ ի հաւատացելոցն, որ ոք*[9] *գործ բարութեան*[10] *չունին և չարագործ են*[11]*, գնան ընդ սատանայի ի դժոխքն, նոյնպէս՝ ուրացողքն*[12]*, որ զհաւատքն*[13] *թողեալ են: Իսկ սակաւք ապրելոց են ի հաւատացելոցն. նոքա, որ զհաւատն ճշմարիտ ունին և բարեգործք*[14] *են*[15]*, գնան յարքայութիւն Աստուծոյ:*

*Զի յորժամ եկն և զՍամարիայ էառ, յանցեաւ*[16] *Եզեկիայ հարկս տալ նմա, զի մի գայցէ և աւերեսցէ: Նա ո՛չ լուաւ նմա,*

---

1 AB *չիք* առ
2 AC հազարքն
3 A ամէնքն ապաստան գան *փխ* ամենեքեան տապաստ անկան
4 C *չիք* մտին
5 C Քաղէփ
6 AB *չիք* այս
7 A բազումն, C բազում
8 B ոչինչ
9 AB որ որք որ
10 C *չիք* բարութեան
11 B ի չարագործն *փխ* չարագործ են
12 AC ուրացեալքն
13 B զհաւատն
14 A բարէգործքն, B բարի գործեն
15 B *չիք* են
16 B յանձն *փխ* յանցեաւ

*այլ սպառնացաւ, և գնաց մինչև յաշխարհս և ի գառնալն ասաց առնուլ զնա և աւերել:*

**Եկեսցէ և հասցէ ի քաղաքն Անդէ** *(Ժ 28):*

*Եւ այլն, այսոքիկ զառաջիկայ քաղաքանին ասէ, որ ի գնալն ի Սամարիայ*[1] *յԵգիպտոս, զոսո[ա] էառ և աւերեաց:*

**Բղխեսցէ գաւազանն յարմատոյն յես[ս]եայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի** *(ԺԱ 1):*

*Մարգարէանայ վասն ծննդեան փրկչին Քրիստոսի, զոր առ յապայն էր լինելոց և ծնանելոց ի սուրբ կուսէն Մարիամայ*[2]*: Ոմանք վասն Եզեկիայի ասեն ասացեալ զբանս զայս մարգարէ[է]ս, զոր ո՛չ է ճշմարիտ: Զոր յորժամ մարգարէս մարգարէացաւ և ասաց զայս բանս, թէ՝ «Բղխեսցէ և ելցէ ծաղիկ», Եզեկայի նախքան զասել բանիս էր ծնեալ և թագաւորեալ*[3]*: Թէ վասն սորա էր «բղխեալ» ասէր և «ելեալ», այլ ո՛չ ասէ այսպէս, այլ թէ «բղխեսցէ*[4] *և ելցէ», որ զապագայն կու ցուցանէ, որ դեռ յետոյ էր լինելոց: «Բղխեսցէ»՝ զշառաւիղելն*[5] *և զելանելն ցուցանէ «յարմատոյն», այսինքն՝ յԱբրահամէ և ի Դաւթէ՝ ի նոցին զաւակացն ծնեալ:*

*Դարձեալ. «յարմատոյն» ասելն և շառաւիղելն*[6] *զառանց ամուսնութեան և զառանց սերման, և զանապական ծնունդն Քրիստոսի ցուցանէ: Մարգարէս Եսայի*[7] *«բղխել» ասէ վասն Քրիստոսի ծննդեանն, թէ՝ «Բղխեսցէ պաւազանն յարմատոյն», և Աւետարանիչն ծնանել ասէ. «Եւ ի ծնանելն Յիսուսի Քրիստոսի» (Մտթ. Բ 1), և «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» (Ղուկ. Ա 11),*

---

1 A Սամարիոյ
2 A Մարիամու
3 B թագաւոր *փխ* թագաւորեալ
4 A բխեսցէ
5 A զշառաւեղելն
6 A շառաւեղելն, B զշառաւիղն
7 A Եսայ

*զի*[1] *զծնունդն*[2] *Քրիստոսի ի Մարիամայ Եսայի «բղխումն» ասէ, և աւետարանն*[3] *«ծնանիլ» ասէ. ո՛չ են հակառակ միմեանց: Զի յաշխարհիս, զոր ինչ ծնունդասեն լինել, ծնունդն զծնօղի բնութիւնն ունի, զի մարդն ի մարդոյն*[4] *ծնանի և զմարդոյ*[5] *բնութիւնն ունի: Նոյնպէս և զինչ ծնունդ, որ կայ յաշխարհիս*[6]*, զծնօղի բնութիւնն ունի, որպէս ձին ի ձիւն ծնանի՝ զձիու բնութիւնն ունի, նոյնպէս և այլքն*[7]*: Իսկ այն*[8]*, որ «բղխումն» ունի*[9] *յաշխարհի, ո՛չ ունի զբղխողին*[10] *բնութիւնն: Զի աղբիւրն*[11] *յաղբերէն բղխէ և յառաջ գայ և ո՛չ ունի զբնութիւնն, զի այն, որ բղխէ*[12] *և յառաջ գայ, ջուր է, իսկ աղբիւրն*[13] *որ բղխէ՝ հող է կամ քար է: Այլ է ջրի բնութիւն և այլ է քարի և հողի բնութիւնն*[14]*, զի այս ջուր է, և այն*[15] *քար է և հող, ապա օտար են ի միմեանց և բաժան: Իսկ այն, որ*[16] *աւետարանն «ծնանիլ» ասէ վասն Քրիստոսի, զայն ցուցանէ, որ ի Մարիամայ սրբոյ կուսէն ծնաւ և զմարդոյ բնութիւնն*[17] *էառ: Զի ի մարդոյ ծնաւ և զմարդկան բնութիւնն էառ*[18]*, որպէս ասացաւ, թէ՝ «Ծնունդն զծնօղի բնութիւնն ունի»: Իսկ մարգարէս, որ «բղխումն» ասէ, զառանց սերման և զանապական ծնունդն ցուցանէ: Նոյնպէս և այս, որ «ծնունդ» և «բղխումն» ասի, ի վերայ Որդոյն և Հոգւոյն*

---

1 A զի զի
2 A ծնունդն
3 B աւետարանիչն
4 B մարդ ի մարդուց
5 A զմարդու *փխ* և զմարդոյ
6 A աշխարհի
7 B և այլն *փխ* նոյնպէս և այլքն
8 B *չիք* այն
9 A ասի *փխ* ունի
10 A զբխօղի
11 A աղբերն
12 B բղխի
13 B *չիք* աղբիւրն
14 B բնութիւն հողի, այլ է քարի, և այլ է ջրի *փխ* ջրի բնութիւն և այլ է քարի, և հողի բնութիւնն
15 B նայ *փխ* այն
16 A որ որ
17 A զբնութիւնն
18 B *չիք* զի ի մարդոյ ծնաւ և զմարդկան բնութիւնն էառ

*ասացեալ լինի, յանմարմին ծնունդն Որդոյ և ի*[1] *բղխումն Հոգւոյն Սրբոյ*[2]*, զի Որդին ծնունդ է ի Հօրէ, և Հոգին Սուրբ՝ բղխումն: Եւ վասն ծննդեան Որդոյն Դաւիթ մարգարէն բղխումն ասէ. «Բղխեաց սիրտ իմ զբան*[3] *բարի» (Սաղմ. ԽԴ 2), և վասն Հոգւոյն Սրբոյ Սողոմոն ծնունդ ասէ. «Սուրբ, Մխածին» (Իմաստ. է 22): «Բղխումն» ասելով Որդոյն՝ զանապական և զառանց ախտի ծնունդն ցուցանէ, և Սողոմոն ծնունդ ասէ Հոգւոյն, զի յէութենէ*[4] *Հօրէ*[5]*, և զնոյն բնութիւն ունի Հոգին՝ զՀօր: Եւ մարգարէս Եսայի նշանակէ զծնունդն էմանուէլի, որ է Քրիստոս, ո՛չ ի սերմանէ կամ յերկրէ յայլ*[6] *իրաց, այլ «յարմատոյն», այսինքն՝ ի*[7] *սուրբ կուսէն Մարիամայ գոլ ծնունդն: Այլ և այսու բանիւս ասելով*[8]*՝ մարգարէս կարկէ զամենայն բերան հերձուածողացն և ափիբերան*[9] *առնէ՝ ո՛չ ըստ արմատն անցանէ: Զի ոմանք ասացին ի հերձուածողացն, թէ՝ «Մարմինն ընդ մարմնոցն*[10]*, և ո՛չ ինչ էառ ի կուսէն», որպէս ջուրն ընդ խողովակն*[11] *անցանելով՝ ո՛չինչ առնու ի նմանէ, բայց միայն զձևն: Նոյնպէս ասեն վասն Քրիստոսի, թէ՝ «Զձևն միայն էառ, որ մարդ ձևացաւ*[12]*, և էանց ընդ կոյսն և ո՛չինչ էառ ի նմանէ»: Ոմանք ասացին ի հերձուածողացն. «Յերկնից բերեալ զմարմինն», և զայն բանն, որ ասէ Աւետարանն. «Ո՛չ ոք ել յերկինս, եթէ ո՛չ, որ էջն յերկնից Որդին*[13] *մարդոյ» (Յովհ. Գ 13). զայս բանս չկարացին հասկանալ, և յայս*

---

1 B *չիք* ի
2 A *չիք* Սրբոյ
3 A բաց
4 AB ի էութենէ
5 B *չիք* Հօրէ
6 B այլ
7 A *չիք* ի
8 B ասէ
9 AB աբիբերաց
10 A մարմինոցն, B մարմնոց
11 AB *հողովակն*
12 B մարդաձևացաւ *փխ* մարդ ձևացաւ
13 B Որդի

*մոլորեցան և ասացին զայս*[1]: *Զայս հերձուածս*[2] *այլ խափանէ մարգարէս:*

*Դարձեալ. ոմանք ասացին. «Սոսկ մարդ ստեղծեալ՝ յարգանդի Կուսին ծնեալ, և յետոյ ապա Բանն Աստուած բնակեցաւ ի նմա»: Զի ասեն Հոգին Սուրբ էառ յարենէ Կուսին և ստեղծեաց մարդ յարգանդի Կուսին. «Եւ յետ ինն[ն] ամսեան ապա ծնաւ Կոյսն սոսկ մարդ, և ապա Բանն*[3] *Աստուած բնակեցաւ ի նմա»: Զայս ասելով մարգարէի*[4] *կարգ իջուցանեն զԲրիստոս, զի մարգարէքն այլ սոսկ մարդ էին, և յետոյ Հոգին բնակեցաւ ի նոսա և մարգարէանային, և յորժամ վերանայր՝ մնային սոսկ մարդ: Վասն Քրիստոսի այլ այսպէս ասացին. «Սոսկ մարդ ծնեալ, և յետոյ Բանն բնակեցաւ ի նմա»՝ գալով և գնալով, այլ ո՛չ որպէս նոքա ասացին: Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն համայնգամայն*[5] *միաւորեցան յարգանդի*[6] *Կուսին, զի Հոգին Սուրբ էառ յարենէ Կուսին և ստեղծ զմարմին*[7] *բանին Աստուծոյ: Եւ ի նոյն ժամն համայնգամայն*[8] *եղեն է (7) սքանչելիք՝ առումն արեան և թանձրանալն, և ձևանալն և շնչաւորիլն, և ծնանիլն: Ի միում վայրկեան ժամանակի եղև ի քթթել ական և*[9] *ի նոյն ժամ, որ ասաց Կոյսն կամ աղախին Տեառն՝ Ի (40) օրեայ մանուկ գոյացաւ յարգանդի Կուսին: Եւ ո՛չ աստուածութիւն ի մարմին շրջեալ, զի ի մարմնանալն, որ բանն Աստուած մարմին էառ ի Կուսէն, ո՛չ աստուածութիւն ի մարմին յեղաշրջեցաւ և վոխեցաւ յաստուածութենէն, և այլ իմն եղև, և ո՛չ մարմինն յեղաշրջեցաւ ի մարդկութենէն և այլ իմն եղև*[10]*, այլ իւրաքանչիւր զիւրն որ ինչ էրն՝ պահեաց և ո՛չ շփոթեցաւ, այլ անշփոթ միաւորեցան:*

---

1 B *չիք* զայս
2 A հերձուած
3 B *չիք* բանն
4 A ի մարգարէ
5 A համանգամայն
6 A յարգ[անդ]
7 A մարմին
8 A համանգաման
9 A զի *փխ* և
10 B *չիք* և ոչ մարմինն յեղաշրջեցաւ ի մարդկութենէն, և այլ իմն եղև

Շփոթելն[1] այն է, զի ջուրն ի գինին խառնեն[2]՝ շփոթի, զի ո՛չ ջուր է և ո՛չ գինի[3], այլ՝ այլ իմն լինի: Նոյնպէս ալիւրն և ջուր խառնի՝ ո՛չ ալիւր է և ո՛չ ջուր, այլ՝ իրմ այլ[4] դարձաւ: Իսկ աստուածութիւնն ի մարմինն խառնեցաւ և անշփոթ[5] մնաց, որպէս որ հոգին ուրիշ էութիւն է և մարմինն ուրիշ էութիւն է, և խառնեալ ի միմեանս և մի մարդ եղեալ: Սակայն ո՛չ են շփոթեալ, զի մարմինն ունի զիւր թանձրութիւնն և հոգին զիւր նօսրութիւնն, և ո՛չ են փոխեալ ի միմեանս և շփոթեալ: Մարգարէի բանս զամենայն՝ ասացեալ բան[6] հերձուածողացն[7] ստեաց, զի ո՛չ ի սերմանէ և ո՛չ յերկրէ և ո՛չ ընդ մարմինն անցանելով իբրև ընդ խողովակ[8]՝ ո՛չ յերկնից եբեր զմարմինն և ո՛չ աստուածութիւնն ի մարմին շրջեալ և շփոթեալ, այլ ճիշտ ի Կուսէն առեալ մարմին բանին Աստուծոյ, բայց ի մեղաց արտաքոյ Հասարակաց կրից: Եւ ճիշտ է մարգարէի բանս[9]. վասն Տեառն մերոյ է ասացեալ և ո՛չ թէ Եզեկիայի: Սակայն մասամբ ինչ ի վերայ Եզեկիայի առնու՝ երկու բան կամ երեք, և այն այլ որ[10] առնու՝ օրինակ է Տեառն մերոյ, զի սա օրինակ էր նորա[11], իսկ ճշմարտութիւնն ի նա կատարեցաւ, այսինքն՝ ի Քրիստոս: Զի այն, որ ասէ. «Բղխեսցէ դաւազան[12] յարմատոյն Յեսսեայ[13]», և թէ՝ «Հարց ես զերկիր բանիւ բերանոյ իւրոյ» (ԺԱ 4), և թէ՝ «Արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր» (ԺԱ 5), սոքա Եզեկիայի առնուն, զի նա այլ ի զաւակացն Դաւթի էր և ի նորա յազգէն ծնաւ: Եւ եհար պատգամով բերանոյն, այսինքն՝ աղօթիւք իւրովք եհար և

---

1 B շփոթիլն
2 A խառնի
3 B *չիք* շփոթի զի ոչ ջուր է և ոչ գինի
4 B *չիք* այլ
5 A անշփութ, B անշփոյթ
6 B *չիք* ասացեալ բան
7 B հերձուածողաց բանս
8 AB *հողովակ*
9 B բան
10 B ոչ *փխ* որ
11 B ճախ *փխ* ճորա
12 A գաւազանն
13 A Յեսեա

*սատակեաց զասորին, այսինքն՝ զղօրքն*[1] *Ռափսակայ, և արար իրաւունս և արդարութիւն իւրև ընդ Դաւիթ: Զի խաղաղարար և արդար թագաւոր էր և անիրաւութիւն ո՛չ թողոյր*[2] *լինել, վասն որոյ ասէ.* «Արդարութիւն ածեալ ընդ մէջ»: *Եւ այն, որ ասէ.* «Գայլք և գառինք ի միասին ճարակեսցեն[3]» *(հմմտ. ԺԱ 6) և այլն: Կամ զհեթանոսքն ասէ, այսինքն՝ զասորոյ զօրքն, որ եկին և զնոսա շուրջ պատեալ պաշարեցին*[4] *և նստան բոլոր Երուսաղէմի, և այսոսիկ*[5] *խիստ չէր յարմարիր*[6]*, զի*[7] *նոքա օր մի կացին կամ երկու, զիա՞րդ ի մ[ի]ասին ճաշակէին: Այլ «գայլք» զապստամբքն և զանիրաւքն, զմեծամեծք ասէ և «գառինք» զհասարակաց մարդիկքն*[8] *ասէ, որ ի նոյն ազգէն*[9] *էին, ի մի տեղուջ: Եւ վասն արդարութեան Եղեկիայ թագաւորին և վասն իրաւանցն արդար օրինացն ո՛չ կարէին նոքա, որ ապստամբք էին և մեծամեծք, հարկանել կամ ղրկել զաղբատն և զփոքունքն վասն ահի թագաւորին և վասն իրաւարար և արդար օրինացն Աստուծոյ, զի ակն ընդ ական էր և ատամն ընդ ատաման և արիւն ընդ արեան: Զի թէ սպանանէին*[10]*, օրէնքն հրաման տայր սպանողն*[11] *սպանանել նորա փոխան և այլն: Այլ մարգարէութիւնս ճշմարիտ ի վերայ Քրիստոսի.* «Գաւազան յարմատոյն[12] Յեսսեայ[13]» *Դաւիթ, և ծաղկեալ և շառաւեղեալ յորդոց*[14] *նորա, այսինքն՝ Յովսէփու և ի*[15] *Մարիամու ծնաւ Քրիստոս, զի Յովսէփ կոչմամբ հայր կոչեցաւ Քրիստոսի:* «Եւ ելցէ ծաղիկ յար-

---

1 A զօրքն
2 B կամէր փխ թողոյր
3 A ճարագեսցին
4 B շուրջանակի պատեցին փխ շուրջ պատեալ պաշարեցին
5 A այսոցիկ
6 B յամարիր
7 A չիք զի
8 A մարդիքն
9 A յազգէն
10 A սպանանէին
11 A սպանօղն
12 B յարմատուն
13 A Յեսսա
14 B շառաւիղեալ որդիք
15 B չիք ի

մատոյ անտի»: *Այս զաճումն ցուցանէ զՔրիստոսի, որպէս ասէ աւետարանն. «Մանուկն աճէր և զօրանայր լի՛ իմաստութեամբ» (Ղուկ. Բ 40), և ո՛չ թէ աստուածութիւնն կաճէր, այլ մարմինն աճէր*[1] *և աստուածութիւն ընդ մարմնոյն էր: Զի աստուածութիւնն ո՛չ աճէր, և առաւելու և ո՛չ նուազի, այլ աճումն մարմնոյն է, զի մարմինն աճէր, և աստուածութիւնն ընդ նմա էր ի մարմինն, ընդ մարմնոյն աճել ասի:*

**Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ** *(ԺԱ 2):*

*Յորովայն*[2] *կուսին էջ և հանգեաւ ի վերայ նորա Հոգին Սուրբ Աստուած: Զի նախ՝ Հոգին Սուրբ մաքրեաց զԿոյսն, և էառ յարենէ ամենամաքուր սուրբ կուսէն և ստեղծեաց և կազմեաց մարմին: Դարձեալ. ի Յորդանան էջ և հանգեաւ ի վերայ Քրիստոսի Հոգին Սուրբ Աստուած և յայտնեաց զնորա աստուածութիւնն: Դարձեալ. մեք անդամք եմք նորա և նա մեզ գլուխ է, և ի մեզ իջանելով Հոգոյն նորա համարեալ է, զի զոր ինչ անդամոցն է՝ գլխոյն է համարեալ, վասն որոյ զմերն իւրն համարի Քրիստոս: Դարձեալ. ո՛չ, զի կարօտ էր Հոգոյն, որ ընկալաւ յինքն*[3]*: Զի այն կարօտի, որ բաժանին, և գնան ի միմեանց, յայնժամ կարօտին միմեանց, զի ո՛չ կարեն տեսանել: Իսկ Որդի և Հոգին ո՛չ բաժանին և ո՛չ հեռանան ի միմեանց, ո՛չ կարօտին, և էակից և փառակից է Հոգոյն և հաւասար նմա ամենայնիւ աստուածութեամբ: Եւ փառօք և պատուով ո՛չ կարօտի Հոգոյն, այլ էառ զՀոգին Սուրբ զանազան պարգեւօքն յինքն և ընկալաւ յիւր մարմինն, զի մեզ շնորհեացէ և պարգեւեացէ զոր կորուսեալ է մեղօք՝ վերստին շնորհեաց մեզ, զի մեք էաք կարօտ և ո՛չ նա: Եւ նմա երևելով Հոգին մեզ լինի երախտիքն, որպէս մարդն լինելով ո՛չ կարօտութեան*[4] *ինչ իւր էր, այլ զմեզ Որդիս առնելոյ սակս:*

---

1 B կաճէր
2 AB ի յորովայն
3 A ինքն
4 B կարօտութիւն

*Նոյնպէս և զՀոգին ընդունեցաւ յինքն, զի ընդունելի կարօտեցաւ արասցէ «Հոգի իմաստութեան և հանճարոյ» (ԺԱ 2) և այլն: Ո՛չ թէ աստուածութեանն ստանալ, այլ մարմնոյն ասէ զայս, զի մարմնոյն վերաբերին[1] այսոքիկ և ո՛չ աստուածութեանն, զի իմաստութեան ո՛չ կարօտի և ո՛չ այլոցն, զի ինքն է իմաստութիւն Հօր՝ իմաստութիւն և հանճարն միապէս, զի ի նմանէ խորհուրդ և հանճար, զի քաջ տեղակ է խորհրդոյ և կամացն Հօր: Եւ նա ծանոյց զՀայրութեան պատիւ և զանուն, որպէս ասէ. «Յայտնեցի՛ զանուն քո մարդկան» (Յովհ. ԺԷ 6), զի զխորհուրդն[2] Հօր, որ ծածկեալ էր իսկզբանցն[3] յաւիտեանց, յայտնեցաւ[4] մարդկան մարդ լինելովն իւրում: Իսկ զօրութիւն Քրիստոսի՝ Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւնն: Դարձեալ. զօրութիւն: Զնշանն և զաքանչելիքն[5] զոր առնէր, այս է զօրութիւնն՝ զոր[6] Հոգովն առնէր: «Ընդ մատամբն Աստուծոյ հանեմ զդեւս[7]» (Ղուկ. ԺԱ 20): Մատն զՀոգին Սուրբ ասէ. «Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան» (ԺԱ 2): Այս ի դէմս մեր յարմարի, զի զգիտութիւն աստուածպաշտութեանն կորուսեալ էաք: Ծանուց մեզ զխորհուրդս[8] կամաց իւրոց[9], զի տունս և տեղեակս լինել մեզ, թէ որպէս պարտ է[10] պաշտել զԱստուած, այնպէս որպէս նմա վայել է՝ երկիւղիւ, ահիւ և դողութեամբ:*

**Եւ լցցէ զնա Հոգին երկիւղի Տեառն** *(ԺԱ 3):*

*Ո՛չ թէ երկնչի նա ի Հօրէ, այլ սիրէ զնա, այսինքն՝ զՀայր, զի Որդոյ սէր վայել է և ո՛չ երկիւղ: Զի որպէս զանճն եդ ի վերայ*

---

1 AB վերաբերին
2 B խորհուրդն
3 AB յիսկզբանցն
4 A յայտնեաց
5 B աքանչելիքն
6 B զօրութիւն որ
7 A զդեւսն
8 B խորհուրդս
9 A իւրեանց
10 A էր

*խաչին իւրոյ, նոյնպէս և զՀոգին եդ ի կենդանութիւն մեռելութեան աշխարհի՝ կամօք Հօր և Հոգւոյն: Եւ ո՛չ մասամբ ընկալաւ զՀոգին, այլ բոլորովին զՀոգին Սուրբ զանազան պարգեւօք, զոր թուեաց, ընկալաւ յինքն Քրիստոս: «Լցցէ զնա, ասէ, Հոգի երկիւղի Տեառն*[1]*», զի ո՛չ ոք է բաւական Հօր, բայց Որդի միայն, նոյնպէս և ո՛չ Որդոյ ոք բաւական, եթէ ո՛չ ծոցն միայն: Այսպէս և ո՛չ Հոգւոյ, եթէ ո՛չ Որդի բնակակից նորին, որ բնակեցաւ ի նմա Հոգին, զի Երրորդութիւն միայն են բաւական միմեանց և ո՛չ թէ այլ ոք, նոցա բաւական է և տանել կարէ: «Ո՛չ ի կարծս դատեցի» (ԺԱ 3): Քանզի Աստուած է և ծածուկքն*[2] *մեր յայտնիք*[3] *են նմա: Վասն այն ո՛չ է կարծեօք նորա դատաստանն և դատիլն*[4]*, զոք իբր թէ՝ ճշմարիտ ո՛չ կարէ գիտել այլ կարծեօք, այլ ճշմարիտ գիտէ աներկբայ: «Եւ ո՛չ ըստ բանից յանդիմանեսցէ» (ԺԱ 3): Այս գործ Աստուծոյ է և ո՛չ մարդոյ, որ առանց բանի պատմելոյ զծածուկն գիտենայ և դատէ, զի ծածուկքն Աստուծոյ յայտնիք են, ըստ այնմ թէ՝ «Յայտքն*[5] *մեր և ծածուկքն տեառն Աստուծոյ»: Մարդն յերեսան և ի խօսքն և ի գրուցն և*[6] *ի լեզուն և ի սիրտն*[7] *հայի և ապա իմանայ, իսկ Աստուած ի սիրտն և ի միտքն և ի խորհուրդն հայի: Դարձեալ. մարդիկք բազում անգամ վրիպին, և ո՛չ կարեն իմանալ և թիւր առնեն զդատաստանն, իսկ Աստուծոյն անվրէպ է և անսխալ*[8]*, զի անաչառ է և անակնառու և անկաշառ*[9] *և այլն, զի ասէ առն. «Որոշումն*

---

1 B Տէր *փխ* Տեառն
2 A ծածուկն
3 B յայտնի
4 A դատելն
5 A յայտն
6 B *չիք* և ի գրուցն և
7 A *չիք* և ի սիրտն
8 AB անսդալ
9 B անկաշառ է

*սուղոյ յօդոյ*[1] *և շնչոյ*[2]*, զի կենապանի է բանն Աստուծոյ և հաստատ*[3]» *(հմմտ. Եբրայ. Դ 12):*

**Եւ եղիցի արդարութիւն**[4] **ածեալ ընդ մէջ իւր** *(ԺԱ 5):*

*Զիրաւացի դատաստանն ասէ, զի Աստուծոյ դատաստանն արդար է և իրաւացի: Թէ՛ աստ և թէ՛ ի հանդերձեալն արդարապէս առնէ*[5] *զդատաստանն՝ առանց ակնառութեան: Զի թէ՛ զԱդամ ի դրախտէն մերժեաց և արտաքսեաց յաշխարհս, արդար էր նորա դատաստանն, թէ՛ զկայէն պատուհասեաց՝ արդար էր: Նոյնպէս զջրհեղեղացիքն*[6] *արդարութեամբ*[7] *կորոյս, նոյնպէս՝ զփարաւոն*[8]*, նոյնպէս՝ զՍոդոմ և զԳոմոր*[9] *և զայլքն ամենայն*[10]*:*

**Հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ** *(ԺԱ 4):*

*Խափանէ զՆեռն յայտնութեամբ գալստեան իւրոյ, զի բաւական է երևելն*[11] *լուսոյ խափանել զխաւարն: Զի թէպէտ յառաջ քան զգալուստն Քրիստոսի*[12] *պիտիր սատակի Նեռն, սակայն նորա զօրութեամբն*[13]*: «Հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ»: Ի ժամ ըմբռնմանն, որ կամէին*[14] *ըմբռնել և չարչարել*[15] *և սպանանել*[16] *զՔրիստոս, յորժամ եկին սուսերօք և բրօք ըմբռնել, եհար զգետնի զըմբռնօղսն*[17]*: Զի յորժամ եհարց հեղութեամբ, թէ՝ «Զո՞ խնդրէք» (հմմտ. Յովհ. Ի 20), նոքա ամենեքեան յետև*

---

1 B յօդ
2 AB շնչոյ
3 C *չիք* Զի յորժամ եկն և զՍամարիայ էառ, յաւցեաւ Եզեկիա... Աստուծոյ և հաստատ *(տե՛ս աստ. էջ 172)*
4 C զարդարութիւն *փխ* եւ եղիցի արդարութիւն
5 C կու առնէ
6 B ջրհեղեղացիքն
7 B արդար
8 C *չիք* նոյնպէս զփարաւոն
9 C Գոմոր *փխ* և զԳոմոր
10 AB զայլն *փխ* զայլքն ամենայն
11 B երևիլն
12 B զՔրիստոսի գալուստն *փխ* զգալուստն Քրիստոսի
13 B տէր զօրութեանց է *փխ* նորա զօրութեամբն
14 B կապէին *փխ* կամէին
15 A չարել
16 A սպաննել
17 B ըմբռնօղն

*ոռեց գնացին և ուշաթափեցան և անկան: Ապա թէ բարկութեամբ էր հարցեր կամ անիծեր՝ ամենեքեան մեռանէին: Իսկ ի վախճանի «հարցէ զամբարիշտս[1] և պարտաւորեացէ[2] ի հուր դատաստանաւ շրթանց իւրոյ[3]» (հմմտ. ԺԱ 4)՝ ասելով. «երթա՛յք ի հուրն յաւիտենական[4]» (Մտթ. ԻԵ 41):*

**Արդարութիւն ածեալ ընդ մէջ** *(ԺԱ 5):*

*Զառաքեալքն ասէ, որ երկոտասան[5] աթոռով նստին ընդ Քրիստոսի և արդարապէս դատաստան առնեն և դատեն:*

**Ճշմարտութեամբ պատեալ զկողս[6] իւր** *(ԺԱ 5):*

*Եկեղեցի տէրունեան մարմնոյն, զի նա պլուխ է, և մեք մարմին նորա կոչիմք և անդամք[7] և կող: Սոքա ամենեքեան[8] միապէս են: Մարմին և անդամն, և կողն և կուշան զհաւատացեալքն և զարդարքն ասէ, և մեք զայն զգենումք[9] հանդերձ, այսինքն՝ զարդարութիւնն, զոր ինչ կողից նորա վայել է, և ո՛չ զանիրաւութիւնն:*

**Է մանուկ[10] մատաղ ի ծակ իժից, և ի բոյն կորեանց[11] իժից արկցէ զձեռն իւր. և ո՛չ ինչ վնասեսցեն և մեղիցեն նմա** *(ԺԱ 8-9):*

*Նախ՝ ընդդէմ առաքելոցն է այս[12] բանս ասացեալ, զի առաքեալքն կոչէ «մանուկ տղայ» վասն անմեղութեան: Եւ իժ և քարբ սատանայ է, որ պատերազմեցան ընդ նոսա առաքեալքն և*

---

1 B զամբարիշտն
2 A պարտաւորեացի
3 A իւրոց
4 B յաւիտենից
5 AB զերկոյտասան
6 B զկալս *փխ* զկողս
7 B անդամ
8 B ամէն
9 A ագենումք
10 B զմանուկ *փխ* է մանուկ
11 B կորեացն
12 B զայս

*յաղթեցին նոցա, զի զնոցա մեհեանքն քակեցին և զկուռքն կործանեցին և զպաշտօնն խափանեցին, և նոքա ո՛չինչ կարացին վնասել առաքելոցն: Երկրորդ՝ «մանուկ տղայ» զանմեղքն կոչէ և զարդարքն, որ պատերազմեցան ընդ սատանայի և յաղթեցին նոցա, և սատանայ*[1] *ո՛չինչ կարաց վնասել: Նոցա յաղթելն այն է, որ զօրէնքն և*[2] *զպատուիրանն Աստուծոյ պահեցեն և զհաւատքն, և նոքա տկարացան: Երրորդ՝ «մանուկ տղայ» զԲրիստոս ասէ և «բոյն կորեացն*[3] *և իժից» զԵգիպատոս կոչէ: Զի սատանայ, որ անկաւ յերկնից, նախ՝ յաշխարհս, ասեն, անկաւ: Վասն այն՝ անդ առաւել ի կռապաշտութիւն անկան մարդիք և զկուռքն պաշտեցին, զի ո՛չ ինչ իր յաշխարհի ո՛չ թողին, որ չպաշտեցին*[4] *անդ: Որ*[5] *մինչ ի սոխն և ի սխտորն, և քան զմուկն գարշելի չկա, զմուկն այլ պաշտեցին: Զի սատանայ անդ առաւել ի*[6] *գործ էած զիւր չարութիւնն, քան յայլ տեղիք, և Թէպէտ յամենայն տեղիք կռապաշտ էին և զկուռքն պաշտէին*[7]*, բայց անդ առաւել էր կռապաշտութիւնն: Իսկ Քրիստոսի գնալովն անդ՝ կործանեաց և մանրեաց զձեռագործս նոցա, զի մտանելովն անդ՝ կուռքն ամենայն և բագինքն ամենայն*[8] *անկեալ կործանեցան: Եւ յետոյ շնորհօքն Քրիստոսի անդ առաւել եղեն ճգնաւորք և առաքինիք և բարիք, քան զամենայն*[9] *աշխարհ, զի ի Սինէականն*[10] *քանի ճգնաւորք են եղեր, և այն անդ է և ի Թեբայիդ*[11] *և յայլն: Եւ այն անդ է յաշխարհս որպէս յառաջն, ի չարն առաւելլին քան զամենեսեան, յորժամ հաւատացին՝ բարի եղեն առաւել քան զամենեսեան: Զորրորդ՝ «Բոյն իժից և կորեանց*[12]*»*

---

1 B *չիք* սատանայ
2 B *չիք* զօրէնքն և
3 B կորեաց
4 A չի պաշտեցին
5 A *չիք* որ
6 B *չիք* ի
7 B *չիք* և զկուռքն պաշտէին
8 B *չիք* ամենայն
9 A յամենայն
10 A Սինականն
11 A Թեբայիթ
12 B կորեաց

*զդժոխքն*[1] *ասէ: Զի սատանայ յորժամ անկաւ յերկնից յաշխարհս, շրջապայեցաւ ի վերայ երկրի և ընթացաւ յամենայն տեղիս*[2]*, զի միտք է և արգելք ո՛չ ունի, և իջաւ ի ներքոյ երկրիս, և եգիտ անդ այր մի՝ դժուարին քարայր, և անդ հաստատեաց զիւր թագաւորութիւնն և անդ եդ զաթոռ թագաւորութեանն իւրոյ: Եւ զհոգիքն, զոր ինչ կայր անդ, ժողովեաց և ամբարեաց, զի յորժամ մեռանէր մարդն, ըմբռնէր զհոգին բռնութեամբ և անդ տանէր, իջուցանէ յայն այրն և տանջէր*[3]*: Իսկ Քրիստոս բանական հոգովն միաւորեալ՝ աստուածութեամբ*[4] *գնաց ի դժոխքն*[5]*, որ բոյն*[6] *էր սատանայի, քակեաց*[7] *և զսատանայ կապեաց, և զհոգիքն արձակեաց և ազատեաց ի դժոխոց, և եհան: Եւ սատանայ ո՛չ ինչ կարաց ընդդիմանալ նմա կամ հակառակել և վնասել*[8]*:*

**Եղիցի հանգիստ նորա պատուով** *(ԺԱ 10):*

*Այսինքն՝ որ երթայ զհետ Քրիստոսի և զհետ հրամանաց նորա և զհետ աւետարանին, և զնորա պատուիրանն պահէ, նմա*[9] *հանգիստ և փառք և ուրախութիւն*[10] *է պատրաստեալ յարքայութիւնն*[11] *երկնից: Դարձեալ. զգերեզման սրբոցն պատուեն, զի*[12] *համբուրեն և պատուեն: Նաև գերեզմանն Քրիստոսի, որ թաղեցաւ, ի պատիւ և ի փառս միշտ եղիցի, զի ամենայն արարածք գնան ի գերեզմանն և երկիր պագանեն, և*

---

1 A իժից զդժոխքն
2 A տեղիք
3 B անդ շինեաց դժոխք և անդ ժողովեաց զհոգիս մարդկան *փխ* եգիտ անդ այր մի դժուարին քարայր... տանիջէր
4 B *չիք* աստուածութեամբ
5 B դժոխս
6 B բուն
7 A և քակեաց
8 B հակառակիլ և վնասիլ
9 A նորա *փխ* նմա
10 B արքայութիւն *փխ* ուրախութիւն
11 B յարքայութեան
12 B և *փխ* զի

*պաշտեն և համբուրեն և ուխտ[1] կատարեն և դան: Իսկ առ միտս, զի հանգչի նա ի սուրբս և պատուէ զնոսա աստ և առ յապայն, զի աստ այլ զառաքինի մարդն սիրեն և պատուեն[2] և փառաւորեն, և ի հանդերձեալն ի Քրիստոսէ փառաւորի, աստ հրաւեր և անդ զկեանքն[3] յաւիտեան. «Ես յո՛յ հանգեայց[4], եթէ ո՛չ ի հեզս և ի խոնարհս և յայնոսիկ, որ[5] դողան ի բանից իմոց» (ԿՋ 2):*

**Նախանձելիս առնել զմնացորդս ժողովրդեան իւրոյ: Եւ զցրուեալսն[6] ժողովեսցէ ի չորից անկեանց[7] երկրի** *(համմ. ԺԱ 11-12):*

*Զտասն ազգն, որ յասորոցն գերեցան, և Բ (2) ազգն, որ ի բաբելացոցն գերեցան, ոմանք փախեան և յաշխարհս գնացին և այլ յամենայն[8] տեղիք, ուր և կարացին փախչել[9]: Ի դարձին, որ գերիքն դարձան, նոքա այլ, որ յԵգիպտոս էին[10] գնացեր և յայլ տեղիս[11], նոքա հրամանաւն Աստուծոյ դարձան և եկին յերուսաղէմ: «Նշան ի հեթանոսս» (ԺԱ 12): «Նշան» զխաչն ասէ, որ եալ[12] Քրիստոս, և հայեցան ի նա և[13] հաւատացին:*

**Փլուսցէ Տէր զծովն երուսաղէմացոց, և արկցէ Տէր զձեռն իւր ի վերայ գետոյն** *(ԺԱ 15):*

*Ծով և գետ. զասորեստանոյն իշխանքն և զօրքն և զբաբելացոյն գետի և ծովու նմանեցուցանէ վասն բազմութեան: Արկ*

---

1 B ուխտս
2 B *չիք* և պատուեն
3 B *չիք* զկեանքն
4 A հանգայց
5 B որք
6 B զցրուեալս
7 A անգնանց, B անգնաց
8 A ամենայն
9 A փախչիլ
10 B էն
11 A տեղիքն
12 A կանգնեաց եւ ել ի վերայ *փխ* եալ
13 B *չիք* և հայեցան ի նա և

*զձեռն ի վերայ նոցա Աստուած և եհար զնոսա, և արձակեաց զժողովուրդն իւր ի ձեռաց նոցա։* «Եւ Հարցէ զեւթնաձորն[1]. զի համարձակ լինի ընդ նա դնալ[2] և ագանելոյն» *(ԺԱ 15)։ «Եւթնաձորն[3]» է (7) ձոր էր, և է (7)-եան[4] ծայրն ի միում տեղի[5] էր, և հարամու տեղիք էր և աւազակաց, զի անդ թաքչէին և զմարդիկք, որ[6] անցանէին, թալանէին և սպանանէին։ Եւ միջոց էր այս տեղիքս բաբելացոց և ասորոց և Երուսաղէմայ[7]։ Զի թէ՛ ի Բաբելացոց աշխարհէն գային և թէ՛ յԱսորոցն, ճանապարհ այն է (7)-աձորն էր, զի անդ երկու օթս առնէին և ապա անցանէին և գային յԵրուսաղէմ։ Արկ Աստուած զձեռն ի վերայ բաբելացոցն և ասորոցն և տկարացոյց զնոսա[8], և կործանեաց զթագաւորութիւնն և զիշխանութիւնն[9], որ այլ Հարամի չկենայր յայն[10] յեւթնաձորն, որ ժողովուրդն մի մի գային և օթէին անդ և անցանէին, չյարձակէին ի վերայ աւազակքն[11] և թալանէին, այլ համարձակ անցանէին առանց երկիւղի։ Զի ժողովուրդքն միաժողով ո՛չ կամէին ելանել, և ամենայն ուստեք ընդ այն անցանէին, զի ճանապարհն այն էր և յայլ[12] դիմաց ճար ո՛չ կայր[13], և թշնամիքն անդ դարանակալ լինէին։ Զնոսա խափանեաց, որ առանց երկիւղի անցանէին՝ թէ՛ շատ լինէին և թէ՛ սակաւ։*

---

1 B զեաւթնաձորն
2 B գնալն
3 B եաւթաձորն
4 B է (7)-ին
5 A տեղոջ
6 B որք
7 A յԵրուսաղէմայ
8 B *չիք* և տկարացոյց զնոսա
9 B նոցա *փխ* և զիշխանութիւնն
10 A անդ *փխ* յայն
11 A աւազակն
12 B այլ
13 A կար

**Տեսիլ բաբելացոց**[1] *(ԺԳ 1):*

*Զկորուստ բաբելացոցն և զասորոցն ցուցանէ:*

**Ի վերայ լերինն**[2] **դաշտականի առէք նշան** *(ԺԳ 2):*

*«Լերին» նմանեցուցանէ զբաբելացոց և զասորոց թագաւորութիւնն, և «դաշտ» բաղմութեան*[3] *ասէ, և «նշան»՝ զհրաման, որ ազդեաց Աստուած զսիրտս*[4] *նոցա գալ և առնել զԲաբելացոց և զԱսորոց իշխանութիւնն:*

**Տէր զօրութեանց հրաման ետ**[5] **ազգաց սպառազինաց գալ յերկրէ հեռաստանէ** *(ԺԳ 4-5):*

*Աստուած հրաման ետ նոցա, և նոքա սպառազինեցան և եկին ի վերայ նոցա «յերկրէ հեռաստանէ», այսինքն՝ ի Մարաց և յիլամացոց*[6] *եկին, և «ի ծագաց հիմանց երկնից» (ԺԳ 5), այսինքն՝ յերուսաղէմէ, կամ յերկնից ետ Աստուած նոցա հրաման: յերուսաղէմ էր բնակեալ թէ՛ յերուսաղէմայ ետ հրաման՝ յարմարի, և թէ*[7] *յերկնից յանարուեստ աթոռոյն*[8]*՝ ճշմարիտ է*[9]*:*

**Հասեալ է Տէր իւրովք սպառազինօք աստակել զամենայն տիեզերս** *(ԺԳ 5):*

*Նոցա*[10] *մարմնապէս այսպէս էր զոր ասացաւ, զի Աստուած նոցա հրաման ետ, և նոքա սպառազինեցան և գնացին ի վերայ բաբելացոց և ասորոց և աւերեցին: Իսկ առ ի միտս*[11] *զհոգևորն*

---

1 B բաբելացոցն
2 A լերին
3 A *սրբ. յա.՝* վասն բազմութեան
4 A ի սիրտ
5 B հրամայեաց *փխ* հրաման ետ
6 B իլամացոց
7 B եթէ *փխ* և թէ
8 B յաթոռէն
9 C *չիք* Հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ (ԺԱ 4)... ճշմարիտ է *(տե՛ս աստ. էջ 181)*
10 A նոցան
11 C *չիք* Նոցան մարմնապէս այսպէս էր... առ ի միտս

ցուցանէ և զհանդերձեալն, որ լինելոց է ի կատարածի: Եւ խրատ զմեզ մարդարէս լինել առաքինիս և բարեգործս, զի զերծանելոյ և ապրելոյ պատճառ լինի մեզ, զի մի դառն վճռին[1] դիպեսցուք, այսինքն՝ պատժոցն[2] և տանջանացն, որ ասելոց է. «Երթա՛յք յինէն, անիծեա՛լք[3], ի հուրն յաւիտենական» (Մտթ. իե 41): Որ է կարի դժուարին և անբժշկելի վճիռն այն, զոր[4] տալոց է մեղաւորաց: Եւ թէ որպէ՞ս անբժշկելի[5] է՝ ի մեծատուննէն[6] ուսիր և ի միտ առ[7]: Զի մեծատունն խնդրեաց անպատկառ, առանց ամօթոյ զՂազար բժշկել զծարաւոյն տապ և ո՛չ կարաց դառանալ: Զի վիշտ սաստիկ մոռացուցանեն զամօթ, զի ինքն մեծատուն էր և Ղազարոս աղքատ: Եւ զայն ամօթ ո՛չ համարեցաւ, այլ զամօթն յետ եդիր և[8] խնդրեաց ի նմանէ[9] կաթիլ[10] մի ջուր: Մի[11]՝ որ զամօթն յետ եդիր և առանց[12] ամօթոյ[13] խնդրեաց, և մի՝ որ մեծ ինչ ո՛չ[14] խնդրեաց, այլ սուղ ինչ՝ կաթիլ մի ջուր, որ առնոյր ի բերանն և զովացուցանէր[15] զտապն, և ո՛չ ևհաս[16]: Վասն այն Քրիստոս ասացեալ է: Զայս բանս մեզ[17] խրատ լինի և ի միտ առնումք և իմանամք, որ յայլոց[18] առաքինութիւն ո՛չ է[19] պարտ յուսալ[20], այլ ամենայն ումեք յիւր առաքինութիւնն յուսալ, որ ինքն իւր անձամբն

---

1 B զվճիռն
2 B զպատժոց
3 A անիծեալ
4 B որ
5 A անբժշկական, B անբժիշկ
6 AB մեծատանէն
7 AB *չիք* և ի միտ առ
8 B *չիք* զամօթն յետ եդիր և, C և առանց
9 B *չիք* ի նմանէ
10 B կաթ
11 B *չիք* մի
12 A առ առանց
13 A աւթոյ *փխ* ամօթոյ
14 B *չիք* ոչ
15 AB զովացուցանէ
16 C էհաս
17 AB որ մեզ
18 C այլոց
19 B չէ *փխ* ոչ է
20 B յուսանալ

*գործէ զբարին և առաքինի լինի: Եւ ո՛չ յայլոց առաքինութիւն ապաւինել, զի ո՛չ է օգուտ*[1] *այլոց առաքինութիւն*[2] *ինքեան*[3]*: Զի մեծատանն*[4] *հայրն արդարոց*[5] *Աբրահամ ո՛չինչ կարաց օգնել և օգտեցուցանել զնա*[6]*, և առաքել զ Ղազար և զովացուցանել զտապ նորա, այլ զայս պատասխանի ետուր նմա և ասաց*[7]*. «Վիհ մեծ է ի միջի մերում՝ ընդ մեզ և ընդ ձեզ*[8]*» (Ղուկ. ԺԶ 26): Անբժշկական երևեցոյց զիրս*[9]*: Զի այս բանս*[10] *զայն ցուցանէ*[11]*, որ ի հանդերձեալն ողորմութիւն չկայ և ո՛չ բարեխօսել վասն այլոց*[12]*: Զի ո՛չ բարեխօսեն*[13]*, և թէ բարեխօսեն՝ ո՛չ*[14] *լսէ Աստուած: Վասն այն ո՛չ բարեխօսեն սուրբքն վասն մեղաւորացն, ապա ի հանդերձեալն ո՛չ ողորմութիւն կայ, որ ողորմի Աստուած մեղաւորացն, և ո՛չ բարեխօսել*[15]*:*

*Դարձեալ. սա*[16] *մինչ կենդանի էր ի վերայ երկրի, որ դեռ չէր մեռեալ, այսինքն՝ Աբրահամ, յորժամ Աստուած հիւր եկ*[17] *սմա և կերակրեցաւ ի սորա տունն, և ելեալ*[18] *գնայր, որ զՍոդոմ*[19] *պատուհասէր, և Աբրահամ սկսաւ պաղատել և*[20] *աղաչել զԱստուած վասն չար ազգացն սոդոմայեցոցն, և ասաց, թէ՝ «Իցեն*[21] *Ծ (50) արդար կորուսանե՞ս զամբարիշտքն և զարդարն*

---

1 A յօգուտ
2 A առաքինութեան, C առաքինութեանն
3 C ինքեան
4 C մեծատունն
5 B *չիք* արդարոց
6 B *չիք* և օգտեցուցանել զնա
7 B ասաց նմա *փխ* պատասխանի ետուր նմա և ասաց
8 C *չիք* և ընդ ձեզ
9 AB զկիրս *փխ* զիրս
10 C բան
11 AC կու ցուցանէ
12 AC *չիք* վասն այլոց
13 B *չիք* զի ոչ բարեխօսեն
14 A այլ ոչ
15 B *չիք* ապա ի հանդերձեալն ոչ ողորմ[illegible]թիւն... ոչ բարեխօսել
16 C *չիք* սա
17 AB երեկ
18 A ելաւ
19 C Սոդոմ
20 B *չիք* պաղատել և
21 C *չիք* իցեն

*ընդ նոսա» (հմմտ. Ծննդ. ԺԸ 24), մինչև եկեալ էջ*[1] *ի հինգ արդարն*[2]*: Քանի որ վճիռ չէր տուեր*[3] *Աստուած՝ բարեխօսէր*[4]*, իսկ յորժամ վճիռ եհատ*[5]*, թէ՝ «Լինի անդ ե (5) արդար*[6]*, ո՛չ պատուհասեմ» (հմմտ. Ծննդ. ԺԸ 32-33), յայնժամ*[7] *լռեաց Աբրահամ ի բարեխօսելոյ և այլ*[8] *ո՛չ կարաց*[9] *բարեխօսել: Նոյն օրինակ և ի հանդերձեալն լռեն արդարքն՝ աղաչել զԱստուած*[10] *վասն յանցուցանելոցն և մեղաւորացն յետ վճիռ հատանելոյ, զի յորժամ զվճիռն*[11] *տայ մեղաւորացն, թէ՝ «երթա՛յք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից» (Մտթ. Իե 41), լռեն ամենայն սուրբք և այլ*[12] *ո՛չ բարեխօսեն, զի գիտեն, որ ճար չկայ և այլ չի*[13] *լսէր Աստուած, և այլ ողորմիլ չկայ: Իսկ յաստի*[14] *կեանս որքան կենդանի է մարդ, և թէ ի*[15] *մեղք անկանի*[16] *և դառնայ և խոստովանի և ապաշխարէ՝ լսէ*[17] *Աստուած և թողու*[18] *զմեղքն մեղաւորին: Եւ թէ զոր սուրբք*[19] *բարեխօս լինին*[20]*, ինքեան բարեխօսեն*[21] *նորա համար՝ թէ՛ սուրբք ի մարդկանէ և թէ՛ հրեշտակաց*[22]*: Իսկ յայն կեանքն այլ ո՛չ լսէ*[23] *Աստուած, և ո՛չ*

---

1 AB և երեկ ելաւ (B և եկաւ) *փխ* մինչև եկեալ էջ
2 AB հինգն *փխ* հինգ արդարն
3 C չէն տվէր
4 C կու բարեխօսէր
5 C էհատ
6 C արդարն
7 C յորժամ
8 B *չիք* այլ
9 A կարեաց
10 AB *չիք* զԱստուած
11 B վճիռն
12 A սուրբ և յայլ
13 C ոչ ի *փխ* չի
14 C յայստի
15 B *չիք* ի
16 AC անկեալ է
17 C կու լսէ
18 C կու թողու
19 C սուրբ որ
20 C կալնու *փխ* լինին
21 C կու բարեխօսէ
22 B *չիք* և թէ զոր սուրբք բարեխօս լինին ինքեան... հրեշտակաց, C հրեշտակք
23 C կու լսէ

ողորմիլ կայ[1], և ո՛չ բարեխօսեն[2] սուրբքն[3] վասն[4] մեղաւորացն: Եւ, յիրաւի[5], ո՛չ լսէ անդ Աստուած մեղաւորացն, զի աստ Քրիստոս աղաչէ և ո՛չ լսէ ոք, նոյնպէս անդ մարդիկք[6] զՔրիստոս[7] աղաչեն, և[8] ո՛չ լսէ նոցա, զի աստ Քրիստոս աղաչէ զմարդիկք դառնալ ի մեղաց և ի չարեաց[9], և գործել զբարին, զի մի՛ անդէն զփոխարէնն[10] գտանջանքն կրեսցեն և զչարչարանքն, և ո՛չ լսեն և ո՛չ դառնան ի մեղաց և գործեն զբարին: Յիրաւի անդ ո՛չ լսէ Աստուած, թէ բարեխօսեն վասն նոցա[11]: Եւ ո՞ւր արդեօք աղաչէ Քրիստոս, այսինքն՝ բերանով[12] առաքելոցն և յաւետարանն, զի Երրորդութիւնն Սուրբ աղաչեն զմարդիկ, որ մեղաւոր են[13], և ո՛չ լսեն: Նոյնպէս Երրորդութիւնն ո՛չ լսէ անդ նոցա, զի Որդի բերանով առաքելոցն և յաւետարանն աղաչէ, և ո՛չ լսեն. վասն այն[14]՝ ինքն[15] Քրիստոս ո՛չ լսէ անդ[16] նոցա: Եւ Հայր Աստուած վկայեաց ի վերայ Որդոյն Միածնի և ասաց. «Դայ է Որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք» (Մատթ. ԺԷ 5, Մարկ. Թ 6), այսինքն՝ դորա լսեցէք, զի Աստուած է, և զոր ինչ[17] ձեզ քարոզէ և խրատէ և ուսուցանէ՝ լսեցէք դմա: Եւ նոքա, որ մեղաւորքն են, ո՛չ լսեն Քրիստոսի քարոզութեանն և խրատին[18]. վասն այն թէ՝ «ԶՀայրն[19] անդ բարեխօսեն՝ ո՛չ լսէ.

---

1 B ողորմի *փխ* ողորմիլ կայ
2 AB բարէխօս
3 B սուրբք
4 C *չիք* վասն
5 C իրաւի
6 B *չիք* մարդիկք
7 B Քրիստոս
8 B *չիք* աղաչեն և
9 AC ի մեղաց (C մեղաւորաց) և ի չարեաց ի գատ կալ *փխ* դառնալ ի մեղաց
10 C անդէնն *փխ* անդէն զփոխարէնն
11 B *չիք* և զչարչարանքն և ոչ լսեն .. վասն նոցա
12 B բերանօք
13 AC զմեղաւորքն (C զմեղաւորն) և զմարդիկք *փխ* զմարդիկք որ մեղաւոր են
14 A յայն
15 AB *չիք* ինքն
16 B *չիք* անդ
17 AB *չիք* ինչ
18 B *չիք* Քրիստոսի քարոզութեանն և խրատին, C խրատուն
19 AB զՀայր

*Թէ ես ձեզ ասացի, Թէ լսէցէք իմ*[1] *Միածին Որդոյն և դուք ո՛չ լսեցիք, և ես ձեզ*[2] *ո՛չ լսեմ»: Նոյնպէս և Հոգին Սուրբ բերանով մարգարէիցն և առաքելոցն ուսոյց զմարդիկք և ո՛չ լսեցին*[3]*, և*[4] *Թէ զՀոգին Սուրբ բարեխօսեն*[5]*՝ ո՛չ լսէ նոցա: Եւ յանլուր լինելն*[6] *անբժշկական ասէ, և «լի՛ բարկութեամբ» (ԺԳ 9), ասէ*[7]*, զօրն դատաստանին: Եւ ո՛չ այսու միայն, այլ և պարզևեացէ նա աստ ճգնելոցն, զի ըստ զանազան ճգնութեանցն*[8] *զանազան փառօք*[9] *պսակելոց են ի Քրիստոսէ և զարդարելոց*[10]*, որպէս զարդարի երես*[11] *երկրի ի ժամանակս գարնանային զանազան ծաղկօք և երանգ երանգ գունօք*[12]*: Կուսանքն կուսութեան պսակաւն զարդարին*[13]*, ճգնաւորքն՝ զճգնութեան պսակաւն*[14]*, մարտիրոսքն՝ զմարտիրոսական պսակաւն*[15]*, ողորմածքն՝ զողորմութեան պսակաւն, սուրբքն՝ զսրբութեանն*[16]*, և այլն*[17]*: Ապա Քրիստոս էր օր բարկութեան, ասէ, և անբժշկական. քաղուածուն գործէ Գ (3) մօք:*

**Առնել զսիեզերս անապատ** *(ԺԳ 9):*

---

1 A ի *փխ* իմ
2 AC ձեզ համար
3 C լսեցիք
4 AC *չիք* և
5 B աղաչեն *փխ* բարեխօսեն
6 AC յանկուրն լինել
7 C *չիք* և լի բարկութեամբ ասէ
8 B ճգնելոցն
9 B *չիք* փառօք
10 B զարդարեալ
11 A զարդարին երեսք
12 B գունով
13 B կուսական փառօք զարդարին կուսանքն *փխ* կուսանքն կուսութեան պսակաւն զարդարին
14 B ճգնութեամբ պսակին
15 B մարտիրոսական պսակին
16 B *չիք* ողորմածքն զողորմութեան պսակաւն, սուրբքն զսրբութեանն
17 B այլն նոյնպէս

*Տե՛ս, որ սուտ են այնոքիկ, որ*[1] *երեք տեղիք*[2] *ասեն արդարոցն, երեսնասուր՝ պաշխարհս և կ (60)-ասուր*[3] *տեղիք*[4]՝ *զդրախտն: Այս սուտ է և չէ ճշմարիտ բան, այլ միայն սամուռք է, որ այսպէս են ասացեալ: Զի երկու մեծամեծ մարգարէս վկայեն, թէ սուտ է, զի վասն մեղաւորաց ասեն, թէ՝ «Ասա ո՛չ բնակեն, այլ գնան ի դժոխքն*[5]*»: Զի մարգարէս ասէ. «Անդնել գտիեզերս անապատ», այսինքն՝ անբնակ ի մեղաւորացն, և Դաւիթ ասէ. «Պակասեսցին մեղաւորք յերկրէ, ամբարիշտ մի՛ և այս գոյր ի սմա» (Սաղմ. ճԹ 35): Ահա յայտնի եղև, որ մեղաւորք յաշխարհս ո՛չ բնակեն, այլ գնան ի դժոխքն: Զի որպէս սիեզերք ծագէ ի ծագ, Դ (4) կողմ աշխարհիս անապատ է և անբնակ ի մարդկանէ, նոյնպէս և աշխարհս*[6] *է լինելոց ի կատարած, զոր բնակեն մարդիք: Զի մեղաւորքն ի դժոխքն*[7] *են գնալոց*[8]*, որպէս վկայեցին Բ (2) մարգարէքս, և վասն արդարոցն Քրիստոս [ասէ]. «Երթիցեն արդարքն ի կեա՛նս յաւիտենական» (համմտ. Մտթ. Իե 46), այսինքն՝ յարքայութիւն երկնից, և մնայ աշխարհս դատարկ: Իսկ այն, որ երեսնասուր և կ (60)-ասուր և հարիւրասուր յարքայութիւն է, որպէս ինքն Քրիստոս ասաց. «Ի տան Հօր իմոյ օթևանք բազումք*[9] *են» (Յովհ. ժԴ 2): Ամենեքեան յարքայութիւն են արդարքն, սակայն ոմանք առաւել վարձք ունին և ոմանք միջակ*[10] *և ոմանք սակաւ*[11]*, այսինքն՝ զմեղաւորան կորուսանէ ի սմանէ*[12]*: Վասն զի ի սմա եղեն մեղաւորքն, վասն որոյ կարգ*[13] *քաղաքավարութեան սորա եղծանին: Զի որպէս*

---

1 B և *փխ* որ
2 B տեղի
3 A Կ-աւորաց
4 B *չիք* տեղիք
5 B դժոխս
6 B աշխարհ
7 B դժոխս
8 B գնալու
9 A բազումք
10 B *չիք* և ոմանք միջակ
11 A ճուազք *փխ* սակաւ
12 B ճմանէ
13 AB կարք

*յառաջ քան ի մարդն ի դրախտն էր և յաշխարհս*[1] *չէր եկեր, աշխարհս անբնակ էր ի մարդոյ և դատարկ, նոյնպէս և ի կատարածի է լինելոց: Նմանապէս և դրախտն դատարկ է մնալոյ*[2]*, զի թէ ի դրախտն էր մնացեր մարդն և պատուիրանն չէր յանցեր*[3]*, այլ՝ պահէր, յորժամ մարդկան թիւն լցուէր, յերկինքն ի վերափոխէր զնոսա Աստուած, և դրախտն ի մնար դատարկ: Նոյնպէս և ի կատարածի*[4] *դատարկ ի մնայ դրախտն, զի արդարքն յարքայութիւն գնան և մեղաւորքն*[5]*՝ ի դժոխքն: Ապա եթէ*[6] *երեք տեղիք ասեն արդարոցն՝ Լ (30)-աւոր դաշխարհս և Կ (60)-աւոր զդրախտն և Ճ (100)-աւոր զերկնից արքայութիւնն, յայնժամ թիւր և ծուռ գայ բանն: Յայնժամ Փռանգաց*[7] *բանն հաստատի, որ զդժոխքն Գ (3) են ասեր՝ վերին և միջին և ներքին, զոր*[8] *ո՛չ է ճիշտ, զի դժոխքն այլ մի՛ է և արքայութիւնն այլ մի՛ է*[9]*: Զի անյարմար է, որ արդարոց տեղիքն լինի այս աշխարհս, զի այս անասնոց էր*[10] *տեղիք, և մարդոյ տեղն դրախտն էր: Եւ յորժամ մեղանչեաց մարդն՝ դատապարտեաց և յաշխարհս ձգեաց: Եւ ի կատարածի*[11] *զանիծից և զպատժապարտութեան և զանասնոց տեղիքն տայ արդարոցն՝ անյարմար է: Զի թէպէտ երեանաւորք են, սակայն նոքա այլ արդարք են, զի ի դժոխոցն զերծան և յարդարոց դասն խառնին, նոքա այլ արդարք*[12] *են իբրև զնոսա: Ի կատարածի խեթիւ*[13] *հային հրեշտակք ի վերայ մեղաւորացն:*

---

1 B աշխարհիս
2 A մնալոց
3 B անցեր
4 B կատարածին
5 B մեղաւորն
6 A թէ
7 B Փռանգաց ազգն
8 B որ
9 B չիք է
10 B է
11 B կատարածին
12 B արդար
13 A խեթի

**Եւ զդէմս իւրեանց ի բոցապոյնս դարձուցանեն** *(ԺԹ 8)*:
*Այսինքն՝ զբարկութիւն և զսրամտութիւն ցուցանէ:*

**Եւ կորուցից զհպարտութիւն զանօրինաց**[1] *(ԺԹ 11)*:
*Եւ զհպելն յամբարտաւանութեան ի մեղս զրեաց: Հպարտութիւնն մեղք է քան զամենայն մեղք: Որպէս պոռնկութիւն և այլ ամենայն*[2] *մեղք են*[3]*, նոյնպէս հպարտութիւնն այլ մեղք է*[4] *և ի մեղաց կարգի եղեալ, սակայն առաւել է քան զայլ ամենայն մեղք, որ կան: Տե՛ս զայլ ամենայն մեղք թողեալ և զհպարտութիւնն զմէ*[5] *ածէ և ասէ. «Կորուսից զհպարտութիւն զանօրինացն*[6]*»: Զի հպարտութիւն արմատ է չարեաց և կատարած կորուստեան: Զի հպարտ մարդն զինքն քան զամենայն*[7] *ոք ի վեր կարծէ իւր մտօքն, և այն որքան զամենայն ոք ի վեր է, և այն Աստուած է, որքան զամենայն ոք ի վեր է, ապա հպարտ մարդն զինքն Աստուծոյ հաւասար առնէ: Եւ խոնարհութիւնն դեղով կամի ի բաց*[8] *մերժել զհպարտութիւնն, զի Աստուած ինքեամբ եւս զօրինակ խոնարհութեանն ծննդեամբն, որ յայրն ծնաւ և ո՛չ*[9] *ի դարպաս կամ ի տուն դեղեցիկ, և «ի խանձարուրս պատեցաւ» (հմմտ. Ղուկ. Բ 7) և ո՛չ յայլ դեղեցիկ սգեաց: Զի քանի մարդ աղքատ լինի, կտոր*[10] *մի լաթ ունի, որ ի ներս փաթաթէ զտղայն: Իսկ նա ո՛չ ունէր, և զի*[11] *յաշխարհի շրջեալով*[12]*՝ հետիոտ շրջէր և բոկոտամբ, զի ձի ո՛չ հեծաւ և յաւանակ նստաւ, և զայն այլ մի անգամ: Եւ այն այլ խորհուրդ ունէր*

---

1 B զանօրէնութիւն հպարտութիւն *փխ* զհպարտութիւն զանօրինաց
2 B այլ *փխ* և այլ ամենայն
3 B է
4 B *չիք* նոյնպէս հպարտութիւնն այլ մեղք է
5 A իմէ
6 B անօրինաց
7 B *չիք* քան զամենայն
8 B բայց
9 A ոչ և
10 A կարօտ *փխ* կտոր
11 A *չիք* զի
12 A շրջելով զի

*յաշխարհի*[1] *շրջելովն: Իբրև զմի յաղքատաց տեղի իջևանի ո՛չ ունէր, զի քանի աղքատ լինի՝ տեղ մի ճարէ և իջևանի: Եւ նա ո՛չ ունէր: Եւ ի չափ եկեալ հասակի կանայք ոմանք սուրբք կերակրէին զնա յընչից*[2] *իւրեանց: Եւ զառաքեալսն նոյնպէս կոչեաց, այսինքն՝ յաղքատաց, և զխոնարհութիւն ուսոյց նոցա.* «Ուսարո՛ւք յինէն, զի ես հեզ եմ և խոնարհ» *(Մտթ. ԺԱ 29), և թէ ոք*[3] *խոնարհեցուցանէ՝ զանձն բարձրացի: Եւ «երանի՛ հեզոց, զի նոցա է արքայութիւն*[4] *երկնից» (հմմտ. Մտթ. ե 5), և այլ բազում տեղիս զխոնարհութեան*[5] *կրօնս ուսոյց նոցա հեզ և խոնարհ լինել*[6]*, զի կամէր իբրև զչար գազան հալածական առնել*[7] *զամբարտաւանութիւնն ի նոցանէ և յամենայն ումեքէ: Այլ և ի սեղանոյն և ի հանդերձէն և ի խրատէն ուսիր զխոնարհութիւնն: Ի սեղանոյն՝ զի գեղեցիկ*[8] *կերակուր ո՛չ էր նորա, և ի հանդերձէն՝ զի ապրիշմեղէն և գեղեցիկ հալաւ ո՛չ հագնէր, և ի խրատն այն էր, որ ասացաւ: Եւ զայլ առաւել խոնարհութիւն ի խաչին չարչարանացն ուսիր՝ զթուքն, զապտակն, զանարգելն*[9]*, զգեղարդն, զբևեռն*[10]*, զփուշն, [զ]պսակն, զքացախն, զլեղին՝ զոր արբուցին*[11]*: Զի զոր նա յայնժամ կրեաց, եթէ այժմ հայիս յայն՝ զիւրաւ ուսցիս զոր օրինակ խոնարհութեան:*

**Բաբելոն, որ փառաւորն կոչի ի թագաւորէն** *(ԺԳ 19):*

*Զի թէ՛ քաղաքն է և թէ՛ թագաւորն և թէ՛ իշխանքն՝ ամենեքեան փառօք են զաւառին, այսինքն՝ երկրին:*

**Ո՛չ բնակեսցէ յաւիտեան** *(ԺԳ 20):*

---

1 A աշխարհի
2 A յինչից
3 A որ *փխ* ոք
4 A արքայութիւնն
5 A զխոնարհութիւն
6 B *չիք* հեզ և խոնարհ լինել
7 B առնէր
8 B զգեղեցիկ *փխ* զի գեղեցիկ
9 B զանարգիլն
10 B զբևեռքն
11 B էարբ

*Այսինքն՝ Բաբելոն, որ աւերեցաւ ի պարսից և յիլամացոց և յիմարացն: Այլ այն քաղաքն ո՛չ շինեցաւ, այլ աւերակ է որպէս Սոդոմ և Գոմոր: Եւ այս Բաբելոնս[1] այժմ[2] որ շինէ, ուրիշ է, այն առաջինն ո՛չ է[3]: Եւ հետ այս կարգիս բնաբանն զաւերն և զկոր-ծանումն նոցա ցուցանէ, այսինքն՝ զբաբելացոցն և զասորոցն: «Համբարուք ևս յուշկապարիկք» (հմմտ. ԺԹ 21-22): Ո՛չ թէ սոքա անձն ինչ ունիցին և էութիւնք և գոյութիւնք են, որ ի Բաբելոն բնակեսցեն, այլ միայն սամունք են, որ զսոցա անունն առեն: Որ-պէս ձիակապիկն և եղջիւրաքաղն, և այն այլ համարուքն և յուշկապարիկքն[4] սամունքն հնոցի բաբելացոց մէջն կայր, որ նոքա ասէին, թէ՝ «կենդանիք են նոքա և յաւերակ տեղի բնա-կեն»: Մարգարէս ըստ նոցա սովորութեանն[5] զայս բանս առնու և ասէ, թէ՝ «Այսպէս[6] աւերակ է լինելոց ձեր քաղաքդ[7] Բաբե-լոն» (հմմտ. ԺԴ 22), որ համբարուք և յուշկապարիկ բնակեն ի նմա, զդևքն հերաւորք և խոզանեալք և աշտանակամազք: Ասէ թէ[8] դևն հեր ո՛չ ունի, այլ լինի թէ այնպէս երևէր նոցա: Խոզանեալք՝ գռուզ մազն է: Աշտանակամազք այն է, որ կանգն լինի մազն նման աշտանակի: Եւ կամ թէ զազանք են և թռչունք և յանապատն բնակեն համբարուքն և յուշկապարիկն: Եւ ի բաբելացոցն ոմանք տեսեալ են[9] զնոսա, և բազմաց անծանօթ են, որք[10] չեն տեսեալ, սակայն աւերման նշանակ են սոքա: Վասն այն առնու մարգարէն և ասէ, թէ՝ «Ձեր քաղաքդ աւերակ և անապատ լինի ի մարդկանէ, որ նոքա բնակեն համբարուք և յուշկապարիկ» (հմմտ. ԺԹ 21-22): Ապա ճշմարիտն այն է, որ սոքա էութիւն ո՛չ ունին, այլ միայն սամունք են:*

---

1 B բաբելոն
2 B *չիք* այժմ
3 B *չիք* այն առաջինն ոչ է
4 A յուշկապարիկն
5 B սովորութեանս
6 A այնպէս
7 A քաղաքտ
8 A *չիք* թէ
9 A է
10 A նոցա որ *փխ* որք

**Զի վաղվաղակի գայ և ո՛չ անագանեսցի** *(ԺԴ 1)*:

*Այսինքն՝ ղկնի երկերուր ամի, այսինքն՝ ԲՃ (200) տարին աւերի նոցա քաղաքն: Զի մարգարէս Եսայի, որ մարգարէացաւ ղբաբելացոց աւերն, յետ երկու հարիւր տարոյ*[1] *ապա կատարեցաւ, զի եկին մարք և իլամացիք և առին զԲաբելոն: Զի թէ մարք և իլամացիք առին զԲաբելոն, սակայն զժողովուրդն ղիսրայէլացին ո՛չ արձակեցին, և հրաման տուին*[2]*, թէ՝ «Գնացէք յԵրուսաղէմ ի ձեր աշխարհն*[3]*»: Այլ ի ձեռն Կիւրոսի եղև դարձ ժողովրդեան ի Բաբելոնէ: Զի յետ նոցա Կիւրոս եկ՝ ասորոց*[4] *թագաւորն, և էառ զԲաբելոն և ապան զթագաւորն և արձակեաց զժողովուրդն, որ գերի*[5] *էին անդ: Կիւրոս թագաւորն Պարսից ետ հրաման, այսինքն՝ ի Բաբելոն ժողովել զիսրայէլացիքն յոր տեղ որ էին, և տանել զնոսա պատուով և մեծարանօք և փառօք*[6] *յերկիրն Իսրայէլի: «Եւ յաւելցի պանդուխտն ի նոսա» (ԺԴ 1): Բազումք ի բաբելացոցն յոամիկ*[7] *ժողովրդենէն ի համբաւի աստուածպաշտութեան*[8] *նոցա փափագեալք*[9] *ելեալք*[10] *ի Բաբելացոց աշխարհէն*[11] *գնացին հետ իսրայէլացոց յերկիրն Իսրայէլի յԵրուսաղէմ, զանձինս իւրեանց ի ծառայութիւն նոցա դրէին, ասէին. «Գամք ձեզ ծառայ լինիմք և ձեզ հնազանդ, և զձեր Աստուածն հաւատամք և պաշտեմք, զոր դուք պաշտէք» (համմ. Յեսու. Թ 6-9), և յորժամ յԵրուսաղէմս ելանէին ժողովուրդք բազումք, յերուսաղէմացոցն*[12] *այսպէս ասէին:*

**Եւ հանգ[ե]ա՛ւ տապնապողն** *(ԺԴ 4)*:

---

1 A տարին
2 A տվին
3 A յաշխարհն
4 A ասորից
5 AB համ գերի
6 B *չիք* և մեծարանաւք և փառօք
7 B ոամիկ
8 B աստուածպաշտութիւն
9 AB փափաքեալք
10 A ելեալ
11 B յաշխարհէն
12 B յԵրուսաղէմս *փխ* յերուսաղէմացոցն

*Նոքա, որ զիսրայէլացիքն[1] գերէին և տանջէին, ինքեանք այլ ի հետ տագնապէին և աշխատէին: Որպէս որ երկու հեծե[ա]լ պատերազմէին, թէպէտ մին կողմն[2] յաղթէ և կոտորէ զմիւսն, սակայն ինքն այլ ի հետ չարչարի ի գալն և ի կռուելն և ի[3] յաղթելն: Նոյնպէս թէ[4] բաբելացիքն էին և թէ՛ ասորիքն, որ գային և գերէին զիսրայէլացիքն և տագնապէին, ինքեանք[5] այլ ի հետ տագնապէին և չարչարէին: Իսկ յորժամ[6] ի մարաց և յիլամացոց և ի պարսից սատակեցան, Նոքա Հանգեան յայն[7] առաջին տագնապէն և յաշխատանացն, որ գային և գերէին զիսրայէլ: Վասն այն ասէ մարգարէս. «Եւ Հանգեա՛ւ տագնապողն», զի որ զայլն տագնապէր՝ ինքն այլ տագնապեալ լինէր:*

**Ի ներքոյ[8] մէցս տարածեսցեն** *(ԺԴ 11):*

*«Մէցն» զխիճն ասէ և զսորն: Զի նոքա, որ գերեցան ի նոցանէ, և մեռան և գնացին ի դժոխքն, իսկ յետոյ գերիչքն այլ մեռան և գնացին մօտ նոցա[9] ի դժոխքն: Յայնժամ նոքա, որք[10] ի սոցանէ[11] գերեալ էին և սպանեալ, ասէին գերողացն, թէ՝ «Դուք այլ իբրև զմեզ մեռաք և եկիք յայս տեղս: Որպէս ի մեր ներքևս խիճ և սուր է տարածեալ, նոյնպէս և ձեր դեղևի գերեզմանն. ապա ի՞նչ հպարտանայիք ի վերայ մեր, երբ դուք այլ մեզ նման լինելոց էիք և մեռանելոց, և ի[12] գերեզման մտնելոց: Եւ ի ներքոյ ձեր մարմնոյդ մէ[ց] էր տարածեալ[13], լուծիչ մարմնոցդ ձերոց, և ի վերայ որդունքն եւայինն, ի վերայ մարմնոց ձերոց*

---

1 B իսրայէլացիքն
2 A կողն
3 A չիք ի
4 B եթէ
5 B չիք և տագնապէին ինքեանք
6 A յորժամ որ
7 B այն
8 B նորոյ փխ ներքոյ
9 AB նոքա
10 A որ
11 B նոցանէ
12 B չիք ի
13 A տարածեցեալ

*արեգակն» (հմմտ. ԺԴ 11-12): Մ (200) ամաւ յառաջ մարգարէացաւ մարգարէն Եսայի զԲաբելոնի աւերելն, որ ի մարաց և յիլամացոց[1] և ի պարսից աւերելոց էին, այլ ժողովուրդն Հ (70) ամ եկաց[2] ի Բաբելոն ի գերուԹիւն: Զի յորժամ նոցա Մ (200) ամն լցաւ[3], որ եղեալ էր մարգարէն ժողովրդեանն, այլ Հ (70) ամն վճարեցաւ[4], և կիւրոս թագաւորն աւերեաց զԲաբելոն և սպան զթագաւորն նոցա և արձակեաց զժողովուրդն:*

**Զիա՞րդ անկաւ[5] յերկնից Արուսեակն[6], որ ընդ առաւօտն ծագէը** *(ԺԴ 12):*

*Քաղդ[ե]ացին օրինակ էր, այլ ի վերայ սատանայի կատարի բանս[7]: Ընդդէմ է սատանայ Աստուծոյ, «Արուսեակ[8]» ասէ վասն նախկին գեղեցկուԹեան և պայծառուԹեան, զոր ունէր յառաջն՝ անկաւ: Գ (3) եղանակաւ[9] է անկումն սատանայի: Նախ՝ յերկնից անկաւ: Երկրորդ՝ խաչելուԹեամբն Քրիստոսի անկեալ եղև սատանայ, որպէս ասաց Քրիստոս. «Իշխան աշխարհիս այսորիկ ընկեցեալ[10] արտաքս» (Յովհ. ԺԲ 31): Երրորդ՝ ի կատարածի անկելոց [է] ի դժոխքն անմարմինն: Զիա՞րդ անկանի ի վայր: Զի անկանիլն այնորիկ[11] է, որ ծանր մարմին ունի, ի վայր անկանի: Սատանայ թէպէտ անմարմին է, հպարտուԹիւնն[12] և ամբարտաւանուԹիւնն, որ յերկինքն հպարտացաւ և ամբարտաւանեցաւ, խառնեցաւ յիւր էուԹիւնն և գոյուԹիւնն և ի վայր ընկէց զինքն յերկիր: «Որ առաքէր[13] առ ազգս մարդկան» (ԺԴ 12),*

---

1 A իլամաց
2 A եկեաց
3 A լցուաւ
4 A վիճարեցաւ
5 A անկեաւ
6 B աղիւսակն *փխ* արուսեակն
7 B բանն
8 A Արիւսեակ, B Աղիւզեակ
9 A յեղանակաւ
10 B ընկեցէ
11 A անկանելն այնմիկ
12 A սակայն հպարտութիւնն
13 B առաքէ

*այսինքն՝ չարութիւն սատանայի եկն առ ազգս մարդկան, զոր նա յերկինքն հպարտացաւ և անկաւ: Զնոյն հպարտութիւնն յերկիրս սերմանեաց ի մարդիք, որ հպարտանան իբրև զինքն և կորնչին*[1]*, զի ինքն հպարտութեամբն և ամբարտաւանութեամբն անկաւ յերկնից: Տե՛ս, որ*[2] *եհաս մարդկան ամբարտաւանութիւն ի սկզբանէ՝ սերմանեալն ի սատանայէ, և որպէս աճեաց ընդ կեանս փոփոխելի իբր ընդ մնացականս և անկարօտս:*

**Եղէց նման Բարձրելոյն** *(ԺԴ 14):*

*Յայտնիկ զմիտս*[3] *և զմարդիկք*[4] *մոլորեցոյց: Զի ախտս ամբարտաւանութեան սիրեաց առ ազգս մարդկան*[5]*, զի նովին կորստեամբն, որով ինքն անկաւ, և*[6] *զմարդիկք*[7] *կորուսցէ: Որպէս զԱդամ ցանկութեամբ աստուածանալոյն ընկէց յերկիր, զի հպարտացաւ, որ ուտէր զպտուղն և աստուած լինէր, և կերաւ*[8]*: Եւ կործանեաց Աստուած և ընկէց յերկիր: Եւ որք զաշտարակն շինէին՝ ամբարտաւանեալք կալ հակառակ ընդդէմ Աստուծոյ, ւան որոյ ցրուեցան նոքա*[9]*, և գործք նոցա եղեն*[10] *յո՛չինչ*[11]*: Այսպէս և Սէնէքերիմ*[12] *հպարտացաւ, թէ ինքն միայն ւոյժ իշխան, և ասէր. «Զեռամբ իմով առից*[13] *զամենայն սիեզերս իբրև զձուս ի բունոյն թռչնոց*[14]*» (համմտ. ԺԴ 14), ւան որոյ զօրութիւնք*[15] *և փառք իւր ի դուռն Երուսաղէմի սատակեցան ի միում գիշերի ՃՁԵՌ (185000) հեծելոց (տե՛ս ԼԷ 36, Դ թագ. ԺԹ 35): Նոյն-*

---

1 B *չիք* և կորնչին
2 A ուր *փխ* որ
3 A միտս
4 A զմարդիք
5 A *չիք* մարդկան
6 B կորեաւ *փխ* անկաւ և
7 A զմարդն
8 B *չիք* և կորեաւ
9 A ինքեանք *փխ* նոքա
10 A եղև գործ նոցա *փխ* գործք նոցա եղեն
11 B ոչինչ
12 B Սինէքարիմ
13 A ընդ ձեռամբ առնու *փխ* ձեռամբ իմով առից
14 B թռուց
15 A զօրութիւնքն, B զօրութիւն

*պէս և բաբելացին, որ ասէր ի սրտի իւրում, թէ՝* «Ելից յերկինս և եղէց նման Բարձրելոյն» *(ԺԴ 14), եղև ի կորուստ և ի կոխան*[1] *այլոց թագաւորացն, որպէս ասէ.* «Արդ՝ ահաւասիկ ի դժոխս[2] իջցես և ի հիմունս երկրի» *(ԺԴ 15): Եւ Տէրն մեր պատուիրէր.* «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի՛» *(Մտթ. ԻԳ 12), և Սողոմոն ասէ.* «Տէր ամբարտաւանից[3] հակառակ կայ» *(Առակ. Գ 34), զոր և Աստուած հակառակօքն լուծանել ջանայ: Զի սատանայ զհպարտութիւն և զամբարտաւանութիւն սերմանեաց յաշխարհս*[4] *ի մարդիկք, իսկ Տէրն մեր գալստեամբն յաշխարհս զխոնարհութիւն սերմանեաց և ուսոյց մարդկան*[5] *հակառակօքն զհակառակն խափանել ջանալ*[6]*, այսինքն՝ խոնարհութեամբն զհպարտութիւնն: Եւ, զի Տէրն եկն զայսպիսի ախտս*[7] *մեղաց*[8] *բժշկել ի մարդկանէ, խոնարհութեամբ կատարեաց զտնօրէնութիւն իւր: Զի Աստուած Բանն եղև մարդ և ծնաւ յաղքատ կնոջէ յայրին և ի մսուրն, զշրջելն*[9] *յաշխարհի հետիոտս և տնանկս, զի ձի ո՛չ հեծաւ, այլ ի գրաստ նստաւ ի վերայ իշոյ, և զայն այլ մի անգամ, զի խորհուրդ ունէր*[10]*: Կոչեաց զառաքեալսն ի խոնարհաց*[11]*, այսինքն՝ յաղքատաց և ի ձկնորսաց, զի ի*[12] *խաչին զկիրան, զթուքն, զապտակն և զայլն ամենայն կրեաց, զի ամենայնիւ*[13] *մեզ զխոնարհութիւն ուսուցանէ*[14]*:*

**Եւ բուծցին աղքատք Տերամբ** *(ԺԴ 30):*

---

1 B կոխաձ և կորուստ *փխ* ի կորուստ և ի կոխաձ
2 A դժոխձ
3 A ամբարձից
4 A յաշխարհի
5 B ճոցա *փխ* մարդկաձ
6 A ջաճայր
7 B աղտս
8 B չիք մեղաց
9 B զշրջիլն
10 B չիք զի ձի ոչ հեծաւ... խորհուրդ ուձէր
11 B և խաձազաձդեցոյց *փխ* ի խոճարհաց
12 A չիք ի
13 B ամեճայճի
14 B ուսուցէ

*Իսկ աղքատ բնութեանս մերում պինդն շնորհէ կենաց կերակուր և պբանն[1] ճշմարտութեան, որ հոգի է և կեանք և զմարմնականն: Զոր աղօթիւք հայցել հրամայեաց և ո՛չ զհամանդամս[2] խորտակեաց[3], այլ զաստուճն ևեթ, որպէս և ինքն գարեղէն նկանակօքն[4] և սուղ ձկամբք[5] յանապատին կերակրեաց զհետևեալսն: Ո՛չ զգեղեցիկ կերակուրսն[6] ասաց խնդրել և պատուազան, այլ հաց մխայն, որպէս որ ինքն գարեղէն նկանակօքն և սուղ ձկամբք[7] կերակրեաց զնոսա[8], որ ինքեան էին հետևեալ, այսինքն՝ յանապատին[9]: Եւ մեզ այլ պարտ է գարին լինել կերակուր, և գարեաւ կերակրել[10]: Նախ՝ զի գարին անասնոց է կերակուր: Զի[11] ձին և զրաստն ուտեն[12] զգարին, և մարդս այլ[13] ի զրախտէն ելաւ և անասնոց հաւասարեցաւ, ըստ այնմ՝ «Հաւասարեաց[14] անասնոց անբանից» (Սաղմ. խԸ 13, 21): Եւ թէ անասնոց հաւասարեցաւ, պարտ է զանասնոց կերակուրն ճաշակել: Երկրորդ՝ գարին զախտն ցամաքեցուցանէ ի մարդկանէ[15]. պարտ է ուտել, որ ախտն ցամաքի: Երրորդ՝ գարին յորժամ խմոր առնեն՝ ո՛չ աճէ, և մեզ պարտ է ո՛չ հպարտանալ կամ[16] զմեղքն[17] աճեցուցանել, այլ առանց հպարտանալոյ[18] և*

---

1 B զբանն
2 B միայնգամայն *փխ* զհամանդամս
3 B զխորտակաց
4 B նկանակաւ
5 A ձկամբ
6 A կերակուրն
7 A ձկամբ
8 A զայնոսիկ ինքն *փխ* զնոսա
9 B *չիք* այսինքն՝ յանապատին
10 B *չիք* և գարեաւ կերակրել
11 B որ *փխ* զի
12 AB ուտէ
13 B այլ: և մարդս այլ
14 B հաւասարեցաւ
15 A մարդն
16 B և *փխ* կամ
17 B զմեղս
18 A հպարտանալոյ

*առանց մեղաց մնալ, և զայլն ի քաղուածոյն[1] տե՛ս: Նոյնպէս և ձուկն պարտ է ճաշակել և ո՛չ միս, և զայս այլ[2] ի քաղուածոյն[3] տե՛ս:*

**Եւ մտցէ ուխտաւոր ի ձեռագործս իւր** *(ԺԶ 12):*

*«Ձեռագործն»[4] կուռքն է, որ ձեռօք շինէին[5], և ի նեղութեան ժամանակն մտանէին ի մեհեանն՝ ի կռոց[6] տունն և անկանէին առաջի կռոցն և լային, և դնէին զերեսն ի վերայ կռոցն և արտասուէին[7], և արտասուօք խնդրէին օգնութիւն ինքեանց և փրկութիւն, և ո՛չ գտանէին, զի ո՛չ օգնել կարէր զնոսա[8] և «ո՛չ[9] փրկել զնոսա» (ԺԶ 12): Դարձեալ. ուխտիւք և խնդրուածօք խնդրէին, զի ուխտէին և մատաղ խոստանային և տալիք, և ո՛չ կարէր օգնել և փրկել[10], և ո՛չ զխնդրուածքն[11] կատարել:*

**Եւ ո՛չ ևս մնասցեն մնացորդք ասորոց** *(ԺԷ 3):*

*Եւ այլն: Տե՛ս, թէ[12] որպէս զանազանին սոքա ի միմեանց: Զի տասն ազգն, որ ի Սամարիայ էին, Իսրայէլ կոչի ի նոցանէ[13] երկու ազգ և կէսն, որ յայնկոյս գետոյն[14] էին Յորդանանու, գերեցան ի Թակլաթփաղասարայ[15], և այլն, որ ի Սամարիայ էին՝ մնացին: Իսկ Յուդայեան ազգն, որ յԵրուսաղէմ էին, ո՛չ*

---

1 B քաղուածն
2 B զայլն փխ զայս այլ
3 B քաղուածն
4 A ձեռագործքն
5 B կու շինէին
6 B մեհեան կոցն փխ մեհեանն ի կոց
7 B չիք և դնէին զերեսն ի վերայ կոցն և արտասուէին
8 A նոցա
9 B չիք ոչ
10 B չիք դարձեալ ուխտիւք և խնդրուածօք... և փրկել
11 B զխնդրուածն
12 A զի փխ թէ
13 A սոցանէ
14 B չիք գետոյ
15 B Թակլաթփաղասար

*գերեցան յայն ժամանակ: Իսկ նոքա, որ դամասկացիքն էին, բովանդակ*[1] *գերեցան:*

**Տուննկ վայելուչ և գեղեցիկ** *(Իէ 2):*

*Յիշանելն ի գերուԹիւն արդարքն, որ կային ի միջի նոցա, սերմանէին և քարոզէին հեԹանոսացն, զի տեսանէին և լսէին հեԹանոսքն զբարին ի նոցանէ*[2]*: Դարձեալ. յորժամ «վայելուչ տուննկն» տնկի ի մէջ հեԹանոսաց, այսինքն՝ որ գալստեամբն Քրիստոսի հաւատան հեԹանոսք և նոքա, որ իսրայէլացիքն են, վրիպին և զրկին որպէս ի հաւատոցն, նոյնպէս և ի պտղոյն վայելմանէ: Զի*[3] *գան Տիտոս և Վասպիանոս և գերեն և տանին ԹէՂ այգի և ԹէՂ տուննկ*[4] *և այլն, ամենայն հեԹանոսաց հաւատացեալն մնաց. և նոքա վայելեցին որպէս զհաւատն, նոյնպէս և զտուննկն վայելեն*[5] *և զտեղիքն: Դարձեալ. նոցա մարմնաւոր փրկուԹիւնն զհեԹանոսաց հոգևորն նշանակէր*[6]*, զի ամենայն ինչ որ հին էր, օրինակ էր նորոյս:*

**Ընդ երեկոյս սուգ առցեն, և յառաջ քան**[7] **զառաւօտն**[8]**՝ այլ ո՛չ և*ս* իցեն** *(ԺԷ 14):*

*Զժամանակն և*ս *ցուցանէ մարգարէն, ԹէՂ ի գիշերի գալոց են բաբելոնացիքն*[9] *ի վերայ Դամասկոսի և կոտորեսցեն*[10] *զնոսա: Զի ի գիշերի եղև, որ ի քուն էին իւրաքանչիւր ի տուն*[11] *իւր, զի ո՛չ կարիցեն փախչել, և ԹէՂ ի*[12] *տիւ էր*[13]*՝ կարէին փախչել, զի*

---

1 A բովանդ
2 A նոսա
3 B և *փխ* զի
4 A տունկ է
5 A վայելին
6 A նշանակէ
7 B ընդ *փխ* յառաջ քան
8 A առաւօտս
9 B բաբելացիքն
10 A կոտորելոց են *փխ* կոտորեսցեն
11 A տան
12 B *չիք* ի
13 A տվէեր *փխ* տիւ էր

*թէ ոմանք ըմբռնեալ լինէին՝ ոմանք փախչէին և ազատէին: Այլ այսպէս տնօրինեաց Աստուած, որ ի գիշերի եկին և ըմբռնեցին, և զորս սպանին և զորս տարան գերի: Եւ յորժամ առաւօտ եղև, խափանեալ էր նոցա թագաւորութիւնն և իշխանութիւնն և այլն ամենայն, զի յամենայնէ զրկեալ եղեն: Եւ վասն այն եղև այս դամասկացոցն*[1]*, զի միաբանեցան ընդ Սամարիայ և ելին ի վերայ Երուսաղէմի՝ տանն Յուդայ: Վասն այն պատժեաց զնոսա Աստուած ի ձեռն բաբելացոցն և իջոյց գերի ի Բաբելոն:*

**Վա՛յ երկրին ի թևս նաւաց**[2] **յայնկոյս գետոյն եթովպացոց**[3] *(ԺԼ 1):*

*Զայս ցուցանէ, զի առաքեցին դամասկացիքն ի հնդիկս մարդ պատարագօք և ընծայիւք և թղթօք մագաղաթիւք*[4]*՝ գալ օգնել ինքեանց և ազատել ի բաբելացոցն (տե՛ս ԺԼ 2): Տե՛ս զանմտութիւն դամասկացոցն: Զիա՞րդ գային զայնքան հեռու ճանապարհ ընդ ծով և ընդ ցամաք: Զի ո՛չ կարէին գալ, և թէ գային՝ այլ զի՞նչ սոքա*[5] *խնդրակ առաքէին, և գնային խնդրակքն*[6] *ի վերայ ծովու: Եւ գնային անցանէին զԳեհոն գետն*[7] *և զՀնդկաց աշխարհն, և հասանէին առ նոսա բաբելացիքն, [զի] պատրաստեալ էին զինքեանս գալ և աւերել զնոսա: Եւ վասն հեռաւորութեան ճանապարհին, որ հեռու էր, և միայն, որ պիտէր ի վերայ ծովու գնային զայնքան աւուր ճանապարհ խնդրակն, և հիւթ պիտէր քաշէր և աւերէր գիրն: Վասն այն գիր ո՛չ գրեցին, այլ զմագաղաթն տետր տետր և թուղթ թուղթ կտրեցին, և ի մագաղաթէն կտրեցին և գիր հանին, որ չաւիրէր*[8] *ի ճանապարհին: Եւ յորժամ հասանէին առ նոսա, հանէին*

---

1 A դամասկացոյն
2 B նաւոց
3 A եթոպացոց
4 A մագաղաւոք
5 B չիք սոքա
6 A խնդրակն
7 B գետ
8 B չաւերէր

*զմագաղաթն և դնէին զգիրն դէմ մէկ մէկի և կարդային զինչ գրած էր:*

*Դարձեալ. ոմանք ասեն*[1]*, թէ՝ «Գիր գրեցին ի թուղթ և պրտուեայ աման դրին, և կպրուվ ծեփեցին ներքոյ և արտաքոյ, որ ջուր չմտանէր, և այնպէս տարան»: Դարձեալ. յառասպելաց*[2] *ասացեալ է, թէ «Ափրոդիտեայ կուռքն*[3] *հեթանոսաց կամեցաւ զիւր հոմանին տեսանել, այսինքն՝ զսիրոդն*[4]*, թուղթս գրեց և ի խեցեղէն անօթ*[5] *եդիր և յուղարկեաց ծովով, որ տանէին առ նա»: Եւ սրբոց ո՛չ այս ասելի, զի սուտ է այս: Եւ ով ոք էին նոքա, որ յայնկոյս գետոյն էին բնակեալ, որ դամասկոսացին*[6] *թուղթն առաքեաց առ նոսա: «Ազգ օտար» (ԺԸ 2) էին «և չար» (ԺԸ 2), և «քան զնոսա անդր» (ԺԸ 2) ո՛չ գոյ շինուքիւն և աշխարհ, զի նոքա յեզր աշխարհի էին՝ հալածեալ և փախեալ ի թագաւորաց: Զի կոխեցին զնոսա և մղեցին, և տարան յայնկոյս Գեհոն գետոյն անցուցին, զի շատք էին, զամէն չէին կարեր*[7] *սպանաներ, փախուցին և յայնկոյս գետոյն անցուցին*[8]*: Եւ նոքա անդ գնացին բնակեցան և իւրեանց շինուքիւն արարին և անդ կացին*[9]*: Եւ տկար ազգ էին և կնատ և ո՛չ պատերազմող, և «կոխան եղեալ և*[10] *անյոյս» (հմմտ. ԺԸ 2), որ յոյս չունէին յետ դառնալոյ:*

**Իբրև զնշան ի լեռնէ բարձրացի, և իբրև զձայն փողոյ լսելի եղիցի**[11] *(ԺԸ 3):*

---

1 B ասացին
2 B առասպելեաց
3 B կուռք
4 AB զսիրօղն
5 A խեցեղէնաձաւք *փխ* խեցեղէն աճօթ
6 B դամասկացին
7 B կանար
8 B *չիք* փախուցին և յայնկոյս գետոյն անցուցին
9 B *չիք* և անդ կացին
10 B *չիք* և
11 B լինիցի

*Այսինքն[1]՝ այս է նշանն, որ[2] յորժամ դամասկացիքն կոտորեցին[3] ի Թակլաթփախսարայ, համբաւն տարածի յամենայն տեղիք: Դարձեալ. նշան այն է, յորժամ այս նշանս լինի, որ Սենէքարիմայ[4] տան, դիակունքն անկանին ի դուռն[5] Երուսաղէմայ, յայնժամ այս համբաւս իբրև զփող հնչեսցէ ընդ ամենայն տիեզերս, զի լսեն զայս համբաւս: Զի սոցա երկուց սատակման աւետիքն լսելի լիցի ընդ ամենայն տիեզերս: Դարձեալ. յորժամ սատանայ անկանի, և դժոխքն կործանի և աւերի գալստեամբն Քրիստոսի, ի ձեռն առաքելոցն այս աւետիքն ընդ ամենայն տիեզերս քարոզի և համբաւի: Դարձեալ. զհետ[6] կարգիս տօթն զգալ հեթանոսացն[7], ասէ, ի վերայ Երուսաղէմայ, և զլոյս փրկութեան[8], որ փրկեցան նոքա, և ամպ զհովանի լինելն Աստուծոյ[9] ի վերայ նոցա: Դարձեալ. արեգակն և լուսին[10]՝ զՔրիստոս[11], և ամպ՝ զմարմինն աստուածացեալ, և անձրև՝ զվարդապետութիւնն և զքարոզութիւնն, և[12] զովացոյց զմարդիք, որ տօթացեալ էին ի տագնապողաց:*

**Ցառաջ քան զհունձն՝ բովանդակեսցի ծաղիկն, և ազոխ** *(ԺԸ 5):*

*Այսինքն[13]՝ յառաջ քան զգերութիւնն Շամրանի, այսինքն՝ Սամարիոյ, աւերեցաւ Դամասկոս ի Թակլաթփախսարայ: Դարձեալ. յառաջ քան զկործանումն Ռափսակայ գերեցան դամասկացիքն: Դարձեալ. «ծաղիկ» զդամասկացոց թագաւորն և իշ-*

---

1 B *չիք* այսինքն
2 A *չիք* որ
3 A կոտորին
4 B Սինաքարիմայ
5 B դուռս
6 A հետ
7 B զգալն հեթանոսաց
8 A լոյս զփրկութիւնն
9 B *չիք* Աստուծոյ
10 A լուս
11 A Քրիստոս
12 B որ *փխ* և
13 A *չիք* այսինքն

*խանքն և մեծամեծքն*[1] *ասէ, և «ազոխ»՝ զռամիկ ժողովուրդն և զփոքունքն և զտղայքն: Որպէս զխոտն քաղեն մանկաղաւ, այսպէս սուրն Թակլաթփախասրու զամենեսեան սատակեաց, զնոսա և վիրաւորեաց զդամասկացիան*[2]՝ *«զծաղիկն և զազոխն» ի միասին, այսինքն՝ զմեծամեծքն և զփոքունքն*[3] *այնքան, մինչև*[4] *թաղման արժանի ո՛չ եղեն: Զի ո՞վ ոք թաղէր կամ ո՞վ կարէր թաղել զայնքան բազմութիւն կոտորելոցն, զի թռչնոց երկնից և գազանաց երկրի կերակրեալք եղեն, զի թռչունք և գազանք կերան զնոսա (տե՛ս ԺԸ 6), որպէս յանապատին եղև: Զի զթշնամին անկեալ առ ափն ծովուն տեսին, այսինքն՝ զփարաւոն իւր զաւրօքն*[5]*, յորոց սարսէին և երկնչէին*[6] *և ահաբեկ լինէին: Յառաջն տեսին առանց զինու և առանց սրոյ և պատերազմի անկեալ, և մեռեալ անվէրս և անհարուածս, մեռնալ և ընկեցեալ: Ըստ այսմ և ասորեստանեաքն, այսինքն՝ Ռափսակայ զօրքն յԵրուսաղէմ ի հրեշտակէ Աստուծոյ Հօրն առանց զինու և պատերազմի սատակեցան, և մեռան անվէրս և անհարուածս, և թռչնոց և գազանաց կերակուրք եղեն. զի ո՞վ էր, որ թաղէր զնոսա: Եւ դամասկացիքն ի Թակլաթփախսարայ սատակեցան և անթաղ մնացին, գազանաց և թռչնոց կերակուրք*[7] *եղեն: Դարձեալ. թռչուն՝ զթշնամիս նոցա կոչէ զԹակլաթփախսար, զի արագապէս եկին ի վերայ նոցա, և գազան՝ դարձեալ զԹակլաթփախսար*[8] *իւր զօրօքն կոչէ վասն խստութեան, զի գազանապէս զիմեցին ի վերայ դամասկացոցն և պատառեցին և գէշ գէշ*[9] *գազանաց արկին զնոսա:*

---

1 A զթագաւորն և զիշխանքն և զմեծամեծքն
2 B զդամասկացիքն
3 B *չիք* այսինքն զմեծամեծքն և զփոքունքն
4 B մինչ զի
5 B *չիք* իւր զաւրօքն
6 B *չիք* և երկնչէին
7 B նոյնպէս *միխ* անթաղ մնացին, գազանաց և թռչնոց կերակուրք
8 B զԹակլաթ և զՓաղսար
9 A *չիք* գէշ

**Ցայնժամ մատչիցին պատարագ Տեառն զօրութեանց ի նեղեալ[1] և ի[2] խոնարհ ժողովրդենէն, և ի մեծ ժողովրդենէն** *(ԺԸ 7)*:

*«Նեղեալ և խոնարհ ժողովուրդ» զիսրայէլացիքն ասէ, որ յԵրուսաղէմ, զի նեղեալ և խոնարհեալ էին ի ներքոյ աւորեստանոյն Ռափսակայ, զի նեղեցին և խոնարհեցուցին: Յորժամ յաղթեցին և կոտորեցին ի հրեշտակէն Աստուծոյ, ժողովուրդն գոհութիւն մատուցին և օրհնութիւն Աստուծոյ: Զի յաղթութիւն յԱստուծոյ եղև և ո՛չ յինքեանց, զԱստուած օրհնեցին, զի ո՛չ յիւրեանց անձանցն[3] եղև յաղթութիւնն, այլ՝ յԱստուծոյ: Դարձեալ. մեծ ժողովուրդ՝ սակս Հնդկացն ասէ, զի Հնդկաց ազգն տեսին, որ Աստուած վրէժխնդիր եղև իւր[4] ժողովրդեանն, և զդամասկացիսն ի ձեռն Թակլաթփ[ախ]սարայ[5] սատակեաց, պատարագ և ընծայ մատուցին յԵրուսաղէմ ի տաճարն Աստուծոյ և գոհացան: Զի որպէս որ[6] զիւր ժողովուրդն փրկեաց ի թշնամոյն, նոյնպէս և զինքեանս[7] փրկեսցէ և ազատեսցէ[8] յիւրեանց թշնամեացն: Դարձեալ. տեսին զվրէժխնդրութիւնն, որ վրէժխնդիր եղև Աստուած Յուդայեան ազգին յԵրուսաղէմ, և զՌափսակայ զօրսն կոտորեաց ի ձեռն հրեշտակին (տե՛ս Լէ 36, Դ Թագ. ԺԹ 35): Եկին հնդիկք և պատարագ և ընծայ բերին յԵրուսաղէմ ի տաճարն[9] Աստուծոյ, և Աստուծոյ մատուցին և գոհացան յԱստուծոյ, թէ որպէս իւր ժողովրդեանն վրէժխնդիր եղև և փրկեաց, նոյնպէս և զինքեանս[10] փրկեսցէ յիւրեանց[11] թշնամեացն[12] և օգնական լինի նոցա: Տարան պատարագ յԵրուսաղէմ**

---

1 B նուաղեալ
2 B *չիք* ի
3 B յանձանցն
4 A իւրեանց
5 B *չիք* ի ձեռն Թակլաթփախսարայ
6 B *չիք* որ
7 A զինքեանք
8 B *չիք* և ազատեսցէ
9 B տաճարին
10 B զիւրեանքն
11 A յիւր
12 B թշնամոյն

*յաւուրս Աքազու: Աքազ էր թագաւոր, յորժամ դամասկացիքն կոտորեցան (տե՛ս Դ Թագ. ԺԶ 9), և եղեկիայ էր որդի Աքազու թագաւոր, յորժամ Ռափսակայ զօրքն կոտորեցան (տե՛ս Էչ 36, Դ Թագ. 35): Զի ինչ նոցա մարմնապէս եղև և կոտորեցաւ, ի նորս հոգեպէս եղև, զի հինն օրինակ էր նորոյս, զի զոր յայնմ ժամանակին եղև մարգարէին բան, զհանդերձեալն նշանակէր, որ յետ գալստեանն Քրիստոսի էր կատարելոց:* «Մատչիցին պատարագ Տեառն զօրուքեանց ի խոնարհ և ի նեղեալ ժողովրդենէ»: «Նեղեալ[1] և խոնարհ ժողովուրդ»՝ ազգս[2] հեթանոսաց էին, *որ ի դիւաց նեղեալ և կոխեալ էին: Եւ ազատեցան[3] ի դիւաց և ի սատանայէ գալստեամբն Քրիստոսի, և պատարագ մատուցին նմա զտէրունեանն և զանձնականն ի նորս Սիոն: Տէրունեան[4] պատարագն անարիւն և խորհրդական պատարգն է, որ զՔրիստոս պատարգ մատուցանեն Հօր Աստուծոյ, և անձնական պատարագն օրհնութիւն[5] է, և այլ զոր[6] ինչ որ կայ՝ անձնական պատարագ ասի՝ հեզութիւն և խոնարհութիւն, աղօթք, ողորմութիւն, պահք[7] և այլն: Զայսոսիկ հանապազ մատուցանեն Աստուծոյ, որ ազատեցան ի սատանայէ զօրուքեամբն Քրիստոսի: Բարձրաւանդակ պատուէր սէրն է և խոնարհութիւնն:*

**Ահաւասիկ Տէր, նստեալ ի վերայ թեթև ամպոյ, եկեսցէ յԵգիպտոս[8], և շարժեսցին ձեռագործք եգիպտացոցն[9] յերեսաց նորա** *(ԺԹ 1):*

---

1 B նուաղեալ
2 B ազգն
3 B ազատեաց
4 A զտէրունեանն
5 A օրհնութեան
6 B որ
7 A պաք
8 A յաշխարհս, B աշխարհ *(չնայած A-ն ունի Եգիպտոս բառի յունօրինակ համառոտագրում)*
9 B ձեռագործքն Եգիպտոսի

«Թեթև ամպ» նախ՝ զզօրքն[1] Սէնէքարիմայ[2] ասէ, որ գնացին ի վերայ Եգիպտոսի, և՝ ամպոյ նմանեցուցանէ վասն երագութեանն, որ երագապէս գնացին ի վերայ Եգիպտոսի աւերել: Եւ «Տէր նստեալ ի վերայ նոցա» զայն ասէ, որ Հրամանաւն Աստուծոյ գնացին ի վերայ աշխարհիս, որ աւերէին[3]: Զի Աստուծոյ Հրամանքն այն էր, որ գնային զԵգիպտոս աւերէին և զայլ շրջակայ ազգերն, որ բոլոր Երուսաղէմի էին, և յԵրուսաղէմ ո՛չ մերձենային: Իսկ նոքա զԵգիպտոս այլ գնացին[4] աւերեցին[5], և դարձան և եկին ի վերայ Երուսաղէմայ, և զԵրուսաղէմ այլ կամէին առնուլ և աւերել ի հիմանց: Եւ այս եղև պատճառ նոցա կորստեանն, սատակեցան ՃՁԵՌ (185 000): Մի՝ որ ի վերայ Երուսաղէմայ եկին առնուլ զԵրուսաղէմ, երկու՝ որ Հայհոյութեան բանս[6] խօսեցան յաղագս Աստուծոյ: Զի ո՛չ թէ[7] ի նոսա նստելով Հանգչէր, որպէս և ի սուրբսն, այլ զայն, որ նորա Հրամանաւն եկին՝ նստել ասէ, զորս Աստուած ա՛ծ զնոսա ի վերայ Եգիպտոսի: «Եւ շարժեսցին ձեռագործքն Եգիպտոսի»: Զկուռքն ասէ, զի յորժամ նոքա լսեցին զհամբաւ գալոյն զօրացն[8] ի վերայ ինքեանց, գնացին անկան առաջի կռոց, շաւտ լացին և աղաղակեցին, և խոստում[9] խոստացան և խնդիրք արարին, որ ազատին: Եւ ո՛չ կարացին ազատիլ զնոսա կուռքն, զի ո՛չ գոյր ի նոսա զօրութիւն, որ ապրեցուցանէին[10] զերկրպագուս: Զի արգելել ո՛չ կարէին, որ ո՛չ գային, զի Հրամանաւն Աստուծոյ գային նոքա, այլ փրկել ո՛չ կարէին ի նոցա ձեռացն[11]: Իսկ առ ի միտս մարգարէի ասացեալ բանս յաղագս

---

1 A զօրքն
2 B Սինէքարիմայ
3 B աւերեցին
4 B *չիք* գնացին
5 A ապրեցին *փխ* աւերեցին
6 A բան
7 B եթէ
8 B զօրոյն գալ *փխ* գալոյն զօրացն
9 B խոստմամբ
10 A ապրեցուցանել կարէին
11 B զնոսա *փխ* ի նոցա ձեռացն

*ապագայի և դարձելոցն է: Յաղագս Էմանուէլի*[1]*, որ մայրական գրկօք*[2] *և ուսօք եմուտ յաշխարհս, «Թեթև ամպ» կոչէ զսուրբ Աստուածածինն, և «Տէր նստեալ ի վերայ»՝ զՔրիստոս, որ մայրական գրկօք եմուտ յաշխարհս, որպէս ասաց Հրեշտակն Յովսէփայ. «Արի*[3] *ա՛ռ զմանուկդ և զմայր մանկանն*[4] *և փախիր յԵգիպտոս, քանզի խնդրէ Հերովդէս սպանանել զդա» (Մտթ. Բ 13): «Թեթև ամպ» կոչէ զսուրբ Աստուածածինն, զի գերիվերոյ էր մարմնական կրից, և սուրբ և մաքուր էր: Այլ և զանօսրութիւնն Տեառն ցուցանէ: Անօսր զայն ասէ, որ ի վերայ օդոյդ թռչէր և գնայր, և ի վերայ ծովու*[5] *գնայր*[6]*, և վիմովք կնքելովք*[7] *յարեաւ ի գերեզմանէն, և դրովքն*[8] *փակելովք եմուտ ի վերնատունն առ աշակերտսն, և այլն: Ապա թէ ո՛չ՝ մարմին ունէր շօշափելի և երևելի, ուտէր և ըմպէր*[9]*, և ըմբռնեցին և չարչարեցին և սպանին ևս: «Եւ շարժեսցին ձեռագործքն»: Սկիզբն յաղթութեան դիւացն անդ արար Քրիստոս, զի մի ասիցեն մարդիկք*[10]*, թէ նախ՝ ի մէնջ սկսաւ առնել պատիժս յաշխարհս*[11] *գալով, այլ նախ՝ զդևսն և զսատանայ պատժեաց յաշխարհս գալով: Զի ո՛չ քարոզելով և ո՛չ խրատելով և ո՛չ*[12] *զօրութիւնս առնելով անդ լինէր այս, այլ յերևելն միայն, որ անդ երևեցաւ Քրիստոս: Կուռքն ամենայն և բագինքն, որ անդ կային յաշխարհս*[13] *անկեալ, կործանեցան և խորտակեցան և փշրեցան յերևելն*[14] *մանկանն Յիսուսի, զի մտանելով անդ քակեաց զամե-*

---

1 A Էմանուելին
2 B գթօք գրկօք
3 A յարի
4 B մանկան
5 A ծովուն
6 B *չիք* գնայր
7 A վիմովն կնքելով
8 A դրօքն
9 AB ըմբէր
10 A մարդիկ, B մարդիք
11 A յաշխարհ
12 A *չիք* ոչ
13 B *չիք* կային յաշխարհս
14 B յերևիլն

նայն ամբարշտութիւնս[1], որ անդ էին: Զի կռոց անկանելն[2] զամենայն մեղաց և ամբարշտութեան խափանելն[3] ցուցանէր, որ յետոյ խափանէր ի քաղաքէն և յաշխարհէ նոցա: Զի թէպէտ ամենայն աշխարհս ի կռապաշտութեան[4] և ի չարիս կային, այլ անդ յաշխարհս[5] առաւել էր քան զամենայն, զի զսատանայ[6] անդ սանեն անկեալ[7]: Եւ նախ վասն այն անդ առաւել էր կռապաշտութիւն և չարն, վասն այն ի նոսա եցոյց Քրիստոս զիւր զօրութիւնն: Յամօթ լիցին[8] հերձուածողքն, որ սանեն, թէ՝ «Քրիստոս նախ՝ սոսկ մարդ ծնաւ ի Կուսէն և ապա՝ յետ մկրտութեանն աստուածութիւնն[9] բնակեցաւ ի նմա[10]»: Եւ սուտ սանեն, զի թէ Աստուած ո՛չ էր, զիա՞րդ ի տղայութեան Հասակին մտանել[11] յաշխարհս կուռքն[12] ամենայն շարժէին, անկանէին և փշրէին, և շարժեալ դողային յահէ նորա[13]: Այլ Աստուած էր և նորա մարմինն Աստուած էր. վասն այն գործէր զայս: Զի սկիզբն այս եղև, և յետոյ ամենեքեան հաւատացին ի նա և դաւանեցին զնա Աստուած: Եւ վասն նորա բազումք[14] զանձինս ի մահ մատնեցին և մեռան, վասն նորա յանապատն ելան ճգնաւորաց դասքն, վասն նորա սիրոյն վաճառեցին զայս կեանքս[15] այն կենաց, զի զայս տուին և զայն կեանքն առին: «Նստեալ» ասաց[16] մարդարէս՝ զդատողական իշխանութիւն նորա եցոյց, որպէս մարդ նախ նստեն[17] և ապա դատաստան առնեն ումեք: Արդար

1 A ամբարշտութիւն
2 B անկումն
3 B զանբարշտութեան խափանումն
4 B կռապաշտութիւն
5 B աշխարհս
6 B սատանայ
7 A անկալ
8 A լինցին
9 B Աստուած
10 A նա
11 B մտանել ի տղական հասակին *փխ* տղայութեան հասակին մտանել
12 B բագինքն *փխ* կուռքն
13 B անկեալ խորտակեցան *փխ* շարժէին անկանէին և փշրէին... յահէ նորա
14 A բազում
15 B կեանս
16 B *չիք* ասաց
17 A նստին

*դատաստանաւ ի բաց եբարձ զամենայն անօրէնութիւն հասարակաց*[1] *և առանձին*[2] *զհասարակաց, զբոլոր մարդկան և առանձին զիւրաքանչիւր, զիւրաքանչիւր*[3] *մի մի մարդկան, հասարակաց զբոլոր աշխարհի, առանձին զմի մի քաղաքի:* «Եւ սիրտք նոցա լքցին» *(ժթ 1), այսինքն՝ պաշտօնէից կռոցն սիրտք*[4] *թուլասցին և տկարասցին: Մի՝ յայնժամ, յորժամ տեսին տկարացեալ և ո՛չ կարացին օգնել նոցա և*[5] *ազատել զնոսա յասորոցն, և մի՝ ի գալստեանն Քրիստոսի գիտացին, որ*[6] *կուռքն ո՛չ էր աստուած, այլ Քրիստոս էր ճշմարիտ Աստուած:*

*Առաջնորդ մարմնոյն հոգին է և միտքն: Յորժամ միտքն տկարանայ և թուլանայ, յիրացն մարմինն, թէպէտ առոյգ լինի և արի, մարմինն այլ ընդ առաջնորդ մտացն և խորհրդոցն*[7] *թուլանայ, և անարի և տկար և անզօր դառնայ: Եւ այն որ ասէ.* «Յաբիւեն եգիպտացիքն ընդ յերուսաղէմացոցն, և ընկեր առ ընկեր, և քաղաք ընդ[8] քաղաք, և օրէնք ընդ օրէնս, և թագաւոր ընդ թագաւոր, և այլ քաղաք ընդ քաղաք[9], և թագաւոր ընդ թագաւորաց յառնուլ[10]» *(համմտ. ժթ 2) այն է, զի հնդիկքն յարեան ի վերայ եգիպտացոցն: Զի յորժամ Սինէքարիմ թագաւորն ելաւ և գնաց ի վերայ*[11] *Եգիպտոսի, ել Թարայ արքայ՝ Հնդկաց թագաւորն և գայր ի վերայ Եգիպտոսի ի պատերազմ: Գիտաց Սէննէքարիմ*[12]*, թէ ի վերայ ինքեանն գայր ի պատերազմ, մարդ յուղարկեաց մօտ յՌափսակ*[13]*, և տարաւ օգնել ինքեան յերու-*

---

1 A զհասարակաց
2 AB զառանձին
3 B իւրաքանչիւր
4 B կոց սիրտքն
5 A *չիք* օգնել նոցա և
6 B զի *փխ* որ
7 B *չիք* և խորհրդոցն
8 B առ *փխ* ընդ
9 B *չիք* և թագաւոր ընդ թագաւոր և :այլ, քաղաք ընդ քաղաք
10 B յառնելն
11 B *չիք* եգիպտացոցն զի յորժամ Սինէքարիմ... ի վերայ
12 B Սինէքարիմ
13 B Ռափսակ

*սաղէմայ ի հետ: Եւ յորժամ գիտաց Սէննէքարիմ[1], որ ի[2] վերայ իւրն[3] չէր ի գար Հնդկաց թագաւորն Թարայ արքայ (տե՛ս Լէ 9), ապա դարձոյց յետս[4] զՌափսակ, որ առ զհրովարտակն հայհոյութեան և եկ ի վերայ Երուսաղէմայ և անդ սատակեաց զզօրսն[5] ճՁԸՌ (185 000. տե՛ս Լէ 36, Դ Թագ. ԺԹ 35): Եւ ինքն Ռափսակ փախեաւ[6] Ժ (10) արամբք կամ տասնուհինգ, և գնաց առ թագաւորն իւր Սէննէքարիմ[7] և պատմեաց, և նա փախեաւ և գնաց յաշխարհն իւր և յիւրոցն սատակեցաւ (տե՛ս Լէ 38, Դ Թագ. ԺԹ 37): Իսկ եգիպտացիքն[8] ելին ընդ առաջ[9] Թարայի Հնդկաց թագաւորին և պատերազմեցան, և ո՛չ թողին մտանել[10] յաշխարհն[11] և ի ս[ա]հ[մանն] իւրեանց, և մարտեաւ հնդիկն ընդ եգիպտացոյն: Այս է, որ ասէ. «Պատերազմեցին[12] ընդ իրեարս[13] քաղաք և թագաւորք» (հմմտ. ԺԹ 2), այսինքն՝ հնդկաց և եգիպտացոց: Իսկ առ միտս՝ յորժամ եկն Քրիստոս յաշխարհս, եղև պատերազմ այսպիսի ի մէջ մարդկան, զոր ինքն իսկ ասաց. «Եկի քակել[14] զայր ի հօրէ և զդուստր ի մօրէ» (Մտթ. Ժ 35): Զի հաւատոյն բան արար զբաժանիլն ի միմեանց, զի հաւատացեալն ընդ անհաւատ[15] ընտանոյն[16] բաժանէր, որպէս զապականեալ և զխոտեալ անդամն կտրեն և ի բաց ձգեն ի մարմնոյն, զի մի՛ զառողջն ապականեսցէ ընդ ինքեան, զի «օրէնք ընդ օրէնք մարտնչէին» (հմմտ. ԺԹ 2), այսինքն՝ հեթանոսաց*

---

1 B Սիճէքարիմ
2 B *չիք* ի
3 B իւր
4 B յետ
5 A զօրքն
6 A փախաւ
7 B Սիճէքարիմ
8 B եբրայեցիքն *փխ* եգիպտացիքն
9 B յառաջ
10 B կոխել *փխ* մտանել
11 B զաշխարհն
12 A պատերազմեացին
13 A իրարս
14 A ի քակել
15 A յանհաւատ *փխ* ընդ անհաւատ
16 AB ընդդանոյն

*օրէնքն և քրիստոնէից, զի սոքա՝ ընդ նոսա և նոքա՝ ընդ սոսա: Զի զինչ բաժին է հաւատացելոց ընդ անհաւատից կամ լուսոյ ընդ խաւարի և այլն:*

**Եւ գետն ցամաքեսցի** *(ԺԹ 5):*

*Եւ եղև այս մեծաղօր սքանչելիքս յաշխարհս, զի գետն ցամաքեցաւ: Եւ դու մի՛*[1] *զարմանայր*[2]*: Զի որպէս Մովսէս մարգարէն առաջի կախարդացն Յանէսի և Յամբրէսի զգետն յարիւն փոխեաց, և յայս ժամանակիս, որ պատուհասէր զԵգիպտոս, զնոյն*[3] *գետն ցամաքեցոյց*[4] *ժամանակ ինչ և յետոյ բղխեցոյց: Որպէս զտեղեալ հրոյն առ սոդոմայեցիքն*[5] *և ցօղ լինել*[6] *բոցոյն առ երանելի մանկունքն*[7]*, զմի զնոյն բնութիւն բոցոյն ի ցօղ փոխեաց մանկանցն:*

**Զի՞ դու, զի՞ ընդ քեզ, զի՞ ելեր ի տանիս նանրութեան** *(ԻԲ 1):*

*Ելանէին ի տանիսն և զհեծեալն զննէին*[8]*, որ գայիւն, և դողային յահէն: Այլ և անդ ելանէին*[9] *և զկուռքն աղաչէին փրկել զինքեանս*[10] *ի պատուհասէն եկելոց*[11]*: Զի թէ ի տանն կուռք ունէին, ի տանիսն այլ կուռք ունէին և պաշտէին, և անդ ելանելով՝ աղաչէին փրկել, և ո՛չ փրկել կարէին*[12] *զնոսա: Դարձեալ. ի ցոյցս թշնամեացն ելանէին ի տանիսն և կռոցն երկրպագէին*[13]*, իբր թէ զթշնամեաց սիրտն հաճէին, թէ նոքա հայէին*

---

1 A մի ինչ
2 B զարմանար
3 B *չիք* զնոյն
4 B ցամաքեցաւ
5 A սոդոմայեցովքն
6 B լինիլ
7 A մանկամբքն
8 A զհեծեալն էին *փխ* զհեծեալն զննէին
9 B կային *փխ* ելանէին
10 A զինքեանքն
11 B եղելոց *փխ* եկելոց
12 A կարին
13 B երկրպագութիւն

և[1] տեսանէին, որ սոքա կռոցն երկրպագութիւն մատուցանէին[2], և նոցա բարկութիւնն շիջէր: Զի գիտէին, թէ[3] նոքա վասն այն թշնամի են[4] սոցա, որ սոքա աստուածապաշտ[5] էին և զԱբրահամու և զՍահակայ և զ[Յ]ակոբայ Աստուածն պաշտէին[6], և նոքա կռապաշտ[7] էին[8]: Եւ սոքա այլ կռոցն երկիրպագին որպէս[9] թէ ինքեանք այլ կռապաշտք[10] են իբրև զնոքա[11], որ նոքա վնաս չառնէին սոցա: Եւ այսպէս առնելով՝ ի կռապաշտութիւն անկանէին: Տե՛ս զսոցա անմտութիւնն, զի որչափ տանիսն բարձր, այնքան նոքա, որ ի[12] տանիսն ելեալ էին[13], ի չարութիւն բարձրացեալ էին և ի խորս անդընդոց ընկղմեալ էին: Զի որ[14] զայս առնէին, պարտ էր որ զԱստուած աղաչէին[15], որ փրկէր զնոսա, և ո՛չ արարին:

**Լցաւ քաղաքն գուժականօք** *(ԻԲ 2)*:

*Սովորութիւն, որ ո՛չ յառաջ միայն քան զպատժոց և զհատուցման ժամանակն, այլև ի հատուցման և ի պատժոց ժամանակն*[16] *ի դէմս ուրուք զտմարդութիւն ածել*[17]: *Զի յառաջն ի ձեռն մարգարէից և քարոզողացն ուսուցանէ չգործել զչարն, որ չպատուհասին*[18] *յԱստուծոյ, և յորժամ գործեն և պատժէ*

---

1 B հայեալ *փխ* հայէին և
2 A երկիր պագանէին *փխ* երկրպագութիւն մատուցանէին
3 A որ *փխ* թէ
4 A ին *փխ* են
5 A աստուածապաշտք
6 B *չիք* և զԱբրահամու... պաշտէին
7 A կռապաշտք
8 B *չիք* էին
9 A իբր *փխ* որպէս
10 B կռապաշտ
11 A զնոսա
12 B *չիք* որ ի
13 B ելանէին *փխ* ելեալ էին
14 A զոր
15 A էին աղաչեալ *փխ* աղաչէին
16 B *չիք* այլ և ի հատուցման և ի պատժոց ժամանակն
17 B առնել *փխ* ածել
18 A ոչ պատուհասին

*Աստուած, ի[1] նոյն ժամն այլ յիշէ զմարդոյ[2] չարիքն և ի դէմս ածէ, թէ՝ «Վասն այն պատուհասեմ զքեզ և պատժեմ[3], որ յառաջն[4] ծանուցի քեզ չար[5] չգործել և դու գործեցիր, յիրաւի տանջելոց ես»: Եւ զայս ուսանիմք ի մեծաւտան առակէն, որ յաւետարանին գրեալ է: Զի յորժամ մեծաւտուն ի դժոխքն ի չարչարանքն էր և[6] ի մէջ տանջանացն[7], և ասաց առ Աբրահամ առաքել զՂազար և վրկել զինքն ի տանջանացն[8], ասացաւ նմա. «Դու ընկալար զբարիս ի կեանս քո և ո՛չ պատեհաբար մատակարարեցեր, զի աղաղակեցեր, յիրաւի՛ տանջիս[9]» (հմմտ. Ղուկ. ԺԶ 25): Այլ[10] և Քրիստոս ի դատաստանին զայս այսպէս առնելոց է մեղաւորացն և ասելոց, թէ[11]՝ «Երթա՛յք յինէն անիծեալք, զի քաղցեայ՝ և ո՛չ ետուք: Վասն այն ի հուրն երթալոց է[ք] և տանջելոց, որ քաղց[ե]այ և ո՛չ ետուք[12]: Վասն որոյ յիրաւի պատժելոց[13] եմ զձեզ» (հմմտ. Մտթ. ԻԵ 41-42): Սոյնպէս և մարգարէս ասէ, թէ՝ «Յառաջագոյն խրատեցի զձեզ և ո՛չ լսեցիք[14], վասն այն՝ լցաւ քաղաք ձեր դուժականօք վասն ձեր մեղացն, որ գործեցէք» (հմմտ. ԻԲ 2):*

**Եւ կոչեաց Տէր Սաբաւօթ լալումն[15] և[16] ողբումն և զգածումն քրձի** *(ԻԲ 12):*

---

1 B զմարդն ի
2 A զմարդու
3 A տանջեմ *փխ* պատժեմ
4 B յառաջ
5 A *չիք* չար
6 B *չիք* ի չարչարանքն էր և
7 B տանջանաց էր
8 B զովացուցանել *փխ* և փրկել զինքն ի տանջանացն
9 B տանջես
10 B *չիք* այլ
11 B ասէ *փխ* ասելոց թէ
12 B *չիք* վասն այն ի հուրն... ետուք
13 B տանջելոց *փխ* պատժելոց
14 B լսեցէք
15 C Սաբաւօն այլումն
16 B չիք և

*Այս յայնժամ եղև, որ եհան Աստուած զասորոց զօրքն*[1] *զՍինէքարիմայ*[2]*, որ գային և աւերէին զԵրուսաղէմ և գերէին: Եւ համբաւ գալուն*[3] *տարածեցաւ: Զի ծածուկ և ի թաքստի ո՛չ եկին, որ նոքա ո՛չ կարէին*[4] *գիտենալ*[5]*, որ աղաչեալ էին*[6] *զԱստուած, այլ յայտնի եկին: Եւ նախ՝ զշրջակայ ազգերն գերեցին և եկեալ հասան*[7] *յԵրուսաղէմ: Պարտ էր, որ յորժամ լսեցին նոքա զհեծելի համբաւն, որ գայր*[8]*, ապաշխարէին*[9] *և լային*[10] *և քրձապատ լինէին*[11]*, որ ազատէր*[12] *զնոսա Աստուած ի ձեռաց թշնամեաց նոցա*[13]*: Վասն այն*[14] *թոյլ ետ Աստուած, որ գային*[15] *թշնամիքն, որ նոքա դառնային ի մեղաց և ապաշխարէին, և փրկէր զնոսա Աստուած: Եւ նոքա ո՛չ դարձան ի մեղաց*[16]*, այլ առաւել մեղանչեցին, զի յուսահատութիւն անկան և ասացին, թէ գայ*[17] *հեծեալն*[18] *և զմեզ սպանանէ*[19]*, և զմեր ապրանքն*[20] *տանի*[21]*, զմեր*[22] *զոչխարն*[23] *և զարջառն*[24] *և զայլն*[25]*. լաւն այն է, որ մեք ուտեմք և ըմպեմք*[26]*, քան զայն, որ մեր*[27] *թշնամիքն*

---

1 C զօրէնքն *փխ* զօրքն
2 A զսինէքարիմ, C զսէնէքարիմ
3 AB գալոյն
4 A կարացին
5 B գիտէին *փխ* կարէին գիտենալ
6 AB աղաչէին *փխ* աղաչեալ էին
7 AB կամաց կամաց հասին *փխ* եկեալ հասան
8 C կու գայր
9 A ապաշխարեր էին
10 A լացեր
11 A քրձապատ եղեր
12 C ազատեալ էր
13 AC թշնամեացն *փխ* թշնամեաց նոցա
14 A յայն
15 AC եկին *փխ* գային
16 B *չիք* ի մեղաց
17 A տի գայ, C կու գայ
18 AC հեծելն
19 A ի սպանէ, C կու սպանանէ
20 AB ըոզակն (B ամենայն ինչն) *փխ* ապրանքն
21 AC տի (C կու) տանի
22 BC *չիք* զմեր
23 A ոչխարն
24 AB զառջառն, C զառջառ
25 B *չիք* զոչխարն և զառջառն և զայլն
26 B *չիք* և ըմպեմք
27 AC *չիք* մեր

գան և ուտեն: Եւ ասացին. «Սպանցո՛ւք և ղենցո՛ւք զուարակս[1], կերիցո՛ւք և արբցո՛ւք, քանզի վաղիւն մեռանելոց եմք» (Հմմտ. Իբ 13), և այնպէս[2] արարին: Զի հեծելի գալն վասն այն էր[3], որ ապաշխարեն[4] վասն կարճելոյ զմեզս, տուան օրէնք, որ ի մեզայ կարճին[5] մարդիք, և խափանին և դադարին ի մեզաց: Եւ նոքա[6] և զարթուցին յինքեանս[7] զմեզս, զի ասէին. «Կերիցո՛ւք և[8] արբցո՛ւք»: Զի ի գալ հեծելին պիտէր ապաշխարէին[9], որ[10] դեղ փրկութեան լինէր ինքեանց, նոքա զդեղ փրկութեանն պատճառ կորստեան ինքեանց արարին[11], որ[12] ասացին. «Կերիցո՛ւք և արբցուք», և ո՛չ դարձան յապաշխարութիւն[13]: Պօղոս առաքեալն զօրէնքն կազատէ[14] ի մեղաց, թէ՝ «Օրէնքն ո՛չ է պատճառ մեղաց, այլ մարդկան չարութիւնն լինի պատճառ[15]» (Հմմտ. Հռոմ. է 7-8): Զոր օրինակ՝ բժիշկն[16] դեղ մի փորձեալ լինի[17] և բազում անգամ արարեալ[18], և ստուգիւ գիտէ[19], որ այն դեղն[20] այս ինչ խոցի և ցաւու դեղ է: Եւ յորժամ սաստիկ և առաւել լինի ցաւն, և դնէ զայն դեղն՝ առաւել վիրաւորի ցաւն[21], ո՛չ թէ բժիշկն եղև պատճառ, որ ո՛չ առողջացաւ[22] այլ վիրաւորեցաւ[23], այլ՝ սաստկութիւն ցաւի, զի առաւել էր ցաւն, ո՛չ կարաց

---

1 B զզուարակս մեր զենցուք և *փխ* սպանցուք և զենցուք զուարակս
2 AB *չիք* այնպէս
3 AB էր որ ապաշխարէին իբր օրէնք եղաւ նոցա
4 AC ապաշխարին
5 AB կարին *փխ* կարճին
6 A զնոքա
7 B յաւելին *փխ* և զարթուցին յինքեանս
8 C *չիք* և
9 C պարտ էր ապաշխարել
10 A և *փխ* որ
11 B *չիք* ասէին. Կերիցուք և արբցուք զի ի գալ հեծելին... ինքեանց արարին
12 AB *չիք* որ
13 AC *չիք* և ոչ դարձան յապաշխարութիւն
14 C կու ազատէ
15 AB *չիք* լինի պատճառ
16 B բժշկական
17 C *չիք* լինի
18 B փորձեալ *փխ* արարեալ
19 A գիտէին, B գիտեն
20 B *չիք* այն դեղն
21 B վիրաւորեցաւն *փխ* վիրաւորի ցաւն
22 AB չառողջացաւ *փխ* ոչ առողջացաւ
23 B *չիք* այլ վիրաւորեցաւ

դեղն բժշկել ի ցաւոցն նոցա[1], և նոցա եղև: Նոյնպէս օրէնքն[2] ի դարմանս հոգւոյ առողջութեան[3] տուան յԱստուծոյ, և մեղկութիւն մեր ի վնաս ղնա շրջեաց[4]: Այսպէս և գալուստն Քրիստոսի ւասն փրկութեան աշխարհի եղև, որ զմարդիկք[5] փրկեաց ի մեղաց, որ ոք հաւատացին ի նա[6]: Եւ ոմանք տանջանք և[7] պատիժ կրեցին, որպէս Յուդայ[8], որպէս դպիրքն և փարիսեցիքն՝ ազգն Հրէից, որ խաչեցին զՔրիստոս և[9] պատժոց արժանացան: Եւ լոյս արեգական ւասն ական արարաւ[10], որ տեսանէ ակն զլոյս[11], այսինքն՝ աչքն, իսկ այն որ տկար աչքն է, հայելով յարեգական կուրանայ: Ո՛չ թէ արեգակն եղև պատճառ կուրութեան, այլ՝ տկարութիւն աչացն:

Դարձեալ. զաշխարհս ստեղծեալ է Աստուած, որ տեսանեն մարդիք և հային, և այսով ի ծանօթութիւն գան Աստուծոյ և ճանաչեն ղնա, որպէս ասէ Պօղոս. «Երևելի արարածովքս զանեըևոյթն Աստուած ճանաչեմք» (հմմտ. Եբր. ԺԱ 3): Իսկ յոլովք ի մարդկանէ գայթակղեցան և չաստուած[12] պաշտեցին, ոմանք՝ զերկիրս[13], ոմանք՝ զերկինքն[14], ոմանք՝ զարեգակն[15], ոմանք՝ զլուսին և զաստեղս[16] և զայլն[17]:

Ըռշտութիւն վաճառոցն խոտան է առաջի Աստուծոյ: Զի առ ի[18] կարևոր պէտս հաստատեաց[19] Աստուած զերկիր և զծով, և

---

1 C նոյնպէս փխ նոցա
2 AB օրէնք է
3 B առողջութիւն
4 C շրջեալ
5 B մարդիք
6 C չիք ի մեղաց որ ոք հաւատացին ի նա
7 C չիք տանջանք և
8 B յօգոյ փխ Յուդայ
9 C և ոչ հաւատացին և
10 B արարաւ, C արիրու
11 AC լոյս
12 AC աստուած
13 A զերկիր, B զերկինք
14 B զերկիր
15 B չիք ոմանք զարեգակն
16 AC զաստեղն
17 A չիք և զայլն
18 C տա փխ առ ի
19 C հաստացեալ

*ո՛չ յաւելաստացուբիւն մեղանչական, թէ՛ երկրիս բարիքն[1] է և թէ՛ ծովու բարիքն[2] մարդոյս համար է ստեղծեր, որ մարդիք ստանան զսոցա բարիքն և վայելեն, սակայն զչափաւորն պիտի[3] ստանան, և ո՛չ յաւելաստացուբեանց[4] հետևել[5]: Զի թէ քան զհարկաւոր պիտոյքն առաւել հետևել և ստանայ՝ մեղանչէ այնպիսին[6], այլ չափաւորին հետևել[7]: Թէ՛ նոքա, որ զերկրի բարիս ստանան[8], և թէ՛ նոքա, որ վաճառականքն են, որ ի վերայ ծովու ընթանան[9], և գնեն[10] և վաճառեն, և նոքա, որ ի վերայ ծովու գնան[11], առաւել պարտ է զգուշանալ և երկնչել յԱստուծոյ և ո՛չ մեղանչել, զի զմեծամեծ[12] սքանչելիքն Աստուծոյ տեսանեն[13], զծովու շարժումն և զալեաց սաչուն և զթնդումն և զորոտումն[14]: Այս յանցանելն էր, մոռացայ և աստ գրեցի:*

*Ոստիկանն և հազարապետն և հանդերձապետն միապէս են, զի[15] ամենեքեան մեծուբեան անուանք են: Սոմնաս վասն չարուբեանն իւրոյ, որ զիշխանուբիւնն[16] ի բարի գործ[17] չէր ածէր, այլ ի չարն, մերժեցաւ յիշխանուբենէն[18] և գնաց գերի ի Բաբելոն: Եւ մի՝ վասն այն պատճառին, զի գերեզմանն, որ իւրն էր շինէր, Տեառն մնասցէ: Նախ՝ զի Սոմնաս մարդ էր՝*

---

1 AC երկրի բարիքս
2 B բարիքն է
3 AC պիտիր
4 A աւելաստացութեանց, C աւելաստացութեան
5 B հետևիլ
6 AB մեղք է *փխ* մեղանչէ այնպիսին
7 B հետևիլ
8 AB ստանայ, C կու ստանայ
9 C կու ընթանան
10 AB գնան *փխ* գնեն, C կու գնգն
11 C կու գնան
12 C զմեծամեծս
13 C կու տեսանեն
14 C *այստեղից՝ թերթ 166ա, շարունակվում է ԻՋ 19-ը գլխահամարի մեկնությունը. տե՛ս աստ, էջ 250*
15 B չիք զի
16 A զիշխանութեանն, B իշխանութիւն
17 A ի գործ
18 A իշխանութենէն

*ապականեցաւ, ո՛չ էր պարտ յանապական[1] տեղի թաղել[2], այսինքն՝ ի վիմին, զի վէմն և քարն անապական է, այլ պարտ էր անապական մարմինն Քրիստոսի յանապական տեղւոջ[3] դնել[4]: Երկրորդ՝ զի Ադամայ գերեզմանն անդ էր, պարտ էր և Քրիստոսի գերեզմանն անդ լինել[5]: Երրորդ՝ զի տեղիքն այն մէջ էր ամենայն աշխարհի, որպէս սիրտ մարդոյն մէջ է մարմնոյն, և ի սրտէն կենդանութիւն սփռի յամենայն մարմին: Նոյնպէս պարտ էր Քրիստոսի անդ թաղել[6], և կենդանի առնել զամենայն մարդ: Զորրորդ՝ անդ թաղել[7] և ի սկզբնական մեղացն ազատել զմարդիկք: Զի Ադամ անդ թաղեցաւ և ի սկզբնական մեղօք մահարձանն[8]. այն է, որ ի վերայ պարսպին նետակալ շինեն, և զնետն ձգեն և յետ և այն որ անցանեն[9]:*

**Այդ իսկ էր ամբարտաւանութիւն ձեր ի սկզբանէ** *(ԻԳ 7)*:

*Ամբարտաւանութիւնն մեծ մեղք է: Զի հպարտութիւնն և ամբարտաւանութիւնն զհրեշտակ[10] յերկնից ընկէց յերկիր և ի վայր կործանեաց: Հպարտութիւնն զԱդամ ի դրախտէն արտաքսեաց[11]: Հպարտութիւնն և ամբարտաւանութիւնն ի Նոյեան ժամանակն[12] զջրհեղեղացիքն զամենեսեան առ հասարակ ջրահեղձ[13] կորոյս: Զի թէպէտ պոռնիկք էին, սակայն հպարտք էին: Զի յորժամ Նոյ քարոզէր նոցա ի մեղաց դառնալ և ո՛չ գործել, նոքա ո՛չ լսեցին վասն հպարտութեան իւրեանց[14]: Հպարտութիւնն զՍոդոմ և զԳոմոր կործանեաց, հուր իջոյց յերկնից և*

---

1 B անապական
2 A տեղիքն թաղիլ
3 A տեղ, B տեղուոջն
4 A ոչ դնիլ
5 B լինիլ
6 A թաղիլ
7 A թաղիլ
8 B մեղօքն մահարձան
9 A անցանին
10 A զհրեշտակք
11 A եհան արտաքսեաց
12 B *չիք* ի Նոյեան ժամանակն
13 B *չիք* առ հասարակ ջրահեղձ
14 A *չիք* իւրեանց

այրեաց: Զի թէպէտ պղծագործք էին, սակայն հպարտք էին, զի Ղովտ ի մէջ նոցա էր և հանապազ քարոզէր նոցա, և նոքա ո՛չ լսէին՝ ասելով. «Դու օտարական մարդմ ես[1] և եկիր ի մէջ մեզ, և մեզ խրատող[2] լինիս և ուսուցիչ»: ՀպարտուԹիւնն և ամբարտաւանուԹիւնն զփարաւոն իւր զօրօքն ընկղմեաց ի ծովն, զի հպարտ էր և ամբարտաւան[3], զի ասաց. «ԶՏէր ո՛չ գիտեմ և զԻսրայէլ ո՛չ արձակեմ» (հմմտ. ելք. Թ 35, ժ 20): ՀպարտուԹիւնն զԿորխ և զԴաթան ի խորս անդնդոց կորոյս[4] (տե՛ս Թիւք ԻԶ 9-10): Դպիրքն և փարիսեցիքն յաղագս հպարտուԹեան ո՛չ հաւատացին ի Քրիստոս:

Սիհիմ անուն մարդ մի արկեալ էր զհիմունս այն քաղաքին և շինեալ էր զնա, վասն որոյ ասէ. «Արկ զհիմունս քո Սիհիմ» (ԻԳ 13)՝ եղոմայեցոցն և ծուրացոցն և եգիպտացոցն և այլոցն: Սոքա կռապաշտք էին և հեԹանոսք, և սոցա համար այլ[5] մարգարէանայ Եսայի մարգարէն, որ գերի պիտիր գնան: Եւ նոքա այլ գերի գնացին և եւԹանասուն ամ գերի կացին: Եւ յետ Հ (70) ամացն այց արար նոցա Աստուած և ազատեաց ի գերուԹենէն, և գնացին յիւրեանց[6] տեղիքն: Սակայն զարձ նոցա ո՛չ էր նախախնամուԹեամբ և փառօք և պատուով, որպէս զիսրայէլացոց յԵգիպտոսէն[7], և կամ յետոյ ի Բաբելոնէն, որ փառօք և պատուով[8] ելին և սքանչելեօք[9] և նախախնամուԹեամբ: Այլ նոցա այն իբրև երեք[10] պոռնկի միոջ էր համարեալ յաչս Աստուծոյ[11]: Մի՝ զի յորժամ ելին և ազատեցան, ո՛չ Թէ օրհնուԹիւն մատուցանէին Աստուծոյ, այլ զպոռնկական երգն երգէին ի ճանապարհին:

---

1 A մարդ մի էիր *փխ* մարդմ ես
2 A խրատօղ
3 B *չիք* զի հպարտ էր և ամբարտաւան
4 A ընկղմեաց *փխ* կորոյս
5 A եւ *փխ* այլ
6 B իւրեանց
7 B յաշխարհէս *փխ* յԵգիպտոսէն
8 B պատուօք
9 B սքանչելի
10 B իրեք
11 A յԱստուծոյ

*Դարձեալ. զնոյն պոռնկութիւնն գործէին, զոր յաշխարհն իւրեանց գործէին, և ի գերութեանն[1]՝ զնոյն, և ի[2] ճանապարհին՝ ի դարձին գործէին: Վասն որոյ «երգ պոռնկաց» (հմմտ. ԻԳ 15) կոչէ, զի իբրև[3] երգ պոռնկի միոջ էր համարեալ առաջի Աստուծոյ դարձ նոցա: Զի նոքա, որ աշխարհի մարդիկք[4] են, զպոռնկական երգն երգեն և ասեն, իսկ նոքա, որ առաքինի մարդիկք[5] են և մեծամեծ մարդիկք[6] և քահանայք և կրօնաւորք՝ այնպիսեաց երգն անպիտան և անօգուտ և ո՛չինչ է համարեալ յաչս նոցա, այլ իբրև երգ պոռնկի է համարեալ յաչս նոցա[7]: Նոյնպէս և դարձ նոցա իբրև երգ պոռնկիք ո՛չ էր համարեալ յաչս Աստուծոյ, սակայն ազատեաց զնոսա, զի[8] իւր արարած էին[9] և ստեղծուած: Հասաք ի կարգն[10]:*

**Ահաւասիկ Տէր ապականեսցէ՛ զտիեզերս** *(ԻԴ 1) և այլն:*

*Նախ՝ զաւերելն[11] քաղաքացն ասաց, և ապա՝ զհանդերձեալոյն ճառէ մարգարէս: Զի յեղելոցն, որ տեսին աչօք, ապագայիցն հաւատան, որ ի կատարածի է լինելոց: Թէ որպէս նա կատարեցաւ, նոյնպէս և սա[12] կատարելոց է ի կատարածի. ապականելոց է երկիր: Որպէս Պօղոս, յորժամ վասն տանջանաց ճառէր, զանապատի բանն ի մէջ բեր զնոցայն, որ յօձիցն սատակեցան, զի յեղելոց իրացն հաւատարմ ցուցանէր զիւր վարդապետութիւնն, որ հաւատային: Որպէս ի սկզբանն ի ստեղծմանն զերկինք և զերկիր[13] և այլ կենդանիք ստեղծեալ էր,*

---

1 B գերութիւն
2 B *չիք* ի
3 B որպէս *փխ* իբրև
4 A մարդիքն
5 A մարդիքն
6 A մարդիքն
7 B *չիք* համարեալ յաչս նոցա
8 B *չիք* ազատեաց զնոսա զի
9 A արարածին *փխ* արարած էին
10 AC կարքն
11 AB զաւերիլն
12 A այս *փխ* սա
13 A երկինքն և երկիր

*և զմարդն*[1] *դեռ չէր ստեղծեալ*[2]*, որ վայելէր զնոսա, ասէ Մովսէս.* «**Մարդ էՙր, որ գործէր զերկիր**» *(Ծննդ. Բ 5), այլ դատարկ էր ի մարդոյ*[3]*: Նոյնպէս և ի կատարածի է լինելոց, զի երկիրս դատարկ մնայ*[4]*, զի արդարքն յերկինք ելանեն յայն աշխարհն, և մեղաւորքն ի դժոխք իջանեն*[5]*, և անասունքն և այլ կենդանիքն հրով ճարակին: Մնայ երկիրս դատարկ որպէս յառաջ էր ի*[6] *սկզբանն: Երկիրս մարդոյ համար էր, յորժամ*[7] *երկիրս ապականի, որ մարդն ապականի, զի մարդն և երկիրս ապականին*[8]*, և այլ ոՙչ է պիտանացու ումէք: Եւ ի նորոգիլն մարդոյս՝ և երկիրս նորոգումն լինի, որպէս ի ջրհեղեղին մարդն ապականեցաւ և երկիրս*[9] *ընդ նմա, նոյնպէս՝ Սոդոմ և Գոմոր: Յայնժամ մարդն ապականեցաւ և պատժեցաւ, երկիրն այլ ընդ մարդոյն զպատիժն կրեաց և ապականեցաւ: Նոյնպէս և երկիրն Պաղեստինացոց վասն իսրայէլացոցն էր պատուական, և յորժամ նոցա պատիժն ևհաս*[10] *և գերի գնացին, երկիրն ընդ նոսա յեղծումն և յապականութիւն դարձաւ:*

**Եւ եղիցի ժողովուրդն իբրև զքահանայն, և ծառայն իբրև զտէրն, և աղախինն իբրև զտիկինն** *(Ի Դ 2):*

*Այս ի գերութեանն*[11] *եղև, զի այլ պատուաւոր և անպատիւ ոՙչ գոյր: Զի ամենեքեան առ հասարակ գերի վարեցան ի գերողացն և ոՙչ ասէին, թէ այս քահանայ է և*[12] *մեծ հարկիք առնեմք*[13]*: Զի քահանայն ինչ կոծէր նոցա և այլն, զի զամե-*

---

1 A մարդն
2 B ստեղծեր
3 A մարդու
4 AB տի մնայ
5 A իջանելոց են
6 B *չինք* ի
7 A յորժամ մարդս
8 A այլ ապականի ընդ մարդոյն *փխ* որ մարդն ապականի... ապականին
9 A երկիր
10 A նոքա պատժեցան *փխ* նոցա պատիժն եհաս
11 B գերութենէն
12 A կամ *փխ* և
13 A առնեմք *փխ* առնեմք

*նեսեան[1] միապէս չարչարէին և յանարգանս կայլին: Նմանապէս և ի հանդերձեալն է լինելոց՞այս, զի պատուաւորն և անպատիւն զուգակշիռ և հաւասար լինի ի[2] դատաստանին: Զի մեծ և փոքր աստ լինի յաշխարհի ի մէջ մարդկան, զի մէկն մեծ լինի[3] և մէկն՝ փոքր, մէկն՝ պատուաւոր և մէկն՝ անպատիւ, մէկն՝ իշխան և մէկն՝ ընդ իշխանութեամբ, մէկն՝ տէր և մէկն՝ ծառայ, մէկն՝ թագաւոր և մէկն՝ աղքատ: Իսկ անդ ո՛չ են այսպէս[4], այլ՝ միապէս: Այլ մեծ այնոքիկ[5] են անդ, որ[6] զառաքինութիւնն գործեցին յաշխարհի[7] և զինքեանս առաքինութեամբ զարդարեցին. նոքա կոչին մեծ: Զի որպէս որ վաճառեաց, այլ ո՛չ է տէր նորա, նոյնպէս որ գնեաց՝ ո՛չ վայելէ: Այս ի գերութեան ժամանակն եղև, նոյնպէս և ի կատարածի լինի, որ վաճառեաց՝ ո՛չ է տէր վաճառելոյն, զի այլ ո՛չ է իւրն, նոյնպէս որ գնեաց՝ ո՛չ վայելէ, զի կատարածի աշխարհի է, և կորնչին:*

**Զի բերան Տեառն խօսեցաւ զայս** *(Իդ 3):*

*Զի բերան Աստուծոյ՝ է մարգարէութեան բերանն, զի մարգարէից բերանն բերան Աստուծոյ է: Զի[8] յորժամ մարգարէութեան[9] բերանն խօսէին և ասէին, բերան Աստուծոյ կոչէին բերանք նոցա, իսկ յորժամ մարգարէութեան բան ո՛չ ասէին, այլև այլ բան խօսէին, բերան Աստուծոյ ո՛չ էին, այլ բան մարդոյ: Նոյնպէս և քահանայք յորժամ զԱստուծոյ բանն խօսէին, բերան նոցա բերան[10] Աստուծոյ կոչի, ապա թէ զԱստուծոյ բանն ո՛չ խօսին, այլ զաշխարհի բանն խօսին, բերան նոցա բերան Աստուծոյ ո՛չ կոչի, այլ՝ բերան մարդոյ: Նոյնպէս և ամենայն մարդ*

---

1 A *չիք* զի զամենեսեան
2 B *չիք* ի
3 A է *փխ* լինի
4 A այսոքիկ *փխ* այսպէս
5 B նոքա *փխ* այնոքիկ
6 B որք
7 B յաշխարհի զառաքինութիւն գործեցին *փխ* զառաքինութիւնն գործեցին յաշխարհի
8 A *չիք* զի
9 A զմարգարէութեան
10 B բանն *փխ* բերան

*յորժամ զԱստուծոյ բանն խօսի, բերան նորա բերան Աստուծոյ է, իսկ յորժամ թողու և զաշխարհի բան խօսի՝ բերան Աստուծոյ ո՛չ է, այլ՝ բերան մարդոյ է*[1]*: Եւ յորժամ զմեղքն և*[2] *զչար բանն խօսի*[3]*, բերան սատանայի է: Զի երկրաւորօքս զերկնաւորն իմանալ պարտ է, այս թագաւորութեամբս՝ զայն կենաց թագաւորութիւնն, այս ուրախութեամբս՝ զանտի*[4] *կենաց ուրախութիւնն, այս չարչարանօքս*[5]*՝ զանտի չարչարանքն, այս հանգստեամբս*[6]*՝ զանտի կենաց հանգիստն, այս զգալի օճիւս՝ զիմանալի օճն, այս վիշապովս*[7]*՝ զանքուն որդն*[8]*: Եւ զայս մասնաւոր և զայն առաւելապէս իմանալ, զի այս օրինակն է միայն և այլն: Զի առանց զգալի*[9] *նիւթականացս, զիմանալին և զամենևին աննիւթն ո՛չ կարէ մարդն ի միտ առնել: Այլ զգալիս օրինակ առնումք իմանալեացն, և այսով ապա կարեմք հպիլ*[10] *յայն և իմանալ, զի թէ ինքն Աստուած արարածովքս իմացեալ լինի, քան առաւել փառք մարդոյս և տանջանքն:*

«Որդի անդրանիկ» (Ելք. Դ 22), կոչէ զԻսրայէլ, և անդրանիկն զկր[տ]սերն ցուցանէ և կր[տ]սերն՝ զանդրանիկն: Զի առ ինչ ունակ են սոքա, զի մինն զմիւսն[11] ցուցանէ: Ապա թէ իսրայէլացիքն «անդրանիկ որդի[12]» կոչէին Աստուծոյ կր[տ]սեր որդին իւր, զի այլ աստուածապաշտ ո՛չ գոյր յայնմ ժամանակի, որ կր[տ]սեր որդի կոչէր Աստուծոյ: Կր[տ]սեր որդի զհեթանոսաց ազգն է իմանալ, որ յետոյ հաւատացին յԱստուած: Զի թէպէտ յետոյ եղեն հաւատացեալք[13] և «որդի[14]» կոչեցան, սակայն չե-

---

1 B *չիք է*
2 B *չիք* զմեղքն և
3 B և զմեղքն խօսի
4 B անտի
5 B չարչարանօքն
6 B հանգստեամբն
7 A վիշապաւս
8 B որթն
9 A զագալի
10 B խ(հ)պել
11 A ի միւսն
12 A որդիք
13 B հաւատացին յԱստուած *փխ* եղեն հաւատացեալք
14 A որդիք

*ղեալն իբրև զեղեալ է համարեալ Աստուծոյ: Զի որպէս ցաւն, որ ի մի մասն անդամոյն[1] լինի, ի բոլոր անդամն զգայ[2] և կիմանայ, նոյնպէս սքանչելիքն, որ եղև յԵրուսաղէմ, որ Ռափսակայ զօրքն կոտորեաց[3], ի բոլոր աշխարհս համբաւն տարածեցաւ: Եւ կայր յառաջայգոյն ի խորհուրդն Աստուծոյ, որ պիտէր զԵրուսաղէմ պահէր և զՌափսակայ զօրքն կորուսանէր, և յառաջագոյն մարգարէին Եսայեայ յայտնեաց զայս: Վասն այն ասէ.* «**Խորհուրդն իմ ինձ և իմոցն յայտնի է**» *(համմտ. ԻԴ 16):*

**Եւ եղիցի ժողովուրդն իբրև զքահանայ[ն], ծառայն իբրև զտէրն[4], և աղախինն իբրև զտիկինն[5]** *(ԻԴ 2):*

*Զի յաշխարհիս ի[6] մարդկանց մէջն պատուաւոր կայ և անպատիւ: Զի այն, որ քահանայ է, պատուաւոր է քան զաշխարհական ժողովուրդն, և տէրն պատուաւոր է քան զծառայն, և տիկինն՝ քան զաղախինն, և թագաւորն՝ քան զզօրքն[7]: Իսկ ի գերութեան ժամանակն, որ գերի գնացին, պատուաւոր և անպատիւ ո՛չ գոյր: Զի առ հասարակ գերի վարեցին զամենեսեան թշնամիքն և տարան անարգանօք[8], զի քահանայն և ժողովուրդն[9] և այլն միապէս էր նոցա: Այս՝ մարմնաւորն: Նոյնպէս պատուաւորն և անպատիւն հանգէտ և զոյգ և հաւասար լինի ի դատաստանին: Զի որպէս յաշխարհս մեծ և փոքր կայ ի մէջ մարդկան, զի այն որ թագաւոր է՝ մեծ է, և որ[10] ռամիկ ժողովուրդն է՝ փոքր է, տէրն մեծ է և ծառայն՝ փոքր, տիկինն՝ մեծ և*

---

1 B անդամոցոց
2 AB ագայ
3 A կոտորեցաւն
4 B զտէր
5 B աղախին իբրև զտիկին
6 A *չիք* ի
7 B զթագաւոր *փխ* զզօրքն
8 A անարգանօք
9 B քահանայք և ժողովուրդ
10 A *չիք* և որ

*աղախինն՝ փոքր*[1], *և այլն: Իսկ ի դատաստանին մեծ և փոքր չկայ, այլ հաւասար և միապէս լինին, ո՛չ բարձր և ո՛չ նուազ: Այլ, որ զոգիսն յերուրեցին*[2] *առաքինութիւնն*[3] *նոքա են մեծ, որ յաշխարհի զառաքինութիւնն գործեցին, աշխարհի և զիւրեանց հոգին առաքինութեամբ*[4] *զարդարեցին: Եւ որպէս ի սկզբանն, որ զերկինք և զերկիր ստեղծեաց Աստուած, և զգազան և զանասուն և զայլ կենդանիք, և զմարդն դեռ չէր ստեղծեալ, որ վայելէր զնոսա, որպէս որ ասաց Աստուած.* «Մարդ չէ՛ր, որ գործէր զերկիր» *(Ծննդ. Բ 5), և յուրբաթին ապա զմարդն ստեղծեաց: Որպէս յայն միջոցն, որ զմարդն*[5] *դեռ չէր ստեղծեալ, աշխարհս*[6] *ի մարդոյ դատարկ էր, նոյնպէս և ի կատարածի է լինելոց, զի երկիրս դատարկ տի մնայ, զի մարդիկք*[7] *յայս աշխարհէս յայն աշխարհն փոխին*[8] *և գնան: Զի արդարքն ի վեր յերկինքն ելանեն, և մեղաւորքն ի*[9] *դժոխքն տի իջանեն, և անասունքն հրով տի ճարակին, և երկիրս դատարկ մնայ: Զի աշխարհս մարդոյ համար եղև. եղծանիլ մարդոյն՝ աշխարհս այլ եղծանի և ապականի, և ի նորոգիլն մարդոյն՝ նորոգի: Եւ Երուսաղէմայ*[10] *երկիրն վասն իսրայէլացոցն գովելի էր, և յորժամ նոքա եղծան և գնացին ի գերուԹիւն, եղծաւ և ապականեցաւ Երուսաղէմ*[11]*:*

**Եւ գնօղն իբրև զվաճառօղն, և վոխառուն իբրև զվոխառուն**[12] *(Ի Դ 2):*

---

1 B *չիք* տէրն մեծ է և ծառայն փոքր, տիկինն մեծ և աղախինն փոքր
2 B *չիք* զոգիսն յերուրեցին
3 B զառաքինութիւն գործեցին
4 B զի զարդարութեամբ զիւրեանց հոգիսն *չիք* որ յաշխարհի զառաքինութիւնն ... առաքինութեամբ
5 A մարդն
6 B *չիք* աշխարհս
7 A մարդիկ, B մարդիք
8 AB տի փոխին
9 B *չիք* ի
10 A յԵրուսաղէմայ
11 A *չիք* Երուսաղէմ
12 A փոխառնուն

*Այս*[1] *այլ ի գերութեանն եղև: Զի որպէս այն, որ վաճառէ, այլ վաճառելոյն ո՛չ է տէր և ո՛չ ունի իշխանութիւն, զի յիւր*[2] *ափուցն ելաւ: Նոյնպէս այն, որ գնեց, ո՛չ վայելէ, զի գերի գնաց*[3]*: «Ոճ արտոյ խոզայն է՝ որ մանկաղն, և մնայ խոզանն ի տեղն, որ է մնացեալն ի գերութենէն*[4]*» (հմմտ. ԺԷ 6):*

**Ցօտար լեզուս խօսեացին ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ** *(ԻԸ 11):*

*Գ (3) կերպիւ է, ասէ մարգարէն, թէ՝ «Ես դոցա լեզուովն խրատեմ և քարոզեմ ի չարեաց դառնալ, ապա թէ ո՛չ՝ մատնէ Աստուած ի գերութիւն: Եւ գան օտարք զձեր երկիրն և զինչքն վայելեն, և դուք ո՛չ լսէք, յօտար լեզուս լսէք, որ ձեզ ասեն թշնամիքն, թէ այս երկիրս*[5] *և ըռզակս մեզ համար պահել, որ մեք*[6] *գամք և ուտեմք և հանգչիմք և վայելեմք»: Երկրորդ՝ «յօտար լեզու» խօսելն այն է, որ յորժամ գերի գնացին, գերիչքն այլ եբրայեցոց լեզուովն չ[է]ին խօսեր*[7] *ընդ նոսա, այլ իւրեանց լեզուովն խօսէին ընդ գերելոցն և բարկութեամբ, զի գերիք էին նոցա, և նոքա այլ ընդ գերչացն՝ նոցա լեզուովն խօսէին: Դարձեալ. կատարեցաւ մարգարէիս բանն, յորժամ առաքեալքն յօտար լեզուս խօսէին յետ իջման Հոգւոյն Սրբոյ, զՀԲ*[8] *(72) լեզուն խօսէին: Ջաղցրութեամբ առ հրէայքն խօսէին առաքեալքն, և ո՛չ լսեցին որդիքն: Եւ մարգարէքն սպառնալեօք ընդ հարսն խօսէին, և ո՛չ լսեցին՝ ո՛չ հայրն մարգարէից և ո՛չ որդիքն առաքելոցն:*

*Զի յորժամ ասեն, թէ՝ «Աստուածն մարդ եղև ի կուսէն ծնանելով», այս դժուարին էր և անհաս մտացն և անհաւատալի: Զի*

---

1 B այն
2 B որ իւր *փխ* զի յիւր
3 A գնայ
4 B գերութիւն
5 A էրկերս
6 B *չիք* մեք
7 A խօսիր
8 B ՀԲ

*մարդիք ո՛չ կարէին հաւատալ այս բանիս, վասն այս պատճառիս*[1] *Աստուած յառաջագոյն ծանոյց ի ձեռն մարգարէիցն զմարդեղութիւն բանին Աստուծոյ, որ ծանօթութիւն գային մարդիք: Եւ յորժամ գայր ժամանակ մարդեղութեան և Որդին Աստուծոյ մարդ լինէր*[2]*՝ ծնանելով ի կուսէն, և շրջագայէր ի վերայ երկրի, և տեսանէին մարդիք՝ հաւատային ի նա: Ապա թէ յառաջագոյն ո՛չ էին գուշակեալ՝ ո՛չ հաւատային մարդիք, զի ո՛չ գոյր ճար և հնար հաւատալոյ մարդկան: Եւ օրինակ տամ այս, որ հաւատաք*[3]*, թէ*[4] *այս այսպէս էր: Զի օրինակ քեզ վտքր տղայն, որ դեռ զգիրն չի լինի*[5] *ուսեալ և կատարեալ, և սաղմոս գրեն թէ ուս[ա]նի՝ ճար և հնար ո՛չ է, զի ո՛չ կարէ առանց կարդալոյ և զգիրն ուսանելոյ՝ ուսանել*[6] *սաղմոս և ասել: Այլ նախ՝ տղային զգիրն գրեն և ուսուցանեն, թէ ասա՛ այբ, բեն, գիմ*[7]*, դայ, եչ և այլն ի*[8] *հետ կարդին, մինչև ի քէն: Եւ յորժամ գայս ուսանի, գրեն այբ՝ այբ, բեն՝ բեն, գիմ՝ գիմ, դայ՝ դայ, եչ՝ եչ, և զայլն: Եւ յորժամ զի զգիրն ուսանի և ճանաչի*[9]*, գրեն զհեգն*[10]*. «Երանեալ է*[11]*»: Եւ յորժամ գայս ուսանի, ապա*[12] *գրեն զսաղմոսն. «Երանեալ է այր, որ ո՛չ գնաց ի խորհուրդս*[13] *ամբարշտաց*[14]*» (Սաղմ. Ա 1): Նմանապէս զմարդեղութիւն բանին Աստուծոյ յառաջագոյն մարգարէքն Հոգովն Սրբով ասացին և գրեցին: Ռ (1000) և ԲՌ (2000) տարով յառաջ մէկ մարգարէն զծնունդն մարգարէացաւ և ասաց նա, մէկն զխաչելութիւնն մարգարէացաւ և ասաց նա, ոմն զթաղումն մարգարէացաւ և ասաց, ոմն զյարութիւնն, ոմն*

---

1 B բանիս *փխ* պատճառիս
2 B եղև *փխ* լինէր
3 A հաւատայք
4 A որ *փխ* թէ
5 B գիր չգիտի *փխ* դեռ զգիրն չի լինի
6 B ուսանիլ
7 AB գեմ
8 A *չիք* ի
9 A ճանաչէ
10 B գիէգն
11 A *չիք* է
12 B *չիք* ապա
13 A խորհուրդ
14 A *չիք* ամբարշտաց

*զհամբարձումն և մինչև ի միւս անգամ գալուստն: Եւ այսպէս ի սկզբանէ աշխարհի մարդեղութիւնն դուշակ եղև: Նախ՝ երևեցաւ յԱդամ գալուստն բանին Աստուծոյ: Զի յորժամ յանցեաւ զպատուիրանաւն Աստուծոյ և ել ի դրախտէն, Ադամ և Եւայ էր (7) օր՝ շաբաթ մի բոլոր ո՛չ կերան և ո՛չ արբին, այլ անաւաղ և անօթի կացին ասելով, թէ՝ «Յորժամ յանցաք[1] զպատուիրանն Աստուծոյ, և զրկեցաք ի նորա քաղցր տեսութենէն[2] և ի դրախտին վայելչութենէն, այլ մեզ ապրել[3] չի պիտիր, այնպէս կենանք[4] և լանք մինչև[5] որ մեռանիմք»: Յայնժամ բարերարն և մարդասէրն Աստուած ողորմեցաւ նոցա՝ ո՛չ կամելով զմեռանիլն նոցա: Առաքեաց[6] առ նոսա հրեշտակ մի ասելով. «Մի կենաք[7] անօթի և սովամահ լինիք և մեռանիք[8], այլ կերէ՛ք հաց և ջուր արբէք, և ես յետոյ ժամանակի մարդ լինիմ ի ձեր որդոցն[9], և զձեզ ազատեմ ի ձեռացն սատանայի և դարձուցանեմ ի ձեր տեղիքն»: Եւ այս եղև և կատարեցաւ իսկ: Վասն այն Դաւիթ մարգարէն ի դիմաց Ադամ խօսի առ Աստուած և ասէ. «Յիշեայ զբան ծառայի քո, յոր և յուսացուցե՛ր[10] զիս» (Սաղմ. ճԺԸ 49): Զի Ադամ յորժամ գնաց ի դժոխքն, իբրև զծանր հիւանդ վերացուցանէ զմիտքն առ Աստուած և ասէր կատարել զխոստումն իւր:*

*Դարձեալ. մարդ լինելն Աստուծոյ երևեցաւ յԵնովք: Զի Ենովք տեսանէր զԱդամ հանապազ ի լաց և ի տրտմութիւն և ևհարց: Փոխիլն Ենովքայ յերկինքն և ի դրախտն զդարձ[11] բնութեանն նշանակէր, որ գալստեամբ բանին դառնացեալ էին մար-*

---

1 A յանցանք
2 A տեսուն
3 A ապրիլ
4 A կենաք
5 B մինչ
6 A *չիք* առաքեաց
7 A կենայք
8 B *չիք* և մեռանիք
9 A յորդոցն
10 A ուսացուցեր
11 B հանդերձ *փխ* զդարձ

*դիք ի դժոխս*[1]*: Քրիստոս*[2] *ի մահուան ժամն զհոգին ի ձեռն Հօր աւանդեաց ասելով. «Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» (Ղուկ. ԻԳ 46), և նոքօք՝ զամենայն հաւատացելոցն*[3]*: Զի յառաջ քան զՔրիստոսի գալուստն ի ձեռն սատանայի տային մարդիք զհոգին: Զի ասեն, թէ ի մահուան ժամանակն սատանայ սևադէմ կերպարանօք կանգնէր*[4] *առաջի մարդոյն, և մարդն հարցանէր. «Դու ո՞վ ես»: Ասէր. «Ես եմ սատանայ»: Ասէ*[5]*. «Յի՞նչ ես եկեալ»: «Եկեր եմ, որ յորժամ հոգիդ*[6] *ելանէ՝ տանիմ ի դժոխքն»: Եւ այնպէս հրեղէն*[7] *կապանօք կապէր և չարչարէր: Եւ յորժամ ելանէր հոգին ի մարդոյն, առնէր և տանէր ի դժոխքն և չարչարէր: Իսկ զՔրիստոսի հոգին ո՛չ կարացին տանել, զի ի ձեռն Հօր աւանդեաց զհոգին, և իւր կամաւն գնաց ի դժոխքն և քարոզեաց: Եւ լսեց Ադամ զձայն Քրիստոսի և ճանաչեաց, և եկեալ յառաջ՝ անկաւ յոտն Քրիստոսի և համբուրեաց, նոյնպէս՝ և՛ մարգարէքն և՛ արդարքն: Եւ ձայնեաց Քրիստոս և ասաց. «Որք ի խաւարի էք՝ ելէ՛ք, և որք ի կապանս էք՝ արձակեցարո՛ւք» (համմտ. Յովհ. ե 28-29): Եւ ի ձայնէն Քրիստոսի լուծան կապանք յոտից*[8] *և ի*[9] *ձեռացն նոցա: Եւ այնպէս արձակեաց զնոսա և զսատանայ կապեաց, և զհոգիքն առ հասարակ եհան զամենեսեան*[10]*՝ զարդարս և զմեղաւորս*[11]*, և պահեաց յօդ*[12] *մինչև յետ ի (40) աւուր, որ համաբարձաւ յերկինքն: Նոքա, որ բուն մեղաւորք էին*[13]*, ի վայր եթող յօդոյ*[14] *ներքին ծայրն, և նոքա,*

---

1 A դժոխտն
2 A այն Քրիստոս
3 B հաւատացեալքն
4 A և կանգնէր
5 A *չիք* ասէ
6 A հոգիտ
7 A և հրեղէն
8 A յետիցն
9 B *չիք* ի
10 B *չիք* զամենեսեսեան
11 A զարդարք և զմեղաւորք
12 A յօդտ
13 A են
14 A ի յօդու

որ միջակ էին, որ մեղք այլ ունէին և արդարութիւն այլ՝ զնոքա[1] ի վեր եհան, ի վեր և աստղալից երկնից յութ պարունակութիւնն: Եւ նոքա, որ բուն արդարքն էին, ընդ ինքեան տարաւ ի վեր յերկինքն մօտ յինքն, և են[2] շուրջ զաթոռովն Աստուծոյ ընդ սերովբէան և ընդ քերովբէան, և օրհնեն զԱստուած: Իսկ յետ այնորիկ ի Քրիստոսէ ի հետ, զինչ մարդ որ մեռանի, այս կերպիւս է: Նոքա, որ բուն մեղաւորքն են, նոցա հոգին[3] մնա յօդոյ[4] ներքին ծայրն ի մեղաւորաց դասն, ի մէջ մեղաւորաց և դիւաց[5]: Եւ նոքա, որ միջակ են, գնան ընդ միջակ հոգիքն յութ պարունակութեան: Եւ բուն արդարքն գնան ի վեր շուրջ զաթոռովն Աստուծոյ՝ ընդ այլ արդարոցն:

Դարձեալ. ի Նոյ երևեցաւ մարդեղութիւնն Քրիստոսի, զի Նոյ գինի էարբ[6] թասմ երկուս և արբեցաւ, և գնաց ի տունն պառկեցաւ և բացուեցաւ մարմինն: Եւ գնաց թոռն[7], և առեալ փայտ և խաղայր, և Քամ[8] ետես և ծիծաղեցաւ: Եւ այլ երկու եղբայրքն[9] բարկացան և սաստեցին նմա, և առին հանդերձ և բունեցին և գնացին[10] և ձգեցին ի վերայ Հօրն իւրեանց և ծածկեցին զմերկութիւնն (տե՛ս Ծննդ. թ 20-23): Նոյ օրինակ էր Քրիստոսի, որ սիրով մարդկան արբեցաւ և ննջեաց ի վերայ խաչին, և ազգն Հրէից մերկացուցին և ծաղր առնէին: Եւ երկու լուսաւորքն՝ արեգակն և լուսինն, նման երկու որդոցն ծածկեցին զմերկութիւնն Քրիստոսի:

---

1 B ցնոքա
2 B *չիք* և են
3 B ցնոքա *փխ* ցոցա հոգին
4 A ի յօդու
5 A դիւացն *փխ* մեղաւորաց և դիւաց
6 A արբ
7 A թուռն
8 A Քաւ
9 A եղբայրն
10 A *(176բ)* և B *(274ա)* ձեռագրերում բառից հետո գրված է՝ n° եց, *որը չի հաս-կացվում*

*Դարձեալ. Աբրահամու յայտնեցաւ, զի Աբրահամ էառ*[1] *երկու ծառայ և համեռեաց զէշն, և առ զԻսահակ*[2]*, որ մատուցանէր Աստուծոյ, և երեք օր ի*[3] *շուրջ երեկ, և ապա Աստուած յայտնեցաւ զտեղին:*

*Դարձեալ. առ Յակոբ նահապետն*[4] *երևեցաւ տեսիլն, որ ետես զսանդուխն, այլ և՝ յօր մահուանն օրհնելն զորդիքն: Դարձեալ. մարգարէքն*[5] *այլ յայտնի և պարզ ցուցին: Զի Մովսէս ասաց.* «Մարգարէ՛ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ի միջի ձերում, նմա՛ լուիջիք» *(Գործ. Է 37), և այլ բազում: Եւ նաւյի մարգարէն ասաց.* «Ահա կո՛յս[ն] յղասցի և ծնցի որդի» *(Է 14), և Դաւիթ ասէ.* «Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման» *(Սաղմ. ՀԱ 6), և այլ բազում: Նոյնպէս և այլ մարգարէքն՝ մինչ ի վերջին մարգարէն, որ էր Յովաննէս Մկրտիչն, որ մատամբն եցոյց, զի զմատն*[6] *եդ ի վերայ Քրիստոսի և ասաց.* «Ահաւասիկ[7] Գա՛ռն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի[8]» *(Յովհ. Ա 29): Եւ յորժամ եկն Քրիստոս, դիւրաւ հաւատացին: Յորժամ այս ամենայն նշանս եղև և կատարեցաւ Դ (4) կողմ աշխարհիս, հաւատացին ի Քրիստոս: Իսկ այլ ազգիքն*[9] *ո՛չ հաւատացին, զի ասեն.* «Ջինչ[10] *բան ցերեկ էր Քրիստոս որ գայր*[11]*, ի կնոջէ ծնաներ և մարդ լիներ»: Եւ նոքա յազգ հաշիւ ո՛չ են, զի ասէ

---

1 B առ
2 A զՍահակ
3 B չիք ի
4 AB նախապետ
5 B մարգարէիցն
6 B մատն
7 B ահա
8 AB յաշխարհի
9 A ազգինքն միայն
10 A ինչ
11 A չիք գայր

*Եսայի. «Իբրև զկաթիլ մի ի դուլէ են և [զ]մէտ մի ի կշռոյ[1], և[2] ո՛չինչ են և ո՛չինչ[3] համարեցան[4]» (հմմտ. Ա 15):*

*Մադիանացիքն ճԻՌ (120 000) մարդ եկին ի վերայ Երուսաղէմայ, և երուսաղէմացիքն փախան ի[5] լերինքն: Եւ գաղտուկ դային, և հասկ շինէին յարտօրէից և տանէին ուտէին: Եւ Գեդէոն[6] այլ եկեալ էր, և քաղեալ ցորեան և ի կալն կասէր և տանէր ուտէր: Երևեցաւ նմա հրեշտակն և ասաց. «Տէր ընդ քեզ եղեցի, Գեդէո՛ն» (հմմտ. Դատ. Զ 12): Ասաց Գեդէոն. «Թէ Տէր ընդ իս էր, յայս հալս չէաք, Տէրն զմեզ թողեր է ի ձեռաց» (հմմտ. Դատ. Զ 13): Ասաց դարձեալ. «Տէր ընդ քեզ է, մի՛ երկնչիր, դու տի կոտորես զմադիանացիքն» (հմմտ. Դատ. Զ 16): Ասաց. «Տուր ինձ նշան, որ Հաւաստամ քեզ, որ տի կոտորեմ զմադիան[աց]իքն, և թէ նշան ո՛չ տաս՝ ո՛չ Հաւաստամ» (հմմտ. Դատ. Զ 17): Ասաց. «Տամ քեզ նշան, որ Հաւաստաս. դիր գզաթ, այսինքն՝ մուրթ, ի կալն քո և այն քեզ նշան՝ որ անձրևն գայ և գզաթն թանայ և զկալն ո՛չ» (հմմտ. Դատ. Զ 38), և եդիր և եղև այնպէս: Գզաթն լցուաւ անձրևով և կալն ո՛չ: Եւ բերին աման և փարչեր և քամեցին զգզաթն, և ամանքն լցուեցաւ ջրով: Ասաց Գեդէոն[7]. «Նշան մի այլ արա՛» (հմմտ. Դատ. Զ 39): Ասաց հրեշտակն. «Դի՛ր զգզաթն, գայ անձրև և զկալն թանա՛, և զգզաթն ցամաք մնայ» (հմմտ. Դատ. Զ 39): Եւ արար և եղև այնպէս: Եւ ասաց. «Հաւատացի, որ Տէրն ընդ մեզ, և կոտորեմք զայլազգիքն»: Ասաց հրեշտակն. «Ժողովէ զինչ որ քեզ մարդ կայ և գնայ պատերազմիր»: Եւ ժողովեաց ԺԲ (12) հազար մարդ, և կամէր այլ ժողովել: Եւ ասաց հրեշտակն. «Այդ չափդ բաւական է քեզ զօրք, որ պատերազմին, և դեռ շատ են, և առ գնայ» (հմմտ. Դատ. է 2):*

---

1 A *չիք* և զմէտ մի ի կշռոյ
2 B *չիք* և
3 A յոչինչ
4 B *կրկ* «եւ ոչ ինչ են և ոչ ինչ համարեցան: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս ամէն»: *Բնագիրն ավարտվում է:*
5 A և ի
6 A Գեդեոն
7 A Գեթէոն

*Եւ յորժամ գնացին, լեռ մի կայր, յայն լերին գլուխն ելան: Երևեցաւ հրեշտակն և ասաց Գեդէոնի[1]. «Այդ հեծելդ շատ է, զոր ժողովեցեր, յետ դարձայ» (հմմտ. Դատ. է 2): Ասաց Գեդէոն[2] հեծելին. «Եղբա՛յրք, մադիանացիքն շատ են և մեք քիչ եմք, թէ հանց որ վախէք, ով որ վախէ՝ թող յետ դառնայ, չեմ ի մեղադրեր, որ իւր կամովն գայ՝ ինքն գիտէ, թող գայ ի հետ» (հմմտ. Դատ. է 3): Յորժամ զայս ասաց, ոմանք վախեցան և յետ դարձան, և մնաց հազար և ԲՃ (200) մարդ ի յետն: Դարձեալ ասաց հրեշտակն. «Ի լեռնէս ի վայր որ իջանես՝ ջուր մի գայ, տուր զհեծելդ և նայեաց ի վերայ: Որն որ ի ձիուն ի վայր ձեռօքն լափէ[3] զջուրն իբրև զշուն՝ զայն ի հետդ[4] առ, և որ բերանք ի վայր անկանի և ըմպէ[5] զջուրն՝ յետ դարձայ» (հմմտ. Դատ. է 5): Եւ արար այնպէս: Եւ մնաց ԳՃ (300) մարդ, առ և գնաց: Եւ պատուիրեաց զօր[ա]ցն. «Զոր ինչ ես առնեմ, դո՛ւք այլ այնպէս արարէք» (հմմտ. Դատ. է 17): Եւ էառ ինքն սափոր մի նոր[6] և վառեաց ջահ և եդիր ի ներս, և ամենեքեան այնպէս արարին: Եւ յորժամ հեծելին մօտեցան և ամէնքն տապալաբակ ունէին, ասէր. «Ես զիմն կուժն կոտրեմ և ջահն վառեմ, և զտապալբազն հարում և կանչեմ. Սուր Տեառն և Գեդէոնի[7], դո՛ւք այլ այնպէս ասացէք» (հմմտ. Դատ. է 18). և արարին: Եւ մադիանացիքն յետ դիպան և փախեան: Եւ մէկ զմէկ ջարդեցին, զի գիշեր էր, և սոքա այլ ի հետ գնացին և փախստական արարին, և կոտորեցին զնոսա և դարձան[8]:*

---

1 A Գեթէոնի
2 A Գեթէոն
3 A լաքէ
4 A ի յհետդ
5 A ըմբէ
6 A նոր<ա>
7 A Գեթէոն
8 A *ձեռագիրը՝ թ. 179բ-180բ (լուսանցքում, հավն նաբսւր, դուրս գրման նշանով), կրկնում է 39բ-41ա թերթերի հետևյալ հատվածը.* «Եւ վասն մեղաց յօսէտ լինին ախտք հիւանդութեան որպէս դողդրջումն կայենի (Բ 8)... Է՞ ուրեք զի և պսակաց ևս բարուրք, այսինքն՝ պատճառ լինի հիւանդութիւնն որպէս Ղազարոս»: *Բնագիրն ավարտվում է:*

**Օրհնեցիւ զանո՛ւն քո** *(Իե 1)*:

*Զանուն քո օրհնեցից, այլ ո՛չ զէութիւն քննեցից: Զի զէութիւնն Աստուծոյ ո՛չ է պարտ քննել, թէ՛ որպէ՞ս է էութիւն գոյութեանն Աստուծոյ կամ թէ՛ որչա՞փ է զօրութիւնն Աստուծոյ, կամ որչա՞փ է իմաստութիւնն Աստուծոյ կամ ողորմութիւնն Աստուծոյ և այլն: Զայսոքիկ ո՛չ է պարտ ի քննութիւն անկանել, զի ո՛չ միայն թէ իմանալ ո՛չ կարէ, այլ վնասի և‹ս: Զի թէ ոք կամեննայ, որ հայի յարեգակն և զլոյս արեգականն բոլորովին աչքն առնու, որ այլ լոյս յաշխարհս չմնայ, ո՛չ կարէ: Ո՛չ թէ միայն ո՛չ կարէ, այլ և յաչաց լուսոյն[1] կու ելանէ: Կամ ոք զբերանն աղբեր ականն դնէ, թէ զոր ինչ յաղբերէն ջուր ելանէ յորովայնն առնու, որովայնն կու պատառի:*

**Ի մարդոց չարաց փրկեցեր զնոսա** *(Իե 4)*:

*Զի մարդ չար առաւել է քան զգազանաց և զսողնոց, քան զառիւծու և քան զարջու, և քան զընճան և քան զայլ գազանացն: Առաւել և խստագոյն է մարդկան չար, այլ քան զթունաւոր[2] զեռնոց, քան զօճի և քան զվիշապի և քան զկարճի. առաւել է մարդկան չար: Է՞ր վասն. մի՝ զի նոքա այնչափ ունին զչարութիւն, որչափ ի նոցա բնութիւնն եդեալ է, և այլ՝ զայն առաւելացուցանել կամին և ո՛չ պակասեցուցանել, այլ զոր ինչ բնութեամբ ունին՝ յայն կան և մնան: Իսկ մարդն կու առաւելու զչարութիւնն յորժամ կամեննայ, զի բանական է և իմաստութիւն ունի և հանճար, կու նայի ի վերայ բանին, որ մտախաբն կու լինի և կու առաւելու զչարն, թէ՛ նախանձ է, թէ՛ բարկութիւն և թէ՛ այլ ինչ: Երկրորդ՝ զի անասունքն և գազանք[ն] և սողունքն, երբեմն և ի ժամանակի առնեն զիւրեանց չարութիւնն, և երբեմն կու խաղային և դադարին: Իսկ մարդկան չար նախանձումն ո՛չ ունի, զի յամենայն ժամանակի առնէ զչարութիւնն՝ ի գիշերի և ի*

---

1 *բնագրում՝* լոյսոյն
2 *բնագրում՝* զթիւնաւոր

*տունջեան, յամառ և ի ձմեռ, և յամենայն ժամանակի: Երրորդ՝ զի զնոսա կարեն մարդիք զգօնացուցանել, որ չար ո՛չ առնէ, իսկ զմարդիք՝ ո՛չ: Զի զառիւծն կու տովորեցուցանեն և ո՛չ վնասէ զտէրն, զի միս կու տայ, և այլ չի վնասէր, նոյնպէս արջն, նոյնպէս և այլ կենդանիքն՝ շունն և այլն, նոյնպէս զօճն: Իսկ չար մարդոյն քանի լաւութիւն առնէ մարդ, յիւր չարութենէն ո՛չ դառնայ: Քան զդիւաց չարն առաւել է մարդոյս չարն, զի մարդն կու յառնէ ի վերայ մարդոյն, և կու ծեծէ և կու սպանանէ և թալանէ, և հեծել կառնէ և ի վերայ տեղացց գնայ, և զերի կու տանէ: Իսկ դևն մարմնապէս ո՛չ կարէ առնել, մարդ ծեծել կամ սպանանել և կամ թալանել, կամ հեծել առնել և ի վերայ տեղ[ե]ացց գնալ, ապա թէ ո՛չ՝ նորա չարութիւնն առաւել է, որ ծածուկ կու պատերազմի և զմեղքն տայ գործել այլոց:*

**Զօրացաւ մահ և եկուլ** *(Իե 8):*

*Մեր ծուլութիւնս արար զայս: Նախ՝ Ադամայ «զօրացաւ մահն և եկուլ» զմարդիք, յորժամ զպատուիրանն ո՛չ պահեաց և մեղանչեաց, զի ասաց Աստուած. «Յորում աւուր ուտիցես՝ մահո՛ւ մեռանիցիս» (հմմտ. Ծննդ. Բ 17): Սատանայ, յորժամ լուաւ ի կնոջէն զպատուիրանն, ասաց, թէ՝ «Ուտէ՛ք, Աստուած պիտի լինի՛ք» (հմմտ. Ծննդ. Գ 5): Իսկ նա եթող զԱստուծոյ հրամանն և սատանայի բան կատարեաց, և էառ զպտուղն և ճաշակեաց: Սատանայի ասածն ո՛չ կատարեցաւ, այլ Աստուծոյ հրամանքն կատարեցաւ, որ ասաց, թէ՝ «Յորում ժամու ուտիցես՝ մահո՛ւ մեռանիցիս» (հմմտ. Ծննդ. Բ 17): կերաւ և մեռաւ, թէպէտ ի նոյն ժամն ո՛չ մեռաւ, այլ յետոյ մեռաւ: Այս է, որ ասէ. «Զօրացաւ մահ և եկուլ» (Իե 8): Տե՛ս, որ մեղքն եղև մահու պատճառ, որ մեռաւ մարդն:*

*Դարձեալ. երկրորդ անգամ մեր ծուլութիւնն լինի պատճառ մեղացն, որ կու «զօրանայ մահն», յորժամ մեղանչեմք և զպատուիրանն Աստուծոյ ո՛չ պահեմք: Տե՛ս, որ մեղքն եղև մահու*

*պատճառ: Պօղոս առաքեալն ևս ցուցանէ զպատճառ մեղացն՝ ասելով. «Վասն միոյ մարդոյ մեղքն յաշխարհս մտին, և ի մեղաց անտի՝ մահ» (Հռոմ. Ե 12): Զի մեղքն է մահու արմատ և ճանապարհ և աղբիւր և պէն: Արմատ է, զի որպէս յարմատոյն ճուղն կու շառաւիղէ և յառաջ գայ, նոյնպէս ի մեղացն մահն կու ծնանի և յառաջ գայ: Եւ ճանապարհ, զի որպէս ճանապարհաւն կու գնան թէ՛ ի գեղ, թէ՛ ի քաղաք, նոյնպէս մեղքն ի մահն հասուցանէ: Աղբիւր, զի որպէս յաղբերէն ջուրն կու բղխէ և յառաջ գայ, նոյնպէս ի մեղացն՝ մահն, և պէն: Վասն այսորիկ և Տէրն իւր գալստեամբն նախ զմեղքն եբարձ և ապա զմահն եվուծ: Եւ այն, որ ասէ «եկուլ»՝ զառաւել, զի բազում ցանկութեամբ կամի կորուսանել սատանայ զմարդիք: Վասն այն ո՛չ ասաց մարգարէն, թէ՝ «եկեր մահ», այլ թէ՝ «եկուլ», զի որպէս քաղցած մարդ զկերակուրն ջանայ, որ ողջ կլանէ՝ յառաւել քաղցոյն և ի փափագանացն և ի կարօտուն: Իսկ այն, որ ո՛չ է քաղցած, մանր մանր կու ծամէ[1] առամամբքն, և ապա կու տայ ի կուլ, որ գնայ յորովայնն:*

**Եհատ Աստուած զամենայն արուօսր յամենայն երեսաց** *(Ի Ե 8):*

*Յորժամ աստրոց զօրքն եկին ի վերայ Երուսաղէմայ՝ Ռափսակ ՃՁԵՌ (185 000) հեծելովք, և հայհոյեաց Ռափսակ: Նոքա, որ յԵրուսաղէմ էին՝ Եսայի մարգարէն և Եզեկիայ[2] թագաւորն և այլ նմանք նոցա և ժողովուրդքն ամենեքեան, ի սուգ էին, ի լաց և ի արտմութիւն: Իսկ յանկանել Աստուածային բարձաւ նախատինքն, և ազատեցան յայնժամ ի նախատանաց և ի նեղութեանց և բարձաւ արուօսր յաչաց և յերեսաց նոցա:*

*Դարձեալ. ազգ հեթանոսաց նախատինք եղեն դիւաց և խաղալիք, և արժանաւոր ողբոց և յարտասուաց: Զի յետ յանցման*

---

1 *բնագրում՝* ծասկէ
2 *բնագրում՝* Եզեկիեայ

*պատուիրանին ձգեաց սատանայ զմարդ ի զանազան չարիք և ի պոռնկութիւն, և յեւոյ՝ ի կռապաշտութիւն: Եւ զչարն գործել տայր մարդոյն, և յեւոյ ուրախանայր և ցնծայր և վա՛շ վա՛շ կարդայր: Այս, ա՛յս տեսին աչք մեր. «Վա՛շ վա՛շ անձանց մերոց, զի ընկլուզաք գնա» (Սաղմ. ԼԴ 25), և յեւոյ մահուն տանէր ի դժոխքն և չարչարէր: Եւ այնքան բանացան մարդիք, մինչ զամենայն արարածս ի պաշտօն առին, ո՛չ միայն զպատուականն, թէպէտ ո՛չ էր Աստուած, այլ զանարդ և զչնչին իրն՝ զմուկն, և զաքիսն, և զմողէզն, զխլէզն[1], զսոխն, զսխտորն և զայլն, և ողբոց էին արժան և արտասուաց: Զայս «եհատ արտօսր» Քրիստոս յերեսաց հեթանոսաց: Եւ իրաւի ասէ «զամենայն», զի յոլով էին պատճառք արտացուաց, որ յարտասուս հարեալ լային: Իսկ Քրիստոս ո՛չ միայն զմահն ելուծ, այլ զպատճառս արտասուաց: Պատճառ ո՛չ գոյ յերկրի, և թէ լինի՝ ի մեր գործոցս է, և ո՛չ թէ յԱստուծոյ կողմանէն, զի յաստուածակոյս կողմանէն հալածեցան ի մէնջ ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: Որպէս Պօղոս ասէ. «Ուրա՛խ լերուք ի Տէր» (Փիլիպ. Գ 1): Իսկ թէ պատահի, որ տանջի վասն բարեպաշտութեան հաւատոյ, զայն ուրախութիւն համարել արժան է և ցնծութիւն, և ո՛չ թէ՝ նեղութիւն և տրտմութիւն կամ վիշտ: Որպէս առաքեալքն գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անու[ա]նն Քրիստոսի անարգեցան մահն, որ վասն անու[ա]նն Քրիստոսի պարծանս համարեալ էր նոցա, զոր արտասուաց արժանի համարէին այլք, այնոքիկ խնդութեան էին առիթք: Վասն այսորիկ ասաց. «Եբարձ զամենայն արտօսր յամենայն երեսաց» (Իե 8): Ռափսակն այն էր, որ ասացաւ: Իսկ առ մեզ ո՛չ միայն զմահն ելոյծ, այլ և զմեղսն եբարձ և բարեաց տուրս պարգևեաց, ո՛չ միայն զդժոխոց դուռն փակեաց, այլ և զարքա-

1 *բնագրում՝* զխէլէզն

*յուԹեան դուռն եբաց, ո՛չ միայն ի խորոց վերաբերեաց, այլ և յերկնային խորանս բարձրացոյց և այլն:*

*Յորժամ եկն Ռափսակ յԵրուսաղէմ, այսպիսի բանիւք հայհոյեաց և նախատեաց ասելով. «Թէ ասիցէք, Թէ ի Տէր Աստուած մեր յուսացեալ եմք, ո՞չ ապաքէն նա է վասն որոյ եզեկիայ քակեաց զբարձունս» (Հմմտ. ԼՋ 7, Դ. Թագ. ԺԸ 22): Վասն Բ (2) պատճառի ասաց զայս: Նախ՝ տկար երևեցուցանել զԱստուածն Եզեկիայ և անզօր: Թէ այնչափ տկար էր և անզօր, որ զիւր ներհակ և հակառակ աստուածն, որ զիւր զոհքն և զնուէրքն և զերկրպագուԹիւնն կու յափշտակէին, ինքն ո՛չ կարաց զնոսա խափանել և կորուսանել և բառնալ ի միջոյ, այլ Եզեկիայ կարօտացաւ, որ նա եբարձ: Երկրորդ՝ անշնորհակալ երևեցուցանել, Թէ փոխանակ որ զհակառակ աստուածսն եբարձ, և հրամայեաց յԵրուսաղէմ և ի տաճարն միայն ճշմարտին Աստուծոյ երկիրպագանել և զոհ մատուցանել, և նա երախտամոռաց եղև և ո՛չ կարաց օգնել նմա և փրկել ի Թշնամեացն: Եւ զայն, որ ասաց, Թէ՝ «Ի ջախջախ եգիպտացին յուսացեալ էք, և նա ո՛չ կարէ փրկել զձեզ» (ՀմմտԼՋ 6, Դ. Թագ. ԺԸ 21): Զայս Ա (1)-ն ճիշտ ասաց Ռափսակ, զի եգիպտացին ո՛չ կարէր փրկել զնոսա: «Տա՛ց ձեզ ԲՌ (2000) երիվարս, եԹէ կարէք հեծուցանել մարդ ի վերայ, ապա Թէ ԲՌ (2000) մարդ չունիք, զիա՞րդ կարէք ի դէմ կալ, ո՛չ Թէ արքային Սեննեքարիմայ, այլ միում յաշխարհակալ ծառայիցն նորա ո՛չ կարէք դէմ կալ» (ՀմմտԼՋ 8-9, Դ. Թագ. ԺԸ 23-24): Տե՛ս, որ զծառայն աշխարհակալ ասէ: Եւ Թէպէտ ասէր, Թէ՝ «Աստուածն քո ո՛չ կարէ փրկել զքեզ» (ՀմմտԼՋ 14, Դ. Թագ. ԺԸ 29), սակայն ի միտն երկնչէր յԱստուծոյ: Վասն այն ասէր, Թէ՝ «Քո Աստուծոյ հրամանաւն եկեալ եմք յերկիրս յայս, զի Աստուածն ձեր առաքեաց աւերել զերկիրս զայս» (ՀմմտԼՋ 10, Դ. Թագ. ԺԸ 25): Եւ Ռափսակ ուստի՞ գիտէր զհրէէրէն խօսել: Կա՛մ ի հրէից ազգէն էր, որ գերի տարած էր և մնացեալ ի մէջ նոցա, և ճարտար մարդ է եղեալ, վասն որոյ զօրավար կարգեալ

*էր գնա, և յառաջմէ գիտէր զլեզուն հրէից: Եւ կա՛մ թէ թարգման էր Սեննեքարիմայ, որ թէ՛ հրովարտակ գայր ի գրոց՝ ինքն կարդայր և թէ՛ յայլ տեղ տանէին՝ ինքն գրէր, զի զլեզուն գիտէր: «Զի Տէր խօսեցաւ» (Իե 8): Բերան մարգարէութեանն բերան Աստուծոյ էր, մեծամեծ բարիս ճառեաց և պատմեաց: Զաւէին մարդիք թէ ուստի՞ եղև այս, ասէ մարգարէս. «Զի Տէր խօսեցաւ»՝ աներկբայ կատարելոց է:*

**Որ խոնարհեցուցեր, իջուցեր զբնակիչս բարձանց** *(Իզ 5):*

*Նախ՝ ի դիմաց ասորոցն է այս, որ ամբարտաւան են: Ի ձեռն հրեշտակին խոնարհեցոյց և արկ յերկիր, զի հրամանն ի բարձանց ի վերուստ յԱստուծոյ առ հրեշտակն, և ել ի տաճարէն և սատակեաց զնոսա: Դարձեալ. առնու ի վերայ սատանայի, որ հպարտացաւ ընդդէմ Աստուծոյ, և Աստուած արկ զնոսա ի բարձանց յերկնից ի վայր յերկիր: Դարձեալ. կրկին անգամ յերկրի՝ և ասաց. «Եղի՛ց զաթոռս իմ յամպս, և եղէ՛ց նման Բարձրելոյն» (հմմտ. ԺԴ 13-14): Զայս վասն առաջնոյ հպարտութեանն ո՛չ ասէ մարգարէս, որ յերկինքն հպարտացաւ, այլ վասն երկրորդիս, որ յերկիր անկաւ և թագաւորեաց ի վերայ մարդկան մեղօք, և հպարտացաւ և բարձաւ մտօք, խոնարհեցոյց ի բարձրութենէն ի դժոխքն, զի տանջելոց է զնոսա յանշէջ հուրն: Դարձեալ. զփարաւոն, որ հպարտացեալ էր, խոնարհեցոյց և ընկէց յերկիր՝ ի Կարմիր ծովն: Զամաղէկացիքն, որ հպարտացան և ելին պատերազմել ընդ իսրայէլացոցն, խոնարհեցոյց ի բարձրութենէն, և կործանեաց զնոսա ի ձեռն Յեսուայ զօրավարին և աղօթիւք մարգարէին Մովսէսի: Դարձեալ. զքանանացիքն՝ զէ (7) ազգն որ հպարտաց[եալ] էին, ի ձեռն իսրայէլացոցն ջնջեաց զնոսա Աստուած: Դարձեալ. յամենայն ժամանակի զհպարտքն կու պատուհասէ մի՛ մի՛ յաշխարհի:*

*Դարձեալ. ի կատարածի զամենայն հպարտքն և զայլ մեղաւորք, առհասարակ, տանջելոց է: Այս է, որ ասէ. «Խոնար-*

*հեցուցեր, իջուցեր ի բարձանց»: Քանզի սովոր է Աստուած, զի զպատուհասն ի ձեռն հրեշտակի սպասաւորի ածէ Աստուած, իսկ զպարգևսն ինքեամբ կարկառէ*[1] *և տայ: Զի յորժամ կամի, որ զոք պատժէ կամ պատուհասէ Աստուած՝ թէ՛ քաղաք, թէ՛ դեւղ*[2]*, թէ՛ երկիր, թէ՛ մարդ, ինքն իւր ձեռօքն ո՛չ պատժէ կամ պատուհասէ, այլ հրաման տայ սպասաւոր հրեշտակաց, որ նոքա պատուհասեն: Իսկ յորժամ բարի կամենայ առնել ումեք և պատուել, ինքն իւր անձամբն առնէ Աստուած՝ առանց հրեշտակաց մէջնորդութեանն: Որպէս զասորոց զօրքն կամեցաւ*[3] *պատժել, ի ձեռն հրեշտակին պատժեաց: Զի հրեշտակն ի բարձանց յԱստուծոյ առ հրաման և ել ի տաճարէն և զՃՁԵՌ (185 000)-ան սատակեաց ի միում գիշերի: Իսկ ի հանդերձեալ դատաստանին, յորժամ զարդարքն պսակէ և զվարձքն հատուցանէ, ինքն է ասելոց.* «Եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգե[ցէք]» *(Մտթ. Իե 34): Եւ թէպէտ մեղաւորցն այլ ինքն է ասելոց.* «Երթա՛յք յինէն, անիծեա՛լք» *(Մտթ. Իե 41), այս պատիժ ո՛չ է նոցա և պատուհաս, այլ միայն վճիռ հատանել նոցա, և ապա հրեշտակացն հրաման լինի, որ հրեղէն գաւազանաւ տանջեն զնոսա և տարեալ արկանեն ի դժոխքն:*

*Դարձեալ. այն որ զտաղանդն, այսինքն՝ զքանքարն շահեցոյց ասելով.* «Ե (5) քանքար ետուր ցիս, ե (5) քանքար այլ ևս ի վերայ շահեցայ» *(Մտթ. Իե 20), ինքն Աստուած ասաց.* «Ազնիւ ծառայ և հաւատարիմ, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մո՛ւտ յուրախութիւն» *(Մտթ. Իե 21): Եւ որ զտաղանդն, այսինքն՝ զմին քանքարն առեալ էր՝ թագոյց, և ո՛չ միայն թագոյց, այլ տարեալ արկ առաջի նորա և ասաց.* «Գիտեմ, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ո՛չ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ո՛չ սփռեցեր, երկեա՛յ ի քէն, ա՛ռ զքոյդ ցքեզ» *(Մտթ. Իե 24-25):*

---

1 *բնագրում՝* կառկառէ
2 *բնագրում՝* գեօղ
3 *բնագրում՝* կամեցաւն

*Եւ նա պատասխանի ետ նմա և ասաց. «Ծառայ չար և վատ, եթէ գիտէիր, որ յայն տեղացն կու հնձեմ, որ չեմ սերմանեմ, և յայն տեղացն կու ժողովեմ, որ չեմ սփռէր: Առէ՛ք ի դմանէ զքանքարն և տո՛ւք այնմ, որ ունի զԺ (10)-ն քանքարն: Եւ զծառայդ անպիտան հանէ՛ք ի խաւարն արտաքին» (հմմտ. Մտթ. ԻԵ 26-30): Տե՛ս, որ հրեշտակաց հրամայեաց, որ պատժեցին:*

*Դարձեալ. յորժամ Աբրահամու հիւր գնաց Աստուած և ի նորա տունն կերակրեցաւ, և զաւետիսն, որ նմա ետ և նովաւ ամենայն հաւատացելոց, ինքն Աստուած խոստացաւ[1] և ասաց. «Ի զաւակէ քումմէ օրհնեսցին ամենայն ազգ[ք] երկրի» (հմմտ. Ծննդ. ԻԲ 18): Եւ յորժամ ել ի տանէն և գնաց, և կամէր զՍոդոմ և զԳոմոր պատուհասել, ինքն ո՛չ գնաց և պատուհասեաց, այլ զերկու հրեշտակն առաքեաց, որ գնացեալ պատուհասեցին, և ինքն վերացաւ յերկինք: Եւ դարձեալ. յորժամ պատիւ և բարիք խոստանայ[2] ումեք, փութով և վաղվաղակի ի նոյն ժամանակն կու տայ զպարգևն: Իսկ յորժամ պատիժ և տանջանք խոստանայ ումեք, ժամանակ ինչ կու յերկարէ և կու համբերէ, և ապա՝ կու տայ զպատիժն: Եւ այս զայն ցուցանէ, որ չի յօժարիր Աստուած ի մեր պատժելն և ի պատուհասելն, այլ ակամայ կամօք տանջէ, յորժամ կու մեղանչեմք և անզեղջ մնամք: «Բացէք զդրունս նեղ զգայարանաց ձերոց» (հմմտ. ԻԶ 2, Մտթ. է 13), ընդ որս ի ներ[ս] մտցէ Քրիստոս և ի սիրտն օթևանս արասցէ, և ընդ իւր տանելով ի խաչ, ըստ աւազակին, ի դրախտն մուծանիցէ և ընդ ինքեան թագաւորեցուսցէ: «Նեղ դուռն» զգայութիւնքն ասէ, զգայութիւնքն ասէ բանալ, զի դուռն ընդ որ մտանէ Քրիստոս՝ զգայութիւնքս են ի մեզ: «Բանալ զաչքն» (հմմտ. ԽԲ 7) ո՛չ չարն, այլ ի բարին, և զբարին տեսանել, յայնժամ ընդ սչեան ի մեզ մտանէ Քրիստոս: «Զականջն[3] բանալ» (հմմտ. ԽԸ 8) ո՛չ ի չար*

---

1 *բնագրում՝* խօստացաւ
2 *բնագրում՝* խոստանաւն
3 *բնագրում՝* զականչն

*ունկնդրութիւնն, այլ ընդդէմ բարւոյն, զաւետարանական ձայնն լսել՝ զդասն, զքարոզութիւնն, զխրատն և զայլն, և Քրիստոս ընդ զգայութիւնն ի ներքս մտանէ: «Զբերանն բանալ» (հմմտ. ծէ 4) ընդդէմ բարւոյն, այսինքն՝ յօրհնութիւնն Աստուծոյ և ի փառաբանութիւնն և այլն: «Զձեռն ի բացել քաղցելոց հաց» (հմմտ. ծԸ 7, 10)՝ յողորմութիւն տալն, յաղօթս ամբառնալ[1], և այլն: Ընդ այսպիսի զգայութիւնս ի ներս մտանէ Քրիստոս, և իւրն օթևան առնէ և յարքայութիւնն հանդուցանէ: Որպէս իմաստուն կուսանքն, որ բացին զձեռքն յողորմութիւնն և ողորմութիւն արարին, և զայլ զգայութիւնն ընդդէմ բարւոյն բաց ունէին: Բացաւ նոցա երկնաւորն առագաստ և ընկալաւ զնոսա յինքեանս, զի բաց էր դուռն նոցա ընդդէմ աղքատաց:*

**Գիշերաց կանխէ հոգի իմ** *(ԻԶ 9):*

*Զննեղութիւն, որ յաստրեստանեաց զոր կրեցին, գիշերի նմանեցուցանէ: Զի գալ աստրոցն, որ եկին ի վերայ Երուսաղէմայ, նեղութիւն և վիշտ և տրտմութիւն էր նոցա: Զի թէ Աստուած օգնական չէր եղեալ և փրկեալ զնոսա, կու առնէին զքաղաքն և կու կոտորէին և սպանանէին զնոսա: Զի գալն աստրոցն գիշեր էր նոցա, և առաւօտուն սատակեցան նոքա: Ո՛չ միայն զքունն ի բաց թօթափէին յաչաց թէ՛ մարգարէս Եսայի և թէ՛ այլք ի սրբոցն, այլ մտօք և շնչով[2], և հոգով և մարմնով կանխեալ էին ի սէրն Աստուծոյ: Նոքա, որ այսպիսի սիրով վառեալ էին, ո՛չ նիրհէին կամ հանգիստ անձանց առնէին, մինչ առ անձկալին և փափագելին[3] հասանէին մտօք և աղօթիւք՝ առ նա խօսէին: Եւ ի գիշերի յառնէին և աղօթիւք առ նա խօսէին՝ ընդ սիրելին իւրեանց: Եւ վայելուչ է գիշերի աղօթելն քան զտունջեանն, զի միտքն և խորհուրդք[ն] անզբաղ են[4], զի այսպիսիք էին սուրբք*

---

1 *բնագրում՝* անբառնալ
2 *բնագրում՝* շնչով
3 *բնագրում՝* փափաքելին
4 *բնագրում՝* է

*ամենայն: Ո՛չ երկիւղի աղագաւ աղօթէին, թէ պատուհաս ինչ չկրէին, և ո՛չ վասն հատուցման վարձուց, թէ վարձս ինչ կամ փոխարէն առնէին ի նմանէ, և ո՛չ վասն խոստացեալ պարգևացն, որ է արքայութիւնն երկնից, այլ յաղագս սիրոյն Աստուծոյ, զի նորա տեսութեանն կու ցանկային: Զի որպէս աշխարհի մարդիք, որ պոռնկական սիրովն կու վառին ի սէր կանանց, և զամենայն ինչ կու մոռանան և կու թողուն զամենայն. ճանապարհորդն՝ զճանապարհորդութիւնն, արուեստաւորն՝ զարուեստն, զտուն և զընտանիք, մինչ որ կու հասանեն այնմ: Նոյնպէս և նոքա հոգևոր սիրով բորբոքեալ էին ի սէրն Աստուծոյ, և աղօթելով սկ[ս]էին զգիշերն ամենայն, և կերակուր նոցա այն էր համարեալ՝ և՛ ըմպելի և՛ քուն և՛ հանգիստ: Զի Դաւիթ մարգարէն ասէ. «ի մէջ գիշերի [յ]առնէին խոստովան լինել առ քեզ» (Սաղմ. ճԺԸ 62): Եւ դարձեալ. այլոց ուսուցանէ և խրատ տայ. «ի գիշերի համբարձէք զձեռս ի սրբութեան յաղօթս» (հմմտ. Սաղմ. ճԼԳ 2), զի թէպէտ վասն քնոյ և հանգստեանն է տուեալ գիշերն յԱստուծոյ մարդկան: Իսկ նոքա ո՛չ առ քուն համարէին տուեալ զգիշեր, այլ յօրհնութիւնս աստուածեղէնս, և զգաստութիւնս հոգոյ և մտաց, զի տիւ խաւիանիչ այսմ իրաց է ի զբօսանս իւր: Վասն որոյ և Տէրն ի գիշերաժամու հսկել և արթուն կալ պատուիրէր, զգիշերն տիւ առնել՝ ընդ Աստուծոյ խօսելովն: Իսկ մեք զհակառակն առնեմք ի տունջեան, իբր ի գիշերի ի քուն լինիմք և խորդամք, և ի գիշերի զբօսնումք ի սնոտիս, ասեն թէ՝ «ցերեկս ի քուն լինիմք, որ գիշերն արթուն կենամք և սօհբաթանեմք»: Եւ կամ կու նստին և ծխծաղին, և դատարկաբանութիւն առնեն և ընդ վայր և ձրի զրուց տան, և նոքա, որ արուեստաւորքն են, նստին և զարուեստն առնեն, և պաղօթքն չեն առներ: Սոքա ընդ էմ են Սուրբ Գրոց և չեն ընդունելի Աստուծոյ:*

**Վասն զի լո՛յս են հրամանն[ք] քո ի վերայ երկրի** *(Ի Ջ 9):*

*Մխտք մեր լուսաւորի երրորդութեան լուսովն, յորժամ յիշեմք և զմտաւ ածեմք զնորա բարերարութիւնն և զերախտագործութիւնն, զոր առեալ և առնելոց է առ ազգս մարդկան յԱդամայ հետէ և մինչև ի կատարած աշխարհի: Որպէս Սողոմոն ասէ. «Սրտի բերկրեցելոյ երեսք զուարթ[1] են, և որպէս տրտմեցելոյ տխուր են դէմք» (Հմմտ. Առակ. ԺԵ 13): Սրտի ցանկութիւն և բերկրանք ո՛չ զմարմնոյն, այլ՝ զանմարմին մտացն ասէ, զի յորժամ զերկնաւոր յայսմ զմտաւ ածէ և յուսայ, միտքն լուսաւորի և զուարթանայ: Սակայն բաժանումն առնէ Պօղոս՝ մէջ երկնաւոր յուսոյն և ի մէջ երկրաւորիս՝ ասելով վասն երկնաւոր յուսոյն, թէ՝ «Յուսով ապրեցաք» (Հռոմ. Ը 24) և վասն երկրաւորիս ասէ, թէ՝ «Յոյս տեսանելի՝ չէ՛ յոյս» (Հռոմ. Ը 24): Դարձեալ. լոյս է պատուիրանքն, լուսաւոր է զմիտս արթուն:*

**Ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի** *(Ի Զ 9):*

*Ուսանիլ զարդարութիւն, այսինքն՝ չափ և կշիռ ունել մերոցն կարեաց: Հանդերձն չափով լինի և ո՛չ առաւել կամ նուազ, այն չափն, որ ի ցրտոյն և ի շոգուն պահէ, և ո՛չ ճպնիլ: Կերակուրն և ըմպելին չափով և կշռով լինի, որ ի սովու չմեռանի, և ո՛չ ագահել: Որ չափ որ պատշաճն է, զայն չափն առնել, զի յորժամ չափաւոր լինի ամենայն ինչ: Մի՝ շահեկան է, այսինքն՝ շահաւոր, թէ՛ կերակուր թէ՛ զգեստ[2], և առաւելն վնասէ զմարմինն: Երկրորդ՝ յորժամ չափաւոր լինի, ո՛չ զրկեն հոգին և մարմինն զմիմեանս, և անչափն՝ զրկեն զմիմեանս: Եւ չափաւոր լինելն անկռիւ մնան Բ (2) ներհակքն՝ հոգին և մարմինն:*

**Տէր Աստուած մեր, տո՛ւր մեզ զխաղաղութիւն քո** *(Ի Զ 12):*

*Թէպէտ որ ողորմութիւն և բարեգործութիւն չունեննայ մարդն, այլ յամենայն բարեգործութենէ զրկեալ լինի և թափուր և դատարկ մնացեալ, և ո՛չ բարեգործութիւն չունեննայ, յորժամ*

---

1 *բնագրում՝* զուարդ
2 *բնագրում՝* սգէստ

*նեղուԹիւն և փորձանք տայ Աստուած նմա, և նա համբերէ նեղուԹեանց և փորձանացն և համբերուԹեամբ տանի, և չի յուսահատի և չը ճչգոհանայ և ասէ, ԹԷ՝ «Ամենայն ոք ի հանգիստ է, և ես ի մէջ փորձանաց կու տանջիմ»: Թէ գոհուԹեամբ համբերէ, բաւական է այս նմա, և յարքայուԹիւնն գնայ: Եւ քեզ օրինակ աղքատ Ղազարն, զի այլ ինչ ուղղուԹիւն չի վկայեր վասն նորա գիրն, ԹԷ պահեցող էր կամ աղօԹարար, կամ ողորմած կամ այլ ինչ առաքինուԹիւն, այլ՝ նեղուԹեանցն համբերելով հանգեաւ ի գոգն Աբրահամու: Զի ԹԷ սխալանք աստէն ընկալաւ զհատուցումն, վասն որոյ Պօղոս ասէ. «ԵԹէ դատիմ[ք]՝ ի Տեառնէ խրատիմք, զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեացուք» (Ա. Կորն. ԺԱ 32): Դժուարին է նեղուԹիւնն, զոր կրեն մարդիք, սակայն ո՛չ է պարտ ճչգոհալ և կամ աղաղակուԹիւն խնդրել: Այլ ԹԷ խնդրէ, միայն զայն [է] պարտ խնդրել յԱստուծոյ՝ փոքր մի ԹեԹևացուցանել զցաւն և դիւրուԹիւն առնել, և խաղաղացնել զտանջանքն, որ կարէ տանել, և զինքն արժանի համարել տանջանացն: Եւ ԹԷ առողջուԹեան և խաղաղուԹեան հանդիպի՝ ո՛չ արժանի համարել զինքն վայելմանն: ՍովորուԹիւն է Աստուծոյ, որ ո՛չ միայն յառաջ քան զպատժոց և զհատուցման ժամանակն ի դէմս ուրուք զտմարդուԹիւնն ածել, այլ և՝ ի պատժոց ժամանակն: Զի յառաջն ի ձեռն մարգարէիցն և քարոզողացն ուսուցանէ ո՛չ գործել զչարն, որ ո՛չ պատուհասին յԱստուծոյ: Եւ յորժամ գործեն և պատժէ Աստուած ի նոյն ժամն, այլ կու յիշէ զմարդու չարիքն և ի դէմս ածէ, ԹԷ՝ «Վասն այն պատուհասեմ և տանջեմ զքեզ, որ յառաջ ծանուցի քեզ ո՛չ գործել, և դու գործեցեր, յիրաւի տանջելոց ես»: Եւ զայս ուսանիմ[ք] ի մեծատան առակէն, որ յաւետարանին գրեալ է: Զի յորժամ մեծատունն ի դժոխքն ի չարչարանք էր և ի մէջ տանջանացն, ասացաւ նմա. «Դու ընկալար զբարիսն ի կեանս քո, և ո՛չ պատեհաբար մատակարարեցեր, զի աղաղակ[եցեր], յիրաւի՛ տանջիս» (Հմմտ. Ղուկ. ԺԶ 25): Այլ և Քրիստոս ի դատաստանին*

*պայս այսպէս առնելոց է մեղաւորացն և ասացելոց է, թէ՝ «Երթայք յինէն անիծեալք, զի քաղցեայ՝ և ո՛չ ետուք, վասն այն ի հուրն երթալոց էք և տանջելոց էք, որ քաղցեայ և ո՛չ ետուք ինձ ուտել», և այլն, «վասն որոյ յիրաւի պատժելոց եմ զձեզ» (հմմտ. Մտթ. իե 41-42): Սոյնպէս և մարգարէս ասէ թէ. «Յառաջադոյն խրատեցի*[1] *զձեզ և ո՛չ լսեցիք, վասն այն՝ լցաւ քաղաք ձեր դուժկանօք վասն մեղացն, զոր գործեցէք*[2]» *(հմմտ. Իբ 2):*

**Ցարթիցեն մեռեալք կենդ[անեացն]** *(Իզ 19):*

*Ցարթիցեն, ցնծասցեն: Նախ՝ ընդդէմ նոցա կու ակնարկէ այս բանս, որ ի տրտմութեան ներհէին, զի [ի] գալ ասորոց զօրացն ի վերայ Երուսաղէմայ քուն էր համարեալ նոցա և տրտմութիւն և տարակուսանք, և ամենեքեան իբրև ի քուն տրտմութեան ներհեալ էին: Իսկ յորժամ ազատեցան ի նոցանէ, յորժամ հրեշտակն սատակեաց զնոսա, յայնժամ զարթնուլ ասի, իբր թէ՝ ի մեռելութենէ յարուցիւն եղև նոցա, և ի քուն լինելոյն՝ զարթնուլ, և ի տրտմութեանն՝ ուրախութիւն: Բայց յայտնի վասն հասարակաց յարութեանն կու մարգարէանայ մարգարէս, զի մարգարէի բանս վասն հասարակաց յարութեանն է, որ ամենեքեան որ յԱդամայ հետէ մեռեալ են*[3] *և ի գերեզման եղեալ և մարմինք փտեալ, պիտիր յառնեն և կենդանան[ան] ի հասարակաց յարութեանն ի մշտնջենաւոր կենդանութիւն, ըստ հրամանին Քրիստոսի, թէ՝* «Ամենեքեան, որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի Որդոյն Աստուծոյ և եկեսցեն արտաքս» *(Յովհ. ե 28-29): Ցարթիցեն ասէ, զի որպէս քնեալ մարդն կու զարթնու, նոյնպէս նոքա, որ մեռեալք են, զարթին իբրև ի քնոյ և յառնեն ի*

---

1 *բնագրում՝* խրատէ

2 *C ձեռագրում՝ թ. 164բ.* «Սովորութիւն է Աստուծոյ, որ ո՛չ միայն յառաջ քան զպատժոց... վասն մեղացն զոր գործեցէք» *հատվածը կրկնում է ԻԲ գլխի 2-րդ տան մեկնության համապատասխան հատվածը, որից հետո շարունակում է ԻԲ գլխի 12 տան* «Եւ կոչեաց Տէր Սաբաւոթ լալումն և ողբումն և զգածումն քրձի» *մեկնությունը (տե՛ս աստ, էջ 218 և 220):*

3 *բնագրում՝* է

*մեռելոց և կենդանան[ան]: Զի նոքա, որ քնին, դիւրաւ կու զարթին, նոյնպէս և նոքա դիւրաւ յառնեն ի մեռելոց: Զի մեռելոցն, որ մեռեալ են, նոցա նինջ ասեն, և նինջն և քունն միապէս են, և քուն ասեն, որպէս և մարդարէս զարթնուլ ասէ, թէ՝ «զարթի-ցեն»: Եւ վասն Ղազարու ասաց Քրիստոս.* «Բարեկամ մեր Ղազարոս ննջեա՛ց[1], բայց զարթուցի՛ց զնա» *(Յովհ. ԺԱ 11): Տե՛ս, որ մեռեալ է Ղազարոս և ո՛չ թէ՝ քուն, և ննջեաց, այլ՝ մեռելոյն ննջեալ ասաց, և յարուցելոյն՝ զարթուցանել: Եւ առաքեալն Պօղոս վասն մեռելոցն ասէ, թէ՝* «Որ ննջեցին ի Քրիստոս կորեա՞ն արդեօք» *(Ա. Կորն. ԺԵ 18), որ զայն ցուցանէ, որ դիւրեաւ են յառնելոց, որպէս որքան մարդն դիւրեաւ կու զարթնու և կանգնէ: Եւ մարդիք այլ մեռելին նինջ ասեն.* «Աստուած ողորմի ննջեցելոց Հոգուն», *կամ* «Երթայք զննջեցեալն թաղեմք», *և այլ սոյնպիսիք: Երկրորդ՝ միտքն այս է, զի գալստեամբն Քրիստոսի մահն քուն և հանգիստ եղև, վասն այն՝ քուն ասի և ննջել ասի: Այն, որ յարիցեն և զարթիցեն ասաց, զհասարակաց յարութիւն ցուցանէ, որ ամենեքեան արդարք և մեղաւորք յառնեն ի մեռելոց: Եւ այն, որ ասէ.* «Ցնծասցեն և ուրախ լիցին» *(Հմմտ. Իե 9), այս զքրիստոնեայքն[2] ասէ և զարդարքն, զի թէպէտ, [առ]հասարակ, յառնեն արդարք և մեղաւորք: Սակայն նոքա, որ քրիստոնեայքն[3] են և արդարքն են, նոցա է ցնծալն և ուրախ լինելն: Իսկ նոքա, որ անհաւատքն են և մեղաւորքն են, և նոքա, որ հերձուածողքն են, նոցա ուրախութիւն, ցնծութիւն ո՛չ է, այլ՝ տրտմութիւն:*

**Ով՛յս տուր ժողովուրդ իմ, գնա՛ մուտ յընշտեմարանս ք՛ո, փակեա՛ զդուրս ք՛ո** *(Ի Զ 20):*

---

1 *բնագրում՝* ննջեաց էր
2 *բնագրում՝* զքրիստոնեանքն
3 *բնագրում՝* զքրիստոնեանքն

*Նախ՝ ընդդէմ նոցա է, որ խոյս ետուն և փախեան ի հեծելեն աստրոցն և մտան յԸշտեմարանս, այսինքն՝ ի տաճարն մարդարէն Եսայի և թագաւորն Եզեկիայ, և աղօթեցին: «Փակեա՛ զդրունս»՝ այն, որ մտանէ ի ներս ի քաղաքն և զդրունքն ամրացուցին: «Մինչև անցցէ՛ բարկութիւն Տեառն» (ԻԶ 20). այն է, որ բարկութիւնն Աստուծոյ զանց արար զնոցանէ և գնաց ի թշնամեացն վերայ, և սատակեաց զամենեսեան ի ձեռն հրեշտակին: Ի վերայ նոցա մարմնապէս այսպէս կատարեցաւ: Իսկ հոգեպէս այս է: «Խոյս տուր», այսինքն՝ ի չարէն, ի բանսարկուէն սատանայէ և ի չար մարդկանէ, և [ի] նոցա խաբէութենէն և ի պատրանացն և ի մեղացն և ի չարեացն «խոյս տուր» և հեռացիր ի նոցանէ, և նոցա մի՛ լսեր բնաւ: «Գնա՛ մուտ յԸշտեմարանս քո», այսինքն՝ մուտ յընշտեմարան մտացդ, և ամփոփեայ զքեզ ի սինեակ սրտիդ[1] և պնդեայ զմիտ քո և զխորհուրդ, և մի՛ տայր թոյլ խորհել զչարն: «Փակեա՛ զդրունս», այսինքն՝ զգայութիւնդ ընդդէմ չարին, զաչքդ, զականջդ, զհոտոտելիքդ՝ որ զմեղաց հոտն չառնուս, զբերանդ՝ որ զչար բանն ո՛չ խօսիս, և զձեռքդ՝ որ չի զրկես և գողանաս, և այլն: «Մինչև անցցէ բարկութիւն Տեառն»: Յորժամ զայս այսպէս առնես, անցանէ բարկութիւն Տեառն, և զանց առնէ զքեզ, և գնայ ի վերայ սատանայի անկանի և դիւացն դասուց և այլ չարեացն:*

*Դարձեալ. մարգարէանայ այս բանիւս զփրկութիւն և զաքանչելիքն, որ յԵգիպտոս եղև ժողովրդեանն Աստուծոյ: Զի յորժամ առաքեաց Աստուած զՄովսէս յԵգիպտոս և ասաց արձակել զժողովուրդն և գնալ երից աւուրց ճանապարհ և երկրպագել Աստուծոյ և դառնալ, ասաց փարաւոն. «ԶՏէր ո՛չ ճանաչեմ, և զժողովուրդն ո՛չ արձակեմ» (հմմտ. ելք. ե 2): Յայն ասաց Մովսէս, թէ՝ «Դու գնա ո՛չ ճանաչես, նա գայ քեզ յերևան, որ գիտենաս գնա և ճանաչես», և սկսաւ Մովսէս ժ (10)*

---

1 *բնագրում՝* սրտիտ

*Հարուածով տանջել զնա: Եւ նոքա, որ իսրայէլացիքն [էին], խոյս ետուն և փախեան, և գնացին յիւրեանց տեղիքն ի Գեսեմ յիւրեանց տունն: Եւ Հարուածն, զոր Մովսէս մի՛ մի՛ ածէր ի վերայ եգիպտացոցն, նոցա միայն էր, և զնոսա միայն կու վնասէր, և իսրայէլացոցն ո՛չ ինչ առնէր վնաս, զի նոքա ազատք էին ի պատուհասէն, զոր կրէին նոքա: Զի թէ Գ (3) օր շօշափելի խաւարն էր՝ նոցա միայն էր, և իսրայէլացոցն լոյս էր, և թէ Գ (3) օր գետն յարիւն փոխեցաւ՝ եգիպտացոցն միայն էր, և նոքա ջուր ըմպէին: Եւ թէ մուննն էր և շանաճանճն՝ զեգիպտացիքն միայն խածանէին, և զիսրայէլացիքն՝ ո՛չ, և եթէ գորտն էր՝ ի նոցա տունն կու մտանէր, և իսրայէլացոցն՝ ո՛չ: Նոյնպէս և այլ Հարուածքն և բարկութիւնն Աստուծոյ ի նոսա կու անցաներ, յեգիպտացիքն և իսրայէլացիքն ո՛չ մերձենայր: Այս է, որ ասէ. «Ես տուր ժողովուրդ իմ մինչև անցցէ բարկութիւն Տեառն»:*

*Դարձեալ. վերջին Հարուածն, որ անդրանկածախ հրեշտակն էր, զնոցա անդրանիկն միայն սատակեաց: Եւ թէ այս որպէ՞ս: Զի ասաց Աստուած Մովսէսի թէ. «Ի չորեքտասան ամսոյն և ի չորեքտասան լուսնին, որ ամիսն ԺԴ (14) օր լինի և լուսինն այլ ԺԴ (14) աւուր լինի, ասայ ժողովրդեանն, որ ի նոյն օրն առնու իւրաքանչիւր տան գառ մի կամ ոչխար: Եւ թէ աղքատ լինի, որ չկարէ առնուլ, թող Բ (2) և Գ (3) տան մի ոչխար առնուն, և զենեն և խորովեն և ուտեն, և յարենէն յայն դուրս տանցն դրոշմեն, յոր ինքեանք են, ի սեմն և ի բարաւուն ի վեր և ի վայր, յալ և յահեակ, և ինքեանք ի ներս մտանեն ի տունն և զդուռն փակեն, որ ես սատակիչ հրեշտակ պիտիր առաքեմ, որ գայ և զեգիպտացոց անդրանիկն սատակէ, յորժամ տեսանէ զարիւ[ւ]ն դրոշմեալ ի դուրս ձեր, զանց առնէ հրեշտակն և զձեզ ո՛չ սատակէ, և թէ ո՛չ առնէք զնշանդ զայդ որ տեսանէ՝ զձեզ այլ հետ նոցա կու սատակէ» (հմմտ. Ելք. ԺԲ 3-13): Յայնժամ արարին որպէս պատուիրեաց Մովսէս: Եւ ի գիշերին գնաց հրեշտակն և սատակեաց զնոցա անդրանիկն՝ ի մեծամեծաց մինչև զփոքունս,*

և զնոսա ո՛չ սատակեաց: Եւ թէ ի տանէ ի դուրս մարդ տեսանէր, զնոսա այլ սատակէր: Բայց նոքա ի տունն մտան և ամրացան, և զնոսա ո՛չ վնասեաց: Եւ առաւօտն ի վեր ելան տեսին, որ յամենայն տուն լաց և աղաղակ էր, որ կու լային զանդրանիկն իւրեանց, որ մեռեալ էին: Գնացին առ փարաւոն և ասացին, թէ՝ «Արձակեա՛ զժողովուրդն որ գնան, ապա թէ ո՛չ՝ թէ օր մի այլ յամեն նոցա Աստուածն զմեզ ամենեսեան առ հասարակ կու սատակէ» (հմմտ. ելք. ԺԲ 33): Եւ հրաման էհան փարաւոն, թէ՝ «Գնացէք ասացէք որ երթան, և թէ ո՛չ գնան՝ բռնութեամբ հանէք» (հմմտ. ելք. ԺԲ 31): Յայնժամ Մովսէսի բանն կատարեցաւ, որ ասաց, թէ՝ «Դու գնա ո՛չ ճանաչես, նա գայ քեզ յերևան, որ ճանաչես և գիտենաս զնորա զօրութիւնն թէ որչափ է»: Այս է, որ ասէ մարգարէս. «Ով՛յս տուր ժողովուրդ իմ», որ նոքա գնացին յիւրեանց տունն մտան, «մինչև անցցէ բարկութիւն Տեառն»: Բարկութիւնն Աստուծոյ զանց արար գնոցանէ և գնաց ի վերայ փարաւոնի և եգիպտացոցն, և սատակեաց հրեշտակն զնոցա անդրանիկն: Հրեշտակն առանց Աստուծոյ հրամանացն ո՛չ կու բարերարէ մարդկան, և ո՛չ կու պատժէ[1]: Յորժամ հրամանն Աստուծոյ կու լինի առ նոսա, ապա թէ բարերարելու է՝ կու բարերարեն, և թէ պատժելու՝ կու պատժեն:

Մեկնիչն ասէ. «Յէ՞ մարգարէ», համշինցի բառ է, «Յէ՞ մարդարէ», զիա՞րդ ասիցես փախչել, կարէ մարդ յԱստուծոյ փախչել, զի թէ ի տուն մտանէ մարդ և թէ յԸշտեմարան սրտին, զամենայն կու տեսանէ Աստուած, և կարող է հասանել ձեռն Աստուծոյ:

Ինքն՝ դարձեալ մեկնիչն պատասխանի կու առնէ իւր բանին և ասէ, թէ՝ «Նոքա[2] անհաւատք էին փրկութեանն»: Զի թէպէտ յառաջագոյն ասաց Աստուած մարգարէիս Եսայեայ, թէ՝ «Ասա՛ ժողովրդեանն, թէ մի վախէք յասորոց զօրացն, զի ձեզ ո՛չինչ

---

1 *բնագրում՝* պատժեն
2 *բնագրում՝* նոցա

վնաս կարեն առնել, զի ես կու պահեմ զձեզ», թէպէտ Թագաւորն Եզեկիայ հաւատաց, սակայն ժողովուրդն ամենեքեան ո՛չ հաւատացին, թէ Աստուած կու պահէ և կու ազատէ ի նոցա ձեռացն անվնաս: Ամենեքեան ի դողման էին, և կու սարսափէին և երկնչէին ի նոցանէ, թէ կու առնեն նոքա զքաղաքն և կոտորեն զնոսա: Եւ Եզեկիայ Թագաւորն թէպէտ հաւատաց Աստուծոյ բանին, զոր մարգարէն ասաց, սակայն նա այլ մարդ էր: Յորժամ տեսանէր զամենեսեան, որ ո՛չ հաւատան և ի դողման կան, նորա սիրտն այլ կու ճմլեր և կու երկնչէր: Ասաց Աստուած, թէ՝ «Մի՛ երկնչիք, գնացէք ի տունն ձեր մտէք, որ ո՛չ տեսանէք, և ես առանց աշխատանաց կոտորեմ զնոսա: Թէպէտ յԸշտեմարանս մտցես և ո՛չ պատերազմիցիս ընդ Թշնամիսն, կարո՞ղ է ձեռն իմ ապրեցուցանել զքեզ: Նոյնպէս և թէ ի տանէն դուրս լինիս» (տե՛ս ԼՀ 5-8, Դ. Թագ. ի 5-7), որպէս առ Բաղամուն արար: Եւ թէ այս որպէս է: Զի յորժամ եկին իսրայէլացիքն ի Քանանացոց երկիրն, լուաւ Բաղակ Թագաւորն սքանչելիսն առ նոսա, և հարցու յիւր մարդիքն, թէ՝ «Ինչ պատճառ է, որ նոքա զօրաւորք են և ընդ որ գնան կու յաղթեն և կու զօրանան նոքա»: Ասացին վասն Մովսէսի, թէ՝ «Մարգարէ կայ ի միջի նոցա և սուրբ մարդ է, և նորա աղօթիւքն կու զօրանան, և ընդ որ գնան կու յաղթեն»: Ասաց. «Թէև ի մեր յազգս չկայ այնպէս սուրբ մարդ և առաքինի, որ մեք այլ բերեմք, որ գայ մեզ համար աղօթէ և զմեզ օրհնէ, որ մեք այլ զօրանամք զնոսա, որ ո՛չ գան ի վերայ մեր և կոտորեն զմեզ և ջնջեն»: Եւ ասացին յաղագս Բաղամու հոգին, թէ՝ «կայ ի մեր յազգս այլ մէկ սուրբ մարդ մի ի Միջագետս Ասորոց»: Ասաց. «Գնացէ՛ք բերէք, որ գայ զմեզ օրհնէ և զնոսա անիծանէ, որ մեք զնոսա յաղթեմք» (համմ. Թիւք. ԻԲ 6), և խոստացաւ լինչ: Առաքեաց մարդ, որ գնացին խնդրակ, և նոքա գնացեալ զնա և ասացին զիւրեանց Թագաւորին պատուէրն: Եւ նա ասաց. «Կարէք, որ յիմ աստուածուն խնդրեմ, տեսանեմ թէ հրաման կու տայ՝ կու գնամ» (համմ. Թիւք.

*ԻԲ 8)։ Եւ նորա աստուածն կուռքն էր, և ի կռոցն կու խնդրեր, զի կռապաշտ էր։ Եւ թէպէտ նա ի կռոցն խնդրեաց, սակայն ճշմարիտն Աստուած երևեցաւ ի գիշերին յայնմիկ և ասաց. «Զիմ օրհնեալ ժողովուրդն կու գնաս անիծանես՝ մի՛ գնար, ապա թէ ո՛չ՝ մեռանիս ի ձեռաց իմոց» (հմմտ. Թուք. ԻԲ 12)։ Յայնժամ ո՛չ գնաց։ Եւ գնացին խնդրակքն ունայն առ թագաւորն, և ասաց թագաւոր. «Մի՛թէ վարձ ո՛չ կարէաք տալ նմա, կամ ո՛չ ունէաք ոսկի և արծաթ, որ տայաք նմա, և կամ նորա արժանեացն հարկիք ունէաք, որ չկամեցաւ գալ առ մեզ»։ Դարձեալ ետուր շատ ոսկի և արծաթ և առաքեաց կոչել։ Եւ գնացին թագաւորին ծառայքն և տրամեցին։ Եւ դարձեալ երևեցաւ ի գիշերին նմա Աստուած և ասաց. «Մի՛ գնար, և թէ գնաս՝ մի՛ անիծաներ զիմ ժողովուրդն, այլ զոր ինչ ի բերանդ դնեմ գայս խօսեայ, և ո՛չ զոր դու կամիս» (հմմտ. Թուք. ԻԲ 20)։ Եւ ելաւ գնաց։ Եւ ի ճանապարհին դարձեալ եառնս զհրեշտակն, նախ՝ էշն, և ապա՝ ինքն։ Եւ ապա անկաւ ի վերայ երեսին և երկիր եպագ[1] հրեշտակին Աստուծոյ։ Եւ ասաց. «Մի՛ գնար, և թէ գնաս՝ մի՛ անիծաներ, այլ զոր ինչ հրաման տամ քեզ գայն արայ, թէ ո՞չ՝ այս սրով կու սպանանեմ զքեզ, զոր տեսանես» (հմմտ. Թուք. ԻԲ 22-23)։ Եւ գնաց մոգն և ո՛չ անիծեաց, այլ զոր ինչ պատուիրեաց Աստուած այն արար։ Սակայն առանց չարի ո՛չ եկեաց, այլ զիւր չարիքն ներանիւթեաց։ Զի չար խրատ ետ թագաւորին վասն իսրայէլացոցն առնել, և այն խրատովն ԻԴՌ (24 000) մարդ մեռաւ իսրայէլացոցն ի մի օրն։ Սակայն զօրացան և առին զՔանանացոց երկիրն և կոտրեցին զնոսա, և մոգն այլ ի միջի նոցա էր, նա այլ ի ձեռքն անկաւ և սատակեցին։ Թէ անիծեալ էր մոգն զժողովուրդն, սակայն կարող էր Աստուած փրկել զնոսա ի ձեռաց թշնամեացն։ Սակայն ո՛չ կամեցաւ, որ անիծանէր, որ ցուցանէ զխնամքն, որ ունէր ի վերայ ժողովրդեանն։ Նոյնպէս կարող էր Աստուած, որ*

---

1 *բնագրում՝* էպագ

*զօրացուցանէր զԵզեկիայ և զզօրքն իւր, թէպէտ սակաւք էին քան զասորիքն, որ պատերազմէին և կոտորէին զնոսա, որպէս բազում զայլ ոք կոտորեալ էին: Սակայն ո՛չ կամեցաւ, որ նոքա գնացեալ հետ ասորոցն պատերազմել և կոտորել զնոսա, այլ խնայեաց ի նոսա և խնամք արար նոցա, և ո՛չ թոյլ ետ պատերազմել: Եւ ասաց. «Գնացէ՛ք մտէք ի ձեր տունն և Հանգիստ կացէ՛ք առանց պատերազմի»: Եւ ի ձեռն հրեշտակին կոտորեաց զնոսա, որ զառաւել խնամքն և զգուշն և զսէրն ցուցանէ ի վերայ իւր ժողովրդեանն: Այս է, որ ասէ մեկնիչն. «Որպէս առ Բաղամուն արար, նոյպէս և առ զօրքն Ռափսակայ»: Եցոյց զխնամքն ի վերայ ժողովրդեանն իւր, որ ո՛չ ետ թոյլ պատերազմել, այլ հրեշտակի սրովն կոտորեաց զնոսա:*

**Եւ յայտնեացէ զարիւն նորա և ո՛չ ծածկեացէ** *(Ի.Զ 21):*

*Ասորիքն, որ կոտորեցան յայտնի առաջի ամենեցուն, անթաղ մնացին դիակունք և մարմինք նոցա, զի [ի] հրեշտակէ Աստուծոյ սատակեցան: Եւ բազում և անթիւր էր մարմինք նոցա, դեզ դեզ ի վերայ միմեանց կուտե[ա]լ, և ո՞վ ոք էր որ թաղէր զնոսա: Անթաղ մնացին առաջի տեսողաց, որ ամենեքեան յայտնի կու տեսանէին զմարմինք նոցա արկեալ ի վերայ երեսաց երկրի: Այսպէս և ի հանդերձեալն դատաստանին Դ (4) տարերքս ի դուրս պիտիր տան զմարդկան մարմինքն: Եւ որպէս չար դահիճ լինի, որ մտանէ զմի ոք դատաւորին, որ դատաստան ըմբռնէ զնա և չարչարէ և տանջէ և սպանանէ: Նոյնպէս տարերքս ամենայն ի դուրս տան զմարմինք մարդկան և մատնեն դատաւորին Աստուծոյ և յայտնեն զիւրաքանչիւր գործն, զոր ինչ չար գործեալ է՝ թէ՛ պոռնիկ է, թէ՛ մարդասպան է, թէ՛ գող է, թէ՛ յիշուցնատու է և թէ՛ այլ ինչ մեղք: Զի զոր ինչ մեղք, որ գործէ մարդ ի վերայ երկրի, և տարերքս կու տեսանեն[1] և կու իմանան,*

---

1 *բնագրում՝* տեսանեն

*և որպէս երկիրս զմարդոյ մարմինն, որ կու մեռանի, յինքն ունի և կու պահէ, նոյնպէս և զգործն մարդկան առ ինքն ունի և պահէ: Եւ յորժամ ի դուրս տայ զմարդոյ մարմինն ի յարուբեանն, զգործ մարդկան այլ ի դուրս տայ իւրաքանչիւր տարրն՝ հողն և ջուրն, յօդն և զհուրն, յայտնեն զգործս իւրոց: Եւ ո՛չ իշխեն թագուցանել յատենին սրտագէտ թագաւորին, որպէս որ զկայենին յայտնեցին, ըստ այնմ թէ՝* «Գոչո՛ւմն արեան եղբօր[1] քո գոչեն առ ես» *(Ծննդ. Դ 10): Եւ թէպէտ Աստուած գիտէ առանց տարերաց ասելոյն, սակայն նոքա այլ կու խօսին և ասեն: Եւ թէ անբան տարերքն ո՞րպէս կու խօսին: Եւ թէպէտ առ մեզ անբան են նոքա, սակայն հետ իւրեանց Արարչին կու խօսին և կու յայտնեն զգործս մարդկան, զոր ինչ և գործեցին:*

**Յաւուր յայնմիկ ածցէ Աստուած զսուրն սուրբ, զմեծ և [զ]հզօր ի վերայ վիշապ օձին փախուցելոյ և ի վերայ վիշապ օձին կամակորի, և սպանցէ զվիշապն ի մէջ ծովուն յաւուր յայնմիկ** *(Իէ 1-2):*

*«Վիշապ և օձ» զասորին ասէ և զբաբելացին, որ սպան զնոսա: Եւ սատակեաց զասորիքն ի ձեռն հրեշտակին, և զբաբելացին՝ ի ձեռն մարաց և պարսից թագաւորաց: Դարձեալ. առակ են սոքա, և առնու բանս ի վերայ սատանայի և կատարածի աշխարհիս: Զի մարմնապէս ի վերայ ասորոցն և բաբելացոցն կատարեցաւ, և դարձեալ ի վերայ սատանայի կատարի բանս ի հանդերձե[ա]լն: Սովորութիւն է դրոց, որ վիշապ կոչեն զկէտսն, զմեծամեծ գազանքն, որ ի ծովս են: Եւ կէտ ասի նոցա վասն մենակութեանն[2], որ միայնակ կու շրջին, զի ուտեն զփոքունքն և ինքեանք միայն կու մնան: Եւ նոցա տեղիք որոշեաց Աստուած՝ զանապատ վայրսն և զաննաւազնաց տեղիքն, որ ո՛չ ելանեն ի նաւան և կլանեն: Ի խորս ծովուն արգել զնոսա Աստուած, որ*

---

1 *բնագրում՝* եխպօր
2 *բնագրում՝* մեկնակութեանն

նաւ չի բանիր և չի գնայր յայն տեղիքն: Եւ լսողքն, որ գնոսա տեսեալ են և լուեալ են, ասեն թէ՝ «Ի՞ան գլեառն մեծամեծք են նոքա»: Եւ յորժամ ի խորս ծովուն են նոքա և յաննաւադնաց տեղիք, և նոքա ի դուրս ո՛չ գան, որ մարդ տեսանէ գնոսա, ապա ո՞վ է տեսեր գնոսա կամ ո՞վ է լսեր գնոցա մեծութիւնն: Այս կերպիւս է, զի նոքա յորժամ զմանր կենդանիքն ուտեն և սպառեն՝ ո՛չ բաւականան, այ[լ] կարօտ մնան կերակրոյ, ելանեն մի ջով չափ ի ծովէն ի դուրս, և առնուն ջուր ի ծովէն և վիշեն գառ ի վեր: Հեղեղ ելանէ և առնու զկենդանիքն, զոր ինչ հանդիպի, և բերէ ի վայր, և նա գբերանն բանայ և առնու և կլանէ, և գքարն և գաւազն ի դուրս փչեն: Եւ այնով այլ չի բաւականայր և կարօտութիւն քաղցոյն լցուցեր, զի կամ ժ (10) կենդանի լինի, կամ աւելի կամ պակաս, կամ լինի որ իսկի չպատահի, յայնժամ ձկտայ ի ցամաքն և արածի գխոտն, զոր ի բերանն գայ, և այնով այլ քաղցն ո՛չ լցուի, զի այն սակաւ խոտն ինչ անէ անոր[1]: Յայնժամ ի սովուն կու սատակի, և ելանէ իբրև գլեառն ի վերայ ջրոյն երեան, և առնու ջուրն և գնայ: Յայնժամ նաւք կու պատահին, և կու տեսանեն մարդիկք գնա և կու պատմեն միմեանց: Եւ որպէս սոքա, որ կէտք են, և վիշապ կոչին մեծամեծ կենդանիքն, գնոցա տեղիքն որոշեալ է Աստուած՝ ի խորս ծովուն յաննաւադնաց տեղիքն, որ ո՛չ վնասեն մարդկան: Նոյնպէս և ցամաքային սողնոցն, որ յաշխարհս են: Նոքա, որ թիւնաւոր կենդանիքն են, որ մահաբեր թիւնք ունին և վնասիչ են մարդկան՝ թէ՛ օձ են, թէ՛ լիժ, թէ՛ քարբ, թէ՛ կարիճ, թէ՛ վիշապ, ի մարդկանէ հեռացուցեալ է գնոսա Աստուած յեղը աշխարհիս, յանբնակ տեղիք կացուցեալ, անտես ի մարդկանէ, որ ո՛չ վնասեն մարդկան: Զի կենդանի կայ, որ միայն հայելովն կու սպանանէ զմարդն: Մարգարէս վիշապ օձ ասէ՝ գսատանայ կու ցուցանէ: Եւ Տէրն այլ սատանայի օձ ասէ և կարիճ. «Եւու ձեզ

1 *բնագրում՝* այնոր

իշխանութիւն կոխե՛լ զօձս և զկարիճս» (Ղուկ. ժ 19), որ է սատանայ և դևք, «Առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն» (Սաղմ. Ղ 13), որ է սատանայ:

Եւ յորժամ սատանայ այ[լ] վիշապ կոչի և իժ և քարբ և օձ և կարիճ, ապա յորժամ զնոսա հեռացոյց ի մարդկանէ և յանապատ բնակեցոյց, զի մի՛ վնասեսցեն մարդկան, զսատանայ այլ ոմն է՞ր չի հեռացուցաներ ի մարդկանէ և յանբնակ տեղիք արգելեալ զնոսա, որ չի վնասեն մարդկան: Թէ իմանաս, սոքա այլ այսպէս են: Զի ոմանք ի յոդդ են արգելեալ՝ ի վեր ի խաւարային տեղիքն, և զոմանս ի խորս անդնդոց է արգելեալ և կապեալ, և սակաւ մի յաշխարհս են մնացեալ և կու շրջագային ի մէջ մարդկան: Եւ դարձեալ ո՛չ են հեռացեալ, այլ ի մէջ մարդկան է թողեալ զնոսա Աստուած, զի ծանիցի և երևի սկարուքիւն նորա, որ ո՛չինչ կարեն վնաս առնել մարդկան, զի որ կամի՝ կարէ յաղթել նմա:

Դարձեալ. թէպէտ յաշխարհի են դևք և սատանայ, սակայն որոշեալ է նոցա տեղիքն: Եւ յանապատի են բնակեալ, այսինքն՝ ի նոսա[1] է բնակեալ, որ անապատ են ի խնամոցն Աստուծոյ և անապատ են ի բարեաց գործոց, և թափուր և դատարկ մնացեալ յոգիս անպտուղս, և խոպանացեալ ի բարեաց գործոց, որք ապառաժք և տատասկամածք են և փշաբեր՝ ի նոսա է բնակեալ: Ո՛չ ի շէն ոգիսն բնակեն, որ շէն են բարեգործութեամբ, այլ յանապատացեալսն ի բարեաց: Որպէս Կայեն, որ անապատեալ էր ի բարեաց, որչափա՛ւ յոգոջ նորա կամակար վիշապն, և հալածեցաւ նա երեսացն Աստուծոյ:

Որպէս Իսաւուղ չար էր և պիղծ, Հոգին Սուրբ հեռացաւ ի նմանէ, և այսն չար բնակեցաւ ի նմա և կու տանջէր զնա: Որպէս Յուդայ, որ չար էր, եմուտ ի նա սատանայ և մատնեաց զՔրիստոս և խաչել ետ, և ինքն հեռացաւ յԱստուծոյ և գնաց խեղդեա-

---

1 *բնագրում՝* ճոքա

*ցաւ: Որպէս դպիրքն և փարիսեցիքն[1], սատանայ ի նոսա բնակեցաւ, որ չարք էին: Եւ այլ բազումք, որ չարք էին, նոքա տեղիք էին սատանայի: Եւ ո՛չ է պարտ երկն[չ]ել մեզ ի նոցանէ, այլ՝ պատերազմել և յաղթել զնոսա: Զի մեզ զէն ետ Քրիստոս զխուզն օծմանն, այսինքն՝ զմեռոնն, և սատանայի դեղ սպանման և մեզ հնար փրկութեան: Եւ զօրէն կռուոյն[2] այլ ուսոյց մեզ, թէ ո՞րպէս պատերազմիմք ընդ նոսա և յաղթեմք զնոսա:*

*Նա ամբարտաւանութեամբ կործանեցաւ, և մեք զխոնարհութիւնն ստանամք և խոնարհութեամբ յաղթեմք նմա: Մեք կանգուն եմք, և նա առ ոտս անկեալ է. «Տեսանէի, ասէ, զսատանայ անկեալ յերկնից» (Ղուկ. ժ 18): Վասն որոյ ո՛չ է երկիւղ յանկելոյն, եթէ մեք ո՛չ վատանայցեմք, այսինքն՝ ծուլանամք: Նա միայն կռուի, և Քրիստոս մեզ զօրավիգն է և օգնական, և մեք ունիմք զսուսեր հոգւոյն և հալածեմք զնա, և նոքա ո՛չ ունին, ապա չէ ինչ դժուարամարտ մարտնչել ընդ նոսա: Խոցոտեցի աստուածութեան սուսերաւ՝ խոնարհութեամբ և համբերութեամբ, որով և Յոբն յաղթեաց ախոյանին:*

**Պատերազմեցաւ, և նախատանօք արձակեցէ զնոսա** *(Իէ 8):*

*Որպէս յԵգիպտոս արար: Զի պատերազմեցաւ ընդ նոսա Աստուած՝ ընդ եգիպտացիսն և ընդ փարաւոն, և տանջեաց զնոսա և նախատեաց զնոսա, և ապա եհան զժողովուրդն: Նոյնպէս զբաբելացիքն ի ձեռն մարացն և պարսից նախատեաց և տանջեաց, և եհան զժողովուրդն, որ եկին յԵրուսաղէմ: Նոյնպէս ընդ ասորոցն պատերազմեցաւ Աստուած և նախատեաց ի ձեռն հրեշտակին, և արձակեաց և ազատեաց զժողովուրդն իւր ի նոցանէ:*

---

1 *բնագրում՝* փարիսեցիցն
2 *բնագրում՝* կովոյն

**Ծաղիկ թօթափեալ ի փառաց** *(ԻԸ 1)*:

*«Ծաղիկ և պսակ» զԹագաւորն ասէ, քանզի ո՛չ ինչ օգուտ է պսակ ի գլուխ Թագաւորի, եթէ ո՛չ զօրէն Թագաւորութեան լցցէ, և մինչ արտաքոյ օրինաւոր իշխանութեանն իցէ՝ վատթար ևս քան զռամիկն է: Եւ զի՞նչ է օրէն Թագաւորաց, որ Թագաւորն ունենայ: Քաղուածուն գրած է, անդ տե՛ս Թէ ուզես: Զայս և քահանայից ասել ոք՝ ո՛չ սխալ է, այսինքն՝ Թէ քահանայն զքահանայութեան օրէնքն ո՛չ ունէ, վայրապար և անօգուտ է նորա քահանայութիւնն, խոտան և անպիտան է: Եթէ աղն անհամեցի, ի՞ւ յաղեսցի, աղին այն մէկ համն է որ ունի, Թէ զայս չունենայ՝ անպիտան է: Ո՛չ քար է յորմում դնեն, ո՛չ հող է, որ սերմն բուսուցանէ, այլ կոխան լինի մարդոյ և անասնոց, և փշրի և կորնչի: Թէ՛ եպիսկոպոս է, Թէ՛ վարդապետ է, Թէ՛ կաԹուղիկոս է, յորժամ զօրէնքն և զգործն ո՛չ ունենայ, վայրապար է և անօգուտ: Զի նոքա, որ նուաստ են և փոքունք, ո՛չ պահանջի ի նոցանէ կարդ ուղղութեան, որպէս յառաջնորդացն պահանջի: Զի սոքա վերակացուք են և առաջնորդ[ք], պիտիր ի վերայ ժողովրդեանն կենան և հային, Թէ ո՞րն է Թիւր և ծուռ՝ զայն ուղղեն, ո՞րն է պռունիկ կամ ո՞րն է յիշոցնասու և այլն՝ և ուղղեն: Իսկ այն, որ նուազունքն են և փոքունքն, միայն զինքեանս ուղղեն և ո՛չ զայլ ոք:*

*Մեծութիւն և փառք ծաղկի նման է, անցաւր է, շուտով Թօթափի և կորնչի: Զի ինչ յաշխարհի է՝ անցաւոր է, և զօրէն անուի կու հոլովի՝ մե՛րթ ի վեր և մե՛րթ ի խոնարհ: Զի այն, որ աղքատն է, ի մեծութիւն կու ելանէ, և մեծատուն՝ ի վայր կու անկանի յաղքատութիւն: Այն, որ Թագաւորութիւն չունենայ, ի Թագաւորութիւն կու բարձրանայ, և այն, որ Թագաւորն է, ի Թագաւորութենէ կու անկանի ի վայր: Անուի նման է, որ կու հոլովի, մին կողմն ի վեր կու ելանէ և միւսն ի վայր կու իջանէ: Եւ դարձեալ այն, որ ի վայր իջաւ՝ ի վեր կու ելանէ և բարձ-*

*բանայ, և այն, որ ի բարձր է՝ կու իջանէ ի վայր: Եւ այնպէս ի փոփոխման է և ի գնացումն, զոր ինչ յերկրի է:*

*Զի թէ ժամանակն կայուն ո՛չ է, որ մի ժամ ոկայ, ո՛չ կարէ առնուլ և կամ դադարել, այլ միշտ յընթացման է: Նոյնպէս զոր ինչ ժամանակիս է՝ զկայ ո՛չ առնու, այլ փոփոխի և գնայ: Իսկ հանդերձեալ կեանքն, որ մտանեն, ո՛չ է փոփոխական, այլ՝ կայուն և հաստատ: Բազում օրինակ կայ մեծատանց: Զի որպէս ալին բարձրանայ զնաւն ընկղմէ, և թէ ո՛չ ընկղմէ՝ ի կասկածի կայ թէ ընկղմի: Նոյնպէս մեծատունն հանապազ ի կասկածի կայ: Դարձեալ. մեծատան բարձրանալն սկիզբն [է] անկանելոյ: Յորժամ թագաւորութիւն ելանէ ո.ք, սկիզբն է որ անկանի: Յորժամ յիշխանութիւն ելանէ ո.ք, սկիզբն է նորա, որ յիշխանութենէն անկանի ի տրտմութիւն և այլն: Զի տուն, որ բարձր է շինած, դիւրաւ վնասի ի հողմոց: Այսպէս երևելի մարդիք առաւել վնասին ո՛չ միայն յօրհասէ, այլ և ի նենգութենէ և ի չար լեզուաց մեռանին և ի թագաւորաց և յիշխանաց և յայլոց: Եւ որոց նուազ կեանք իցեն՝ խաղաղական կան:*

**Ահաւասիկ սաստիկ և խիստ բարկութիւն Տեառն իբրև զկարկուտ իջեալ՝ և ո՛չ իցէ յարկ, և իբր[և] զբռնութիւն հեղեղաց ջուրց բազմաց, որ ողողէ զերկիր** *(ԻՀ 2):*

*Ի բարկութիւնն Աստուծոյ ասէ, որ պատժէ զմեղաւորն: Յորժամ ի բարկութիւն շարժի և պատժէ, ո՛չ է հնար զբարկութիւն և զպատուհասն յետս դարձուցանել կամ խափանել: Որպէս կարկուտ սաստիկ գայ ի վերայ մարդոյ գլխոյն, և տեղիք չի լինի, որ մարդն ի ներքոյ մտանէ՝ կա՛մ քար, կա՛մ կառ, կա՛մ տուն, կա՛մ այլ ինչ, և կարկուտն հարկանէ զգլուխն: Նոյնպէս յորժամ ի պատժել սկսանի Աստուած, այլ ազատելոյ ճար չկայ: Կամ հեղեղ ելանէ սաստիկ, և մարդ կամի, որ արգիլէ զհեղեղն, այլ ճար չկայ արգելելոյ, այլ գնայ հեղեղ ջուրն և զոր ինչ գտանէ՝ առնու և գնայ, հեղգուցանէ թէ՛ մարդ թէ՛ անասուն: Նոյնպէս յորժամ ի*

*վրէժխնդրութիւն շարժի Աստուած և ի պատժել սկսանի, այլ ոք պհրամանն Աստուծոյ ո՛չ կարէ յետ դարձուցանել: Ապա յառաջն, որ դեռ չէ ի բարկութիւն շարժել և դեռ չէ ի պատժել սկսեալ, գոյ հնար զպատիժն յետ դարձուցանել աղօթիւք և պաղատանօք և աղաչանօք, լալով և արտասուօք: Զի ի կատարածի, որ բարկանայ Աստուած մեղաւորացն և ասէ. «Երթա՛յք յինէն, անիծեա՛լք, ի հուրն յաւիտենական» (Մտթ. ԻԵ 41), այլ զնոյն հրամանն ո՛չ ոք կարէ յետ դարձուցանել կամ բարեխօսել և պատել ի տանջանացն՝ ո՛չ ոք յերկնաւորաց և ո՛չ յերկրաւորաց, ո՛չ ի հրեշտակաց և ո՛չ ի մարդկանէ: Եւ ո՛չ հնար կայ փախչել կամ թաքչիլ: Զի զկայեն պատուհասեաց, և ո՛չ ոք կարաց յետս դարձուցանել: Զջրհեղեղացիքն պատուհասեաց Աստուած և զամենայնան առ հասարակ կորոյս, և ո՛չ ոք կարաց զպատուհասն յետս դարձուցանել: Բարկացաւ Աստուած և զՍոդոմ և զԳոմոր հուր և ծծումբ իջոյց և այրեաց, և ո՛չ ոք կարաց զպատուհասն յետս դարձուցանել: Զեգիպտոս տանջեաց ժ (10) հարուածովք ի ձեռն Մովսէսի, և ո՛չ ոք կարաց պատել զնոսա կամ զպատուհասն յետս դարձուցանել: Փարաւոնի բարկացաւ Աստուած և զինքն իւր զօրօքն ի ծովու յատակն ընկղմեաց, և ո՛չ ոք կարաց զպատուհասն յետս դարձուցանել: Բարկացաւ Աստուած և հուր իջոյց և զԱբիրոն այրեաց և զԴաթան, զերկիր պատուեաց և իւրայնօքն ի խորս անդնդոց արկ, և ո՛չ ոք կարաց զպատուհասն յետս դարձուցանել, զոր արկ ի վերայ նոցա: Հրէից ազգին և գպրացն և փարիսեցոցն, որ զՔրիստոս խաչեցին, բարկացաւ և ի գերութիւն մատնեաց, և ո՛չ ոք կարաց զպատուհասն յետս դարձուցանել: Նոյնպէս և յորժամ յաղագս մեղաց բարկանայ և ի վրէժխնդրութիւն շարժի[1] և պատուհասէ զմեղաւորն, ո՛չ ոք կարէ զպատուհասն յետս դարձուցանել: Վասն այն ասէ մարգարէս. «Անհաւասիկ սաստիկ և խիստ բար-*

---

1 *բնագրում՝ շարչի*

կուԹիւն Տեառն իբրև զկարկուտ իջեալ՝ և ո՛չ իցէ յարկ, և իբրև [զ]բռնուԹիւն հեղեղաց ջուրց բազմաց, որ ողողէ զերկիրը»:

**Յաւուր յայնմիկ եղիցի Տէր զօրուԹեան[ց] պսակ յուսոյ՝ գործեալ ի փառս մնացեալ ժողովրդեանն** *(ԻՀ 5)*:

*Այսինքն՝ տանն Յուդայ: Զպսակսն, զոր ասէ «գործեալ», ի վերին փառացն և ի զօրուԹենէ գործեալ և բոլորեալ, և ո՛չ Թէ՝ յերկրէ: Եւ այն պսակն, որ ի փառացն և ի զօրուԹենէն Աստուծոյ գործեալ է, քան զամենայն զարդ որ կան, լուսատեսլապոյն է, այսինքն՝ քան զարեգակն և քան զլուսին և զաստեղս, որ զարդ և զարդար[ան]քն են երկնից, քան զնոսա լուսաւորապոյն է այն պսակն: Եւ զնոյն պսակն հասարակ և հաւասար ամենեցուն է պատրաստել Աստուած՝ աղքատաց և ծառայից, արանց և կանանց, մեծամեծաց և փոքունց: Եւ ո՛չ անարժան և ամօԹ համարի Աստուած պսակեալ զայնպիսիսն, միայն Թէ արժանի այնմ զգլուխն պատրաստեցեն: Իսկ այս պսակն ո՛չ ի պատուական նիւԹոց երկրի կազմին, այսինքն՝ ի քարանց, կամ ի պատուական ականց, կամ ի մարգարտոյ կամ յոսկւոյ, արծաԹոյ, այլ՝ ի յուսոյ և ի փառաց և ի զօրուԹենէ: Յոյսն ի մեզանէ լինի, որ յուսամք այն փառացն և պսակացն: Յայնժամ Աստուած յիւր փառացն և աստուածային զօրուԹեամբն կազմէ և գործէ զպսակն և պարգևէ մեզ, որ վայելուչ է քան զամենայն վայելչուԹիւնս, որ կան յաշխարհի: Որով և Պօղոս պարծէր այս յուսով, որ պսակելոց էր. «Պարծիմք, ասէ, ի նեղուԹիւնս մեր» (Հռոմ. Ե 3): Զի այն նեղուԹիւնն, որ կրեն յուսով, բազում փառաց լինէր պատճառ նմա: Զի առ յուսով կու պսակին[1] զայն արդարքն, և ար(ն)դ՝ արդեամբ և ճշմարտուԹեամբ, հոգով և մարմնով:

---

1 *բնագրում՝* զպսակն

**Ամենայն սեղանք նոցա լի են նաւտուածով և փսխածով** *(ԻՀ 7[1]):*

*Մեկնիչն ասէ զայս նոցա, որ զգինին ըմպէին, և սեղանն որպէս լինի «նաւտուածով և փսխածով»: Զի յորժամ արբենայ մարդ, այլ ի վեր չի կարեր ելանել և ի դուրս գնար, այլ ի վայր կու պառկի ի մօտ սեղանն և կու փսխէ, և փսխածն կու ելանէ և լցուի ի սեղանն, և փորն ի դուրս կու ելանէ և գնայ լցուի ի սեղանն: Զի զկերակուրն, որ ուտեն, գնայ իջանէ յորովայնն, և ի թափանն ի վայր իջանէ և ի դուրս ելանէ: Թէ մարդ զկերակուրն կարաց մարսել, ներքևու կու ելանէ ի թափանն ի դուրս, և թէ ո՛չ կարաց մարսել զկերակուրն՝ յետ կու դառնայ և ի բերանն ի դուրս ելանէ: Թէ մարսեալ էր, ի ներքևու պիտիր ելանէր, երբ ո՛չ կարաց՝ ի բերանն ի դուրս դարձաւ: Երկուքն միապէս է, զի բերանն զոռու[2] գործն արար: Իբրև ի կոխածէ և ի նստածէ գարշէին նոքա ի բանէն Աստուծոյ, յորժամ լսէին, որ քարոզէին նոցա և խրատէին զնոսա մարգարէքն, վասն այն այսպէս եղեն նոքա:*

**Եղաք ուխտ ընդ դժոխս և ընդ մահու դաշինս կռեցաք** *(ԻՀ 15):*

*Մեղք դաշինք են ընդ մահու և ընդ դժոխս, որպէս իսկզբան Ադամայ եղև, զի ասաց Աստուած, թէ՝ «Ուտիցես՝ մահո՛ւ մեռանիցիս» (հմմտ. Ծննդ. Բ 17): Հաւանեցան և թողին զառաջինն, այսինքն՝ զԱստուծոյ հրամանն, և լսեցին զվերջինն, այսինքն՝ զօձին, թէ՝ «Ուտիցես՝ Աստուած լինիս» (հմմտ. Ծննդ. Գ 5), և կերան: Եղեն դաշինք ընդ մահ և ընդ դժոխս, զի յետ[3] ժամանակի մեռաւ*

---

1 *C գլխահամարը և տնահամարը մեջբերված է ըստ ձեռագրի 174ա թերթի լուսանցքի հղման, որը չի համապատասխանում Աստվածաշնչի՝ Ջոհրապյան հրատարակության նշված հատվածին, որն է.* «Զի նոքա գիւնով մոլորեալ են, մոլորեցան վասն գքոյն. քահանայն և մարգարէ յիմարեցան վասն գքոյն, ընկղմեցան վասն գինւոյ, դանդաչեցին յարբեցութենէ գքոյն, մոլորեցան, զի այն ինքն է յիմարութիւն» (տե՛ս Աստվածաշունչ, Վենետիկ, 1805, էջ 506):

2 *բնագրում՝* զոռու

3 *բնագրում՝* յետոյ

*մահուամբն: Այսպէս և դաշինք է եդեալ Աստուած ընդ մեզ:* «Քաղցեայ՝ և ետուք ինձ» *(Մտթ. Ի՟ե 35), և այլ բազում թէ կատարեմք՝ բարի է, և թէ պներհակն առնեմք՝ դնեմք ուխտ ընդ մահու և ընդ դժոխս: Թէ ոք յԱստուծոյ օգնականութենէն թողեալ լինի, առանց մըրկի դիւրաւ ծախի: Ինամքն Աստուծոյ է, որ կու պահէ զմարդն: Յորժամ Աստուած զիւր խնամքն բառնայ*[1] *ի մարդոյն առանց պատուհասին Աստուծոյ, զի թէ Աստուած այլ չպատուհասէ՝ դիւրաւ կորնչի. կա՛մ գազանքն պատառեն, կա՛մ ի քար ի վայր անկանի կամ ի ջուր, կա՛մ սպանանեն, և այլն: Թէ որպէս և այլ չար գործէ մարդ և ստախօս լինի, ստութիւնն կարող է զինքն կորուսանել և կործանել: Զոր օրինակ՝ ծաղիկ լինի, ի գարնանային ժամանակն խորշակն ի վերայ անկանի՝ չորանայ և կորնչի և փշրի: Կայենի եհարց Աստուած.* «Ո՞ւր է յԱբել եղբայր քո» *(Ծննդ. Դ 9): Սուտ ասաց, թէ՝* «Ո՛չ գիտեմ, մի՞թէ պահապան իցեմ եղբօրն իմոյ» *(Ծննդ. Դ 9): Եւ ստութիւնն չար քան սպանութիւնն էր, զի սպան զեղբայրն: Եւ դեռ ո՛չ պատժեաց և ո՛չ պատուհասեաց զնա Աստուած, այլ մանաւանդ յերկնից յերկիր խոնարհեցաւ և յապաշխարութիւն կամեցաւ կոչել: Յայնժամ ստեաց, ապա՝ պատուհասեաց զնա: Եւ մարգարէն Դաւիթ ասէ.* «Կորուսանես զամենեսեան, որ խօսին սուտ» *(Սաղմ. Ե 7): Թէ Աստուած կորուսանէ, ո՞վ է որ կեցուցանէ: Եւ. Սողոմոն ասէ.* «Պի՛ղծ են առաջի Տեառն շրթունք սուտք» *(Առակ. Ը 7): Եւ Քրիստոս հրամայէ.* «Որ սուտ խօսի՝ սուտ է և հա՛յր նորա» *(Յովհ. Ը 44)՝ սատանայ: Զի ամենայն որ սուտ խօսի, ի վայր անկանին երեսք նորա ամօթով, որպէս կայենին առաջի Աստուծոյ: Այնմ, որ գծածուկսն տեսանէ, վասն որոյ չէ պարտ յուսալ ի խաստութիւն կամ յանձին*[2] *գործութիւն:*

---

1 *բնագրում՝* բառնաց
2 *բնագրում՝* յայնձին

**Եւ եդից զողորմութիւն իմ ի կշիռս** *(ԻԸ 17)*:

*Եթէ ողորմութեամբ ո՛չ դատեցի՝ ի դատաստանաց նորա ո՛չ ոք ապրեցի: Զի զամենայն, զոր ինչ գործ առնէ Աստուած ընդ մարդոյս, ողորմութեամբ խառնեալ է: Յայս կեանքս իմացիր զողորմութիւն առնելն, այլ հանդերձեալն ողորմութիւն ո՛չ է, զի արդարապէս առնէ զդատաստանն առանց ողորմութեան: Իսկ աստ առանց ողորմութեան ո՛չ է, զի ողորմութիւնն և արդարութիւնն խառնեալ է ընդ միմեանս: Զի այն, որ զմեղաւորքն տանջէ և պատուհասէ յայս կեանքս, այն արդարութիւն է: Իսկ այն, որ աստի կենացս տանջանացս ի հանդերձեալն ազատի և կամ թեթև լինի տանջանքն, այս վասն իւր ողորմութեանն և բարերարութեանն է:*

*Դարձեալ. այն, որ զարդարքն պսակէ և վարձ տայ արդարոցն, արդարութիւն է, զի վասն աշխատանացն տայ զվարձն: Իսկ այն, որ փոքր ժամանակի որ աշխատին՝ զյաւիտենական կեանքն տայ, այն ողորմութիւնն Աստուծոյ է: Դարձեալ. արդարոցն զփոխարէնն տալ և հատուցանել՝ արդարութիւն է, իսկ մխոյն հարիւրապատիկ և հազարապատիկ հատուցանել՝ ողորմութիւնն Աստուծոյ է այն:*

**Արջնդեղ և չաման** *(ԻԸ 25)*:

*Սոքա հունդք են, որ յայգիքն կու սերմանեն, և բուսանի: «Արջնդեղ և չաման» և այլ բանջարք*[1]՝ *սոքա սակաւ նպաստ և օգնական լինին մարդոյս ի կերակրելն, զի սոքա առանց հացի ո՛չ կարեն պահել զմարդն կենդանի: Զի հացն է կերակուր, որ կենդանի կու պահէ զմարդն: Ըստ այնմ՝ «Հաց հաստատէ զսիրտս մարդոյ» (հմմտ. Դատ. ԺԹ 5, 8): Եւ սոքա զհին օրէնքն նշանակեն: Այսպէս հին օրէնքն ո՛չ զօրէին զարդարութեան կեանս տալ, զի հին օրէնքն ո՛չ կարէին արդարացուցանել զմարդն, զի ո՛չ կարէին զսկզբնական մեղքն բառնալ, և ո՛չ ներ-*

1 *բնագրում՝* բանչարք

գործական մեղացն թողուլթիւն կարէին առնել, ո՛չ ի ժժոխոցն ազատել, և ո՛չ զարքայուլթիւնն երկնից ժառանգեցուցանել կարէին տալ: Այլ միայն զհաւատքն կարէր ուսուցանել, որ կու հաւատային զԱստուած: Իսկ ցորեան և գարին պահեն զկեանս մարդոյն, զի զսոսա ճաշակելով կենդանի կու մնայ մարդն: Եւ սոքա զաւետարանական և զնոր օրէնքս նշանակեն, որ զարդարուլթեան կեանս հաստատէ ի մեզ: Զի նոր օրէնքն զսկզբնական մեղքն եբարձ, զներգործականն կարէ թողուլ, զի զժոխք աւերեցաւ, արքայուլթեան երկնից դուռն բացեալ եղև, և զկեանն յաւիտենական ժառանգեցուցանել ետ:

Արջնգեղն և չամանն փոքր են, և ո՛չ է կ[ա]րօտ, որ «կամնասայլիւք» (ԻՀ 27) կա[լ]սեն և մանրեն և զհունդն առնուն, այլ «գաւազանաւ» (ԻՀ 27) ծեծեն և թօթափի հունդն ի վայր. նշանակէ զխրատ ժողովրդեանն Աստուծոյ, զի փոքր են և նուազ: Զի յորժամ կամէր պատուհասել զնոսա Աստուած, ի ձեռն երկրաւոր թագաւորաց խրատեն զնոսա, որ տանջէին զնոսա: Իսկ ցորեան և գարին «կամնասայլիւք» կա[լ]սեն և մանրեն և զփոշին հոսեն՝ նշանակէ զմեծ տանջանքն ասորոց, որ ի ձեռն հրեշտակին հրեղէն սրովն կոտորեաց: Դարձեալ. աստի տանջանքն, որ կրեն մեղաւորքն, փոքր է, և հանդերձեալն՝ մեծ է և ասստիկ: Դարձեալ. հին օրինացն տանջանքն փոքր էր, որ զանցաւորն տանջէին, զի նոցա օրէնքն մարմնաւոր էր: Զի թէ զօրէնքն պահէին՝ պատիւն և վոխարէնն մարմնաւոր էր, զոր տայր նոցա Աստուած, և թէ ո՛չ պահէին զօրէնքն՝ պատիժն և տանջանքն մարմնաւոր էր՝ կա՛մ սով, կա՛մ սուտ, կա՛մ մահ, կա՛մ գերուլթիւն, կա՛մ սպանումն, և այլն: Իսկ նոր օրինացս մեծ է թէ՛ պատիւն և թէ՛ պատիժն: Զի թէ պահեն զօրէնքն՝ պատիւն և հաստուցումն հոգևոր է յայն կեանքն երկնից արքայուլթիւնն, և թէ ո՛չ պահեն՝ պատիժն և տանջանքն հոգևոր է ի հանդերձեալն, ի զժոխքն են տանջելոց յաւիտենական: Զի խաչն յաւաչն անիծից և դատապարտուլթեան էր գործիք, զի զմահապարտն և

զօրինագանցն կախէին և սպանանէին: Գալստեամբն Քրիստոսի փրկութեան եղև անօթ և փրկութեան գործի, մեղաց լուծիչ: Յառաջն՝ զմեղաւորն խաչիւ սպանանէին, այժմ՝ զմեղքն քաւէ և սրբէ և մահու քակտումն, որ զմահն եբարձ Քրիստոս խաչիւն, և ամենայն ներհակաց խափանիչ և կորուսիչ: Զի ամենայն արարածոց և ամենայն աշխարհի պարծանք խաչն է: Զի խաչիւն պարծին ամենայն ոք: Թագաւորք և զօրք իւրեանց խաչիւն պարծին և նկարագրեն զխաչն յերեսս և ի դէմս և խաչակնքեն զինքեանս, այլ և նկարագրեն ի լանջս և ի վերայ գլխոց, ի վերայ հանդերձին կու նկարեն զխաչն: Նոյնպէս ռամիկ ժողովուրդն խաչիւն պարծին և սիրեն զխաչն: Զի շինականն զարտն, որ կու սերմանէ, նախ՝ կու խաչակնքէ զարտն և խաչ կու հանէ ի վերայ և ապա՝ կու սերմանէ: Նոյնպէս և յորժամ բուսանի, ի հնձել գայ, նախ՝ կու խաչակնքէ և ապա՝ առնու զմանգաղն և հնձէ: Նոյնպէս և ի կալն խաչակնքէ և ապա ձգէ զօրայն և կասէ: Նոյնպէս զթեղն խաչակնքէ և ապա հոսէ: Նոյնպէս զշեղջն խաչակնքէ, և յորժամ ի տուն տանի և լնու յԸշտեմարանն, և ի հորն խաչակնքէ: Այսպէս և յամենայն տեղիք զխաչն դրոշմեն: Ի խաչէն զէք խուսափեն և սարսին և փախչին: Խաչն զախտն փարատէ և զհիւանդն առողջացուցանէ: Եւ այնքան արմատացաւ հաւատ խաչելոյն, զի քան յարարչական զօրութիւնն և քան ի տնօրէնութեան նորա նշանս զխաչն առաւել կու սիրեն և պարծին, թէպէտ ամենայն տնօրէնութիւն նորա պատուելիք և փառաւոր են: Սակայն զխաչն առաւել պատուեն, որպէս որ ինքն Քրիստոս փառք կոչեաց զխաչն. «Զի Յիսուս չէ՛ էր փառաւորեալ» (Յովհ. է 39), այսինքն՝ քանզի չէ էր խաչեալ: Եւ Պօղոս ասէ. «Ո՛չ այլ ինչ պարծել, բայց միայն ի խա՛չն Տեառն մերոյ Յիսուի Քրիստոսի» (Գաղատ. Զ 14): Եւ Յոհաննէս աւետարանիչն ասէ. «Այնքան սիրեաց զմեզ Աստուած, մինչև զՄիածինն ե՛տ» (հմմտ. Յովհ. գ 16), այսինքն՝ ի խաչ և ի չար-

*չարանս: Այսու պարծին ամենայն հեթանոսք, այսինքն՝ այս պարծանօք, որ խաչն է, և հրէայքն գայթակղին:*

*Մեղաւորք հասին մարդսիրութեան և ապրեցան ի պատժոց, որքան զամենայն առաւել են ցոյցք նշանաց: Զի թէպէտ գեղեցիկ են երկինք, զի լայնատարած է զամենայն արարածս բոլորեալ և ի ծոցն իւր ունի: Թէպէտ գեղեցիկ է երկիրս յաղագս հաստատութեան, զի զամենայն ի վեր ունի, և թէպէտ գեղեցիկ է ծով, և թէպէտ գեղեցիկ է արեգակն, որ լուսաւոու է ամենեցուն, և թէպէտ գեղեցիկ է լուսինն և աստեղք՝ վասն անապականութեան, և այլ ամենայն մասունք արարծոց, յորոց պատմի սխրագործն Աստուած, այլ ո՛չ իբր ի մարդսիրութիւնն, զի մարդսիրութիւնն Աստուծոյ առաւել է քան զայս ամենայն, որ սիրեն[1] զմարդիք: Ընդ որ և Պօղոս հիանայ յաղագս մարդսիրութեանն Աստուծոյ և ասէ. «Ո՞ խորք մեծութեան և իմաստութեան Աստուծոյ» (Հռոմ. ԺԱ 33): Իսկ որոց մեծութիւն ի հասարակաց պէտս ծախիցի՝ աղքատաց և օտարաց, ճշմարիտ մեծութիւն է: Մեծութիւն վասն Բ (2) պատճառի տայ Աստուած մարդոյն, որ տայ և փրկէ զինքն ի բարկութենէ Աստուծոյ և ազատի: Այն է, որ աղքատաց և կարօտելոց և օտարաց բաշխէ և ազատի ի պատուհասեն Աստուծոյ, որպէս բազումք արարին, որպէս Յոբայն եղև: Վասն զի ամենայն աղքատաց բանայր զդրունս ապարանիցն: Զի արտաքինքն, որ անհաւատքն են, նոքա այլ զայն կոչեն մեծութիւն, որ ողորմած լինի և ողորմութիւն առնէ և աղքատաց և կարօտելոց տայ և ամենայն ումեք: Այնպիսի մեծատունն գովեն:*

*Զի որպէս ոք մի քաղցեալ իցեն և յերազի կերակուր ուտիցեն, և զարթնու՝ ո՛չ ինչ չկայ յորովայնն, դարձեալ նոյն քաղցածն է: Կամ ոք մի ծարաւ լինի, և յերազի տեսանէ աղբեր ակունք և ըմպէ ջուր, յորժամ ի վեր ելանէ ի քնոյն՝ դարձեալ նոյն ծարաւն*

---

1 *բնագրում՝* սիրէ

է, և ո՛չ լցաւ ցանկութիւն, և փափագն[1] քաղցոյն և ծարաւոյն (հմմտ. Իթ 8): Նոյնպէս որ ոք ագահ է և սիրէ զինչս զոսկի և զարծաթ, քան ի առաւել ստանայ՝ չի հագիր[2], այլ կարօտ կու մնայ: Զի մեծութիւն, որ տայ Աստուած մարդոյն, յայն պատճառին չի տար, թէ զայլ ոք նեղելոց է և նեղութիւն հասուցէ ումեք, այլ աղքատաց և կարօտելոց հաղորդեցուցանել իւր մեծութենէն, կարօտելոց և տնանկաց օգնական լինին: Զի մեծութիւնն բնութեամբ ինքն ըստ ինքեան ո՛չ բարի է և ո՛չ չար, այլ կամքն ստացողին առնէ զբարին և զչարն: Թէ՛ կամենայ զմեծութիւնն ի բարին ի գործ ածէ, և թէ՛ կամենայ՝ ի չարն: Զի թէ մեծութիւնն բնութեամբ չար էր, մեծատունք բարի ո՛չ կարէին գործել, զի բազում մեծատունք կան, որ բարի կու գործեն՝ գերի կու ազատեն, աղքատաց ողորմութիւն կու բաշխեն, զմերկն կու զգեցուցանեն, եկեղեցի կու շինեն, և այլ բարեգործութիւն: Թէ չար էր բնութեամբ՝ ո՛չ կարէին առնել զայս, և թէ բնութեամբ բարի էր մեծութիւնն՝ չար ո՛չ կարէին առնել: Այլ տեսանեմք, որ բազում մեծատունք կան, որ զչարն կու գործեն որպէս անողորմ մեծատունն: Եւ թէ բնութեամբ չար էր մեծութիւնն, թէ չար գործէին՝ անմեղադրելիք էին, և թէ բնութեամբ բարի էր, յորժամ բարի գործեր, անվարձատրելի էր: Այլ ո՛չ այսպէս: Զի թէ չար գործեն՝ պատժելոց են, և թէ բարի՝ վարձք առնուն: Ապա ո՛չ բնութեամբ չար է ինքն ըստ ինքեան մեծութիւնն, և ո՛չ բարի, այլ կամքն մարդոյն երկուքն զոր կամի զայն առնէ՝ թէ՛ չար, թէ՛ բարի: Այլ մեծութիւնն տայ Աստուած մարդոյն ո՛չ զի զէնն յանմեղի արի[ւ]ն բանայցէ և սպանցէ զանմեղն, այլ այնոքիկ, որ գողքն են և աւազակ, զայնոքիկ խրատէ և պահէ, որ վնաս չգործեն, և թէ ո՛չ լսեն՝ սպանանէ ևս: Դարձեալ. զմեծութիւնն ի բարին ի գործ ածէ, և ո՛չ ի չարութիւն և զրկել և յայլ, զի մի պատճառ լիցի հայհոյութեան Արարչին: Զի յորժամ

---

1 *բնագրում՝* փափաքն
2 *բնագրում՝* հաքիր

*տեսանեն մարդիք զնոսա յանիրաւութիւն, կու մեղադրեն Աստուծոյ, թէ վասն է՞ր ետ Աստուած նոցա մեծութիւնն զայն, յորժամ այնպիսի չարք են:*

**Վա՛յ այնոցիկ, որ խորհին զխորհուրդս խորինս՝ և ո՛չ Տէրամբ** *(Իթ 15):*

*Վասն զի Աստուած է, «զիա՞րդ թագչի ի նմանէ խորհուրդ կամ գործ, կամ բան» (հմմտ. Երեմ. ԼԲ 27). զայս նոցա ասէ մարգարէս, որ շրթամ[բ]ք միայն պատուէին զԱստուած վասն ահին Եզեկիայ*[1] *թագաւորին, և սրտիւք հեռացեալ մեկուսի էին ի նմանէ: Զի միտքն և խորհուրդքն ի չարն էր և ի կռապաշտութիւնն, սակայն երկնչէին ի թագաւորէն Եզեկիայ: Եւ յայտ անտի է, զի յորժամ մեռաւ Եզեկիայ, վաղվաղակի ի կռապաշտութիւն անկան: Զի իբրև զօդ*[2] *և զարև, կամ ևս յայտնի տարածեալ է գիտութիւն նորա առ բնաւս: Զի այն որ օդն է, զամենայն արարածս լցեալ է և սփռեալ յամենայն տեղիս: Զի օդն է կենդանութիւն ամենայն ումեք, թէ օդն չի լինէր՝ սպառէր ամենայն կենդանի և մահանան*[3]*, և հեղձամղձուկ լինէր և մեռանէր, զի օդն է տուրևառութիւն շնչոցն, և յամենայն ունգունս մտանէ և ելանէ և կենդանի պահէ, և առ ամենայն ումեք տարածեալ է: Նոյնպէս գիտութիւնն Աստուծոյ առ ամենայն տեղիս և ամենայն ումեք տարածեալ է, և զամենայն գիտէ և տեսանէ: Եւ որպէս արեգական լոյս սփռեալ և տարածեալ է յամենայն տեղիս, և տեղիք ո՛չ գոյ, որ արեգական արդ ո՛չ հասանէ և լուսաւորէ զփորուածս երկրի: Նոյնպէս գիտութիւնն և իմաստութիւնն Աստուծոյ՝ յամենայն տեղիս տարածեալ, և գիտէ զամենայն մարդոյ խորհուրդ և զգործ և զբան, զոր ինչ առնէ մարդ՝ թէ՛ չար, թէ՛ բարի: Եւ ո՛չ միայն գիտէ և ճանաչէ, այլ և զխորհուրդն, այլ և*

---

1 *բնագրում՝* Եզեկիեայ
2 *բնագրում՝* զօթ
3 *բնագրում՝* մահանայն

զայն ևս գիտէ, որ դեռ ի խորհուրդն չէ եկեալ, այլ յետոյ պիտի գայ և գործէ՝ զայն այլ գիտէ: Ապա քան ի առաւել զգործն և զխորհուրդն գիտէ և կու ճանաչէ անսխալ: Զի թէ ի մին մարդն Ադամ հայեցաւ ևետես և գիտաց, թէ որքան մարդիք ի նմանէ գալոց էին յառաջ և ծնանելոց՝ թէ՛ չար, թէ՛ բարի, թէ՛ հաւատացեալ, թէ՛ անհաւատք, թէ՛ հերձուածօղք, թէ՛ սպանողք, թէ՛ ուրացողք և թէ՛ պոռնիկ և այլն: Եւ յառաջ քան զԱդամ այլ գիտէր, ապա քան ի առաւել զխորհուրդ մարդոյն և զգործն գիտէ: Զի թէ բարեկամք բարկանան, յորժամ առանց նոցա ինչ առնիցեմք: Որչափ ևս առաւել Աստուած, յորժամ արտաքոյ կամաց նորա առնիցեմք ինչ, որպէս և նոքա ո՛չ նովաւ ինչ գործէին և թաքչել խոկային: Եւ ասէին. «Ո՞վ տեսանիցէ զմեզ կամ ճանաչիցէ զգործս մեր» (հմմտ. Իթ 15): Եւ այս անմտութիւն է կարծել՝ ո՛չ տեսանել կամ հայել Աստուծոյ յերկիր և տեսանել զգործ մարդկան: Զի սովորութիւն է մեղանչականաց հանել ի մտաց զԱստուծոյ տեսութիւնն, վասն որոյ ասէ ոմն ի սրբոցն. «Մի՛ ասիցես առից վրէժս ի թշնամոյն, այլ՝ համբեր Տեառն, զի օգնեսցէ քեզ» (Առակ. Ի 22)», և «Մի՛ ասիցես, թէ մեղայ և զի՞նչ եղև ինձ, զի Տէր երկայնամիտ է. մի ասիցես ո՞վ տեսանիցէ զիս, զի Տէր է յամենայն ճանապարհս քո» (հմմտ. Առակ. Գ 26, Լ 9), այսինքն՝ գործոց ճանապարհն: Այս իսկ է սկիզբն մեղացն ասելն՝ ո՛չ տեսանէ զայս Տէր: Թէ մարդն զԱստուած իւրն մերձ տեսանէր և տեսող մեղացն՝ ո՛չ գործէր զմեղքն: Զի թէ փոքր տղայ մի մօտ մարդոյն լինի՝ ո՛չ գործէ զմեղքն, այլ ամաչէ, քան ի առաւել զԱստուածն տեսանել իւրն մերձն՝ ո՛չ գործէ զմեղքն: Եւ ո՛չ ածեն զմտաւ, թէ աչք Տեառն բիւրապատիկ են, լուսաւոր քան զարեգակն, և տեսանէ զամենայն: Որպէս Յովսէփ արդարն առաջի աչացն միշտ տեսանէր զԱստուած և ապրեր ի շռա[յ]լն կնոջէն, զի բազում անգամ կամեցաւ և ջանաց և ո՛չ կարաց, զի կամեցաւ շինջուցանել զարեգակն և խաւար ածել տանն Յուդայ: Զի յորժամ ասէր կինն կա-

*տարել զկամքն, ասէր Յովսէփ. «Մեր ազգն զայդ գործդ ո՛չ է արարեալ, և ես ո՛չ առնեմ» (հմմտ. Ծննդ. Լ֊ 9): Դարձեալ յորժամ ասէր կինն, ասէր Յովսէփ. «Իմ Աստուածն Աբրահամու և Սահակայ և Յակոբայ Աստուածն է, և զմեղքն կու ատէ, և թէ ես զայդ գործդ գործեմ՝ կու բարկանայ և սպանանէ զիս» (հմմտ. Ծննդ. Լ֊ 9): Եւ յորժամ ըմբռնեաց կինն, փախեաւ Յովսէփ, և մնաց հանդերձն ի կնոջ ձեռքն: Յայնժամ այլ ճար չիմացաւ, աղաղակեաց բարձր ձայնիւ. «Եկայք տեսէ՛ք զԵբրայեցի ծառայս, որ կամէր զիս խայտառակել, զի կամէր մեղանչել, և ես ճիչ բարձի, եթող զգեստն առ իս և փախեաւ» (հմմտ. Ծննդ. Լ֊ 14-15): Եւ եկ այրն և գիտաց, որ կինն սուտ էր, բայց ո՛չ կամեցաւ խայտառակել զկինն իւր, ըմբռնեաց զՅովսէփ և եդ ի բանդն (տե՛ս Ծննդ. Լ֊ 20): Զի յորժամ հանապազ առաջի աչացն կու տեսանէր զԱստուած, վասն այն ո՛չ մեղանչեաց: Նմանապէս և Եզեկիայ ասէր. «Կենդանի է Աստուած, որոյ կացեալ եմ ես առաջի նորա» (Դ. Թագ. Ը 16): Իսկ Կայէն[1] ի դաշտ տանելով զեղբայրն ի զրաւ կենաց ո՛չ զմտաւ ածէր, թէ հայեցեալ տեսանէ Բարձրն ի բարձանց: Այսպէս և ոգիք վարանեալ չարեօք անտեսին զանվրէպ դատաստանն Աստուծոյ, թէև հարեալք ի խղճէ մտացն լինիցին:*

*Աստուած միայն է անեղ և ամենայն յամենայնի, զի ուր չարիք իցեն, Աստուած անդ ո՛չ է՝ քարոզեն Սուրբ Գիրքն: Զի Սողոմոն ասէ. «Սուրբ Հոգին փախչէ ի նենգութենէ և յանմիտ խորհրդոց» (հմմտ. Իմաստ. Ա 5): Թէ ուր մեղք և չարիք իցեն՝ Աստուած ո՛չ է, և Աստուած յամենայն տեղիք է, զի տեղիք ո՛չ է, որ անդ ո՛չ է Աստուած, ապա յաշխարհս ամենայն չարեօք լցեալ է: Ապա այս ո՞րպէս է: Այսպէս իմացիր, որ Աստուած ամենայն ուրեք է և յամենայն տեղիք է, և տեղիք առանց Աստուծոյ ո՛չ է: Իսկ այն մարդն, որ զմեղքն գործէ, Աստուած*

---

1 *բնագրում՝* Կայիճ

այն մարդոյն կու վախչէի, և մօտ յայն մարդն Աստուած ո՛չ է: Իսկ թէ դառնայ և ապաշխարէ, Աստուած դարձեալ կու բնակէ յայն մարդն: Եւ չարն յարահետ կորնչի, զի չարիք մարդկան գլուտք են: Սուտ մարգարէքն ճշմարտից հակառակ էին, և սէին պնոցա բանքն: Բազումք և այժմ են: Յորժամ գնան վարդապետք և քարոզեն և խրատեն, նոքա յորժամ ո՛չ կամին լսել զխրատն և դիւր չճուի նոցա, հակառակին և ասեն. «Զի ինքն ո՛չ պահէ զօրէնքն, և մեզ եկեալ կու ուսուցանէ պահել: Թէ քո բանդ ճիշտ է, նախ՝ պարտ էր որ դու պահէիր և ապա՝ մեզ քարոզէիր պահել[1]»: Յորժամ իր մի թուլութիւն տեսանի ի վարդապետն՝ այնպէս ասեն: Ասէ մեկնիչն. «Դու, որ զայդ ասես, ուսի՛ր ի Տեառնէ, թէ զինչ ասէ քեզ»: Ասաց. «Յաթոռն Մովսէսի նստան պլիւքն և վարխսեցիքն: Զամենայն, զոր ինչ ասացես և ուսուսցեն զձեզ, արասջի՛ք, բայց ըստ գործոց նոցա մի՛ առնիցէք» (Մտթ. ԻԳ 2-3), և ի նոցա գործն մի հայիք, թէ նոքա զօրէնքն Աստուծոյ ո՛չ պահեն և գործք չունին, և մեզ քարոզեն պահել զօրէնքն:

Զի թէ վարդապետն ծոյլ լինի և ազօթք ո՛չ առնէ՝ քեզ ինչ, զի քեզ զբարին կու ուսուցանէ՝ յարի կեալ և ազօթք առնել: Թէ ինքն արբեցող է, քեզ ի՞նչ վնաս, քեզ զբարին կու քարոզէ, թէ մի՛ արբենար, և այլն: Այս ե՞րբ լինի, որ ինքն ո՛չ գործէ զբարին և այլոց քարոզէ, ապա թէ լինի՝ չէ պարտ անհնազանդ լինել նմա և ո՛չ լսել: Այլ պարտ է հաւանել նորա բանին և զբարին գործել, զի թէպէտ ինքն ո՛չ առնէ, սակայն զբարին կու ուսուցանէ քեզ և ո՛չ զչարն: Զի թէ բիւր չարեօք լի է վարդապետն, լսելն չէ ինչ օգուտ աշակերտաց և ո՛չ կատարել զոր ինչ ասէ. «Զի լաւ է բան բարի, քան զտուրս բազումս» (հմմտ. Սիրաք. ԺԸ 16):

---

1 բնագրում՝ պահեալ

**Վա՛յ ձեզ որդիք ապստամբ[ք]** *(Ղ 1)*:

*«Որդի» ասելով զպատիժն ծանր երևեցուցանէ: Զի որպէս որդոյն պատիւն առաւել է քան զծառային, յորժամ հնազանդ լինի հօրն: Թէ ծառայն ապստամբ լինի, ծառային ապստամբութիւն[ն] ո՛չ համեմատի որդոյ ապստամբութեանն: Զի մեծամեծ պատիւ պարտին ծնունդք ծնողացն առնել, քան զոր ծառայք տէրանց առնեն, զի տէրն ի վերայ ծառային այնքան երախտիք ո՛չ ունի, որպէս ծնօղք ի վերայ ծննդոցն իւր[ոց]: Զի ի վերայ ծառայիցն ոսկի և արծաթ կու ծախեն և առնուն, զի զոսկին և զարծաթին կու տան և գնեն զծառայն, իսկ ի վերայ որդոցն ցաւք և երկունք ծախեն, զի ցաւօք և երկամբք և չարչարանօք ծնանին: Վասն այն յօրէնքն գրեալ է. «Որ հայհոյէ զհայր կամ զմայր մահո՛ւ վաղճանեսցի» (Հմմտ.Ղևտ. Ի 9), իսկ որ զտէրն հայհոյէ՝ ո՛չ այնպիսի ասի: Զի որդին զիւր էութիւնն և զգոյութիւնն, որ կենդանութեան է պատճառ, ի հօրէն և ի ծնողացն ունի: Յորժամ հայհոյէ՝ մահու սպանցի, զի զկենդանութեան պատճառն հայհոյեաց, զինքն մահացուցանեն և ի կենաց բառնան չարաչար մահուամբ: Իսկ այն, որ զծառայն է, զիւր էութիւնն և զգոյութիւնն ի տիրոջէն[1] ո՛չ ունի:*

*Իսկ յորժամ Աստուծոյ որդի իցէ մարդ և ապստամբի ի նմանէ, որո՞ւմ ներելոյ թողութեան իցէ արժանի: Յորժամ յԱստուծոյ փախչիցի մեղօք, եթէ յԱստուծոյ փախչի, առ ո՞վ գնայ ապաստան լինի, որ փրկէ զնա ի նմանէ: Ո՞վ զդարմանիչն իւր թողու, զով ոք առնիցէ թիկունս փրկութեան, և ո՞վ որ զնաւահանգիստ իւր քարով լնու, ո՞ւր գնաւն հանգուցանիցէ արդեօք: Զի սովորութիւն է հօրն, որ զարտմութիւն որդոյն կու փարատէ, և զամենայն պիտոյք որդոյն լցուցանէ և ուրախացուցանէ զորդին: Եւ թէ հայր այսպէս [է], որչափ ևս Աստուած, որ առաւել է քան զօրինակս, որ տամ: Որպէս արուեստաւորն առաւել է քան զգոր-*

---

1 *բնագրում՝* տէրոջէն

*ծին իւր, նոյնպէս առաւել է գուբծն և խնամքն Աստուծոյ ի վերայ մարդոյն, քան հօր ի վերայ որդոյն: Որպէս հիւան առաւել է զգործին իւր, այսինքն՝ քան զուրապն[1] և զսղոցն և այլն: Զի այն, որ հիւան է, կենդանի է բանաւոր մտաց և հանճարոյ ընդունակ և մարդ, իսկ այն, որ գործի հիւսեանն է, անբան է և անկենդան և այլն: Նոյնպէս դարբինն քան զկռանն և [զ]սալն առաւել է: Այսպէս Աստուծոյ խնամքն և գուբծն քան զմարմնաւոր ծնողացն առաւել է, և բազմապատիկ առաւել է քան զօրինակս, որ տուաք: Եթէ ի մարմնաւոր հօրէն ակն ածեմք, քան ի առաւել ևս յԱստուծոյ, որ Հայր է մեզ: Ո՛չ սակաւ ինչ մեղք են, յորժամ առանց Աստուծոյ կամացն ոք գործ ինչ գործիցէ, և որչափ պատիւ է մարդոյ զԱստուած կամակից ունել ի գործս և յիրս: Յորժամ հեռանայ և ի բաց վազիցէ ի մեղացն, ապա իմանայ զվնաս նորին և սգայ, որպէս էր յառաջն: Յորժամ սառն հալի ձմերանն, ուխք յորդին գարնան, այսինքն՝ յորժամ զմեղքն թողու, ապա իմաստութիւնն առատանայ, զի հոգիք ըմբռնեալք ի մեղս՝ ի մտաց ևս անկանին:*

**Եւ եթէ երուսաղէմ լալով եկաց՝ խնդրուածքն վճարեցին** *(համմ. Լ 19):*

*Զի թէ բարի գործք ո՛չ ունենայ մարդ, յորժամ արտասուէ և լայ մարդ առ Աստուած, զխնդրուածն կու կատարէ Աստուած առանց վարձուց ինչ, ուղղութիւն ինչ ո՛չ ունենայ, սակայն մեղք այլ չունենայ: Ապա թէ ի մէջ մեղաց [է] և լայ և արտասուէ՝ ո՛չ լսէ Աստուած: Այլ յորժամ մեղք ո՛չ ունենայ և ուղղութիւն և բարի գործք այլ չունենայ, և յայնժամ դառնայ և առ Աստուած լայ և խնդրուածք առնէ յԱստուծոյ, կու լսէ Աստուած և զխնդրուածքն կու կատարէ:*

---

1 *բնագրում՝* գուրաքն

*Զի լալն և արտասուքն զկատարեալ տրտմութիւնն ցուցանէ, որպէս որ ի ծիծաղիլն զկատարեալ ուրախութիւնն ցուցանէ, զի ժպտի՝ ո՛չ է կատարեալ ուրախ, և յորժամ ծիծաղի՝ կատարեալ ուրախ է: Նոյնպէս յորժամ տրտմի և ո՛չ լայ, ո՛չ է կատարեալ տրտմեալ, այլ սակաւ մի է տրտմութիւնն, և յորժամ լայ և արտասուէ՝ զկատարեալ տրտմութիւնն ցուցանէ: Ապա յորժամ ի լաց և յարտասուք տեսանէ Աստուած զմարդն, յայնժամ զխնդրուածքն կատարեալ է, զի կատարելապէս ունի զտրտմութիւնն: Ապա առանց վարձուց ինչ ուղղութեան. արտասուքն բաւական է, կատարեալ զխնդրուածքն: Որպէս յԵգիպտոս յորժամ լացին և աղաղակեցին ի վեր առ Աստուած և բողոքեցին, լուաւ Աստուած և փրկեաց զնոսա, զի յԵգիպտոս ուղղութիւն ինչ ո՛չ ունէին, մանաւանդ զի դեռ օրէնք այլ ո՛չ էին առեալ և օրէնք չունէին: Եւ յորժամ ի վեր առ Աստուած բողոք բարձին և աղաղակեցին և լացին, լուաւ նոցա Աստուած և փրկեաց զնոսա և ազատեաց ի տանջանացն: Զի յորժամ զկաւն կոխէին, մէկ կին մի յղի էր, ծնաւ զտղայն ի վեր կաւին յայն տեղիքն (տե՛ս Ելք Ա 13-14): Յայնժամ էառ կինն զտղայն ի վեր՝ ցեխոտ և կաւաթաթախ ի վերայ բազկին, և բարձրացոյց ի վեր առ Աստուած և ելաց և ասաց առ Աստուած. «Տէր Աստուած, այդ էր քո խոստումն և աւետիքն, որ խոստացար Աբրահամու, թէ զերկիրն աւետեաց քո զաւակացն տամ, որ գնան և ժառանգեն՝ զտուն շինեալ և զայգի տնկեալ և այլն: Եւ այժմ յայսպիսի տառապանաց և չարչարանաց միջի եմք մատնեալ ի ձեռն եգիպտացոցն, որ ո՛չ ևս թողուն, որ յղի կանայքն զտղայքն յիւրեանց տունն ծնանին»: Եւ ժողովուրդքն ամենեքեան լացին լալիւն մեծ: Ի նոյն ժամն լուաւ Աստուած և ի նոյն օրն, որ այն կինն զայն բանս ասաց: Ի նոյն ·ըն երևեցաւ Աստուած Մովսէսի և ասաց գնալ յԵգիպտոս և ազատել զժողովուրդն (տե՛ս Ելք Գ 2-10): Նոյնպէս Եսայի մարգարէն և Եզեկիայ թագաւորն և այլքն, յորժամ լուան զհայհոյութիւնն յՌափսակայ, որ պաշարեալ էր*

*զնոսա, այլ ո՛չ ինչ առաքինութիւն ունէին կամ գործեցին, այլ միայն գնացին ի տաճարն և բողոք բարձին և լացին և աղաղակեցին ի վեր առ Աստուած արտասուօք: Լուաւ նոցա Աստուած և ազատեաց զնոսա, զի ել հրեշտակն ի տաճարէն և գնացեալ սատակեաց զզօրքն Ռափսակայ ՃՁԵՌ (185 000), և նոքա ազատեցան (տե՛ս Լէ 36, Դ Թագ. ԺԹ 35):*

*Գրաւորական օրէնքն անկատար էր, և աւետարանական օրէնքն՝ կատարեալ, իսկ հանդերձեալ գիտութիւնն և օրէնքն գերակատար է: Իսրայէլացիքն թողեալ զերախտագործն Աստուածն իւրեանց և յեգիպտացիքն յուսային, և ի նոքա ապաւինէին և առ նոսա դիմէին և գնային, որ փրկէին զնոսա ի թշնամեացն իւրեանց, և նոքա հին թշնամիք էին նոցա: Նոյնպէս և այժմ յոլով մարդիք կան յաշխարհի թողեալ զերկնաւոր յոյսն՝ յանցաւոր օգնութիւնս ապաւինին՝ յինչս և ի ստացուածս և ի մեծութիւնս իւրեանց: Իսկ Աստուած ածէ ի վերայ նոցա զպատիժն, զի զնորա օգնութենէն կախեցին և ի նորա օգնութիւնն ապաւինեցին: Եւ զպատիժն վասն իւր մարդասիրութեանն տայ, զի Աստուծոյ օգնականութիւնն, որ մարդոյ օգնական լինի, ո՛չ երիվարաւ և հեծելաւ պատերազմի և յաղթէ զթշնամին, և ո՛չ սուսերաւ և ո՛չ այլ ինչ իրօք: Այլ աներևութաբար զօրութեամբ ի թիկունս հասանէ և օգնէ, որ ոք ի նա յուսանայ: Եւ թէպէտ օգնական լինի և փրկէ ի թշնամեացն, սակայն իրաց մի կարօտութիւն կու թողու ի նոսա, որ կարօտ կու մնան, որ չի հպարտանան և ի հպարտութիւն անկանին, և ո՛չ մի իրաց, այլ յոլովից կարօտ թողու, զի մի՛ հպարտասցին: Իմաստուն Աստուած իմաստութեամբ առնէ և, մանաւանդ, արդարութեամբ, զի տայ զպատուհասն, որ դառնան[1] և յինքն յուսան, որ փրկէ զնոսա, զի սպառնալն Աստուած և ի պատիժ խոստանայ: Ո՛չ վասն տանջելոյ խոստանայ, որ պատժէ և սպանանէ զնոսա, այ[լ] սպառ-*

---

1 *բնագրում՝* դառնայ

նայ վասն դարձուցանելոյ զնոսա, որ դառնան ի մեղաց և ազատին ի պատժոց և ի տանջանաց: Այսպէս և՝ սպառնալիք զեհեննոյն, որ զեհեան սպառնայ մեղաւորացն: Ո՛չ վասն այն սպառնայ, որ ի զեհեանն տանի և տանջէ զնոսա, այլ սպառնայ, զի դառնան[1] ի մեղաց և ազատին ի տանջանաց, որ ո՛չ զնան ի դժոխքն: Ապա թէ ո՛չ դառնան ի մեղաց՝ ինքեանք եղեն պատճառ տանջանացն: Զի ո՛չ տանջէ Աստուած զոք զայրացեալ մտօք, այլ վասն յուղղութիւն ածելոյ, որ կամաւ յուղղութիւն գայ, և որոց արդիւնանայ սպառնալիքն պատժոցն յանդառնալի բարուց չարութենէ, որ ո՛չ դարձաւ ի մեղաց ո՛չ յԱստուծոյ, որ սպառնացաւ: Զի կամքն Աստուծոյ այն էր, որ դառնայր ի մեղացն և ազատէր ի սպառնալեաց պատուհասէն, յորժամ ո՛չ դարձաւ՝ ինքն եղև իւր տանջանացն պատճառ: Զոր օրինակ՝ ըՀեղեղացոցն սպառնացաւ. ո՛չ վասն այն սպառնացաւ, որ ըրով կորուսանէր զնոսա, այլ զի դառնային ի մեղաց և ազատէին: Զի ի Նոյի ասաց տապան շինել, և սպառնացաւ ըՀեղեղ գալ, և յամեաց ճ (100) տարի: Եւ Նոյ ևս, յորժամ շինէր զտապանն, քարոզէր նոցա և ասէր. «Դարձջի՛ք ի մեղաց, զի վասն այն շինեմ զտապանս, որ ես իմ որդովք ի ներս մտանեմք և ազատիմք» (տե՛ս Ծննդ. է 5-10): Եւ գործիք ևս աղաղակէին, և նոքա ո՛չ դարձան ի մեղաց: Թէ՛ դարձեալ էին՝ ո՛չ բերէր ըՀեղեղ: Յորժամ ո՛չ հաւատացին և ո՛չ դարձան, ինքեանք եղեն պատճառ, որ եբեր զըՀեղեղն և կորոյս զնոսա: Նոյնպէս հրացան բարկութիւնն, որ զՍոդոմ կորոյս: ՋՂովտ, որ եղբօր որդի էր Աբրահամու, բաժանեաց զնա Աստուած յԱբրահամէ և առաքեաց ի Սոդոմ, որ անդ բնակէր, և քարոզէր և խրատէր զնոսա դառնալ յայնպիսի պղծութենէն (տե՛ս Ծննդ. ԺԳ 11-13): Եւ հրամանաւն Աստուծոյ սպառնայր նոցա պատուհասն, և նոքա ո՛չ դարձան: Յորժամ ո՛չ դարձան, ինքեանք եղեն պատճառ տան-

---

1 *բնագրում՝* դառնայ

*ջանացն իւրեանց, որ Հուր յերկնից էջ ի վերայ նոցա: Թէ՛ դարձեալ էին՝ ո՛չ իջանէր ի վերայ նոցա Հուր: Զի կամքն Աստուծոյ այն էր, որ դառնային ի մեղաց և ո՛չ տանջէին: Նոյնպէս մեղաւորացն ներէ մինչև ի ծերութեան ժամանակն, թէ դառնան ի մեղաց, և ապառնան նոցա տանջանք: Իսկ յորժամ ո՛չ դառնան ի մեղաց, մեռանին և գնան ի դժոխքն: Եւ ո՛չ թէ յԱստուծոյ էր, որ ապառնացաւ տանջանք, այլ ինքեանց կամաց, որ ո՛չ դարձան ի մեղաց: Զի [ի] Հին օրէնքն պատիւն մարմնաւոր էր և պատիժն մարմնաւոր, իսկ ի Նոր օրէնքս թէ զպատուիրանն Աստուծոյ պահեն՝ պատիւն հոգևոր ի հանդերձեալն [է], և թէ ո՛չ պահէն՝ պատիժն ի հանդերձեալն է: Զի զմեղաւորն ասա ո՛չ պատուհասէ, այլ ի հանդերձեալն: Նոյնպէս արդարոց փառք և պատիւն ի հանդերձեալն է: Զի նոքա, որ արդարքն են, դեռ զիւրեանց փառքն ո՛չ են առեալ, մինչ որ դատաստանն լինի, նոյնպէս և մեղաւորքն ի դատաստանին տանջելոց են: Զի մեք տեղեակ եմք հանդերձելոցն, զիտեմք, որ դատաստան կայ և հատուցումն, զի անձնիշխանէ մարդոյս գեհեն է խոստացեր: Եւ աւետիք խոստմունքն բաւական են, թէ՛ կամի զբարին գործէ և թէ՛ կամի զչարն, և նոքա, որ թշնամիքն են և չար՝ անապական բարութիւն: Զի նոցա բարկանայ Աստուած ո՛չ թէ [յ]ուղղութիւն գան, զի յուղղութիւն ո՛չ գան, այլ բարկանայ և տանջէ զնոսա և պատուհասէ: Այլ հաւատացելոցն այսպէս ո՛չ է, որ ապառնայ, այլ ապառնայ զի յուղղութիւն գան: Քառասուն օր մնալոց էր ժողովուրդն յանապատն և ապա գնային յերուսաղէմ: Իսկ վասն առաւել չարեաց նոցա խ (40) ամ պահեաց և շրջեցոյց զնոսա յանապատին: Եւ զնոսա, որ յեգիպտոս էին անեալ և վարժեալ, և զնոցա չարութիւնն էին ուսեալ, զնոսա զամենեսեան տապաստ արկ յանապատին: Եւ զորդիքն նոցա, որ յանապատին ծնան և անան, այսինքն՝ ի ձեռն Մովսէսի, զնոսա տարաւ յերուսաղէմ:*

**Խորհուրդք արդարոց հաստատուն կան** *(համմա. Լբ 8)*:

*Այսինքն՝ Եզեկիայ: Զի հայի Աստուած և տեսանէ զխորհուրդ արդարոցն, որ հաստատ է, ինքն այլ օգնական կու լինի, և հաստատ և ամուր կու պահէ զբարին առ նմա: «Խորհուրդք արդարոց հաստատուն կան», իբրև զսուրբ մանկանցն և զայլ մարտիրոսացն, զի ո՛չ շրջեցան միտք նոցա յԱստուծոյ առ կուռսն: Պօղոս առաքեալն ի բազում տեղիք գնացեալ քարոզեաց, և թէպէտ հաւատացին, սակայն բազում չարչարանք տային և ապա հաւատային: Իսկ նա ի բազում չարչարանացն ո՛չ պակասեցաւ և ո՛չ խափանեաց զիւր քարոզութիւնն: Թէպէտ բազմադիմի չարչարանօք չարչարէին զնա յամենայն տեղիս, սակայն նա հաստատապէս կայր ի սէրն Քրիստոսի, և քարոզէր: Զի որպէս Աստուծոյքն ամենայն հաստատուն են, զոր ինչ բարի խոստացեալ է արբոցն, նոյնպէս և ծառայիցն նորա սէրն հաստատեալ է ի վերայ նորա: Որպէս և Պօղոս ասէ. «Ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի» (Հռոմ. Ը 35). ո՛չ երկինք և ո՛չ երկիր և ո՛չ այլ արարածք թէ իցեն՝ ո՛չ կարեն մեկնել: Վասն է՞ր. «խորհուրդք արդարոցն հաստատուն» են յառաքինութիւնն և ի սէրն Քրիստոսի: Նախ՝ զի հային ի խոստմունքն և պարգևն, զոր ինչ խոստացեալ է Աստուած, անփոփոխ է և ճշմարտապէս տալոց է, վասն այն՝ ինքեանք այլ իւրեանց առաքինութիւնն անփոփոխ են և հաստատ: Երկրորդ՝ զի առաքինութիւնն բարի է և անդրջանալի, զի որքան զբարին գործէ, առաւել կու յորդորի: Եւ ո՛չ է իբրև զմեզք, զի յորժամ գործէ զմեզքն, կու զղջանայ և փոշիմանի: Եւ կու փոփոխի, թողու զմեզքն և դառնայ և զբարին գործէ: Իսկ բարին անդրջանալի է, վասն այն՝ ո՛չ փոփոխին միտք և խորհուրդք արդարոցն ի բարոյն: Երրորդ՝ զի բարոյն և առաքինութեանն Աստուած է օգնական, վասն այն՝ ո՛չ փոփոխին: Չորրորդ՝ զի բարին մնացական է: Եւ զայս, որ «խորհուրդք արդարոցն հաստատուն»՝ է ի բարին և յառաքինութիւնն և ի վերայ սիրոյն Քրիստոսի: Ի Տեառնէ ուսանիմք, որ ասէ.*

*«Ամենայն, որ լսէ զբանն իմ և առնէ, նման է առն, որ փորեաց և խորեաց զաւունն իւր և ե՛դ զհիմն նորա ի վերայ վիմի, զի յառնել հեղեաց վտրձանաց ո՛չ կարացին շարժել զնա» (հմմտ. Մտթ. է 24-25):*

**Քրձապդածք**[1] **եղերուք** *(ԼԲ 11):*

*Վասն է՞ր. քուրձ զգենուն յետ մեղացն: Նախ՝ զի զլոյս բնական օրինացն շինջուցին յինքեանս և խաւարեցուցին, վասն այն՝ քուրձ զգենուն: Բնութեամբ զբարին եղեալ է Աստուած ի մարդոյն, որ զբարին կու սիրէ: Յորժամ զբարին թողու և զմեղքն գործէ, քուրձ զգենու: Երկրորդ՝ զլոյս առաքինութեանն շինջուցին և զմեղքն գործեցին՝ քուրձ զգենուն: Երրորդ՝ զլոյս օրինացն խաւարեցուցին՝ քուրձ զգենուն:*

**Յերկիր ժողովրդեան իմոյ փուշ բուսցի** *(ԼԲ 13):*

*Առ միտս՝ փուշ մեղքն է: Նախ՝ զի յորժամ գործէ զմեղքն, խղճմտանքն իբրև զփուշ խոցոտէ զինքն: Երկրորդ՝ զի յորժամ յանդիմանեն և նախատեն զինքն վասն մեղացն, այն փուշ է ինքեան: Երրորդ՝ տանջանք դժոխոցն փուշ է ինքեան: Վասն է՞ր, զսիրտն բախեն: Զսիրտն բախեն իբր զաման չարեաց, զի մայր չարեաց սիրտն է մարդոյն, զի նախ՝ ի սիրտն խորհի և ապա՝ գործէ զմեղքն: Որպէս ասէ Տէրն. «Ի սրտէ անտի ելանեն խորհուրդք չարք՝ շնութիւնք, սպաննութիւնք» (Մտթ. ԺԵ 19) և այլն: Դարձեալ. բախեն զսիրտն իբրև զաման չարեաց, իբրև շտեմարան չարեաց: Դարձեալ. որպէս զգազան քարիւ փախուցանեն, նոյնպէս զսիրտն բախելով՝ զչարն և զմեղքն փոխուացեն:*

**Ողորմեա՛ց մեզ, զի ի քեզ յուսացաք** *(Լ Գ 2):*

*Զի խնդրել ողորմութիւն յանցաւորաց է և պարտականաց: Ողորմութիւնն յանցաւորաց և անարժանիցն է, որ կու ողորմի նոցա Աստուած, յորժամ խնդրեն ի նմանէ: Իսկ արդարքն,*

---

1 *բնագրում՝* որձազգեաց *փխ* քրձազգածք

*յորժամ խնդրեն և առնուն, այն ողորմութիւն ո՛չ է, այլ արդարապէս հատուցումն է նոցա ճգնութեան և առաքինութեան, նոցա փոխարէն և վարձուց հատուցումն: Թէպէտ և արդարոցն այլ ողորմութեամբ է, զսոցա՝ փոքր բարին, ի նորա՝ մեծամեծ պարգևքն համեմատելով, որպէս ասէ Պօղոս.* «Ո՛չ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն» *(Հռոմ. Ը 18): Այլ սակայն արդարոցն և սրբոյն արդարութեամբ ասացեալ լինի խնդրուածքն, որ առնուն, և մեղաւորացն՝ ողորմութեամբ է: Որպէս այն, որ պարտ է ճ (100) դահեկան, յորժամ խնդրեալ եղև ի տեառնէն, անկեալ առ ոտն տեառն ներումն թողութեան խնդրէր՝ ասելով.* «Համբերեա՛յ, երկայնամի՛տ լեր առ իս մինչև հատուցից քեզ» *(Մտթ. ԺԸ 26): Եւ գթացեալ տէր ծառային և ողորմեալ նմա՝ շնորհեաց նմա զամենայն պարտսն:*

*Դարձեալ. որ զերիս նկանակն խնդրէր: Առաջին բարեկամն Աստուած էր, և երկրորդ՝ յետ Աստուծոյ հրեշտակք են: Յորժամ առաքեաց Աստուած զպահանջող հրեշտակն ի խնդիր հոգւոյն, յայնժամ նա բարեգործութիւն ո՛չ ունէր, որ առաջի հրեշտակին դնէր: Գնաց առ բարեկամն և խնդրեաց զերիս նկանակն, զի դիցէ առաջի բարեկամին, այսինքն՝ հրեշտակին, զհաւատոյ դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն: Զի յորժամ գործ բարութեան չունէր, յողորմութիւնն ապաւինեցաւ: Եւ դարձեալ. մոլրեալ ոչխարն ողորմութեամբ գտեալ եղև ի քաջ հովուէն: Տե՛ս, որ ողորմութիւնն մեղաւորաց և անարժանիցն է, որ կու ողորմի Աստուած, և արդարոցն արդարապէս հատուցանէ և նոցա վարձուց փոխարէն: Բայց խնդրի ասա, զի թէ՛ արդարքն են և թէ՛ մեղաւորք՝ Աստուծոյ ողորմութեանն կարօտ են և առանց նորա ողորմութեանն ո՛չ կարեն կեալ և ապրիլ: Եւ նա վասն իւր մարդասիրութեանն կու ողորմի ամենեցուն: Եւ յորժամ ողորմութիւնն յաղագս մարդասիրութեան է, պարտ էր, որ ամենեցուն ողորմեր՝ արդարոց և մեղաւորաց, արժանաւորաց և անարժանից, և ո՛չ թէ արդարոց ողորմեր և մեղաւորաց՝ ո՛չ, և ոմանց*

*ողորմեր և ոմանց՝ ո՛չ, այլ հաւասարապէս պարտ էր ամենեցուն ողորմել: Այլ այսպէս ո՛չ է, այլ ասէ.* «Ողորմեցա՛յց՝ որում ողորմեցայց, և գթացա՛յց՝ յորս գթացայց[1]» *(Ելք. ԼԳ 19, Հռոմ. Թ 15): Աստուած ամենեցուն կու ողորմի, որպէս որ արեգակն զլոյսն ամենեցուն կու ծագէ, և աղբիւր ամենեցուն կու բղխէ: Այլ որ ոք, որ խփէ զակն և կամ տկար լինի ակն, և որ ոք, որ ո՛չ գնայ աղբիւրն և առնու ջուր, ինքն եղև պատճառ և ո՛չ թէ արեգակն և աղբիւրն: Նոյնպէս Աստուած ամենեցուն ողորմի, որ ոք ո՛չ դիմեացին ի նորա ողորմութիւնն և խնդրեացեն ի նմանէ թէ՛ արդարք թէ՛ մեղաւորք, և չկամին զկեանս իւրեանց, ինքեանք զինքեանս անարժանս կացուցանեն Աստուծոյ ողորմութեանն: Յորժամ ո՛չ խնդրեն, ո՛չ առնուն: Վասն Բ (2) պատճառի զրկին յողորմութենէն Աստուծոյ: Նախ՝ որ յորժամ ո՛չ խնդրեն՝ ո՛չ առնուն, զի ո՛չ յուսան ի նորա ողորմութիւնն և ո՛չ խնդրեն՝ ո՛չ առնուն: Երկրորդ՝ յորժամ ծառայակցին իւր ո՛չ ողորմի, Աստուած իւրն ո՛չ ողորմին: Որպէս այն, որ Ճ (100) դահեկանն ողորմեցաւ և եթող, և նա գնաց և եգիտ մի պարտապան, որ պարտ էր իւրն Ծ (50) դահեկան: Եւ յորժամ ո՛չ ունէր, որ հատուցանէր, և կալեալ զնա չարչարէր: Եւ յորժամ գնացին պատմեցին այնմ, որ զՃ (100) դահեկանն եթող, յայնժամ կոչեաց առ ինքն և այլ ո՛չ ողորմեցաւ: Եւ էառ զՃ (100) դահեկանն, ասաց.* «Յորժամ դու քո ծառայակցին ո՛չ ողորմեցար, և ես քեզ ո՛չ ողորմիմ» *(հմմտ. Մտթ. ԺԸ 33): Ապա պարտ էր նախ՝ յուսալ յողորմութիւնն Աստուծոյ և աղօթիւք խնդրել զողորմութիւնն, և իւր յանցաւորին և ծառայակցին և ընկերին թողուլ զպարտսն, և ապա՝ Աստուած իւրն ողորմի: Որ ոք ողորմութեան կարօտ է և կու ցանկայ, պարտ է աղօթիւք խնդրել, և թէ ո՛չ խնդրէ յաղօթսն, ո՞րպէս առցէ, զի ո՛չ ծանր և անկար ինչ պահանջէ Աստուած և ապա՝ ողորմի.* «Հայ[ց]եցէ՛ք, ասէ, և գտջի՛ք» *(Մտթ. է*

---

1 *բնագրում՝* գթացոյց

*7, Ղուկ ԺԱ 9): Զի երեմիայ մարգարէն աղօթեաց վասն ժողովրդեանն որ յԵրուսաղէմ, և թողութիւն խնդրեաց յԱստուծոյ: Մերժեաց ի բաց զաղօթն և ո՛չ լուաւ: Վասն այս պատճառիս ո՛չ լուաւ նորա աղօթիցն, ասաց. «Թող ինքեանք աղօթեսցեն և խնդրեսցեն վասն ինքեանց, ապա կու լսեմ: Յորժամ ինքեանք ո՛չ խնդրեսցեն՝ ո՛չ լսեմ» (Հմմտ. երեմ. Է 16): Մաքսաւորն ինքն խնդրեաց վասն ինքեան աղօթելով. «Աստուա՛ծ, քաւեա՛ պիս պմեղաւորս» (Ղուկ. ԺԸ 13) և այլն: Եւ լուաւ Աստուած և կատարեաց զխնդրուածքն: Եւ կինն մեղաւոր խնդրեաց և լուաւ Աստուած: Եւ թէ նոցա արագ լուաւ կամեցողն ողորմութեան, ո՞րպէս ո՛չ խոնարհի աղօթան արդարոցն և լսէ, որպէս Գ (3) մանկանցն, որ աղօթեցին ի մէջ հնոցին, և լուաւ նոցա Աստուած և ազատեաց ի հրոյն, որ ո՛չ այրեցան:*

*Իսկ մարգարէս ի դէմս յանցաւոր ժողովրդեանն ինքն կու աղօթէ առ Աստուած, և ուսուցանէ զանհամարձակն դիմել առ ոտս ողորմածին և խնդրել ողորմութիւն ի նմանէ: Զի նոքա այլ, որ վստահացեալքն էին յուղղութիւնս իւրեանց և յառաքինութիւնս անձանց, ի ժամ աղօթիցն զինքեանս[1] անարժանս ասէին և անարժան համարէին: Որպէս և Աբրահամ հող և մոխիր ասէր զինքն, իսկ Դաւիթ՝ որդն, և սոյն Եսայի կաւ ասէ. «Մեք կաւ, և դու[2] Ստեղծիչ» (ԿԴ 8): «Տէր ողորմեա՛ց մեզ, զի ի քեզ յուսացաք»: Ամենայն եկեղեցոյ, որ ըստ բնութեան ինչ առաւ՝ տացաք, այսինքն՝ տկարացաք, ի բնութեան կրից տկարացաք: Բնութեան կիրքն այն է, որ բնութեամբ ամենայն ոք զբարին կու սիրէ, և զբարին կամենայ: Զի Աստուած եդեալ ի բնութիւնս՝ յայս բարուս տկարացաք և խափանեցաք և ո՛չ գործեցաք՝ կա՛մ ի պատրանաց, կա՛մ կամայ, կա՛մ տկամայ: Աղքատացաք յառաքինութենէ և զպատուիրանն յանցաք և ո՛չ պահեցաք, և կապեալ կամք խղճիս մատցս, ըզկնի որոյ ի քեզ յուսացաք: Զի որ*

---

1 *բնագրում՝* գինքնեանս
2 *բնագրում՝* դուք

*ոք, որ յանձն առաքինութիւն չունեննայ և ո՛չ է վատահ յանձին սրբութիւնն, պարտ է և արժան յողորմութիւն Տեառն ապաւինիլ: Զի այլ ինչ ճար կայ քան զայս, այլ ճար ո՛չ ունի քան զողորմութիւնն Աստուծոյ: Եւ ո՛չ անհնարին զփոփոխումն կարծել, թէ զիա՞րդ ի չարէն ի բարին փոփոխէ Աստուած, որ զմեղքն թողու և արդարացուցանէ: Թէ քեզ անհնարին է այս՝ Աստուծոյ հնարաւոր է: Զի նա, որ զանպատասպարանս որ թողեալ էին յԱստուծոյ և զիշնամիս զօտարացեալսն և զառանցեալս մեղօք, արար իւր Որդիս և ժառանգակիցս իւրոյ Միածնին: Որպէս որ նա է ստեղծեալ և էացուցեալ զառաջինն, յորժամ մեղօք ապականեմք, նա վերստին կարող է արդարացուցանել և նորոգել վասն մարդասիրութեան իւրոյ: Վասն որոյ չէ պարտ վհատել և անհնարին զփոփոխումն կարծել: Զի թէ մեղանչելն արտաքոյ աստուածային կամացն է, նոյնպէս անդարձ մնալն արտաքոյ կամացն Աստուծոյ է: Զի որպէս զմեղանչելն ո՛չ կամի Աստուած, նոյնպէս և զանդարձ մնալն ո՛չ կամի, այլ զդառնալն կամի և զապաշխարելն: Զի թէ Աստուած է, որ արդարացուցանէ, ո՞վ է, որ դատապարտ առնիցէ: Մեծամեծ են ցաւք մեղաւորացն, իմաստուն է բժիշկն, կարէ մեծամեծ մեղացն դէղ առնել և առողջուցանել: Սաստիկ է ձմեռն, հմուտ է նաւուղիչն, կարէ ազատել զնաւն և ի նաւահանգիստն հանել: Այլ թէ ասես մեղաւոր եմ, ո՛չ է մեծ մեղքն քո, քան զողորմութիւնն Աստուծոյ: Այլ որպէս կայծ մի հրոյ է մեղքն քո առ անդունդս խորոց ողորմութեանն Աստուծոյ: Տե՛ս զողորմութիւնն Աստուծոյ, որ զյուսահատեալ և զդատապարտեալ մեղաւորն որդիս Աստուծոյ արար և ժառանգակիցս իւր: Տե՛ս և զօրութիւնն Աստուծոյ ի վերայ մեղաւորացն. «եթէ լցեն մեղքն ձեր իբրև զձանձախարիպ, ասէ, իբրև զվիւն սպիտակ արարից» (Ա 18), և այլ դիւրաւ: «Սրսկեայ յիս զվիւն սպիտակ արարից» (հմմտ. Սաղմ. ծ 9): Մեծ է զոպայիւ, և սուրբ եղեց քան զվիւն»*

*մեղք քո, մեծ է ողորմութիւնն Աստուծոյ մինչև յերկինս, կարե-վէր*[1] *է խոցուածդ, մարդասէր է բժիշկն և ձրի բժշկէ: Ահապին է ծով մեղացդ, իմաստուն է նաւապետն: Խոր է վիհ մեղացդ, ամենազօր է ձեռն Աստուծոյ: Մեծ է քան զամենայն մեղս յուսահատութիւնն, այլ և յետ յուսահատութեանն կազմէ զդէղն: Յուսայ ի նա, և յոյսն ո՛չ երբէք ամաչեցուցանէ: «Ի քեզ, Տէ՛ր, յուսացայ» (հմմտ. ԻԶ 4, Լ 2), «մի՛ ամաչեցիցե յաւիտեան» (հմմտ. Խե 17) ասէ մարգարէն: Զի որպէս ի դարձի անառակ որդոյն բարեսէրն հայր ուրախութեամբ ընկալաւ, զի ո՛չ ի դիւրութենէ ինչ դիմեալ եկն առ հայրն, այլ ի հարկէ սովոյն և յաղքատութենէն: Բայց հայրն հաւաստիք*[2] *ինչ ո՛չ պահանջեաց, եթես երթեալ սովով և ծարաւով, ընկալաւ զթով հայրենի զորդին վայրենացեալ՝ զրկատարած ձեռօք: Զի և մեք ուսցուք դառնալ ի մերոցն սխալմանցն, և ցանկասցուք միայն տեսլեան երեսացն Հօր, զի դադարեսցին վիշտքն և նեղութիւնք ի մէնջ: Զի հարկ նեղութեանցն սովոր է ձգել առ Աստուած, որպէս հրէից եղև: Յորժամ սպանանէր զնոսա, խնդրէին և դառնային առ Աստուած, զի յորժամ [ի] նեղութիւն և ի տանջանք մատնէր՝ դառնային առ Աստուած, և ի դիւրութեան՝ ի չարիք անկանէին: Զի զդարձն ի մեղաց և զյուսալն յողորմութիւն զթածին կամի:*

**Եւ արդ՝ ժողովեսցի կապուտն ձեր մեծի և փոքու** *(Լ 4):*

*Կապուտն և կողոպուտն և թալանն միապէս է, աշխարհի բառ թալան ասի: Մարմնապէս*[3] *այս է: Զի զօրքն ասորոցն, որ եկին ի վերայ Երուսաղէմայ և պաշարեցին, յորժամ ի հրեշտակէ Աստուծոյ խոցեալ սատակեցան ՃՁԵՌ (185 000)-ն, ելին նոքա և առին զնոցա ինչքն և բերին ի տունս իւրեանց: Զիւրեանոցն, զոր ինչ նոքա առեալ էին, զիւրեանցն առին, և զնոցա այլ առին և*

---

1 *բնագրում՝* կարէվեր
2 *բնագրում՝* հաւաստիկ
3 *բնագրում՝* մարմնապէն

*բերին ի տունս իւրեանց՝ զառ և զաւար և զամենայն ինչ: Իսկ առ ի միտս և հոգեպէս մեկնութիւնն այս է: Զի մարդն առաջին ունէր բազում մեծութիւնս, այսինքն՝ նախ՝ զանմահութիւն, երկրորդ՝ զսրբութիւն, երրորդ՝ զտեսութիւնն Աստուծոյ, չորրորդ՝ զխօսակցութիւնն, հինգերորդ՝ զտեղիս փափկութեան դրախտին, վեցերորդ՝ զանաշխատ վայելչութիւնս կերակրոցն: Զայս ամենայն զրկեաց և կողոպտեաց բանսարկուն: Իսկ ի ձեռն Տեառն մերոյ վերստին ժողովեցաք զայս ամենայն. զանմահութիւն՝ յարութեամբ նորին, զսրբութիւնն՝ աւազանաւն, զտեսութիւնն Աստուծոյ՝ այժմ հաւատով և յետոյ դէմ յանդիման, զխօսակցութիւնն՝ աւետարանաւն, զարքայութիւնն վերին՝ փոխանակ դրախտին, զկերակուրն՝ հաղորդութեամբն մարմնոյ և արեամբ կենարարին այժմ և ի հանդերձեալն ի սեղանն Հօր՝ որպէս խոստացաւ, զլուսեղէն զգեստն՝ լուսով աստուածութեանն, զանմեղութիւնն՝ անմեղութեամբն նորին:*

**Սուրբ[1] է Տէր Աստուած մեր, որ բնակեալն է ի բարձունս** *(ԼԳ 5):*

*Սուրբ է և սրբարար, և ի սուրբս հանգուցեալ՝ ի բարձունս բնակէ: Ո՛չ միայն յերկինս, այլ և ի բարձրացեալ հոգիս խոնարհաց, որ առաքինութեամբ բարձրացեալ են, ըստ այնմ՝* «Ես յո՞ հանգեայց, եթէ ո՛չ ի հեզս և ի խոնարհս» *(ԿՋ 2), զի* «Որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի՛» *(Մտթ. ԻԳ 12, Ղուկ. ԺԴ 11, ԺԸ 14), և* «Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձրութիւն իւր» *(Յակոբ. Ա 9): Այլ և բնակէ ի պահոցս պատուիրանացն, որպէս ասէ.* «Ես և Հայր առ նա՛ եկեսցուք, և օթևանս [առ նմա արասցուք]» *(Յովհ. ԺԴ 23): Պարտ է յերկրաւորէս բացադարձութիւն առնել բազում հեռաւորութեամբ այնչափ, որչափ մեռեալք ի կենդանեաց որոշեալք և բաժանեալք են ի միմեանց: Զի թէպէտ*

---

1 *բնագրում՝* տէր *փխ* սուրբ

*հեռանայ մարդ յաշխարհէս, և դարձեալ երբեմն մօսի, ըմբռնեցաւ և մատնեցաւ ի կորուստ: Զի նոքա, որ կուսութիւն են ստացեալ, բացադարձութիւն են արարեալ յաշխարհէս՝ յուտելոյ, յըմպելոյ, ի մեծուԹենէ և յայլն: Իսկ յորժամ դառնան և գնան ի մէջ աշխարհի և ելանեն և մտանեն, անկանին ի ձեռն սատանայի և ի կորուստ մատնեն, այլ ամենևին բացադարձութիւն պարտ է, որ առնեն*[1]*: Միանգամ որ հրաժարեցաւ, չէ պարտ մերձաւորիլ, հեռացոյց զքեզ յանպիտանուԹենէն*[2]*, այսինքն՝ ի մեղաց անչափ հեռաւորութեամբ, զի ի պիտանիան բնակէ սուրբն Աստուած:*

**Եհաս իմաստութիւն և հանճար և աստուածպաշտութիւն** *(Լ Գ 6):*

*Ասէ եկն իմաստութիւնն քո, և հանճարեղս արար ի ճշմարիտ աստուածպաշտութիւնն, որով փրկեցաք. «Ա՛յս է գանձն արփաբուԹեան» (Լ Գ 6): Եւ մի գիտասցեն, Թէ մարմնական գանձիւք եղև փրկութիւն մեր, որ ասէ. «Գանձիւք եղիցի փրկութիւն[ն]» (Լ Գ 6): Ի պատժոցն և ի տանջանացն դժոխոցն երկիւղն կու ծնանի, որ երկնչէ մարդ յԱստուծոյ: Եւ յերկիւղէն իմաստութիւնն կու ծնանի, և յիմաստութենէն՝ հանճարն, և յիմաստութենէն և ի հանճարոյն՝ աստուածպաշտութիւնն և հաւատքն կու ծնանի, և յաստուածպաշտութենէն՝ առաքինութիւնն կու ծնանի: Տե՛ս, որ սոցա ամենեցուն սկիզբն և ծնօղ երկիւղն է, և սոքա յերկիւղէն յառաջ կու գան: Եւ յորժամ երկիւղն ի բաց բարձրեալ լինի ի մարդոյ, սոքա ամենեքեան կու տապալին: Եւ մարգարէս ասէ. «Անձինք ձեր խոկասցին յերկիւղ Տեառն» (Լ Գ 18): Այս քան զամենայն գերագոյն է, զի ուր երկիւղ Տեառն է, անդ է և ամենայն պատրանաց պահպանութիւն, և ուր պատրանաց պահպանութիւն՝ անդ և ո՛չ յանցանք ինչ: Սողոմոն ասէ. «Երկիւղիւ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ» (Առակ. ԺԸ 27):*

---

1 *բնագրում՝* առնէ
2 *բնագրում՝* յանպիտանութեանէն

*Դարձեալ. սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն, զբարին որպէս պարտ է գործել: Վասն այն պատճառին գործէ զբարին, զի բարին յԱստուծոյ է յառաջ եկեալ և ի նմանէ է բարին: Դարձեալ. զի նա զբարին կու սիրէ և կու կամի, և վասն այն նորա հրամանացն գործեմք: Եթէ այսպէս ասելով գործեն զբարին, այս կատարեալ բարին է: Ապա թէ յաղագս այն պատճառին գործէ զբարին, թէ Աստուած իւրեան բարի առնէ և պարգևք բարեաց տայ յաստիս կամ ի հանդերձեալն, այն վասն իւր անձին համար է և վասն իւր ապահութեանն, որ կու գործէ զբարին: Այս այլ բարի է, սակայն կատարեալ բարի ո՛չ է: Վասն ի՞նչ պատճառի չգործէ մարդ զչարն: Թէ վասն այն պատճառին գործէ, թէ յիւր իշխանութենէն և [ի] մեծութենէն և յաստիճանէն չզրկէ զինքն Աստուած, կամ չպատժէ զինքն յաստիս կամ ի հանդերձեալն: Այս վասն երկիւղի է և վասն իւր անձինն, և չէ կատարեալ բարի, թէպէտ և բարի է: Այլ կատարեալն այն է, որ վասն այն պատճառին ո՛չ գործէ զչարն, թէ չարն ի սատանայէ է, և զչարն ո՛չ կամի Աստուած և հրամայէ ո՛չ գործել: Մէկ գետ կու ելանէ ի դրախտէն, և անտի ի Դ (4) գետս կու բաժանի, ըստ վկայութեան մարգարէին Մովսէսի, որ՝ «Գետ ելանէ յԵդեմայ և անտի բաժանի ի չորս առաջս և գնայ ոռոգանէ[1] զաշխարհս զարևելք, զՀիւսիս, և զհարաւ» (հմմտ. Ծննդ. Բ 10): Նոյնպէս և ի միոյ ակնէ Յիսուսէ Քրիստոսէ Աւետարանն ասացեալ եղև, և յառաջ եկն և բաժանի ի չորս գլուխ՝ ի չորս աւետարանիչս: Եւ ի ձեռն չորս աւետարանչացն և ԲԺ (12)-ան առաքելոցն սփռեալ տարածեցաւ, և քարոզեցաւ ընդ ամենայն տիեզերս [զ]Քրիստոսի մարդութիւնն և աստուածութիւնն: Զի որպէս կորուսեալն հեռի է դեղութիւնն և աստուածութիւնն: Զի որպէս կորուսեալն հեռի է յաչաց առացողին, նոյնպէս և մեղաւորն հեռի է յաչացն և սուրբ երեսացն: Եւ ի խնամոցն Աստուծոյ արտաքոյ է, որպէս Յուդայ թողեալ եղև ի խնամոցն Աստուծոյ՝ գնաց ինքն իւր կամաւն*

1 *բնագրում՝* առոգաւե

չուան ձգեաց և խեղդեցաւ: Որպէս Հերովդէս թողեալ եղև ի խնամոցն Աստուծոյ և արտաքոյ էր ի խնամոցն Աստուծոյ՝ սպան զինքն, զի նախ՝ զիւրքն եսպան, զիւր ընտանիքն և կորոյս, և ապա՝ ինքն որդնալից եղեալ սատակեցաւ: Որպէս խաչողքն Քրիստոսի՝ ազգն Հրէից, յետ խ (40) ամի խաչելութեանն թողեալ եղեն ի խնամոցն Աստուծոյ, ի գերութիւն մատնեցան ի ձեռն Տիտոսի և Վսպիանոսի Հռոմայեցոց թագաւորացն: Որպէս և կային ասաց Աստուծոյ. «Եթէ հանես զիս յերեսաց քոց, որ գտանիցէ՝ սպանցէ՛ զիս» (Հմմտ. Ծննդ. Դ 14): Ասաց Աստուած. «Ո՛չ թողում սպանանել» (Հմմտ. Ծննդ. Դ 15), և նշան ետուր և եդից զեղջուրն, և Հրամայեաց ո՛չ սպանանել մինչ ի կատարած: Եւ զի բարակս բարբառեցաւ Աստուած ի ձեռն մարգարէին, այսինքն՝ խիստ բարբառեցաւ, որ սպառնացաւ և պատիժս խոստացաւ, զի մի ընդ կարեօք ոք վարկցի զԱստուած: Զի մարդ ոք նեղեալ ի կարեաց չգտանիցէ զինչ խօսիցի, իսկ Աստուծոյ այս ո՛չ է, այլ իրաւամբք զամենայն առնէ, և ինքն ինչ ո՛չ նեղիցէ: Զի՞նչ սրտմտութիւն բարկութեանն Աստուծոյ: Աւ մեզ ախտ են սոքա, զի յորժամ շուրջ զսրտիւն արիւնն գլուշիք նորա ի խելապատակն ելանէ, և յայնմանէ խելագարեալ յիրաւի մարդն և զանիրաւս բարբառէ և գործէ: Իսկ աւ Աստուած ո՛չ [է] այնպէս, այլ արդարապէս հատուցումն է սրտմ[տ]ութիւն նորա: Վասն այն ասէ. «Սրտմտութիւն Տեառն դատաստանաւ իջցէ ի վերայ ամենայն ազգաց» (Հմմտ. ԼԴ 2): Զի յորժամ դառնութեան բան լսէ մարդ կամ նախատանաց, արիւնն, որ ի վերայ սրտին սփռեալ, այն արիւնն կու շրջի և սկսանի յեռալ և ի ջերմանալ: Յայնժամ գոլորշիք արեան և ծուխն ի վեր կու տայ ի սրտէն և ի գլուխն կու ելանէ և ի խելապատակն, և կու խելագարի և միտքն կու ցնդի և չի իմանար, թէ զի՞նչ կու խօսի կամ կու գործէ: Այլ զինչ ի բերանն կու գայ ի դուրս կու տայ՝ զծուռն և զվատն, և այլ կարգաւ չի խօսիր: Իսկ աւ Աստուած այսպէս մի իմանար, զի աւ Աստուած այսոքիկ ախտ ո՛չ են: Զի Աստուած

անփոփոխելի է և անայլայլելի, և յիւրում բարուքեանն անշարժապէս կայ և մնայ: Զի մարդս է, որ կու փոփոխի և կու այլայլի յիւր բնուքենէն, որպէս ասացաւ. «Զի երբեմն բարի կու լինի և երբեմն ի բարուն ի չարն կու փոփոխի և զչարն կու գործէ, և երբեմն անբարկանալի է և քաղցր, և երբեմն դառնանայ և կու բարկանայ, երբեմն՝ անողորմ, և երբեմն՝ ողորմած» և այլն: Իսկ Աստուած անփոփոխ է յիւր բարկուքենէն: Այլ յորժամ վասն մեղաց պատժէ զոք և տանջէ, և ինքն յիւր բարուքեանն հաստատապէս և անշարժապէս կայ, և մնայ առանց բարկուքեան և սրտմտուքեան: Ոչ թէ՛ բնուքիւնն Աստուծոյ ի բարկուքիւն[ն] կու շարժի և գթուքիւնն՝ յանգթուքիւնն կամ ողորմուքիւնն, մարդասիրուքիւնն՝ յատելուքիւն, այլ նոյն ողորմած և մարդասէր Աստուածն է՝ և գթածն և բարին և անբարկանալին: Սակայն արդար իրաւունքն կու պատժէ զմեղաւորն: Զի այս ժամանակս լալոյ է ժամանակ և արտասուաց և հառաչանաց և ո՛չ՝ ուրախուքեան. սգոյ է ժամանակ և տրտմուքեան և ո՛չ՝ ուրախուքեան. չարչարանաց և ո՛չ հանգստեան, պահուց և աղօթից և ո՛չ՝ ուտելոյ և ըմպելոյ, որպէս ասէ Աւետարանն. «Երանի՛, որ լան այժմ, զի նոքա մխիթարեսցին յայն կեանքն, երանի՛ սգաւորացն, որ սուգ կենան յայս կեանքս, զի յայնքն մխիթարեսցին» (հմմտ. Մտթ. ե 4): Ապա թէ ի սգոյ և ի տրտմուքեան ժամանակս ուրախուքեամբ կենան և ի չարչարանաց ժամանակս հանգստեամբ և ծուլուքեամբ անցուցանեն, ապա յորժամ ուրախուքեան և հանգստեան ժամանակն, որ գայ ի հանդերձեալն, ի՞նչ պիտիր զրկին յայն կենացն: Զի բնուքիւն մարմնոյ ո՛չ կարէ ընդդիմանալ հաստչին, իսկ անճնիշխանուքիւն՝ բազում անգամ, զի կամեցաւ զլինել՝ եղեն, կամեցաւ զհաճոյ լինելն՝ և ո՛չ եղեն: Կամեցաւ Աստուած և ի կամելն ամենայն արարածք էացան և գոյացան, և յո՛չ էից յէուքիւն և ի գոյուքիւն եկին, և ո՛չ ընդդիմացան: Կամեցաւ Աստուած և եղև մարդկային բնուքիւնս, և ո՛չ ընդդիմացաւ Աստուծոյ, կամեցաւ

*զհաճոյ լինելն՝ և ո՛չ եղեն: Կամի, որ մարդն բարի գործէ և բարեգործ լինի, և ո՛չ գործեն անձնիշխան և գործէ զբարին: Զի բռնութեամբ Աստուած ո՛չ բերէ զմարդն ի բարին, զի անձնիշխան է ստեղծեր, և զանձնիշխանութիւնն ո՛չ բառնայ: Ապա դիւրին է Աստուծոյ նոր արարած ք ստեղծել, երկինք և երկիր, քան զապստամբ մարդն ի կամացն դարձուցանել և յուղղութիւն բերել: Զի ստեղծանելն և էացուցանելն Աստուծոյ զօրութեանն է, և գործելն զբարին՝ ի մեր կամացս է, որ կամենամք և գործեմք:*

**Ահաւասիկ յաւելում ի կեանս քո ամս հնգետասան** *(ԼՀ 5):*

*Մեկնիչն ասէ. «Աստ ի մեծ իմն կրօնս ուսանիմք»: Զի թէպէտ մարգարէն Դաւիթ զժամանակն կենաց մարդոյս Հ (70) է ասացեալ, և թէ ևս աւելի Զ (80), իսկ աւելին քան զայս՝ ցաւօք և հեծութեամբ ասաց, զի թէ ապրի՝ ի կենդանոյ հաշիւ ո՛չ է, այլ ի մեռելի կարգի է համարեալ: Եւ թէպէտ Հ (70) և Զ (80) ամհմանեաց մարգարէն զժամանակ մարդոյս, թէ այս չափս ապրի մարդն և ո՛չ այլ առաւել և ո՛չ պակաս, այլ դու զհամաշխարհականն այսպէս մի կարծեր, թէ ամենայն մարդոյ կեանք այս չափս է և ո՛չ առաւել և ո՛չ նուազ: Այլ ամենայն մարդոյ ո՛չ պատահի, որ Հ (70) և Զ (80) ամ ապրի, այլ բազումք մեռանին յառաջ և ո՛չ հասանեն յեօթանասունն և յութսունն, և բազումք շատ ապրին և անցանեն զՀ (70)-ն և զԶ (80)-ն: Զի ոմանք յօրհասէ կու մեռանին, յառաջ քան զՀ (70)-ն: Յօրհաս զբանակն մահն մի իմանար: Այլ զայն, որ մահ կու հասանէ յինչ իրաց և իցէ, և կու մեռանի կա՛մ ի ցաւուց կա՛մ յայլ ևս վնասուցաց կու մեռանի յառաջ քան զՀ (70)-ունն:*

*Դարձեալ. լինի մահ վասն մեզաց, լինի կեանք վասն արդարութեան ի ժամու և ի տարաժամու: Զի է երբեմն, որ կարճ է զժամանակ մարդոյն, և է, որ առաւելու կեանք: Այսոքիկ վասն Բ*

(2) պատճառի [են]: Բարի արքայն յերկար ապրի[1], զի օրինակ բարեաց լիցի[2], զի այլք հային ի նա և զբարին ուսանին, և ինքն քարոզէ և ուսուցանէ զբարին գործել: Դարձեալ. բարիքն և արդարքն տարաժամ մեռանին, զի մի տեսցեն զայլոց չարչարանքն, որպէս յաղագս յովսիայ թագաւորին ասէ պիրն. «Յափշտակեցաւ մահուամբ նախ քան զչարիսն» (հմմտ. Դ. Թագ. ԻԱ 14-15), այսինքն՝ զգերութիւնն, զի մի՛ տեսցէ և կրեսցէ զչարչարանքն հետ ժողովրդեանն: Զի զժողովուրդն վասն մեղաց մատնելոց է ի գերութիւն և ի չարչարանք, և թագաւորն արդար էր, ո՛չ էր արժան, որ կրէր զչարչարանքն ընդ ժողովրդեանն: Եւ այսպէս վասն արդարութեան առաւելու և նուազի կեանքն մարդոյն: Իսկ մեղաւորքն չեն արժանի ի կելոյ, սակայն Թողու Աստուած, որ յերկար ապրին վասն Բ (2) պատճառի: Նախ՝ զի դառնան ի մեղաց և ապաշխարեն, զի ապրեսցին, երկրորդ՝ թէ անզեղջ լինին և անդարձ, Թողու որ յերկար ապրին, և տանջին և չարչարին, և ապա մեռանին, և գնան ի չարչարանաց ի չարչարանք, և ի տանջանաց ի տանջանք և ի կորուստ: Որպէս մեղուցեալն կայ յենի յերկար սահմանեցաւ կեանք, զի տանջի և չարչարի, և ո՛չ թէ վասն ապաշխարութեան, զի նա ո՛չ դառնայր և ապաշխարէր: Դարձեալ. լինի մահ վասն մեղաց, որպէս ասէ. «Մի՛ լինիր խիստ, զի մի՛ տարաժամ մեռցիս» (Ժողով. է 18): Եւ Պօղոս անարժան հաղորդելոցն ասէ. «Վասն այնորիկ են ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէ[տք]՝ և շատ ևս են, որ ննջեցեալք են» (Ա. Կորն. ԺԱ 30): Դարձեալ. չարեաց մահ տայ, զի մի չար օրինակ լիցին: Աբրահամ առաւել ապրեցաւ քան զուԹասունն: Տղայքն, որ ի Հերովդիէ կոտորեցան, ջրհեղեղաւն, քանի անմեղ տղայք, որ դեռ մեղք չէին գործեալ, ընդ մեղանչականացն հեղձան: Յեգիպտոս գերբայեցոց մանկունքն ի ջուրս գետոյն, և եգիպտացոց անդրանիկքն, որ ի գլուխ Ժ (10) հարուածոցն,

---

1 *բնագրում՝* ապրիցի
2 *բնագրում՝* լիցին

*սատակեցան: Սոքա ամենեքեան փոքր էին և Հ (70) և Ջ (80) ո՛չ հասին: Եւ սոցա պատճառն զանազան է՝ ջրհեղեղին և եգիպտացոցն, վասն հարցն մեղացն էր, որ մեռան: Եւ իսրայէլացոցն և Բեթղեհէմի մանկանցն մահ վասն չար թագաւորացն էր, վասն չարութեան իւրեանց սպանին:*

*Ընդէ՞ր «Հնգետասան ամ» յաւել զժամանակն Եզեկիայ, և նոյն չափն զՂազար՝ յետ յարութեանն: Այս է պատճառն: Զի ի զգալի կեանս հինգ զգայութեամբն կու մեղանչէ մարդն, և իւրաքանչիւր՝ երիւք կու մեղանչեն: Նախ՝ արտաքոյ տեսն, որ կու տեսանեն, երկրորդ՝ յինքեանս կու հեշտանան, երրորդ՝ ի գործն: Հինգ զգայութիւնն ամէն մէկ Գ (3) յեղանակաւ կու մեղանչեն, որ լինի ԺԵ (15): Նոյնպէս ի դարձ մեղաց Գ (3) յեղանակաւ կու լինի իւրաքանչիւր զգայարանաց: Նախ՝ փուշիմանին և դառնան ի մեղաց, երկրորդ՝ խոստովանին, երրորդ՝ ապաշխարեն, որ լինի ԺԵ (15): Վասն այն՝ «Հնգ[ե]տասան ամ յաւել զկեանս»: Եզեկիայ[1] թագաւորի հայրն Աքազ ապարան էր շինեալ և ի յորմ տանն զհինգ կենդանակերպն նկարել տվեալ էր: Եւ ամէն կենդանակերպի առջևն[2] Բ (2) աստիճան էր շինեալ՝ ժամացոյց, որ լինի Ժ (10) աստիճան, և շող արեգական ի տասն աստիճանն է իջեալ: Եւ յորժամ նշան ետ Աստուած Եզեկիայ թագաւորին կենդանութեամբ, Ժ (10) ժամ եկեալ էր արեգակն և շողն իջեալ էր ի Ժ (10) աստիճանն: Դարձաւ յետ արեգակն և վճարեաց զտասն աստիճանն, և եղև Ի (20) ժամ, և յարևելից դարձաւ և շողն իջաւ ի Ժ (10) աստիճանն և եղև Լ (30) ժամ, և Բ (2) ժամ այլ, որ եղև մի օրն ԼԲ (32) ժամ:*

**Զի ո՛չ թէ, որ ի դժոխս են, խոստովան առնիցեն առ քեզ, և ո՛չ մեռեալք օրհնեսցեն զքեզ և ո՛չ ամենեքեան, որ իջանեն ի դժոխս** *(հմմտ. ԼԸ 18):*

---

1 *բնագրում՝* Եզեկիեայ
2 *բնագրում՝* առաջևն

*Զիա՞րդ ո՛չ օրհնեն զՏէր մեռեալքն: Այս օրհնեն զՏէր, զի հոգին գնայ խաւնի ի դասս հրեշտակացն, և ընդ հրեշտակացն միաբանին և օրհնեն զԱստուած, և խոստովանին զնա Աստուած և յուսան ի նա [յ]ողորմութիւնն և ի բարերարութիւնն: Այլ զայս որ ասէ. «Ո՛չ օրհնեն և ո՛չ խոստովանին և ո՛չ յուսան ի նա» (հմմտ. ԼԸ 18), յաղագս մարմնոյն ասէ, զի մարմինն մեռեալ է և ապականեալ և յո՛չ ինչ դարձեալ, այլ ո՛չ միտք ունի և ո՛չ իմաստութիւն, ո՛չ բան ունի և ո՛չ զԱստուած իմանայ և ո՛չ գիտէ: Վասն այն ո՛չ զԱստուած կու խոստովանի և ո՛չ կու օրհնէ և ո՛չ կու յուսայ ի նա, քանզի խափանեալ են յօրհնութենէ ամենայն մեռեալք, այսինքն՝ մարմինքն որպէս ասացաք, զի ո՛չ հոգի ունի և ո՛չ միտք և ո՛չ զգայութիւն: Իսկ հոգին կենդանի է առ Աստուած, և միտք ունի և իմաստութիւն, հանապազ կու օրհնէ զԱստուած: Իսկ մարմինն խափանեալ է յօրհնութենէն Աստուծոյ: Եւ ոյք կենդանի են մարմնով ի վերայ աշխարհի և ո՛չ են մեռեալ և ո՛չ օրհնեն զԱստուած, ո՛չ են ընդ հատ և բաժանի ի մեռելոց: Այլ նման են այն մեռեալ մարմնոցն, որ ո՛չ կու օրհնեն զԱստուած, զի նոքա մեռեալ են, վասն այն՝ ո՛չ օրհնեն զԱստուած: Իսկ սա կենդանի է և ո՛չ օրհնէ, և ևս վատթարագոյն են քան զմեռեալս: Զի նա կարողութիւն չունի, որ օրհնէ զԱստուած, զի խափանեալ է ի կենդանութենէն, իսկ սա կենդանի է և ունի կարողութիւն, և ո՛չ օրհնէ և ո՛չ յուսայ: Իսկ մեռեալք զրկեալք են ի կենդանութենէ, ի մտաց և ի խորհրդոց: Իսկ կենդանիք, որ միտք ունին և խորհուրդ և իմաստութիւն, և ո՛չ աղօթեն և ո՛չ օրհնեն զԱստուած՝ ի մեռելի կարգի են և առաւել վատթար, քան զնոսա:*

**Այլ կենդանիք օրհնեսցուք զքեզ, որպէս և ես այս[ուհետև]** *(ԼԸ 19):*

*Որք որ աստուածպաշտութեամբ և հաւատով և բարի գործով են կենդանի, նոքա են*[1] *արժանի, որ օրհնեն զԱստուած: Որպէս Եզեկիայ թագաւորն էր, զոր ասէ որպէս և Եսայի, զինքն օրինակ կու տայ, որ հաւատով և բարեգործութեամբ զարդարեալ էր: Ապա նոքա, որ կենդանի են, և ի դարէրն ի շուրջ կու գան և մեղօք մեռուցեալ են զինքեանս, նոքա կենդանոյ հաշիւ ո՛չ են: Եւ նոցա ո՛չ հրամայէ օրհնել զԱստուած: Զի նոքա, որ ի մեղս մեռեալ են և ի դերեզման են*[2] *և ի հող եղեալ, փտեալ և անպտուղ [են յ]օրհնութենէ:*

Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ: Քահանայքդ խօսեցարո՛ւք Երուսաղէմի: Զա՛յն բարբառոյ յանապատի. պատրա՛ստ արարէք զճանապարհս Տեառն և ուղի՛ղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ *(Ս 1-3):*

Ե՛լ ի վերայ լերին բարձու աւետարանիչդ Սիովնի, բարձրացո՛ իբրև փողոյ զբարբառ քո: Գոչեա՛յ. Ամենայն մարմին խո՛տ է *(հմմտ. Ս 9, 6):*

*Աստ զաստիճան վարդապետացն ուսուցանէ, զի սոքա ամենայն աստիճան վարդապետացն են, զի քարոզել և խրատել՝ և քարոզել[ն] և խրատելն վարդապետաց է: ԻԱ (21) աստիճան է վարդապետացն, զի երէցն*[3] *է (7) աստիճան ունի, և եպիսկոպոսն Ը (8) աստիճան ունի, և կաթողիկոսն Թ (9) աստիճան ունի: Իսկ վարդապետին ԻԱ (21) աստիճան է, զի Ժ (10) աստիճան աստ Եսայի ուսուցանէ յիւր գիրս, այն որ ասէ. «Մխիթարեցէք» (Ս 9)՝ մինչև յայն տեղն, որ ասէ. «Գոչեա՛. Ամենայն մարմին խո՛տ է» (Ս 6): Եւ Ե (5) աստիճան այլ Պօղոս առաքեալն յիւր գիրն ուսուցանէ, որ լինի ԺԵ (15) աստիճան, և է (7)*

---

1 *բնագրում՝* են որ
2 *բնագրում՝* է *փխ* են
3 *բնագրում՝* էրէցն

այլ քահանայութեան աստիճանն, որ լինի ԻԱ (21) աստիճան վարդապետին: Տե՛ս, որ վարդապետին աստիճանն առաւել է, և մեծ է քան զեպիսկոպոսին և քան կաթողիկոսին: Ապա թէ ասեն եպիսկոպոսք, թէ՝ «Եպիսկոպոսք իւղով են օծեալք, և վարդապետք իւղով ո՛չ են օծեալք», թէպէտ իւղով ո՛չ են օծեալ մարմնաւոր, այլ՝ Հոգովն օծեալ: Զի մարգարէքն այլ մարմնաւոր իւղով ո՛չ էին օծեալ: Ո՛չ Մովսէս, որ գլուխ էր մարգարէից, և ո՛չ Եսայի և ո՛չ Դանիէլ և ո՛չ այլ մարգարէից իւղով ո՛չ են օծեալ: Եւ թէ Դաւիթ ասես, որ Նաթան օծեաց, զ'Դաւիթ մարգարէ ո՛չ օծեաց, այլ թագաւոր օծեաց: Այլ մարգարէքն Հոգովն էին օծեալ, զի Հոգին օ՛ծ զնոսա: Եւ զառաքեալքն այլ մարմնական իւղով ո՛չ օ՛ծ Քրիստոս, այլ Հոգովն Սրբով օծեցան[1], զի Հոգին Սուրբ էջ ի վերնատունն և օ՛ծ զնոսա: Այլ և Քրիստոս ինքն մարմնական իւղով ո՛չ օծաւ: Զի թէ կինն պոռնիկ թափեաց զիւղն ի գլուխն Քրիստոսի և օ՛ծ զնա, այն զմահն նորա նշանագիւղն ի գլուխն Քրիստոսի և օ՛ծ զնա, այն զմահն նորա նշանակէր, այլ Քրիստոս Հոգովն Սրբով օծեցաւ յարգանդ կուսին: Եւ կէր, այլ Քրիստոս Հոգովն Սրբով օծաւ յարգանդ կուսին: Եւ վարդապետք այլ Հոգովն Սրբով օծանին, զի յամէն, որ Հոգին Սուրբ ի դասն կու իջանէ և օծանէ զվարդապետն: Ապա վարդապետք նման են մարգարէից և առաքելոցն Քրիստոսի, որ Հոգովն Սրբով են օծեալ, իսկ եպիսկոպոսք մարմնական իւղով են օծեալ ի ձեռս մարդկան: Ապա այն մեծ է, որ Հոգովն Սրբով է օծեալ, քան զնոքա, որ ի մարդկանէ են օծեալ: Եւ թէ ասեն, թէ եպիսկոպոսն եկեղեցի կու օրհնէ և երէց, և կաթողիկոսն զեպիսկոպոսն կու օրհնէ, և վարդապետն ո՛չ կարէ օրհնել: Եւ թէպէտ վարդապետն քահանայ և եկեղեցի ո՛չ օրհնէ, այլ վարդապետի հրամանաւն օրհնէ եպիսկոպոսն, զի վարդապետն հրաման կու տայ, որ օրհնէ, զի վարդապետն մեծ է: Որպէս թագաւորն զատաւորն, որ օրհնէ, զի վարդապետն մեծ է: Որպէս թագաւորն զատաւորն, որ օրհնէ, զի վարդապետն մեծ է: Որպէս թագաւորն զատաւոր ոմանց զայս ինչ մեծային գործն ինքն ո՛չ առնէ, այլ հրաման տայ ոմանց զայս ինչ գործ առնել և ոմանց զայն ինչ: Նոյնպէս վարդապետն մեծ է.

---

1 *բնագրում՝* օծեցաւ

*ոմանց Հրաման տայ, որ զեկեղեցին օրհնեն և զքահանայ, և կաթողիկոսին Հրաման տայ զեպիսկոպոսն օրհնել: Եւ թէ զօրք և սպասաւորք բազում լինին թագաւորին, և յորժամ համեմատին առ միմեանս՝ մինն քան զմիւսն առաւել է և մեծ: Զի այն, որ խազինադարն է, մեծ է քան զախթաջին, և այն, որ բաւորչին է, մեծ է քան զսաքպանն, զի բաւուրիչն հանապազ առաջի թագաւորին կենայ: Նոյնպէս սոքա ամենեքեան սպասաւորք են թագաւորին: Սակայն համեմատելով առ միմեանս վարդապետն մեծ երևի: Զի վարդապետն քարոզ կու տայ և դաս կու ասէ, և նոքա ո՛չ կարեն, զի թէ քարոզէ կանգնած ի վերայ գաւազանի՝ չպիտի կանգնի և քարոզէ, այլ՝ նստելով, և դասին Հրաման ո՛չ ունի, որ դաս ասէ:*

**Զայն, որ ասէ գոչեա՛, և ասեմ. Զի՞նչ գոչեցից** *(Ի 6):*

*Մարգարէս Եսայի ձայն լուաւ յանմարմին աստուածութենէն, որ ասացաւ առ նա, թէ՝ «Գոչեա՛»: Եւ դարձեալ. եհարց մարգարէն առ Աստուած, որ ուսանէր թէ զի՞նչ գոչես, և ասէր. «Եւ ասաց. Զի՞նչ գոչեցից», այսինքն՝ զի՞նչ գոչեմ կամ ասեմ ժողովրդեանն: Ասաց Աստուած. «Գոչեա՛ ժողովրդեանդ և ասա՛, թէ ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ» (Ի 6) և այլն: Զայս ասելով, թէ «մարմինս խո՛տ է», յորդորէ զմարդիք ցանկալ յարութեանն և այն կենացն, որ այլ խոտ ո՛չ է մարմինն, այլ անապական կեանքն է: «Ամենայն մարմին խո՛տ է»: Ո՛չ ի սկզբան, որ ստեղծաւ մարդս յԱստուծոյ, խոտ էր, այլ յիւր պատկերն և ի նմանութիւնն ստեղծեաց: Եւ Աստուծոյ պատկերն զիա՞րդ խոտ լինի: Այլ յետոյ մեղքն խոտ արար զմարմինն և խոտոյ նմանեցոյց: «Գոչեա՛», այսինքն՝ համարձակ ձայնեայ թագաւորաց և իշխանաց, և որք հպարտացեալ են ի գեղեցկութիւնն, որ հային ի գերեզմանն և տեսանեն զմեռեալն: Զի՞նչ զանազանութիւն թագաւորին և ռամիկ[ին], զի առհասարակ մոխիր է ամենայն: «Գոգչիր» (Ի*

*6), այսինքն՝ ասասջիր «ամենայն մարմին խոտ է»: Միթէ՞ արարչէն: Ո՛չ, զի նա կամեցաւ սերտ և անմահ լինել մարդոյն, այլ մեք գործովք մեղաց խոտոյ նմանիմք բազում օրինակաւ: Նախ՝ զի խոտն բուսեալ ի գարնան՝ և գեղեցկանայ սակաւ ժամանակս կանաչագեղ գունով: Եւ խորշակահար հողմն ի վերայ անկանի՝ վաղվաղակի ցամաքի և անցանի: Նոյնպէս և կեանք մեր դիւրաթառամ է, զի սակաւ ժամանակ ապրիմք գեղեցկապէս մանկութեամբ, և հողմն մահուն հասանէ, և մեռանի՝ վաղվաղակի անցանէ: Որպէս ասէ Դաւիթ. «Շնչէ հողմն և ո՛չ է» (Սաղմ. ճԲ 16): Երկրորդ՝ զի խոտն բուսանելով և չորանալով մի զմի փոխարէն, զի հինն չորացեալ լուծանի յերկիր և լնու զպակասութիւն տարեր[ա]ց, և նորն[1] եկեալ յերկրէ և սնանի ի նմանէ և լնու զտեղի հնոյն: Նոյնպէս և մարմինք մարդկան հատե[ա]լ ի տարերաց, այսինքն՝ կտրեալ բաղկանայ մարմին, և լնուն զպակասութիւն անցուցելոցն: Զի մինն ի տարերացն կտրի և բաղկանայ մարդ, և դարձեալ մեռանի և գնայ խառնի ի տարերքն և լնու զպակասութիւնն: Զի հողն ի հողն գնայ խառնի, և ջուրն՝ ի ջուրն, և օդն՝ յօդն, և հուրն՝ ի հուրն, և լցուի տարրն: Եւ միւս այլ հատանի ի տարերացն և բաղկանայ մարմին, և ծնանի և լնու զնորա տեղն: Եւ դարձեալ այն մեռանի և հոգին երթայ առ Աստուած, որ ետ զնա, և մարմին[ն] յերկիր լուծանի՝ ուստի առաւ, ըստ այնմ՝ «Հող էիր և ի հող դարձցիս» (Ծննդ. Գ 19): Եւ դարձեալ եւս հոգի ի նոցանէ, և դարձցին անդրէն ի հող: Երբորդ՝ զի որպէս խոտն նախ հասարակ կու կանաչին, իսկ յետոյ երիվն երիվն գունով և զանազան ծաղկովք զարդարին, նոյնպէս հասարակ ամենայն մարդ կան[ա]չանայ և ի մանկութիւն հասանէ, և յետոյ զանազան փառօք փառաւորին, այսինքն՝ ոմանք մեծ ազգութեամբ, ոմանք իշխանութեամբ, ոմանք փարթամութեամբ, ոմանք իմաստութեամբ, ոմանք գեղեցկութեամբ, ոմանք*

---

1 *բնագրում՝* նոյն

զօրուԹեամբ, ոմանք արուեստիւ և այլովք: Վասն որոյ ասէ Դաւիթ. «Մարդոյ որպէս խոտոյ են աւ[ուրք]» (Սաղմ. ճԲ 15): Զորրորդ՝ թէպէտ և զանազան են գոյնք ծաղկանցն, սակայն խոտ են ամենեքեան, և միապէս չորանան: Նոյնպէս և մարդիք, թէպէտ զանազան են անցաւոր վուռօք, սակայն ի մարմինս նոցա չկայ զանազանուԹիւն: Զի միապէս ամենեքեան մեռանին և ի հող դառնան՝ իմաստուն և տգէտ, իշխանք և ռամիկք: Վասն որոյ ասէ. «Ամենայն մարմին խոտ է», այսինքն՝ Թագաւորաց, սակայից, մեծատանց և աղքատաց, և այլոցն: Ե՛րԹ ի պեՐեզմանս և տե՛ս, միԹէ՞ ունիցի ինչ աւելի զանազանուԹիւն բռնաւորն կամ ագահն կամ այլքն: Հինգերորդ՝ զի յորժամ խոտն ցամաքի, «ծաղիկն ԹօԹափի ի նմանէ» (հմմտ. Ի 7) ասէ: Նոյնպէս և մարդիք յորժամ մեռանին, ԹօԹափի ի նոցանէ վուռքն, և ո՛չինչ կարեն տանել ընդ ինքեանս՝ ո՛չ իշխանք զիշխանուԹիւնն, ո՛չ մեծատունք զմեծուԹիւնն, և այլն: Որպէս ասէ Դաւիթ. «Մի՛ երկնչիր յորժամ մեծանայ մարդ, և բազումք լինին վուռք նորա: Զի Թէ ի մեռանելն իւրում առցէ՛ ընդ իւր [զամենայն]» (Սաղմ. ԽՀ 17-18), «Թողցեն, ասէ, օտարաց զմեծուԹիւն[ս] իւրեանց (Սաղմ. ԽՀ 11)», զի «Գանձէ և ո՛չ գիտէ ումի ժողովէ» (Սաղմ. ԼՀ 7): Վեցերորդ՝ զի յորժամ Թառշամի խոտն, ընդ նմին և՝ ծաղիկ նորա: Այսպէս, յորժամ մեռանի մարդ, ընդ նմին և վուռքն շիջանի: Զի ո՛չ է այլ մահ վուռացն և այլ մարդոյն, այլ միապէս է: Նոյն մարմնոյն մահն մահ է և վուռացն: ԵւԹներորդ՝ զի խոտն չորս փոփոխումն ունի: Զի նախ՝ բուսանի և ապա՝ աճէ, և ապա՝ ծաղկի, և ապա՝ դեղնի, և յետ այնորիկ հնձի կամ չորանայ: Նոյնպէս և մարմինք մեր նախ՝ բուսանին ծննդեամբ և ապա՝ աճեն հասակաւ, ծաղկի մանկուԹեամբ, դեղնի ծերուԹեամբ: Եւ Դաւիթ զփոփոխումն ժամանակի մարդոյս ասէ. «Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին, ընդ առաւօտս որպէս

դալարի[1] զուարճասցին և ծաղկ[եսցին]» *(Սաղմ. ՁԹ 5-6): Երկրորդ՝ զփոփոխումն զիշերոյն օրինակ տայ մարդկան ժամանակս, ասէ. «Ո՛չ գիտէք յորում ժամու գող գայ յերե՛» (հմմտ. Ղուկ. ԺԲ 39): Ութերորդ՝ զի որպէս մինն զմի առաւել հրդեհեն, նոյնպէս մեղաւորքն բորբոքեն զհոգիս միմեանց բանիւք և գործօք յորդորել ի չարիս, [յ]իշխանութիւն, ի գողութիւն, ի սպանութիւն և յայլն: Որպէս ասէ առաքն. «Ե՛լ ընդ մեզ, կցո՛րդ լեր արեան» (Առակ. Ա 11): Իններորդ՝ զի խոտն կոխան և կերակուր է անասնոց: Նոյնպէս և մեղսասէրքն գործովք իւրեանց կերակուր և կոխան եղեալ են սատանայի՝ ծառայելով նմա: Զի որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց, ագահն մամոնային է ծառայ և որովայնամոլն յորովայնին է ծառայ, որկորամոլիցն ծառայ որովայն իւրեանց են: Զի սատանայի կերակուրն մեղքն է, և մեղօք պարարի, զի դևք ուրախանան մեղօք: Յայտ է ի պիղծ ոճնի կռոցն, զի ոմն զսպանութիւն խնդրէր, ոմն՝ զշնութիւնն, միւսն՝ զարբեցութիւնն, և զայլն: Տասներորդ՝ խոտն լուցկի է հրոյ, նոյնպէս և մեղաւորքն ճարակ են յաւետարանական հրոյն: Ըստ այնմ՝ «Ելցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարն ի միջոյ արդարոց» (Մտթ. ԺԳ 49), և ի հուրն արկանեն և մեծատունն: Զի ո՛չ ասեն, թէ՝ «ամենայն մարդ խոտ է», այլինքն՝ մարմնասէրքն, որպէս ասէ Աստուած. «Մի՛ մնասցէ Հոգի իմ ի դոսա վասն լինելոյ դոցա մարմին» (Ծննդ. Զ 3): Եւ Պօղոս ասէ. «Մարմին և արիւն զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ո՛չ կարեն» (Ա. Կորն. ԺԵ 50): Նոքա են մարմին, որ շինեն ի վերայ հիման հաւատոյն փայտ, խոտ, եղէգն, որ այրելիք են հրոյն, նոքա այրին ի հուրն: Իսկ որք շինեն ի վերայ հիման հաւատոյն ոսկի, արծաթ և ակունք պատուական, որ է բարեգործութիւնն, ո՛չ այրին, այլ առաւել պայծառանան ի մէջ հրոյն: Եւ ո՞վ ոք են այնոքիկ՝ առաքեալքն Քրիստոսի և հետևողք նոցին, հայրքն և հա[յ]րապետքն և*

---

1 *բնագրում՝* գդալարի

*ընտիրքն, կուսանքն, ճգնաւորքն, վկայքն, մարտիրոսքն, պարկեշտքն և ընտիրքն: Իսկ մեղաւորաց կեանքն խղճիւ է, զի խղճմտանքն տանջէ և մահն յուսահատութեամբ, զի ո՛չ ունին ժամանակս ապաշխարութեան և առանց ապաշխարութեան կու մեռանին: Եւ ո՛չ լսեցեն, թէ՝* «**Եկայք առ իս ամենայն աշխատեալք կամ օրհնեալք Հօր իմոյ**» *(հմմտ. Մտթ. ԺԱ 28, Իե 34): Այլ զի՞նչ են լսելոց. «Գնացէ՛ք յինէն, անիծեա՛լք» (Մտթ. Իե 41), և թէ՝* «**Ո՛չ գիտեմ զձեզ**» *(Մտթ. է 23, Իե 12, Ղուկ. ԺԳ 25, 27), և թէ՝* «**Կապեցէ՛ք զդորա զձեռս և զոտս և հանէ՛ք ի խաւարն արտաքին**» *(Մտթ. ԻԲ 13): Զոր հաւաստէ դարձեալ զնոյն ասելով. «Արդարև խոտ է ժողովուրդս այս: Ցամաքեցաւ խոտն և թօթափեցաւ, և բան Տեառն մնայ յաւիտեան» (Ի 7-8): Եւ Տէրն այլ ասէ. «Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցանիցեն» (Մարկ. ԺԳ 31, Ղուկ. ԻԱ 33): Զայս ասէ, զոր ինչ բան խօսեցեալ է յաւետարանին՝ ամենայն կատարելոց է:*

**Բան Տեառն մնայ յաւիտեան** *(Ի 8):*

*«Բան» օրէնքն է և աւետարանականքն, զոր ո՛չ մահն և ո՛չ հիւանդութիւն և ո՛չ այլ ինչ կարեն փոփոխել, այլ մնալոց է մինչ ի կատարած աշխարհի, մինչ որ զհրեշտակաց օրէնքն առնումք: Եւ զոր ինչ բան Տէրն ասաց՝ կատարեցաւ և կատարելոց է: Նոյնպէս զյարութիւնն, որ ասաց, կատարելոց է:*

**Ո՞ չափեաց ափով զջուրս և զերկինս թզաւ և զերկիր ամենայն քլաւ: Ո՞ կշռեաց զլերինս կշռով և զդաշտս կշռորդօք** *(Ի 12):*

*Մեկնիչ. որ արար զնոսա, գիտէ նա միայն զորչափութիւն նոցա, որ արարիչն է նոցա: Գիտէ զհամատարած ջուրք ծովուն, և զոր ինչ գետք աղբեր ակունք, որ կան [յ]աշխարհի, թէ քանի ափ ջուրք են: Գիտէ զլայնատարած երկնից բարձրութիւնն, թէ*

*քանի թիզ[1] է: Զերկիրս յարևելից յարևմուտք, ի հիւսիսոյ և ի հարաւ, թէ քանի քիլ է, զլերինք և զբլուրք և զդաշտ՝ զկշիռն գիտէ: Երկրորդ՝ չափելն և կշռելն զնախախնամելն յայտնէ: Զի արուեստաւորք, որ զարուեստն իւրեանց առնեն, ի գոյից առնեն ի տարերացս՝ թէ՛ բրուտն է և թէ՛ հիւսն և թէ՛ այլք: Եւ յետ այնորիկ ո՛չ կարեն միշտ պահել մինչ յաւիտեան, որ չի կորնչի անօթն և խորտակի: Մի՝ այն, որ յոչընչէ ո՛չ կարեն առնել անօթ, և մի՝ որ պահել ո՛չ կարեն միշտ: Իսկ Աստուած յո՛չ էից և յո՛չ գոյից էացոյց և գոյացոյց զաշխարհս ամենայն, զարարածս իւր: Եւ յետ այնորիկ պահէ ի նոյնութեան, զի ամենակալ է և կարէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: Արդ՝ զանվրէպ գիտութիւնն նշանակէ: Եւ մի կարծեր թէ նախ չափեաց և ապա տեղեկացաւ, որպէս մարդ իր մի կու առնու ի ձեռն և կու չափէ, և ապա կու գիտենայ, թէ որչափ է: ԶԱստուած այս կերպիւս մի իմանար, թէ նախ չափեաց և կշռեաց, և ապա իմացաւ, զոր մարդիք առնեն: Այլ ո՛չ այսպէս [է], այլ առանց չափելոյ գիտէ անսխալապէս զամենայն: Յինքենէ գիտէ, և ո՛չ թէ չափելով կամ կշռով գիտէ, որպէս այն, որ ասէ. «Որ քննէ զսիրտս և զերիկամունս» (Սաղմ. է 10): Ո՛չ թէ քննեաց և քննելով գիտէ, այլ առանց քննելոյ գիտէ զամենայն մարդոյ զսիրտ և զմիտք և զխորհուրդ՝ թէ՛ չար կու խորհին, թէ՛ բարի: Զի քննելն գիտելն է, և գիտելն՝ քննել, այլ և յառաջ քան զծնանելն գիտէ: Եւ ո՛չ այլով ասաց չափել, այլ ափով և ձեռօք, որ ցուցանէ որ արարն ձեռօք: Նոյնպէս գիտէ զիւր արարելն ինքն միայն: Եւ դու, որ լուար չափ և կշիռ, դու մի՛ կարծեր, թէ այս չափս է Աստուծոյ զօրութիւնն և իմաստութիւնն, որ զայսոսիկ միայն կարէ գիտել և այլ առաւել ո՛չ: Այլ այսու մաս մի ի զօրութենէն և յիմաստութենէն Աստուծոյ պատմէ մարգարէս: Եւ ո՛չ թէ այս չափս միայն է Աստուծոյ իմաստութիւնն և զօրութիւնն, այլ անչափ[2] և անգիտելի է,*

---

1 *բնագրում՝* դիզ
2 *բնագրում՝* այնչափ

*որպէս զարարածս ստեղծեաց: Ո՛չ թէ այս չափս էր Աստուծոյ կարողութիւնն, որ զայսոսիկ ստեղծեաց, այլ այս չափս կամեցաւ զոր ստեղծեաց, ապա թէ ո՛չ՝ անթիւ և անհամար արարածք կարող էր ստեղծել:*

**Ո՞վ գիտաց զմիտս Տեառն** *(Ի 13):*

*Անհամեմատ է նորա իմաստութիւնն: Յիրաւի, ո՛չ ոք գիտաց զմիտս Տեառն: «Ո՞» ասելով անչրպետէ և բաժանէ զամենայն եղականաց միտք ի նմանէ, զի ո՛չ հրեշտակք և ո՛չ հրեշտակապետք, և ո՛չ տէրութիւնք և ո՛չ զօրութիւն, և ո՛չ ինն դաս հրեշտակքն ո՛չ գիտեն զմիտս Տեառն: Եւ ո՛չ սերովբէքն և ո՛չ քերովբէքն[1], և ո՛չ աթոռոց դասքն, որ ծայրք են իմանալեացն, և մերձ են Սրբոյ Երրորդութեանն և կարգեալ կան ի դրունս նորա: Նոքա այլ ո՛չ ունին կարողութիւն գիտել զմիտս Տեառն, թէ զի՞նչ է միտք Տեառն կամ զի՞նչ է խորհուրդք և կամք նորա: Քան ի առաւել մարդիք ո՛չ գիտեն զմիտս նորա՝ ո՛չ մարգարէք և ո՛չ առաքեալքն, որ փոքր են քան զնոսա: Ո՞վ է նորա հաւասար, որ գիտենայ զնորա միտքն և զխորհուրդն: Ո՛չ ոք է նորա նման կամ հաւասար, ինքն Աստուած միայն գիտէ զոր ինչ ի միտքն և ի խորհուրդն իւր է: Եւ որդին իւր Միածին է նման և հաւասար իւրն, և Հոգին Սուրբ, որ գիտէ զմիտս Հօրն: Ինքն ասէ. «Ո՛չ ոք գիտէ զՀայր, եթէ ո՛չ Որդին» (Մտթ. ԺԱ 27), «Որպէս գիտէ զիս Հայր, գիտե՛մ և ես զՀայր» (Յովհ. Ժ 15): Եւ վասն Հոգւոյն ասէ Պօղոս. «Ո՛չ ոք գիտէ զԱստուծոյ[ս]ն, եթէ ո՛չ Հոգին, որ ի նմա» (հմմտ. Ա. Կորն. Բ 11): Զի Հոգին է, որ զամենայն քննէ և զխորս Աստուծոյ, ապա՝ Հայր զՈրդի գիտէ, և Որդի զՀայր գիտէ, և Որդի՝ զՀոգին, և Հոգի՝ զՈրդի և զՀայր: Զի հաւասար պատիւ է Սուրբ Երրորդութիւնն. յայտ է յայնմանէ, զի ասաց. «Գնացէ՛ք մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդ[ե]ոյ և Հոգւոյն Սրբոյ»*

---

1 *բնագրում՝* քերոբէքն

*(Մտթ. ԻԸ 19): Մարգարէս ասէ. «Ո՞ գիտաց զմիտս Տեառն», և առաքեալն Պօղոս*[1] *ասէ. «Մեք զմիտս Քրիստոսի ունիմք» (Ա. Կորն. Բ 16): Զեն հակառակ, զի առաքեալն ո՛չ զանճառն և զանհասականն ասէ ունել միտս, այլ ի յայտնութենէ Հոգւոյն՝ ըստ չափու կարողութեան. «Մեզ յայտնեաց, ասէ, Հոգովն իւրով» (Ա. Կորն. Բ 10): Այն չափն յայտնեաց նմա, որչափ նա տանել կարէր, իսկ աւելին մնաց ի միտս Տեառն: «Ո՞վ եղև նմա խորհրդակից» (Ի 13): Յեղականաց ո՛չ ոք, այլ միայն Որդին և Հոգին:*

**Եթէ Լիբանան չէ բաւական յայրումն, և ամենայն չորքոտանիք չեն բաւական յողջակէզս** *(Ի 16):*

*Ասէ թէ յողջակիզաց և պատարագաց կարօտ էի: Լիբանան փայտքն և այլ զինչ փայտ, որ կայր աշխարհի, չէին բաւական, որ զողջակէզն և զմատաղն խորովէին և եփէին: Եւ զոր ինչ չորքոտանիք և վայրիք և ընտանիք չէին բաւական առ ի պատիւ նմա ըստ նորա արժանեացն, թէ պատիւ առնեն և պատուեն՝ ասացեալքս չէին բաւական: Տե՛ս զնորա մարդասիրութիւնն, թէպէտ և այս ամենայն չեն բաւական առ ի պատիւ նմա, յարգէ զանարգն և պիտանացու առնէ և ընդունի:*

**Արդ՝ ո՞ւմ նմանեցուցանէք զՏէր** *(Ի 18):*

*Ո՞վ է նման Աստուծոյ: Ո՛չ ոք չէ նման նորա, բայց միայն ինքն է, և Որդի Միածին է նման Հօր, որ ի նմանէ ծնեալ է, և Հոգին Սուրբ է նման Հօր, որ ի նմանէ բղխումն է: Եւ յեղական արարածոցս ո՛չ ոք է նման և համեմատ նմա:*

**Որ ունի զծիր երկրի** *(Ի 22):*

*Այսինքն՝ ի ձեռին նորա են ծագ երկրի, յոր վասն հաստատեալ է երկիր ո՛չ ի վերայ ջրի և ո՛չ ի վերայ այլ ինչ իրաց, այլ ի վերայ ձեռին Աստուծոյ է, զի նոյն ձեռն, որ ստեղծ զեր-*

---

1 *բնագրում՝* առաքեալքն Պողոս

*կիր, նոյն ձեռն բացեալ ունի և խնամէ: Որպէս որ իր մի ի վերայ ձեռացն առնուն, և բռնէ ամուր և ո՛չ թողու, որ ի վայր անկանի և կորնչի, նոյնպէս՝ աջն և ձեռն Աստուծոյ զհամատարած բազմութիւն երկրիս և զթանձրութիւն հողոյս՝ մեծամեծ լերամբ և բլրոք, ի վերայ ձեռին բարձրեալ ունի և խնամէ և պահէ անվնաս: Զի ո՛չ հիմն կայ երկրիս և ո՛չ սիւն, ո՛չ ի վերայ հիման է հաստատեալ երկիր և ո՛չ ի վերայ սեան և ո՛չ ի վերայ ջրոյ և ո՛չ ի վերայ օդոյ, այլ ի վերայ խնամոց ձեռին Աստուծոյ: Եւ դու ի թանձրութիւն երկրիս մի նայիր և զարմանար, թէ զիա՞րդ ի ձեռին բարձեալ ունի զայսչափ ծանրութիւն երկրիս: Այլ ի մեծայաղթ զօրութիւնն Աստուծոյ հայիր, որ զնայն ունի, զի անպարտելի և անյաղթելի է զօրութիւնն Աստուծոյ, առանց վաստակելոյ և առանց աշխատանաց ունի:*

**Երկիրս դաշտաձև է՝ լայն և երկայն, և յօրինուած երկնից՝ կամարաձև և իբրև զխորան** *(հմմտ. Ի 22):*

*«Կամարաձև» ասէ, զի ազատէ զմարդիք յերկիւղէ: Զի մի՝ յորժամ իբրև զխորան ասիցէ՝ կասկածիցես, թէ գուցէ[1] անկանիցի: Կամար ասաց, զի որպէս կամարն ամուր է, նոյնպէս՝ երկինքն ամրացեալ, և ո՛չ վլանի ի վայր: Եւ թէ երկինքն վասն այն է՞ր գոգեալ, և գմբեթաձև և խորանաձև, և ո՛չ հարթ և հաւասար: Մեկնիչն ասէ. «Աստուծոյ է պիտելի, և ես ո՛չ պիտեմ» (հմմտ. Ի 21): Եւ «խորան» ասէ և «ձգեալ», թէ՝ «Ձգեաց զերկինս իբրև զխորան»: Զայն ուսուցանէ, թէ որպէս առանց դժուարութեան ոք զհանդերձ տարածանէ, այնպէս յանկարծակի դիւրաւ պարզեաց զերկին առանց աշխատանաց: Որպէս ոք, որ զաչքն խփէ և բանայ, և տեսանէ իր մի առաջի, և դիւրաւ պարզեաց: Եւ դարձեալ. դիւրաւ ամփոփէ յորժամ և կամի, և զերկիրս բուսով և տնկօք և զանազան ծաղկօք զարդարեաց,*

---

1 *բնագրում՝* գուցցէ

*նոյնպէս զերկինքն լուսաւորօք զարդարեաց: Դարձեալ. երկիրս հաստատապէս կայ, և երկինքն անդադար շարժի և շրջագայի: Երկինքն գմբեթաձև[1] է և բոլոր, զի դիւրաւ շրջի, թէպէտ ասաց մեկնիչն, թէ՝ «Զպատճառն ո՛չ գիտեմ» (հմմտ. Ի 21):*

**Զերկիր յոչընչէ արար** *(հմմտ. Ի 23):*

*«Արար» ասելն զդիւրաւն և զվաղվաղակի ցուցանէ, որ կամօք և բանիւ միայն այսոքիկ մեծամեծ արարածք էացան և գոյացան յոչընչէ նորա հրամանաւն: Արար, որ լսես, մի՛ իմանար, թէ կամաց և ի բազում ժամանակս սակաւ սակաւ արար, որպէս որ արուեստաւորքն առնեն՝ դարբինն կամ հիւս[նն] կամ այլն, որ իւրեանց արուեստն առնեն, որ իր մի սկսանին շինել՝ սակաւ սակաւ և կամաց կու շինեն, և ի կատարումն ածեն աշխատանօք: Այլ Աստուած արարածս այսպէս ո՛չ էացոյց և գոյացոյց, այլ արագ և վաղվաղակի և դիւրաւ՝ յական թօթափելն, որպէս աչքն ի բաց լինի մարդոյն և իր մի ո՛չ լինի յառջևն, և յորժամ խփէ և բանայ՝ տեսանէ իր մի գաչս տարերքս: Զերկինք և զերկիր այսպէս գոյացոյց և զածանցեալքս, որ ի տարերացս յառաջ են եկեալ յերկրորդ և յերրորդ և ի չորրորդ, և մինչև ի վեցերորդ օրն գոյացոյց: Ո՞վ կարէ զԱստուած բարձրացուցանել. ո՛չ հրեշտակք, և ո՛չ մարդիք: Զի նա բնութեամբ ունի զբարձրութիւնն, և այլում ո՛չ է կարօտ բարձրացուցանելոյ զնա: Եւ զայլ ոք ևս ինքն կու բարձրացուցանէ, զի ով ոք, որ բարձրութիւն ունի, նա է տուեալ՝ թէ՛ մարդկան բարձրութիւն, թէ՛ հրեշտակաց, որ մին քան զմին բարձր են:*

*Դարձեալ. զդայական կենդանիքն քան զտարրական էութիւնքն բարձր են, և մարդիք՝ քան զդայական, և Աստուած է թիւնքն բարձր են, և մարդիք՝ քան զդայական, և Աստուած է տուեր[2] զբարձրութիւնն: Եւ հրեշտակք այլ մին քան զմին բարձր են դասիւք և փառօք, զի զամենայն Աստուած է տուեալ, և ինքն*

---

1 *բնագրում՝* գմբեթաձևն
2 *բնագրում՝* տվեր

*բնութեամբ ունի զբարձրութիւնն: Եւ այն, որ մեք զնա օրհնեմք և բարձրացուցանեմք. «Բա՛րձր ես դու յերկինս», ո՛չ թէ մեր ասելովս նա օրհնի կամ բարձրանայ, այլ մեք վկայեմք նորա բարձրութեանն՝ թէ բարձր է և օրհնեալ է: Մարդս կանգնական բնութիւն ունի ստացեալ յԱրարչէն, զի կանգուն է ստեղծեալ զմարդն: Զի թզաչափ մի միայն է յերկրի, և այլն ամենայն վեր է, բարձր յերկրէ, զի Բ (2) ոտից ներբանքն Բ (2) թզաչափ միայն է կոխեալ զերկիր, և այլ ամենայն ի վեր է: Որ ցուցանէ, թէ զչափաւոր կերակուրն և զգեստն միայն պարտ է առնուլ յերկրէ, և այլով ամենայնիւ՝ ի վեր զԱստուած հայել և զվերինն խնդրել յԱստուծոյ: Աչօքն ի վեր հայել և մտօքն, այլ և՝ հաւատոյ ականքն: Իսկ նոքա, որ անաստունքն են, կանգնական բնութիւն ո՛չ ունին, զի կանգուն ո՛չ ստեղծ Աստուած զնոսա, այլ ի վերայ չորս ոտից են անկեալ, և ի վայր հային աչօք, և գլուխն ի վայր, և ամենայն ինչ ի վայր հայի նոցա: Որ զայն ցուցանէ, որ նոքա զերկրաւորս միայն կու խորհին, զի նոցա պիտոյքն յերկրէս է, և յերկնայինն և հոգևորն ո՛չ է նոցա փոյթ:*

**Համբարձէ՛ք ի բարձունս զաչս ձեր և տեսէ՛ք ո՞ հաստատեաց զայս ամենայն** *(Ես 26):*

*Բարիոք ասաց «համբարձէ՛ք», զի թէպէտ կանգնական բնութիւն է ստեղծեալ Աստուած զմարդն, որ ի վեր հայի յԱստուած և ի վերինն խորհի և զմտաւ ածէ հանապազ, այլ մարդիք զայս ո՛չ առնեն, այլ դառնան և ի վայր հային յաշխարհս և զերկրաւորս խորհին, և զայս կու սիրեն: Դարձեալ. զաչքն այլ ի վեր ի գլուխն է եղեալ Աստուած ի բարձրաւանդակ տեղւոջ, որ ի վեր հայի, և այսով այլ ո՛չ հայի: Զի չկամի զվեր հայելն յերկինս, այլ թողեալ՝ յերկիր հայի: Այլ կանգնական բնութիւնն ստեղծ Աստուած, որ կամաւ և ակամայ ի վեր հայի, և մի մոռասցի զիւր բնութեան ազնըւութիւնն: Դարձեալ. հաւատոյն թևօք ի վեր հայի, զի զգալի աչօքն մինչ յերկինս կարէ տեսանել մարդ, և*

*այլ ի վեր ո՛չ կարէ տեսանել: Այլ հաւատոյն աչօքն կարէ ի վեր ելանել զԵրրորդական աստուածութիւնն տեսանել և զհրեշտակաց դասակարգութիւնն և զհանդերձեալ երանութիւնն և զարդարոց փառք[ն]: Պարտ էր յերկրաւոր աքանչելեացս ճանաչել զԱստուած: Յորժամ ո՛չ կարողանաս ճանաչել, ի վեր հայէ, զի յերկնից ճանաչես և երկնի ստեղծողին: Եւ զերկինս խոստովանեայ, զի մի՛ է Արարիչն սոցա:*

**Ես եմ առաջին և ես եմ առ յապա և նոյն** *(համմտ. ԽԱ 4):*

*Զանմահն և զանսկիզբն ցուցանէ, զի այս սեպհական[1] է Աստուծոյ անսկիզբն և անվազճան լինելն, զի Աստուծոյ միայն կու վայելէ: Իսկ եղական բնութիւնս ո՛չ ունի զայս, զի հարկ բնութեանս զայս կու պահանջէ: Զի այն, որ եղեալ է և սկիզբն ունի, անվազճան ո՛չ մնայ, այլ կու մեռանի և կու անցանի և գնայ: Եւ յե՞ զհրեշտակ և զհոգի մարդոյ ասես, որ սկսեալ են և վազճան ո՛չ ունի[ն], այլ անմահ են մնալոց: Այս ըստ կարգի բնութեան ո՛չ է, որ անմահ են սոքա, այլ Աստուծոյ զօրութիւնն և կամքն առնէ զնոսա, այնպէս որ անմահ մնալոց են:*

**Եղից զՈգի իմ ի վերայ նորա** *(ՀԲ 1):*

*Ո՛չինչ ի Հօրէ առ Որդի չափեալ լինի և տուեալ, այլինքն՝ անմարմին բանին՝ ո՛չ զօրութիւն, և ո՛չ կարողութիւն, և ո՛չ իմաստութիւն, ո՛չ աստուածութիւն, և ո՛չ այլ ինչ: Զի զոր ինչ Հայր ունի, զնոյն և Որդի ունի՝ լիով և կատարեալ, մանաւանդ, զի Հօր զօրութիւն և իմաստութիւն Որդին Միածին է: Ապա զիա՞րդ կարօտի զօրութեան կամ իմաստութեան: Զհոգին ևս Որդոյ յաղագս մարդկան սիրոյ և մարդկան օգտի, որ առնէր և մարդկան պարգևէր, և ո՛չ թէ Որդի կարօտ էր Հոգւոյն: Զի որպէս Հոգին Հօր է փառակից և էակից, նմանապէս և՝ Որդոյ, զի առ*

---

1 *բնագրում՝* սեպհական

*զՀոգին, զի ի մեզ սփռեսցէ: Որպէս ասէ առաքեալ[ն]. «**Սէրն Աստուծոյ սփռեալ է ի հոգիս մեր**» (Հռոմ. Ե 5), զի վասն սիրոյ առ և սփռեաց ի մեզ: Զէ մարթ ընդունել զՀոգին, եթէ ո՛չ նախ՝ սրբիցեն, զի Տէր մեր օրինակ մխայն ընկալաւ զՀոգին մեր, այլ պարտիմք ըստ մերում կարողութեանս սրբել զմեզ ի մեղաց, և ապա՝ բնակէ ի մեզ Հոգին Սուրբ: Ապա թէ ո՛չ սրբիմք, Հոգին Սուրբ փախչի ի մեզանէ, զի Հոգին Սուրբ փախչի նենգութենէ և ի մարմնի վարեցելոյ մեղօք: Եւ յանճն չարարուեստ իմաստութեան ո՛չ մտանէ, բայց կամի զմեզ արժանաւոր տաճար լինել Հոգոյն:*

**Ցակոբ ծառայ իմ, օգնական եղէց նմա** *(Խբ 1):*

*Ըստ մարմնոյն իմացիր զայս, ո՛չ թէ ըստ անմարմին Աստուած Բանին, և օգնական լինելն ի սքանչելիքն և ի վարդապետութիւնն և յայլն: Օգնական լինելն այն է, որ Հօր կամօքն էր զոր ինչ առնէր Որդի, և ո՛չ թէ օգնական լինէր և ապա Որդի կարէր զօրութիւնս առնել, այլ զկամաց Հօր ի կատարումն ասէ: Զի ծանր կրօնս քարոզեաց Քրիստոս, և ո՛չ եղև ումեք տաղտկալի, այլ յօժարութեամբ յանճն առին ամենեքեան մեծամե[ծ]ք և փոքունք զհրամանն Քրիստոսի և կատարեցին: Զի քան զայս այլ ինչ ծանր և դժուարին բան որ ասաց՝ թողուլ և զընտանիք և գնալ զհետ կամաց նորա, և այսուհ ո՛չ եթող, այլ զխաչն և զմահ ևս առնուլ և մեռանել. «**Որ ո՛չ առնու զխաչն և գայ զկնի՝ չէ՛ ինձ արժանի**» (Մտթ. Ժ 38): Զի հին օրէնքն, զոր ինչ առաքինութիւն և պատուիրան որ ո՛չ պահէին՝ պատիժ էր խոստացեալ, որ պատժէին, զի՝ «**Ակն ընդ ական, և ատամն ընդ ատամն**» (Ելք. ԻԱ 24) և այլն: Ապա, զոր ինչ որ կատարէին և պահէին զօրէնքն, յաղագս պատժոց և երկիւղի առնէին: Իսկ ի նոր օրէնքս այնպէս ո՛չ է, թէ զայս ինչ առաքինութիւն ո՛չ կատարէ մարդ՝ պատժէ, հարկիւ ո՛չ է, այլ անձնիշխան կամօք զառաքինութիւնն կատարեն: Ապա թէ հարկիւ էր, ծանրատաղտուկ և*

*դժուարին թուէր մարդկան, և անվարձ էր: Առաքինութիւնն այն է ընդունելի, որ իւր կամօքն առնէ մարդ և ո՛չ ի հարկէ: Իսկ նոր օրէնքս կամաւ կատարեն զառաքինութիւնն մարդիք, և ո՛չ հարկ ի վերայ կայ, թէ ո՛չ գործեն զառաքինութիւնն՝ պատժեն:*

**Հանցէ ի ճշմարտութիւն զիրաւունս** *(ԽԲ 4):*

*Աստուծոյ դատաստանն ճշմարիտ է զամենայն, զոր ինչ առնէ, իսկ մարդկան դատաստան՝ լի է սրբութեամբ: Տէրն ասէ.* **«Այժմ դատաստան է աշխարհի[ս], և իշխան աշխարհիս ընկեցի արտաքս»** *(Յովհ. ԺԲ 31): Եկն յաշխարհս ի դատաստան Աստուած. ժողովեցան և խաչեցին: Թէ չէր կամեցեալ՝ ո՛չ կարէին, այլ կամաւ առ յանձն, և թէպէտ կարող էր զոր ինչ առնէր, զի Աստուած էր նա, այլ դատաստանաւ արար և իրաւամբք և ճշմարտութեամբ և հեզութեամբ և արդարութեամբ ո՛չ մեզ մխայն, այլ՝ դիւին: Զի մի ոք ասիցէ, թէ՝ «Անիրաւութեամբ զսատանայ դատապարտեաց»: Զի այն, որ մահն կալաւ զմարդիք, այն իրաւամբք և արդար դատաստանաւ էր: Զի պատուիրան եդ Աստուած Ադամայ և ասաց. «Ի մէկ պտղոյն մի՛ ուտիցես, և երբ ուտիցես՝ մահո՛ւ մեռանիցիս»** *(հմմտ. Ծննդ. Բ 17): Թէ չէր կերեալ՝ անմահ էր մնալոց, յորժամ կերաւ՝ մահն կալաւ զնա: Եւ մեռաւ արդար դատաստանաւ և ո՛չ իրաւամբ: Իսկ Քրիստոսին մահն, որ մահ տիրեաց նմա, ո՛չ էր արդար դատաստանաւ, զի նա մեղս ո՛չ արար, այլ արդար էր և անմեղ և սուրբ: Եւ բանսարկուն մտաւ ի դպիրքն և ի փարիսեցիքն և ի քահանայապետն, և ի չար ժողովուրդն հրէից և ի Յուդայ, որ խաչեցին զնա, և մեռաւ: Ըստ այնմ թէ՝* **«Սատանայի իսկ արկեալ էր ի սիրտն Յուդայի, որ մատնեաց զնա»** *(հմմտ. Ղուկ. ԻԲ 3-4): Իսկ յորժամ սատանայ կազմեաց զմեքինայս, յիրաւի և արդար դատաստանաւ պատժեաց զսատանայ և արտաքս ընկէց յիշխանութենէն իւրմէ: Զի զանպարտն մահացոյց, որ ո՛չ էր պարտական մահու, զի անմեղ էր, անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի: Եւ զմարդիք արդար*

դատաստանաւ ազատեաց իւր անմեղ մահուամբն, զի վասն մարդկան զմահն յանձն առ: Ապա թէ մարդկան մահն արդար դատաստանաւ էր, որպէս ասացաւ թէ՝ «ՓրկուԹիւնն էր, արդար դատաստանաւ էր», զի Քրիստոսի մահուամբն փրկեցան զամենայն, արդար դատաստանաւ արար Քրիստոս:

**Եւ հանցէ ի ճշմարտուԹիւն զդատաստանն** (հմմտ. ԽԲ 4):
Զի մարդկան դատաստանն ստուԹեամբ վճարի և լի է ստուԹեամբ: Եւ լինի դիւրուԹիւն դատաստանին ըստ Զ (6) իրաց: Նախ՝ յերկիւղէ, երկրորդ՝ յակնառուԹեանց, երրորդ՝ ի կաշառոց, չորրորդ՝ ի տգիտուԹեանց, հինգերորդ՝ ի սուտ վկայից, վեցերորդ՝ ի ճարտար և ի տարտամ ոսխաց: Եւ այսպէս մարդկան դատաստան ստուԹեամբ վճարի ո՛չ միայն կամաւոր աչառուԹեամբ, այլ նոյն ինքն և բնուԹիւնն տկարանայ զարժանն գտանել կամ ի վերայ ո՛չ հասանելոյ, կամ զի վկայք արդարք չեն մօտ: Այլ Աստուծոյ դատաստանն արդար է, զի զծածուկ սրտին տեսանէ: Եւ այնքան է արդար դատաստանն Աստուծոյ և ճշմարիտ, զի և ինքեանք, որ վնասականքն և պատժապարտքն են, իրաւունս տայցեն: Եւ արդար դատաստանն Աստուծոյ երևեցաւ յաստի կեանս առ Դաւիթ, զի ասաց. «Ես հովիւս մեղայ, անմեղ ժողովուրդն ո՛չ են պարտական» (հմմտ. Բ Թագ. ԻԴ 17): Եւ այս որպէ՞ս: Զի Դաւիթ հրաման եհան թուեալ զժողովուրդն իւր և բերել զհամարն առ ինքն, որ գիտենայր, Թէ որչափ ժողովուրդ ունէր: Եւ ասացին առաջիկայքն իւր, Թէ՝ «Մի՛ Թուեր, Տէր յաւելցէ՛ ի ժողովուրդն» (հմմտ. Բ Թագ. ԻԴ 3): Եւ նա ո՛չ լուաւ, և հրաման Թագաւորին սաստկացաւ, և գնացին Թուեալ: Յայնժամ գիտաց Դաւիթ, որ սխալեցաւ և Թիւր բան արար: Մինչդեռ յայն խորհրդական էր, եկն առ նա մարգարէս հրամանաւն Աստուծոյ և ասաց, Թէ՝ «Այդ բանիդ համար, որ դու արարեր, բարկացաւ քեզ Աստուած և կամի պատուհաս տալ քեզ, և դու քո կամօքդ ընտրէ, որ տայ քեզ: Կամ Գ (3) տարի սով, կամ Գ (3) ամիս

սուբ, կամ Գ (3) օր մահ» (հմմտ. Բ Թագ. Ի Դ 13): Եւ նա ասաց, թէ՝ «Կամքն Աստուծոյ լինի» (հմմտ. Բ Թագ. Ի Դ 14), և ընտրեաց զ Գ (3) օր մահն: Եւ անկաւ մահն ի բանակն, և ցառաւօտէն մինչև որ լուսացաւ Հ Ռ (70 000) մարդ մեռաւ առաջին օրն: Յայնժամ երկեաւ մարգարէն, ասաց. «Մինչ այսօր վճարի, այլ մարդ չի մնար, ամենեքեան կու մեռանի[ն]» (հմմտ. Բ Թագ. Ի Դ 16): Ի գուբթ շարժեցաւ ի վերայ ժողովրդեանն, և էառ զթագն ի գլխոյն և ընկէց ի գետինն, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց և ելաց դառնապէս: Եւ ասաց առ Աստուած. «Ես հովիւս մեղայ, անմեղ ժողովուրդն զի՞նչ մեղան քեզ, թէ բարկացեալ ես, սո՛ւր քո յիս և ի տան հօր իմոյ» (հմմտ. Բ Թագ. Ի Դ 17): Թող քո սուրդ յիս լինի և յիմ հօր տուն, և յիմ տունն և յիմ որդիքն, զիս սպան իմ ընտանեօքն և ազգականօքն, զի ես եմ պատուական, զանմեղ ժողովրդեանն խնայեայ և մի անպարտ կորուսաներ: Յայնժամ լուաւ նմա Աստուած և մահն եբարձ ի ժողովրդենէն, և զինքն այլ ո՛չ պատուհասեաց: Տե՛ս, որ զարդար դատաստանն Աստուծոյ, որ դեռ չէր եկեալ պատիժն, ինքն զինքն պատժապարտ համարեցաւ: Եւ երբ պատիժն եկն ի վերայ ժողովրդեանն, վկայեաց զինքն պատժապարտ և պատժոց արժանի, ասաց. «Սուր քո յի՛ս և ի տուն հօր իմոյ» (հմմտ. Բ Թագ. Ի Դ 17): Նոյնպէս և Կայէն[1] ասաց. «Մեծ է վնասն իմ քան զթողուլն քո» (հմմտ. Ծննդ. Դ 13), այսինքն՝ թէ իմ վնասն, որ արարի և մեղանչեցի, առաւել է քան զայս պատիժս, որ ինձ տուիր[2]: Տե՛ս, որ նա որ պատժապարտն է, վկայեաց արդար դատաստանին Աստուծոյ, որ իրաւամբ պատժեաց: Եւ Ադամ թաքչելովն յայտ արար, թէ՝ «Յանցաւոր եմ» (հմմտ. Ծննդ. Գ 10), զի զիւր յանցաւորութիւնն եցոյց և զԱստուծոյ արդարութիւնն: Զի թէ չէր յանցաւոր, ո՛չ փախչէր և ի մէջ թզենոյն մտաներ: Վասն այն փախեաւ, որ մեղանչեալ էր և զպատուիրանն Աստուծոյ յանցեալ, ապա արդար էր Աս-

1 բնագրում՝ Կային
2 բնագրում՝ տվիր

*տուած, որ պատժեաց զնա: Եւ մեծատունն, յորժամ լուաւ յԱբրահամէ, թէ՝ «Ընկալա՛ր անդէր [զբարիս քո]» (Ղուկ. ԺԶ 25) և այլն, այլ ո՛չ կարաց իրաւամբ պատասխանի առնել նմա, զի գիտաց, որ ինքն սուտ էր և նա ճշմարիտ, և արժանի էր պատժոյ, և Աստուծոյ դատաստանն՝ արդար: Եւ նա, որ զմի քանքարն առ և ո՛չ շահեցայց, և ի խնդրելն զքանքարն ստամբակ ասաց զտէրն և առաւել բարկացոյց զարդարն, զի ասաց.* «Գիտեմ, զի այր մի խի՛ստ ես», *այսինքն՝ ստամբակ,* «Հնձես յայն տեղացն, որ ո՛չ սերմանիցես, և ժողովես՝ ուստի ո՛չ սփռեցեր» *(Մտթ. Իե 24) և այլն: Իսկ տէրն թէպէտ բարկացաւ, իրաւամբք ետ զվճիռն, զի ասաց.* «Ծառայ վատ և չար, երբ գիտէիր, որ ես ստամբակ եմ և խիստ ըստ քո բանիդ, որ ասացեր, ապա պարտ էր քեզ երկնչել յինէն և արկանել զարծաթ իմ ի սեղանաւորս և շահել, և ես եկեալ՝ տոկոսի՛ւք պահանջէին զիմն, և թէ ոք մի խլէր ի քեզանէ կամ յափշտակէր, ես առնէ ի նոցանէ» *(համմտ. Մտթ. Իե 26-27): Եւ յորժամ զայս ասաց տէրն և զինքն իրաւացոյց, և զնորա ստուքթիւնն եցոյց և ապա սկսաւ պատժել, յայնժամ ասաց ծառայիցն իւրոց և սպասաւորացն, որ կային առ նա.* «Առէ՛ք ի դմանէ զքանքարն և տո՛ւք այնմ, որ ունի զտասն քանքարն: Զի ամենայնի որ ունիցի՝ տացի նմա և յաւելցէ, և որ ո՛չն ունիցի և զոր ունիցի՝ բարձցի՛ ի նմանէ: Եւ զծառայդ անպիտան՝ կապեցէ՛ք զդորա զոտքն և զձեռն և հանէ՛ք ի խաւարն արտաքին. ա՛նդ [եղիցի լալ և կրճել ատամանց]» *(համմտ. Մտթ. Իե 28-30): Եւ Յունանու յիրաւաբանելն ասաց.* «Դու խնայեցե՞ր ի դըդմենիդ, յոր չեղեր իսկ աշխատ, զի յառաւօտուն ել և ի միւս առաւօտուն չորացաւ: Ես ո՞չ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ. յորում[1] բնակեալ են երկոտասան բիւր մարդիք», *այսինքն՝ անմեղ տղայք,* «որ զաջ և զահեակ դեռ ո՛չ գիտեն կամ ճանաչեն» *(համմտ. Յովնան. Դ 10-11): Եւ թէ այս որպէ՞ս: Զի երևեցաւ Աստուած Յունանու*

---

1 *բնագրում՝* մերում

*մարգարէին, մինչդեռ յիւր երկիրն [էր], և ասաց գնալ ի Նինուէ քաղաք և քարոզել, թէ՝ «Երեք օր այլ՝ և ձեր քաղաքդ պիտիր անցանի և կործանի Հրամանաւն Աստուծոյ» (հմմտ. Յովնան. Գ 4): Եւ Յունան մարգարէն Հոգովն իմացաւ, որ պիտէր յորժամ երթայր[1] և քարոզէր՝ նոքա կու դառնան և կու ապաշխարեն: Եւ պիտէր զողորմութիւնն Աստուծոյ, որ ողորմած էր, և դառնայր և ո՛չ պատժեր և ո՛չ անցուցանէր զքաղաքն, և ինքն սուտ լինէր և իւր բանն ո՛չ կատարէր: Վասն այս պատճառիս թաքեաւ յերեսաց Աստուծոյ, և գնացեալ եմուտ ի նաւն և կամէր փախչել ի Թարսիս: Եւ արկին զնա ի ծովն, և ձուկն եբարձ զբերանն և եկուլ զնա Հրամանաւն Աստուծոյ: Եւ երեք օր անվնաս պահեաց, և ապա եհան՝ եթուք ի ցամաքն: Եւ անդ ևս երևեցաւ Աստուած և ասաց գնալ ի Նինուէ և քարոզել նոցա: Եւ ապա առ յանձն և յուղի անկեալ գնաց և եմուտ ի քաղաքն, և եբաց զբերանն և բարձր ձայնիւ գոչեաց և ասաց. «Ահա՛ Գ (3) օր և այլ ո՛չ ևս իցէ Նինուէ, քաղաք ձեր պիտի կործանի ի հիմանց և յանդունդք իջանէ» (հմմտ. Յովնան. Գ 4): Յասել մարգարէին շարժեցաւ քաղաքն, և երերաց[2] և որոտաց, և մէգն և մառախուղն[3] պատեաց, և սկսան լալ և գոռալ ամենայն քաղաքն առ հասարակ: Եւ յետ երեք աւուրն ողորմեցաւ Աստուած և շարժն դադարեցաւ, և մեքն և մառախուղն բարձաւ և արև ծագեաց: Եւ ել Յունան ի քաղաքէն և գնացեալ նստաւ տրտում ի բացեայ արտաքոյ քաղաքին, զի ո՛չ կործանեցաւ քաղաքն: Եւ Հրաման ետ Աստուած հողմոյ, խորշակի, արևուն, և քաղէին ոգի մարգարէին: Եւ Հրամանաւն Աստուծոյ բուսաւ դդմենի մի մեծ և արձակեաց լայն տերև և հովանի արար գլխոյն Յունանու: Եւ զովացոյց ի խորշակէ արևուն, զի տանէր քամին և բերեր զտերևն, և զհովն յերեսն տայր և զովանայր: Եւ դարձեալ*

---

1 *բնագրում՝* երթէր
2 *բնագրում՝* երեսաց
3 *բնագրում՝* մարախուղն

*Հրամանն ետ Աստուածն որդանն, որ կտրեաց[1] յարմատոյն զդըդմենին, և վաղվաղակի չորացաւ, և եկեալ քամին՝ և զտերևն նորա ցրուեաց և կորոյս: Եւ դարձեալ անկաւ արևն ի վերայ գլխոյն Յունանու, և տապ էր ի խորշակէն, և սկսաւ տրտմել և հոգալ զդըդմենին. «Ո՞չ այն բանք [են] իմ, զոր ասացի յերկրին իմում» (հմմտ. Յովնան. Դ 2): Յայնժամ երևեցաւ Աստուածն [Յ]ունանու և ասաց. «[Յ]ունա՛ն, արդարև յոյժ տրտմեալ ես ի վերայ դըդմենոյդ, որ ո՛չ աշխատ եղեր ինչ, ո՛չ տնկեցեր և ո՛չ փորեցեր զտակն և ո՛չ աղք արկեր կամ ջրեցեր, զի առանց քո աշխատանացդ ի միւս առաւօտուն ել, և ի միւսն՝ չորացաւ, դու այնքան հոգաս և տրտմեալ ես: Ապա ես զիա՞րդ ո՛չ հոգամ և խնայեմ ի Նինուէ քաղաք մեծ, որ իմ ստեղծուած և արարած են, և երկոտասան բիւր տղայք կան անմեղ, որ ո՛չ զաջն կու ճանաչեն, և ո՛չ զահեակ» (հմմտ. Յովնան. Դ 10-11): Այնժամ այլ ո՛չ կարաց պատասխանել Յունան:*

**Ո՛չ գոյ ուրախութիւն ամբարշտաց, ասէ Տէր** *(ԽՀ 21):*

*Զիա՞րդ ասէ Դաւիթ.* «Ո՛չ գոյ հաստատութիւն ի տանջանս նոցա, ի վաստակս մարդկան չե՛ն նոքա, և ըստ մարդկան ո՛չ տանջեսցին» *(Սաղմ. ՀԲ 4-5): Եւ միւս մարգարէն ասէ, թէ՝* «Փողովք և թմկօք խաղալ մանկտիք նոցա» *(հմմտ. Յոբ. ԻԱ 12): Եւ դարձեալ.* «Հպարտք ամբարշտաց յաջողեալ է» *(հմմտ. Երեմ. ԺԲ 1): Իսկ Եսայիս ասէ.* «Ո՛չ գոյ ուրախութիւն ամբարշտաց», *և այլուր ասէ.* «Ո՛չ գոյ խաղաղութիւն» *(ԾԷ 21) նոցա: Յայտ է, թէ ո՛չ զաստի կենաց ուրախութիւն և զխաղաղութիւն ասէ, զոր վայելեն մեղաւորքն, այլ զճշմարիտ խաղաղութիւնն ասէ բառնալ ի նոցանէ զանտի կենացն: Զի որպէս Աստուածն անվախճան է, և ուրախութիւնն ի նմանէ անվախճան է և անեղծանելի է, յայն ուրախութենէն անմաս ասէ զամբարիշտն: Քան զի չէ հնար*

---

1 *բնագրում՝* կտ<ա>րեաց

*մարդկան, որ ի մեղս լինի անզեղջ և առանց պատուհասի մնան, և ասացեալ տանջանքս ո՛չ գայ ի վերայ նոցա: Զի մեղաւորացն յոլով տարակուսանք յայսմ աշխարհ կու հանդիպի՝ վնասք հոգոյ և մարմնոյ, և եպերանք յԱստուծոյ և ի հրեշտակաց և ի մարդկանէ: Ախտք և հալածանք, անբերելի ցաւք և մահ գլխովին վասն մեղաց[ն] լինի, և յորժամ մեղքն առընթեր լինի՝ բաւական է միշտ ի խռովութեան զկեանս պահել յայսմ աշխարհի, և ի վորձութիւնս դիւաց յանբերելի ցաւս մշտնջենաւոր տանջանացն ածէ: Զի որպէս բարեգործքն ուրախանան ի համբաւս բարիս, յորժամ լսեն ի գրոցս, թէ՝ «Բարեացն փոխարէն կայ և բալի տալոց է Աստուած» (հմմտ. Սաղմ. ճԻԴ 4), զի ողորմածն յորժամ լսէ ի գրոց, թէ՝ «Ողորմածացն է արքայութիւնն» (հմմտ. Մտթ. ե 7, 10)՝ ուրախանայ: Եւ դարձեալ թէ՝ «Որ ողորմի աղքատաց՝ փոխ տայ Աստուծոյ» (Առակ. ԺԹ 17), և դարձեալ թէ՝ «Երանի որ խորհի յաղքատն և ի տնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր» (Սաղմ. Խ 2), և այլ այսպիսիս որ լսէ՝ կու ուրախանայ: Նոյնպէս, որ սիրտն սուրբ է պահեալ, յորժամ լսէ [յ]աւետարանէն որ ասէ. «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մտթ. ե 8)՝ կուրախանայ: Նոյնպէս զայլ ամենայն բարեգործութեան փոխարէն յորժամ լսէ՝ ուրախանայ: Նոյնպէս նոքա, որ ամբարիշտքն են և մեղաւորքն, տխրին և տրտմին ի լսել սպառնալիս իրաւացի պատուհասին, զոր առնելոց են արդար դատաւորութեանն: Յորժամ լսեն՝ «Ո՛չ գոյ ուրախութիւն ամբարշտաց», տխրին և տրտմին: Յորժամ լսեն՝ «Զատամունս մեղաւորաց փշրեսցեն» (Սաղմ. Գ 8), յորժամ լսեն՝ «Տեղասցէ ի վերայ մեղաւորաց հուր և ծծումբ» (Սաղմ. Ժ 7), յորժամ լսեն՝ «Երթա՛յք յինէն անիծեալք» (Մտթ. ԻԵ 41)՝ տրտմին, և այլ բազում: Զի այն, որ պոռնիկ է և շնացողն, յորժամ լսէ յառաքելոյն Պօղոսէ, որ ասէ. «Ո՛չ շունք, ո՛չ պոռնիկ» և այլն, «զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն» (Ա. Կորնթ. Զ 9), տրտմի և տխրի: Նոյնպէս և այլ մեղաց գոր-*

*ծողքն զիւրեանց պատիժն լսեն և տրտմի[ն]: Մտօքդ որոնէ և գտիր, չեմ կարեր զամէնն գրեր, այս չափս բաւ է: Եւ յորժամ զայսոսիկ լսեն ի գրոց, ուստի՞ լինի մխիթարուԹիւն նոցա, զի այլ մխիթարուԹիւն ո՛չ գոյ նոցա: Կամ առ ո՞վ փախչի[ն] և ապաւինին, որ ազատէ զնոսա յայնպիսի տանջանացն, զի այլ ազատելոյ ճար ո՛չ ունին: Բայց միայն Թէ զմեղքն Թողուն և ապաշխարեն՝ ազատին, ապա Թէ ո՛չ՝ ո՛չ ազատին: Զի Թէպէտ ի Թատերս գուսանաց գնան և լսեն, և ի հարսանիս երԹիցեն լսեն երգս նուագարանաց, և ի տեսանել զհրաշս յօրինեալս, այսինքն՝ զխաղքն, որ կու հնարին շինել, Թէ ուրախ[աց]ուսցեն զմարդիք և ծիծաղեցուսցեն, Թէ զայսոսիկ տեսանելով ո՛չ կարեն զտրտմուԹիւն ի մտաց հանել և ուրախանալ: Զի Թէ սակաւ մի ուրախանան, յանկարծ մեղքն ի միտքն կու անկանի և կու տրտմի: Այլ լսելով զլուր սպառնալեաց Աստուծոյ յեկեղեցւոջ, Թէ՝ «Ո՛չ գոյ ուրախուԹիւն ամբարշտաց» և այլ այսպիսիս, Թէպէտ և տաշտք և ամանք գինով լցեալ է առաջի և սեղան բարելի առաջի ունի խորտկօք, ո՛չ ուրախուԹիւն համարի և ո՛չ ուրախանայ, այլ՝ տրտմի: Զի որպէս զյոլով կերակուրն, որ ուտէ մարդ, ո՛չ միայն հիւանդոց է վնասիչ, այլ և այնոցիկ, որ առողջ են մարմնով, վնաս գործէ: Նոյնպէս մեծուԹիւն աստի կենացս վնասէ և ապականէ զհոգիս մարդկան, և «Յաւելու վէր ի վերայ վիրաց[1]» (հմմտ. Սաղմ. ԿԸ 27), այսինքն՝ մեղք ի վերայ մեղաց, ապա ի մեծուԹիւնն չէ պարտ ուրախանալ:*

**Ի ժամանակի ընդունելուԹեան, *ասէ, լուայ քեզ, և յաւուր փրկուԹեան օգնեցի քեզ* (*Ես* 8):**

*Յանդէպ ժամանակի ո՛չ լսէ և ո՛չ փրկէ, վասն զի է ժամանակ դիպաւոր և անդէպ: Զի Թէ դէպն կորուսանեմք՝ չլինի մեզ ի դէպսն առաքինուԹիւնն, որպէս յայտ է յիմար կուսանացն և ի*

---

1 *բնագրում՝* վերաց

*մեծատանէ, որ ո՛չ գտան օգնութիւն: Զի այս է ժամանակ փրկութեան մինչ ի մարմնի եմք, որպէս ասէ Պօղոս. «Ահա ժամանակ ընդունելի» (Բ Կորն. Զ 2) և այլն: Որպէս մարտիկ ոք, մինչ տեսողքն նստցին, պիտիր նահատակել, այլ ո՛չ յանցանել հանդիսին, յորժամ ի զուր և վայրապար աշխարի: Միթէ՞ պատերազմօղն է ըմբշամարտն: Յայնժամ պիտի զիւր քաջութիւնն ցուցանէ, որքան թագաւորն նստեալ է, և հանդէսն և ժողովն պատրաստ է առաջի նոցա: Պարտ է պատերազմել և յաղթել, և զիւր ուժեղութիւնն և զզօրութիւնն ցուցանէ առաջի հանդիսին: Ապա թէ մնայ և [յ]ապաղէ, մինչ որ թագաւորն գնայ և հանդէսն և ժողովն ցրուի, և ապա սկսանի քաջութիւն ցուցանել, անօգուտ է, զի ո՛չ ոք չի տեսաներ և գովել զնա: Եւ բարեգործութիւնն այլ ժամանակ կայ դիպող, որ կու լսէ Աստուած, և յանդէպ ժամանակն ո՛չ լսէ: Զի յիմար կուսանքն կացին, որ դիպող ժամանակն անցաւ, և թագաւորն եմուտ ի յառագաստն՝ և հինգ իմաստուն կուսանքն ընդ նմա, և փակեցաւ դուռն յերկնից առագաստին: Եւ ապա եկին յանդէպ ժամանակի յիմար կուսանքն, և սկսան աղաչել և պաղատել և խնդրուածս առնել աղօթիւք. «Տէր Տէր բաց մեզ, Տէր Տէր ողորմեայ մեզ, Տէր Տէր գթայ մեզ, Տէր Տէր մի՛ անտես առներ զմեզ, բա՛ց մեզ զքո դուռն ողորմութեան» (համմտ. Մտթ. Իե 11) և այլն: Եւ այսոքիկ աղօթք են՝ զԱստուծոյ անունն յիշատակեալ, և խնդրուածս և պաղատանս առնել: Իսկ նոքա, յորժամ զայս աղօթելով ասացին, զի՞նչ լսեցին պատասխանի: Զայն պատասխանեաց նոցա, թէ՝ «Ո՛չ գիտեմ զձեզ» (Մտթ. Իե 12) և այլն: Ո՛չ լուաւ նոցա, զի անդէպ ժամու աղաչեցին: Եւ մեծատունն մինչ ի դժոխքն էր, ի տանջանքն հայեցաւ, ևետես զԱբրահամ ի հեռաստանէ և զՂազարոս ի գոգն նորա հանգուցեալ: Եւ խնդիրք արար յԱբրահամէ, զի զՂազար առաքեսցէ առ նա զովացուցանել զլեզու նորա: Եւ նա ո՛չ լուաւ, այլ պատասխանեաց, թէ՝ «Սայ աստ մխիթարի, և դու այդր պապակիս» (Ղուկ. ԺԶ 25), և նա լռեաց: Ապա երևի, թէ*

*Աստուած կարօտ է ժամանակի, և ողորմութիւն նորա ժամանակին հետևի: Ո՛չ է Աստուած կարօտ ժամանակի, այլ՝ մեք: Զի առ Աստուած ժամանակն ո՛չ փոփոխի, այլ առ մեղ փոփոխի, և ողորմութիւն նորա ժամանակի ո՛չ հետևի, այլ՝ քաղցրութեան կամացն: Զի յորժամ քաղցրանայ կամքն Աստուծոյ, այն է ժամանակ ընդունելի: Եւ յորժա՞մ լինի կամքն Աստուծոյ քաղցր: Երեք ժամանակ գայ հաճոյ կամացն Աստուծոյ: Նախ՝ ժամ աղօթիցն, յորժամ յամենայն ուստերք զմիտս առ Աստուած ամփոփեմք*[1] *և խօսակցիմք ընդ նմա՝ ընդ երեկոյս, ի վաղորդեան, ի հասարակ աւուրն և յայլն: Իսկ այլ ժամանակքն, յորժամ պարապ լինիմք և կամ ի հոգս աշխարհի, չէ հաճոյ նմա: Երկրորդ՝ հաճոյ է ժամանակն ապաշխարութեան, յորժամ դառնամք ի մեղաց՝ ի բարի գործեմք, իսկ որքան անղեղջ մնամք ի մեղս՝ այն չէ հաճոյ Աստուծոյ: Երրորդ՝ ժամանակ ընդունելի է բոլոր կեանքս այս, իսկ հետ մահու՝ ո՛չ, զի ի կեանքս յայս բազմեալ է յաթոռ շնորհաց, և ի հանդերձեալն՝ յաթոռ դատաստանաց, որ է արդար հատուցումն: Որպէս հրաւիրէ Պօղոս. «Եթէ անկցուք առաջի աթոռոց շնորհաց[ն] նորա և ընկալցուք զողորմութիւն ի դէպ ժամանակի» (հմմտ. Եբրայ. Դ 16), որպէս շնորհեցաւ նմա, որ պարտ էր զՇ (500) դահեկանն, վասն զի աղաչեաց աստ: Իսկ ի հանդերձեալն ասէ. «Հանէ՛ք ի խաւարն արտաքին» (Մտթ. Իբ 13, Իե 30), և թէ՝ «Ո՛չ գիտեմ զձեզ. ի բա՛ց կացէք յինէն ամենայն մշակդ անիրաւութեան» (Ղուկ. ԺԳ 27) և այլն:*

**Հայեցարո՛ւք ի վէմն հաստատուն՝** *յորմէ կոխեցարուք (ԾԱ 1):*

*Զի Սառայի չէր բնութեան անզաւակութիւնն, բնութեամբ ո՛չ էր, այլ ամուլ էր: Եւ ո՛չ միայն ամլութիւնն էր, որ ո՛չ ծնանէր, այլ և՝ ծերութիւն[ն]: Վիմի նմանեցուցանէ զարգանդն Սառայի,*

---

1 *բնագրում՝* անփոփեմք

*զի որպէս վէմն կարծր է և բոյս ո՛չ բուսուցանէ, նոյնպէս անծին էր արդանդն Սառայի:*

*Եւ դարձեալ. զայն կու տայ իմանալ մեզ, թէ Աստուծոյ ձեռացն գործ է ծնունդք մեր, և նա ստեղծանէ և նկարէ զամենայն ումեք յարգանդի մօրն: Զի որպէս ի սկզբանն զԱդամ ի հողոյ ստեղծ ձեռօքն, և այժմ նոյն ձեռն է, որ յարգանդէ ստեղծանէ զամենայն ծնունդս մարդկան: Սկնդուկն՝ ամուլն է: Որպէս ի փարատել զհլուանդն ի ցաւոց զօրութիւն առնու և կարողանայ, նոյնպէս և յընկենուլ մեզացն առողջանայ հոգին: Զի հիւանդութիւն հոգոյն, որ ի մեղացն կու լինի, յոլով անգամ և մարմնոյն տիրէ, զի մարմին[ն] այլ կու հիւանդանայ և տկարանայ վասն մեղացն, որպէս և անդամալուծին և այլոց: Զի է երբեմն, որ կու հաղորդին և հաւասարին միմեանց հոգին և մարմինն: Զի մեղքն, որ հիւանդութիւն է հոգոյ, երբեմն զմարմինն այլ կու հիւանդացուցանէ: Զի դժուարաւ իմանիր ախտք հոգոց խառնեաց մարդասէր Տէրն ի մարմին, զի դիւրաւ ի զգաստութիւն եկեսցէ: Զի այն, որ մեղքն գործէ և զհոգին հիւանդանայ, զայս ամենայն մարդ ո՛չ կարէ իմանալ և գիտել, թէ յորժամ մեղքն գործեն՝ հոգին կու հիւանդանայ մարդոյն, այլ կատարելոցն է զայս գիտել նոքա, որ իմաստունքն են և գիտուն, այլ ամենայն ոք ո՛չ կարէ գիտել: Վասն այն մարդասէրն Աստուած երբեմն վասն մեղաց մարմնոյն այլ հիւանդութիւն և ցաւ կու տայ, որ այսով զգաստութիւն գայ և իմանայ, թէ որպէս մարմինն հիւանդացաւ վասն մեղաց և ցաւ կրեաց, նոյնպէս և հոգին հիւանդացեալ է: Եւ դառնայ ի մեղաց և յուղղութիւն գայ, և զառաքինութիւն գործէ: Եւ առաքինութիւնն ո՛չ միայն զմարմինն առողջացուցանէ, այլ և՝ զհոգին: Մարծեր թէ վայրապար ինչ առնէ Աստուած, զոր ինչ և գործէ, եթէ ո՛չ պատճառաւ իւիք: Զի առանց պատճառի գործ ո՛չ գործէ Աստուած՝ թէ՛ պատժէ և թէ՛ պատուհասէ, և թէ՛ փրկէ և թէ՛ բարերարէ ումեք, զի մեղքն և արդարութիւնն է պատճառ: Զի զԱդամ առանց պատճառի ո՛չ*

*պատժեաց, այլ մեղքն եղև պատճառ, զ կայեն առանց պատճառի ո՛չ պատժեաց: Նոյնպէս և ջրհեղեղացիքն. իւրեանց մեղքն եղև պատճառ զոր գործէին, զմեղքն էառ պատճառ և եբեր ջրհեղեղ և կորոյս առհասարակ զամենայնան: Եւ այլն հետ կարգին: Զի չիք ինչ օգուտ ի բարեաց, յորժամ նա չիցէ մօտ, որ մխիթարիցէն: Թէ զամենայն բարի ունենայ ոք և զԱստուած ո՛չ ունենայ մերձ ինքեան՝ անօգուտ է: Եւ թէ զամենայն տանջանք ունենայ և Աստուած մերձ լինի և տեսանէ այն տանջանքն և չարչարանքն՝ ո՛չ համարի նմա նեղութիւն, այլ՝ հանգիստ:*

**Եւ պահեսցէ զձեռս իւր առնելոյ զանօրէնութիւն** *(ՄՋ 2):*

*Միթէ ի մարմնաւոր գործ է և թէ հոգևորն՝ զամենայն ինչ ձեռօք գործեմք: Հոգևորն այն է, որ զողորմութիւնն ձեռօք բաշխեմք և տամք, այլ և՝ տարածմամբ ձեռաց յաղօթս աղերսեմ[ք] զԱստուած: Զծնունդս սուրբ աւազանին ձեռօք կատարեմք և զբաշխումն մարմնոյ և արեան և զամենայն շնորհս, զի առաքեալքն ձեռն դնելով տային զՀոգին Սուրբ: Վասն որոյ և մեք զալ քահանային համբուրեմք և ո՛չ զգլուխն, զի ամենայն ինչ ձեռացն հատուցաւ: Ձեռօք կնքեմք և պահպանեմք զամենայն զգայարանս, զհոգի և զմարմին: Այլ և տարածմամբ ձեռաց հարկանեմք զքշնամին մեր զսատանայ, զի աղօթք սրբոյ խոցոտիչ է դիւաց: Որպէս տարածմամբ ձեռացն Մովսէսի կորեաւ[1] Ամաղէկ (տե՛ս ելք ԺԷ 8-14), և տարածեաց Եզեկիայ զձեռս իւր և սատակեցաւ զօրքն ասորոց՝ յօրինակ սատանայի, որ և Տէր մեր տարածմամբ ձեռաց բևեռեաց[2] զնա ի խաչին: Այլ և ձեռօք լինի բժշկութիւն հոգևոր և մարմնաւոր, որպէս և Տէր մեր ձգեաց զձեռն իւր և հասոյց ի բորոտն և ի կուրն, որ և ընդ մարմնոյն բժշ[կ]եաց և լուսաւորեաց զձեռս նոցա: Որ և ձեռս դնել առաքեալքն բժշկէին զամենայն ցաւս, մինչ զի և այժմ քահանայք առնեն զնոյն:*

---

1 *բնագրում՝* կորև
2 *բնագրում՝* բևեցեաց

*Այլ և խաչանիշ դրոշմամբ սրբելով զանօթս ինչ և զկերակուր, այլ և զձեռս ի վեր կալնումք և գոհանամք յԱստուծոյ, և այլ սոյնպիսի բարիք հոգևոր և մարմնաւոր ի ձեռացն ներգործի: Նաև բազում չարիք ի սմանէ գան յառաջ, այսինքն՝ ի ձեռացն՝ գողութիւնք, սպանութիւնք և այլ ինչ չարիք: Վասն որոյ զգուշացուցանէ մարգարէս. «Զձեռս յառնելոյ զանօրէնութիւն»: Զի զինչ և իցէ իրս, զոր Աստուած ո՛չ հրամայէ, չէ՛ պարտ հասուցանել զձեռս, զի անիրաւութիւն է, զոր ցուցուք բազում օրինակաւ: Զի եթէ նախաստեղծքն զգուշացեալ էին ձեռաց՝ ո՛չ կթէին զպտուղն և զրկէին ի կենացն: Եւ թէ զգուշացուցեալ էր Կայէն՝ ո՛չ սպանաներ զեղբայրն: Եւ յետոյ թէ զգուշացեալ էին՝ ձեռք ո՛չ շինէին զվաղափուլն ամբարտակ[ն]: Եւ թէ զգուշացեալ էր փարաւոն՝ ո՛չ խեղդեն զմանկունսն: Եւ թէ զգուշացեալ էր Աքար՝ ո՛չ գողանայր ի նզովիցն Երիքովի: Եւ թէ զգուշացեալ էր Իսրայէլ՝ ո՛չ հաղորդէին արեան մարգարէիցն և ո՛չ կանգնէին կուռս և ի գերութիւն մատնէին: Նաև յետոյ թէ զգուշացեալ ձեռաց՝ ո՛չ խաչ հանէին զՏէրն փառաց: Գլխատեաց Հերովդէս զՅովհաննէս (տե՛ս Մտթ. ԺԴ 10) և ինքն որդնալից սատակեցաւ, և մանկակոտորն չարաչար կրեաւ: Եւ ամենայն ոք, որ ո՛չ պահէ զձեռն իւր յանիրաւութենէ, նոյնպէս չարաչար պատժելոց է: Յաղագս որոյ խրատէ պահել զձեռս յազգէ ազգի յանիրաւութեանց և [ի] վնասուց:*

**Մի՛ ասիցէ ներքինին, թէ ես եմ փայտ չոր** *(ԾԶ 3):*

*Ներքին զարդարն ասէ. մի՛ ասիցէ արդարն, թէ ես եմ, մարմնաւոր զաւակ ո՛չ ունիմ և անպտուղ եմ և անզաւակ: Զի արդարոյն առաքինութիւնն իւրն զաւակ է և որդի: Զի թէ պահք կենայ՝ պահք կացողն ծնօղ է, և պահքն ի նմանէ յառաջ եկն, նմա ծնունդ է և զաւակ է և որդի: Նոյնպէս այն, որ աղօթէ, աղօթքն զաւակ է նմա և որդի: Ողորմած է մարդն, որ ողորմութիւն առնէ, ողորմութիւնն նմա զաւակ է և որդի: Թէ՛ մարտի-*

*բոսանայ՝ մարտիրոսուԹիւնն նմա զաւակ է և որդի, Թէ՛ կոյս կենայ՝ կուսուԹիւնն նմա զաւակ է և որդի, Թէ՛ զսիրտն սուրբ պահէ՝ այն նմա զաւակ է և որդի: Եւ զի՞նչ առաքինուԹիւն որ առնէ՝ այն իւրն հոգևոր զաւակ է և որդի: Եւ բազում առաւելուԹիւն տեսանի առաքինոյն, որ ծնանի զհոգևոր զաւակս, քան զմարմնաւորաց: Նախ՝ զի որքան առաւել է հոգի քան զմարմին, նոյնքան առաւել է հոգևոր զաւակն, որ է բարեգործուԹիւնն, քան զմարմնաւոր[ն]: Երկրորդ՝ զի այն, որ մարմնաւոր զաւակ է, ի հարկէ բնուԹեանն է, և այս՝ ըստ կամացն, և պատուական է կամօք ստացեալն քան զհարկիւն: Երրորդ՝ զաւակքն ըստ մարմնոյ սակաւք են. կա՛մ մէկ կու լինի, կա՛մ երկու, կա՛մ հինգ, կա՛մ առաւել տասն, և հոգևորն՝ բազումք: Զի որքանուԹեան ըստ գործոցն, նոյնքանեան և զաւակքն, որպէս ասէ մարգարէս. «Բազում են որդիք սկնդկիդ, առաւել քան զարամբ[ւ]ոյն» (ՃԴ 1): Զորրորդ՝ զի ըստ մարմնոյ զաւակքն հեռանան ի ծնողացն ի կեանս և ի մահ, զի կենդանուԹեանն ևս կու հեռանայ, գնայ ի շուրջ գայ աստ և անդ, և ի մահուն ևս առաւել կու հեռանայ: Իսկ հոգևոր զաւակքն ո՛չ երբեք հեռանան[1]: Զի գործքն ի կեանս և ի մահ ընդ ներգործողին են, որպէս ասէր Տէրն. «Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ո՛չ մեկնեսցէ» (հմմտ. Ղուկ. ԺԴ 42), որ է հոգևոր գործն: Հինգերորդ՝ զի մարմնաւոր զաւակքն անիծից է զաւակք՝ տրտմուԹեամբ ծնեալ, որպէս ասացաւ. «ՏրտմուԹեամբ ծնանել զաւակք» (հմմտ. Ծննդ. Գ 16), և սա՝ օրհնուԹեամբ և ուրախուԹեամբ: Ըստ այնմ՝ «Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախա[միտ]» (Սաղմ. ՃԺԲ 9): Յայս միտս՝ և Սողոմոն ասէ. «Որդի իմաստուն ուրախ առնէ զհայրն», որ է հոգևոր զաւակն, և «որդի անմիտ տրտմուԹիւն է մօր» (Առակ. Ժ 1): Եւ սոյն մարգարէս ասէ. «Ո՛չ ևս ծնանիցին որդիս յանէծս, զի զաւակք օրհնեալք են նոքա յԱստուծոյ, և ծնունդք նոցա ընդ նոսա» (հմմտ. ԿԵ 23):*

---

1 *բնագրում՝* հեռացան

*վեցերորդ՝ նա յայսմ աշխարհի աճէ, և սա՝ ի հանդերձեալն: Վասն որոյ՝* «Երանէ զայն, որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանեակ յԵրուսաղէմ Վերին» *(հմմտ. ԼԱ 9): Եւթներորդ՝ զի մարմնաւոր զաւակք՝ հարք զորդիս խրատեն, իսկ հոգևորն՝ զաւակքն զծնողսն խրատեն և ուղղեն, այսինքն՝ իմաստութիւնն, որ ի գրոց կու կարդան և ուսանին, զի կարդալն այլ հոգևոր զաւակ է: Ութերորդ՝ ծնողն մարմնաւոր զաւակաց պարսաւի վասն այն չար զաւակացն, ըստ այնմ՝ «Որդիք, պո՛ռնիկ որդիք» և այլն, իսկ հոգևորն գովի և բարեբանի վասն բարի գործոցն: Իններորդ՝ զի մինն մեղք և դժոխք պատրաստէ, և միւսն՝ արքայութիւնն: Զի վասն մարմնաւոր զաւակ[աց] ծնողքն կու զրկեն և կու յափշտակեն և կու խլեն և կու գողանան, որ ապրեցնեն զզաւակն: Այլ և ծուլանան յաղօթից, և ի ծագ և ի վաստակ կու գնան, որ զտղայքն ապրեցուսցեն: Եւ այլ բազում մեղք վասն մարմնաւոր զաւակաց գործեն ծնօղքն, և գնան ի դժոխքն: Տասներորդ՝ զի մինն ժամանակաւ և ջնջելի յիշատակն, և միւսն՝ անջինջ և յաւիտենական, որպէս ասէ. «Անուն յաւիտենական տաց նոցա, և մի՛ պակասեսցեն» (հմմտ. ԾԶ 13), այսինքն՝ ի կեանս յայս և ի հանդերձեալն: Ապա լաւ է առաքինութեամբ անուանի լինել, քան յուստերս և ի դստերս պանծալ: Զեն անուն բարի, զոր ի շինուածս ապարանի ոք թողու կամ յարձանս շիրմաց: Այլ այն է գեղեցիկ անուն բարի, որ ի մարդս բանաւորս թողու, որ յազգաց յազգս պատմեն զազնուականութիւնն և զլաւութիւնն զոր արարեալ է: Մարդոյ առնէ լաւութիւն և բարի, որ յետ ուրն յիշեն և գովեն զնա, թէ ի նորանէ օգտեցաք, զի մեզ ի վշտաց փրկեաց, և ազատեաց ի նեղութենէ, ի սովու կամ յաղքատութենէ, կամ ի գերութենէ և այլն: Այսոքիկ են անուն յաւիտենական բարի, որ յիշատակի մարդոյ, և ո՛չ թէ անուն չարութեան թողուլ յաշխարհի, այլ՝ բարի: Զի զչարաց անունն, որ յիշատակեն, կու տաղտկանայ մարդ, որ յիշելոյ այլ արժանի չի համարի, այլ թէ յիշեն՝ նզովս արձակեն, որպէս զՅուդայի

*անունն որ յիշեն՝ կու անիծանեն: Նոյնպէս և զչար թագաւորացն և զհերձուածողացն և այլ չարք, որ կան ի մարդկանէ, յորժամ յիշեն՝ նզովս և անէծս արձակեն նմա: Նոյնպէս և զսատանայ անունն յիշելով՝ անիծանեն զնա: Իսկ զբարեաց անունն յիշատակել փափագի*[1] *ամենայն ոք, և յորժամ յիշեն՝ շնորհք առնուն և օգտին ի նոցանէ: Այլ և սրբոցն տօն կատարեմք և բարեխօս ունիմ առ Աստուած բարեխօսութեամբ նոցա ողորմել մեզ:*

**Են չարք՝ և ո՛չ ճանաչեն զհանճար** *(ՃԶ 11):*

*Զի ամենայն իրաց ժամանակ կայ, որ զզօրութիւնն և զքաջութիւնն պարտ է ցուցանել՝ փոխեն և զծուլութիւնն ցուցանեն: Եւ է ժամանակ, որ զհանդարտութիւնն պարտ է ցուցանել՝ զ[յ]անդգնութիւնն և զլրբութիւնն ցուցանեն: Բարիւք և բարի է հեզութիւնն, այլ՝ ի դէպ ժամանակի: Բարի է, որ Աստուծոյ հրամանացն և օրինացն հնազանդ լինի, այլ՝ և բարի խրատողաց: Բարի է համարձակութիւնն, այլ՝ ի պատշաճ տեղւոջ, այսինքն՝ համարձակ լինի ի դաւանութիւն հաւատոյն, որ զՍուրբ Երրորդութիւնն խոստովանի և դաւանէ, այլ՝ և զՔրիստոսի մարդեղութիւնն և զբարերարութիւնն նորա յիշատակէ և պատմէ: Բարի է ամօթ, այլ՝ է ամօթ, որ զմեղս ածէ յորժամ ամաչէ, և գինի խմէ կամ այլ ինչ, և է ամօթ, որ զփառս և զշնորհս ածէ, յորժամ ի չարեաց և ի մեղաց գործելն ամաչէ և ո՛չ գործէ: Նոյնպէս խօսելոյն ժամանակ կայ, լռելոյն ժամանակ կայ: Ընտրել պարտ է զժամանակն և ապա խօսել: Թէ մեծատուն մարդ լինի կամ փոքր, յորժամ բարկացեալ լինի՝ չէ պարտ երթալ և խօսել ընդ նմա, զի բարկացած է, կու վիրաւորէ զնա: Լռել պարտ է յայն ժամն, այլ ի հանդարտ և ի քաղցրութեան ժամանակն խօսել: Դարձեալ. պարտ է տեսանել, թէ կու ընդունին մարդիք զիւր բանն, նա թող խօսի, և թէ ո՛չ՝ լռել արժան է: Եւ այլ սոյնպիսիք: Զչարն, որ գործէ մարդ, կամացն է մեղադրելի, զի կամօք կու*

---

1 *բնագրում՝* փափաքի

*գործէ, և ո՛չ թէ բնութիւնն է մեղադրելի, զի բնութեամբ ո՛չ է չարն ի մարդն: Բազում են առաքինութեանց և բարեաց ցանկութիւն, զոր ցանկան առաքինիքն և սուրբքն: Այլ ամենայն առաքինութեանց և բարեաց գլուխ և քան զամենայն ի վեր այն է, որ զԱստուած սիրեն և Աստուծոյ տեսուն փափագին*[1] *և ցանկան, զի Աստուած է ցանկութիւն արդարոցն: Եւ այս ուստի՞ է. յայտ, որ արդարքն Աստուծոյ տեսուն են փափագ: Եւ այս տեսանի ի մարգարէն Դաւիթ, որ փափագէր Աստուծոյ տեսուն և կու ցանկայր տեսանել զԱստուած՝ որպէս ասէ. «Որպէս փափագէ եղջերու*[2] *յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած: Ծարաւի է անձն*[3] *իմ առ քեզ Աստուած. ե՞րբ եկիցէ երևեցոյց երեսացդ Աստուծոյ» (Սաղմ. ԽԱ 2-3), «Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան» (Սաղմ. ՀԲ 26) և այլ սոյնպիսիք: Ապա թէ այսպէս է, որ սուրբքն ամենայն բարոյն կու ցանկան և զբարին կու գործեն և Աստուծոյ տեսուն կու ցանկան, բարին բնութեամբ է ի մարդոյն՝ բարեացն ցանկութիւն, և արտաքոյ բնութեան՝ չարեաց ցանկութիւնն: Զոր օրինակ մարդ, որ ի վերայ ձեռացն անկանի և գնայ, կամ զգլուխն ի գետին դնէ և ի վերայ գլխոյն կամենայ գնալ. այս արտաքոյ բնութեան է և արտաքոյ բնական ընթացից և անյարմար և դժուարին: Իսկ ի վերայ ոտիցն ընթանան՝ այս բնութեամբ է և բնական, որ մարդ ի վերայ երկու ոտիցն ընթանայ, և դիւրին է: Բարին ո՛չ բնութեամբ է ի մարդն և ո՛չ եկամուտ, այլ այսպէս է: Զի զբարի*[4] *ցանկութիւնն, որ մարդ առաքինութեանն և բարոյն կու ցանկայ, որ զբարին գործէ և զԱստուած սիրէ, զայս ցանկութիւնս Աստուած է եդեալ ի մարդն ի ստեղծմանն: Եւ այս բնական է ի մարդս, որ բարուն կու ցանկայ և կու սիրէ: Իսկ յօժարիլն, որ յօժարի և գոր-*

---

1 *բնագրում՝* փափաքին *(այսուհետև չենք նշում)*
2 *բնագրում՝* եղջուրու
3 *բնագրում՝* ի անձն
4 *բնագրում՝* զբարին

*ծէ զբարին, այն ի մեր կամացս է, որ մեք կամենամք և չանամք և գործեմք զբարին, այլ այնպէս կամեցաւ Աստուած, զի կամացն մերոց կարօտասցի: Եւ այս [յ]այտնի է ի պատուիրելոյն Տեառն, որ ասաց, թէ՝* «Զոր կամիք, թէ արասցեն ձեզ մարդիք, այնպէ՛ս արարէք և դուք նոցա» *(Ղուկ. Զ 31): Որ զայն ցուցանէ, թէ գործելն զբարին ի մեր կամացս է: Թէ բնութեամբ էր առաքինութիւնն, ո՛չ էր պէտս չանալոյ, որ մարդ չանայր և զառաքինութիւնն գործէր: Զի այն, որ բնութեամբ գործէ առանց չանալոյ՝ կու կատարի, զի առաքինութիւնն առանց չանալոյ ո՛չ կատարի նա և ո՛չ առանց աշխատանաց՝ թէ՛ պահք է, թէ՛ աղօթք է և թէ՛ զինչ և իցէ աշխատանօք և չարչարանօք: Նոյնպէս թէ բնութեամբ էր չարանալն, մեղադրութիւն ո՛չ էր համարեալ, այլ բնութեամբ ո՛չ է չարութիւնն և մեղքն, այլ՝ եկամուտ է և ի կամացն: Եւ այս, որ առաքինութիւնն բնութեամբ ո՛չ է, և մեղքն և չար բնութեամբ ո՛չ է, այլ թէ առաքինութիւնն է և թէ մեղքն՝ ի մեր կամացս կատարի: Եւ յոլով ունիմք այսոցիկ վկայք բանիւք և արդարութեամբ, որ առաքինութիւնն աշխատանօք է, կատարի և ի մեր կամացս: Նոյնպէս և զմեղքն մեր կամօքս կու գործեմք: Որպէս ասէ Քրիստոս արդարոցն.* «Եկա՛յք, օրհնեալք Հօր իմոյ» *(Մտթ. Իե 34), և մեղաւորացն.* «Երթա՛յք յինէն, անիծեա՛լք, ի հուրն յաւ[իտենական]» *(Մտթ. Իե 41): Տե՛ս, որ կամօք գործեցին զբարին և աշխատանօք, վասն այն օրհնէ և վարձ տայ: Նոյնպէս մեղաւորքն իւրեանց կամօքն գործեցին զչարն, զանէծքն ժառանգեցին: Եւ Պօղոս առաքեալն ճնշէր զմարմինն և չարչարէր ի հնազանդութիւն պատուիրանացն Աստուծոյ և յաւետարանին քարոզութիւնն: Տե՛ս, որ առաքինութիւնն աշխատանօք է և ո՛չ բնութեամբ: Դարձեալ. երբեմն պիտանի ասէր զինքն և երբեմն՝ անպիտան. անպիտան՝ յորժամ ո՛չ է հաւատացեալ, և պիտանի՝ յորժամ հաւատացաւ ի Քրիստոս: Զի երկուքն այլ ի կամացն էր: Մի էր ինչ, որ ի կամացն է, և է՝ որ բնութեանն: Զի բարեաց ցանկութիւնն բնութեամբ է Աստուած ի*

*մարդն եղեալ, և գործով կատարելն ի կամացն է, որ կամենայ և կատարէ: Եւ թէպէտ բնութեամբ է ի մարդն, յորժամ ո՛չ կամենայ՝ ո՛չ կատարէ: Եւ այն, որ կամօք կատարէ, զառաքինութիւնն դիւրին թուի*[1] *և սակաւ և հեշտ: Իսկ այն, որ ակամայ կատարէ, դժուարին և ծանր թուի*[2] *նմա:*

**Զի վասն մեղաց սակաւ ինչ տրտմեցուցի զնա** *(ԾԷ 17):*

*Զիա՞րդ «սակաւ ինչ տրտմեցուցի զնա» ասէ, զի Հ (70) ամ ի գերութիւն կացին, ի պատիժս: Մի՛ զամենայն ժամանակս դժնեայ վարկանիցիս, զՀ (70) ամն ի չարչարանք և ի տանջանք, այլ սկիզբն միայն: Զի գնալն, որ գերի գնացին, չարչարանք էր նոցա, մինչ որ ի Բաբելոն հասան, և անդ տարի մի այլ կամ կէս տարի չարչարեցին: Եւ յետոյ փոխեաց Աստուած զսիրտս նոցա, որ կու ողորմէին նոցա, և խնամք տանէին*[3]*, և դիւրեաց նոցա ի չարչարանացն: Զի յԱստուծոյ ձեռքն էր ամենայն, յորժամ թոյլ ետ՝ եկին գերեցին և առեալ տարան, և յորժամ կամեցաւ ողորմել՝ քաղցրացոյց զսիրտ նոցա, որպէս ասէ. «Ետ զնոսա ի գթութիւնս առաջի գերչաց նոցա» (Սաղմ. ՃԽ 46): Զի այնքան դիւրեցաց, մինչ զի յորժամ աւետիս դարձին եհաս՝ ո՛չ ախորժէին ելանել:*

**Զի՞նչ պիտոյ են ինձ այնպիսի աւուրց պահք** *(ԾԸ 4):*

*Տե՛ս զազգի ազգի պատուիրանքն: Զի ո՛չ պահք և ո՛չ կուսութիւն, որ գլուխ է ամենայնի, ո՛չ են օգուտ, եթէ անպտուղք իցեն: Զի կէսք ի պատուիրանացն ինքեանք առանձինն են, և կէսք՝ այլովք իրօք զարգանան: Զոր օրինակ՝ ի մարմնական գործս են, որ ըստ ինքեան են գործք, որպէս ընթանալն և խօսելն և ուտելն, և են, որ այլովք, որպէս երկրագործելն, զի պիտոյանայ արօրն և սերմն, և ի գոտեմարտելն, իւղն և կրթուբթիւնն: Նոյնպէս և գործ պատուիրանացն են, որ ըստ ինքեան են, որպէս*

---

1 *բնագրում՝* թվի
2 *բնագրում՝* թվի
3 *բնագրում՝* պաճէին

*աղօթելն, ողորմելն, սիրելն զԱստուած և զընկերն: Եւ են, որ այլ իրօք պիտոյանան, որպէս պահքն և կուսութիւնն: Զի պարտ է ի սոցանէ պտուղ գոլ, և ապա՝ հաճոյասցին Աստուծոյ: Զի կարի մեծ ճգնութիւն է կուսութիւնն, և խոտեցան յիմար կուսանքն: Զարչարանք է պահքն, այլ խոտեցաւ փարիսեցին, որ պահեր երկիցս ի շաբաթու: Իսկ Դանիէլ պահեաց վասն այլոց և ընդունելի եղև: Պահեաց Մովսէս վասն այլոց, և հաճեցաւ Աստուած, զի ունէին պտուղ որպէս և իմաստուն կուսանք: Զի վասն Բ (2) պատճառի եդան պահք: Նախ՝ վասն նուազութեան մարմնոյն ի փափկութեանց, և երկրորդ՝ վասն պտղաբերութեան, զի այլոց օգուտ լիցի, այսինքն՝ ողորմութեամբ: Այլ թէ ասիցէ ոք. «Զիա՞րդ ոմանք ի հարստութեան են և ոմանք՝ յաղքատութեան, կէսք՝ ի հանգիստ և կէսք ի վիշտս տառապին: Զիա՞րդ ո՛չ հասարակաց ետ Աստուած զինչս, որպէս զարևն և զօդս և զանձրևս և զհողս»: Պատասխան է. նախ՝ թէև զինչս անհաւասար ետ, զի գոյաւորին պատրաստեաց տալ չքաւորին, որ լինի հաւասարք: Դարձեալ. ասէ Աստուծոյ նախախնամութենէ, զի զոմանս հարուստ և զոմանս աղքատս արար, զի բազում շահ լինելոց էր անտի: Նախ՝ զի մի՛ ամենեքեան հաղորդեսցին չարեացն, որ ի մեծութենէն լինի, որ են հոգիք աշխարհիս և պատրանք մեծութեանն, և մոռացումն հոգևորին, և ատելութիւնք և այլն: Սոքա ամենեքեան ի մեծութենէն լինին: Երկրորդ՝ մեծատունք մխիթարեսցին զցաւս աղքատացն և վարձատրեսցին, այսինքն՝ վաճառելով միմեանց զմարմնաւորն և զհոգևորն, և երկոքին շահեալ օգտեսցին: Որպէս ասէ առաքեալ[ն]. «Ձեր առաւելութիւնդ՝ ի նոցա նուազութիւնն, և նոցա նուազութիւնն՝ ի ձեր առաւելութիւնն» (հմմտ. Բ Կորնթ. Ը 14): Երրորդ՝ զի մի անկարգութեամբ վարեսցին, այլ երևեսցի կարգն առաջին և վերջին: Չորրորդ՝ զի գութ և սէր ընկեսցի ի մէջ եղբարց, մեծատանց և աղքատաց, որպէս ասէ Սիրաք. «Սիրէ անաստուն զանաստուն, և այր՝ զընկեր իւր» (հմմտ. Սիրաք. ԺԳ 19): Հինգերորդ՝ զի*

*միմեանց կարօտ լիցին և հնազանդեսցին վասն պիտոյիցն, որպէս ասէ առաքեալ[ն]. «Ծառա՛յք, հնազա՛նդ լերուք տէրանց մարմնաւորաց» (հմմտ. Եփես. Զ 5), և տեարցն ասէ. «Մի՛ առաւել նեղէն զծառայս, զի և ձեր Տէր գոյ յերկինս» (հմմտ. Ա. Կորնթ. Զ 7): Իսկ թէ զինչ պիտոյ է պահուցն պնդութիւն, զի ընդունելի լիցի, այդ է զոր ասէ.*

**Լո՛ւծ զկնջիւն անօրէնութեանց** *(ԾԸ 6):*

*Այսինքն՝ հեռի[1] լեր ի մեղացն: Կնճիռն[2] հանգոյցն է: Զի որպէս հանգոյցն դժուարալոյծ է, կա՛մ յղուկն կու ձգեն և կա՛մ յատամն, կա՛մ փայտ կու սրեն և ի ներս կու հարուն, և ապա՝ արձակի, նոյնպէս և անիրաւութիւնն և մեղքն զինչ և իցէ, որ սովորեալ է, դժուարաւ կու թողու մարդ ի բաց: Վասն այն զմեղքն հանգուցի նմանեցուցանէ և ասէ. «Լո՛ւծ[3] զկնճիռն և քակեա՛ զխարդախութիւն վաճառոց քոց բ[ռ]նութեամբ, և զամենայն մուրհակս անիրաւութեան ի բա՛ց պարուրեայ» (հմմտ. ԾԸ 6), այսինքն՝ զի մի տոկոսիւք պահանջեսցիս դու զոր ինչ պարտիս Աստուծոյ:*

**Բրդեա՛ քաղցելոց զհաց քո** *(ԾԸ 7):*

*Զխնամով տալն ասէ քո հացն, և մի՛ զօտարին: «Զաղքատս անյարկս տա՛ր ի տուն քո» (ԾԸ 7), զի և դու ի պատրաստեալ օթևանս մտանիցես: «Եթէ տեսանիցես զմերկսն՝ զգեցուցանի՛ր, և յընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես» (ԾԸ 7): «Լո՛յծ զկնճիռն անօրէնութեան» (ԾԸ 6), այսինքն՝ զմեղքն արձակեայ ի քէն: Որ բովանդակին ի Դ (4) իրս, այսինքն՝ ո՛չ զրկել զայլս, երկրորդ՝ զիւրն այլոց բաշխել[4], երրորդ՝ ո՛չ նենգել այլոց, չորրորդ՝ այլ նենգաւորացն թողուլ. և այս՝ առ ընտանիս*

---

1 *բնագրում՝* լեռի
2 *բնագրում՝* կնջիո *(այսուհետեւ չենք ծանոթագրում)*
3 *բնագրում՝* լոյծ
4 *բնագրում՝* բաշխեալ

*և օտարս: Արդ՝ առաջին գայլս ո՛չ զրկիլ ո՛չ յայտնի բռնութեամբ որպէս իշխանք և աւազակք, և ո՛չ ի ծածուկ որպէս գողք, և ո՛չ խաբէութեամբ որպէս վաճառողք: Իսկ երկրորդն՝ զիւրն այլոց տալ՝ քաղցելոց կերակուր, ծարաւելոց ջուր, մերկոց զգեստ, և զայլ պէտսն, որպէս ասէ Քրիստոս. «Զհիւանդս և զբանտեալս տեսանել, և զօտարս ժողովել» (հմմտ. Մտթ. Իե 35-36): Իսկ երրորդն՝ ո՛չ նենգել այլոց, ո՛չ բանիւ տրտնջել, կա՛մ բամբասել, կա՛մ զրպարտել, կա՛մ հայհոյել և սուտ խօսել, կա՛մ բարկանալ, և ո՛չ նենգել մտօք, կա՛մ հպարտանալ, կա՛մ նախանձել, ատել, և ոխալ: Այլ և ո՛չ նենգել գործով՝ առնոյլ և ո՛չ հատուցանել, հարկանել կամ սպանանել, և ո՛չ նենգել յարատ հայեցմամբ աչաց: Իսկ չորրորդն, որ է թողուլ նենգաւորացն, եթէ մտօք խէթ ունին զքէն, եթէ բանիւ յանցեան քեզ, եթէ պարտքն ըստ մարմնոյ ո՛չ կարեն հատուցանել՝ ներել և թողուլ ամենեցուն, զի և Աստուած զձերն թողցէ: Ըստ այնմ՝* «եթէ թողցուք մարդկան զյանցանս նոցա, նոյնպէս և Հայրն ձեր երկնաւոր թողցէ» *(Մտթ. Զ 14): Արդ՝ այս է, որ ասէ ըստ կարգի.* «Լո՛յծ զկնճիռն անօրէնութեան», *այսինքն՝ զկրկնուածս և զշարամանութիւնս մեղացն, զի մեղքն ո՛չ է ուղղութիւն և դիւրութիւն:* «Քակեա՛ զխարդախութիւն բռնութեան վաճառոց» *(ՃԼ 6), այսինքն՝ զնենգութիւն վաճառոց, զի որպէս բռնաւորն յայտնի յափշտակ է, նոյնպէս և նա գողութեամբ ի վաճառն:* «Զամենայն մուրհակս անօրէնութեան պատառեա՛» *(ՃԼ 6), այսինքն՝ զգիր վաշխիցն, զոր սովոր են չարք ոմանք առնել արծաթոյ կամ այլ իրաց: Եւ ուսիր ի հասարակաց Փրկչէն, զի զմուրհակս պարտեաց մերոց, թէպէտ ո՛չ էր անօրէնութեան, այլ՝ արդարութեան պարտք. այն է՝ զայս դատավճիռս պատառեաց Քրիստոս և բևեռեաց ընդ խաչափայտին: Նոյնպէս և դու արա՛յ,* «Արձակեա՛ զնեղեալս թողութեամբ» *(ՃԼ 6): Այս գերագոյն է քան զառաջինն: Զի անդ զգիրս շահուցն ասաց պատռել և աստ ասէ, թէ ո՛չ ունիցի, ուստի՞ հատուցանիցէ: Մի՛ նեղել զնա, այլ զամե-*

*նայն պարտսն թող նմա, զի մի՛ պատժեսցես ըստ պարտապանաց առակին, որպէս ասէ Աւետարանն:* «Զաղքատս անյարկս տար ի տուն քո, և զմերկն զգեցոյ» *(ՃԸ 7): Զայսոսիկ Տէրն յինքն վերաբերէ ասելով.* «Օտար էի՝ և ժողովեցէք, մերկ էի՝ և զգեցուցէք» *(Մտթ. ԻԵ 35-36) և այլն: Եւ թէ ամենևին իսկ չիցեն պատուիրանք, ի բնութենէդ քո ո՞չ ողորմիս նոցա, յորժամ դու զանազան կերակրօք յագիս և զբնութենակիցն քո քաղցեալ տեսանես, դու կերպաս զգենուս, և նա մերկ շրջի արտաքս:* «Եւ [յ]ընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես» *(ՃԸ 7), այսինքն՝ շեղեսցես կամ դարձուցանիցես: Եւ ընտանի ո՛չ միայն արենակիցն է, այլ և բնութենակիցն է, մանաւանդ թէ դաւանակիցն է, որք ի մի յարգանդէ աւազանին ծնանին և միով կերակրով սնանին, և միոյ գլխոյն Քրիստոսի անդամք են, այլ և՝ լեզուակիցն: Նա՝ կրօնակիցն, ըստ կարգի ընտանիք են միմեանց, զորս պարտ է առաւել խնամել, որպէս ասէ Պօղոս.* «Որ ընտանեաց խուրոց խնամ ո՛չ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս է քան զանհաւատ[ս]ն» *(Ա. Տիմոթ. Ե 8): Յետ այսորիկ զողորմութեան փոխարէն կարգէ ըստ Ե (5) եղանակի: Եւ այս է առաջինն որ ասէ.* «Յայնժամ ծաւալեսցէ կանուխ լոյս [քո]» *(ՃԸ 8), այսինքն՝ օգնականութիւնն Աստուծոյ իբր զառաւօտ սփռեսցի ի վերայ քո, զի ծաւալումն զառաւտուիւնն նշանակէ: Երկրորդ՝* «եւ բժշկութի՛ւն քեզ վաղվաղակի հասցէ» *(ՃԸ 8), այսինքն՝ զխղխթեալ վերս մեղացն բժշկէ Հոգոյն: Եւ տե՛ս, զի ի մեր ձեռս է կանուխ և անագան բժշկութիւնն: Երրորդ՝* «եւ գնասցէ առաջի քո արդարութիւն քո» *(ՃԸ 8)՝ որպէս կարապետ և նուիրակ: Եւ քեզ մեծաձայն առաջի թագաւորին ընթանան ի պատիւ նոցա, քան ի առաւել արդարութեան գործն մեծ քարոզ է և պատիւ գործողին, որպէս ասէ Յակոբոս.* «Բարձր ի գլուխ պարծի ողորմութիւնն առ [դատաստանաւն]» *(Յակոբ. Բ 13): Զորրորդն՝ որ ասէ.* «Եւ փառքն Աստուծոյ զքև փակեսցին» *(ՃԸ 8): Որ ծիրանի թագաւորական կամ բեհէզ պատուական իցէ քան*

զհանդերձս արդարոյն, որ է փառքն Աստուծոյ, որպէս ասէ Տէրն. «Փայլեսցին արդարքն իբրև զարեգակն» (հմմտ. Մտթ. ԺԳ 43): Հինգերորդ՝ «Յայնժամ կարդասցես առ Աստուած, և լուիցէ քեզ» (ՃԸ 9): Զի՞նչքան զայս մեծ կայցէ, որ զինչ և խնդրէ մարդ, լսէ և կատարէ Աստուած, և ո՛չ միայն այս: Այլ՝ «Մինչդեռ խօսեսցիս, ասասցէ թէ՝ Ահաւասիկ հասեալ կամ» (ՃԸ 9), այսինքն՝ նախքան զխնդրելն տամ զհայցուածն: Ո՞ր հայր գթած, կամ բարեկամ սիրելի յառաջ քան զխնդրելն տայ, որպէս Աստուած խոստանայ տալ: Եւ այս ինչ պատճառաւ. վասն պատուիրանացն զոր տուաւ մի հացի և բաժակ մի ջրոյ, և սակաւ մի զգեստոց և տանց օթևանաց: Տե՛ս, թէ զինչ տաս և զինչ առնուս. յԱստուծոյ՝ զսէրն, և ի մարդկանէ՝ զփառս: Վեցերորդ՝ այս որ ասէ. «Յայնժամ ծագեսցէ ի խաւարի լո՛յս քո» (ՃԸ 10), այսինքն՝ թէ վիշտք և փորձութիւնք հոգևոր և մարմնաւոր փակեալ են զքեզ շուրջանակի որպէս խաւար: Այնքան կարող է զօրութիւն ողորմութեանն, զի յորժամ ծագէ ի վերայ քո որպէս լոյս արեգական և փարատէ զխաւար կարեաց քոց, և ո՛չ միայն այս, այլ և զհուրն յաւիտենական շիջուցանէ, որպէս ասէ Սիրաք. «Զբորբոքեալ հուր՝ ջուր շիջուցանէ, և զմեղս քաւեն ողորմութիւնք» (Սիրաք. Գ 33): Եւթներորդ՝ «Եղիցի Աստուած քո ընդ քեզ յամենայն ժամ» (ՃԸ 11): Եւ այլ զի՞նչ մեծ քան զայս իցէ, որ Աստուած ընդ մարդոյն լինի յամենայն ժամ: Զայս խոստացաւ Տէրն աշակերտացն. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչ ի կատարած աշխարհի» (Մտթ. ԻԸ 20): Ութերորդ՝ զի ասէ. «Լցցի՛ ըստ ցանկութեան անձն քո իբրև զպարտէզ ջրալից» (ՃԸ 11), այսինքն՝ այնպէս առատանայ քո բարութիւնն հոգևոր և մարմնաւոր, զի զոր ինչ ցանկաս լինիցի քեզ, որպէս Յոբայ եղև: Տե՛ս, թէ որքա՞ն շինուածս ունէր քան ի փարթամութիւն, վասն որոյ ասէր. «Ոտոգանէին լերինք իմ կաթամբ» (Յովբ. ԻԹ 6): Եւ այս ո՛չ վասն ագահութեան և տմարդութեան եղև, այլ վասն մարդասէր և առատ բարուցն եղև, որ Հայր էր որբոց և այրեաց,

*ոտք էր կաղաց և աչք կուրաց, որոյ բաց էին հանապազ դրունքն ընդդէմ աղքատաց: Իններորդ՝ զի ասէ.* «Եւ շինեսցին աւերակքն քո յաւիտենից» *(ԾԸ 12), այսինքն՝ զի ողորմութեամբ շինին քաղաքք և տունք աւերեալք, ըստ մարգարէին՝* «Ասացեր, թէ աշխարհս ողորմութեամբ շինես[ցի]» *(Սաղմ. ՁԸ 3): Աստ՝ մարմնաւորն և անդ՝ հոգևորն, և յաւիտենական յարքն պատրաստի վասն ողորմութեան, ըստ այնմ թէ՝* «Եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք [զ]պատրաստ[եալ ձեզ արքայութիւնն]» *(Մտթ. Իե 34) և այլն: Տասներորդ՝ զի ասէ.* «Եղիցի քո մշտնջենաւոր[ք] ազգաց ազգս» *(ԾԸ 12), այսինքն՝ զաւակ և յիշատակ քո մշտնջենաւոր կացցեն ի վերայ երկրի: Եւ յիրաւի իսկ: Զի թէ վասն անողորմութեան սատակեսցէ զաւակ մարդոյ, որպէս ասէ Դաւիթ.* «Սատակեսցի յերկրի յիշատակ նորա» *(հմմտ. Սաղմ. ԼԳ 17), վոխանակ զի ո՛չ յիշեաց առնել զողորմութիւն: Ապա յայտ է, թէ վասն այն ողորմութեան անջինջ մնայ յիշատակ մարդոյն: Եւ զի այսպէս, և ևս քան զայս փոխարէն կայ ողորմութեանն: Վասն այսորիկ ի սերմ առակէ Աստուած զողորմութիւնն, որպէս ասէ.* «Սերմանեցէ՛ք զարդարութիւն, և հնձեցէ՛ք զպտուղն կեն[աց]» *(Ովսէ. ժ 12): Զի որպէս սակաւ սերմանի և բազմապատիկ հնձի, նոյնպէս և ողորմութիւնն՝ որպէս ցուցաւ: Այսքան առ այս:*

*Եւ գիտելի է, զի ժ (10) իրօք կատարեալ լինի ողորմութիւնն Աստուծոյ, զոր աստ կարգէ: Նախ՝ սուրբ ձեռօք և յարդար վաստակոց, միշտ և յօժար կամօք, առանց տրտնջելոյ, առատ և զուարթ, և աղքատաց, և ծածուկ և հասարակ: Արդ՝ նախ սուրբ ձեռօք, զի տուողն ողորմութեան մերժէ յինքենէ զմեղքն, և ապա՝ ընդունի Աստուած: Վասն որոյ ասէ.* «Եթէ մերժեսցես դու ի քէն զկնճիռն» *(ԾԸ 9), որ է մեղքն: Ապա թէ ո՛չ՝ ի մեղաւորաց ո՛չ ընդունի զնուէրս, որպէս այլուր ասէ, թէ՝* «Մեղաւորն մատուցանիցէ ինձ նաշիհ և պատարագ այնպէս է, որպէս թէ զշուն ոք մորթիցէ» *(հմմտ. ԿԶ 3), և այլն: Երկրորդ՝ զի ողորմու-*

թիւնն ո՛չ լիցի յափշտակութեանց կամ ի գողութեան, որպէս ասէ, թէ՝ «Մերժեսցես զձեռնձգութիւն» (Հմմտ. ԾԸ 9), այլ պիտոյ է ի հալալ վաստակոց, որպէս ասէ առաքն. «Պատուեա՛ զՏէր ի քոց արդար վաստակոց» (Առակ. Գ 9): Երրորդ՝ զի ասէ և զբանս տրտնջման, որպէս և Պօղոս ասէ. «Զամենայն ինչ զոր և առնիցէք առանց տրտնջելոյ» (Փիլիպ. Բ 14): Զի տրտունջն պղծէ զգործն, ապականէ զպտուղն, դառնացուցանէ զքաղցրն: Զի տրտնջողն նշանակ է ծոյլ և անյօժար սրտի, այլ յորժամ գործէ՝ լռեսցէ բերանդ: Զի սովոր են այնպիսիքն խիստ բարբառել դէմ ժտութեան կարօտելոցն, և ո՛չ ածէ մտաւ: Եթէ չէր կարօտ՝ ո՛չ ժտէր, զի հարկ աղքատութեանն ածէ զնա յայն, վասն զի չար գազան է աղքատութիւնն և ուտէ ի ներքս: Այլ նայելով ընդ Տէրն՝ նմանեսցուք ըստ չափոյ զօրութեան մերոյ, զի նա յայնժամ բարկանայ, մինչ մեք ստէպ ո՛չ խնդրիցեմք: Եւ մեք զիա՞րդ իշխիցեմք ցասնուլ մինչ կարօտեալքն թախանձիցեն զմեզ: Զորրորդ՝ զի մի՛ միանգամն և երկիցս առնիցեն զողորմութիւնն և բաւական համարեսցին, այլ յամենայն ժամ, որպէս ասէ առաքն. «Ողորմութիւն և հաւատք ի քէն մի՛ պակասեսցին» (Առակ. Գ 3): Եւ դարձեալ ասէ. «Մի՛ դանդաղեր բարի առնել կարօտելոց, յորժամ ձեռնհաս իցես» (Առակ. Գ 27): Եւ մարգարէս ասէ. «Տացե՛ս քաղցելոց զհաց» (ԾԸ 10), որ է նշանակ մշտնջենաւորի, զի միշտ քաղցի ոք: Հինգերորդ՝ զի իցէ յօժար կամօք որպէս ասես՝ զհաց քո սրտի մտօք: Եւ այնպէս պարտ է յօժարութիւնն ի տալն, որպէս թէ առնուս և ո՛չ տաս: Եւ արդ՝ արև առնումք, քան թէ տամք: Զի տամք սակաւ զչնչին և զապականացու իրս, և առնումք զմեծ պարգևս անապական կենացն: Վեցերորդ՝ զի կարօտելոցն առնեմք զողորմութիւն, որպէս ասէ. «Զանձինս կարօտեալս ելի՛ց բարութեամբ» (Սաղմ. ՃԶ 9): Զայս և Տէրն հրամայէ. «Տո՛ւք փոխ այնոցիկ, ուստի ակն ո՛չ ունիցիք առնուլ» (Հմմտ. Ղուկ. Զ 35): Եւթներորդ՝ զի զկարօտեալս յագեցուցանիցես, այսինքն՝ առատ տալ զողորմութիւնն

*և ո՛չ ճշդելով, որպէս ասէ Պօղոս.* «Որ ճշդելով սերմանէ՝ ճշդելով և հնձեսցէ» *(Բ. Կորնթ. Թ 6): Եւ առաւտացն ասէ.* «Աստուած իմ լի՛ արասցէ զամենայն բարութիւնս ձեր» *(Փիլիպ. Դ 19): Իսկ ուղիղորդ՝ զուարթ երեսօք տալ, որպէս ասէ Սողոմոն.* «Զտուրս զուարթառատ սիրէ Աստուած» *(Բ Կորն. Թ 7, հմմտ. Առակ. ԻԲ 9): Զի ո՛չ այնքան ի տուրս նայի Աստուած, որքան ի կամս տուողին, որպէս գովեցաւ կինն այրի, որ զերկու փողն էարկ ի գանձանակն, քան որք զբազումս արկին: Իններորդ՝ պարտ է առնել զողորմութիւնն ի ծածուկ, ըստ այնմ՝* «Մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործ[է աջ քո]» *(Մտթ. Զ 3): Տասներորդ՝ զի պարտ է բաշխել զողորմութիւնն առ հասարակ բարեաց և չարեաց, զի ո՛չ է ժամանակ ընտրողութեան, այլ՝ ողորմութեան: Զայն ասէ սուրբն Յոհաննէս.* «Եղերո՛ւք գթած[ք], որպէս և [Հ]այրն ձեր երկնաւոր գթած է» *(Ղուկ. Զ 36): Այս թէ որքան իրք պիտոյ են, զի կատարեալ լիցի ողորմութիւնն:*

*Կան և ի վերայ ողորմածացն երբեմն փորձութիւնք, սակայն նոքա, որ տկարամիտքն են և ո՛չ են կատարեալ յիմաստութիւն գրոց, գայթակղին բազումք նոքա, որ տկարամիտքն են, և կ՛ասին ի բարին առնելոյ, այսինքն՝ թողուն զողորմութիւն առնելոյ, ասեն թէ՝* «Սո՛ւտ է, որ ասեն, թէ լաւութիւնն մարդոյն ի դէմ կու գայ և լաւութիւնն փոխարէն կայ: Ապա թէ այս ճշմարիտ էր, է՞ր ո՛չ եկ մեզ ի դէմ, որ այս չարիս պատահեցաք»: *Բայց որք կատարեալ մտօք ի բարին նայեցին*[1] *իբրև զՅոբ, ճանաչեն, զի յևս մեծութիւն հանէ զնա Աստուած, յորժամ ի փորձութիւնն ընտիր գտանիցին: Զի գիտէ յորժամ փորձանացն համբերէ, յայլ առաւել մեծութիւն և ի փառս հանէ: Իսկ խակացն մտօք աստեն զփոխատրութիւնն առնէ:*

*Դարձեալ. կրկին կու տայ մեծութիւն և կու ազատէ ի փորձանաց վասն աղաղակելոյն նոցա, որ կու աղաղակեն և կու*

---

1 *բնագրում՝* Նայիցին

*տրտնջան առ Աստուած: Կու տայ դարձեալ նոցա բարի, ըստ մանկանց օրինի: Զի յորժամ հանիցէ ինչ ոք ի ձեռաց նոցա՝ զլալ Հարկանեն, զկական բառնան և լան: Յայնժամ դարձեալ կու տան, զինչ որ առեալ են, և ասեն. «Մի՛ լար, զի ետու զքո իրն, որ առի»: Նոյնպէս նոքա, որ խակ են մտօք, յորժամ փորձութիւն տայ Աստուած, կու լան և կու աղաղակեն, թէ՝ «Էՙր այս մեզ պատահեցան», և չեն համբերեր և զփոխարէնն զմտաւ չեն ածեր և համբերեր:*

*Դարձեալ. կու տայ Աստուած բարի և ի փորձանացն կու ազատէ, որ չի կորնչին: Իսկ իմաստնոցն և գիտնոցն՝ ո՛չ այնպէս, զի առաւել յուսովն պարարին միտք նոցա, և ո՛չ Համարին, թէ աստ կորնչի ինչ ի նոցանէ, զի ո՛չ ինչ իր որ գործեն կամ նեղութիւն որ կրեն՝ առանց փոխարինաց վարձուց Հատուցման ո՛չ է. գիտեն զայս: Վասն այն համբերեն փորձանաց և նեղութեանցն, և նոքա են, որ աստուածեղէն պատուիրանօքն իբրև զպարտէզ ջրարբիք են, և իբրև զաղբիւր, ուստի ջուր ո՛չ պակասիցէ: Զի որպէս յաղբերէն ջուրն միշտ կու բղխէ, և ի պարտիզեն ջուրն անպակաս է, զի միշտ կու կանաչեցուցանէ և պտղաբերէ, նոյնպէս՝ ողորմութիւնն Աստուծոյ ի վերայ ողորմածացն: Այսպիսի զօրութիւն ունի ողորմածութիւնն: Այսպիսի էր և Յոբ, զի ասէ, թէ՝ «Ոռոգանէին[1] կաթամբ լերինք իմ» (Յովբ. Իթ 6): Զառատութիւն[ն] և զմեծութիւնն, որ ետ նմա Աստուած վասն բարութեանն և համբերութեանն, և այս մեծութիւնս, որ եղև սմա, մի՞թէ վասն ագահութեան եղև, զի ագահ էր և ժողովեաց ինչս, և տմարդութեան, որ պինդ էր և պահեաց. ասեմ թէ՝ ո՛չ: Այլ վասն մարդասէր և առատ բարուցն, որ հայր էր որբոց և այրեաց, ոտք էր կաղաց և աչք կուրաց, և բաց էին դրունքն հանապազ ընդդէմ աղքատաց: Վասն այն ետ նմա Աստուած, և յետ փորձութեանն կրկին ետ նմա զմեծութիւնն և աս քան զևս: Զի*

---

1 *բնագրում՝* առոգաձէին

*միայն յԱստուծոյ ողորմութիւնն ապաստան լինին, թէ Աստուած ողորմած է, թէ մեք զբարին գործեմք թէ ո՛չ՝ կու ողորմի մեզ: Եւ անփոյթ արասցեն զբարեգործութիւնն, զի չէ բաւական մարդասիրութիւնն Աստուծոյ միայնոյ յուսալով ակն ունել փրկութեան, այլ և՝ զգործ բարութեան փոյթ յանձինս ունել: Ահաւասիկ աղքատօք բացաւ դուռն վերին արքայութեան. «Երանի՛ աղքատաց, զի նոցա է արքայութիւնն երկնից» (Մտթ. ե 3): Վասն որոյ ամենայն բարեաց պատճառ խոնարհութիւնն է, որպէս և ամենայն չարեաց՝ հպարտութիւնն: Զի Քրիստոս խոնարհութեամբ շրջեցաւ ի վերայ երկրի, նոյնպէս և առաքեալքն խոնարհութեամբ շրջեցան:*

*Զարեգակ[ն] Տեառն զտնօրէնութեան տարին ասէ, և զարեգակն փրկութեան տարին ասէ, որ փրկեաց զնոսա: Ի մէջ հրէից ո՛չ գիտէին, թէ Աստուած դատաստան պիտի առնէ կամ դատաստան է լինելոց, թէպէտ մարգարէքն գիտէին: Հոգևոր ուրախութիւնն է ուրախութիւնն, զի յորժամ շնորհս հոգևորս ընդունիցիմք, ուրախանամք ի Տէր առաւել քան յորդիս և ի ստացուածս: Եւ առաւել ևս ուրախութիւն այն է, յորժամ գիտենայ, թէ հաշտ է ընդ ինքեան Աստուած: Յորժամ Աստուած հաշտ լինի ընդ մարդոյն, վիշտքն չեն վիշտ համարեալ, զի սիրոյ ծնունդ է այս ուրախութիւնս և ճանաչողի զգութն Աստուծոյ, ըստ որում և իւրն բորբոքի սէրն: Եւ լինի մարդ, որ ասէ. «Յորժամ ո՛չ տեսանեմ զԱստուած, զիա՞րդ սիրեմ զնա»: Տե՛ս և ի վեր հայեաց յերկինքն և լուսաւորաց գեղեցկութիւնն, թէ որպէս գեղեցիկ են սոքա, և այսով՝ զԱստուած գեղեցկութիւնն իմ[ա]նայ և զիմաստութիւնն և զզօրութիւնն, և սիրեայ զնա: Զի դեռ այս մի մասն է ի ստեղծուածոցն Աստուծոյ, և թէ զայս ևս ասես. «Հեռի է, ո՛չ կարեմ տեսանել»: Այլ օրինակ քեզ. սրբեայ զսիրտ[դ] և զմիտքդ և զխորհուրդդ, և նայիր ի քո սուրբ սիրտդ, և զԱստուած ի քո սուրբ սիրտդ տեսանես, զի ասէ. «Երանի՛*

այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տե[սցեն]» *(Մտթ. Ե 8)*:

**Ցնծասցէ՛ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկու-թեան և պատ[մուճա՛ն[1] ուրախութեան]** *(ԿԱ 10)*:

*Զի հարսանիք են՝ և հոգևոր հարսանիք, զի հոգին ընդ Աստուծոյ հաղորդեան, զի ի խաչին խօսեցեալ եղեն փեսային Քրիստոսի, և ի հանդերձեալն միանան ընդ նմա՝ յառագաստն երկնաւոր: Որպէս ոմն յաստուածապետից արանցն ասէ. «Յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսային»: Տե՛ս զաղքատութիւնն հարսինն, զի զհանդերձն և զզարդարանքն ի փեսայէն առնու: Զի սովորութիւն է ի մարմնաւորս, որ հարսն ինքն զինքն կու գեղեցկացուցանէ և զարդարէ, և յիւրմէն լինի զգեստն, և ապա՝ փեսային կու լինի: Իսկ սա ի փեսայէն առնու զգեստն և զզարդարանքն: Որպէս աղախին մի, որ լինի ծառայ և աղքատ, և թագաւորն ցանկայ նմա և գեղոյ նորա, և նա աղքատ լինի և ո՛չինչ չունեննայ, թագաւորն կու զգեցուցանէ զնա և զարդարէ և առնու իւր ի հարսնութիւն: Նոյնպէս և Քրիստոս արար եկեղեցոյ իւրում, այսինքն՝ մարդոյս ազգիս հեթանոսաց, զի սիրեաց զմարդիք և կամեցաւ առնուլ իւր հարսն, ինքն զարդարեաց և սրբեաց և գեղեցկացոյց աւազանաւն և էառ իւր ի հարսնութիւն, որպէս ասէ. «Իբրև փեսայի ե՛դ ինձ պսակ, և որպէս հարսն զարդու զար[դարեաց զիս]» *(ԿԱ 10)*:

**Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ գայ յԵդոմայ** *(ԿԳ 1)*:

*Բանս այս նախ յարմարի ի վերայ եդոմայեցոց, որք սատակեցան յիսրայէլէ, յորժամ ազատեցան ի Բաբելոնէ, զի չար դրացիք էին և չարաչար վիշտս անցուցանէին ընդ հրէայսն: Եւ նոքա էին, որ ասէին և առ ոսս դոփէին, թէ՝* «Քակեցէ՛ք, քակեցէ՛ք զտաճարդ մինչև ի հիմն հասուցէք» *(Սաղմ. ճԼԶ 7)*: Վասն

---

1 *բնագրում՝* պարտ[մուճաց]

որոյ մարգարէս յառաջագոյն մարգարէացաւ և ետես մարգարէական հոգով այր մի, որ էր ինքն Աստուած, որ [յ]եղոմայ ի հետ կու գայր և դէմքն դէպ յերուսաղէմ: Մարգարէս յԵուսաղէմ էր և զտեսիլն անդ ետես: Այրի մի ի հանդերձս թաթաւեալս իբրև հնձանահարի, արեամբ խաղողոյ, և գօտևորեալ գօտի ընդ մէջն, և զհալաւն ի վեր սօթէր, և կու գայր յեղոմայ դէպ յերուսաղէմ, որ զնոցա կորուստն և զպատուհասն ցուցանէր, որ պատուհասելոց էր զնոսա: Եւ մարգարէն ինքն յինքն հիացաւ և զարմացաւ, և ինքն յիւր միտն եհարց, թէ՝ «Այս ո՞վ է, որ դիմեալ պայ յեղոմայ» (ԿԳ 1): Սովորութիւն է Աստուծոյ, զի յորժամ հաւատարիմ կամի առնել զբանն, ո՛չ միայն ի մարգարէսն ցուցանէ, այսինքն՝ ո՛չ միայն մարգարէից կու յայտնէ և ասէ թէ՛ ուրախութեան բան, թէ՛ պատուհասի, թէ՛ այլ ինչ իրաց, ո՛չ միայն կու յայտնէ և ասէ մարգարէից, այլ և յայն կերպն կու ցուցանէ զինքն՝ այլ և այլ դէմս ցուցանէ զինքն, զոր ինչ որ իրաց պատշաճն է: Սոյնպէս Ամովս ասէր. «Տեսանէի զՏէր ի վերայ ադամադեայ[1] պարսպի» (հմմտ. Ամովս. է 7), որ զխնամքն ցուցանէ և զպահպանութիւնն, զոր ունէր ի վերայ նոցա, որպէս պարիսպն պահապան է: Նոյնպէս և Յեսու Նաւեայ իբր զօրավար[2] ետես՝ առ յօգնութիւն եկեալ: Այսպէս և աստ ետես Եսայի այր մի, որ դիմեալ գայր յեղոմայ՝ հանդերձս թաթաւեալս ի կարմրութիւն «բոսորայ» (ԿԳ 1): Բոսորն զառաւել մթնագոյն կարմիրն նշանակէ: «Գեղեցիկ պատմուճանաւ» (ԿԳ 1): Եւ որպէս էր գեղեցիկ, զի ասէ թաթաւեալ է արեամբ պատմուճանն: Զի գեղեցիկ յայնժամ լինի պատմուճանն, յորժամ սուրբ լինի յաղտոյ և մաքուր: Այս է զարմանք, որ թաթաւեալ էր արեամբ և գեղեցիկ երևէր: Վասն այն ետես մարգարէն և զարմացաւ: Յորժամ Աստուած զարմանալիս ինչ գործիցէ, զիա՞րդն մի՛ հարցաքններ դու, զի յորժամ կամենայ Աստուած զտգեղն այլ գեղե-

---

1 *բնագրում՝* անդամադեայ
2 *բնագրում՝* զօրաւար

*ցիկ կարէր ցուցանել: «Եւ բո՛ւռն պօրուԹեամբ» (կգ 1), որ է հզօր և համեստ: Որ զայն ցուցանէ, որ թէպէտ հզօր է, վաղվաղակի զզօրուԹիւն իւր ի գործ ո՛չ ածէ և պատուհասէ զմեղաւորն, այլ երկայնամտէ ժամանակս ինչ, որ դառնան ի մեղաց:*

**Ընդէ՞ր կարմիր են ձոր[ձ]ք քո** *(կգ 2):*

*Ո՛չ արիւն միայն էր և ո՛չ գինի սուրբ, այլ՝ ի մէջ երկուցն գունոցն երևէր: Պատասխանի տայ. «Հնձանահարաց» (կգ 2) ձևն՝ զգիւրուԹիւն պատերազմին ցուցանէր: «Հնձան հարի մխայն» (կգ 3), այսինքն՝ զի Իսրայէլ միայն կոտորեաց զյեղոմայեցիքն յետ դարձին: Զի ո՛չ յաղագս մխոյ իրի էր գալուստ նորա, յաղագս այնորիկ և զանազան կերպարանաւն երևի մարգարէից: Նոյնպէս և ի մարդեղուԹեանն իւրում այլազգ հրէից երևէր, այսինքն՝ բարկուԹեամբ ահարկու, և այլ կերպարանաւ առաքելոցն, այսինքն՝ քաղցրուԹեամբ և հեզուԹեամբ և հանդարտ, և այլազգ Յակոբեանցն, և այլազգ Կղէոպե[ա]նցն, այսինքն՝ հասարակաց մարդոյ ձևով երևեցաւ ի ճանապարհին, և յԵրուսաղէմայ մինչև յԵմաւուս գնացին (տե՛ս Ղուկ. ԻԴ 13): Թումայի առաքելոյն խաչեալ և տանջեալ և չարչարեալ, և զձեռքն և զոտն բևեռեալ և զկողն խոցեալ՝ այնպէս երևեցաւ (տե՛ս Յովհ. Ի 26-29): Մարիամու զառաջինն պարտիզպանի ձևովն երևեցաւ և յետոյ՝ բաբունի կոչեաց (տե՛ս Յովհ. Ի 15-16): Եւ զայս առնէ վասն Բ (2) պատճառի: Նախ՝ ըստ իւրաքանչիւր չափոյ հաւատոցն երևէր, որչափ տանել կարէին՝ առաւել և նուազ և միջակ: Երկրորդ՝ ըստ պիտոյիցն երևէր, զոր ինչ ժամանակին պիտոյանայր՝ այնպէս երևէր: Ո՛չ թէ զբնուԹիւնն փոփոխէր կամ զդէմքն, քա՛ւ լիցի, այլ զերևումն այնպէս երևէր, որպէս որ մարդն ժամ մի բացեալ կու լինի և ժամ մի հանդարտ, երբեմն՝ ուրախ, և երբեմն՝ տրտում: Ո՛չ թէ դէմքն կու փոփոխի, այլ դէմք նոյն է: Բայց երևումն այնպէս տեսանի՝ երբեմն բարկուԹեամբ և երբեմն հանդարտ և այլն, նոյնպէս զայն իմացիր, և ո՛չ թէ՝ էուԹիւնն և*

*դէմքն փոփոխէր: Եւ որպէս Հայր Աստուած երբեմն ի բոց հրոյ երևէր Դանիէլ[ի] և երբեմն՝ ծեր և հին աւուրց, զի հուրն զպատժողական նշանակէր, և ծերն՝ զանսկզբնութիւնն: Եւ ո՛չ թէ բնութիւնն ինչ փոփոխիւր, քա՛ւ լիցի: Նոյնպէս և աստ ըստ պատշաճի տեղոյն փոխէ զկերպարանն՝ «ի կարմիր ձորձ» և «ի գեղեցիկ պատմուճան»: Զեկեղեցիս կոչէ պատմուճան գեղեցիկ: Եւ ուստի՞ եղև գեղեցկութիւնն՝ Քրիստոսի մահուամբն և չարչարանօքն և վարդապետութեամբն և մկրտութեամբ աւազանին: Մեք նորա եմք հանդերձ և նորա՝ մեք հանդերձ, և նա մեր կերակուր է և մեք՝ նորա: Եւ առաքեալն այլ առաւել մերձաւոր ցուցանէ քան զհանդերձն, զի ասէ. «Մարմին եմք ի մարմնոյ նորա և ոսկր՝ յոսկերաց նորա» (հմմտ. եփես. ե 30): Յորժամ մարմին եմք նորա, վասն այն գեղեցիկ է քան զայն, որ Աստուծոյ մարմին լինի:*

**Այլ ինքնին Տէր փրկեսցէ զնոսա** *(կգ 9):*

*Զի Յակոբայ ասաց. «Ես իջից ընդ քեզ յԵգիպտոս, և դարձեալ ես հանից զքեզ» (Ծննդ. խԶ 4), և յայլում վայրի թէ՝ «Ես երթայց» (խե 2): Առաջի իսկ մերս յայտնի է, զի ինքն էջ յերկնից յերկիր և մարդ եղև, փրկեաց զմեզ: Զնոսա Աստուծոյ՝ Աստուած փրկեաց, սակայն ի ձեռն հրեշտակին: Զի ամենայն ինչ միջնորդութեամբ հրեշտակացն լինէր նոցա, և աներևոյթ զօրութիւնն Աստուծոյ ընդ նոսա էր և փրկէր զնոսա, սակայն՝ միջնորդութեամբ հրեշտակաց: Իսկ Քրիստոս առանց միջնորդի ինքն փրկեաց զմեզ:*

**Ահաւասիկ, որ ծառայեն ինձ, ուրախ լիցին, և դուք ամաչեսջիք: Ահաւասիկ, որ ծառայեն ինձ, ցնծասցեն, և դուք [աղաղակեսջիք]** *(կե 13-14):*

*Յորժամ ազգ հեթանոսաց հաւատացին ի Քրիստոս, ուրախացան և ցնծացան, զի յօրէ յորմէ ելաւ Ադամ ի դրախտէն: Այլ այսպէս ուրախութիւն ո՛չ էր պատահեալ մարդկային բնութեանս, որպէս զօրս զայս, որ հաւատացին ի Քրիստոս, և ո՛չ այլ*

*պատահելոց է: Մէկ օր այլ պիտիր լինի այսպէս ուրախութիւն սորա հաւասար և այլ առաւել, այսինքն՝ դատաստանի օրն, որ զհաւատացեալքն իւր և զարդարքն պսակէ: Զի այն առաւել է քան զայս, այլ հիմն և արմատն այս էր: Ո՛չ թէ այս չափս էին մարգարէքն, որ գիր են գրեալ, և անուն նոցա պատմի ի մէջ եկեղեցոյ հաւատացելոց, այլ բազումք կային մարգարէք, որ մարգարէանային, նոցա և գիր ո՛չ են գրեալ: Եւ ո՛չ միայն նոքա, որ գիր ո՛չ են գրեալ, այլ բազումք կան մարգարէք, որ անգիտելի է ի մէնջ: Եւ ամենեքեան քարոզէին և մարգարէանային նոցա և խրատէին զնոսա, և նոքա ո՛չ անսային և ո՛չ ունկն դնէին բանից նոցա:*

*Վասն այն կուռցն զոհ մատուցանէին և երկրպագութիւն, զի նոցա խնդրուածքն կատարէր, զոր ինչ խնդրէին, և գովէին զնոսա և ասէին.* «Քեզի պէս աստուած ո՛չ գոյ, զի դու զօրաւոր ես քան զԱբրահամու Աստուածն, զոր մեր հայր Աբրահամ կու պաշտէր»: *Այլ և կուռցն զոհէին, թէ բարեբաստիկ լինէին, և մեծանային և փարթամանային:*

**Որ ճ (100)-ամեանն մեռանիցի, մեղաւոր է** *(կե 20):*

*Յետ դարձին մահ տարաժամ ո՛չ եղև ի մէջ նոցա, որ յառաջ քան զծերանալն տղայ մեռանէին: Այս բարճաւ ի միջոյ նոցա: Այլ ամենեքեան ծերանային և ի հարիւր ամն հասանէին և ապա մեռանէին, և որքան զհարիւր ամն պակասէր՝ ո՛չ մեռանէր,* «և ծեր, որ[ոյ] ո՛չ էր լցեալ զժամանակս իւր» *(կե 20)՝ ո՛չ մեռանէր, թէպէտ մեղաւոր էր: Զի վասն մեղացն անիծեալ լինէին, այլ ո՛չ մեռանէին տարաժամ:*

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ (՞)

# ՀԱՏՈՒԱԾՔ Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ՍԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ

**Ահաւասիկ Տէր զօրութեանց խոովեսցէ զփառաւորեալսն զօրութեամբ, և բարձրացեալքն ամբարտաւանութեամբ կործանեսցին, և հպարտացեալքն՝ խոնարհեսցին..., և Լիբանան բարձամբք իւրովք[1] կործանեսցի[2]** *(հմմտ. Ժ 33-34):*

*Եւ կամ զիմանալի փառաւորն՝ զճոխացեալն օտար մեծութեամբ, և զփառս Արարչին յափշտակեալ, զոր շարժեաց Տէր իւրով յայտնութեամբն, և իբրև զբարձուն Լիբանանու կործանեաց, զպիտակ անուննն[3] բառնալով ի նմանէ՝ յայտ յանդիման խայտառակեաց նշաւակեալ զնա:*

*Եւ ասասջիք.* **«Ցնծա՛ և ուրախ լեր բնակիչ Սիոնի»** *(հմմտ. ԺԲ 6):*

*Եւ զի նշանակաւ ասացաւ ճառս ի վերայ դարձի ժողովրդեանն: Տեսցուք զճշմարտութիւնն ի Տէր մեր և ի փրկութիւնն, զոր արար եկեղեցւոյ իւրում սրբոյ:*

**Տեսիլ բաբելացւոց, զոր ետես Եսայի որդի Ամովսայ** *(ԺԳ 1):*

*Կամելով Աստուած խրատել զժողովուրդն զԻսրայէլ վասն մեղաց՝ մատնեաց բաբելացւոց: Իսկ նոքա աւելի քան զչափ կամացն Աստուծոյ չարչարեցին զնոսա, ընդ որ դժուարեալ Աստուած կամեցաւ բառնալ զթագաւորութիւն նոցա զչար ի ձեռն մարաց և պարսից: Յառաջ քան զամս երկերիւր սպառնացաւ զայս մարգարէիւս, զի կանխասացութեամբս զղջասցին, ապա թէ ո՛չ՝ արբցեն զբաժակն բարկութեան: Վասն որոյ ասէ, թէ՝* **«ետես Եսայի»**, *զի և այլ մարգարէք տեսին զսոյն տեսութիւն:*

---

1 B իւրով
2 C կործանեսցին
3 B պիտականունն *փխ* զպիտակ անունն

**Դու ասէիր ի սրտի քումմ. Ելից յերկինս ի վեր քան զաստեղս: Արդ՝ ի դժոխս իջցես, և այպն առնիցեն զքեզ կենդանիք և մեռեալք, և ասիցեն. Այս այն այր է, որ զայրացուցանէր զերկիր դերուԹեամբ** *(հմմտ. ԺԴ 13, 15-16):*

*Յասացելոցս է ինչ, որ նշանակաւ, պատշաճի բաբելացւոց, բայց ճշմարտուԹեամբ՝ առ բանսարկուն, զի ո՞յր ի մարդկանէ այս բանք ի դէպ գան ասել, ԹէՀ՝* «Ելից ի վերոյ երկնից և ի վերայ աստեղաց արկից զաԹոռ իմ» *(հմմտ. ԺԴ 13): Նմին իրի ի դժոխս էջ: Ապա ասէ.* «Նստայց ի լերինն բարձու» *(ԺԴ 13)՝ գերիվերոյ հրեշտակաց, ի վերայ հիւսւսային սահմանուտ չարուԹեան իւրոյ ցրտացեալն յԱստուծոյ,* «Ելից ի վեր[1] քան զամպս» *(ԺԴ 14)՝ զմարգարէս պատգամաւորս Աստուծոյ,* «Եղէց նմանօղ[2] Բարձրելոյն» *(ԺԴ 14)՝ երկրպագուԹեամբ մարդկան: Արդ՝ փոխանակ այսոցիկ ի դժոխս իջցես, և որք տեսցեն՝ ոտն հարցեն քեզ և ասասցեն. «Այս նա է, որ շարժեաց յաԹոռոյ փառաց զմարդն՝ զԹագաւորն արարածոց, արա՛ր զտիեզերս աւերակ՝ զբնուԹիւն մարդոյս ի պատուիրանացն Աստուծոյ: Գերելոց մարդկան ազատուԹիւն ո՛չ արար: Ամենայն Թագաւորք երկնային նահապետուԹեանց յիւրաքանչիւր պատիւ փառաց վայելեն, բայց միայն դու անկար ի լերին ամբարտաւանուԹեան քո, իբրև զմեռեալ մի գարշելի ԹաԹաւեալ արեամբ, իբրև զձորձս շարաւահոտ անսուրբ, և դու ո՛չ սրբեսցիս»* (հմմտ. *ԺԴ 16-20): Ասէ և զպատճառն այսոցիկ. «Զի պղծեցեր զերկիր մեղօք և զժողովուրդ իմ կոտորեցեր խաբէուԹեամբ, մի՛ մնասցես ի կարծեցեալ քո իշխանուԹիւնդ»* (հմմտ. *ԺԴ 20):*

**Ի տարւոջն, յորում մեռաւ Աքազ, եղև պատգամս այս ի վերայ այլազգեացն** *(ԺԴ 28):*

---

1 AC վերոյ. B վերայ
2 C նմանող

*Աքազ՝ թագաւոր Յուդայ, բազում անգամ եհար զփղշտացիս, և խո[ր]հէր բառնալ զթագաւորութիւն նոցա: Իսկ ի մեռանել նորա զուարճացան փղշտացիք, և խորհէին առնուլ զվրէժ ի հրէից՝ համարելով թէ Եզեկիաս որդի նորա չունիցի յաղթութիւն որպէս զնա: Եւ զայն ո՛չ գիտէին, թէ Աստուծով էր յաղթութիւն նորա, որպէս Դաւթին, զորոյ և զարդարութիւն զգեցեալ էր: Արդ՝ տեսեալ մարգարէին զխնդութիւն այլազգեացն և սրտմտութիւն ի վերայ Եզեկիայ, ասէ մեծաձայն.* **«Մի՛ խնդայք և մի՛ ուրախ լինիք ամենայն այլազգիք»** *(ԺԴ 29):*

**Պատգամ ի վերայ մովաբացւոց** *(ԺԵ 1):*

*Արդ՝ և զմովաբացւոցն ճառէ, զի մի՛ յանկարծադէպ ինչ յառաջ սացեալ իրքն կարծիցին: Եւ թուէ կարգաւ զպատճառս պատժոցն: Նախ՝ զի ամբարտաւանք և թշնամանօղք էին, ապա՝ զի թշնամիք երուսաղէմացոցն*[1]*. և վասն նորին էին պատժելոց: Եւ զի մի՛ ինքնադէպ թուիցին չարիքն. զտեղին և զժամանակն ևս գուշակէ, թէ յո՞յր վերայ նախ գայցէ*[2] *և ե՞րբ.* **«ի գիշերի, ասէ, սատակեսցի մովաբացին»** *(ԺԵ 1): «Գիշեր»՝ զժամանակ պաշարմանն ասէ կամ զսաստիկ նեղութիւնն, որ գայ ի վերայ նորա:*

**Եւ ուղղեսցի աթոռ տանն եզեկիայ ողորմութեամբ, և նստցի ի յարկսն Դաւթի** *(Հմմտ. ԺԶ 5):*

*Բայց, սակայն, այս ճշմարտութեամբ ի Տէր մեր կատարի: Այն, որ ի մարդն լինել.* **«Ուղղեաց ողորմութեամբ զաթոռ տանն Դաւթի»** *(Հմմտ. ԺԶ 5) և մշտնջենաւոր նստաւ ի վերայ նորա, և գալստեամբ նորա եղև ողորմութիւն մարդկան:*

---

1 C երուսաղէմացւոցն
2 C գայցեն

**Պատգամ ի վերայ Դամասկոսի** *(ԺԷ 1)*:

*Յուդայ և Եփրեմ օրհնեցան ի Յակոբայ[1] ի պատիւ թագաւորութեան: Յուդայ՝ զի ո՛չ պարտաւորեցաւ յարիւնն Յովսէփայ, և Եփրեմ՝ վասն առաքինութեան և բարեաց հօր իւրոյ Յովսէփայ[2]: Եւ ի ժամանակի թագաւորեաց Յուդայ արդար իրաւամբք ի ձեռն Դաւթի և Սողոմոնի, իսկ տունն Եփրեմի՝ անօրէնութեամբ ի ձեռն Յորոբովամու որդւոյ Նաբատայ, որ կանգնեաց երկուս երինջս և յանցոյց զտասն ցեղսն, որք ճեղքեցան ի տանէն Դաւթի: Եւ եղեն յետ նորա թագաւորքն Իսրայէլի թշնամիք տանն Դաւթի: Եւ զհեթանոսս թիկունս առեալ՝ ջանային բառնալ զթագաւորութիւնն Յուդայ, որք և զդամասկացիսն վարձէին. և նոքա յանձն առնուին: Որոց սպառնայ մարգարէս՝ գուշակելով նոցա կործանումն և ասէ.* «Ահաւասիկ Դամասկոս բարձցի ի քաղաքաց» *(ԺԷ 1), այսինքն՝ թագաւորութիւնն բառնի ի նմանէ, վասն զի կամէին զթագաւորութիւնն Յուդայ բառնալ յԵրուսաղէմէ[3]:* «Եւ եղիցի կործանումն» *(ԺԷ 1) նորա, զի լքեալ լիցին ի բնակչաց քաղաքք անուանիք: Եւ ապա ասէ զպատճառն.* «Զի մի՛ լիցին նոքա թիկունք Եփրեմի» *(հմմտ. ԺԷ 3), զի դամասկացիք էին թիկունք Եփրեմի, և բարձցի թագաւորութիւն ի Դամասկեայ ի ձեռն Թագղաթփաղասարու:*

**Եւ ժառանգեցուսցես իբրև հայր որդւոց քոց զժառանգութիւն** *(հմմտ. ԺԷ 11) օտարացն հեթանոսաց:*

*Կատարի մարգարէութիւնս առ Տէր մեր և առ աշակերտս նորա: Զի սուրբ մարգարէքն սերմանեցին զսերմն հաւատոյ ծագման արեգականն արդարութեան իբրև «յառաւօտու» (հմմտ. ԺԷ 11): Իսկ «ծաղկեցաւ յամառն» (հմմտ. ԺԷ 11) ի տապ գոլախառն գալատեանն Քրիստոսի՝ ի ձեռն առաքելոցն քարոզութեան*

---

1 C Յակովբայ
2 C *չիք* և Եփրեմ... Յովսէփայ
3 B յԵրուսաղէմ

*օտարացն հեթանոսաց: Այն է, զի ի վաստակ մարգարէիցն մտին նոքա, որպէս*[1] *ասաց Քրիստոս. «Արբուցին ջրով Հոգւոյն» (հմմտ. Մարկ. Թ 40). ջեռուցին սիրովն Քրիստոսի, ծաղկեցուցին*[2] *և պտղաբերս արարին, հնձեցին և ի շտեմարանս երկնաւոր Հօրն ժողովեցին ժառանգել զարքայութիւնն:*

**Եւ ի մեծէ ժողովրդենէ** *(ԺԸ 7):*

*Երևի լցեալ մարգարէութիւնս ի գալստեանն Քրիստոսի: Կործանումն բռնաւորացս՝ ի նշանակ կործանմանն սատանայի, և փրկութիւն Սիոնի՝ փրկութիւն եկեղեցւոյ, որ ի հրէից և ի հեթանոսաց: Որք մեծ պատարագաւն՝ գառամբն Աստուծոյ փրկեցան, որոյ փոխարէն զանձինս պատարագեցին: Զոր մարգարէս հաւաստի նշանակէ զժամանակն՝ յետ մեծի յաղթութեանն Քրիստոսի և նշան կանգնելոյ ի վերայ պարտեալ թշնամւոյն*[3]*: Եւ վայելչապէս «ի նեղեալ և ի խոնարհ ժողովրդենէ» (ԺԸ 7) ասէ, որք նեղեալք էին ի չար բռնաւորէն և ապա խոնարհեցուցին զպարանոցս ընդ քաղցր լծովն Քրիստոսի: Եւ զայս պատարագ*[4] *նախ՝ հնդիկք մատուցին ի ձեռն ներքինւոյն*[5] *կանդակայ, ապա՝ ճշգրտէ զպատարագն, զոր մատուցին (տե՛ս Գործ. Ը 26-40): Ո՛չ ժամանակաւոր և անզգայ, այլ՝ բանաւոր և յաւիտենական զեկեղեցւոյ պաշտօնս նշանակեալ. «Ազգ, ասէ, յուսացեալ և կոխեալ» (ԺԸ 7):*

**Տեսիլ եգիպտացւոց**[6] *(ԺԹ 1):*

*Եգիպտացիք ազգ էին անօրինագոյն և մեղսասէր, քան զբազում ազգս հեթանոսաց, և յայտ ի բազմաստուածութենէ և*

---

1 C որ
2 B *չիք* սիրովն Քրիստոսի ծաղկեցուցին
3 A թշնամւոյն
4 C պատարագ
5 AB ներքինւոյն
6 C եգիպտացւոցն

*ի դիւթացն և ի կախարդացն, որ էին ի մէջ նոցա: Եւ ի վերայ ամենայն չարեացն, զոր գործէին, թշնամիք էին ժողովրդեանն Աստուծոյ, որ ի Սիոն: Յոխս մտեալ ընդ նոսա վասն հարուածոցն, որ ի պատճառս նոցա կրեցին ի կարմիր ծովուն: Թէպէտ և նոքա անմտութեամբ յուսային ի նոսա իբրև յօգնականս, և նոքա ստութեամբ խոստանային նոցա՝ ի մտի եդեալ մոլորեցուցանել զնոսա ի ճշմարիտ օգնականէն իւրեանց Աստուծոյ: Զոր տեսեալ մարգարէին Հոգւովն զառյապայ կորուստն նոցա յառաջ գուշակէ: Ընդ նմին ուսուցանէ և յաղագս մեծ փրկութեանն, զոր արար մեզ Քրիստոս իւրով մարդեղութեամբն՝ ղիջիցն յԵգիպտոս և զշարժել անդր ձեռագործացն, յօրինակ բառնալոյ ամենայն կռապաշտութեանց ի բովանդակ աշխարհէ: Եւ սկիզբն առնէ բանին այսպէս.* «Ահաւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթև ամպոյ՝ գայ յԵգիպտոս» *(ԺԹ 1):*

**Տեսիլ անապատին [ի] ծովու** *(ԻԱ 1):*

*Երկբայութիւն իմն ունի վերնագիրս և դժուարին առ իմանալ: Այլ ծով ասէ առակաւ զբազմամարդութիւն զօրացն բաբելացւոց, որք իբրև զծով ծածկեցին և հեղձուցին զազգս ամենայն և բարձին զբազմաց թագաւորութիւն, մանաւանդ զտանն Յակոբայ*[1] *և զ Դաւթի, որ յԵրուսաղէմ: Զի բաժակ բարկութեան Աստուծոյ էր բաբելացին յարբուցումն ազգաց, որ արժանի էին կորստեան, այլ իբրև կարի չարք և անողորմք և ամբարտաւանք եղեն, և ո՛չ յիշեցին զտուիչն իշխանութեան զԱստուած: Կամեցաւ Աստուած այլովք արբուցանել նոցա զմրուր դառնութեանն, և սպառնայ անապատ առնել զնոցա բազմամարդութիւնն: Այս է* **«Տեսիլ անապատին [ի] ծովու»:**

---

1 C Ցակովբայ

**Ահեղ է տեսիլն, և խիստ պատգամն, որ պատմեցաւ ինձ** *(հմմտ. ԻԱ 1-2):*

*Այս պատգամ մարգարէութեան թէպէտ զմարացն ասացեալ է և զկործանման բաբելացւոցն, բայց նշանակէ զհանդերձեալ դատաստանն: Զի «ահագին է տեսիլ» (ԻԱ 1) տանջանաց դատաստանին և «խիստ պատմութիւն» դատաւորին, որ ասէ ձախակողմանն*[1]*. «Երթա՛յք յինէն [անիծեալք]» (Մտթ. Իե 41): Եւ այս պատմեցաւ մեզ ի մարգարէից և յառաքելոց և ի տէրունական ձայնէն:*

**Եւ կոչեա՛ զՈւրիա**[2] **ի դիտանոցդ, ասէ Տէր** *(ԻԱ 7):*

*Այլ և ի պատմութենէն ի մարգարէութիւն հանէ զբանն: «Տեսի հեծեալս երկու[ս]. հեծեալ մի իշոյ» (ԻԱ 7)՝ Տէր մեր, որ նստաւ ի վերայ իշոյ, որպէս ասաց Զաքարիա, իսկ «հեծեալ մի ուղտու» (ԻԱ 7)՝ Յովհաննէս, որ զգենոյր ստև ուղտու, յառաջընթաց Կարապետն: Որ ո՛չ վայրապար սրբոյն յանմաքուր ստևոյ զգենոյր, այլ նշանակէր, զի անսուրբք ընդ սրբոյն միաւորին ի գալստեան Փրկչին: Իսկ այն, թէ՝ «Լուայ զլուր բազում» (հմմտ. ԻԱ 7), զի ի նստելն Յիսուսի ի վերայ իշուն՝ բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնէին զԱստուած, նաև յետոյ ամենայն ազգք զԱստուած*[3] *զեկեալն խոստովանին: Իսկ «Կոչեա՛ զՈւրիա ի դիտանոցդ»՝ զի յերկուց վկայից հաստատեսցի բանն, որ վասն գալստեան Փրկչին:*

**Եւ կացի զտիւն և զդիշերն** *(ԻԱ 8):*

*Իսկ ըստ մարգարէութեան կարգի՝ «Ե՛ս եմ Տէր» կամ «Ի վերայ խաչին», որ դիտեաց ընդ հարաւ: Զի ցուցցէ զառաւել*

---

1 AB ձախու կողմանն
2 B զՈւրա
3 AB Աստուած

*խնամս առ հրէայս և առ հեթանոսս, զի ո՛չ վնասին ի դիւաց պատրանս:*

**Տեսի, և ահա գայր[1] նոյն հեծեալ երկաթի** *(ԻԱ 9):*

*Այսինքն՝ մի՛ հեծեալ գուժկան:* «Եւ ասէ. Անկաւ Բաբելոն և ամենայն կուռք նորա» *(ԻԱ 9), զի ո՛չ օգնեցին նմա և ո՛չ անձանց ևս: Տե՛ս զզօրութիւն խոնարհութեան այս[2] հեզ և հանդարտ թագաւորիս: Յորքան բարձրութիւն վերացոյց զնա, որ նախքան զփոքր մի ժամանակ յաւանակաւ եմուտ յԵրուսաղէմ, այժմ յարուցեալ ի գերեզմանէն տայ աւետիս մարդկան, թէ՝* «Անկաւ կործանեցաւ» *(ԻԱ 9) մեղք և դժոխք: Իսկ «երկաթի» կամ զառաքեալս և զմարգարէս ասէ, ըստ այնմ թէ՝ «Ելեր ի ձիս քո», կամ որք ի հրէից և ի հեթանոսաց լծեցան ի կառս բանին: Ապա դարձուցանէ զբանն առ ցաւագնեալսն, որ ի սուգ էին վասն մեղացն Ադամայ:*

**Առ իս կոչեա՛ ի Սէիր լեռնէ, պահեցէք զմահարձանս** *(ԻԱ 11):*

*Բայց գտի ի գիրս ուրեմն զայս պատգամ պատճառանօք ճառիս, որ յեդոմայեցիսն[3], ըստ մարգարէութեան՝ առեալ ի դէմս պահապանաց գերեզմանին Քրիստոսի, զի ասեն եդոմայեցիս[4] զնոսա եկեալ զինուորեալ[5] Պիղատոսի: Իսկ քահանայքն, վասն առաւել զգուշութեան գերեզմանին, զնոսա խնդրեցին ի դատաւորէն իբրև արեան մերձաւորք և հաւատարիմք ինքեանց, և հրամայեցին նոցա շուրջ նստել զգերեզմանաւն: Արդ՝ զսոցանէ թերևս ասէ.* «Առ իս կոչեա՛ ի Սէիր լեռնէ, պահեցէք զմահարձանն» *(ԻԱ 11)՝ զգերեզմանն, որ էր փորեալ ի վիմէ:* «Պահեցիք[6] ընդ առաւօտն և զցայգն» *(ԻԱ 12)՝ զտիւն և զգիշերն: Կամ գի-*

---

1 B *չիք* գայր
2 B այս և
3 B յեդովմայեցիսն
4 C եդովմայեցիս
5 B զինուրեալ
6 A պահեցէք

*շեր*[1] *ասէ զժամանակն, որ ի մէջ թաղմանն և յարուբեանն, իսկ «առաւօտ»՝ զաւետիս յարուբեանն: Իսկ «*Խնդրելով խնդրեսջիր և առ իս բնակեսջիր» *(ԻԱ 12) առ նոսա ասէ, թէ խնդրէք*[2] *զհաւատսն Աբրահամու և Սահակայ հօր ձերոյ, ի բաց կացէք ի նենգութենէն Եսաւայ, և զհոգևոր օրհնութիւնն*[3] *ժառանգէք*[4] *և «առ իս բնակեսջիք»:*

**Եւ մնացորդք աղեղնաւորաց և զօրաւորաց որդւոցն Կեդրու նուաղեսցին** *(ԻԱ 17):*

*Նշանակ է մարգարէութիւնս զկոչումն հեթանոսաց, որ*[5] *փախստեայք և գաղթականք եղեն յիմանալի ասորեստանուոյն՝ դիմեալք ի Քրիստոս, ծարաւիք կենդանի ջրոյն և քաղցեալք հոգևոր հացին: Որոց ընդ առաջ ելանել հրամայեաց առաքելոցն Քրիստոս. «*Գնացէ՛ք, *ասէ, աշակերտեցէք զհեթանոսս» (Մտթ. ԻԸ 19): Իսկ ասելն՝ վասն բազմութեան սպանելոցն*[6] *և մոլորելոցն, զոր իմանալի ասորեստանեայն՝ մարդասպանն ի սկզբանէ, մոլորեցոյց յուղիղ ճանապարհէն՝ լարեալ զաղեղն, ձգելով նետս ընդ խաւար յայնոսիկ, որ ուղիղ են սրտիւք: Որոյ փոխարէն պակասեցին փառք բանսարկուին ի կատարել ամի տնօրէնութեանն Քրիստոսի, որ խայտառակեաց զնա և խորտակեաց զաղեղն պատերազմողին, զամբարտաւանութիւնն՝ խոնարհութեամբն: Եւ ճշմարտէ զպատգամս, թէ՝* «Տէր Աստուած Իսրայէլի խօսեցաւ» *(ԻԱ 17):*

**Եւ հաստատեցից զնա իբրև զցից հաստատուն ի հաւատարիմ տեղւոջ... Եւ եղիցի յաթոռ փառաց տան Հօր իւրոյ** *(ՀՄմտ. ԻԲ 23):*

---

1 B գիշերի
2 C խնդրեցէք
3 B զհոգևորութիւնն *փխ* զհոգևոր օրհնութիւնն
4 C ժառանգեցէք
5 C որ ի
6 B սպանօղացն

*Ասացուածք բանիցս կարգաւ՝ օրինակաւն առ Տէր մեր Հայ-
յին, որ առ Եղիակիմ առակաւ, և առ Տէր մեր ճշմարտութեամբ:
Այն, որ զկերպարանս ծառայի առ, և մտադիւր ծառայեաց բազ-
մաց, և զգեցաւ զփառս իբրև զհանդերձ, որ և Հայր հանդերձելոյ
աշխարհին, և տուաւ նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ:
«Բացցէ» (Իբ 24) զդրունս ողորմութեան ապաշխարողաց, և
«ո՛չ ոք փակիցէ» (Իբ 24): «Փակէ» (Իբ 24) անողորմից, և «ո՛չ
ոք բանայցէ» (Իբ 24): «Նստցի յաթոռն» (Իբ 23) Դաւթի, և
«յուսացին ի նա փառաւորք» (հմմտ. Իբ 24)՝ դասք առաքելոցն:
«Անօթք ի փոքուէ» (Իբ 24)՝ ի հեթանոսաց, «մինչև ցմեծա-
մեծս» (Իբ 24)՝ ի հրէից, զի լոյս յայտնեցաւ հեթանոսաց, և
փառք Իսրայէլի:*

**Սո՛ւպ առցէ գինի, սո՛ւպ առցէ այգի, հեծեծեսցեն խրախ-
ճանք յանձինս իւրեանց** *(Իդ 7):*

*Իսկ առ վերջին օրն առակաւ է: Ո՛չ թէ «գինի սուպ առցէ» ի
դատաստանին, այլ որ ըմպեն զգինին, և ո՛չ «այգին», այլ որ
գործեն զնա: Եւ «հեծեծեն խրախճանք[1]»՝ որպէս մեծատունն,
որոյ լի էր սեղանն, և յետոյ կաթիլ մի ջրոյ կաթսայր:*

**Եւ մնացեալքն յերկրի ուրախ լիցին և օրհնեսցեն զփառս
Տեառն** *(հմմտ. Իդ 14):*

*Կամ «մնացեալս յերկրի» ասէ զարժանաւորս երկրին կենդա-
նեաց, որք յորժամ տեսանիցեն զՏէրն զոր սիրեցին՝ եկեալ հայ-
րենի փառօք, զուարճանան և «օրհնեն զփառս Տեառն»: Եւ,
մանաւանդ, յորժամ ինքեանք պսակեսցին, մոռանան զառաջին
վիշտան և նոր գոհութիւնս տան Աստուծոյ:*

---

1 C խրախճանքն

**«Խռովեացին ջուրք ծովու»**, և **«Փառք Տեառն ի կղզիս»** *(Իդ 14-15):*

*Կամ խռովին ծովացեալքն մեղօք ի տեսանելն ահաւոր փառօք եկեալ զդատաւորն: Խռովին, զի ակն ունին տանջանաց: Վասն այսորիկ*[1]՝ **«փառք Տեառն»** *ի վերայ կղզեաց եկեղեցւոյ հեթանոսաց, որ ի մէջ աշխարհական ծովու կալով ո՛չ արբ զաղտաղտուկ կռապաշտութիւն, այլ ցամաք կալով ի դառնահամ գինւոյ թեանց արբին զուխս փափկութեան, և աղբիւրացան ի նոր երգս՝ փառաւորելով զանուն Տեառն:*

**Ահա՛ սուր, ահա՛ գուբ և որոգայթ ի վերայ քո Սինեքերիմ բնակիչ երկրիդ** *(համմա. Իդ 17):*

*Բայց այսու*[2] *և զչարիսն ասէ, որ հրէից էր գալոց ի բաբելացւոցն, զի ո՛չ հաւատացին պատգամաց մարգարէից, որ վասն Եմմանուէլի*[3]*: Նմին իրի զամենայն պատիժս ասէ ի վերայ նոցա՝ ահ զասորեստանեայցն, ուստի փախեան: Եւ «անկան» (Իդ 18) իբրև «ի գուբ» (Իդ 18) ի Բաբելոն, և անտի «ելին» (Իդ 18) ի ձեռն Կիւրոսի, և «ըմբռնեցան յորոգայթ» (Իդ 18) հռոմայեցւոցն, ուստի ո՛չ ազատեցան: Եւ զի հաւատարիմ արասցէ, ասէ. «Պատուհանք բացան յերկնից» (Իդ 18), այսինքն՝ բարկութիւն ի վերայ հրէից անհաւատից, որ ո՛չ հաւատացին քաղցրալուր պատգամացն, որ վասն Քրիստոսի:*

*Դարձեալ. զբանալն երկնից ասէ և զիջանել դատաւորին, որպէս դատաւորք յորժամ վճիռ առնի տացեն՝ զվարագոյրսն բանան: Նոյնպէս և Աստուած նստեալ յաւուրն տացէ հրաման, բանուին պատուհանք երկնից, և ձայնք ահեղ որոտմանց «խռովեցուցանէ զերկիր» (Իդ 19), և յահէ գալստեան դատաւորին «լուծանելով*[4] *լուծանի երկիր» (համմա. Իդ 19):*

---

1 C այնորիկ
2 C այս
3 AB եմմանուելի
4 C լուծելով

**Զի Տէր թագաւորեսցէ ի Սիոն, և առաջի ծերոց փառաւորեսցի** *(Ի Դ 23)*:

*Իսկ և յորժամ յայցել մարդկութեանս, զի փրկեսցէ զժողովուրդ իւր, կապեաց զբռնաւորն.* «Եւ Հալեցաւ իբրև զաղիւս տկար երկրաւոր գործքն, և կռապաշտութիւնն որպէս պարիսպ կործանեցաւ» *(հմմտ. Ի Դ 23): Եւ Տէր Յիսուս սքանչելեօք*[1] *թագաւորեաց ի նոր Սիոն և փառաւորի ի ծերոցն հանճարով:*

**Ցաւուր յայնմիկ երգեսցեն զերգս զայս յերկրին Հրէաստանի. Ահաւասիկ քաղաք զօրացեալ և փրկութիւն մեր. կանգնեցէ՛ք պարիսպս և պատուարս: Բացէ՛ք զդրունս ձեր, և մտցէ ժողովուրդ, որ պահէ զարդարութիւն** *(Ի Ջ 1-2)*:

*Հրէաստան՝ խոստովանօղք զՔրիստոս,* «քաղաք զօրացեալ» *(Ի Ջ 1), եկեղեցի Քրիստոսիւ պարսպեալ և պատուարաւ զգուշացեալ՝ Հին և Նոր կտակարանօք:*

**Յորժամ մանրեսցէ իբրև զփոշի զվէմս մեհենից նոցա**[2]**, և մի՛ ևս մնասցեն անտառք նորա, և մանրեսցեն իբրև զմայր ի փայտահարաց** *(հմմտ. Ի Է 10)*:

*Իսկ առ մեզ՝ Տէր մեր վէմն այն, որ հատաւ ի սուրբ լեռնէն, և հար կործանեաց զամենայն պատկերս կռոցն և զմեզ աղատեաց ի չար ծառայութենէ բազմաստուածութեանն և ուսոյց միայնոյ*[3]՝ *ճշմարտին Աստուծոյ երկիր պագանել:*

**Ո՞ւմ պատմեսցուք զչարիսն, ո՞ւմ գոյժ տացուք՝ զհատուցեալո՞ցն ի տեսնէ, զանջատելո՞ցն ի կաթանէ** *(Ի Ը 9)*:

*Բայց թուի ինձ «կաթն» զօրէնսն անուանէ և «ստինս»՝ զմարգարէսն, ուստի յարաժամ ըմպէին զկաթն օրինացն Աստուծոյ: Իբրև ուրացան զօրէնսն և անարգեցին զմարգարէսն, ըստ-*

---

1 B սքանչելեօք
2 C *չիք* նոցա
3 AB միայնոյ

*գտանէ զնոսա, թէ՝ «Ո՞ւմ պատմեացուք զչարիսն», իբրև ընդ տղայս յիմարս՝ խօսեացուք ընդ նոսա:*

**Եւ ո՛չ ջրեացէ զուխտն մեր, զոր ընդ մահուն [է]: Ցոյսն ձեր, որ ընդ մահու [է], մի՛ հաստատեացի, և մրրիկ թէ դիմեացէ՝ կոխեացէ[1] զձեզ** *(հմմտ. ԻԸ 18):*

*Այլ զի ո՛չ միայն առ հրէայս, այլ առ ամենայն ոք ճգի բանս, զի մեղք ուխտ է ընդ դժոխս և դաշն ընդ մահու. փոքր ինչ յառաջ ասացաք:*

**Կռուել ևս ո՛չ կարեմք, զի մեք տկարացաք առ ի ձեր ժողովելդ իբրև զլեառն ամպարշտաց** *(ԻԸ 20-21):*

*Զայս ասէ մարգարէս առ այնոսիկ, որ ի սաստիկ վշտաց նեղեալք զպատգամս Աստուծոյ ո՛չ լսէին՝ որ ի ձեռն մարգարէից: Եւ մարգարէքն մե՛րթ աղաչէին մխիթարելով, մե՛րթ ողոքէին և սպառնային: Իսկ նոքա յերկոսեանն անշարժ կային հպարտացեալք «իբրև զլեառն ամպարշտաց»: Վասն որոյ մարգարէս ասէ «տկարացաք», այսինքն՝ ձանձրացաք ի ժողովել զձեզ, և դուք անխոնարհելի կացէք մնացէք «իբրև զլեառն» յամպարշտութեան:*

**Եւ եղիցի, ասէ, յանկարծակի ի Տեառնէ զօրութեանց այցելութիւն որոտմամբ և շարժմամբ** *(ԻԹ 6)* **և այլովքն:**

*Բայց ասացուածս հանդերձելոյ այցելութեանն և դատաստանին վայել է: Յորժամ դատաւորն յանկարծակի ահագին շարժմամբ յերկիր իջանէ, և գետ հրոյ յորդեալ առաջի նորա, և բոց բորբոքեալ կիզման, և առնէ այցելութիւն արդարոց և ամպարշտաց՝ զոմա՛նս պսակէ և զոմա՛նս տանջանաց մատնէ:*

---

1 B *չիք* կոխեացէ

*Եւ այս Աստուծոյ մարդասիրութեանն է՝ նախքան զգալ աւուրն գուշակել զահագինսն, զի երկիւղիւն զգաստացեալք ապրիցիմք ի պատուհասից:*

**Եւ եղիցի ձեզ պատգամ[ք]ս այս իբրև զբանս թղթոյ կնքեալոյ: Զոր իբրև տայցեն ի ձեռս դպրի ճարտարի ընթեռնուլ, ասիցէ թէ. Ո՛չ կարեմ ընթեռնուլ, զի կնքեալ է: Եւ տացեն զնոյն գիր ցայր մի անգէտ[1] ընթեռնուլ, և ասիցէ. Ո՛չ գիտեմ գիր** *(հմմտ. Իթ 11-12):*

*Բայց առակաւոր բանիւս[2] զճառս մօրն Եմմանուէլի նշանակէ, զոր վերագոյն կոյս սուրբ և մայր Եմմանուէլի ասաց, և աստ՝ «թուղթ կնքեալ», զի վերջնովս զառաջինն հաստատեացէ: կնքեալ թղթովս զկնքեալ կուսութիւնն, և զիրս կուսութեանն անթարգմանելի ցուցցէ: Զի տալ զնա առն դպրի ճարտարի և ասիցէ, թէ՝ «Ո՛չ կարեմ բանալ, զի կնքեալ է»: Այն, որ մեծաւ իմաստութեամբ ի Յովսէփ և ի կոյսն մեկնեաց զբանն, ահա ճշմարիտ է ըստ իրին և ժամանակին: Իսկ մերս տեսութիւն այսպէս հաստատի կնքեալ թղթոյն խորհրդով, թէ անհետազօտելի է օրինակ տնօրէնութեանն Քրիստոսի, զի աստուածայինք են և խորինք, անիմանալիք մտաց և անճառելիք բանի: Եւ այս ո՛չ միայն չափաւոր մարդկան, այլ և բուն իսկ աստուածաբանից: Եւ տեսցուք[3] ո՞յք էին, որ ո՛չ կարացին բանալ զգիրն և ընթեռնուլ՝ Պօղոս և յառաջընթաց Կարապետն և որք իբրև զնոսա: Զի մին և ո՛չ զվերջինս տնօրէնութեանն կարէր լուծանել, որ էր խրացք կօշկաց, իսկ միւս հայեցեալ ի խորս անքննինս Աստուծոյ գիտութեանն ասաց, թէ՝ «Անքննելի են ճանապարհք նորա» (հմմտ. Հռոմ. ԺԱ 33): Եւ ո՞վ էր, որ կնքեաց[4] զթուղթն՝ Հոգին Սուրբ և զօրութիւն Բարձրելոյն: Եւ զոր Հայր և Հոգին կնքեն,**

---

1 AB անգիր *փխ* անգէտ
2 C բանիւ
3 Ա տեսուք
4 C քննեաց *փխ* կնքեաց

*ո՞վ է, որ ժպրհի բանալ կամ ի քննութիւն խորհրդոյն անկանել: Ապա յայտ է, զի Հայր և Հոգին են կնիքն: «Հոգին Սուրբ, ասէ, եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի քեզ, և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է և Որդի Բարձրելոյ կոչեսցի» (Ղուկ. Ա 35):*

**Եւ զի ասէ. Մերձ է առ իս ժողովուրդս այս բերանով, և սրտիւք իւրեանց հեռի են յինէն** *(Իթ 13):*

*Այլ զայս ասէ Հայր առ անհաւան ժողովուրդն հրէից, որ ո՛չ հաւատային ի Քրիստոս, այլ հակառակ Աստուծոյ զնա ասէին: Իսկ զԱստուած Հայր բերանով պատուէին և զբան նորա ուրանային, զորոց ասէ Աստուած Հայր. «Զո՛ւր պաշտեն զիս» (Իթ 13): Զի որ ո՛չ հաւատայ Որդւոյ՝ ո՛չ տեսանէ զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա: «Ուսուցանեն» (Իթ 13) ո՛չ զիմ վկայութիւնս, որ ի ձեռն մարգարէիցն ի վերայ Որդւոյ իմոյ ասացեալ, այլ որ ի դպրացն և ի փարիսեցւոց հակառակ Քրկչին ասացեալք: Եւ որպէս Հայր մարգարէիւն կշտամբէ զանհաւանսն, նմանապէս[1] և Որդի սովին բանիւ յանդիմանեաց զնոսա, թէ՝ «Խոտէ՛ք զբանն Աստուծոյ վասն մարդկան աւանդութեանն» (Մտթ. ԺԵ 6): Եւ թէ բարւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր, թէ՝ «Ժողովուրդս այս շրթամբք պատուեն[2] զիս» (Իթ 13) և այլն: Ապա և զփոխարէն[3] ամբարշտութեան նոցա մերձ եդեալ Աստուած Հայր ասէ մարգարէիւս:*

**Խուլք, ասէ, լուիցեն զբանս գրոյս այսորիկ** *(Իթ 18):*

*Զի ո՞րպէս լսէին որք ի բնէ խուլք իցեն, զի ո՛չ երբէք լուան: Եւ որք էին խուլք և լուան՝ ի Քրիստոսի գալստեանն եղև այն: Արդ՝ եթէ զայնս, որ ի բնէ և ի ծնէ խուլք և կոյրք էին ասէ,*

---

1 C նոյնպէս
2 AB պատուէ
3 A փոխարէն

*նոքա Քրիստոսիւ բացան, և եթէ զմտօք կուրացեալսն որպէս հեթանոսք, և նոքա ի Քրիստոսի երևելն իմաստնացան: Եւ զի միշտ բողոքէին մարգարէքն, և նոքա ո՛չ լսէին, յիրաւի կոչէ զնոսա խուլս, որք զպատշաճան ո՛չ լսէին*[1]*: Եւ ո՛չ վայրապար բանս ասէ լսել, այլ՝ «զբանս*[2] *գրոցս այսոցիկ», զի և հանճարոյ և խելացս պէտք էին: Վասն այնորիկ և Քրիստոս ո՛չ միայն զտեսանելիս լուսաւորեաց, այլև զմիտս շնորհեաց: Ո՛վ ոք խլագոյն քան զՊօղոս: Այլ տե՛ս, զիա՞րդ վաղվաղակի լուաւ յօրինակ ամենայն հեթանոսաց:*

**Ցնծասցեն աղքատք վասն Տեառն յուրախութիւն** *(Իթ 19):*

*Ո՛չ վասն առողջութեան կամ վասն ղգալի*[3] *լոյս տեսանելոյ ցնծասցեն, այլ զի ի բարեաց աղքատք էին: Արդ՝ Քրիստոսիւ ճոխացեալք ո՛չ յանճանց քաջութիւն, այլ ի Տէր ցնծասցեն: Զոր և Քրիստոս ասաց, թէ՝ «Ցնծացէ՛ք և ուրա՛խ լերուք» (Մտթ. Ե 12): Ո՛չ միայն զփրկելն բաւական համարեցաւ, այլև ուրախութեամբ լցոյց, զոր և առաջին հաւատացեալքն ուղղեցին, որոց էր սիրտ և անձն մի, և ունէին զամենայն ինչ հասարակաց և առնուին կերակուր ուրախութեան միամտութեամբ:*

**Պակասեաց անօրէն ասորեստանեայն կոխիչ, և կորեաւ հպարտ ամբարտաւանն. և սատակեցան անօրէնք ի չարիս, և ոյք առնեն մարդկան մեղանչել բանիւք** *(հմմտ. Իթ 20-21):*

*«Պակասեաց անօրէննն»: Զի իցէ Աստուած ամենայն յամենայնի, և ո՛չ մի ոգի իցէ*[4] *ըմբռնեալ ի չարիս: Զի ուր չարիք իցեն, անդ Աստուած ո՛չ իցէ, «Զի Հոգին Սուրբ փախչէ, ասէ, ի*

---

1 C *չիք յիրաւի կոչէ զնոսա... լսէին*
2 C զբաո
3 C սգալի
4 AB լիցի

նենգուբեենէ» *(Իմաստ. Ա 5), և ո՛չ բնակէ ի մարմին վարեցեալ մեղօք: Իսկ յորժամ Աստուած ամենայն յամենայնի իցէ, բնաւ և ո՛չ հետք չարի գտանիցին: Եւ յորժամ զմեղացն վրէժս պահանջիցէ, զի՞նչ պատճառք ի մէջի կայցեն զամբարտաւանսն բարբառել:* «Եւ ոյք առնեն, *ասէ,* մարդկան մեղանչել բանիւ». *որք չար խրատուք ընկղմեն զմարդիկ ի մեղս: Զի է ոք, որ առ չժուժալ անկանի ի մեղս ինչ, և ներելոյ է*[1] *արժանի: Իսկ որ կամօք զայլս յօժարեցուցանէ ի մեղս, նմա և ո՛չ մի հնար գտանի թողութեան: Որպէս և Ահարոն ասաց.* «Մի՛ բարկանար Տէր իմ, զի դու ինքնին գիտես զյանդգնութիւն ժողովրդեանս այսմիկ» *(Ելք. ԼԲ 22), զի՞նչ և Եւայ.* «Օձն խաբեաց զիս, և կերայ» *(Ծննդ. Գ 13): Այլ ո՛չ ինչ եգիտ հնար ներելոյ:*

**Տեսիլ չորքոտանեաց անապատին, կամ հարաւոյ, ի նեղութեան և յանձկութեան**[2] *(Լ 6):*

*Բայց թուի, թէ առ մարդեղութիւն Փրկչին առակաւոր բանս մեզ հայի: Եւ նախ զվերնագիրն ի դէմս փրկելոցն ասէ՝* «Տեսիլ չորքոտանեաց»: *Զչորս առաքինութիւնսն նշանակէ, յորոց վերայ հաստատեալ կայ ամենայն կարգք աստուածպաշտութեան, և* «անապատի»՝ *զառ ի չարեաց անապատ լինելն ասէ: Զի որ այս անապատի բնակիչ է, նա կարէ ստանալ զայս առաքինութիւնս:* «Ի նեղութեան և յանձկութեան» *(Լ 6): Կա՛մ ասէ զժամանակն, որ յառաջ քան զգալուստ Բանին, կա՛մ զնեղ ճանապարհն, ընդ որ ինքն գնաց Բանն և մեզ զնոյն օրինադրեաց:* «Աւիւծ և կորիւն աւիւծու» *(Լ 6) կոչէ զՏէր մեր յաղագս ահեղ զօրութեանն, որպէս Նահապետն զնա ասաց ի դէմս Յուդայ, որ ել բազմեցաւ և ննջեաց ի խաչն և աստուածապէս յարեաւ:* «Եւ ի նմանէ իժք և կորիւնք» *(Լ 6) թևաւորք: Կա՛մ զառաքելոցն ասէ, և այսու անուամբ ծանրաբեռն առնէ զնոսա մեղսասէր*

---

1 C չէ *փխ* է
2 C անձկութեան

*թշնամւոյն, կա՛մ վասն կամակոր օձաձև բնուԹեանս, զոր խրատեաց Տէրն լինել «խորագէտս իբրև զօձս, և միամիտս[1] իբրև զաղաւնիս» (Մտթ. ժ 16): Եւ «իշուց» (Լ 6) և «ուղտուց» (Լ 6)՝ անմաքրից զհրէայս և զհեթանոսս առակէ: Էշս՝ զհրէայս, որք[2] բեռնակիրք էին աստուածային օրինացն և հեթանոսք մեղաց: Առ որս սլացան սուրբ առաքեալքն իբրև զթռչունս, և բեռնակիրս արարին փոքրոգի բեռինն Քրիստոսի. հրէից զգանձս լրման մարգարէիցն, և հեթանոսաց վասն ողորմուԹեան փառաւոր առնել զԱստուած: Եւ որք երբեմն կռոցն խոնարհեալ, եգիպտացի բարուք զամօԹ անճանց գործէին, նոցին հակառակացն ուղղուԹեամբ պարծանք և յոյս և փառք և խնդուԹիւն և պսակ պարծանաց կոչին յառաքելոյ: Բայց ի կարգ ճառին: Զի հրէայք առ եգիպտացիս դիմեցին յօգնականուԹիւն. «ԵրԹ պատմեա՛, ասէ, ԹԷ զուր է այդ մխիԹարուԹիւն» (Լ 7): Զի ԹԷ յառաջագոյն չէր պատմեալ՝ յանկարծադէպ զիրսն կարծէին: Նա ո՛չ միայն պատմէ, այլ և գրել «ի տախտակի» (Լ 8) հրամայէ և «ի դիրս» (Լ 8) հաստատել: «Զի եղիցի յաւուրս ժամանակաց, զի ժողովուրդ ապստամբ է, և որդիք սուտք, որ ո՛չ կամեցան լսել զօրէնս Աստուծոյ» (Հմմտ. Լ 9): Տեսանե՞ս, զի հրաման առնուին գրել ի կշտամբանս և ի յանդիմանուԹիւն նոցա, որպէս և Մովսէս զօրհնուԹիւնան գրեաց զառաջնոցն, որք յԱստուծոյ ապստամբեցան, և զվերջնոցն, որք ի Քրիստոսէ նորա: Արդ՝ հրաման առնու գրել, զի անմոռաց լիցի յետնոցն չարուԹիւն նոցա:*

**Եղիցի կործանումն նոցա իբրև զբեկումն խեցեղէն անօԹոյ՝ մանր խորտակելոյ, որով ո՛չ իցէ մարԹ սակաւ մի հուր կամ ջուր բառնալ** *(Հմմտ. Լ 14):*

*Զանհնարին խորտակումն հրէից նշանակէ առակաւս, զի պարսպեալ էին մարգարէիւքն և օրինօք իբրև քաղաք ամուր:*

---

1 C միամիտ
2 AB որ

*Յորժամ անարգեցին զօրէնսն և ամպարշտեցան ի Քրիստոս, քակեցաւ ցանկն և վրիպեցան յամենայն խնամոց, և խորտակեցան մանր՝ ըստ օրինակի խեցւոյ, զի ո՛չ գտանի ի նոսա կայծ մի լուսատու կամ ջուր կենդանի՝ զովացուցիչ տապոյ: Այսինքն՝ են առակքս հուր և ջուր, մարգարէ և քահանայ կամ քահանայ և թագաւոր:*

**Եւ եղիցի լոյսն լուսնի իբրև զլոյս արեգական, և լոյսն արեգական եւթնապատիկ եղիցի քան զլոյս աւուրցն եւթանց:** **Ցաւուր յայնմիկ բժշկեսցէ Տէր զբեկումն ժողովրդեան իւրոյ** *(Է 26):*

*Նաև՝ այլազգ: «Լոյս լուսնի» ասեմք զօրէնսն և զմարգարէսն ի գիշերի, որ յառաջ քան զծագումն Քրիստոսի իբրև ստուերաւ և նմանութեամբ պաշտէր*[1] *զխորհուրդն Քրիստոսի: Իսկ ի ծագել արեգականն ճշմարտի, որ եղից զօրէնսն, լուսաւորեցան օրէնքն ըստ աւետարանին Քրիստոսի: Եւ լոյս աւետարանին «եւթնապատիկ քան զլոյս եւթն աւուրց» արարչութեանն, զի Տէր մեր նոր արարչագործութեամբ նորոգեաց զբնութիւնս և իմանալի լուսով լուսաւորեաց՝ ո՛չ հողեղէն պատկեր կազմելով, այլ զհողեղէնս ընդ իւր միաւորեալ աստուածացոյց և ընդ աջմէ Հօր նստոյց: Եւ արեգակն ո՛չ զգալի, որ գիշերաւ հատանի, այլ ինքն՝ իմանալի արեգակն ծագեաց և լուսաւորեաց զաշխարհ:*

**Մխթէ և դո՞ւ իցես պատրաստեալ թագաւորել ի վերայ ձորոյն խորոյ** *(հմմտ. Է 33):*

*Մարթ է իմանալ զայս և վասն հանդերձեալ աշխարհին դատաստանի ասացեալ առ մարմնապարարսն. մխթէ և ձե՞զ հասանէ թագաւորել յանքոյթ և ի հանդարտ զգուշութիւնն, ուր*

---

1 B պաշարէր *փխ* պաշտէր

*վիհն խոր և մեծ է ընդ Աբրահամեանս և ընդ մեծատանն, որք իբրև զփայտ բորբոքեալ այրին ի բարկութենէ Տեառն:*

**Զի ահաւասիկ թագաւոր արդար թագաւորեսցէ, և իշխանք իրաւամբք տիրեսցեն** *(ԼԲ 1):*

*Բայց ես ո՛չ առնում յանձն զայս վասն մարդոյ ասել, այլ վասն Քրիստոսի, որ*[1] *արդարութիւն ածեալ ընդ մէջ և ճշմարտութեամբ պատեալ զկողս: Եւ «իշխանս» ասեմ զառաքեալսն, ըստ սաղմոսին թէ՝* **«Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր»** *(Սաղմ. ԽԴ 17):*

**Եւ եղիցի մարդ ոք, որ թաքուցանիցէ զբանս իւր, և թաքիցէ իբրև ի ջուրցն սաստկութենէ** *(ԼԲ 2):*

*Զեն հեռի ի միմեանց միտք ասացելոցս: Զի ըստ յունաց ասէ, թէ՝* **«թաքուցանիցէ զբանս իւր»**, *և ըստ ասորոց*[2] *թէ՝* **«եղիցի անքոյթ ի հողմոյ»**, *զոր պարզէ տէր Եփրեմ, թէ՝* **«Ծածկոյթ եղիցի մարդկան»**: *Զի Եզեկիայ ո՛չ եբարձ աղաղակ ընդդէմ Ռափսակայ: Եւ Քրիստոս առանձինն աւանդէր աշակերտացն զմեծամեծսն մինչև ի դէպ ժամանակ, և լուռ եկաց առաջի Պիղատոսի և ծածկոյթ եղև մերկութեան մարդկան և պահապան ի փորձութեանց հալածչացն:*

**Մերկացարուք, քրճազգածք եղերուք. ի վերայ արդեանց արմտեաց և այգեացն պտղոց** *(հմմտ. ԼԲ 11-12):*

*Բայց թուի ինձ, թէ ապաշխարութիւն նոցա ուսուցանէ դառնալ ի չարեաց, ի սուգ մտանել, քուրձ զգենուլ, կոծել զկուրծս իբրև զշտեմարանս չարեաց: Զի այս է ձև ապաշխարողի, թերևս այսու անցուսցեն զեկեալ հասեալ բարկութիւնն: «Փուշ և տատասկ բուսցի յապարանս ցնծութեան ձերոյ»* **(հմմտ. ԼԲ 13)**, *զի*

---

1 B *չինք* որ
2 AB ասորւոց

*ինքեանք փշաբեր եղեն մեղօք և կռապաշտութեամբ:* «Աւերին քաղաքքն և խոպանանան[1]» *(հմմտ. ԼԲ 14): Եւ զի ցուցցէ, թէ վասն է՞ր լինին նոցա այսոքիկ: Ասէ.* «Զի սեղանն սուրբ, որ յերուսաղէմ, մոռացեալ եղև»:

**Հաց տուեալ է նմա, և ջուր նորա՝ հաւատարիմ** *(ԼԳ 16):*

*Այս մարմնապէս՝ առ եզեկիայ, իսկ հոգեպէս՝ ի վերայ Փրկչին մերոյ Քրիստոսի և փրկելոցն ի նմանէ: Զի նա է հացն կենդանի յերկնից իջեալ: Արդ՝ եւ*[2] *զհացն կենդանի ի ձեռն առաքելոցն և զջուրն կենդանի վարդապետութեանն կամ աւազանին, որով վերստին ծնանիմք: Եւ է նա հաւատարիմ, հաստատուն, անփոփոխական:*

**Ո՞վ է, որ ունի զհամար պահակերացն,** *որ են գիշերապահքն, կամ որ համարի զվարիչս,* **մեծի և փոքու. ժողովրդեանն, ընդ որում ո՛չինչ խորհեցաւ, զի և ո՛չինչ գիտէր ծանրաձայնն, ժողովուրդ յոռացեալ և ո՛չ գոյ լսողին ի միտ առնուլ** *(ԼԳ 18-19):*

*Այսու թուի ինձ, թէ զհրէից անմտութիւնն պախարակէ և զվերակացուաց դպրացն և փարիսեցւոցն*[3]*, որք տիրէին ժողովրդեանն և համարէին նոցա, ըստ օրինացն,* «զմեծն և զփոքրն»: *Իսկ յորժամ զսքանչելի խորհրդակիցն գտին զՏէր մեր Քրիստոս, անհաւատք եղեն ի նմանէ և ո՛չ ընկալան զնորա խորհրդակցութիւնն, թէպէտ և առ Հայր մերձեցուցանէր և լնոյր զօրէնսն, և զանազան բանս հաւանականս առ նոսա խօսէր: Իսկ նոքա իբրև ի ծանրաձայնէ ի բաց դառնային՝ ասելով.* «Զի՞ բնաւ լսէք դմա» *(Յովհ. ժ 20): Եւ փութացան սպանանել զա-*

---

1 B խոպանան
2 C եղ
3 C փարիսացւոցն

*ռաջնորդն կենաց, զի ժողովուրդ էր, յորում ո՛չ գոյր ի նոսա իմաստութիւն:*

**Ահաւասիկ Սիոն քաղաք փրկութեան մերոյ, աչք քո հայեսցին յԵրուսաղէմ, խորանք որ ո՛չ շարժեսցին]** *(Ղ 20):*

*Նման է զճառս զայս ի դէմս եկեղեցւոյ առնուլ և վասն իմանալի Սիոնին՝ վերնոյն Երուսաղէմի, որ է արդարև քաղաք փրկութեան մերոյ և տեղի հանգստեան, ուր Պօղոս հրաւիրէ զմեզ.* **«Ի Սիոն լեառն, ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ յերկնաւորն Երուսաղէմ»** *(Եբր. ԺԲ 22): Այսր քաղաքի* **«խորանք ո՛չ շարժեսցին, և մի՛ շարժեսցին ցիցք խորանի նորա յաւիտեան»** *(Ղ 20): Ահա այս բանք ո՛չ յարմարի երկրաւոր Երուսաղէմի: Այն, որ բազում անգամ շարժեցաւ, վասն մեղաց աւերեցաւ և քանդեցաւ: Իսկ եկեղեցի որքան յաճախեաց թիւնամանքն,ևս քան զևս հաստատեցաւ և մեծացաւ: Ո՛չ վասն մեղաց շարժեցաւ, այլ ինքն զմեղս շարժեաց, և զևաւցեալսն լուաց և սպիտակացոյց*[1] *և բնակիչս արար վերին Սիոնի:* **«Զի անո՛ւն Տեառն մեծ է ի ձեզ»** *(Ղ 21): Այս է պատճառ ամրութեան եկեղեցւոյ. ո՛չ բանակք զօրաց, և ո՛չ ամրութիւն պարսպաց, այլ՝* **«անո՛ւն Տեառն»:** **«Ձեզ**[2] *լիցի տեղին, յորում գետքն և փոսքն լայնք և ընդարձակք»* **(Ղ 21):** *Զյղփութիւն յայտնէ զեկեղեցւոյ և զհաստատութիւն ժողովրդեանն, որ ի նմա, և զառատութիւն շնորհացն գետոյ նմանեցուցանէ:*

**Եւ տացէ յերկիր զսուրս նոցա և իբրև զխուիւ ցրուեալ զաղեղունս նոցա** *(Ամ 2):*

*Եւ նորա փեսուր զարդարեցան, յորժամ գտին զջուրն կենդանի ի հայրաշարժ աղբերէն բղխեալ:*

---

1 A սպիտակացուոյց
2 B քեզ

**Ցնծասցեն տնանկք**[1] **և կարօտեալք, որ խնդրէին ջուր և ո՛չ գտանէին, և լեզուք նոցա ի ծարաւոյ ցամաքէին** *(ԽԱ 17):*

*Իսկ Հոգեպէս՝* «Ցնծասցեն աղքատք, որ խնդրէին ջուր և ո՛չ գտանէին» *այնօքիվ են, զորոց*[2] *ասաց Յակոբ, թէ՝ «Ի նա յուսասցին հեթանոսք» (հմմտ. ԽԲ 4): Եւ Աստուած ցեզեկիէլ*[3] *ասաց, թէ՝ «Առ այլ ազգս հեթանոսաց առաքէի քեզ, նոքա լսէին քեզ» (տե՛ս եզեկ. Բ 3-5): Այս են ծարաւիքն, որ խնդրէին զջուրն կենդանի:* «Ես Տէր լուայ[ց] նոցա» *(ԽԱ 17):* «Բացից գետս ի վերայ լերանց» *(ԽԱ 18)՝ զվտակս մարգարէութեան,* «և ի մէջ դաշտաց աղբիւրս[4]» *(ԽԱ 18)՝ զհոսանս առաքելութեան*[5]*,* «և մայրն և տաւսախն» *(ԽԱ 19)՝ քահանայս և դասս եկեղեցւոյ*[6]*. քաւիչս, որ սրբեն զոգի և զմարմին, փոխանակ քրմացն և մոլուացն, որք պիղծ զոհիւքն աղտեղէին զմիտս: Եւ գիտասցեն,* «թէ ձեռն Տեառն արա՛ր զայս» *(ԽԱ 20):*

**Ածից, ասէ, զկոյրն ի ճանապարհ, զոր ո՛չ գիտիցեն** *(հմմտ. ԽԲ 16):*

*Յիրաւի, զի ո՛չ գիտէին զճանապարհն Քրիստոսի, զի կուրացեալ էին, այլ՝* «Արարից զխաւարն ի լոյս» *(ԽԲ 16) և զկամակորն յուղիղս:*

*Դարձեալ. այլ զարմանալիք, զի խաւարն լոյս լինի, և* «զժուարինքն՝ հեշտալիք» *(ԽԲ 16): Եւ*[7] *այս ի գալստեանն Քրիստոսի կատարեցաւ, որ զայս բանս արար հեթանոսաց, զի ասաց. «Ո՛չ թողից և ո՛չ ընդ վայր հարից» (Եբր. ԺԳ 5) զնոսա, այլ վերակացու եղէց և ապրեցուցից: Այլ մեք զգուշացուք, զի յետ առնլոյ զպարգևս զայս յԱստուծոյ՝ դարձեալ ապաստան ի*

---

1 BC տնգաանկք
2 C զոր
3 A ցեզեկիէղ
4 C աղբեւրս
5 B առաքինութեան
6 B եկեղեցոյ
7 C զի *փխ* և

*նոյն ձեռն լինիցիմք, զի մի՛ անդէն յառաջին չարիսն կործանիցիմք, որպէս և ամբաստան լինի զհրէիցն:*

**Յարևելից ածից զզաւակ քո և յարևմտից ժողովեցից զձեզ: Հրամայեաց հիւսիսոյ[1]՝ ժողովել, և հարաւոյ՝ մի՛ արգելուլ** *(հմմտ. Ես 43-6):*

*Բայց առաւել վասն նորոյս է այս, որ Քրիստոսիւ ժողովեցան ի մի՛ հաւատս՝ ծնեալք յաւազանէն, որք երկիր պագանեն Հօր Հոգւով և*[2] *փառաւորեն: Ըստ առաքելոյ ասելոյն, թէ՝ «Յառաւելեալ փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (հմմտ. Բ. Կորն. Գ 10), զի ո՛չ թէ վասն այլ իրիք, այլ վասն իմոյ փառաց ժողովեցից զեկեղեցի յօտար երկրէ, այսինքն՝ ի կռապաշտութենէ:*

**Նորոգեցարուք առ իս կղզիք** *(Ես 16):*

*Վասն որոյ ասէ. «Առ ի՛ս նորոգեցարուք», զի այն է ճշմարիտ նորոգումն: ՅԱստուած նորոգիլ, զամենայն ներհակս նորոգմանս այսորիկ ի բաց մերժել յանձնէ, և ի ներքս ընդունել զնոր պատուիրանն:*

**Զի ասիցեն յականջս քո որդիքն քո, զորս կորուսեր. Նեղ է մեզ տեղիս, ընդարձակեա՛ զբնակութիւնս մեր** *(Ես 20):*

*Զի նշանակաւ ասացեալս առ դարձն Իսրայէլի բարւոք է առնուլ ի վերայ եկեղեցւոյ, որ ի հրէից և ի հեթանոսաց, որ յառաջ և որ զկնի հաւատացելոց: Ի սոյն միտս հայի և այն, թէ՝* **«ի վերայ ձեռաց իմոց նկարեցի զպարիսպս քո, և առաջի իմ ես դու յամենայն ժամ»** *(Ես 16), և բազմորդի*[3] *լինելոց ես:* **«Եւ ասիցես ի սրտի քումմ, թէ զսոսա ո՞ ծնաւ, զի ես անզաւակ և այրի էի պանդուխտ և արգելական»** *(Ես 21):*

---

1 C հիւսւսոյ
2 C և ճշմարտութեամբ և
3 B բազում որդի

**Զարթի՛ր, զարթի՛ր Սիոն և զգեցիր[1] զզօրութիւն, և դու զգեցիր զփառս քո Երուսաղէմ՝ քաղաք[դ] սուրբ, զի ո՛չ ևս անցանիցեն ընդ քեզ պիղծք և անթլփատք: Թօթափեա՛ զփոշիդ, արի նի՛ստ Երուսաղէմ, լո՛յծ զկապանս գերութեանդ** *(Հմմտ. ԾԲ 1-2):*

*Ասաց, զոր ինչ վասն մեղաց ընդ Հրէայսն անցին, այսինքն՝ զգերիլն ի Բաբելոն: Ասէ և զաւետիս դարձին, և զայսոսիկ օրինակաւ՝ առ Հինն Սիոն և Երուսաղէմ: Եւ ի սոսին[2] նկարագրէ զդէմս եկեղեցւոյ հեթանոսաց, որ նիրհէին ի քուն թանձրութեան մեղաց: «Զարթի՛ր, զարթի՛ր», ասէ, նոր Սիոն՝ ժողովարան հեթանոսաց: Եւ կրկնելն զառաւելութիւն սիրոյ կոչողին յայտնէ: «Զգեցի՛ր զզօրութիւն» Տեառն, որ սիրեաց զքեզ փոխանակ առաջին տկարութեանն, որ տկարացուցին զքեզ կուռքն քո: «Զգեցի՛ր զփառս քո»՝ ո՛չ քաղաքդ պոռնիկ և տիրասպան, այլ փառաւորեալ քաղաքդ Աստուծոյ սուրբ, որ սրբեցար ի շարաւոյ կռոցն՝ մերձենալով առ Քրիստոս, «զի ո՛չ ևս անցցեն ընդ քեզ պիղծք և անթլփատք» սրտիւք և ականջօք: «Թօթափեա՛ զփոշիդ[3]», որ ի մեղաց և յանհաւատութենէ, «արի՛ Երուսաղէմ» ի գլորմանէ դժոխական իրաց, «և նի՛ստ» յաթոռ փառաց, զոր փեսայն քո երկնաւոր[4] պատրաստեալ կազմեաց քեզ: «Լո՛յծ ի պրանոցէդ զկապ» (ԾԲ 2) մեղաց և զտոհունս[5] անօրէնութեան, «գերիդ՝ դուստր Սիոնի» (ԾԲ 2)՝ հեթանոսաց եկեղեցի, որ իբրև զկին մի այրի ընդ մոխիր թաւալէիր, այժմ մերկացար զաղտեղութիւն քո և զգեցար հանդերձ զհարսնութեան, զոր կողոպտեալ հանեալ էր թշնամին:*

---

1 B զգեցցիր
2 B սիսին
3 C զփոշի
4 C երկնաւոր Քրիստոս
5 B տոռուն

**Զի ե[ր]կիցեն յարևմուտս յանուանէ Տեառն, և որ յարևելս՝ ի փառաւորեալ[1] անուանէ նորա** *(ՄԹ 19):*

*Զփառաւորութիւն անուանն Քրիստոսի ակնարկէ, որ յետ երևման[2] նորա ընդ մեզ: Զի յորժամ Տէրն և Աստուած երևեցաւ մեզ[3] մարմնով, անուան նորա երկիւղիւ[4] երկիր պագանեն[5] որք յարևելս և յարևմուտս:*

**Զի դարձուսցէ, ասէ, զամբարշտութիւնն Յակոբայ** *(ՄԹ 20):*

*Այս օրինակաւ՝ առ ժողովուրդն, և ճշմարտութեամբ՝ ի նոր ուխտս աւազանաւն, զոր կատարէ Հոգին, որով ծանեաք զՀայրն և զՈրդի զմիաստուածութիւնն, որում և ուխտադիր լինիմք՝ դաւանելով զերիս անձինս[6] մի՛ բնութիւն և տէրութիւն, զոր միշտ խոստովանին որդիք եկեղեցւոյ մինչև յանեղը յաւիտեանս:*

**Զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո** *(Կ 4):*

*Յանհաւատութենէ և ի կռոց,* «և զդստերս քո ի վերայ ուսոց իւրեանց[7] բարձեալ բերիցեն» *(Կ 4): Զմեծ և զհռչակաւոր և երևելի պատիւ մանկանց եկեղեցւոյ, որ յամենայն ազգաց այսու կամեցաւ յայտ առնել:* «Յայնժամ տեսցես և խնդասցես» *(Կ 5): Որ միայն ի սուգ նստէիր, որ ամուլ էիր և անորդի, ամայի և թափառական, և ո՛չ ոք էր որ զքեզ մխիթարէր:* «Երկիցես և զարհուրեսցիս ի սրտի քումմ» *(Կ 5) ընդ յանկարծահաս փոփոխումնդ, որ եղև ի վերայ քո. յանորդութենէ՝ բազմորդի, յաղքևաց՝ յաթոռ փառաց, յանարգութենէ՝ ի պատիւ, յերկրաւորաց՝ յերկնաւորական:* «Զի փոխեցին ի քեզ մեծութիւն ծովու և ազգաց և ժողովրդոց» *(Կ 5), որք ընծայաբերք եղեն եկեղեցւոյ ազգք և ազինք, ծով և ամենայն արարածք:*

---

1 B փառաւորել
2 C յերևման *փխ* յետ երևման
3 B *չիք* մեզ
4 C երկեղիւ
5 C պագանիցեն
6 AB անձինսն
7 C *չիք* իրեանց

**...Եւ, որ յառաջագոյն աւերեալք էցեն, կանգնեսցեն և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց յազգս: Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, և այլազգիք մաճակալք և այգեգործք քո** *(ԿԱ 4-5)*:

*Բայց թէ զհրէից ասիցեմք ասացեալ զայսոսիկ՝ այսպէս իմասցուք: Խափանեցաւ քահանայութիւն նոցա զեւթանասուն ամ: Դարձաւ նա ասել վասն քահանայից ժողովրդեանն, որ յետ դարձին. «Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք և պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք. զզօրութիւն հեթանոսաց կերիջիք»* *(ԿԱ 6)*, *այսինքն՝ զպատարագս նոցա: Իսկ ըստ նորոյս զայս ամենայն քրիստոնէից ասէ, թէ դուք եղիջիք ի թագաւորութիւն և ի քահանայութիւն և յազգս սուրբ: Տե՛ս աստանօր, զի յաւազանին առնի այս, ուր*[1] *ամենեքեան օծանին:*

**Զքաջութիւն նորա յուշ արարից** *(ԿԳ 7)*:

*Հանդերձ այսու ամենայնի, որ ասացաւս, թուի թէ*[2] *զվերանալն Քրիստոսի յերկինս ակնարկէ մարգարէութիւնս, որպէս և զայլ ամենայն տնօրինականս նորա ազդեաց Հոգին ի ձեռն մարգարէիցն, նոյնպէս և զայս: Եւ, զի հանդերձեալ էր վերանալ ի սեպհականն իւր փառս, ասէ ի ձեռն Եսայեայ:*

**Ահաւասիկ ես առնեմ զԵրուսաղէմ ցնծութիւն, և զժողովուրդ իմ ուրախութիւն: Եւ մի՛ լուիցի ձայն լալոյ: Եւ մի՛ եղիցի անդ մահ տարաժամ** *(հմմտ. ԿԵ 18-20)*:

«Ահաւասիկ ես առնեմ զԵրուսաղէմ», *որ է եկեղեցի՝ տեղի ցնծութեան ամենայն մեղաւորաց:* «Եւ զժողովուրդ իմ», *որ ի հեթանոսաց՝* «ուրախութիւն»: «Եւ մի՛ լուիցի ի նմա ձայն» *յուսահատութեան մեղաց,* «Եւ մի՛ եղիցի անդ տարաժամ» *վասն մեղաց,* «և ծերն» *ի մեղաց՝* «որ[oյ] չիցէ լցեալ զժամանակ

---

1 C որ *փխ* ուր
2 AB թէև

*խուր», այսինքն՝ թէպէտ և մեղանչիցեն, ո՛չ ևս լինիցին մահ տարաժամք վասն ապաշխարուԹեան: Թերևս, ըստ ճառին յաւելուածոյ, ո՛վ է հարիւր ամաց խոստումնս վասն դարձին, որպէս այն թէ. «Ե՛ս տաց ջուր յանապատ, և յերկիր անջրդի գետս գնացուցից» (հմմտ. Ի9 20), և այլ այսպիսի: Եւ քանզի ի ժամանակի բարկուԹեանն յաճախ սպառնացաւ նոցա մահ, մե՛րթ թէ՝ «Որդիք ձեր սրով անկցին» (հմմտ. գ 25), և մե՛րթ թէ՝ «Բազում լիցին դիակունք ձեր վասն սովոյ հացի» (հմմտ. ե 13): Այժմ ընդդէմ այնմ երկար կեանս խոստանայ, որով և՝ զբազմամարդուԹիւն, որպէս այն, թէ՝ «Տեսցես զորդիս որդւոց քոց»: Իսկ բարոյական օրինակաւ՝ հարիւր ամաւն զկատարեալ առաքինուԹիւնն յայտնէ, ըստ այնմ թէ՝ «Կատարեալ ի սակաւուն ելից ժամանակս[1] երկայնս»:*

---

1 C զժամանակս

*Աբեդնագով – 80*
*Աբէլ (Հաբէլ) – 35, 36, 61, 70, 77, 85, 272*
*Աբիրոն – 269*
*Աբրահամ Նահապետ – 24, 27, 40, 41, 42, 58, 62, 65, 83, 84, 114, 119, 175, 192, 193, 221, 222, 240, 250, 254, 280, 284, 286, 292, 301, 322, 327, 352, 363, 374*
*Ադամ – 29, 59, 60, 70, 77, 133, 147, 149, 150, 184, 204, 227, 237, 238, 244, 253, 271, 279, 319, 321, 329, 351, 362*
*Ակինեան Ն. – 7, 8, 9, 10, 11, 12, 13*
*Ահարոն – 63, 371*
*Ամաղէկ – 330*
*Ամբակում – 139*
*Ամոնացիք – 163, 171*
*Ամովս – 349, 355*
*Անգէ – 175*
*Անդրէաս առաքեալ – 144, 145*
*Անթապեան Փ. – 9*
*Ասորեստան – 116, 123, 166, 245*
*Ասորիք – 189, 190, 202*
*Արաբիա – 164*
*Արամ – 122*
*Արարատեան գաւառ – 7, 8*
*Արտեւան լեռ – 140*
*Արցախ – 10*
*Ափրոդիտէ – 210*
*Աքաաբ – 157*
*Աքազ – 114, 115, 118, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 142, 156, 158, 214, 302, 356, 357*
*Աքար – 331*
*Բաբելացիք – 189, 190, 202, 208, 266, 355, 360, 361, 365*
*Բաբելոն – 28, 60, 80, 199, 200, 201, 203, 209, 226, 228, 337, 348, 362, 365, 379*
*Բագու – 10*
*Բաղակ – 260*
*Բաղամ – 260, 262*
*Բանդի Դ. – 11*
*Բարխուտարեանց Մ. – 10*
*Բեթէլ – 157*
*Բեթհեզդա – 62*
*Բեթղեհէմ – 302*
*Բենիամին – 64, 113, 157, 158*
*Գաբաւոն – 78, 79, 80, 81*
*Գաբրիէլ հրեշտակապետ – 134*
*Գադ – 21*
*Գալիլիա – 144*
*Գեդէոն – 126, 241, 242*
*Գեհոն – 209, 210*
*Գեսեմ – 258*
*Գեւորգ Սկեւռացի – 9, 10, 11, 12, 16, 18*
*Գեւորգ վանահայր – 10, 12*
*Գէեզի – 68*
*Գողիաթ –69*

*Գոմոր – 184, 200, 227, 230, 250, 269*
*Գրիգոր Տաթեւացի – 10, 13*
*Գրիգոր քհյ, գրիչ – 17*
*Դադան – 81, 228, 269*
*Դամասկոս – 114, 115, 122, 156, 164, 208, 211, 358*
*Դան – 157*
*Դանիէլ մարգարէ – 23, 24, 45, 69, 93, 94, 305, 338, 351*
*Դաւիթ արքա, մարգարէ – 24, 51, 64, 69, 91, 120, 123, 125, 127, 131, 134, 139, 144, 153, 158, 175, 179, 180, 196, 237, 240, 252, 272, 292, 300, 305, 307, 308, 320, 324, 335, 343, 357, 358, 360, 364*
*Դեբովրա կին մարգարէ – 74, 75*
*Եգիպտոս – 14, 17, 19, 26, 27, 29, 32, 59, 60, 101, 102, 107, 175, 186, 188, 214, 215, 216, 218, 220, 228, 257, 266, 269, 284, 287, 301, 351, 360*
*Եդեմ – 297*
*Եդոմ – 22, 348, 349*
*Եզեկիա թագաւոր – 114, 118, 132, 158, 161, 166, 174, 175, 179, 180, 184, 214, 245, 247, 257, 260, 262, 278, 280, 284, 288, 302, 304, 330, 357, 374, 375*
*Եզեկիէլ մարգարէ – 23, 76, 94, 107, 377*
*Եղիա մարգարէ – 45, 94*
*Եղիակիմ – 364*
*Եղիսաբեթ – 168*
*Եղիսէ մարգարէ – 67*
*Եմաւուս – 350*
*Ենովք – 237*
*Եսայի մարգարէ – 7, 9, 10, 11, 12, 13, 14, 16, 17, 21, 22, 23, 26, 31, 52, 57, 58, 76, 89, 90, 91, 92, 94, 106, 107, 108, 110, 113, 121, 122, 124, 131, 147, 153, 168, 175, 176, 177, 201, 203, 228, 233, 240, 241, 245, 251, 257, 259, 284, 292, 304, 305, 306, 324, 349, 355, 369, 381*
*Եսաւ – 363*
*Եսէ – 115, 116, 122, 123*
*Երեմիա մարգարէ – 23, 30, 59, 61, 69, 71, 102, 107, 131, 292*
*Երեմիա, աշակերտ Գ. Սկեւռացու – 10*
*Երեմիայ քհյ, ստացող – 16*
*Երեւան – 7, 10, 12*
*Երիքով – 28, 79, 331*
*Երուսաղէմ – 8, 10, 14, 17, 21, 23, 24, 41, 58, 59, 60, 63, 64, 87, 89, 90, 102, 113, 114, 115, 118, 122, 123, 124, 125, 156,*

157, 158, 163, 164, 165, 166, 170, 172, 173, 174, 180, 188, 189, 190, 201, 204, 207, 209, 211, 212, 213, 215, 218, 219, 223, 233, 234, 241, 245, 247, 251, 266, 283, 287, 292, 294, 304, 333, 349, 350, 358, 360, 362, 375, 376, 379, 381

Եւա – 237, 371

Եփրեմ – 74, 122, 123, 160, 358

Եփրեմ Ասորի – 9, 10, 374

Զաբուղոն (երկիր) – 144, 145

Զարպհանալեան Գր. – 10

Զաքարիա – 168, 361

Զաքարիա քահանայապետ – 87, 89

Զօհրապեան Ց. – 18, 271

Էմա քաղաք – 131

Էմմանուէլ – 104, 131, 132, 134, 141, 142, 177, 216, 365, 368

Էջմիածին – 9, 12

Թաբոր – 154

Թակլաթփաղասար – 21, 85, 115, 122, 126, 156, 207, 211, 212, 213, 358

Թարա արքա – 218, 219

Թարսիս – 323

Թեբայիդ – 186

Թեղենեաց վանք – 8, 9

Իգնատիոս – 9, 149

Իգնատիոս վրդ., ուսուցիչ Ս. Շնորհալու – 10

Իլամացիք – 171, 200, 201, 202, 203

Իլոն – 80

Իսահակ (Սահակ) նահապետ – 58, 65, 221, 240, 280, 363

Իսրայէլ – 14, 17, 26, 27, 29, 30, 41, 58, 63, 71, 74, 75, 76, 107, 113, 116, 119, 144, 145, 172, 173, 201, 202, 207, 228, 232, 331, 348, 350, 355, 358, 363, 364, 378

Լեւոն գրիչ – 12, 16

Լիբանան – 76, 313, 355

Խաչիկեան Լ. – 10

Խորանաշատ վանք – 10, 11

Կայէն (Կայեն, Կային) – 36, 61, 62, 70, 77, 85, 184, 242, 248, 263, 265, 269, 272, 280, 298, 301, 321, 330, 331

Կանդակ – 359

Կարմիր ծով – 28, 30, 78, 85, 360

Կափառնաւում – 140

Կեդար – 363

Կիլիկիա – 17

Կիւրեղ Ալեքսանդրացի – 9, 10

Կիւրոս Թագաւոր – 201, 203, 365

Կորխ – 81, 228

Հաբէլ – տե՛ս Աբէլ

*Հաղբատ – 7*
*Հեթում Թագաւոր – 12*
*Հերովդէս – 216, 298, 301, 331*
*Հնդկաց աշխարհ – 209*
*Հռասիմ Թագաւոր – 114, 115, 118, 121, 122, 124, 156*
*Հռեբեկա – 134*
*Հռոմէլ – 122*
*Հրէաստան – 76, 90, 142, 366*
*Ղազար աղքատ – 13, 62, 104, 155, 191, 192, 222, 242, 254, 256, 302, 327*
*Ղովտ – 171, 174, 228, 286*
*Ղուկաս աւետարանիչ – 8, 9*
*Մադիանացիք – 126, 241, 242*
*Մաթեւոսեան Ա. – 12*
*Մանասէ (երկիր) – 160*
*Մատթէոս աւետարանիչ – 145*
*Մարիամ Աստուածածին – 22, 114, 129, 134, 151, 175, 176, 177, 180, 216, 332, 350*
*Մարկիոն – 136*
*Մարկոս աւետարանիչ – 9*
*Մարք – 201, 202, 203, 266, 355, 361*
*Մելքիսեդեկ – 91*
*Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան – 7, 11, 13, 16*
*Միսակ – 80*
*Միքիա մարգարէ – 51*
*Մովաբացիք – 163, 171, 357*
*Մովսէս մարգարէ – 9, 23, 26, 33, 58, 59, 60, 63, 73, 88, 91, 94, 101, 103, 106, 107, 108, 129, 138, 162, 167, 220, 230, 240, 248, 257, 258, 259, 260, 269, 281, 284, 287, 297, 305, 330, 338, 372*
*Յակոբ Նահապետ – 56, 58, 65, 160, 221, 240, 280, 318, 351, 358, 360, 380*
*Յակոբ առաքեալ – 153, 341, 377*
*Յակոբ Ղրիմեցի – 13*
*Յամրէս կախարդ – 220*
*Յայրոս իշխան – 155*
*Յանէս կախարդ – 220*
*Յեսէ – 175, 179, 180*
*Յեսու – 28, 78, 79, 80, 81, 174, 248, 349*
*Յերոբոամ (Յորոբոամ) – 358*
*Յէու Թագաւոր – 157*
*Յիսուս Քրիստոս – 10, 14, 22, 24, 25, 26, 29, 35, 37, 39, 40, 48, 52, 55, 57, 58, 59, 62, 70, 71, 73, 74, 84, 86, 91, 92, 101, 103, 104, 106, 109, 113, 114, 119, 120, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 139, 146, 153, 155, 167, 168, 169, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 191, 194, 195, 196, 203, 208, 211, 214,*

*216, 217, 218, 219, 222, 225, 227, 228, 238, 239, 240, 241, 246, 250, 251, 254, 256, 265, 266, 269, 272, 275, 288, 297, 298, 305, 309, 313, 318, 319, 334, 336, 340, 341, 347, 348, 351, 358, 359, 360, 361, 362, 363, 365, 366, 368, 369, 370, 372, 373, 374, 375, 377, 378, 379, 380, 381*

*Յոբ – 9, 53, 62, 266, 276, 320, 342, 345, 346*

*Յովաթամ – 114, 117, 118*

*Յովհաննէս աւետարանիչ – 8, 9, 94, 101, 129, 137, 145, 275, 331, 345*

*Յովհաննէս Երզնկացի – 9*

*Յովհաննէս Կոլոտ – 10*

*Յովհաննէս Մկրտիչ – 240, 361, 368*

*Յովհաննէս Ոսկեբերան – 9, 10, 11*

*Յովհաննէս Որոտնեցի – 10*

*Յովհաննէս Սարկաւագ – 8, 9*

*Յովհաննէս վրդ., ստացող – 17*

*Յովնան (Յունան) մարգարէ – 107, 322, 323, 324*

*Յովսէփ – 69, 120, 131, 156, 158, 301*

*Յովսէփ արդար – 279, 280*

*Յովսէփ Հայր Յակոբայ – 358*

*Յովսէփ Հիւան – 180, 216, 368*

*Յորդանան – 28, 78, 79, 133, 144, 154, 156, 181, 207*

*Յուդա – 71, 163, 167, 225, 265, 297, 319, 333, 371*

*Յուդա (երկիր) – 61, 144, 160, 161, 172, 173, 270, 279, 357, 358*

*Նաբաս – 63, 64, 157, 358*

*Նաբուզոդոնոսոր – 21, 76, 80, 85*

*Նաթան – 305*

*Նաւոս – 78, 79, 81, 349*

*Նեղ – 115, 122, 123*

*Նեղոս – 27*

*Նեռ – 184*

*Նեփթաղիմ (երկիր) – 144, 145*

*Նինուէ – 172, 322, 323, 324*

*Նոյ – 78, 150, 173, 227, 239, 286*

*Շամբին – 140*

*Ոզխա – 62, 86, 87, 88, 89, 90, 91, 102, 106, 107, 108, 114, 117*

*Ովսէ մարգարէ – 93*

*Ուբիա – 361*

*Զամչեան Մ. – 10*

*Պաղեստին (երկիր) – 156, 160, 230*

*Պարսկական աշխարհ – 69*

*Պետրոս առաքեալ – 24, 25, 81, 144, 145*

*Պետրոսեան Եզնիկ եպս. – 7, 9*

*Պիղատոս – 362, 374*

*Ողաբեան Ն. – 8*

*Պօղոս առաքեալ – 11, 21, 26, 48, 62, 68, 69, 70, 82, 100, 104, 108, 123, 137, 168, 224, 225, 229, 245, 246, 253, 254, 256, 270, 275, 276, 288, 290, 301, 304, 309, 312, 313, 325, 327, 328, 336, 341, 344, 345, 368, 370, 376*

*Ռափսակ – 161, 162, 170, 172, 180, 211, 212, 213, 214, 218, 219, 233, 245, 246, 247, 262, 284, 285, 374*

*Ռոբովամ (Րոբովամ) – 63, 64, 120, 157*

*Ռուբէն – 21*

*Սահակ – տե՛ս Իսահակ*

*Սաղիմ – 91*

*Սաղմանասար – 21, 85, 116, 123, 142, 156, 158, 166*

*Սամարիա – 21, 63, 64, 113, 114, 115, 116, 117, 118, 120, 122, 123, 156, 157, 158, 164, 166, 172, 174, 175, 184, 207, 209, 211*

*Սառա – 328, 329*

*Սաւուղ (Իսաւուղ) – 125, 144, 265*

*Սարգիս Կունդ – 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 17, 18*

*Սարգիս Շնորհալի – 10*

*Սեդրակ – 80*

*Սելոմ – 76*

*Սենեքերիմ (Սինէքարիմ, Սէնէքարիմ) – 161, 162, 166, 170, 172, 204, 211, 215, 218, 219, 223, 247, 248, 365*

*Սէիր – 362*

*Սիհիմ – 228*

*Սիմէոն գրիչ, 1726 թ.– 13*

*Սինա – 103, 186*

*Սիոն – 12, 132, 214, 304, 333, 355, 359, 360, 366, 376, 379*

*Սիս – 17, 58*

*Սիրաք – 338, 342*

*Սկեւռա – 17*

*Սոդոմ – 40, 41, 113, 184, 192, 200, 227, 230, 250, 269, 286*

*Սողոմոն – 31, 63, 64, 65, 67, 68, 76, 123, 157, 177, 205, 253, 272, 280, 296, 332, 345, 358*

*Սոմնաս – 226*

*Ստեփանոս նախավկայ – 133*

*Ստեփանոս Սիւնեցի – 9*

*Սուլէյման – 125*

*Վաղարշապատ – 7*

*Վաղենտիանոս – 136*

*Վարդան Արեւելցի – 9*

*Վարդան քհյ, ստացող – 17*

*Վարդան վրդ. Խիզանցի, ստացող – 13, 14*

*Վենետիկ – 8, 18, 271*

*Վիեննա – 10, 11*

*Վասպիանոս – 85, 147, 167, 208, 298*
*Տաբէլ – 121, 125*
*Տէր Ստեփանեան Արմեն – 7*
*Տիբերական ծով – 144*
*Տիմոթէոս առաքեալ – 68*
*Տիտոս – 85, 142, 147, 167, 208, 298*
*Տիրոսօն – 61*
*Փակէէ – 114, 115, 118, 121, 122, 124*
*Փիլիպոս առաքեալ – 144*
*Փղշտացիք – 357*
*Փուա արքա – 74*
*Քաղան – 164*
*Քաղէբ – 174*
*Քամ – 239*
*Քանանացոց երկիր – 41, 260, 261*
*Քորէբ – 94*
*Pennsylvania – 11*
*California – 11*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք .....9

Անանուն
Մեկնութիւն Մարգարէութեանն Եսայեայ .....21

Սարգիս Կունդ
Հատուածք ի մեկնութենէ Եսայեայ.....353

Յատուկ անունների ցանկ .....383

**ԱՆԱՆՈՒՆԻ**
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ
և
**Սարգիս Կունդի (՞)**
Ի ՄԵԿՆՈՒԹԵՆԷ
ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ
(հատուածք)

Աշխատասիրությամբ
ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ
Խմբագրությամբ
ԱՋԱՏ ԲՈՋՈՅԱՆԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - 2003

---

Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի և
Յուլիա Աբրահամյանի

Պատվեր 275, չափսը՝ 70x100 1/16
ծավալը՝ 25 մամուլ,
տպաքանակը՝ 500:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ


| էջ | տող | տպված է | կարդալ |
|---|---|---|---|
| 49 | 1 ն. | ի? | ի |
| 49 | 4 ն. | սպա?նեցեր | սպաննեցեր |
| 53 | 1 ն. | եկայ? | եկայք |
| 234 | 5 ն. | փո??ն | փոխին |
| 234 | 6 ն. | մարդի? | մարդիկ |
| 368 | 6 ն. | Ihմմտ. | hմմտ. |
| 372 | 12 ն. | Ihմմտ. | hմմտ. |
| *? - չկարդացվող նշան* | | | |



[4000դր.]



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0414321


10X10F
3